ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐՄԵՆ ՄԱՐՈՒՔՅԱՆ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՐԴԻ ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ԵՐԵՎԱՆ
ԱՐՏԱԳԵՐՍ
2016

Նվիրվում է հորս՝
Ցոլակ Մարուքյանի անմար հիշատակին

Տպագրվում է ՀՀ Սփյուռքի նախարարության
դրամաշնորհով

Խմբագիր՝ պ.գ.թ., դոցենտ Լ. Հովհաննիսյան
Գրախոսներ՝
պ.գ.թ. Ա. Խոսրոևա
պ.գ.թ. Ա. Բաբլումյան

Մարուքյան Ա. Ց.

Հայոց ցեղասպանության հարցը Թուրքիայի արդի ներքաղաքական զարգացումների համատեքստում, – Եր., Պատմության ինստիտուտ, 2017, 410 էջ:

Աշխատությունում ներկայացվում են ժամանակակից Թուրքիայի ինչպես քաղաքական համակարգում, այնպես էլ տնտեսության մեջ առկա խնդիրներն ու մարտահրավերները, թուրքական իշխանությունների կողմից ոչ թուրք ազգային-կրոնական խմբերի ու, մասնավորապես, այդ երկրում բնակվող հայերի նկատմամբ: Այս հարցերի լույսի ներքո քննարկվում են Հայոց ցեղասպանության հանցագործության հետևանքների հաղթահարման հարցի արծարծումներն ինչպես թուրքական իշխանությունների, այնպես էլ հասարակության կողմից:

Գիրքը նախատեսված է Հայոց ցեղասպանության պատմության ու, մասնավորապես, պահանջատիրության հարցերով հետաքրքրվողների, ուսանողների և ընթերցողների լայն շրջանակի համար:

ISBN

© ԱՐՏԱԳԵՐՍ, 2016
© ՄԱՐՈՒՔՅԱՆ Ա., 2016

ԱՌԱՋԱԲԱՆ

Հայոց ցեղասպանությանը՝ որպես XIX դարավերջին և XX դարասկզբին տեղի ունեցած եղերական իրադարձության, վաղուց արդեն պատմական գնահատական է տրվել ոչ միայն հայ, այլև օտարազգի պատմաբանների ու ցեղասպանագետների կողմից: Դրա վերաբերյալ լույս են տեսել հազարավոր հետազոտություններ, հրապարակվել են բազմաթիվ պետությունների արխիվներում պահվող փաստաթղթեր, որոնք միանշանակ փաստում են հայ ժողովրդի նկատմամբ իրագործված ոճիրը: Սակայն, չնայած այդ ամենին, հանցագործ պետությունը՝ Թուրքիան, ոչ միայն չի համակերպվում պատմական փաստերի հետ, այլև, պետական մակարդակով վարում է Հայոց ցեղասպանության ժխտման քաղաքականություն: Այս քաղաքականությամբ Թուրքիան, փաստորեն, Հայոց ցեղասպանության խնդիրը դուրս է բերել պատմական հարթությունից և վերածել քաղաքական հարցի: Մի շարք կառավարական և ոչ կառավարական միջազգային կազմակերպություններ ու ավելի քան երկու տասնյակ պետություններ տվել են Հայոց ցեղասպանության քաղաքական գնահատականը՝ այն որակելով որպես ծանր միջազգային հանցագործություն՝ դատապարտելով հայ ժողովրդի նկատմամբ գործված ոճիրը: Սակայն Թուրքիայի Հանրապետությունը չի ցանկանում համակերպվել նաև Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման բանաձևերի հետ: Ավելին, տարաբնույթ միջոցներ է ձեռնարկում Հայոց ցեղասպանության փաստի արձանագրումը նոր երկրներում թույլ չտալու համար:

Թուրքիան ժխտում և հրաժարվում է ճանաչել Հայոց ցեղասպանությունը ոչ միայն նյութական, տարածքային, բարոյական կորուստների հատուցման պարտավորությունից խուսափելու համար, այլև՝ տասնամյակներ շարունակ ժխտողականության հիմքի վրա

ձևավորված ազգային ինքնության հնարավոր խաթարման վախից ելնելով: Դա կարող է հանգեցնել ոչ միայն քաղաքացիական, այլև էթնիկ երանգ ունեցող մեծ հուզումների, ինչը երկրում առկա բազմէթնիկության և բազմակրոնության պարագայում վտանգավոր է համարվում պետության միասնականության համար:

Հայոց ցեղասպանության ժխտման Թուրքիայի քաղաքականության հիմքում ընկած են որոշակի ռեսուրսներ ու գործոններ, որոնք թույլ են տալիս պաշտոնական Անկարային հակադրվել այդ հարցում տարբեր երկրների, այդ թվում համաշխարհային քաղաքականության այնպիսի ազդեցիկ դերակատարների դիրքորոշմանը, ինչպիսիք են Ֆրանսիան և Ռուսաստանը: Այդ ռեսուրսների ու գործոնների թվում կարելի է նշել, օրինակ՝ Թուրքիայի չափազանց բարենպաստ աշխարհաքաղաքական դիրքը, ՆԱՏՕ-ում թվաքանակով երկրորդ բանակն ունենալը, տարածաշրջանային կարևոր դերակատար լինելու հանգամանքը, ինչպես նաև ներկայիս վարչակարգի կողմից Թուրքիան համաշխարհային քաղաքականության ազդեցիկ սուբյեկտ դարձնելու անթաքույց հավակնությունները: Այս համայնապատկերի վրա կարող է տպավորություն ստեղծվել, որ Թուրքիային հաջողվել է հաղթահարել ներքաղաքական բոլոր խնդիրները, ինչը նրան հնարավորություն է ընձեռում ակտիվորեն զբաղվել իր աշխարհաքաղաքական հավակնությունների կենսագործման հարցերով: Իրականում, սակայն, այդ երկրին ոչ միայն չի հաջողվել հաղթահարել իր քաղաքական համակարգում առկա լրջագույն խնդիրներն ու մարտահրավերները, այլև դրանք տասնամյակների ընթացքում ավելի են բարդացել երկրի իշխանությունների ձեռնարկած մակերեսային ու ոչ հետևողական քայլերի հետևանքով: Աշխարհիկության և իսլամի միջև գաղափարական առճակատումը, բանակ - քաղաքական իշխանություն և հասարակություն դիմակայությունը, անդրկուլիսյան ուժերի՝ «խորքային պետության», «գյուլե-

նական շարժման» և ծայրահեղ ազգայնականների անընդհատ միջամտությունները քաղաքական կյանքին, ազգային-կրոնական փոքրամասնությունների իրավունքները ու առաջին հերթին՝ քրդական հարցը, «ինքնության ճգնաժամը» և դրանից բխող «սևրոֆոբիան» շարունակում են մնալ ներկայիս Թուրքիայի քաղաքական համակարգի չլուծված հիմնական խնդիրներն ու մարտահրավերները:

Թուրքիայի քաղաքական համակարգի խնդիրների ու մարտահրավերների վերաբերյալ գրականությունը բավական հարուստ է, սակայն նշված հարցերի ուսումնասիրման հարցում առաջնային ենք համարել մասնագետների՝ թուրքագետների ու քաղաքագետների լուրջ ու ծանրակշիռ աշխատությունները: Այս առումով բավական է առանձնացնել Ռ. Սաֆրաստյանի[1], Ռ. Կոնդակչյանի[2], Ս. Բաղդասարյանի[3], Վ. Տեր-Մաթևոսյանի[4], Լ. Հովսեփյանի[5], Հ. Չաքըրյանի[6], Ա. Դումանյանի[7], Ա. Շաքարյանի[8], Ա. Ավագյանի[9], Հ. Գաբ-

---

[1] Տե՛ս Սաֆրաստյան Ռ., Հնարավոր չէ 21-րդ դարում պատնեշներ ստեղծել հարևանների միջև, Եր., 2003; Անսպասելի արդյունքներ Թուրքիայի ՏԻՄ ընտրություններում, Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, VI, Եր., 2009:

[2] Տե՛ս Кондакчян Р., Турция: внутренняя политика и ислам, Ер., 1983.

[3] Տե՛ս Բաղդասարյան Ս., Թուրքիայի քաղաքական համակարգի խնդիրները (1920-30-ական թթ.), Եր., 2001.

[4] Տե՛ս Տեր-Մաթևոսյան Վ., Իսլամը Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքում (1970-2001թթ.), Եր. 2008; Արդարություն և զարգացում կուսակցությունը ՏԻՄ ընտրություններում. Ձեռքբերումների ու բացթողումների համեմատական վերլուծություն, «Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ», VI, Եր., 2009; Հայ-թուրքական հարաբերությունների հեռանկարներն ազգային անվտանգության ապահովման համատեքստում, «Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ», VII, Եր., 2011; Թուրքիան 2008–2011 թթ.: Քաղաքական փոխակերպումների հիմնական առանձնահատկությունները, «Ժամանակակից Եվրասիա. Թուրքիա, Իրան», հ. I, Ռ. Սաֆրաստյանի խմբ., Եր., 2012:

[5] Տե՛ս Հովսեփյան Լ., Թուրքիայի անվտանգության ոլորտի բարեփոխումների շուրջ. ԵՄ առջև ստանձնած պարտավորությունների համատեքստում. «Գլոբուս. Էներգետիկ և տարածաշրջանային անվտանգություն», «Նորավանք» ԳԿՀ, թիվ 4, 2009,:

[6] Տե՛ս Չաքրյան Հ., Իսլամական գործոնը Արևմուտք-Թուրքիա փոխհարաբերությունների ենթատեքստում, «Հայացք Երևանից», N 3/1, 1997, էջ 18:

րիելյանի[10], Ա. Հարությունյանի[11], Մ. Աղաջանյանի[12], Ա. Գասպարյանի[13], Թ. Հակոբյանի[14] և այլոց արժեքավոր ուսումնասիրությունները:

Թուրքիայի ներքաղաքական խնդիրների ուսումնասիրության ուղղությամբ բավականին լուրջ հետազոտություններ են կատարել նաև ռուսաստանցի հետազոտողները: Այս առումով պետք է հատուկ ընդգծել ռուսաստանյան երկու գիտահետազոտական հաստատությունների՝ Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտի և Մերձավոր Արևելքի ինստիտուտի գիտաշխատողների կատարած ծանրակշիռ ու արժեքավոր ուսումնասիրությունները: Մեզ հետաքրքրող հարցերին են նվիրված ռուսաստանցի հեղինակներ՝ Ն. Կիրեևի[15], Վ. Շլիկովի[16], Վ. Դանիլովի[17], Գ.

---

[7] Տե՛ս Դումանյան Ա., Ազգայնական շարժում կուսակցության («Գորշ գայլեր») գործունեության հիմնական փուլերը Թուրքիայում 1960-70-ական թթ., «Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ», հ. IV, Եր., 2007; Արտաքին գործոնների ազդեցությունը Թուրքիայի 1980 թվականի ռազմական հեղաշրջման վրա, Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, VII, Եր., 2011:

[8] Տե՛ս Շաքարյան Ա., Արարատից այն կողմ. Ապակոդավորելով Թուրքիան, Եր., 2011:

[9] Տե՛ս Ավագյան Ա., Պանթուրքական երազանք կամ «Գորշ գայլեր», Երևան, 2013:

[10] Տե՛ս Գաբրիելյան Հ., Ներքաղաքական պայքարի արդի փուլը Թուրքիայում, http://noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=6290

[11] Տե՛ս Հարությունյան Ա., Թուրքական հատուկ ծառայությունների ստեղծման պատմությունը և դրանց գործունեությունը արդի փուլում: «Թուրքիա: Անվտանգության և պաշտպանության հիմնախնդիրները», վերլուծական նյութեր, թող. 1, Եր., 2007:

[12] Տե՛ս Աղաջանյան Մ., Թուրքիայի ազգային անվտանգությունը. Հայեցակարգերն ու սկզբունքները, «Թուրքիա: Անվտանգության և պաշտպանության հիմնախնդիրները», վերլուծական նյութեր, թողարկում 1, Եր., 2007:

[13] Տե՛ս Գասպարյան Ա., Ներքաղաքական գործընթացների իրողությունները Մերձավոր Արևելքում, Եր., 2016:

[14] Տե՛ս Յակոբեան Թ., Հայեացք Արարատէն. Հայերը եւ թուրքերը. Պատերազմ, պաղ պատերազմ, դիւանագիտութիւն, Անթիլիաս, 2012:

[15] Տե՛ս Киреев Н., Турция между Европой и Азией, М. 2001; История Турции: XX век. М., 2007; Турция: синтез национализма и исламизма. “Азия и Африка сегодня”, N 2. М., 1993; Турция между Западом и Востоком. “Ближний Восток и современность”, вып. 2. М., 1996; Турция: синтез национализма и исламизма в государственной идеологии. “Национализм и фундаментализм на Ближнем Востоке”. Материалы конференции, Москва, 4.02.1999 г.”, М., 1999; Светскость или шариат: раскол в турецком обществе на пороге XXI века. “Ближний Восток и современность”, вып. 6, М., 1999; Ме-

Զիգանշինայի[18] և ուրիշների կատարած հետազոտությունները: Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի Իրավիճակային վերլուծության կենտրոնի կողմից կատարվել է նաև կոլեկտիվ արժեքավոր հետազոտություն[19]:

Թուրքիայի ներքաղաքական խնդիրներն ու մարտահրավերները չեն վրիպել նաև արևմտյան հետազոտողների ուշադրությունից,

---

таморфозы правящей элиты Турции. “Политическая элита Ближнего Востока” (Сборник статей), М., 2000; Религиозный экстремизм – угроза внутренней стабильности Турции. “Ближний Восток: проблемы региональной безопасности”. (Сборник статей), М., 2000; Метаморфозы политического ислама, “Азия и Африка сегодня”, N 6, 2003; Кризис политического ислама в Турции: раскол движения Милли Герюш. “Ближний Восток и современность”, вып. 20, М., 2003; Первый год пребывания Партии справедливости и развития (АКП) у власти в Турции. “Ближний Восток и современность”, Вып. 19, М., 2003.

[16] Տե՛ս Шлыков В., Армия в жизни современного турецкого общества в начале 2000-х, “Турция накануне и после парламентских и президентских выборов 2007 г.”, Сборник статей, М., 2008; Эволюция партийной системы Турции в период Третьей Республики (1983-2007), “Турция на рубеже XX-XXI вв.”, М., 2008; Эволюция концепции политического ислама в Турции. “Турция накануне и после парламентских и президентских выборов 2007 г.” М., 2008; Политический ислам в Турции: поиски новой идентичности. “Вестник Московского университета”, сер. 13, «Востоковедение», № 4, М., 2008; Военная элита в политической системе Турецкой Республики. “Элиты стран Востока”. М., 2011; Турция после выборов 2011 г.: парадоксы политического развития под властью Партии справедливости и развития, Вестник Московского университета, сер. 13: Востоковедение, № 3, М., 2012.

[17] Տե՛ս Данилов В. И., Парламентские выборы 1999 г. в Турции: итоги и перспективы, “Ближний Восток и современность”, вып. 8, М., 1999; Метаморфозы турецкого национализма, “Ближний Восток и современность”, вып. 9, М., 2000; Проблемы демократии в республиканской Турции, “Ближний Восток и современность”, вып. 11, М., 2001.

[18] Տե՛ս Зиганшина Г.М., К итогам президентских и парламентских выборов в Турции в 2007 г., “Ближний Восток и современность”, вып. 36, М., 2008; Ситуация вокруг парламентских и президентских выборов в Турции в 2007 г.: основные итоги и перспективы, “Турция накануне и после парламентских и президентских выборов 2007 г.”, М., 2008.

[19] Տե՛ս Турция: новая роль в современном мире, М., 2012.

որոնցից հատկապես կարելի է նշել Գ. Ջենքինսի[20], Մ. Մոնշիփուրիի[21] և Դ. Բուրհանեդդինի[22] ուսումնասիրությունները:

Թուրքիայի քաղաքական համակարգի խնդիրները քննարկելիս օգտագործվել են նաև թուրք հեղինակներ Ե. Քալայչօղլուի[23], Ա. Չարքօղլուի[24] և այլ հեղինակների[25] անգլերեն լեզվով հրատարակված հետազոտությունները:

Թվում է, թե աշխարհի 16-րդ տնտեսությունն ունեցող, Եվրամիության անդամության թեկնածու և այդ կառույցի մաքսային միության անդամ հանդիսացող Թուրքիան, որը վերջին տարիներին սկսել է կայուն տնտեսական աճ արձանագրել, պետք է զերծ լինի լուրջ խնդիրներից ու ճգնաժամերից: Սակայն հաջողված երկուերեք տարիների ընթացքում Թուրքիայի տնտեսության մեջ ու ֆի-

---

[20] Տե՛ս Jenkins G. Continuity and change: prospects for civil-military relations in Turkey. “International Affairs”. Vol. 83, 2007, N. 2.

[21] Տե՛ս Monshipouri M., Islamism, secularism and Human Rights in the Middle East. London, 1998.

[22] Տե՛ս Burhanettin D., The Experience of Turkish Islamism: Between Transformation and Islamism. “Journal of Balkan and Near Eastern Studies”, Vol. 12, No. 1 (2010).

[23] Տե՛ս Kalaycioğlu E., The Shaping of Party Preferences in Turkey: Coping with the Post-Cold War Era. “New Perspectives on Turkey”, No 20 (Spring 1999); Turkish Dynamics Bridge Across Troubled Lands. N.Y., Palgrave Macmillan, 2005.

[24] Տե՛ս Çarkoglu, A., The Rise of the New Generation Pro-Islamists in Turkey: The Justice and Development Party Phenomenon in the November 2002 Elections. “South East European Society and Politics”, Vol. 7, No. 3 (Winter 2002). Çarkoglu, A., Kalaycıoglu E., The Rising Tide of Conservatism in Turkey. N.Y., 2009.

[25] Տե՛ս Sakallıoğlu Ü., The Anatomy of Turkish Military’s Political Autonomy. “Comparative Politics”. Vol. 29, No. 2 (1997); Sayari S., Towards a New Turkish Party System. “Turkish Studies”. Vol. 8, No. 2, 2007; Emre T. Forecasting elections in Turkey “International Journal of Forecasting”. Amsterdam: Feb-2011. Vol. 27, Iss. 4; Menderes Ç., Turkey’s Present Ancien Regime and the Justice and Development Party. “Nationalism and Political Islam in Turkey”. L.: Routledge, 2010; Şaban K., The Turkish Constitutional Court and Civil Liberties: Question of Ideology and Accountability. “SETA Policy Brief”. June 2008, No. 16; Sayın, Ç., Exploring the Military Mindset: Phenomenological Insights for Security Sector Reform in Turkey. “New Perspectives on Turkey”, No. 43 (2010). Kadıoğlu A., The Paradox of Turkish Nationalism and the Construction of Official Identity, “Middle Eastern Studies”. Vol. 32, No. 2, April 1996.

նանսական վիճակում ծագած անբարենպաստ երևույթները անգամ թուրք փորձագետներին հնարավորություն չեն տալիս վերջնականապես որոշելու, թե որքան կայուն ու անշրջելի են երկրի տնտեսական ձեռքբերումները և, արդյոք, կանխավ չափազանցված չէ՞ երկրի հաջողությունների գնահատականը 21-րդ դարի սկզբում[26]: Ընդհանուր առմամբ Թուրքիայի տնտեսությունը, ինչպես և քաղաքական համակարգը աչքի են ընկնում անկայունությամբ, ինչը միանգամայն բնական է, քանզի երկրի քաղաքական համակարգի անկայունությունն ու քաղաքական ցնցումները միանշանակ բացասական ազդեցություն ու ծանր հետևանքներ են ունենում տնտեսության վրա: Թուրքիայի տնտեսության առջև ներկայումս ծառացած լրջագույն խնդիրների ու մարտահրավերների շարքում բավական է միայն նշել երկրի անհամաչափ տնտեսական զարգացվածությունը, օտարերկրյա կապիտալից և ռուսական էներգակիրներից ծայրահեղ կախվածությունը, քաղաքական ցնցումների պատճառով օտարերկրյա կապիտալի արտահոսքի ռիսկերը, գործազրկության և թուրքական արժույթի սղաճի բարձր մակարդակը, արտաքին տնտեսական հսկայական պարտքը և այլն:

Ինչպես Թուրքիայի քաղաքական համակարգի, այնպես էլ երկրի տնտեսության մեջ առկա խնդիրների ուսումնասիրությամբ լրջորեն զբաղվել են ռուսաստանցի հետազոտողները, որոնց թվում կարելի է հիշատակել Ե. Ուրազովայի[27], Ն. Ուլչենկոյի[28], Վ. Կունակովի[29], Ն. Մալյուտայի[30] և այլոց կատարած հետազոտությունները:

---

[26] Տե՛ս Киреев Н. Г., Турция – экономический партнер и политический соперник России в Евразии. “Россия на Ближнем Востоке: цели, задачи, возможности”. Материалы конференции, М., 2001, с. 83.

[27] Տե՛ս Уразова Е., К характеристике турецкой экономической модели, “Турция: современные проблемы экономики и политики”, М., 1997; Внешний долг Турции и проблема его погашения (80-90 гг.). “Ближний Восток и современность”, вып. 8, М., 1999; К оценке роли исламских идей и капиталов в турецкой экономике. “Ближний

Թուրքիայի տնտեսության մեջ առկա խնդիրներն արտացոլվել են նաև այդ երկրի՝ Եվրամիությանն անդամակցելու գործընթացում արձանագրած առաջընթացի վերաբերյալ տարեկան զեկույցներում[31]:

Թուրքիայի տնտեսության խնդիրներին հայ հետազոտողները քիչ են անդրադարձել: Կարելի է նշել միայն Հ. Գալուստյանի[32], Ս.

Восток и современность", вып. 9, М., 2000; Финансовая дестабилизация в Турции и перспективы ее преодоления. "Ближний Восток и современность", вып. 9, М., 2000; Структурные изменения в экономике Республиканской Турции. "Ближний Восток и современность", вып. 21, М., 2004; Экономика Турции на современном этапе, "Современная Турция: проблемы и решения", М., 2006.

[28] Տե՛ս Ульченко Н.Ю., Валютно-финансовый кризис в Турции 1994 г. и российский финансовый кризис 1998 г.: аналогии и различия в причинах и следствиях. "Ближний Восток и современность", вып. 8, М., 1999; Динамика экономического роста в Турции в 1999 г. и перспективы на 2000 г.. "Ближний Восток и современность". вып. 9, М., 2000; К вопросу об экономической политике правительства Партии справедливости и развития, "Ближний Восток и современность", вып. 17, М., 2003; Экономическая политика правительства Турции в 2003-2004 гг.: ожидания и реальность. "Ближний Восток и современность", вып. 26, М., 2005; Роль сотрудничества с МВФ в экономической политике Турции (2002-2005 гг.), "Современная Турция: проблемы и решения", М., 2006; Основные итоги социально-экономического развития Турции в 2006-2007 годах и перспективы на 2008 г., "Турция накануне и после парламентских и президентских выборов 2007 г.", М., 2008.

[29] Տե՛ս Кунаков В.В., Турция и ЕС: проблемы экономической интеграции, М., 1999.

[30] Տե՛ս Малюта Н.Е., Турция в 2001 году: пути выхода из валютно-финансового кризиса. "Востоковедный сборник", вып. 3, М., 2002; Банковская система Турции в 2002 г.. "Ближний Восток и современность", вып. 17, М., 2003.

[31] Տե՛ս European "Progress Report" on Turkey. Published by the European Commission on 13 November (2001); 2003 Regular Report on Turkey's Progress towards Membership; 2004 Regular Report on Turkey's Progress towards Membership, /http://ec.europa.eu/enlargement/archives/pdf/key_documents/2004/rr_tr_2004_en.pdf/; Turkey 2005 Progress Report /2005/; EC: Council Decisions of 2001, 2003, 2006 and 2008 on the principles, priorities and conditions contained in the Accession Partnership with the Republic of Turkey /ec.europa.eu/enlargement/archives/pdf/key_documents/.

[32] Տե՛ս Գալուստյան Հ., Հանրապետական Թուրքիայի կառավարության քաղաքականությունը արևելյան վիլայեթներում (1920-1960-ականներ), Եր., 1999:

Գեղամյանի[33] և մի խումբ հետազոտողների[34] կողմից կատարված ուսումնասիրությունները:

Գաղտնիք չէ, որ թուրքական բոլոր վարչակարգերը ինչպես կայսրության, այնպես էլ հանրապետության շրջանում մշտապես խտրական, երբեմն էլ ցեղասպան քաղաքականություն են վարել երկրի տարածքում բնակվող ոչ թուրք ազգային-կրոնական խմբերի նկատմամբ՝ ձգտելով իրենց հայրենիքից զրկել տեղաբնիկ ժողովուրդներին և ստեղծել միատարր թուրքական պետություն: Թուրքիայի կողմից երկրի տարածքում բնակվող ոչ թուրք ազգային-կրոնական խմբերի նկատմամբ իրականացվող խտրական ու ցեղասպան քաղաքականության վերաբերյալ նույնպես առկա է հարուստ գրականություն: Միանգամայն բնական պետք է համարել այն, որ հայ հետազոտողները մեծ ծավալի աշխատանք են կատարել Թուրքիայում բնակվող ոչ թուրք ազգային-կրոնական խմբերի և առաջին հերթին՝ ցեղասպանությունից հետո այդ երկրում մնացած հայության տարբեր հատվածների խնդիրների ուսումնասիրման ուղղությամբ: Այս առումով հայ հետազոտողների ուսումնասիրությունները կարելի է բաժանել մի քանի խմբերի: Ստամբուլի հայկական համայնքի պատմությանն ու արդի վիճակին են նվիրված Զ. Արզումանյանի[35], Ռ. Հովհաննիսյանի[36], Ռ. Մելքոնյանի[37], Ա. Ավագյանի[38], Ս. Գույումջյանի[39], Ա. Միրոոլու Մահթարյանի[40], Ե. Բաղդա-

---

[33] Տե՛ս Գեղամեան Ս., Թուրքիայի ազգային բուրժուազիան երկրի տնՏե՛սական և սոցիալ-քաղաքական կեանքում 1945-50 թթ., «Դրօշակ», 1989, փետրվար:

[34] Տե՛ս Թուրքիա-ԵՄ-Հայաստան. մարտահրավերները և հնարավորությունները, Եր., 2009:

[35] Տե՛ս Զաւեն Ա. քինյ. Արզումանեան, Թուրքիոյ Պատրիարքութիւնը: Ազգապատում, հատոր դ. Գիրք բ., Նիւ Եորք, 1997:

[36] Տե՛ս Հովհաննիսյան Ռ., Տասը օր Թուրքիայում, Եր., 1967:

[37] Տե՛ս Մելքոնյան Ռ., Ակնարկ Ստամբուլի հայ համայնքի պատմության 1920-ականներից մինչև մեր օրերը, Եր., 2010:

[38] Տե՛ս Ավագյան Ա., Մելքոնյան Ռ., Ստամբուլի հայ համայնքի արդի իրավիճակը, Եր., 2009:

սարյանի[41] և ուրիշների աշխատությունները: Հայ կաթոլիկ ու ավետարանական համայնքների խնդիրներն են ներկայացված Տ. Խաչիկյանի[42] և Ա. Սիմավորյանի ու Վ. Հովյանի համահեղինակությամբ[43] հրատարակված աշխատություններում:

Վերջին տարիներին հայ հետազոտողները բավականին խորությամբ սկսել են զբաղվել Հայոց ցեղասպանության և դրան հաջորդած տարիներին թուրքական իշխանությունների կողմից բռնի իսլամացված հայության, ինչպես նաև համշենահայության խնդիրներով, ինչի արդյունքում հրատարակվեցին Ռ. Մելքոնյանի[44], Կ. Խանլարյանի[45], Հ. Ալվրցյանի[46], Ք. Եալչինի[47], Հ. Խառատյանի[48], Ս. Վարդանյանի[49] և այլոց արժեքավոր աշխատությունները:

---

[39] Տե՛ս Գույումճեան Ս., Ակնարկ մը՝ ստանպուլահայ վարժարաններու իրականութեան, Ստանպուլ, 2010:

[40] Տե՛ս Միրօղլու Մուհթարեան, Պոլսահայերը (1923-1939), Եր., 2016:

[41] Տե՛ս Baghdasaryan E., The Armenian Community of Istanbul: Confronting New Challenges and Old Realities. July 21, 2008.

[42] Տե՛ս Խաչիկյան Տ., Միսիոներությունը Թուրքիայում: «Կրոն և հասարակություն», Եր., 2009, թիվ 9; Բողոքական հայերը Թուրքիայում: «Կրոն և հասարակություն», Եր., 2010, թիվ 10:

[43] Տե՛ս Սիմավորյան Ա., Հովյան Վ., Հայ կաթողիկե և ավետարանական համայնքները Թուրքիայում: Ժամանակակից միտումներ, Եր., 2012:

[44] Տե՛ս Մելքոնյան Ռ., Իսլամացված հայերի խնդիրների շուրջ. Թուրքիայի իսլամացված հայության խնդրի ուսումնասիրություն, Եր., 2009; Հայերի բռնի իսլամացումը ցեղասպանության տարիներին. ընթացքը և հետևանքները, Եր., 2010; Թուրքիայի իսլամացված հայերի թեմայի ուսումնասիրությունը. խնդիրներ և հեռանկարներ: «21-րդ ԴԱՐ», N 2, 2012: Մելքոնյան Ռ., Աբրահամյան Մ., Օսմանյան կայսրության և Թուրքիայի Հանրապետության բռնի իսլամացման քաղաքականությունը հայերի նկատմամբ որպես ցեղասպանական արարք, Եր., 2015:

[45] Տե՛ս Խանլարեան Կ., Հայ բնակչութեան էթնոկրօնական վերակերպումները Թուրքիայի Հանրապետութիւնում (1923-2005 թթ.), Անթիլիաս, 2009:

[46] Տե՛ս Ալվրցյան Հ., Ազգայնամոլությունը խարխլվող թուրքական ինքնության համայնապատկերում: «Դրօշակ», թիվ 9, 2009; Հայերի խնդիրներն ու իրավունքները Թուրքիայում: «Արեւմտահայոց հարցերի ուսումնասիրութեան կենտրոն» գիտահետազոտական հիմնադրամ: Մատենաշար 1: Խմբ. Հ. Ալվրցյան, Եր., 2010; Կրոնափոխ հայերի խնդիրները Թուրքիայի Հանրապետությունում, Եր., 2014:

Հայ մասնագետների ուշադրությունից չեն վրիպել նաև Թուրքիայում բնակվող այլ ազգային-կրոնական խմբերի խնդիրները ու, մասնավորապես, Քրդական հարցը, որոնց նվիրված են Ս. Ավանեսովի[50], Ս. Պողոսյանի[51], Մ. Հասրաթյանի[52], Տ. Մանուկյանի[53], Վ. Հարությունյանի[54], Գ. Վարդանյանի[55] և ուրիշների հետազոտությունները: Թուրքիայում բնակվող ոչ թուրք ազգային-կրոնական խմբերի խնդիրներից գերազանցապես Քրդական հարցին են նվիրված նաև ռուսաստանցի հետազոտողներ՝ Կ. Վերտյանի[56], Մ. Լազարևի[57] և ուրիշների ուսումնասիրությունները:

---

[47] Տե՛ս Եալչին Ք., Հոգիս քեզմով կը խայտայ: Թարգմանեց Գարեգին արք. Պեքճեանը, Եր., 2003:

[48] Տե՛ս Խառատեան Հ., Դարի միջնադար (իսլամացուած, իսլամացած, ալեւիացած, ծպտեալ հայերը Թուրքիայում): «Հայկազեան հայագիտական հանդէս», Պէյրութ, 2014, հատոր ԼԴ:

[49] Տե՛ս Վարդանյան Ս., Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը, Եր., 2009:

[50] Տե՛ս Аванесов С., Положение национальных меньшинств в Турции, Ер., 1963.

[51] Տե՛ս Պողոսյան Ս., Քրդերը և Հայկական հարցը, Երևան, 1991:

[52] Տե՛ս Гасратян М., Курды в Турции в новейшее время, Ер., 1990; Курдская проблема в Турции (1986-1995), М., 2001.

[53] Տե՛ս Մանուկյան Տ., Քրդստանի աշխատավորական կուսակցության գործունեության հարցի շուրջ (1980-1990-ական թթ.): Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ», N VII, Եր., 2011:

[54] Տե՛ս Հարությունյան Վ., Թուրքիայի ալևիները. պատմության և քաղաքականության հարցեր, Եր., 2013:

[55] Տե՛ս Վարդանյան Գ., Պոնտոսի հունները և Հանրապետական Թուրքիան. Հիշողություն և նոր մարտահրավերներ: «Ժամանակակից Եվրասիա, Թուրքիա: Գաղափարախոսություն և քաղաքականության հարցեր», Ռ. Սաֆրաստյանի խմբ., հատոր III (2), Եր., 2014:

[56] Տե՛ս Вертяев К.В., Вопросы демократизации и курдский вопрос в Турции в начале XXI века. “Курдский вопрос в Западной Азии в начале XXI века”, М., 2006; Ситуация в Ираке и проблемы политической стабильности Турции. “Курдский вопрос в Западной Азии в начале XXI века”, М., 2006; Курдский вопрос в политике Турции (конец XX – начало XXI века), М., 2007.

[57] Տե՛ս Лазарев М.С., Новые тенденции в курдском национализме. “Национализм и фундаментализм на Ближнем Востоке. Материалы конференции. Москва, 4.02.1999г.”, М., 1999; История Курдистана, под ред. М.С. Лазарева, Ш.Х. Мгои, М., 1999.

Ի տարբերություն ռուսաստանցի մասնագետների, արևմտյան հեղինակների հետազոտությունների օբյեկտ են դարձել ոչ միայն Քրդական հարցը, այլ նաև՝ մյուս ոչ թուրք ազգային-կրոնական խմբերի ու, մասնավորապես, ոչ մահմեդական խմբերի խնդիրները: Սա թերևս պայմանավորված էր նրանով, որ ԵՄ անդամակցության գործընթացի շրջանակներում Թուրքիան նոր պարտավորություններ ստանձնեց ապահովել ու, մասնավորապես, ոչ մահմեդական փոքրամասնություն ճանաչված հայերի, հույների ու հրեաների իրավունքները, ինչը նախատեսված էր եղել 1923 թ. Լոզանի պայմանագրով: Այս առումով կարելի է առանձնացնել Ջ. Գորվիտի[58], Օ. Օեհրինգի[59], Ս. Բոլդուինի[60], Վ. Բաումի[61], Թ. Հոֆմանի[62], Ֆ, Դելիի[63] և Մ. Բրոյնեսենի[64], Մ. Կասիերի[65], Ն. Ուոթսի[66]՝ Քրդական հարցին նվիրված ուսումնասիրությունները: Բնական պետք է համարել, որ Թուրքիայում բնակվող ոչ թուրք ազգային-կրոնական խմբերի խնդիրներին նվիրված հատուկ զեկույցներ պատրաստվե-

---

[58] Տե՛ս Gorvett J., Following December's EU Summit, Turkey forced to reassess issue of minorities. Washington report on Middle East affaiers, March, 2005.

[59] Տե՛ս Oehring O., Human Rights in Turkey. Secularizm, “Religious Freedom”, 2002.

[60] Տե՛ս Kya N., Baldwin C., Minorities in Turkey: Submission to the European Union and the Government of Turkey, Minorities, Rights, Group International, 2004, July.

[61] Տե՛ս Բաում Վ., Թուրքիան և նրա քրիստոնյա փոքրամասնությունները, Եր., 2010:

[62] Տե՛ս Hoffman T., Armenians in Turkey Today: A critical assessment of the situation of the Armenian minority in the Turkish Republic, Brussels, 2002.

[63] Տե՛ս Deli F., «Comportement communautaire en migration des Arméniens de Mardin», Séminaire mensuel de la Société des Etudes Arméniennes, Jeudi, 10 février, 2005:

[64] Տե՛ս Բրոյնեսեն Մ., Կրոնը Քուրդիստանում: «Իրան-նամէ», Եր., 1993, հուլիս; Bruinessen M., Genocide In Kurdistan? The suppression of the Dersim rebellion in Turkey (1937-38) and the chemical war against the Iraqi Kurds (1988). Conceptual and historical dimensions of Genocide. Ed. by J. Andreopoulos, University of Pennsylvania Press, 1994.

[65] Տե՛ս Cassier M., Jongerden J. Walker N., Fruitless Attempts? The Kurdish Initiative and the Containment of the Kurdish Movement in Turkey. “New Perspectives on Turkey”, No. 44 (2011).

[66] Տե՛ս Watts N., Relocating Dersim: Turkish State-Building and Kurdish Resistance, 1931-1938. “New Perspectives on Turkey”, Vol. 23, No. 1 (Fall 2000).

ցին ինչպես ԵՄ-ի կառույցների, այնպես էլ ԱՄՆ-ի պետքարտուղարության կողմից[67]:

Քրդական աշխատավորական կուսակցության (այսուհետ՝ ՔԱԿ) կողմից Թուրքիայի տարածքում իրականացվող ահաբեկչական գործողությունների, ինչպես նաև Հյուսիսային Իրաքում Քրդական ինքնավարության ստեղծումից հետո քուրդ և թուրք[68] հետազոտողների կողմից Թուրքիայում բնակվող ոչ թուրք ազգային-կրոնական խմբերի խնդիրները սահմանափակվեցին զերազանցապես Քրդական հարցին նվիրված հետազոտություններով:

Աշխատանքում օգտագործվել են նաև Արևմտահայաստանի և արևմտահայության հարցերի ուսումնասիրության կենտրոնի, «Նորավանք» հիմնադրամի, «Արմենպրես» հայկական լրատվական գործակալության և այլ տեղեկատվական-վերլուծական կայքերի նյութերը:

Թուրքիայի քաղաքական համակարգի ու տնտեսության խնդիրների և մարտահրավերների, ինչպես նաև ոչ թուրք ազգային-կրոնական խմբերի իրավունքների պաշտպանության հարցերի ուսումնասիրությունը ինքնանպատակ չէ: Չափազանց կարևոր է նշված

---

[67] Տե՛ս Turkey Human Rights Practices, 1993, U.S. Department of State, January 31, 1994; U.S. Department of State: Annual Report on International Religious Freedom for 1999: Turkey. Washington, DC, September 9, 1999; “2000 Regular report from the Commission on Turkey’s progress towards accession”, 8 November, 2000; Department of State: Annual Report on International Religious Freedom, 2001. December, 2001; Commission of the European Communities. Commission Staff Working Document. Turkey, 2007, Progress Report. Brussels, 06.11.2007; Minority Rights Group International, State of the World’s Minorities 2008, MRG, Jan, 2008.

[68] Տե՛ս Yegen M., “Prospective-Turks” or “Pseudo-Citizens”: Kurds in Turkey. “Middle East Journal”, Vol. 63, No. 4 (2009); Yavuz H., Özcan N., The Kurdish Question and Turkey's Justice and Development Party. “Middle East Policy”, Vol. 13, No. 1 (2006); Bozarslan H., Why the Armed Struggle? Understanding the Violence in Kurdistan of Turkey. “The Kurdish Conflict in Turkey”. St. Martin's, 2000; Candar C., “Leaving the Mountain”: How may the PKK Lay Down Arms? Freeing the Kurdish Question from Violence. Istanbul: TESEV, 2012; Oktem K., Creating Turk's Homeland: Modernization, Nationalism and Geografy in Southest Turkey in the late 19th and 20th Centuries, University of Oxford, 2003.

խնդիրները քննարկել Հայոց ցեղասպանության հարցի լույսի ներքո՝ պարզելու համար, թե դրանց շուրջ Թուրքիայում ընթացող զարգացումները ինչպես են ազդում և հետագայում ինչպես կարող են անդրադառնալ հայ ժողովրդի օրինական իրավունքների վերականգնման, այն է՝ Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման գործընթացի վրա:

Ցավոք, այս հարթության վրա կատարված աշխատանքները խիստ սակավ են և վերաբերում են առաջադրված հարցադրման նեղ հարցերին: Այսպես, Լ. Հովսեփյանի[69], Ռ. Մելքոնյանի[70], Ա. Հովհաննիսյանի[71] և Մ. Անումյանի[72] աշխատանքները նվիրված են թուրքական գործադիր ու օրենսդիր մարմինների կողմից Հայոց ցեղասպանության ընկալման որոշ խնդիրներին, Կ. Խանլարյանը[73] և Ն. Հովհաննիսյանը[74] Հայոց ցեղասպանության և դրա հետևանքների հաղթահարման հարցը քննարկել են Քրդական հարցի և քրդերի ազատագրական պայքարի հոլովույթում, իսկ թուրքական հասարակության կողմից Հայոց ցեղասպանության հարցի որոշ ընկալումներին անդրադարձել են «Ակօսի» լուսահոգի խմբագրապետ Հր. Դինքը[75],

---

[69] Տե՛ս Հովսեփյան Լ., Թուրքիայի վախերը. Սևրի սինդրոմ (Սևրի սինդրոմի դրսևորումները Թուրքիայի հասարակական-քաղաքական քննարկումներում), Եր., 2012:

[70] Տե՛ս Մելքոնյան Ռ., Հայոց ցեղասպանության խնդիրը Թուրքիայի խորհրդարանում (2007-2014 թթ.): «Ժամանակակից Եվրասիա, Թուրքիա. Գաղափարախոսություն և քաղաքականության հարցեր», Ռ. Սաֆրաստյանի խմբ., հատոր III (2), Եր., 2014:

[71] Տե՛ս Հովհաննիսյան Ա., «Հայկական գործոնի» շահարկումը Թուրքիայի 2011 թ. խորհրդարանական ընտրությունների ընթացքում: «Ժամանակակից Եվրասիա. Թուրքիա, Իրան», հ. I, Ռ. Սաֆրաստյանի խմբ., Եր., 2012:

[72] Տե՛ս Անումյան Մ., Թուրքիայում Հայոց ցեղասպանության պատասխանատուների հերոսացման հարցի շուրջ: «Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ», N VII, Եր., 2011:

[73] Տե՛ս Խանլարեան Կ., Քրդական շարժումների դիրքորոշումը Հայաստանի հայութեան և Հայ Դատի նկատմամբ, «Հայ դատն այսօր», Թեհրան, 2005:

[74] Տե՛ս Հովհաննիսյան Ն., Քրդերի մասնակցությունը հայերի ցեղասպանությանը: Քրդական գործոնը Արևմտյան Հայաստանի հարցի լուծման հայկական հայեցակարգում, Եր., 2016:

[75] Տե՛ս Դինք Հր., Երկու մոտ ժողովուրդ, երկու հեռու հարևան, Եր., 2009:

թուրքերի՝ ներողության արշավի կազմակերպիչներից՝ Չ. Աքթարը[76] և հայաստանցի հետազոտողներ՝ Մ. Անումյանը[77], Լ. Եփրեմյանն[78] ու լրագրող Ա. Օզինյանը[79]: Ակնհայտ է, որ անհրաժեշտություն է առաջանում Հայոց ցեղասպանության հարցը և դրա հետևանքների հաղթահարման հնարավորությունները քննարկել ավելի համակողմանի ու համալիր ձևով՝ ժամանակակից Թուրքիայում ընթացող ներքաղաքական զարգացումների հոլովույթում և հանգել որոշակի եզրահանգումների ու առաջարկների: Սույն աշխատությունը նշված հարցադրումներին պատասխանելու մի փորձ է:

Կառուցվածքային առումով աշխատանքը բաժանել ենք երեք գլուխների: Առաջին գլխում քննարկվում են Թուրքիայի քաղաքական համակարգի և տնտեսության առջև ծառացած հիմնական խնդիրներն ու մարտահրավերները: Երկրորդ գլուխը նվիրված է թուրքական իշխանությունների խտրական և ցեղասպան քաղաքականությունը երկրում բնակվող ինչպես ոչ քրիստոնյա ազգային-կրոնական խմբերի՝ քրդերի, ալևիների, զազաների և այլն, այնպես էլ ոչ մահմեդական ազգային-կրոնական խմբերի՝ հայերի, հույների, ասորիների, հրեաների նկատմամբ: Երրորդ գլխում անդրադարձ է կատարվում Թուրքիայի ինչպես իշխանությունների, այնպես էլ հասարակության կողմից Հայոց ցեղասպանության հարցի ընկալումներին: Աշխատանքի վերջում ներկայացվում է Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հնարավոր ճանապարհային քարտեզի ուրվագիծը:

---

[76] Տե՛ս Աքթար Չ., Կոչ ներումի. թուրքերը դիմում են հայերին, Եր., 2011:

[77] Տե՛ս Անումյան Մ., Ծպտյալ և իսլամացած հայերի հարցի արծարծումը ժամանակակից թուրքական մամուլում: «Ցեղասպանագիտական հանդես»: Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, Տարի 2, N 1, Եր., 2014:

[78] Տե՛ս Եփրեմյան Լ., «Հայկական տաբուն» Թուրքիայում. Հոգեվերլուծական դիտարկման փորձ, «21-րդ ԴԱՐ», թիվ 3 (43), Եր., 2012:

[79] Տե՛ս Ա. Օզինյանի հրապարակախոսական հոդվածների շարքը www. civilnet. am և www.mediamax.am կայքերում:

ԳԼՈՒԽ 1. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

1.1. Թուրքիայի արդի քաղաքական համակարգի հիմնական խնդիրներն ու մարտահրավերները

Ընդհանրապես Թուրքիայի քաղաքական համակարգը աչքի է ընկնում անկայունությամբ, անընդհատ գտնվում է ցնցումների մեջ, իշխանությունը պարբերաբար փոփոխվում է զինվորական հեղաշրջումների միջոցով, ինչն, անշուշտ, իր հետքն է թողնում երկրում տեղի ունեցող հետագա զարգացումների վրա: Ժամանակակից Թուրքիայի քաղաքական համակարգում առկա խնդիրների թվում նախևառաջ պետք է նշել վառ արտահայտված գաղափարական առճակատումը աշխարհիկության և իսլամի միջև, ինչն իր հերթին երկրի քաղաքական դաշտում հանգեցնում է բանակ-քաղաքական իշխանություն դիմակայության, որում բանակը հանդես է գալիս՝ որպես աշխարհիկության սկզբունքների պահապան, իսկ ներկայիս քաղաքական իշխանությունները կանգնած են իսլամի սկզբունքների պաշտպանության դիրքերում[80]: Նշված դիմակայությունը ընթանում է ոչ միայն բացահայտ, այլև՝ թաքնված քաղաքական պայքարի դրսևորումներով, երբ երկրի քաղաքական համակարգում առաջ են գալիս նոր դերակատարներ ի դեմս գաղտնի քաղաքական՝ «խորքային պետություն», և կրոնական՝ «գյուլենական շարժում», կազմակերպությունների: Դրանք փորձում են անտեսանելիորեն իրենց ազդեցությունը և կամքը թելադրել երկրի քաղաքական իշխանությանն ու հասարակությանը: Թուրքիայի քաղաքական համակարգի բնորոշ և անբաժան մասը դարձած ու հակադիր բևեռներում գործող այս

[80] Տե՛ս Турция: новая роль в современном мире, с. 15.

երևույթները հավասարապես սարսափ են տարածում ինչպես հասարակության, այնպես էլ քաղաքական իշխանության համապատասխան հատվածների վրա: Որքան էլ պարադոքսալ կարող է թվալ, բայց քաղաքական իշխանությունների կողմից «խորքային պետության» կամ «գյուլենական շարժման» դեմ մղվող անզիջում պայքարը թուլացնում և խարխլում է երկրի հենց քաղաքական համակարգի հիմքերը: «Խորքային պետությունը» և «գյուլենական շարժումը» իրենց մեջ ներառում են քաղաքական իշխանության, բանակի և անվտանգության այլ մարմինների ազդեցիկ գործիչներին, որոնք որոշակի դերակատարում ունեն երկրի հասարակական-քաղաքական կյանքում:

Թուրքիայի արդի քաղաքական համակարգի խնդիրների ու մարտահրավերների մյուս խումբը պայմանավորված է դրանում առկա լրջագույն հոգեբանական բարդույթներով, որոնք առաջացել են դեռ մեկ դար առաջ՝ Առաջին աշխարհամարտի ժամանակահատվածում: Պատերազմը որպես պատեհ առիթ նկատելով, երիտթուրքական վարչակարգը իրականացրեց Օսմանյան կայսրության տարածքում տեղաբնիկ ժողովուրդների՝ առաջին հերթին հայերի ցեղասպանությունը՝ այդ կերպ փորձելով ստեղծել թուրքական ազգային պետություն, ջանալով վերջնականապես տիրանալ այդ ժողովուրդների հայրենիքին ու կանխել նրանց պետականությունների վերստեղծումը այն տարածքներում, որտեղ նրանք հազարամյակներով կերտել էին իրենց քաղաքակրթությունը: Ցեղասպանությանը զուգահեռ, թուրքական տարբեր վարչակարգերը հետևողականորեն իրականացնում էին ոչ մահմեդական բնակչության բռնի մահմեդականացման և թուրքացման քաղաքականություն՝ հույս ունենալով, որ այդ կերպ ոչ թուրք տարրերի կոտորածներից հրաշքով փրկված աննշան մնացորդացի մեջ կհաջողվի ջնջել ազգային և կրոնական ինքնությունը: Առաջին հայացքից կարող էր թվալ, թե թուրքական

վարչակարգերը հաջողեցին այդ հարցում, սակայն արդեն հանրապետական Թուրքիայում տեղի ունեցող զարգացումները պարզորոշ ցույց տվեցին, որ խնդիրը ոչ միայն չի լուծվել, այլ ավելի է խորացել: Բռնի մահմեդականացման քաղաքականությունը Թուրքիայում հանգեցրել է ինքնության լրջագույն ճգնաժամի, երբ այդ երկրի շատ քաղաքացիներ լուրջ կասկածներ ունեն այն հարցում, թե իրենց նախնիները մահմեդական են եղել կամ առավել ևս՝ թուրք: Այս երևույթը ինչպես երկրի քաղաքական դաշտում, այնպես էլ հասարակության մեջ շահարկման առարկա է դառնում և քաղաքական գործիչներից ու բարձրաստիճան պաշտոնյաներից ոչ ոք ապահովագրված չէ, որ իրեն կարող են մեղադրել մահմեդական կամ թուրք չլինելու մեջ: Իսկ նման մեղադրանքները Թուրքիայում տիրող տրամադրությունների պայմաններում, այդ պետության ցանկացած գործչի համար հղի են լուրջ հետևանքներով:

Թուրքական վարչակարգերի ցեղասպանության և բռնի մահմեդականացման քաղաքականությունը հիմնականում իրականացվեց տեղաբնիկ ոչ թուրք ժողովուրդների հայրենիքներում (Արևմտյան Հայաստանում հայերի նկատմամբ, Պոնտոսում՝ հույների, Միջագետքում՝ ասորիների): Վարչական առումով այս տարածքները մոտավորապես համընկնում էին Օսմանյան կայսրության արևելյան և հարավ-արևելյան նահանգներին, որտեղ տեղաբնիկ ժողովուրդների բնաջնջումից և բռնի մահմեդականացումից հետո կտրուկ փոխվեց ոչ միայն ժողովրդագրական, այլև՝ սոցիալ-տնտեսական պատկերը: Նշված տարածքները վերածվեցին երկրի ամենաթերզարգացած շրջանների, որոնց բնակչության մեջ դոմինանտ տարր դարձան քրդերը: Հանրապետական Թուրքիայում պահպանվեցին երկրի արևելյան և հարավ-արևելյան նահանգների նկատմամբ վարվող օսմանյան քաղաքականության տխուր ավանդույթները. այդ տարածքները կարծես թե անտեսված էին երկրի ղեկավարության կողմից,

ինչի հետևանքով Թուրքիան տասնամյակներ շարունակ զարգանում էր և է անհամաչափ, իսկ արևելյան և հարավ-արևելյան նահանգների սոցիալ-տնտեսական ցածր մակարդակը շարունակում է պահպանվել մինչ օրս: Թեև քրդերը մեծ ծառայություն մատուցեցին թուրքերին՝ «արյունոտ կացին» դառնալով նրանց ձեռքին և նպաստելով նշված տարածքներում տեղաբնիկ ժողովուրդների բնաջնջման քաղաքականությանը, սակայն այդ տարածքները հայերից, հույներից ու ասորիներից ազատելուց հետո թուրքական իշխանությունների կողմից թիրախավորվեցին արդեն քրդերը, որոնց գոյությունը, իբրև ազգի, այդ երկրում մերժվում է: Քրդերի, ալևիների, զազաների և իրենց թուրք չհամարող այլ էթնոկրոնական խմբերի նկատմամբ թուրքական իշխանությունների կողմից վարվող խտրական քաղաքականությունը այդ խմբերի մոտ հանգեցրեց իրենց ինքնությունը պաշտպանելուն ուղղված ազգային-ազատագրական պայքարի: Նշված խմբերից թվական գերազանցություն ունեցող քրդերի ազգային-ազատագրական պայքարը դարձավ ամենատևականն ու արյունալին, իսկ Քրդական հարցը դարձավ ներկայիս Թուրքիայի դեմ ուղղված լրջագույն մարտահրավերներից մեկը: Ինքնության ճգնաժամը, գումարվելով ոչ թուրք ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումներին, թուրքական իշխանություններում և հասարակության մեջ ի հայտ բերեցին նոր հոգեբանական բարդույթներ ու վախեր՝ ի դեմս «սևրոֆոբիայի» կամ «Սևրի սինդրոմի»: Այս երևույթը Օսմանյան կայսրությունը մասնատող Սևրի պայմանագրի անունով կոչելը պատահական չէ, քանզի թուրքական իշխանությունների և հասարակության կողմից «Սևրի սինդրոմն» ընկալվում է որպես Թուրքիայի հնարավոր մասնատմանը կամ ամբողջականության խաթարմանն ուղղված մտադրություն կամ նա-

խաձեռնություն, որը կարող է ի հայտ գալ ինչպես ներքին, այնպես էլ արտաքին ուժերի կողմից[81]: Բնականաբար, ներքին ուժերի տակ հասկացվում են Թուրքիայի բոլոր այն էթնոկրոնական խմբերը, որոնք թուրքերի հետ իրենց չեն նույնականացնում: Չբացառելով Թուրքիան մասնատել ձգտող արտաքին ուժերի այդ խմբերի գործակցության հնարավորությունը՝ թուրքական իշխանությունները և հասարակական-քաղաքական ուժերը այդ խմբերին հռչակում են որպես սպառնալիք թուրքական պետության ամբողջականության և նույնիսկ գոյության համար:

Թուրքիայի քաղաքական դաշտում գործող ծայրահեղ ազգայնական ուժերը՝ ինչպիսին են, օրինակ՝ «Գորշ գայլերը» կամ «Ազգային շարժում» կուսակցությունը (այսուհետ՝ ԱՇԿ), առավել ցավագին են վերաբերվում «Սևրի սինդրոմի» հետ կապված վախերին: Արտաքին աշխարհի նկատմամբ անվստահությամբ ու դավադրությունների տեսություններով առաջնորդվելով՝ նրանք արտաքին ուժերի կողմից «Սևրի սինդրոմի» դրսևորում են համարում Եվրամիությանը Թուրքիայի անդամակցության շրջանակներում երկրում կատարվող բարեփոխումները ժողովրդավարացման, ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության և այլ ոլորտներում և այլն[82]: Ծայրահեղական ուժերը պատրաստ են անգամ արմատական քայլերի, ընդհուպ մինչև բռնությունների դիմել ներքին թշնամիների, այսինքն՝ ազգային փոքրամասնությունների դեմ, որոնք, իբր թե, ծառայում են արտաքին ուժերին և, այդպիսով, նպաստում են Թուրքիայի թուլացմանն ու մասնատմանը: Իհարկե, հաճախ ծայրահեղ ազգայնականների գործողությունները ազգային փոքրամաս-

---

[81] Տե՛ս Շաքարյան Ա., Արարատից այն կողմ. Ապակողավորելով Թուրքիան, էջ 36:

[82] Տե՛ս Հովսեփյան Լ., Թուրքիայի վախերը. Սևրի սինդրոմ (Սևրի սինդրոմի դրսևորումները Թուրքիայի հասարակական-քաղաքական քննարկումներում), Եր., 2012, էջ 4:

նությունների նկատմամբ ուղղորդվում և ղեկավարվում են հենց իշխանությունների կողմից, որոնք նրանց միջոցով են հարված հասցնում ազգային փոքրամասնություններին և իրենց քաղաքական հակառակորդներին: Սակայն երբեմն ծայրահեղականները դուրս են գալիս իշխանությունների վերահսկողությունից ու սկսում են գործել ինքնուրույն, ինչը երկրի համար նոր սպառնալիքներ ու մարտահրավերներ է առաջացնում՝ ստիպելով իշխանություններին արդեն պատժիչ գործողություններ իրականացնել ազգայնականների դեմ՝ նոր ցնցումներ առաջացնելով երկրի քաղաքական համակարգում:

Դժվար չէ նկատել, որ Թուրքիայի արդի քաղաքական համակարգի թվարկված հիմնական խնդիրների ու մարտահրավերների ակունքները միանշանակ տանում են դեպի նախորդ հարյուրամյակի 20-ական թթ., երբ Օսմանյան կայսրության փլատակների վրա Մուստաֆա Քեմալի (Աթաթուրք) կողմից դրվում էին Թուրքիայի Հանրապետության հիմքերը: Անցած տասնամյակների ընթացքում այդ խնդիրներն ու մարտահրավերները ոչ միայն չեն լուծվել կամ չեզոքացվել, այլ ընդհակառակը, ավելի են խորացել, երկրի համար վերածվելով լուրջ սպառնալիքների, որոնք կարող են առնվազն հանգեցնել նրա տարածքային ամբողջականության խաթարմանը: Հաշվի առնելով այս իրողությունները՝ հարկ ենք համարում հակիրճ և առանձին-առանձին կանգ առնել Թուրքիայի քաղաքական համակարգի նշված հիմնական խնդիրների ու դրանցից բխող մարտահրավերների վրա:

1. Աշխարհիկության և իսլամի գաղափարական առճակատումը և Թուրքիայի քաղաքական համակարգի վրա դրա հետևանքները:

Աշխարհիկության հիմքերը Թուրքիայում դրվեցին Մ. Քեմալի կողմից, ով հաշվի չառնելով Օսմանյան կայսրության կառավարման համակարգում դարերով արմատավորված իսլամական ավանդույթները, Թուրքիայի Հանրապետության հռչակումից հետո երկիրը կտրուկ տարավ արևմտականացման և աշխարհիկացման ուղղութ-

յամբ՝ ձգտելով հետևողականորեն նվազեցնել իսլամի դերը պետության և հասարակության մեջ: Իրականությունը սակայն այն էր, որ, թեև տասնամյակներ շարունակ քեմալական աշխարհիկության սկզբունքներով կառավարվող Թուրքիայում իսլամը մղված էր հետին պլան, այն նմանվում էր սեղմված մի զսպանակի, որը պատեհ առիթի էր սպասում, որ իրեն սեղմած ուժը թուլանար, որպեսզի ինքը կարողանար ամբողջ թափով դուրս պրծնել կապանքներից:

Իսլամի դերի աճը կանխելու նպատակով մի շարք միջոցների ձեռնարկումը և քաղաքական կուսակցությունների գործունեության կասեցումը առավելություններ տվեցին աշխարհիկ վարչակարգին ժողովրդավարական բազմակարծության նկատմամբ՝ անտեսելով իսլամական ինքնությունն ու նրա դերը երկրի սոցիալ-տնտեսական կյանքում: Այս փաստը միևնույն ժամանակ նպաստեց հասարակության բևեռացմանը՝ ստեղծելով քեմալականների և իսլամիստների հակադիր հատվածներ, որոնք հերքում են ընդհանուր մշակույթը և հրաժարվում են միմյանց հետ հարաբերվելուց: Թվացյալ աշխարհականացումն ավելի խորացրեց պետության և հասարակության պառակտումը. պետությունը շարժվում էր եվրոպական արժեհամակարգի ուղղությամբ, իսկ հասարակությունը հիմնականում շարունակում էր մնալ ավանդապահ[83]:

Թուրքիայում իսլամական շարժումների աստիճանական ակտիվացումը, մեծ թվով կրոնական միաբանությունների, շարժումների, կազմակերպությունների ու հիմնադրամների գործունեության ծավալումը կարելի է համարել թուրքական հասարակության յուրատեսակ պատասխանը երկրում ընթացող ժողովրդավարական զարգացումներին, ընդարձակվող շուկայական տնտեսությանը, այլընտրանքային աշխարհայացքների ներմուծմանը և այլն: Իսլամի հասա-

[83] Տե՛ս Թուրքիա-ԵՄ-Հայաստան. մարտահրավերները և հնարավորությունները, էջ 21:

րական ազդեցության դեմ քեմալիզմին հավատարիմ ուժերի՝ Աթաթուրքի հիմնած Ժողովրդա-հանրապետական կուսակցության (այսուհետ՝ ԺՀԿ) և զինված ուժերի մղած պայքարի շնորհիվ այս շարժումները հանրային գիտակցության մեջ պահպանեցին կենդանի մնացած միակ «կազմակերպված ուժի» հեղինակությունը[84]:

1946 թ. Թուրքիայի քաղաքական կյանքում ի հայտ է գալիս նոր քաղաքական ուժ՝ Դեմոկրատական կուսակցությունը (այսուհետ՝ ԴԿ), որի անդամների շարքերում մեծ թիվ էին կազմում այն պատգամավորները, ովքեր Ջ. Բայարի գլխավորությամբ լքել էին ԺՀԿ-ի շարքերը: ԺՀԿ-ն չի առարկում նոր ընդդիմադիր կուսակցությունն օրինականացնելու գործընթացի դեմ՝ հատուկ հրավիրված նիստի ընթացքում որոշում ընդունելով մենաշնորհային դիրքից հրաժարվելու վերաբերյալ:

1950 թ. մայիսին տեղի ունեցած ընտրությունների արդյունքում ԴԿ-ն ԹԱՄԺ-ում ստացավ 408 տեղ այն դեպքում, երբ ԺՀԿ-ն ստացավ միայն 69 տեղ: Բազմակուսակցական համակարգի առաջացման արդյունքում ԺՀԿ-ն դարձավ ընդդիմություն, իսկ կառավարության ղեկը ստանձնեց Ա. Մենդերեսը: ԴԿ-ն էլ ավելի ամրագրեց իր հաղթանակը ԹԱՄԺ-ում 1954 թ. տեղի ունեցած ընտրությունների արդյունքում[85]: ԴԿ-ի կառավարման տասնամյակում տեղի ունեցած կրոնական խորքային գործընթացները դարձան համակարգային՝ ցույց տալով, որ բազմակուսակցական մրցակցային քաղաքականության մեջ կրոնը դարձել է ազդեցիկ գործոն[86]:

ԺՀԿ-ի պարտությունը առաջ բերեց իսլամական արժեքներին վերադառնալու միտումներ: 1950-80-ականները բնութագրվում են

---

[84] Տե՛ս Киреев Н.Г., Турция: синтез национализма и исламизма в государственной идеологии, с. 45-57.
[85] Տե՛ս Киреев Н., История Турции XX век, М., 2007, с. 283-288.
[86] Տե՛ս Кондакчян Р., նշվ. աշխ., էջ 147:

թուրք հասարակության մեջ ընդդիմադիր տրամադրությունների ակտիվացմամբ: Կոչ էր արվում վերադառնալ «մաքուր և սկզբնական իսլամին», այսինքն՝ վերականգնել մուսուլմանական կոնկրետ ինստիտուտներն ու նորմերը:

1970-90-ական թթ. իսլամական շարժումը ոչ միայն սոսկ արձագանք էր քեմալիստների քաղաքական և մշակութային գերակայությանը, այլև՝ հանգեցրեց նոր պրոիսլամիստական կուսակցությունների ստեղծմանը: Եթե առաջին փուլը (1945-1969) առաձնանում էր ընդգծված իսլամամետ կուսակցությունների բացակայությամբ, և կրոնը օգտագործվում էր՝ որպես զանգվածների միջև կապերի հաստատման միջոց, ապա երկրորդ փուլը (1970-ական թթ. մինչ այսօր) աչքի ընկավ երկրի ներքին քաղաքական կյանքի վրա իսլամական ազդեցության ուժեղացմամբ: Իսլամը դարձավ քաղաքական քարոզչության կարևոր գործոն, մի հանգամանք, որն այլևս չպետք է անտեսվեր: Թուրքական պետությունում այսպես կոչված իսլամական վերածննդի սկզբնական փուլը լուրջ նախապայմաններ ստեղծեց թուրքական քաղաքականության մեջ քաղաքական իսլամի դերի բարձրացման համար: 1970-ական թթ. ստեղծվեց առաջին իսլամական «Ազգային տեսակետ» կուսակցությունը, որը հետագայում հանդես եկավ «Բարօրության կուսակցություն» (այսուհետ՝ ԲԿ) անվան տակ[87]:

Երբ 1989 թ. Թ. Օզալը դարձավ Թուրքիայի նախագահը «Մայր հայրենիք» կուսակցությունը (այսուհետ՝ ՄՀԿ) զգալիորեն թուլացավ, և 1991 թ. ընտրությունների արդյունքում կառավարություն կազմելու իրավունքն անցավ ընդդիմադիր «Ճշմարիտ ուղի» կուսակցությանը (այսուհետ՝ ՃՈՒԿ)[88]:

---

[87] Տե՛ս Киреев Н. Г., Метаморфозы правящей элиты Турции, с. 78-92.

[88] Տե՛ս Տեր-Մաթևոսյան Վ., Թուրքիան 2008–2011 թթ.: Քաղաքական փոխակերպումների հիմնական առանձնահատկությունները, էջ 38:

1991 թ. քրեական օրենսգրքի 163-րդ հոդվածը չեղյալ հայտարարվեց, որի հետևանքով կրոնական միաբանությունների գործունեությունը որոշակիորեն ազատականացվեց: 1995 թ. ընտրությունների նախօրեին Թ. Չիլերը նրանց անուղղակի համագործակցության կոչ արեց: Միաբանությունները սկսեցին բացահայտորեն ակտիվ մասնակցություն ունենալ քաղաքական ու սոցիալ-մշակութային գործընթացներին[89]: Կրոնական միաբանությունները երկրի աշխարհիկացման արմատական հակառակորդներից էին: Թ. Օզալը, հանդիսանալով այդ միաբանության անդամ, 1980-ական թթ. զգալիորեն աջակցեց նրանց, տրամադրեց գործունեության լայն դաշտ և ազդեցիկ պետական պաշտոններ՝ ապահովելու համար նրանց օժանդակությունը իր քաղաքական ձեռնարկումներում[90]:

1991 թ. հոկտեմբերի 20-ին տեղի ունեցան խորհրդարանական ընտրություններ: Մինչ այդ, ԲԿ-ի, Ա. Թյուրքեշի և այլ իսլամամետ քաղաքական ուժերի ջանքերով ստեղծվեց նախընտրական դաշինք, որը ստացավ քվեների 16,9 տոկոսը և ձեռք բերեց 62 պատգամավորական մանդատ, սակայն քիչ անց դաշինքը փլուզվեց, իսկ ԲԿ-ն «ժառանգություն» ստացավ 40 պատգամավորական մանդատ (10,9 տոկոս): Ս. Դեմիրելի ղեկավարած ՃՈՒԿ-ը, շահելով քվեների 27 տոկոսը, մեջլիսում ձեռք բերեց մեծամասնություն, Թ. Օզալի ՄՀԿ-ն եզրագիծը հատեց երկրորդ լավագույն ցուցանիշով[91]:

1993 թ. ապրիլին, երբ Թ. Օզալը հանկարծամահ եղավ, Ս. Դեմիրելն ընտրվեց երկրի նախագահ: ՃՈՒԿ-ի նախագահ ընտրվեց Թ. Չիլերը: Հենց նա էլ շուտով ստանձնեց վարչապետի պաշտոնը:

---

[89] Տե՛ս Տեր-Մաթևոսյան Վ., Իսլամը Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքում, էջ 106:

[90] Տե՛ս Monshipouri M., Islamism, secularism and Human Rights in the Middle East, p. 110.

[91] Տե՛ս Տեր-Մաթևոսյան Վ., Իսլամը Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքում, էջ 125:

Ստամբուլի բիզնես շրջանակների շահերը ներկայացնող և Ս. Դեմիրելի կառավարությունում տնտեսության զարգացման նախարար աշխատած Թ. Չիլերի՝ հակասություններով հարուստ վարչապետության շրջանը այնքան էլ չարդարացրեց աշխարհիկ կարգերի ջատագովների հույսերը: Նա հաճախ էր համագործակցության ձեռք մեկնում կրոնական կազմակերպություններին՝ ֆինանսական կամ քաղաքական աջակցություն ստանալու ակնկալիքով: Այդ էր պատճառը, որ Դեմիրել-Չիլլեր կոալիցիան երկար կյանք չունեցավ[92]:

1994 թ. ՏԻՄ ընտրություններում ԲԿ-ն կարողացավ ավելի քան կրկնապատկել իր նախորդ ցուցանիշը, Անկարան և Ստամբուլը, ինչպես նաև 29 այլ քաղաքներ, մոտ 400 միջին և փոքր բնակավայրեր, կամ երկրի բնակչության 2/3-ն, անցան ԲԿ-ի կառավարման տակ[93]: ԲԿ-ն զգալի առավելությամբ հաղթել էր երկրի արևելյան և հարավ-արևելյան քրդաբնակ շրջաններում, քանի որ քրդական «Դեմոկրատական շարժում» կուսակցությունը բոյկոտեց ընտրությունները, երբ վերջինիս մասնակցող մի քանի պատգամավորներ հակապետական գործունեության մեղադրանքով զրկվեցին անձեռնմխելիության իրավունքից[94]:

1990-ական թթ. կեսերին ԲԿ-ի ներսում նկատվում էր երիտասարդ սերնդի գործիչների՝ Ռ. Էրդողանի, Ա. Գյուլի, Բ. Արընջի, Ջ. Չիչեքի և մյուսների ակտիվացումը: Ստանձնելով Ստամբուլի քաղաքապետի պաշտոնը՝ Ռ. Էրդողանն իր գործելաոճով, խարիզմատիկ առաջնորդի ու համոզիչ հռետորի որակներով, համեմատաբար

---

[92] Տե՛ս Խանլարեան Կ., Հայ բնակչութեան էթնոկրօնական վերակերպումները Թուրքիայի Հանրապետութիւնում (1923-2005 թթ.), էջ 15:

[93] Տե՛ս Шлыков В., Армия в жизни современного турецкого общества в начале 2000-х, с. 115-120.

[94] Տե՛ս Տեր-Մաթևոսյան Վ., Իսլամը Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքում, էջ 126:

լիբերալ քաղաքական հայացքներով սկսեց հակադրվել կուսակցության առաջնորդ Ն. Էրբաքանին[95]:

1995 թ. արտահերթ խորհրդարանական ընտրություններում հաղթանակ տարավ ԲԿ-ը՝ ստանալով քվեների 21,4 տոկոսը: Արդյունքները միանգամայն անսպասելի էին աշխարհիկ կարգերի և քեմալիզմի գաղափախոսության ջատագովների համար: Սրանից հետո ավելի ակտիվացավ քաղաքական պայքարը թուրքական իսլամական վերնախավի և քեմալականների միջև[96]:

ԲԿ-ի քվեները բավարար չէին միակուսակցական կառավարություն ձևավորելու համար, հետևաբար կոալիցիոն կառավարության ձևավորումը դարձավ անխուսափելի: Նոր կառավարությունում ԲԿ-ն ստանձնեց ֆինանսների, աշխատանքի և սոցիալական ապահովության, արդարադատության, մշակույթի, էներգետիկայի, գյուղատնտեսության և մի շարք այլ նախարարությունների ղեկավարությունը, իսկ ՃՈՒԿ-ը զու-ի ակնհայտ թելադրանքով՝ արտաքին գործերի, ներքին գործերի, պաշտպանության, կրթության ու տրանսպորտի նախարարությունների ղեկավարումը, ընդ որում, ՃՈՒԿ-ի ենթակայության տակ էր ԿԳՆ-ն: Թ. Չիլերը նշանակվեց փոխվարչապետ և արտաքին գործերի նախարար[97]:

1998 թ. ապրիլի 21-ին Թուրքիայում մեծ աղմուկ բարձրացավ, երբ Դիարբեքիրի պետական անվտանգության դատարանը Ստամբուլի քաղաքապետ Ռ. Էրդողանին մեղավոր ճանաչեց կրոնական ատելություն սերմանելու համար և դատապարտեց 10-ամսյա ազատազրկման՝ զրկելով հետագայում կարևոր պաշտոններ զբաղեցնե-

---

[95] Տե՛ս Шлыков В., Армия в жизни современного турецкого общества в начале 2000-х, с. 125-132.

[96] Տե՛ս Руднева М. Б., Верный путь к благоденствию (к оценке политической жизни Турции в 1995-1999 гг.), “Востоковедный сборник”, вып. 3, М., 2002, с. 128-138.

[97] Տե՛ս Չաքրյան Հ., Իսլամական գործոնը Արևմուտք-Թուրքիա փոխհարաբերությունների ենթատեքստում, «Հայացք Երևանից», N 3/1, 1997, էջ 18:

լու իրավունքից: Գերագույն դատարանը մերժեց անգամ նրա բողոքարկումը: Էրդողանը նոյեմբերին հրաժարական տվեց քաղաքապետի պաշտոնից և չորս ամով ազատազրկվեց: Քեմալականների այդ քայլի պատճառը 1997 թ. դեկտեմբերին Թուրքիայի Սիիրթ (Սղերդ) քաղաքում Ռ. Էրդողանի կողմից քեմալական սկզբունքների քննադատությունն ու իսլամիստական կոչերն էին, սակայն ազատազրկումն էլ ավելի բարձրացրեց նրա հեղինակությանը[98]:

1998 թ.՝ փակվելուց հետո, ԲԿ-ն վերակազմավորվեց «Առաքինություն» կուսակցության (այսուհետ՝ ԱԿ) և շարունակեց ուղղորդվել Ն. Էրբաքանի և ղեկավարվել նրա մտերիմներից Ռ. Քութանի կողմից: ԱԿ-ը 140 պատգամավորներով դարձավ մեջլիսի ամենամեծ խմբակցությունը և, հաշվի առնելով նախկին փորձը, սկզբում հայտարարում էր, որ Թուրքիայի աշխարհիկ կարգերի հավատարիմ ջատագովներից է և աջակցում է Թուրքիայի՝ Եվրամիության անդամակցության գործընթացին: ԱԿ-ում ի հայտ եկավ չափավոր իսլամականների հոսանք Ա. Գյուլի և մյուսների գլխավորությամբ, որը պահանջում էր դասեր քաղել «Փետրվարի 28-ի գործընթացից» և լինել առավել խոհեմ քեմալականների հետ հարաբերություններում. առաջարկվում էր կուսակցության ղեկավար կազմում ընդգրկել Էրբաքանի գաղափարական ազդեցությունից ազատ երիտասարդ կադրերի, որոնք կփորձեն նորմալ հարաբերություններ հաստատել քեմալականների հետ, սակայն հաղթեցին Ն. Էրբաքանի և Ռ. Քութանի կողմնակիցները[99]:

Արդյունքում կրկնվեց ԲԿ-ի պատմությունը և 2001 թ. Թուրքիայի Սահմանադրական դատարանն արգելեց ԱԿ-ի գործունեությունը:

---

[98]Տե՛ս Տեր-Մաթևոսյան Վ., Իսլամը Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքում, էջ 174:

[99] Տե՛ս Burhanettin D., The Experience of Turkish Islamism: Between Transformation and Islamism, pp. 5-22.

«Առաքինություն» կուսակցության փակվելուց հետո նրա հիմքի վրա ստեղծվեցին երկու նոր կուսակցություններ՝ «Երջանկությունը» և «Արդարություն և զարգացում» (այսուհետ՝ ԱԶԿ–ն): Առավել արմատական իսլամականները ապաստան գտան «Երջանկությունում», իսկ ԱԶԿ–ն ներկայացավ որպես առավել չափավոր ու բարեփոխիչ իսլամականների քաղաքական ուժ՝ իր կողմը գրավելով նաև այն իսլամական ուժերին, որոնք քաղաքական իսլամի անհաջողության հիմնական պատճառ էին համարում Ն. Էրբաքանին[100]: Էրբաքանը, հրաժարվեց «Երջանկություն» կուսակցության ղեկավարությունից, և Ն. Քուրթուլմուշն ընտրվեց այդ կուսակցության նոր ղեկավար, ինչը իրապես ազդեց ԱԶԿ–ի հեղինակության վրա: «Երջանկություն» կուսակցության նոր ղեկավարի ընտրությամբ ԱԶԿ–ի դիրքերը զգալիորեն թուլացան պահպանողական շրջանակներում: Ն. Քուրթուլմուշը հայտնի հեղինակություն էր քաղաքական իսլամը ներկայացնող տարբեր ուժերի շրջանում: Պատահական չէ, որ Ռ. Էրդողանը քանիցս նրան հրավիրել էր ԱԶԿ և խոստացել բարձր պաշտոններ, սակայն մերժում էր ստացել: Այսպիսով, ընտրություններին հաջորդող և նախորդող մի քանի ամիսների ընթացքում պահպանողական ձայներին տիրանալու պատճառով Էրդողան–Քուրթուլմուշ հակամարտությունը խորացավ: Եթե 2007 թ. ընտրություններում էրբաքանի և Քութանի ղեկավարած «Երջանկություն» կուսակցությունը ստացավ ձայների ընդամենը 2.34 տոկոս, ապա վերջին ընտրությունների ընթացքում, արդեն նոր ղեկավարի պայմաններում, այդ կուսակցությունը ստացավ 5.2 տոկոս: Ենթադրելի է, որ «Երջանկություն» կուսակցութան քվեներն ավելացան ԱԶԿ-ի կրոնական ա-

[100] Տե՛ս Киреев Н. Г., Кризис политического ислама в Турции: раскол движения Милли Герюш, с. 267-288.

զատականացման քաղաքականությունից ու խոստումներից դժգոհ պահպանողական մահմեդականների հաշվին[101]:

2002 թ. արտահերթ խորհրդարանական ընտրություններում ԱԶԿ-ն հաղթեց և միանձնյա գլխավորեց կառավարությունը, իսկ ԵԿ-ը հավաքեց ձայների ընդամենը 2,3 տոկոսը[102]: ԱԶԿ-ի հաղթանակը պայմանավորված էր երկրի տնտեսական անկայունությամբ, գործազրկության և սղաճի բարձր ցուցանիշներով, քաղաքական վերնախավի հանդեպ ժողովրդի ունեցած դժգոհությամբ, երկրում խոր արմատներ ունեցող կառուցվածքային ճգնաժամով և քաղաքական վերնախավի խարդավանքներով[103]:

2001–2002 թթ. նորաստեղծ ԱԶԿ-ն հեշտությամբ եկավ իշխանության՝ հենվելով տնտեսական ճգնաժամից տուժած ու 1990–ական թթ. քաղաքական անկայունությունից դժգոհ քաղաքացիների վրա: 2002 թ. ի վեր Ռ. Էրդողանի կուսակցությունը սկսում է քննադատել քեմալականության ժառանգությունը, աշխարհիկության արմատական կիրառման բացասական հետևանքները[104]:

Թուրքական հասարակության մեջ իսլամ-աշխարհիկություն գաղափարական բախման ամենացայտուն արտահայտություններից մեկը դարձավ կանանց՝ գլխաշոր կրելու հարցը, որը զինված ուժերի ներկայացուցիչները որակեցին որպես ծայրահեղ իսլամի քաղաքական խորհրդանիշ, իսլամական ծայրահեղականության համազգեստ[105]: Այս անլուծելի թվացող խնդիրը խորապես ներթա-

---

[101] Տե՛ս Տեր-Մաթևոսյան Վ., Արդարություն և զարգացում կուսակցությունը ՏԻՄ ընտրություններում. Ձեռքբերումներ ու բացթողումների համեմատական վերլուծություն, էջ 334-337:

[102] Տե՛ս Трубников С.А., Политический кризис в Турции и парламентские выборы 2002 г.. “Востоковедный сборник”, вып. 5, М., 2003, с. 321-325.

[103] Տե՛ս Kalaycioğlu E., Turkish Dynamics Bridge Across Troubled Lands, p. 138.

[104] Տե՛ս Киреев Н.Г., Первый год пребывания Партии справедливости и развития (АКП) у власти в Турции, с. 99-114.

[105] Տե՛ս Турция: новая роль в современном мире, с. 10.

փանցել է թուրքական հասարակության մեջ և վերածվել այն պառակտող գործոնի[106]: 2002 թ. նոյեմբերյան խորհրդարանական ընտրություններում ԱԶԿ-ի հաղթանակը դիտվեց որպես աննախադեպ հնարավորություն՝ լուծելու այս չարչրկված խնդիրը: Հարկավոր է նշել, որ ԱԶԿ-ն նախընտրական պայքարում երբեք բացեիբաց չանդրադարձավ գլխաշորի թեմային, փոխարենը ԱԶԿ-ի ղեկավարները հմտորեն շրջանցում էին այդ զգայուն հարցը՝ ավելորդ բարդություններից խուսափելու համար: Սակայն հասարակական գիտակցության մեջ այդ կուսակցությունը նույնացվում էր այն միակ ունակ ուժի հետ, որը կարող էր վճռական բեկում մտցնել գլխաշորի հարցում: Բնականաբար, ԱԶԿ-ի հաղթանակը ոչ բոլորն ընկալեցին որպես այդ հարցը լուծելու հնարավորություն: Իսկ քեմալականներն հասկանալիորեն ունեին տրամագծորեն հակառակ մեկնաբանությունը և ընտրություններից հետո սկսեցին պնդել, որ գլխաշորի շարժումը հաղթեց աշխարհիկ Թուրքիային: 2002 թ. ընտրություններից հետո Ա. Գյուլի գլխավորած կառավարության 25 անդամներից 14-ի կանայք գլխաշոր էին կրում, այդ թվում Ա. Գյուլի կինը: Ավելին, նախագահականում պաշտոնական ընդունելություններից մեկի ժամանակ ԱԶԿ-ի ղեկավար կազմը ներկայացավ կանանց հետ, որոնք կրում էին գլխաշորեր: Նախագահ Ա. Սեզերը խստորեն արձագանքեց այդ քայլին, այս դիպվածը առիթ հանդիսացավ, որ դրանից հետո բոլոր միջոցառումների ժամանակ Ռ. Էրդողանը, Ա. Գյուլը, Բ. Արընչը խուսափեն իրենց կանանց հետ ներկայանալ[107]:

---

[106] Տե՛ս Sayari S., Towards a New Turkish Party System?, p. 208.

[107] Տե՛ս Տեր-Մաթևոսյան Վ., Իսլամը Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքում, էջ 182:

2007 թ. օգոստոսին Թուրքիայի նախագահ ընտրվեց Ա. Գյուլը, որի թեկնածությունն առաջադրել էր ԱԶԿ-ն:[108]:

ԱԶԿ-ն միակ կուսակցությունն էր, որը քվեներ ստացավ Թուրքիայի բոլոր նահանգներից՝ գրեթե բոլոր ընտրական տեղամասերում բաժանելով առաջինից երրորդ հորիզոնականները և գրեթե բոլոր նահանգներում նրա ստացած քվեները 20 տոկոսից պակաս չեն: Թուրքիայի 81 նահանգներից 62-ում ԱԶԿ-ն առաջինն էր: Ընդհանուր առմամբ, ԱԶԿ-ն երկրի հարավ-արևմուտքում թեև զգալի թվով քվեներ կորցրեց, սակայն ընդհանուր առմամբ նա ստացավ ձայների 40 տոկոսը[109]: ԱԶԿ-ի գլխավոր քաղաքական ախոյանը՝ ԺՀԿ-ն, տարիների ընթացքում ուներ իր կայուն համակիրների թիվը: Սակայն, ի տարբերություն ԱԶԿ-ի, այն չունի սոցիալական կողմնորոշման կուսակցության հեղինակություն, փոխարենը ԺՀԿ-ն շարունակում է մնալ վերնախավային, գաղափարական ու սոցիալական խավերից մեկուսացված[110]:

Հիմնադրման օրվանից ԱԶԿ-ի անցած ճանապարհը կարելի է բաժանել հետևյալ պայմանական փուլերի: Առաջին փուլը 2001-2002 թթ. երբ նորաստեղծ կուսակցությունը հեշտությամբ եկավ իշխանության՝ հենվելով տնտեսական ճգնաժամից տուժած ու 1990-ական թթ. քաղաքական անկայունությունից դժգոհ քաղաքացիների վրա, երկրորդ փուլը՝ 2003-2005 թթ, երբ ԱԶԿ-ին հաջողվեց երկրում իրականացնել մի շարք օրենսդրական, սոցիալ-տնտեսական ու քաղաքական բարեփոխումներ: Սակայն 2005-2007 թթ. ԱԶԿ-ն զգալի հետընթաց

---

[108] Տե՛ս Зиганшина Г.М., К итогам президентских и парламентских выборов в Турции в 2007 г., с. 36-61.

[109] Տե՛ս Зиганшина Г.М., Ситуация вокруг парламентских и президентских выборов в Турции в 2007 г.: основные итоги и перспективы, с. 91-114.

[110] Տե՛ս Шлыков В., Поиск политического равновесия. Эволюция партийной системы Турции в период Третьей Республики (1983-2009). “Турция на рубеже XX-XXI вв.”, М., 2008, с. 101.

արձանագրեց, որի բարձրակետը դարձավ 2007 թ. զինվորականության արձագանքը և միջամտությունը քաղաքական գործերին, և վերջին շրջանը 2008-2009 թթ. են, երբ Թուքիայի աշխարհիկ-հանրապետական քեմալական վերնախավը, զինվորականությունը որոշեցին հակազդել ԱԶԿ-ին՝ նրան մեղադրելով «հակաաշխարհիկ» գործունեության մեջ[111]:

2008 թ. մարտին Գլխավոր դատախազի հայցադիմում ներկայացրեց ՍԴ՝ ԱԶԿ-ի գործունեությունը հակասահմանադրական ճանաչելու և նրա գործունեությունը կասեցնելու պահանջով: Հայցը ՍԴ-ի կողմից մերժվեց և, թվում էր, թե այդ հանգամանքը պետք է խթաներ բարեփոխումներին ուղղված ԱԶԿ-ի քաղաքականությունը, սակայն, ԱԶԿ-ն հանդես չեկավ նոր ռազմավարությամբ և սկիզբ առնող արտաքին քաղաքական մարտահրավերների ու համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում, ավելի վարկաբեկեց իր հեղինակությունը: Փոխարենը, Էրգենեքոնի դատավարությանը զուգահեռ, ԱԶԿ-ի ղեկավարությունը, կարծես, զինված ուժերի ղեկավարության հետ գնաց փոխզիջման ու կուսակցության ռեսուրսները ուղղեց փոխզիջման ընդունելի տարբերակների մշակմանը[112]:

Ռ. Էրդողանի համար զարմանալի էին ընտրությունների արդյունքները, քանզի ՏԻՄ այն ղեկավարներին, որոնք ԱԶԿ-ի անդամներ էին, նա մշտապես նախապատվություն է տվել՝ պետբյուջեից

---

[111] Տե՛ս Набиева А., Турция: взгляд оппозиции на политику правящей Партии справедливости и развития, “Ближний Восток и современность”, вып. 30, М., 2007, с. 210-217.

[112] Տե՛ս Տեր-Մաթևոսյան Վ., Արդարություն և զարգացում կուսակցությունը ՏԻՄ ընտրություններում. Ձեռքբերումների ու բացթողումների համեմատական վերլուծություն, էջ 340:

ֆինանսական օգնություն տրամադրելով[113]: Նրա համար հատկապես անհասկանալի էր Անթալիայում կրած պարտությունը:

ՏԻՄ ընտրությունների արդյունքները կարելի է դիտել որպես ազդանշան՝ ուղղված ԱԶԿ-ի ղեկավարներին ու քաղաքական ռազմավարներին: Արձանագրել, որ կուսակցությունը լուրջ հետընթաց է ապրել, ինչը էապես կփոխի նրա մարտավարությունը, սխալ մոտեցում է: Կուսակցության նախընտրական մարտավարությունը, սեփական հնարավորությունների գերագնահատումը, քարոզարշավներում քաղաքական զգայուն թեմաներին հպանցիկ կամ մակերևութային անդրադարձը, թույլ ու ուժեղ կողմերի սխալ գնահատումը, ռեսուրսների ոչ նպատակային օգտագործումը այն կարևոր հանգամանքներն էին, որոնց պատճառով կուսակցությունը կորցրեց մեկ միլիոն ձայն և Էգեյան ու միջերկրածովյան, ինչպես նաև հարավարևելյան քրդաբնակ նահանգների աջակցությունը:

2002 թ. ի վեր ԱԶԿ-ի առաջնորդները, ակնարկելով կարծրացած պետական համակարգը բարեփոխելու և զգայուն թեմաները լուծելու իրենց ցանկության մասին, ոչ միայն ձեռք բերեցին մեծ հեղինակություն, այլև դարձան թիրախ պահպանողական շրջանակների ու բանակի համար: ԱԶԿ-ի դեմ մեղադրանքները հատկապես սաստկացան կրոնական գլխաշորի արգելքը վերացնելու նախաձեռնությունից հետո: ԱԶԿ-ն անկարող գտնվեց հաղթահարել մի շարք կարծրատիպեր, որոնցից առավել նշանակալին նրա ինքնության ու անվտանգության հիմնական ուղենիշների շուրջ ընթացող քննարկումներն էին: Փորձելով ազատվել իսլամական կողմնորոշում ունեցող քաղաքական ուժի պիտակից՝ ԱԶԿ-ի ղեկավարները առիթը բաց չէին թողնում հավաստիացնելու քեմալականներին, որ իրենք «պահպանողական ժողովրդավարության» ինքնության կրող են և,

[113] Տե՛ս Menderes Ç., Turkey's Present Ancien Regime and the Justice and Development Party, pp. 13-27.

հետևաբար, ընդհանուր ոչինչ չունեն 1970-ականներից ի վեր երկրի քաղաքական իսլամի հիմնական գաղափարակրի՝ «Ազգային տեսակետի» հետ[114]: Այդ ձգտումը ԱԶԿ-ին դրդրեց մեկ այլ ծայրահեղության՝ սեփական ինքնության անվերջ փնտրտուքին, որի պատճառով էլ նա խոցելի դարձավ ամենատարբեր մեղադրանքների ու քննադատությունների նկատմամբ[115]:

2008–2011 թթ. ԱԶԿ-ի հեղինակության ու նրա նկատմամբ հանրային վստահությունը շարունակաբար աճում էր՝ ներքաղաքական կյանքում սահմանափակելով զինված ուժերի դերակատարությունը: Այս ընթացքում փոփոխության ենթարկվեց հենց ներքաղաքական քննարկումների օրակարգը. աշխարհիկության և իսլամականության միջև պայքարից ու ԵՄ ինտեգրման գործընթացից այն շեղվեց դեպի տնտեսական զարգացման ու նոր սահմանադրության ստեղծման հարցերը, ինչպես նաև երկրում խոսքի ազատության սահմանափակման ու Էրդողանի կողմից ավտորիտար կառավարման վերաբերյալ քննարկումները[116]:

2008 թ. Էրդողանը սկսեց իր ընտրական խոստումների կատարումը: Այդ շարքում առաջինը համալսարաններում և պետական հաստատություններում գլխաշորի արգելքը վերացնելուն ուղղված ԱԶԿ–ի, ԱՇԿ–ի նախաձեռնությունն էր[117]: Թվում էր, թե գլխաշոր կրող միլիոնավոր կանայք ու աղջիկներ իրավունք էին ստանալու անարգել կրթություն ստանալու պետական համալսարաններում և

---

[114] Տե՛ս Шлыков В., Поиск политического равновесия. Эволюция партийной системы Турции в период Третьей Республики (1983-2009), с. 95-118.

[115] Տե՛ս Kadıoğlu A., The Paradox of Turkish Nationalism and the Construction of Official Identity. “Middle Eastern Studies”, vol. 32, No. 2, April 1996, p. 177-193.

[116] Տե՛ս Çarkoglu, A., Kalaycıoglu E., The Rising Tide of Conservatism in Turkey, N.Y., 2009, p. 84.

[117] Տե՛ս Տեր–Մաթևոսյան Վ., Իսլամը Թուրքիայի հասարակական–քաղաքական կյանքում (1970–2001 թթ.), էջ 178–187:

աշխատելու պետական հաստատություններում, սակայն ընդդիմադիր ԺՀԿ–ն որոշեց երկրի Սահմանադրական դատարանում վիճարկել այդ սահմանադրական փոփոխությունը: ՍԴ–ն չեղյալ հայտարարեց այն: Այսպիսով՝ ԺՀԿ – դատական համակարգ համագործակցության արդյունքում ԱԶԿ–ի նախաձեռնությունը տապալվեց[118]: Ավելին, Վճռաբեկ դատարանի գլխավոր դատախազը «հակաաշխարհիկ գործունեություն ծավալելու» մեղադրանքով հայց ներկայացրեց ՍԴ՝ իշխող ԱԶԿ–ի գործունեությունը կասեցնելու և ԱԶԿ–ի կառավարման խորհրդի շուրջ յոթ տասնյակ անդամներին 5 տարով քաղաքականությամբ զբաղվելու իրավունքից զրկելու վարչապետ Ռ. Էրդողանին և նախագահ Ա. Գյուլին տարբեր ժամկետներով ազատազրկելու պահանջներով: Քեմալականները թերևս գիտակցեցին, որ եթե ԱԶԿ–ի գործունեությունը կասեցվեր, ապա նախորդ անգամների պես կհիմնադրվեր մեկ այլ իսլամամետ կուսակցություն՝ նույն ղեկավարությամբ կամ նրանց կողմից նշանակված առաջնորդներով, որը շատ ավելի մեծ արդյունք կունենար արտահերթ խորհրդարանական ու ՏԻՄ ընտրություններում: Աշխարհիկ–ազգայնական քեմալականները այս կերպ փորձեցին չկրկնել նախկին սխալները՝ հաշվի նստելով այն փաստի հետ, որ ԱԶԿ–ն վայելում է հասարակության աջակցությունը, ինչպես նաև գիտակցելով Արևմուտքի հնարավոր կոշտ հակազդեցությունը:

2008 թ. հունվարի 24-ին ԱԶԿ-ի ու ԱՇԿ-ի միջև ձեռք բերվեց համաձայնություն՝ համատեղ ջանքերով նախաձեռնելու սահմանադրական փոփոխություններ համալսարաններում կրոնական գլխաշորի արգելքը վերացնելու համար: Փետրվարի 1-ին Թուրքիայի համալսարանների ավելի քան 3300 դասախոսներ նախաձեռնեցին ստորագրահավաք համալսարաններում գլխաշորի արգելքը վերացնելու

[118] Տե՛ս Տեր–Մաթևոսյան Վ., Թուրքիան 2008–2011 թթ.: Քաղաքական փոխակերպումների հիմնական առանձնահատկությունները, էջ 14:

կառավարության նախաձեռնությանը աջակցելու նպատակով: Մյուս կողմի արձագանքը չուշացավ. փետրվարի 2-ին առավել քան 35 հասարակական կազմակերպությունների նախաձեռնությամբ Անկարայում՝ Աթաթյուրքի դամբարանի մոտ գտնվող հրապարակում կազմակերպվեց բազմահազարանոց ցույց՝ գլխաշորի արգելքը վերացնելու կառավարության նախաձեռնությունը դատապարտելու համար: Նման ցույցեր տեղի ունեցան նաև Թուրքիայի մի քանի այլ նահանգներում: Այս պայմաններում Թուրքիայի խորհրդարանն ընդունեց երկրի բուհերում կանանց կրոնական գլխաշորի արգելքը վերացնելու մասին սահմանադրական փոփոխությունների վերաբերյալ ԱԶԿ-ի և ԱՇԿ-ի առաջարկած փաթեթը[119]:

Սահմանադրական դատարանը բավարարեց ընդդիմադիր կուսակցությունների հայցը և չեղյալ համարեց կրոնական գլխաշորի վերաբերյալ կատարված սահմանադրական փոփոխությունները, սակայն մերժեց ԱԶԿ-ի գործունեությունն արգելելու վերաբերյալ Գլխավոր դատախազի ներկայացրած հայցը, ընդամենը կիսով չափ՝ 20 մլն. դոլարով կրճատելով պետական գանձարանից ԱԶԿ-ին տրվող ֆինանսական միջոցների ծավալները[120]:

Այս որոշումը, թերևս պայմանավորված էր հայտնի մտավախությամբ. ԱԶԿ-ն փակելու դեպքում նրա փոխարեն ստեղծված նոր քաղաքական կուսակցությունը խորհրդարանական ընտրություններում կարող էր արձանագրել ավելի լուրջ հաջողություն՝ քեմալականության ու աշխարհիկության ջատագովների համար դրանից բխող ծանր հետևանքներով[121]:

---

[119] Տե՛ս Տեր-Մաթևոսյան Վ., Իսլամը Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքում, էջ 186:

[120] Տե՛ս Шлыков В., Армия в жизни современного турецкого общества в начале 2000-х, с. 142.

[121] Տե՛ս Տեր-Մաթևոսյան Վ., Իսլամը Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքում, էջ 187:

2008 թ. մայիսմեկյան իրադարձությունների կապակցությամբ ԱԶԿ–ի դիրքորոշումը բավական խիստ էր, և նրա հակազդեցությունը Ստամբուլի Թաքսիմ հրապարակում տեղի ունեցած ցույցը բիրտ միջոցներով ցրելուն, բացասաբար ազդեց կուսակցության հեղինակության վրա: Մայիսի 8-ին Գյուլը ստորագրեց Քրեական օրենսգրքի փոփոխության փաթեթը, որով վերաշարադրվում էր տխրահռչակ 301–րդ հոդվածը:

2009 թ. ՏԻՄ ընտրություններից հետո փոփոխություններ տեղի ունեցան կառավարության կազմում, Արընջը նշանակվեց առաջին փոխվարչապետ, ինչով Էրդողանը փորձում էր կանխել ԱԶԿ-ից պահպանողական իսլամիստների հավանական հոսքը դեպի «Երջանկություն» կուսակցություն[122]: ՏԻՄ ընտրությունների ժամանակ ԱԶԿ-ն առաջին անգամ նվազագույն արդյունքներ գրանցեց, ինչն անսպասելի էր: ԱԶԿ-ն ստացավ ձայների մոտ 40 %-ը, ինչը զիջում էր խորհրդարանական ընտրություններում նրանց հավաքած ձայներին[123]: Վարչապետ Էրդողանը շատ լուրջ ընդունեց այս արդյունքները, համարեց դա ժողովրդի կողմից ուղարկված հորդոր՝ քաղաքականությունը վերանայելու համար: Նույնիսկ խոսք էր գնում կառավարության կազմում փոփոխությունների մասին: Ընտրությունների այսպիսի ելքի պատճառները կարելի էր տեսնել, առաջին հերթին, տնտեսական ճգնաժամի մեջ, որը մեծ ազդեցություն էր թողնում Թուրքիայի վրա: Երկրում գործազուրկների թվի աննախադեպ աճի, տնտեսական զարգացման տեմպերի թուլացման պայմաններում ակնհայտ էր, որ իշխող կուսակցությունը շարունակում է թուրքական քաղաքական էլիտայի ավանդույթը. մխրճվում է կո-

---

[122] Տե՛ս Zaman A., Turkey's Cabinet Reshuffle: Another Balancing Act, German Marshall Fund of the US, www.gmfus.org

[123] Шлыков В., Поиск политического равновесия. Эволюция партийной системы Турции в период Третьей Республики (1983-2009), с. 110.

ռուպցիոն սկանդալների մեջ, ինչի հետևանքով ժողովրդի մեջ թուլանում էր կուսակցության հանդեպ ունեցած երբեմնի հավատը[124]:

Ինչ վերաբերում է ԺՀԿ-ին, ապա այդ կուսակցությունը շարունակում էր իրեն ներկայացնել՝ որպես սոցիալ-ժողովրդավարական գաղափարախոսության ջատագով, և մնալ վերնախավային՝ գաղափարական ու սոցիալական խավերից մեկուսացված կուսակցություն: ԺՀԿ-ի ղեկավար Դ. Բայքալի օրոք կուսակցությունը ոչ մի էական ձեռքբերում չի ունեցել, իսկ 1999 թ. ընտրություններում նույնիսկ չհաղթահարեց անհրաժեշտ 10 %-ի արգելքը[125]:

Այս զարգացումները պարզորոշ ցույց տվեցին, որ քեմալիզմը, որը տասնամյակներ շարունակ համարվում էր անսխալ գաղափարախոսություն, կորցրել էր ժամանակի հետ համընթաց քայլելու ունակությունը: Այն այլևս անկարող է ուղղորդել թուրք հասարակությանը, քանզի վերջինիս խնդիրները արմատապես տարբերվում են դարասկզբին գոյություն ունեցած խնդիրներից: Քեմալիզմի պատճառով բազմակարծության դրսևորումը համարվեց արատ, ընդունելի համարվեցին երևույթների ընկալման միայն այն տարբերակները, որոնք նախընտրելի էին քեմալիզմի համար:

2010 թ. սեպտեմբերի 12–ի սահմանադրական փոփոխությունների հանրաքվեի արդյունքում Թուրքիայում մտցվեցին ԶՈՒ–ի և դատական համակարգի լիազորությունների ու նրանց կողմից ներքաղաքական գործընթացներին մասնակցության սահմանափակումներ: Փոփոխությունների փաթեթի համաձայն, վերացվում էր նաև սահմանադրության 15–րդ հոդվածը, որն իրավական պաշտպանություն և անձեռնմխելիություն էր ապահովում ռազմական հե-

---

[124] Տե՛ս Սաֆրաստյան Ռ., Անսպասելի արդյունքներ Թուրքիայի ՏԻՄ ընտրություններում, էջ 332-333:

[125] Տե՛ս Данилов В.И., Парламентские выборы 1999 г. в Турции: итоги и перспективы, с. 67-74.

ղաշրջման կազմակերպիչներին, ամրագրում էր բարձրագույն զինվորականներին և դատական պաշտոնյաներին որպես մեղադրյալ ներգրավելու դրույթը[126]:

Հանրաքվեին նախորդող ժամանակահատվածում ԺՀԿ–ի դիրքորոշումը խնդիրներ ստեղծեց ԱԶԿ–ի համար: ԺՀԿ–ի նոր նախագահ Քըլըչդարօղլուն հանդես էր գալիս հանրաքվեում ներառված հոդվածների քննադատությամբ՝ շեշտելով, որ դրանց հաստատումով ԱԶԿ–ն կստանա անսահմանափակ իշխանություն, և ինչի հետևանքով երկրի աշխարհիկ–հանրապետական կարգերը լրջորեն կարող են խաթարվել[127]:

2010 թ. հանրաքվեում ստացած վստահության քվեն Էրդողանին դարձրեց ավելի վճռական: Հանրաքվեն նաև դարձավ 2011 թ. հունիսի 12–ի խորհրդարանական ընտրությունների նախապատրաստական գլխավոր փուլը: ԱԶԿ–ն ևս ընտրություններին մասնակցեց թեկնածուների թարմացված ցուցակով. նոր ցուցակում պատգամավորության թեկնածուների ընդգրկման սկզբունքը հավատարմությունն էր Էրդողանին ու անվերապահ հնազանդումը նրա որոշումներին: Այս սկզբունքից ելնելով ԱԶԿ–ի խորհրդարանական խմբակցության նախկին 164 պատգամավորներ չընդգրկվեցին նոր ընտրացուցակում[128]: Վերընտրվելու հնարավորությունից զրկվածների այս պատկառելի թիվը ցույց է տալիս, որ հենց ԱԶԿ–ի շարքերում առկա էր ընդդիմադիրների մեծաթիվ բանակ, և այդ պատճառով էր, որ ԱԶԿ–ի համար բավական դժվարացել էր ներքաղաքական ու օրենսդրական բարեփոխումների իրականացումը:

---

[126] Տե՛ս Турция: новая роль в современном мире, с. 12.

[127] Տե՛ս Տեր–Մաթևոսյան Վ., Թուրքիան 2008–2011 թթ.: Քաղաքական փոխակերպումների հիմնական առանձնահատկությունները, էջ 23:

[128] Տե՛ս Турция после выборов 2011 г.: парадоксы политического развития под властью Партии справедливости и развития, “Вестник Московского университета”, сер. 13, Востоковедение, № 3, М., 2012.

Էրդողանը բազմիցս դեմ էր արտահայտվել մամուլում իր հասցեին հնչող քննադատություններին, բացի այդ հարուցվել էին բազմաթիվ քրեական գործեր լրագրողների և ԶԼՄ–ների դեմ: Էրդողանը բավական անհանդուրժող էր իր հասցեին հնչող քննադատությունների հարցում, և լրագրողների կողմից նրա հասցեին հնչած անգամ կառուցողական քննադատությունները նա տեղափոխում էր դատական ատյան՝ պահանջելով կա՛մ բարոյական փոխհատուցում, կա՛մ ազատազրկում: Ազատազրկված լրագրողների շարքում մեծ թիվ էին կազմում նաև «Էրգենեքոնի» և «Մեծ մուրճի» գործով անցնող լրագրողները, որոնք մեղադրվում էին գաղտնի տեղեկությունների տիրապետելու և անօրինական կազմակերպությունների հետ համագործակցելու մեջ: Այսպիսով, թուրքական արդարադատությունը քրեական գործ հարուցեց Էրգենեքոնի մասին գիրք գրող մի լրագրողի նկատմամբ: Ստամբուլի քրեական դատարանի որոշմամբ ոստիկանները ոչնչացրին նրա դեռևս չհրատարակված գրքի էլեկտրոնային տարբերակը:

2011 թ. խորհրդարանական ընտրություններում ԱԶԿ–ի գերնպատակն էր խորհրդարանում առնվազն 367 մանդատ ստանալը, ինչը հնարավորություն կտար առանց որևէ բարդության հենց խորհրդարանում քվեարկելու և հաստատելու սահմանադրական փոփոխությունները: Իսկ 330 մանդատի դեպքում ԱԶԿ–ն հնարավորություն կունենար առանց մյուս քաղաքական ուժերի աջակցության խորհրդարանում հավանության արժանացած սահմանադրական փոփոխության նախագիծը դնելու հանրաքվեի: Սակայն ԱԶԿ-ն նախորդ ընտրությունների համեմատ խորհրդարանում կորցրեց 15 տեղ՝ ստանալով միայն 326 մանդատ[129]: Էրդողանը ստիպված էր մյուս կուսակցություն-

[129] Տե՛ս Турция: новая роль в современном мире, с. 14.

ների հետ համագործակցության գնալ, ինչն անցանկալի էր Էրդողանի նման գործչի համար:

2011 թ. դեկտեմբերին ԺՀԿ-ի նախագահը հայտարարեց, որ 2007 թ. հանրաքվեով հաստատված սահմանադրական փոփոխությունների համաձայն*, նախագահական ընտրությունները պետք է անցկացվեն ոչ թե 2014 թ., ինչպես նախատեսված էր, այլ՝ 2012 թ.: Նա պնդում էր, որ փոփոխություններն արդեն ազդել են խորհրդարանական ընտրությունների վրա, ուստի դրանք պետք է տարածվեն նաև նախագահական ընտրությունների վրա: ԺՀԿ-ի առաջնորդի այս պնդումները պայմանավորված էին ոչ միայն իրավական, այլև քաղաքական շարժառիթներով: Դեռ թարմ էին հիշողությունները, որ ԱԶԿ-ի կողմից առաջադրված նախագահի թեկնածու Ա. Գյուլը խորհրդարանի քվեարկության առաջին երկու նստաշրջաններում չէր կարողանում ստանալ ձայների անհրաժեշտ երկու երրորդը և կարողացավ նախագահ ընտրվել միայն երրորդ փորձից[130]: Խորհրդարանում ներկայացված մյուս ընդդիմադիր ԱՇԿ-ը ու քրդական «Խաղաղություն և ժողովրդավարություն» կուսակցությունը (այսուհետ՝ ԽԺԿ) միացան ԺՀԿ-ին, պնդելով, որ Ա. Գյուլի պաշտոնավարման 5-ամյակը լրանում է 2012 թ., ուստի հենց այդ տարում պետք է անցկացվեն նախագահական ընտրությունները: Սակայն խորհրդարանում մեծամասնություն ունեցող ԱԶԿ-ի ջանքերով 2012 թ. հունվարին խորհրդարանի սահմանադրական հանձնաժողովը որոշեց, որ Գյուլը պաշտոնավարելու է ոչ թե հինգ, այլ յոթ տարի՝ մինչև 2014

* Նախկինում Թուրքիայի նախագահը խորհրդարանի կողմից ընտրվում էր յոթ տարի ժամկետով, առանց վերընտրվելու իրավունքի, իսկ սահմանադրական բարեփոխումներով նախագահն ընտրվելու էր արդեն հինգ տարի ժամկետով՝ ևս մեկ անգամ նույն ժամկետով վերընտրվելու հնարավորությամբ: Խորհրդարանի ընտրությունների պարբերականությունն էլ հինգից կրճատվեց չորս տարին մեկ:

130 Տե՛ս Թուրքիա-ԵՄ-Հայաստան. մարտահրավերները և հնարավորությունները, էջ 9:

թ., առանց վերընտրման իրավունքի: Շատերի կարծիքով, այս որոշումը պայմանավորված էր նրանով, որ 2014 թ. նախագահական ընտրություններում ԱԶԿ-ի կողմից առաջադրվելու էր Էրդողանի թեկնածությունը, որը դառնալու էր ոչ թե խորհրդարանի, այլ ժողովրդի կողմից ընտրված Թուրքիայի առաջին նախագահը[131]:

Գյուլի լիազորությունների ավարտից հետո Էրդողանն առաջադրվեց Թուրքիայի նախագահի թեկնածու և արդեն ոչ թե խորհրդարանի, այլ համաժողովրդական քվերակության արդյունքում ընտրվեց Թուրքիայի նախագահ: Նախագահ ընտրվելուց հետո Էրդողանը, գործող Սահմանադրության 101-րդ հոդվածի համաձայն, պետք է հրաժարվեր կուսակցական պարտականություններից, ուստի պետք է կողմնորոշվեր, թե ում է վստահելու ԱԶԿ-ի ղեկավարումը: Այդ պահի դրությամբ Էրդողանը դեռ չէր պատրաստել կուսակցությունում իր ժառանգորդին, ուստի ստիպված եղավ այդ դերը վստահել արտաքին քաղաքական հարցերով իր նախկին խորհրդական, նախկին արտգործնախարար ու արդեն վարչապետ Ա. Դավութօղլուին:

2013 թ. մայիսի 27-ին մի խումբ բնապահպաններ իրենց բողոքն էին արտահայտում Ստամբուլի Թաքսիմ հրապարակի Գեզի զբոսայգու ծառերի հատման դեմ, որոնց տեղում նախատեսվում էր կառուցել առևտրի կենտրոն ու բնակելի համալիր: Մայիսի 31-ին ոստիկանությունը անհամաչափ ուժ կիրառեց այս խաղաղ խմբի դեմ, այրեց նրանց վրանները, ուժ ու արցունքաբեր գազ կիրառեց նրանց նկատմամբ: Բնապահպանների նկատմամբ բռնության նկարներով հեղեղված էր ամբողջ համացանցը, մինչդեռ թուրքական ԶԼՄ-ները ոչինչ չէին հաղորդում դրա մասին, ինչն էլ համաժողովրդական հուժկու շարժման վերածվեց: Իրականում միջադեպի պատճառնե-

[131] Տե՛ս Գաբրիելյան Հ., Ներքաղաքական պայքարի արդի փուլը Թուրքիայում, http://noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=6290

բը շատ ավելի լուրջ ու խորքային էին. մարդիկ վրդովված էին, որ վարչապետը բացարձակապես հարգանք չուներ այն ընտրազանգվածի տեսակետների նկատմամբ, որն իրեն չէր ընտրել: Թաքսիմ հրապարակի զբոսայգում ծայր առած շարժումը շուտով տարածվեց ամբողջ երկրով մեկ: Թուրքիայի 67 քաղաքներում սկսված բողոքի ցույցերն ուղեկցվում են անկարգություններով և ոստիկանության հետ բախումներով: Ցուցարարները Էրդողանին անվանում էին բռնապետ, պահանջում կառավարության հրաժարականը և երկխոսության համար նախապայման էին դնում, որ վարչապետ Էրդողանը հրաժարվեր Աթաթուրքի անվան մշակույթի պալատը Թաքսիմ հրապարակի վերակառուցման շրջանակում քանդելու մտադրությունից:

Բախումների ընթացքում սպանվեց 3 ցուցարար, ավելի քան 4100-ը վիրավորվեցին: Ներքին գործերի նախարարը հայտարարեց, որ ցուցարարների հարձակումից տուժել են 280 առևտրաֆինանսական օբյեկտներ և արհեստանոցներ, վարչական 6 շենք, ոստիկանատուն, ԱԶԿ-ի քաղաքային 11 վարչություն, 310 ավտոմեքենա՝ այդ թվում երթուղային ավտոբուսներ, ոստիկանության ու շտապօգնության մեքենաներ:

ԱԶԿ-ի հիմնական ընդդիմադիր ուժը՝ ԺՀԿ-ն, երկրով մեկ տարածված ցույցերի համար մեղադրեց վարչապետ Էրդողանին: Ցուցարարների հանդեպ ոստիկանության գործադրած անհամաչափ ուժի համար Էրդողանի կառավարությանը դատապարտող իրենց հաճախակի հայտարարություններով ցույցերը խրախուսում էին Սպիտակ տունը, ԱՄՆ պետքարտուղարությունը, ԵՄ-ը, միջազգային կառույցները և աշխարհի առաջնակարգ լրատվամիջոցները: Իշխանություններն, իրենց հերթին, ցույցերը ղեկավարելու մեջ մե-

ղադրեցին ԺՀԿ-ին, միաժամանակ նշելով, որ այդ գործընթացներում ներգրավված են նաև արտաքին ուժերը[132]:

2014 թ. նախագահական ընտրությունների արդյունքում հաղթեց Էրդողանը՝ նախագահի պաշտոնում փոխարինելով Գյուլին, իսկ վարչապետի և իշխող կուսակցության առաջնորդի իր պաշտոնները նա զիջեց Դավութօղլուին: Սակայն, իրականում Էրդողանը շարունակում էր ղեկավարել կուսակցությունը և Դավութօղլուին թելադրում էր կուսակցության խոշոր քաղաքականությունը[133]:

2015 թ. հուլիսի 7-ին տեղի ունեցած խորհրդարանական ընտրություններից հետո Թուրքիայում իշխող ԱԶԿ-ն այդպես էլ չկարողացավ համաձայնության գալ խորհրդարան անցած այլ կուսակցությունների հետ կոալիցիոն կառավարություն ձևավորելու հարցում, և երկիրը սկսեց պատրաստվել նոր՝ արտահերթ խորհրդարանական ընտրությունների[134]:

ԱԶԿ-ն ստացավ քվեների 40,9 տոկոսը, ինչը բավարար չէր միակուսակցական կառավարություն ձևավորելու համար, քանզի Էրդողանի կուսակցությունը անհրաժեշտ 276 մանդատի փոխարեն ստացել էր ընդամենը 259: Ուստի, պետք է ձևավորվեր կոալիցիոն կառավարություն: ԱԶԿ-ի առաջնորդ Ա. Դավութօղլուն հայտարարեց, որ պատրաստ է քննարկել բոլոր կուսակցությունների ներկայացրած սահմանադրության փոփոխությունների նախագծերը, սակայն կոալիցիոն կառավարություն ձևավորել չհաջողվեց և նշանակ-

---

[132] Տե՛ս Չաքրյան Հ., Միջազգային աջակցությունը քաջալերում է թուրք ցուցարարներին, http://azg.am/AM/2013060706

[133] Տե՛ս Թուրքիայի խորհրդարանական ընտրությունները և չորս գլխավոր կուսակցությունների վիճակը, http://armenianradio.am/rangarang/item/66266

[134] Տե՛ս Հովյան Վ., Թուրքիայի հայ համայնքն արտահերթ խորհրդարանական ընտրությունների նախօրեին, http://www.noravank.am /arm/issues/ detail.php? ELEMENT_ ID=13962

վեցին արտահերթ ընտրություններ[135]: Նոյեմբերի 1-ին կայացած արտահերթ խորհրդարանական ընտրությունների արդյունքներով ԱԶԿ-ի դիրքերը բարելավվեցին. նախկին 259-ի փոխարեն կուսակցությունն ունենալու էր 317 պատգամավորական մանդատ[136]:

2016 թ. մայիսի 5-ին Թուրքիայի վարչապետ Ա. Դավութօղլուն նախագահ Ռ. Էրդողանի հետ լուրջ հակասություններ ունենալու պատճառով հրաժարականի դիմում ներկայացրեց: Վերլուծաբանները մինչ այդ էլ կանխատեսում էին, որ Էրդողանի նման հավակնոտ նախագահը չէր կարող հաշտվել վարչապետի պաշտոնում ազդեցիկ գործչի կերպարի հետ: Էրդողանի և Դավուօղլուի միջև եղած լուրջ հակասություններից կարելի է նշել այն, որ վերջինս նախագահի կողմից մեղադրվում էր խորհրդարանական ընտրություններում ԱԶԿ-ի համար բավարար ձայներ չապահովելու մեջ: Դավութօղլուն, իր հերթին, ձախողման պատճառ էր համարում քարոզարշավին Էրդողանի մասնակցությունը:

Էրդողանի և Դավութօղլուի միջև լուրջ հակասություններ կային նաև կադրային հարցերում: Դավութօղլուն նախկին նախարարներից պահանջում էր կոռուպցիոն գործով արդարացման համար դիմել Գերագույն դատարան, սակայն Էրդողանը դեմ էր դրան, կասկածելով, որ մեղադրանքները կարող են հաստատվել և կբացահայտվեն կոռուպցիոն նոր մանրամասնություններ: Դավութօղլուն դեմ էր, որ Էրդողանի մերձավորներն ընդգրկվեին կուսակցության պատգամավորական ցուցակում և նախարարական պաշտոններ ստանային կառավարությունում: Պատահական չէ, որ ընտրություններից հետո նա մերժել էր մի շարք անձանց՝ այդ թվում Յըլդըրրըմի

---

[135] Տե՛ս Արտահերթ ընտրությունները Թուրքիայում տեղի կունենան նոյեմբերի 1-ին, http://www.azatutyun.am/a/27208258.html

[136] Տե՛ս Թուրքիայի քրդամետ կուսակցությունը պահանջում է չեղյալ հայտարարել խորհրդարանական ընտրությունների արդյունքները, https://armenpress.am/arm/news/825965/.html

նշանակումը, սակայն Էրդողանի միջամտությունից հետո հարկադրված տեղի էր տվել: Էրդողանն իր մարդկանցով, մասնավորապես, Յըլդըրըմի միջոցով փորձում էր նվազեցնել Դավութօղլուի դերը կառավարությունում և վերահսկողության տակ պահել նրան:

Դավութօղլուն ցանկանում էր նաև թափանցիկ դարձնել պաշտոնյաների սեփականության մասին տեղեկատվությունն ու ընտրական ծախսերը, սակայն Էրդողանը կտրականապես դեմ էր այդ առաջարկին: 2015 թ. ընտրություններից հետո Դավութօղլուն կողմ էր կոալիցիա կազմելուն, իսկ Էրդողանը նոր ընտրությունների էր ձգտում:

Էրդողանն Արևմուտքի համար իրավիճակի հարկադրված գործընկեր է, մինչդեռ Դավութղլուի հետ հնարավոր էր խելամիտ բանակցություններ վարել և նրա միջոցով ինչ-որ կերպ փորձել ազդել Անկարայի քաղաքականության վրա: Դավութօղլուի ծրագրված հանդիպումները ԱՄՆ-ի նախագահ Բ. Օբամայի և փոխնախագահ Ջ. Բայդենի հետ լրջորեն անհանգստացրել էին Օբամայի կողմից սառը ընդունելության արժանացած Էրդողանին, որի պահանջով Դավութօղլուի ծրագրված հանդիպումները հետաձգվել էին[137]: Ի թիվս այլ գործոնների, այս հանգամանքը Էրդողանի համար Դավութօղլուին հեռացնելու լրացուցիչ խթան հանդիսացավ:

Ուստի պատահական չպետք է համարել այն, որ Էրդողանն ամեն ինչ արեց նոր սահմանադրությամբ նախագահական համակարգին անցնելու միջոցով ազդեցիկ վարչապետներից ազատվելու և Թուրքիայի միանձնյա ղեկավարը դառնալու համար: Սա նշանակում է, որ առաջիկայում ականատես ենք լինելու Թուրքիայում

[137] Տե՛ս 20 հարց, որոնց շուրջ բախվել են Էրդողանը և Դավութօղլուն, http://www.lragir.am/index/arm/0/politics/view/132398

Էրդողանի ավտորիտար իշխանության ամրապնդմանը[138]: Ակնհայտ էր, որ Էրդողանի պարտադրանքով Դավութօղլուի հրաժարականից հետո Թուրքիայի քաղաքական համակարգը շարժվում էր այդ երկրում ավտորիտարիզմի հաստատման ուղղությամբ:

Ներկայումս նրա կողմից առաջարկվել և լուրջ դժվարություններով խորհրդարանի կողմից ընդունվել է Թուրքիան նախագահական հանրապետություն դարձնելու սահմանադրական բարեփոխումների փաթեթը: Հասկանալի է, որ այդ կերպ Էրդողանը ձգտում է հասնել անսահմանափակ իշխանության և, թե ինչպես նրա հավակնություններին կարձագանքի Թուրքիայի բնակչությունը, դրանով էլ կպայմանավորվի այդ երկրի հետագա ճակատագիրը:

2. Թուրքիայի զինված ուժեր - քաղաքական իշխանություն դիմակայությունը:

Մ. Քեմալի հիմնադրած թուրքական նախկին քաղաքական համակարգի պահապանը թուրքական բանակն էր, որը 1930-ական թվականներից սկսած շուրջ 70 տարի իրեն համարում էր երկրի ներքին կայունության երաշխավորը[139] և անհրաժեշտ հնարավորություններն ուներ ցանկացած պահի միջամտելու երկրի քաղաքական կյանքին, երբ, զինվորականության կարծիքով, նկատվեին քեմալական սկզբունքներից շեղվելու միտումներ: Բանակի միջամտության հետևանքով երկրում մի քանի անգամ պարբերաբար տեղի ունեցան զինվորական հեղաշրջումներ, որոնց արդյունքում ժողովրդավարական ճանապարհով ընտրված իշխանությունները հեռացվում էին ասպարեզից և, բարձրաստիճան զինվորականության կարճատև կառավարումից ու երկրի սահմանադրությունը փոփոխության են-

---

[138] Տե՛ս Դավութօղլուն չէր տեղավորվում Էրդողանի միանձնյա իշխանության տրամաբանության մեջ, http://parstoday.com/hy/news/middle_east-i15691

[139] Տե՛ս Шлыков В., Армия в жизни современного турецкого общества в начале 2000-х, Сборник статей “Турция накануне и после парламентских и президентских выборов 2007 г.”, М., 2008, с. 146.

թարկվելուց հետո, իշխանությունը կրկին հանձնվում էր արդեն ավելի վստահելի քաղաքացիականների:

Բանակը ավանդաբար կարևոր դերակատարում է ունեցել հանրապետական Թուրքիայի քաղաքական կյանքում: Այն հանդես է գալիս Աթաթուրքի հիմնադրած հանրապետության հիմնարար արժեքների և քեմալիզմի գաղափարախոսության պաշտպանի դիրքերից[140]: Թուրքիայի պատմության վերջին հինգ տասնամյակների ընթացքում բանակն արդեն չորս անգամ ուղղակիորեն միջամտել է երկրի քաղաքական կյանքին (1960 թ., 1971 թ., 1980 թ., 1997 թ.)՝ հիմնավորելով իր գործողությունները Քեմալ Աթաթուրքից ժառանգած գաղափարական և քաղաքական արժեքները պաշտպանելու անհրաժեշտությամբ: Այսօր էլ, երբ Թուրքիայում սրվել է պայքարը քեմալականների և իսլամականների միջև, թուրքական հասարակությունն ակտիվորեն քննարկում է բանակի հերթական միջամտության հնարավորությունը, Թուրքիայի աշխարհիկ պետություն մնալու հեռանկարները, իսլամական պետության վերածվելու և դասական իսլամական երկրների շարքը համալրելու վտանգները: Վերջին հաշվով, Թուրքիայում իրականացված ռազմական հեղաշրջումները, այդ թվում և 1980 թ. հեղաշրջումը, ի թիվս այլ հանգամանքների, պայմանավորված էին նաև այն բացահայտ և թաքնված պայքարով, որն ընթանում էր և շարունակում է ընթանալ քեմալականների ու իսլամամետ ուժերի միջև՝ Թուրքիայի պետական կառուցվածքի ապագայի, աշխարհիկ կամ իսլամական պետություն դառնալու, ներքին և արտաքին կողմնորոշումների առանցքային հիմնախնդիրների շուրջ[141]:

---

[140] Տե՛ս Турция: новая роль в современном мире, с. 9.

[141] Տե՛ս Դումանյան Ա., Արտաքին գործոնների ազդեցությունը Թուրքիայի 1980 թվականի ռազմական հեղաշրջման վրա: «Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ», N VII, Եր., 2011, էջ 194:

Թուրքիայի քաղաքական համակարգի համար այս երևույթի օրինաչափ դրսևորումը կարելի է համարել այն, որ այդ երկրի նախագահներից հինգը բանակի բարձրաստիճան սպաներ են եղել: Բանակի այս դերը իր հետագա ազդեցությունն ունեցավ Թուրքիայի քաղաքական կյանքում և պետական ճակատագրում[142]:

1960 թ. մայիսի 27-ին պետական հեղաշրջման հետևանքով իշխանությունը գրավեց Ազգային միասնության կոմիտեն, որը ժամանակավորապես ցրեց մեջլիսը, արգելեց կուսակցությունների գործունեությունը, վերջ տվեց Դեմոկրատական կուսակցության գոյությանը: Ազգային միասնության կոմիտեն, նոր սահմանադրության և ընտրական նոր օրենսգրքի մշակումից հետո, երկրի կառավարումը հանձնելու էր քաղաքական կուսակցություններին[143]:1961 թ.՝ հեղաշրջումից հետո ընդունված սահամանդրությամբ, ստեղծվեց Ազգային անվտանգության խորհուրդը (այսուհետ՝ ԱԱԽ)՝ որպես կառավարությանը կից գործող խորհրդակցական մարմին, որում քննարկվում էին երկրի համար առանցքային նշանակություն ունեցող հարցերը[144]:

Թուրքիայի ռազմական հեղաշրջումներից միայն 1960 թ. առաջին հեղաշրջման պատճառները կարելի բնութագրել որպես հասարակության պահանջներից բխող: Մյուս բոլոր դեպքերում զինվորականների միջամտությունները երկրի քաղաքական կյանքին նպատակ էին հետապնդում ապահովել հենց իրենց շահերի գերակայությունը: 1960 թ. հեղաշրջումից հետո ընդունված «Զինված ուժերի ներքին ծառայության մասին» օրենքի համաձայն, թուրքական պետության պաշտպանությունը համարվում էր թուրքական բանա-

---

[142] Տե՛ս Խանլարեան Կ., Հայ բնակչութեան էթնոկրօնական վերակերպումները Թուրքիայի Հանրապետութիւնում (1923-2005 թթ.), էջ 14:
[143] Տե՛ս Գալուստյան Հ., նշվ. աշխ., էջ 68:
[144] Տե՛ս Киреев Н., История Турции XX век, с. 308.

կի պարտականությունը: Նա պատասխանատու էր երկրի ազգային անվտանգության պահպանման ու ազգային շահերի (նպատակնե-րի) իրականացման համար, ինչը բանակը վերածում էր երկրի քաղաքական համակարգի առաջնային դերակատարի[145]:

1960-ականներից հետո զինվորականներին հաջողվեց ստեղծել օրենսդրական լծակներ՝ պետության գոյատևման համար անհրա-ժեշտ աշխարհիկության սկզբունքի պահպանումը գերխնդիր դարձ-նելու և այն վտանգված լինելու հիմնավորմամբ քաղաքացիական իշխանություններին երկրում քաղաքական գործընթացների ուղղոր-դումից ու իրականացումից զերծ պահելու համար: Զինվորական-ներն այդ միջամտություններն իրականացնում էին՝ պնդելով, որ քաղաքացիական իշխանություններն ի վիճակի չեն ապահովելու հասարակական շահերը[146]:

1960-ականների վերջերից երկրում սկսել էր գործել մի գաղտնի կազմակերպություն, որը ռազմական հեղաշրջում էր նախապատ-րաստում: Այդ կազմակերպության մեջ թոշակի անցած սպաների, 1960 թ. հեղաշրջման կազմակերպիչների և բանակի արմատական տրամադրված սպայակազմի անդամների հետ միասին գործում էին նաև ձախ ուղղվածություն ունեցող քաղաքական գործիչներ:

1971 թ. սկզբին այն զգայի ուժ և ռեսուրսներ ուներ հեղաշրջում իրականացնելու համար, սակայն զինվորական ղեկավարությանը հայտնի դարձան այդ կազմակերպության ծրագրերը: 1971 թ. մարտի 12-ին թուրքական բանակը «միջամտեց» երկրի քաղաքական անցու-դարձին, ինչը պատմության մեջ մտավ «հուշագրային հեղաշրջում» անվանմամբ: Թուրքիայի բանակի հրամանատարությունը Թուր-

---

[145] Տե՛ս Kalaycioğlu E., The Shaping of Party Preferences in Turkey: Coping with the Post-Cold War Era, p. 71-75.

[146] Տե՛ս Գասպարյան Ա., Ներքաղաքական գործընթացների իրողությունները Մեր-ձավոր Արևելքում, էջ 54:

քիայի նախագահին ներկայացրեց հուշագիր, որով պահանջում էր կառավարության հրաժարականը, սպառնալով, հակառակ դեպքում իր ձեռքը վերցնել երկրի իշխանությունը: Նույն օրը Դեմիրելի ղեկավարած կառավարությունը հրաժարական տվեց և դադարեցրեց իր գործունեությունը[147]: Հեղաշրջման կազմակերպիչների առաջնորդի նպատակն էր՝ կանխել ցածր զինվորական աստիճան ունեցող սպաների կողմից նախապատրաստվող նախաձեռնողական ռազմական հեղաշրջումը: Միջամտությունից հետո անմիջապես բանակից հեռացվեցին մեծ թվով սպաներ, սպայական կազմում մեծաթիվ փոփոխություններ իրականացվեցին[148]:

1970-ական թթ. վերջերից սկսած, հեղաշրջման նախապատրաստման գործընթացում զինվորականները ջանք չէին խնայում, որպեսզի հեղաշրջումների պատճառները հիմնավորվեին՝ որպես հասարակության շահերով ու պահանջմունքներով: Դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ 1971 թ. ռազմական միջամտությունից հետո, բանակը, որն այդպես էլ չկարողացավ հասարակությանը հիմնավորել իր միջամտության անհրաժեշտությունը, հեղինակազրկվել էր և քննադատության էր ենթարկվում: Ստեղծված իրավիճակն այդ ժամանակահատվածում մեծապես թուլացրեց երկրի ներաքաղաքական կյանքի վրա ազդելու բանակի դիրքերը: Հետագայում, ռազմական հեղաշրջումներ նախապատրաստելիս բանակի համար հատկապես կարևոր էր դրա համար հասարակական պահանջի մթնոլորտ ձևավորելը և պատրանք ստեղծելը, թե բանակը

---

[147] Տե՛ս Սիմոնյան Հր., Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Եր., 1991, էջ 544:

[148] Տե՛ս Ավագյան Ա., Պանթուրքական երազանք կամ «Գորշ գայլեր», էջ 45:

գալիս է փրկելու հասարակությանը, և, որ հեղաշրջումն այլընտրանք չունի[149]:

1980 թ.՝ երրորդ ռազմական հեղաշրջումից հետո, բանակն իրեն վերապահեց ընտրությունների միջոցով իշխանության եկած քաղաքական ուժերի օրինական կառավարման իրավունքը: Ռազմական հեղաշրջումից միայն երեք տարի անց՝ 1983 թ. դեկտեմբերին, բանակը պաշտոնապես իր լծակները փոխանցեց ընտրված քաղաքացիական իշխանությանը: Սակայն, անգամ դրանից հետո էլ, կառավարությունները և քաղաքական համակարգի ինստիտուտները շարունակում էին վերահսկվել բանակի կողմից[150]: Քաղաքացիական ղեկավարները հատկապես անզոր էին ռազմական բյուջեի և ազգային պաշտպանական քաղաքականություն մշակելու հարցերում:

Թ. Օզալի վարչապետ դառնալուց հետո երկիրը չվերադարձավ նախկին վիճակին: Հակառակը, քրդական շարժման ակտիվացումը իշխանություններին ստիպեց երկրում մտցնել ռազմական դրություն և սահմանափակել քաղաքացիական իրավունքներն ու ազատությունները: Նախագահ Էվրենը, որը ներկայացնում էր զինվորականությունը, պատասխանատու էր երկրի ներքին ու արտաքին անվտանգության ապահովման քաղաքականության մշակման, իսկ վարչապետ Օզալի կառավարությունը՝ սոցիալ-տնտեսական քաղաքականության իրականացման համար: Էվրենի՝ նախագահ վերընտրվելու ցանկությունից հրաժարվելուց հետո Օզալը փոխարինեց նրան այդ պաշտոնում 1987-1993 թթ. [151]

Բանակ-քաղաքական իշխանություններ բախման նոր փուլն սկսվեց 1997 թ. հունվարին, երբ բանակը խստորեն դատապարտեց

---

[149] Տե՛ս Դումանյան Ա., Ազգայնական շարժում կուսակցության («Գորշ գայլեր») գործունեության հիմնական փուլերը Թուրքիայում 1960-70-ական թթ., էջ 103-113:
[150] Տե՛ս Հարությունյան Վ., նշվ. աշխ., էջ 117:
[151] Տե՛ս Գասպարյան Ա., նշվ. աշխ., էջ 45:

«Ռամազանի» կապակցությամբ Էրբաքանի կազմակերպած ընդունելությունը կառավարության նիստերի դահլիճում, որին հրավիրված էին հայտնի իսլամական շարժումների ու միաբանությունների ղեկավար անդամներ: Հունվարի 22-24-ը Գլխավոր շտաբը (այսուհետ՝ ԳՇ) հանդիպում նախաձեռնեց, որի ընթացքում ընդունվեց գաղտնի համաձայնագիր «աշխարհիկ համակարգի քայքայման ու արմատականության դեմ վճռական պայքար ծավալելու մասին»: Հունվարի 31-ից փետրվարի 2-ը Անկարայից 25 կմ հեռավորության վրա գտնվող Սինջան քաղաքում կազմակերպված «Երուսաղեմի օր» երթի ժամանակ Իրանի դեսպանի հակաամերիկյան և հակահրեական ելույթից հետո զինվորականները քաղաք մտցրին տանկեր, ելույթը համարվեց հակաաշխարհիկ և անհանդուրժելի, որի պատճառով Սինջանի քաղաքագլուխը ձերբակալվեց, իսկ Իրանի դեսպանին պարտադրեցին լքել երկիրը[152]:

1997 թ. փետրվարի 28-ին բանակի ղեկավարությունն Էրբաքանին 18 կետից բաղկացած անհապաղ քայլերի վերջնագիր ներկայացրեց՝ պահանջելով անմիջապես ձեռնամուխ լինել դրանց իրականացմանը[153]: Բանակի պահանջները հանգում էին հետևյալին. պետական-ծառայողական համակարգից իսլամական կողմնորոշում ունեցող անձանց հեռացում, իսլամական շարժումների ֆինանսների վերահսկողություն և դրսից նրանց ֆինանսավորման կասեցում, իսլամական-կրոնական դպրոցների թվի կրճատում և այլն: Էրբաքանը սկզբում փորձեց մերժել պահանջների իրականացումը,

---

[152] Տե՛ս Տեր-Մաթևոսյան Վ., Իսլամը Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքում, էջ 166:

[153] Տե՛ս Шлыков В., Армия в жизни современного турецкого общества в начале 2000-х, с. 117.

սակայն, իր նկատմամբ ճնշման սաստկացման պատճառով հունիսի 20-ին, ստիպված, հրաժարական տվեց[154]:

1997 թ. փետրվարի 28-ի «փափուկ» կամ «սպիտակ» հեղաշրջումից առաջ ստեղծվեց «հասարակական պահանջի մթնոլորտ», որտեղ հիմնական դերակատարությունը տրված էր Աթաթուրքի գաղափարախոսությամբ առաջնորդվող ընկերություններին[155]: Ի տարբերություն նախորդ հեղաշրջումների, 1997 թ. զինվորականներն, իրենց բնաթագրմամբ, երկրի աշխարհիկ կարգերին սպառնացող քաղաքացիական իշխանությունը փոխարինելու էին մեկ ուրիշով՝ զերծ պահելով երկիրը ցնցումներից[156]: Գեներալները ենթադրում էին, որ գալիք արտահերթ ընտրություններում աշխարհիկության սկզբունքների հակառակորդ ԲԿ-ն կարող էր ավելի մեծ արդյունքների գրանցել, ինչը կլիներ ավելի մեծ չարիք[157]: Հետևաբար, նրանց համոզմամբ, միակ տրամաբանական քայլը ԲԿ-ի գործունեության արգելումն էր: 1998 թ. հունվարին՝ բանակի ակնհայտ ազդեցության պայմաններում, Սահմանադրական դատարանը որոշում ընդունեց ԲԿ-ի գործունեության արգելման վերաբերյալ: ԲԿ-ի գույքը պետականացվեց, ղեկավար կազմի մի քանի անդամներ ազատազրկման ենթարկվեցին, իսկ Էրբաքանին հինգ տարով արգելվեց զբաղվել քաղաքականությամբ[158]: 1997 թ. փետրվարի 28-ին սկիզբ առած գործընթացն ազդարարեց 1980 թ. սեպտեմբերի 12-ին հռչակված նպատակներից առնվազն մեկի ավարտը, որն, ըստ էության, ենթադրում էր էթնիկական (քրդական) և կրոնական (ալևիներ) քաղաքական շար-

---

[154] Տե՛ս Sakallıoğlu Ü., The Anatomy of Turkish Military's Political Autonomy, pp. 151-165.
[155] Տե՛ս Ավագյան Ա., Պանթուրքական երազանք կամ «Գորշ գայլեր», էջ 133:
[156]Տե՛ս Գասպարյան Ա., Ներքաղաքական գործընթացների իրողությունները Մերձավոր Արևելքում, էջ 55:
[157] Տե՛ս Sayari S., Turkey's Islamist Challenge, pp. 35-43.
[158] Տե՛ս Шлыков В., Армия в жизни современного турецкого общества в начале 2000-х, с. 125.

ժումների դեմ պայքարելու համար կրոնի օգտագործում: Շատերի համար բանակի պատմական կերպարը ևս կրեց ձևափոխություն, որն էլ որոշակի առումով քայքայեց նրա նկատմամբ վստահությունը: 2000 թ. հրատարակած հոդվածներից մեկում Հ. Յավուզը ուշագրավ թեզ է ներկայացնում քննարկման՝ նշելով, որ բանակի և ալևիների կրոնական փոքրամասնության միջև այդ շրջանում նկատվող ջերմությունը պատահական չէր, քանզի գեներալիտետը մշակել էր նոր մարտավարություն՝ «քեմալիզմի ալևիացում»: Նոր մարտավարության հիմնական շարժառիթը բանակի ցանկությունն էր՝ հակակշիռ ստեղծելու սուննի մեծամասնության աճող հզորության դեմ և ալևիների շնորհիվ ընդլայնելու քեմալիզմի սոցիալական բազան[159]:

2001 թ. սահմանադրական փոփոխությունների հետևանքով վերանայվեց ԱԱԽ-ի դերը երկրի կառավարման համակարգում: 1982 թ. սահմանադրության 117-118-րդ հոդվածները ԱԱԽ-ին վերապահում են ավելի լայն լիազորություններ՝ այդպիսով մեծացնելով քաղաքական համակարգում որոշումներ ընդունելու գործընթացում զինվորականների դերը և նվազեցնելով քաղաքացիական իշխանությունների լիազորությունները: 2001 թ. բարեփոխված սահմանադրության 118-րդ հոդվածով էականորեն կրճատեցին ԱԱԽ-ին վերապահված լիազորությունները: Այդ կառույցի ընդունած որոշումներն արդեն ոչ թե պարտադիր, այլ առաջնային էին համարվում կառավարության համար:

Ըստ ԵՄ անդամակցության համագործակցության 2001 և 2003 թվականների փաստաթղթերի, ենթադրվում էր, որ Թուրքիան պետք .է իրավական բարեփոխումներ իրականացներ ԱԱԽ-ում զինվորականների նկատմամբ քաղաքացիական դերակատարների տեղն ու

---

[159] Տե՛ս Տեր-Մաթևոսյան Վ., Իսլամը Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքում, էջ 169:

դերը բարձրացնելու ուղղությամբ, մասնավորապես՝ բավարարեր ԱԱԽ-ում քաղաքացիական և ոչ քաղաքացիական ուժերի ներկայացվածության մակարդակի հավասարության վերաբերյալ ԵՄ պահանջը: Այդ նպատակով ԱԱԽ-ում քաղաքացիական ներկայացուցիչների թիվն ավելացվեց՝ հավասարեցվելով ոչ քաղաքացիականների թվին: Ավելին, 2004 թ. ԱԱԽ-ի գլխավոր քարտուղար նշանակվեց քաղաքացիական պաշտոնյա[160]: Այս իրավական բարեփոխումներով Թուրքիայում քաղաքացիական իշխանություններ-բանակ փոխհարաբերությունները թեև որոշակիացան օրենսդրական առումով, սակայն դրանից հետո էլ բանակը վերջնականապես չզրկվեց քաղաքական իշխանության վրա ազդելու լծակներից ու հնարավորություններից[161]: Դրա վառ ապացույցը 2007 թ. նախագահական ընտրություններում գեներալների նախազգուշական նամակն էր, որը քաղաքագիտական շրջանակներում ստացավ «էլեկտրոնային հեղաշրջում» անվանումը: 2007 թ. ապրիլին նախագահական ընտրություններում արտգործնախարար Ա. Գյուլի թեկնածության առաջադրման ժամանակ բանակ–ԱԶԿ հակասությունները վերաճեցին անթաքույց հակամարտության և ապրիլի 27-ին բանակի ԳՇ-ը հուշագիր-հաղորդագրություն տարածեց, որով իշխող կուսակցությանը կոչ էր անում զգուշանալ հանրապետական–աշխարհիկ կարգերը խաթարելու մտադրությունից և խոստանում էր հակառակ պարագայում դիտորդի դերում չմնալ: Այս քայլն ուղղակիորեն նշանակում էր, որ բանակը վերջնագիր էր ներկայացնում իշխող կուսակցության ղեկավարությանը: Լարված ներքաղաքական մթնոլորտում 2007 թ. հուլիսի 22–ին՝ նախատեսվածից 4 ամիս ավելի վաղ, անցկացվեցին

---

160 Տե՛ս Турция: новая роль в современном мире, с. 12.

161 Տե՛ս Шлыков В., Армия в жизни современного турецкого общества в начале 2000-х, с. 145.

խորհրդարանական արտահերթ ընտրություններ, որոնց արդյունքում ԱԶԿ-ն 12 %–ով ավելացրեց 2002 թ. իր ստացած քվեները[162]:

Ազգային անվտանգությանը սպառնացող վտանգների մասին պաշտոնական փաստաթուղթը Թուրքիայում ստացել է «Պետության գաղտնի կամ Կարմիր Սահմանադրություն», ինչպես նաև «Կարմիր գիրք» անվանումը: 1992 թ. փաստաթղթում, որպես պետության ներքին սպառնալիք, ամրագրվեց քրդական անջատողականությունը, 1997 թ.՝ կրոնական արմատականաթյունը, ինչպես նաև՝ քաղաքական իսլամը, ծայրահեղ ձախակողմյան շարժումներն ու ծայրահեղ ազգայնականությունը, որոնք պաշտոնապես համարվեցին պետության ներքին սպառնալիք: «Կարմիր Սահմանադրությունը» պատրաստվում էր Թուրքիայի զինված ուժերի ԳՇ-ում և վերջնական տեսք էր ստանում ԱԱԽ-ում: Վերջին անգամ այն հաստատվել է 2005 թ. հոկտեմբերին, երբ Անկարան Եվրամիությանն անդամակցելու բանակցություններ էր սկսել: Վերջին խմբագրմամբ, սպառնալիք էին համարվում «իսլամական արմատականությունը», անջատողականությունն ու ձախակողմյան խմբավորումների ահաբեկչությունը[163]:

Թուրքիայի ԳՇ-ը մշակել էր գործողությունների գաղտնի պլան՝ բանակի կողմից հասարակական ու քաղաքական կյանքում նախաձեռնությունների վերաբերյալ, որի նպատակը բանակի հրամանատարության կողմից իր համար զգայուն մի շարք հիմնախնդիրների նկատմամբ հասարակական կարծիքի ձևավորումն ու ուղղորդումն էր: Գլխավոր շտաբի կողմից նույնիսկ կազմված է եղել «սև ցուցակ», որում ընդգրկված են եղել երկրում հայտնի մի շարք մարդիկ՝ այդ թվում երկրի նախագահ Ա. Գյուլը, ինչպես նաև մի շարք հասարա-

---

[162] Տե՛ս Emre T., Forecasting elections in Turkey. “International Journal of Forecasting”. Amsterdam: Feb-2011. Vol. 27, Iss. 4, p. 1248.

[163] Գասպարյան Ա., նշվ. աշխ., էջ 53:

կական կազմակերպություններ, որոնք մեղադրվում էին Թուրքիայի տարածքային մասնատումը ցանկացող եվրոպական ու ամերիկյան տարբեր հիմնադրամներից ֆինանսական միջոցներ ստանալու և երկրի ներսում վերջիններիս ծրագրերի իրականացման մեջ[164]:

Ներկայումս Թուրքիայում իշխող ԱԶԿ-ը հստակորեն ցուցադրում է իր գերակա դիրքերը «գաղտնի սահմանադրության» մշակման մեջ, ընդգծում է այդ գործում քաղաքացիական անձանց, այլ ոչ թե իշխանության ռազմական ինստիտուտների գերակայությունը, ինչը նույնպես համապատասխանում է Թուրքիայի քաղաքական կյանքում բանակի դերի նվազման մասին ԵՄ պահանջներին[165]: Դա բարդ ու ցավոտ գործընթաց է, քանի որ թուրքական բանակը ավանդաբար հանդիսացել է բավական ազդեցիկ քաղաքական ուժ, որը ԱԱԽ-ի մեխանիզմի միջոցով կարող էր բոլոր այլ պետական գերատեսչությունների համար պարտադիր կատարման որոշումներ կյանքի կոչել: 2005 թ. նոյեմբերի 2-ին Ռ. Էրդողանը իշխող ԱԶԿ-ի ղեկավար խորհրդի նիստում գաղտնի տեղեկատվության արտահոսքի համար մեղադրեց ԱԱԽ-ին՝ նշելով, որ դա տեղի է ունեցել փաստաթղթի նախապատրաստման փուլում, որում ընդգրկված էին ստորին մակարդակի չինովնիկները: Նախկինում ԱԱԽ-ի աշխատակազմի նման հրապարակային քննադատությունն անհնար էր, նույնիսկ վարչապետի կողմից[166]:

Մինչև 2003 թ., ԱԱԽ-ի նիստերի ժամանակ Թուրքիայի բարձրագույն զինվորական ղեկավարությունը, նախապես համաձայնեցնելով իր դիրքորոշումը ԳՇ-ի հետ, իրավունք ուներ ոչ միայն իր տեսակետը հայտնել ներքին քաղաքական իրավիճակի զարգացման

---

[164] Տե՛ս Հովսեփյան Լ., Թուրքիայի վախերը. Սևրի սինդրոմ, էջ 31:
[165] Տե՛ս Турция: новая роль в современном мире, с. 10.
[166] Տե՛ս Гурьев А., “Красная книга”: у Турции новая концепция национальной безопасности, http://www.centrasia.ru., 08.11.2005.

հարցերի շուրջ՝ այլև իշխանություններից պահանջել կոնկրետ միջոցներ ձեռնարկել երկրի ներսում իրավիճակի կայունացման ուղղությամբ[167]: Վերջին տարիներին ԱԱԽ-ի կադրային կազմում սկսեցին գերակայել քաղաքացիական անդամները, զգալիորեն նվազեց զինվորականների քանակը, գլխավոր քարտուղարության աշխատակիցների ընդհանուր թվից՝ 294 հոգուց զինվորականները կազմում էին միայն 15-ը[168]:

Մինչ ընդդիմադիր կուսակցությունների առաջարկով Սահմանադրական դատարանը քննում էր ԱԶԿ-ի գործունեության կասեցման հարցը, կառավարությունը պատասխան հարված հասցրեց աշխարհիկության գլխավոր ուժ հանդիսացող բանակին՝ ակտիվացնելով 2007 թ. հունիսի 12-ին սկսված «Էրգենեքոնի» գործի քննությունը: 2008 թ. հունվարի 22-ին տեղի ունեցան բարձրագույն զինվորականության զանգվածային ձերբակալություններ: Նրանք մեղադրվում էին ԱԶԿ-ին իշխանությունից հեռացնելու նպատակով հեղաշրջման նախապատրաստման մեջ[169]: «Էրգենեքոնի» գործն ավելի ցայտուն ձևով ի ցույց է դնում Թուրքիայում քաղաքական և տնտեսական ազդեցություն ունեցող իսլամական ընտրախավի և աշխարհիկության սկզբունքների պահապան հանդիսացող բանակի միջև հակասությունները: ԱԶԿ-ի կողմից նման ռիսկային նախաձեռնությամբ հանդես գալը չափազանց վտանգավոր էր, քանզի դա կարող էր սադրել բանակին իսկապես իրականացնելու հերթական

---

[167] Տե՛ս Задонский В., Влияние высшего военного руководства Турецкой Республики на внутреннюю и внешнюю политику государства www.iimes.ru. 21.05.2002

[168] Տե՛ս Turkey puts civilian over its National Security Council, reduce role, http://www.worldtribune.com. Dec. 3, 2004.

[169] Տե՛ս Турция: новая роль в современном мире, с. 13.

զինվորական հեղաշրջումը: Այդ ժամանակահատվածում թուրքական հասարակության մեջ իրոք կային նման մտավախություններ[170]:

2010 թ. հունվարին «Մեծ մուրճի» դատական գործի շրջանակներում բացահայտվեցին զինվորականների կողմից դեռ 2003 թ. ծրագրված ռազմական հեղաշրջման ծրագրերը: Այդ աղմկոտ բացահայտումը երկրորդն էր 2008 թ. մարտին բացահայտված «Էրգենեքոնի» գործից հետո: Երկու դեպքում էլ ներգրավված էին բարձրաստիճան զինվորականներ, ինչն էլ ավելի հանրային հնչեղություն հաղորդեցին այդ դեպքերին: Զինվորականները ծրագրում էին հատուկ նշանակության գործողություն իրականացնել ԱԶԿ–ի դեմ՝ երկրում քաոսային ու անվերահսկելի իրավիճակ ստեղծելով, հանրային ընդվզումներ կազմակերպելով, մի շարք հասարակական–քաղաքական գործիչների նկատմամբ Ստամբուլի մզկիթներում ահաբեկչական գործողություններ իրականացնելով և այլն:

Փետրվարի 23–ին և 26–ին Թուրքիայի տարբեր քաղաքներում տեղի ունեցան մոտ 70 բարձրաստիճան գործող և պաշտոնաթող զինվորականների ձերբակալություններ, որոնց շարքում էին Թուրքիայի ԶՈՒ–ի ռազմածովային և ռազմաօդային ուժերի նախկին գլխավոր հրամանատարները, առաջին ցամաքային զորքերի նախկին հրամանատարը, մի շարք գեներալներ, ծովակալներ: Նրանք մեղադրվում էին ահաբեկչության հետ կապ ունենալու և մեղավոր էին ճանաչվում 2003 թ. վերոհիշյալ ռազմական հեղաշրջման փորձի կազմակերպման մեջ: «Մեծ մուրճի» գործով ձերբակալվեցին մոտ 200 զինվորականներ, որոնց համար մեղադրող կողմը պահանջում էր մինչև 20 տարի ազատազրկում[171]:

---

[170] Տե՛ս Шлыков В., Армия в жизни современного турецкого общества в начале 2000-х, с. 147.

[171] Տե՛ս Гурьев А., Ситуация в Турции: декабрь 2010, http://iimes.ru/rus/stat/2011/08–01–11c.htm

«Մեծ մուրճի» ծրագիրը ձախողվեց Էրդողանի ջանքերով: «Մեծ մուրճը» հեղաշրջման ծրագիր էր, որը 2003-ից նախապատրաստում էր երկրի ռազմական էլիտան: Թուրքիայում առաջին անգամ զինվորականներին դատեց ոչ թե զինվորական դատարանը, այլ քաղաքացիականը, և բանակը զրկվեց իր ընտրախավից: Դատվեցին գեներալներ և բարձրաստիճան պաշտոնյաներ, որոնց ձեռքում, ըստ էության, իրական իշխանությունն էր[172]:

2010 թ. փետրվարին Թուրքիայի կառավարությունը վերացրեց «Հանրային կարգի և անվտանգության համագործակցության արձանագրությունը», որը բանակի ղեկավարության կողմից կազմվել էր 1997 թ. փետրվարյան «թավշյա հեղաշրջումից» հետո՝ ներքաղաքական սպառնալիքները հսկողության տակ պա հելու նպատակով: Այդ փաստաթուղթը ԶՈՒ ղեկավարության համար քաղաքական գործընթացներին միջամտելու և քաղաքացիական անձանց հեռախոսների գաղտնալսումներ իրականացնելու օրինական միջոց էր հանդիսանում: Այնուհանդերձ, այդ արձանագրության վերացումը ներքաղաքական գործընթացներին ԶՈՒ–ի կողմից կիրառվող հնարավոր խոչոչակներից ընդամենը մեկն էր, քանի որ գոյություն ունեն մի շարք այլ ենթաօրենսդրական ակտեր, որոնց հիման վրա բանակը հնարավորություն ուներ լեգիտիմացնելու իր միջամտությունները քաղաքական գործընթացներին, օրինակ՝ 1961 թ. ընդունված Թուրքիայի զինված ուժերի «Ներքին ծառայության մասին օրենքի» և «Ներքին ծառայության ուղեցույցի» համապատասխան դրույթները, որոնց համաձայն, Թուրքիայի ԶՈՒ–ի պարտականությունն է անհրաժեշտության դեպքում անգամ զենքով պաշտպանել հայրենիքը և հանրապետությունը ներքին և արտաքին սպառնալիքներից:

[172] Տե՛ս Ավագյան Ա., Պանթուրքական երազանք կամ «Գորշ գայլեր», էջ 137:

ԱԶԿ–ին հաջողվեց Թուրքիայի անվտանգության համակարգը աստիճանաբար դնել քաղաքացիական վերահսկողության տակ՝ սկսած Ազգային անվտանգության խորհրդից մինչև Հատուկ դատարաններ: ԱԶԿ–ն վճռական է տրամադրված ԶՈւ–ի քաղաքական դերակատարման օրենսդրական հիմքերն ամբողջությամբ չեզոքացնելու հարցում, ուստի ամենայն հավանականությամբ վերոհիշյալ երկու փաստաթղթերի համապատասխան դրույթները նույնպես կվերացվեն:

Թուրքիան դեռ երկար ճանապարհ պետք է անցնի սահմանադրական փոփոխությունները կենսագործելու ուղղությամբ, քանի որ բյուրոկրատիայի, զինվորականների վերաբերմունքը նախատեսվող լայնածավալ փոփոխությունների հարցում ոչ միայն բացասական է, այլև՝ մարտնչող: Թեև 1982 թ. ընդունված Թուրքիայի սահմանադրության 1/3-ը փոփոխվել է, սակայն դեռ գործում են սահմանադրության այն առանցքային գաղափարախոսական հոդվածները, որոնց վրա հենվում են երկրում ազգայնամոլական ու քեմալական շրջանակները, աշխարհիկ–հանրապետականները, զինվորականներն ու դատաիրավական համակարգի ներկայացուցիչները[173]:

2011թ. հուլիսի 29–ին հրաժարական տվեց Թուրքիայի զինված ուժերի ԳՇ պետը, ինչին հաջորդեցին ցամաքային, ռազմաօդային ու ռազմածովային ուժերի հրամանատարների հրաժարականները: Դրանք զգալիորեն ազդեցին բանակի հեղինակության վրա: Վերջինիս ղեկավարները քաջ գիտակցում էին, որ հեղինակության նման անկումը կարող է բացասական հետևանքներ ունենալ նաև երկրում զինվորականության մասնագիտական շահերի վրա: ԶՈւ ԳՇ-ի նախկին պետն առաջին անգամ խոսեց պաշտպանական դիրքերից և նշեց, որ բանակի գործերին միջամտելը բացասաբար է ազդելու

[173] Տե՛ս Sayın, Ç., Exploring the Military Mindset: Phenomenological Insights for Security Sector Reform in Turkey, pp. 97-133.

զինվորականների արհեստավարժության վրա[174]: 2012 թ. հունվարին հարցաքննվեց և կալանավորվեց Թուրքիայի ԳՇ-ի նախկին պետ Իլք. Բաշբուղը: Նա մեղադրվում էր ահաբեկչական խմբավորման ձևավորման ու ղեկավարման և ուժ ու բռնություն գործադրելու միջոցով գործող կառավարության տապալման փորձ իրականացնելու մեջ: Սա աննախադեպ իրադարձություն էր Թուրքիայի պատմության ընթացքում, երբ քաղաքացիական դատարանը կալանքի տակ էր վերցնում ԳՇ նախկին պետին: Մեղադրող կողմը պնդում էր, որ 2003-2010 թթ. ԳՇ պետի պաշտոնը զբաղեցրած Իլք. Բաշբուղն է «ինտերնետ-հուշագրի» նախաձեռնողը, երբ համացանցում տեղադրվեցին թուրքական իշխանություններին վարկաբեկող նյութերը[175]: Ինքը՝ Բաշբուղը, խիստ վիրավորված էր նման վերաբերմունքից և պնդում էր, որ Թուրքիայի նոր սահմանադրության 117-րդ հոդվածով ԳՇ պետը իր պարտականությունների ու լիազորությունների իրականացման ժամանակ հաշվետու է երկրի վարչապետին[176]:

Բանը հասավ նրան, որ Անկարայի դատարանը վարույթ ընդունեց ԳՇ նախկին պետ և երկրի 7-րդ նախագահ 94-ամյա Ք. Էվրենի գործը, որը մեղադրվում էր 1980 թ. սեպտեմբերի 12-ի ռազմական հեղաշրջումը կազմակերպելու մեջ, ինչի համար նախատեսվում է ցմահ ազատազրկում: Ք. Էվրենը չընդունեց ներկայացված մեղադրանքները՝ ընդգծելով, որ 1980 թ. ինքն իր համախոհներով փրկել է երկիրը անարխիայից[177]: Բարձրաստիճան զինվորականներից ոչ ոք

---

[174] Տե՛ս Տեր–Մաթևոսյան Վ., Կառավարության և զինված ուժերի փոխհարաբերությունների զարգացումները Թուրքիայում, http://armenpress. am/arm/news /661153/html

[175] Տե՛ս Գաբրիելյան Հ., Ներքաղաքական պայքարի արդի փուլը Թուրքիայում, http://noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=6290

[176] Տե՛ս Шлыков В., Армия в жизни современного турецкого общества в начале 2000-х, с. 138.

[177] Տե՛ս Գաբրիելյան Հ., Ներքաղաքական պայքարի արդի փուլը Թուրքիայում, http://noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=6290

այլևս երաշխիք չուներ, որ ինքը չի լինելու հաջորդ ձերբակալվողը, ուստի սկսվեց զինվորականության ցուցադրական հրաժարական-ների շարքը[178]: 2013 թ.հունվարին հրաժարական տվեց ծովակալ Ն. Գյուները, որը թուրքական նավատորմի երկրորդ մարդն էր[179]:

Բանակի շարքերում չափավոր խմբի դիրքորոշման շնորհիվ էր, որ ԶՈՒ–ի բարձրագույն ղեկավարության մի հատվածին չհաջողվեց իրականացնել 2000–ականներին ծրագրված առնվազն երեք ռազմա-կան հեղաշրջման փորձ: Թուրքական հասարակության շրջանում անցկացված հարցումների մասնակիցների 60 %–ը կողմ էր բարձ-րագույն զինվորականության դեմ սկսված զանգվածային ձերբակա-լումներին[180]:

2016 թ. հուլիսի 15-ի երեկոյան տեղեկություն տարածվեց այն մասին, որ զինվորականները ռազմական տեխնիկայով փակել են Բոսֆորի կամուրջը երկու կողմից, ինչը խուճապ առաջացրեց Ստամբուլի բնակչության շրջանում: Միաժամանակ, ռազմական ուղղաթիռը կրակ բացեց Ստամբուլում գտնվող Թուրքիայի գլխա-վոր հետախուզական վարչության շենքի մոտակայքում: Ակտիվ փոխհրաձգություն սկսվեց նաև Անկարայի կենտրոնում՝ Թուրքիա-յի ԶՈՒ ԳՇ-ի մոտ: Թուրքիայի վարչապետ Բ. Յըլդըրըմը հեռախո-սային հարցազրույցի ժամանակ հայտարարեց, որ զինված ուժերի որոշ հրամանատարներ փորձ են կատարում երկրում զինված հե-ղաշրջում իրականացնել և անվտանգության ուժերին հրաման է տրվել անել այն, ինչ անհրաժեշտ է[181]: Պաշտպանության նախարա-րը հայտարարեց, որ բանակի մեծամասնությունը չի պաշտպանում

---

[178] Տե՛ս Турция: новая роль в современном мире, с. 13.

[179] Տե՛ս Երբեմնի ամենակարող թուրքական զինուժը թուլացած է և պառակտված, http://tert.am/am/news/2013/02/01/

[180] Տե՛ս Տեր–Մաթևոսյան Վ., Թուրքիան 2008–2011 թթ.: Քաղաքական փոխակերպում-ների հիմնական առանձնահատկությունները, էջ 34:

[181] Տե՛ս Ռազմական հեղաշրջում Թուրքիայում, http://yerevan.today/all/politics/8807/

հեղաշրջման կազմակերպիչներին, որոնք, իբր, գյուլենական շարժման հետևորդներ են, ովքեր կատարում են ԱՄՆ-ի Փենսիլվանիա նահանգում բնակվող Ֆ. Գյուլենի հրահանգները[182]:

Մինչ զինվորականների կողմից թուրքական հեռուստաալիքների եթերը դադարեցնելը, հայտարարվեց, որ զինվորական հեղաշրջումը իրականացնում է Թուրքիայի ԶՈՒ ԳՇ-ի պետը, որն էլ գլխավորելու է նոր կառավարությունը, սակայն հետագայում պարզվեց, որ ԶՈՒ ԳՇ-ը ակտիվ ռմբակոծության է ենթարկվում և ԳՇ-ի պետը ու մի շարք բարձրաստիճան զինվորականներ պատանդ են վերցվել ապստամբ զինվորականների կողմից[183]:

Զինվորականները հայտարարեցին, որ թուրքական իշխանություններն այլևս չեն կարող իրականացնել իրենց լիազորությունները, և իշխանությունն անցել է բանակին, որի ղեկավարները ձեռնամուխ են լինելու նոր Սահմանադրության կազմմանը, և, որ Թուրքիայի միջազգային բոլոր պարտավորությունները կպահպանվեն ու երկրում առաջնահերթ կմնա օրենքի գերակայությունը[184]:

Հեղաշրջումը սկսվելու պահին Ռ. Էրդողանը Մարմարիսի իր հանգստավայրում էր, ուր հեղաշրջման կազմակերպիչներն ուղղաթիռներով զինվորականներ ուղարկեցին՝ նրան ձերբակալելու կամ վնասազերծելու նպատակով: Սակայն Էրդողանը զինվորականների հայտնվելուց ընդամենը կես ժամ առաջ կարողացավ հեռանալ այնտեղից և ինքնաթիռով ուղևորվեց դեպի Ստամբուլ: Թեև նրա ինքնաթիռն օդում հետապնդվում էր խռովարարների երկու կործա-

---

[182] Տե՛ս Քարոզիչ Ֆեթուլլահ Գյուլենը դատապարտել է Թուրքիայում հեղաշրջման փորձը՝ հերքելով իր հասցեին հնչող մեղադրանքները, http://www.tert.am/am/news/2016/07/16/gullen/2081451

[183] Տե՛ս Գաբրիելյան Հ., Թուրքիայի քաղաքական իրավիճակը 2016 թ. Հուլիսին, http://noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=15033

[184] Տե՛ս Թուրքիայում զինված հեղաշրջման փորձ է տեղի ունենում, http://www.aravot.am/2016/07/16/715622/

նիչների կողմից, սակայն, անհասկանալի պատճառներով, նրանք չխոցեցին Էրդողանի ինքնաթիռը՝ թույլ տալով վայրէջք կատարել Ստամբուլում[185]:

Էրդողանը համացանցի տեսակապով ուղիղ եթեր դուրս եկավ՝ կոչ անելով իր կողմնակիցներին փողոց դուրս գալ: Էրդողանի հեռուստատեսային կոչից հետո մեծ թվով մարդիկ դուրս եկան Ստամբուլի փողոցներ: Խորհրդարանի շենքը շրջափակած տանկերը կրակ բացեցին շենքի ուղղությամբ, ինչի հետևանքով որոշ ցուցարարներ և ոստիկաններ սպանվեցին ու վիրավորվեցին[186]:

Հեռուստակոչից անմիջապես հետո Թուրքիայում համացանցը արգելափակվեց: Էրդողանը շարժվեց դեպի օդանավակայան՝ փորձելով լքել երկիրը: Տանկերը շարժվեցին դեպի Ստամբուլի Աթաթուրքի անվան միջազգային օդանավակայան, որի գործունեությունը դադարեցվեց, իսկ բոլոր չվերթները հետաձգվեցին:

Թուրքիայում հայտարարվեց ռազմական դրություն, ինչը ստիպեց հարևան երկրներին՝ Հունաստանին, Իրանին, Վրաստանին, Բուլղարիային և Իրաքին, զումարել իրենց Անվտանգության խորհուրդների նիստեր, փակել Թուրքիայի հետ սահմանը և Զինված ուժերը բերել ռազմական պատրաստվածության: ԱՄՆ-ի Զինված ուժերի ղեկավարությունը հայտարարեց, որ անհրաժեշտության դեպքում կձեռնարկի միջոցներ՝ Թուրքիայի տարածքում գտնվող «Ինջիրլիկ» ռազմակայանի անվտանգությունը պահպանելու համար[187]:

Որոշ ժամանակ անց Թուրքիայի ԶՈՒ ԳՇ-ի պետի պաշտոնակատարը հայտնեց, որ սպանվել են հեղաշրջման 104 մասնակից

---

[185] Տե՛ս СМИ узнали о планах мятежников убить Эрдогана на курорте, https://news.mail.ru/incident/26472804/

[186] Տե՛ս Ռազմական հեղաշրջում Թուրքիայում, http://yerevan.today/all/politics/8807/

[187] Տե՛ս Թուրքիայում զինված հեղաշրջման փորձ է տեղի ունենում, http://www.aravot.am/2016/07/16/715622/

զինվորականներ, 90 քաղաքացիական անձինք: Հեղաշրջման փորձի մեջ կասկածվելու համար ձերբակալվել է 1563 քաղաքացի, այդ թվում 5 գեներալ և 29 գնդապետ[188]: Ռազմական հեղաշրջման փորձ ձեռնարկած 8 զինվորականների հաջողվեց ռազմական ուղղաթիռով մեկնել Հունաստան և քաղաքական ապաստան խնդրել: Թուրքիան պահանջեց հետ վերադարձնել փախուստի դիմած զինվորականներին, սակայն Հունաստանը վերադարձրեց միայն ռազմական ուղղաթիռը, հայտարարելով, որ քննարկում է թուրք զինծառայողներին ապաստան տալու հարցը[189]:

Հեղաշրջման ձախողման հիմնական պատճառների շարքում կարելի է նշել այն, որ ի տարբերություն նախորդ հեղաշրջումների, այս անգամ զինվորականությունը հանդես չեկավ միասնաբար: Սակայն, անկախ այդ հանգամանքից, հեղաշրջման կազմակերպիչների վճռորոշ բացթողումը եղավ այն, որ նրանք, Ստամբուլում և Անկարայում շենքեր ու շինություններ գրավելու փոխարեն, հենց սկզբից չգրավեցին Մարմարիսի այն հյուրանոցը, որտեղ հանգստանում էր Էրդողանը, և չվնասազերծեցին նրան: Բացի այդ, կազմակերպիչները փակեցին միայն հեռուստաալիքները՝ վերահսկողությունից դուրս թողնելով սոցիալական ցանցերը, որոնց միջոցով Էրդողանն իր կողմնակիցներին կոչ արեց փողոց դուրս գալ: Զավեշտն այն էր, որ հեղաշրջումը ձախողվեց նաև այն սոցիալական կայքերի գործունեությամբ, որոնց դեմ մինչ այդ Էրդողանը կատաղի պայքար էր մղում: Վերջապես, կազմակերպիչները բնակչությանը հորդորում էին մնալ տանը, մինչդեռ Էրդողանն իր կողմակիցներին կոչ արեց դուրս գալ փողոց և, արդյունքում, զրահատեխնիկայի դիմաց կանգնած էին իշխանության կողմնակիցները: Թուրքական

---

188 Տե՛ս Ռազմական հեղաշրջում Թուրքիայում, http://yerevan.today/all/politics/8807/

189 Տե՛ս Հունաստանը Թուրքիային է վերադարձրել ապստամբների առևանգած ռազմական ուղղաթիռը, http://www.azatutyun.am/a/27862187.html

բանակի կողմից հեղաշրջումների մեծ փորձ ունենալու հանգամանքը հաշվի առնելով՝ հեղաշրջման կազմակերպիչների նման անտրամաբանական գործողություններն ու տարօրինակ դանդաղկոտությունն իսկապես մտածելու տեղիք է տալիս, որ, գուցե, իրավացի են այն վերլուծաբանները՝ այդ թվում գյուլենական շարժման առաջնորդ Ֆ. Գյուլենը, որոնց կարծիքով, կատարվածը ոչ թե հեղաշրջում էր, այլ հենց Էրդողանի կողմից բեմականացված հեղաշրջման փորձ, որը նրան բավարար հիմքեր կտար ավարտին հասցնել երկրի ներքաղաքական կյանքում բանակի դերի նվազեցման և ինչու ոչ՝ երկրի ներքին կյանքում բանակի դերի իսպառ բացառման գործընթացը և հասնել Թուրքիայում սեփական ավտորիտար իշխանության հաստատմանը:

Հեղաշրջման փորձին հաջորդած դեպքերը հաստատեցին այս վարկածի ճշմարտացիությունը: Թուրքիայում ավելի քան 66.000 քաղաքացի պաշտոնանկ արվեց հեղաշրջման փորձին իբր թե նպաստելու պատճառով, ընդ որում, պաշտոնանկություններն առնչվել են Թուրքիայի բոլոր նախարարություններին և գերատեսչություններին: Ներքին գործերի նախարարը հայտարարեց, որ ձերբակալվել է 18.044 մարդ, որոնցից ավելի քան 10.000-ը՝ զինվորականներ են, որ չեղյալ են համարվել Թուրքիայի 49.211 քաղաքացիների անձնագրեր: ԶԼՄ-ների հաղորդմամբ, բանտերում տեղերը չեն բավականացնում՝ հեղաշրջմանը մասնակցելու մեղադրանքով կալանավորված մեծ թվով մարդկանց տեղավորելու համար: Հայտարարվեց, որ նույն շարժառիթներից ելնելով՝ կփակվեն 1.669 ուսումնական հաստատություններ, 1200 հիմնադրամներ և բարեգործական կազմակերպություններ, 19 արհմիություններ, 15 համալսարաններ և 35 բժշկական հիմնարկություններ[190]:

[190] Տե՛ս Գաբրիելյան Հ., Թուրքիայի քաղաքական իրավիճակը 2016 թ. հուլիսին,

Առաջին հայացքից կարող է տպավորություն ստեղծվել, թե ՆԱՏՕ-ի երկրների շարքում թվաքանակով երկրորդ բանակն ունեցող Թուրքիան, որպես տվյալ ռազմաքաղաքական դաշինքի անդամ, չպետք է որևէ խնդիրներ ունենար իր զինված ուժերի սպառազինման և դրա արդիականացման հարցերում: Այս առումով պետք է նշել, որ Թուրքիան իր ռազմական համակարգի կայացման և հատկապես ռազմական օժանդակությունների, սպառազինության ձեռքբերման առումով զգալի կախվածության մեջ էր ԱՄՆ-ից: Միայն 1946-1987 թթ. ԱՄՆ-ի կողմից թուրքական զինված ուժերին հատկացված փոխանցումները կազմում էին ընդհանուր առմամբ շուրջ 8.8 մլրդ դոլար: 1982 թ. սկսած ԱՄՆ-ը իր «Ռազմական օժանդակության ծրագրի», Տնտեսական օժանդակության հիմնադրամի և «Միջազգային ռազմական ուսուցման ծրագրի» միջոցով տարեկան Թուրքիային է հատկացրել 700-800 մլն դոլար: Բացի այդ, ԱՄՆ-ը մինչև այժմ իրավունք ունի օգտագործել Թուրքիայի տարածքում գտնվող ռազմական բազաները (Ինջիրլիք, Ումուրթալըք և այլն): Ռազմաարդյունաբերության ոլորտում գրանցած հաջողություններով հանդերձ, Թուրքիայում դեռևս անհիրատեսական է համարվում միջին և առավելապես մեծ հեռահարության արդյունավետ հակաօդային պաշտպանության համալիրների արտադրությունը, ինչը կապված է Թուրքիայում այդ ոլորտում անհրաժեշտ տեխնոլոգիաների ու փորձի պակասի, ինչպես նաև համապատասխան փորձառու ինժեներակոնստրուկտորական բազա չունենալու հետ: Մինչև հիմա թուրքական ռազմարդյունաբերությունը հեռահար հակաօդային և հակահրթիռային պաշտպանության միջոցների նույնիսկ բաղադրամասերի արտադրության ոլորտում հաջողություն չի գրանցել և դրանց ձեռքբերման համար միջազգային

http://noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=15033

մրցույթ է հայտարարել[191]: Թուրքիան լայնամասշտաբ նախագծերի միջոցով փորձում է ստեղծել ռազմաօդային ուժերի և հակաօդային պաշտպանության զարգացած ու ինտեգրված մի համակարգ՝ համալրելով այն նորագույն ռազմական տեխնիկայով ու սպառազինությամբ: Այդ համակարգում լուրջ տեղ է հատկացված ռազմական ոլորտի տեխնոլոգիական նոր միջոցներին՝ անօդաչու թռչող սարքեր, հետախուզական արբանյակներ, հետախուզական օդապարիկներ: Չնայած Թուրքիան լիովին չի տիրապետում նորագույն տեխնոլոգիաներին, այնուամենայնիվ, քայլեր է ձեռնարկում դրանց նախագծման ու արտադրության ուղղությամբ: Արտադրական գործընթացում թուրքական կողմը դեռևս զգալի կախվածություն ունի առաջատար երկրներից և ամեն կերպ ջանում է այդ երկրների օգնությամբ յուրացնել նրանց փորձն ու պատրաստել սեփական կադրերը:

Թուրքիայի ռազմական նավաշինության ոլորտում փորձ է արվում սկսել ինքնուրույն նախագծեր՝ դրանցում ներգրավելով նաև մասնավոր ընկերություններին, որոնք, հիմնականում, գործել են առևտրային նավերի արտադրության ոլորտում: Դա տարիների ընթացքում հնարավորություն կտա համախմբել մասնագիտական ու ենթակառուցվածքային ռեսուրսները նոր որակի նախագծերի համար: Չնայած մի շարք ռազմանավերի ու մոտորանավակների արտադրության ոլորտում, կարելի է ասել, թուրքական ընկերությունները հասել են որոշ հաջողությունների, այնուամենայնիվ, դեռևս զգալիորեն օգտվում են արտասահմանյան մի շարք երկրների տեխնոլոգիական հնարավորություններից, ինչպես օրինակ՝ սուզանավերի արտադրության ոլորտում[192]: Թուրքիան նաև դեռևս լիովին պատրաստ չէ ինքնուրույն իրականացնել գիտատեխնիկական ու

---

[191] Տե՛ս Հովսեփյան Լ., Թուրքիայի զինված ուժերի արդիականացումն ու ռազմաարդյունաբերությունը, Եր., 2010, էջ 129, 167:
[192] Տե՛ս նույն տեղում, էջ 134-142:

արտադրական գործունեություն ռազմարդյունաբերության այնպիսի վճռորոշ ոլորտներում, ինչպիսին են՝ նորագույն ռազմական տեխնոլոգիաները, ավիաարդյունաբերությունը, հրթիռային տեխնոլոգիաները, արբանյակային-տիեզերական տեխնոլոգիաները և այլն:

Ինչպես նկատելի է, լրջագույն խնդիրներ են առկա ոչ միայն քաղաքական իշխանության և հասարակության, քաղաքական իշխանության և թուրքական զինված ուժերի միջև հարաբերություններում, այլև՝ որոշակի խնդիրներ են առկա թուրքական բանակի ներսում, մասնավորապես՝ սպառազինության արդիականացման հարցում:

3. «Խորքային պետությունը» և «գյուլենական շարժումը»՝ որպես Թուրքիայի արդի քաղաքական համակարգի սպառնալիքներ:

Դեռևս 1950-ական թթ. Թուրքիայում ստեղծվեց «Հատուկ պատերազմական բաժին» (այսուհետ՝ ՀՊԲ) գաղտնի կառույցը, որը հետագայում հանդիսացավ «խորքային պետության» կարևոր օղակներից մեկը: ՀՊԲ-ը սկզբում գործում էր Ազգային հետախուզական ծառայության (այսուհետ՝ ԱՀԾ), իսկ հետագայում անցավ Գլխավոր շտաբի ենթակայության ներքո, որի համար «Գորշ գայլերը» ձախակողմյան շարժումների դեմ պայքարի ընթացքում «սև աշխատանքներ» կատարող էր: 1960-ականների վերջին ՀՊԲ-ի օժանդակությամբ ստեղծվեցին «Գորշ գայլերի» գրոհայինների ճամբարները, որտեղ նրանք հատուկ պատրաստություն էին անցնում: «Գորշ գայլերի» գրոհայինների մեջ սերմանվում էին պանթուրքիստական գաղափարներ: 1970-ական թթ. վերջերին Թուրքիայում կար այդպիսի 28 ճամբար, որտեղ հատուկ պատրաստություն էին անցել ավելի քան 1500 երիտասարդ: Թուրքիայում «խորքային պետության» մասին խոսելիս նկատի ունեն ոչ թե հստակ ձևավորված կառույց, որն իր ստորաբաժանումներն ու վերահսկողության մեխանիզմներն ունի, այլ ազդեցության խմբերին, որոնք կազմված են խոշոր արդյու-

նաբերողներից, բանակի վերնախավից, մասոնական կառույցներից, միջին և բարձր օղակի բյուրոկրատիայից: Ճգնաժամային պահերին այս ազդեցիկ խմբերի ու խմբավորումների շահերը համընկնում են, և նրանք, միասնական ծրագրեր որդեգրելով, ճգնաժամից դուրս գալու ուղիներ են որոնում:

1977 թ. մայիսի 1-ին՝ աշխատավորության տոնի կապակցությամբ, ձախակողմյան շարժումների կողմից Թաքսիմ հրապարակում կազմակերպված ցույցի ժամանակ «Գորշ գայլերը» կազմակերպեց ահաբեկչական գործողություններ, որոնց հետևանքով զոհվեց 34, վիրավորվեց 100-ից ավելի մարդ: «Թաքսիմի» արյունոտ դեպքերի ետևում կանգնած էր ՀՊԲ-ը[193]:

Թուրքիայում «խորքային պետության» խնդիրը թե՛ երկրի հասարակական շրջանակներում, թե՛ արևմտյան մամուլում սկսեց ակտիվորեն քննարկվել 2007 թվականից՝ «Էրգենեքոն» կազմակերպության անդամների առաջին իսկ ձերբակալումներից հետո: Թուրք վերլուծաբանները «խորքային պետությունը» նույնականացնում են «Էրգենեքոնի» հետ կամ վերջինս համարում են «խորքային պետության» կարևոր հատվածներից մեկը, քանի որ դրա բացահայտումով լուրջ հարված հասցվեց «խորքային պետությանը»: Տարբեր ժամանակաշրջաններում «խորքային պետության» կողմից օգտագործվող ուժերը փոփոխվել են, դրանց շարքում եղել են ոչ միայն բանակը և պետական այլ կառույցները, այլև՝ ծայրահեղ ազգայնամոլները և իսլամական միաբանությունները: Թուրքիայի պատմության մեջ գրանցվել են դեպքեր, երբ «խորքային պետության» կողմից օգտագործվող կազմակերպությունները և ուժերը հզորանալով՝ վերահսկողությունից դուրս են եկել և փորձել են իրենց սեփական գիծը տանել: «Էրգենեքոնը» քեմալիստական-ծայրահեղական ընդհատակյա

[193] Տե՛ս Ավագյան Ա., Պանթուրքական երազանք կամ «Գորշ գայլեր», էջ 39-41:

ահաբեկչական կազմակերպություն է, որի նպատակն է՝ Թուրքիայում Աթաթուրքի հիմնած աշխարհիկ սկզբունքների պահպանումը: Կազմակերպության անդամները մեղադրվում են բազմաթիվ սպանությունների, ինչպես նաև ռազմական հեղաշրջումների նախապատրաստման ու իրագործման մեջ: «Էրգենեքոնի» անդամների մեծամասնությունը Թուրքիայի զինված ուժերի ու ԱՀԾ-ի աշխատակիցներ են: Պատահական չէ, որ ԱԶԿ-ն «Էրգենեքոնի» գործը հմտորեն օգտագործում է Թուրքիայում աշխարհիկության և դրա պահապան հանդիսացող բանակի դիրքերը խարխլելու նպատակով:

1990-ական թթ. հարավ-արևելյան նահանգների քրդաբնակ շրջաններում ժանդարմերիայի հատուկ ջոկատայինների և այլ կառույցների կողմից իրականացված սպանություններն ու բռնությունները կոծկվել և անպատիժ էին, քանի որ քաղաքական իրավիճակը երկրում չէր փոխվել, իսկ ամենակարևորը, տեսնելով իրենց անպատժելիությունը, այդ ուժերը սկսեցին հավակնել նաև քաղաքական որոշակի դերակատարության: «Խորքային պետության» կողմից օգտագործվող կամ օգտագործված, իսկ հետագայում վերահսկողությունից դուրս եկած կամ չափազանց ուժեղացած և այլ դերակատարության հավակնող ուժերից մաքրվելն ամենևին էլ չի նշանակում «խորքային պետության» թուլացում կամ վերացում[194]:

«Էրգենեքոնի» դատավարության արդյունքում բացահայտվեցին տարբեր ապօրինի գործողությունների՝ զինվորական հեղաշրջումների նախապատրաստման, քաղաքական մահափորձերի ու առևանգումների փաստեր, որոնք իրականացվել են Ժանդարմերիայի հետախուզության և հակաահաբեկչական կազմակերպության կողմից, որը կոչված է պայքարելու քուրդ անջատողականների դեմ[195]:

---

[194] Տե՛ս Ավագյան Ա., Պանթուրքական երազանք կամ «Գորշ գայլեր», էջ 134:

[195] Տե՛ս Հովսեփյան Լ., Թուրքիայի զինված ուժերի արդիականացումն ու ռազմաարդյունաբերությունը, էջ 28:

2008 թ. հոկտեմբերի 30–ին Ստամբուլի քրեական դատարանում 86 մեղադրյալների մասնակցությամբ սկսվեց «Խորքային պետության» մարմնավորումներից մեկը հանդիսացող «Էրգենեքոն» գաղտնի կազմակերպության դեմ դատական գործընթացը, որը ԱԶԿ–ն հմտորեն օգտագործեց դատա-իրավական համակարգի դեմ: Այդ գործընթացի արդյունքում ձերբակալվեցին մի շարք հեղինակություններ, որոնց անունները շրջանառվում էին գաղտնի կազմակերպություններ ղեկավարելու, ընդհատակյա գործունեություն ծավալելու գործերով[196]: «Էրգենեքոնի» գործով եղել են «ձերբակալության 13 ալիքներ», որոնց արդյունքում ձերբակալվել են ԶՈՒ–ի բարձր ու միջին սպայական կազմի, մտավորականության, դատա-իրավական համակարգի, լրագրության ոլորտի մի քանի հարյուր ներկայացուցիչներ: Առգրավվել են մեծ քանակությամբ զենք ու զինամթերք, համակարգչային ֆայլեր, որոնք ներառում էին կարևոր ապացույցներ 2000–ականներին զինվորականների ծրագրած գործողությունների վերաբերյալ[197]:

«Էրգենեքոնի» բացահայտումը հանրապետական Թուրքիայի պատմության մեջ ուրույն տեղ է զբաղեցնում: Այն ստացավ հակասական գնահատականներ, և հինգ տարվա դատավարության արդյունքում նրան անդամակցող քաղաքական գործիչների, բարձրաստիճան զինվորականների, լրագրողների, իրավաբանների մեծամասնությունը դատապարտվեց ցմահ կամ երկարաժամկետ ազատազրկման: Հայտնաբերված փաստաթղթերում կազմակերպությունն անվանվում էր «Էրգենեքոն», որը թուրքերի՝ Միջին Ասիայում գտնվող առասպելական նախահայրենիքն էր, և նման անվանակո-

---

[196] Տե՛ս Hayes D., Turkey and Ergenekon: From Farce to Tragedy, Open Democracy, http://www.opendemocracy.net

[197] Տե՛ս Տեր–Մաթևոսյան Վ., Թուրքիան 2008–2011 թթ.: Քաղաքական փոխակերպումների հիմնական առանձնահատկությունները, էջ 34:

չումը խորհրդանշում էր Թուրքիան կրկին «իսկական» թուրքական հայրենիք դարձնելու ձգտումը:

«Էրգենեքոն» խմբավորումը կառավարության տապալման ծրագրում նշանակալի տեղ էր հատկացնում հայերին: Թիրախ ընտրելով երկրում ապրող հայերին՝ նախատեսվում էր, որ հակահայկական աղմուկը և, ինչու չէ, հայկական համայնքի կրոնական կամ մտավորական առաջնորդների սպանությունները, դառնալու էին հարմար առիթ՝ ցանկալի քաոսային իրավիճակ ստեղծելու և դրանից օգտվելու համար: Գտնվեցին փաստաթղթեր, որոնցում քայլ առ քայլ պարզաբանվում էր, թե ինչպես էր երկրում ստեղծվելու քաոսային իրավիճակ, որտեղ էին զենքի ու զինամթերքի թաքստոցները, որոնք օգտագործվելու էին կառավարությունը տապալելու նպատակով:

Որքան էլ որոշ քեմալիստական զինվորական և հակահիսլամական շրջանակներ կառավարության քայլերը որակում էին իսլամական կուսակցության կողմից իրականացվող «վհուկների որս» և իրենց դիրքերի ամրապնդմանն ուղղված վերջնական խաղ, ակնհայտ էր «Էրգենեքոնի» օրեցօր մեծացող ազդեցությունը Թուրքիայի ներքին և, հետևաբար, նաև արտաքին քաղաքականության մեջ: Գաղտնի կազմակերպությունն ուներ երկու հիմնական նպատակ. առաջինը՝ ժողովրդի մեջ վախ սերմանելն էր իսլամական կարգերի մոտալուտ հաստատման նկատմամբ, երկրորդը՝ ընդգծել ոչ թուրք ազգությունների տնտեսական հաջողությունները, սեփականության աճը, «նվաճումները», քրիստոնեական կրոնի տարածումը հասարակությունում և դրա սպառնալիքները Թուրքիային[198]:

Հր. Դինքի փաստաբան Ֆ. Չեթինն իր «Ամաչում եմ» գրքում, համադրելով հայ գործչի սպանության և «Էրգենեքոնի» դատական գործերը, ուշագրավ վերլուծություններ է կատարել և հանգել այն եզրա-

[198] Տե՛ս Օզինյան Ա., «Էրգենեքոն». հայերը իշխանափոխության պատրվակ, http://civilnet.am

կացության, որ Էրդողանն ու «խորքային պետությունը» համաձայնության են եկել՝ սահմանագծելով դատավարության շրջանակները: Ֆ. Չեթինը կարծում է, որ Հր. Դինքի սպանության բացահայտումը կարող է լիովին բացահայտել Թուրքիայի «խորքային պետության» ընդհանուր պատկերը: Ֆ. Չեթինը ենթադրում է, որ Ռ. Էրդողանի կուսակցությունը, բավականաչափ ուժեղ չլինելով, պարտավորվեց համաձայնության գալ Զինված ուժերի ԳՇ-ի հետ և, բացի կառավարության տապալման փորձ իրականացնողներից, քաղաքական միջամտությունների այլ մասնակիցների չբացահայտել: «Էրգենեքոնի դատավարության ժամանակ արդեն որոշակի կասկածներ էին առաջանում, որ Էրդողանի կուսակցության մեջ էլ էին թափանցել «խորքային պետության» մետաստազները՝ հանձին ԱԶԿ-ի պատգամավոր Թ. Չոմեզի, որը «Էրգենեքոնի» դատավարության հենց սկզբում վտանգ կանխազգալով՝ անհետացավ: Սա առաջին դետալն է, որը վկայում է, որ Էրդողանն այն ժամանակ դեռ բավականաչափ ուժեղ չէր նույնիսկ իր կուսակցության մեջ:

Ի վերջո, ԱԶԿ-ն փակելու վերջին փորձն իրականացնող ԳՇ-ի նախկին պետ գեն. Յ. Բույուքանըթը, որի պաշտոնավարման ընթացքում 2007 թ. Ա. Գյուլի նախագահ ընտրվելու հետ կապված ԳՇ-ի կայքում տեղադրվեց գեներալների նախազգուշական նամակը, զարմանալիորեն դուրս մնաց բոլոր դատավարություններից: Նրա նկատմամբ Էրդողանը «անհասկանալիորեն» բարեհաճ գտնվեց: Հատկանշական է, որ Յ. Բույուքանըթի և Ռ. Էրդողանի միջև Դոլմաբահչեում կայացած առանձնազրույցից հետո Էրդողանը լրագրողներին չի ցանկացել պարզաբանումներ տալ, թե բանակի հրամանատարության դեմ նախաձեռնված դատավարությունների շարքի պայմաններում ինչ հարցեր են քննարկվել նրանց միջև:

Դինքի դատավարությունը դարձավ այն փորձաքարը, որն ապացուցեց Էրդողանի դիրքերի թուլությունը, քանի որ նա չկարո-

ղացավ առճակատման գնալ և իրապես բացահայտել «խորքային պետության» մութ ծալքերը, ինչը գոնե տեսականորեն նշանակում է, որ թուրքական յուրաքանչյուր կառավարություն աստիճանաբար «խորքային պետության» մաս է դառնում[199]:

Թուրքիայի քաղաքական համակարգի վրա ազդող գաղտնի քաղաքական կառույցներից բացի, երկրի ներքաղաքական կյանքում մեծ դերակատարություն ունեն նաև կրոնական շարժումները, որոնցից ամենաուժեղն ու ազդեցիկը գյուլենական շարժումն է[200]:

1960-70-ական թթ., երբ Թուրքիայում լայն տարածում ստացան սոցիալիզմն ու դրան հարող շարժումները, որոշվեց երկրում թույլատրել մեղմ իսլամը, որպեսզի այդ կերպ ժողովուրդի ուշադրությունը շեղվեր ձախակողմյան հոսանքներից: Հենց այս ժամանակ նուրջիական ու դրանց միջից հատկապես գյուլենական շարժումն սկսեց թափ առնել, վերաբացվեցին իսլամական դպրոցները[201]:

Մինչև 1990-ականների վերջը գյուլենական և իսլամական «Ազգային տեսակետ» շարժումները ներկայացնում էին իրար գրեթե հակընդդեմ ուղղություններ: Այդ ժամանակ Ֆ. Գյուլենը կենտրոնացած էր դավանական ծառայությունների, իսլամական կրոնի վերաբերյալ ամսագրերի ու գրքերի տպագրության, ուսանողական հանրակացարանների բացման ու բիզնես աշխարհին այս ամենը հովանավորելու գործում միավորելու հարցերի վրա: 1990-ական թթ. գյուլենական շարժման գործունեության մարտավարությունը կայանում էր նրանում, որ պետական համակարգի համեմատաբար բարձր պաշտոններում նշանակվեին շարժման դպրոցների շրջանավարտները:

---

[199] Տե՛ս Օզինյան Ա., Դինքի դատավարությունը, Էրդողանն ու խորքային պետությունը, http://civilnet.am/

[200] Տե՛ս Киреев Н. Г., Религиозный экстремизм – угроза внутренней стабильности Турции, с. 92-106.

[201] Տե՛ս Макарадзе Э. Х., Нурджизм в политической жизни современной Турции. “Ближний Восток и современность”, вып. 22, М., 2004, с. 242-249.

Մոտավոր հաշվարկներով ներկայումս Թուրքիայի բնակչության 10-15 տոկոսը առնչություն ունի գյուլենական շարժման հետ[202]: Ֆ. Գյուլենը խուսափում էր հասարակական հնչեղության թեմաների քննարկումից և իշխանությունների կամ զինվորականության քննադատությունից, որպեսզի դա նրանց կողմից սպառնալիք չդիտվեր և չհանգեցներ Թուրքիայում գյուլենական շարժման գործունեության կասեցմանը[203]:

Աստիճանաբար հզորանալով և դուրս գալով Թուրքիայի սահմաններից՝ Ֆ. Գյուլենի գլխավորած շարժումը սկսեց իր մասնակցությունն ունենալ նաև երկրի քաղաքական գործընթացներում: Շարժումը հիմնեց Լրագրողների ու գրողների հիմնադրամը, որի միջոցով կազմակերպվում էին քաղաքական գործիչների, լրագրողների ու գիտնականների, տնտեսական էլիտայի ներկայացուցիչների հավաքներ՝ երկրի առջև ծառացած խնդիրները քննարկելու նպատակով: Այդ հանդիպումների ժամանակ ելույթներով հանդես էր գալիս նաև շարժման առաջնորդը՝ հավաքվածներին ներկայացնելով իր գաղափարներն ու մոտեցումները: Այդ ելույթներն, ինչպես նաև նրա հարցազրույցները մեծ արձագանք էին ստանում Թուրքիայի բնակչության մեջ ու դրական էին գնահատվում երկրի աշխարհիկ էլիտայի կողմից[204]: Ինչպես գիտենք, 1997 թ. փետրվարի 28-ին տեղի ունեցած «սպիտակ հեղաշրջման» արդյունքում վարչապետ Ն. Էրբաքանը ստիպված եղավ հրաժարական տալ: Այդ պահանջով նրան դիմողների շարքում էր նաև Գյուլենը[205]: ԲԿ-ի փակումից հետո հիմնադրված «Առաքինություն» կուսակցության՝ Ն. Էրբաքանի գլխա-

---

[202] Տե՛ս Շաքարյան Ա., նշվ. աշխ., էջ 88:

[203] Տե՛ս Киреев Н., Метаморфозы политического ислама, с, 21.

[204] Տե՛ս Федосеенкова А.Н., Современные концепции модернизации исламских обществ (на примере взглядов Абдулкарима Соруша и Фетхуллы Гюлена). “Ближний Восток и современность”, вып. 40, М., 2009, с. 250-263.

[205] Տե՛ս Շաքարյան Ա., նշվ. աշխ., էջ 94:

վորած հին սերնդի գործիչների հետ հակադրության մեջ գտնվող երիտասարդ սերնդի ղեկավարներ՝ Ռ. Էրդողանը, Ա. Գյուլը և Բ. Արընջը սկսեցին հարաբերություններ հաստատել գյուլենական շարժման և անձամբ Ֆ. Գյուլենի հետ:

Շարժման նման հզորացումը սկսեց մտահոգել իշխանություններին, որոնք 2001 թ. օգոստոսի 31-ին Ֆ. Գյուլենի դեմ քրեական գործ հարուցեցին՝ պետության աշխարհիկ իրավակարգը փոխելու մեղադրանքով: Մինչ ընթանում էր գործի նախաքննությունը, նա առողջության վատթարացման պատրվակով լքեց Թուրքիան, քաղաքական ապաստան խնդրեց ԱՄՆ-ից և հետագայում դարձավ այդ երկրի քաղաքացի:

ԶԼՄ-ների իր հզոր ցանցով Գյուլենն աջակցեց Էրդողանի, Գյուլի և Արընջի հիմնադրած ԱԶԿ-ին, նպաստեց խորհրդարանական ընտրություններում այդ կուսակցության հաղթանակին և սատարեց նոր կառավարության նախաձեռնություններին: 2005 թ. գյուլենական շարժման հետ կապված ձեռնարկատերերը միավորվեցին Թուրքիայի ձեռնարկատերերի ու արդյունաբերողների համադաշնության մեջ, որը միավորեց 124 բիզնես-միություններ ու 9500 ձեռներեցների: Թուրքիայի առաջատար բանկերից մեկը՝ «Ասեանը», հանդիսանում է աշխարհով մեկ տարածված գյուլենական դպրոցներին դրամավարկային ծառայություններ մատուցող հիմնական բանկը[206]: Ֆ. Գյուլենը Թուրքիայում և նրա սահմաններից դուրս իրագործող ԶԼՄ-ների և բիզնեսի հսկայական ցանց ունի: Նրան են պատկանում մի շարք ազդեցիկ զանգվածային լրատվամիջոցներ, ապահովագրական ընկերություններ, բանկեր, որոնց ֆինանսական կարողությունները 1999 թ. գնահատվում էին կես մլրդ ԱՄՆ դոլար: Ֆ. Գյուլենն է ֆինանսավորում նաև Թուրքիայում և նրա սահմաննե-

[206] Տե՛ս Շաքարյան Ա., նշվ. աշխ., էջ 97:

րից դուրս իրականացվող մի քանի հեղինակավոր ակադեմիական նախագծեր, որոնց շրջանակներում հարավ-արևմտյան Թուրքիայում պարբերաբար կլոր սեղաններ ու քննարկումներ են կազմակերպվում երկրի կարևորագույն խնդիրների վերաբերյալ: Սակայն «Գյուլենի կայսրության» հիմնական արժեքը նրան պատկանող մշակութային օջախների, դպրոցների, համալսարանների, հիմնադրամների և հյուրանոցների ցանցն է: Ընդհանուր առմամբ, միայն Թուրքիայում Գյուլենի համայնքին են պատկանում 88 հիմնադրամներ, 20 միություններ, 128 դպրոցներ, 218 կազմակերպություններ, 500 հանրակացարաններ և համալսարան Ստամբուլում[207]:

Ա. Գյուլի՝ նախագահ առաջադրվելու ժամանակ, երբ բանակը իր համացանցային կայքում տեղադրած հայտարարությամբ սպառնում էր միջամտությամբ, գյուլենական շարժումը իր ԶԼՄ-ների ցանցով պաշտպանեց նրա թեկնածությանը: 2007 թ. խորհրդարանական ընտրությունների ժամանակ անձամբ Ֆ. Գյուլենն աննախադեպ աջակցություն ցուցաբերեց ԱԶԿ-ին՝ նպաստելով նրա հաղթանակին[208]:

Նպաստելով ԱԶԿ-ի հաջողություններին՝ Ֆ. Գյուլենը և նրա գլխավորած շարժումը փորձում էին ԱԶԿ-ի և նրա առաջնորդների միջոցով կենսագործել իրենց գաղափարներն ու տեսակետները: Դա բացարձակապես դուր չէր գալիս վերջիններիս, հատկապես մեծ հավակնություններ ունեցող վարչապետ Ռ. Էրդողանին, որը սկսեց քայլեր ձեռնարկել ԱԶԿ-ի վրա նախկինում եղած ազդեցությունից ազատվելու ուղղությամբ: Գիտակցելով, որ Գյուլենի գաղափարական ազդեցությունը Թուրքիայում տարածվում է նրա դպրոցների ցանցի և լրատվամիջոցների միջոցով, Էրդողանը դրանք փակելու

---

[207] Տե՛ս Տեր-Մաթևոսյան Վ., Իսլամը Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքում, էջ 113:
[208] Տե՛ս Շաքարյան Ա., նշվ. աշխ., էջ 100:

ուղղությամբ քայլեր ձեռնարկեց. բարձր պաշտոններից հեռացվեցին նաև այն գործիչները, որոնք կասկածվում էին գյուլենականների հետ կապեր ունենալու մեջ[209]:

Ֆ. Գյուլենի պատասխան հարվածը չուշացավ: Նա ԱԶԿ-ում և իշխանության մեջ եղած իր հավատարիմ մարդկանց միջոցով տիրապետում էր Էրդողանի գլխավորած կառավարության ներքին խոհանոցին, ուստի նրա պատասխանը եղավ «Մեծ կաշառք» գործողությունը, երբ պայթեց կառավարության անդամների և նրանց ընտանիքների անդամների մասնակցությամբ կոռուպցիոն սկանդալները, նրանց դեմ քրեական գործեր հարուցվեցին կաշառակերության, փողերի «լվացման» և անգամ զենքի ու թմրամիջոցների անօրինական վաճառքով զբաղվելու մեղադրանքներով: Այս սկանդալը հանգեցրեց կառավարության մի շարք նախարարների հրաժարականին և մեծապես հեղինակազրկեց Էրդողանին ու նրա կուսակցությանը[210]:

Էրդողանը 2016 թ. հուլիսի 15-ի հեղաշրջման կազմակերպման մեջ ուղղակիորեն մեղադրեց Գյուլենին և ամերիկյան իշխանություններից պահանջեց նրան արտահանձնել Թուրքիային: Գյուլենը հանդես եկավ պատասխան հայտարարությամբ՝ հերքելով Թուրքիայում ռազմական հեղաշրջում կազմակերպելու հարցում իրեն ուղղված մեղադրանքները[211]: Ավելին, նա հայտարարեց, որ չի բացառում, թե Թուրքիայում ռազմական հեղաշրջման փորձը, քաղա-

---

[209] Տե՛ս Շաքարյան Ա., Ինչի՞ կհանգեցնեն Թուրքիայի քաղաքական ցնցումները, http://yerevantimes.am, 20.01.2014

[210] Տե՛ս Քանդահարյան Շ., «Մեծ կաշառք»-ը կրօնական դպրոցներու փակման դիմաց և խորքային պետության ճշդած սահմանները, http://www.aztagdaily.com/archives/167735

[211] Տե՛ս Քարոզիչ Ֆեթուլլահ Գյուլենը դատապարտել է Թուրքիայում հեղաշրջման փորձը՝ հերքելով իր հասցեին հնչող մեղադրանքները, http://www.tert.am/am/news/2016/07/16/gullen/2081451

քական նպատակներից ելնելով, բեմադրված լինի հենց Էրդողանի կողմից[212]:

4. Ինքնության ճգնաժամը:

Հանրապետության գոյության ընթացքում թուրքերին պարտադրված նոր ինքնությանը բնորոշ էին որոշ հակասություններ[213]: Թուրքիայում ցանկացած օտար թե՛ երևույթի նկատմամբ վախի դրսևորումները ինչ-որ կերպ կապված են նաև ինքնության ճգնաժամի հետ: Թուրքիայում առկա է թե՛ ազգային ինքնության և թե՛ պետական ինքնության ճգնաժամ: Թուրքիան մինչև օրս ցանկանում է հաստատել իր տեղն աշխարհի և՛ քաղաքակրթական, և՛ մշակութային քարտեզի վրա: Հատկապես 1990-ականներին վերսկսված այդ գործընթացը դեռևս որոնողական փուլում է, ինչի հետևանքով փորձ է արվում գտնել այն նպատակահարմար մոդելը, որն ինչ-որ կերպ համահունչ լինի երկրի անվտանգության շահերին: Որոշ մասնագետներ այդ «չհաստատված ինքնության» մեջ տեսնում են որոշ ռիսկեր, որոնք որոշիչ կարող են լինել երկրի թե՛ ներքաղաքական, թե՛ արտաքին քաղաքական հետագա զարգացումների ու գործընթացների համար[214]:

Թուրքիայում միասնական թուրքական ինքնության պատրանքն սկսեց փլուզվել մի շարք գործոնների ազդեցության տակ, որոնցից հատկապես կարևորվում են հետևյալները.

ա. Քրդերի ազատագրական պայքարը խթանեց նվաճված մյուս ժողովուրդների ազգային գիտակցության վերելքը:

բ. ԽՍՀՄ-ի փլուզումից հետո Թուրքիայի դերի աստիճանական նվազման հետևանքով Արևմուտքը էականորեն փոխեց իր հանդուր-

---

[212] Տե՛ս Թուրքիայում հեղաշրջումը կարող էր բեմադրված լինել կառավարության կողմից. Գյուլեն, http://www.tert.am/am/news/2016/07/17/gyulen/2081599

[213] Տե՛ս Տեր-Մաթևոսյան Վ., Իսլամը Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքում, էջ 190:

[214] Տե՛ս Հովսեփյան Լ., Թուրքիայի վախերը. Սևրի սինդրոմ, էջ 68:

ժողական վերաբերմունքը Թուրքիայի բազմաթիվ ներքին խնդիրների նկատմամբ:

գ. ԵՄ-ին անդամակցելու քաղաքականությունը քաղաքական և մտավորական որոշ շրջանակների ու լրատվամիջոցների հանգեցրեց բազմաթիվ տաբուների (այդ թվում՝ ազգային-կրոնական) վերացման անհրաժեշտության գիտակցությանը: Հատկապես ԵՄ-ի ներկայացրած պահանջները, որպես անդամակցության պարտադիր պայման, և դրանց իրականացման ուղղությամբ կատարվող ու կատարվելիք քայլերի անհրաժեշտության գիտակցությունը լրջորեն խարխլում են Թուրքիայի ամբողջատիրական գաղափարական ռեժիմի սասանված հիմքերը[215]:

Թուրք որոշ սոցիոլոգներ Թուրքիայում լայն թափով շրջանառվող ինքնության ճգնաժամի խնդիրը դասում են թուրքական հասարակության շրջանում տարածված «հիվանդությունների» շարքին: Թուրքիայում տարբեր ժամանակաշրջաններում ուծացման ենթարկված մարդիկ և նրանց սերունդները լուրջ կասկածներ ունեն իրենց էթնիկ պատկանելության վերաբերյալ, որոնք հետզհետե խորանալով, հանգեցնում են ճգնաժամի: Այս առումով բավական հետաքրքիր են անգլիական և գերմանական մասնագետների հետազոտությունների արդյունքները, համաձայն որոնց, Թուրքիայի բնակչության 38-40 տոկոսն իրեն թուրք չի համարում[216]:

Փաստերը ցույց են տալիս, որ հայ պապիկ, տատիկ ունեցողները բավական մեծ թիվ են կազմում, որոնց կամ նոր է ասվել իրենց ընտանիքի մասին իրականությունը, կամ նրանք իմացել, բայց վախեցել են արտահայտվել: Ահա հենց այս մարդիկ են, որ, տեղեկանալով տասնամյակներ շարունակ թաքցված և գաղտնի պահված

---

[215]Տե՛ս Ալվրցյան Հ., Կրոնափոխ հայերի խնդիրները Թուրքիայի Հանրապետությունում, Եր., 2014, էջ 7:

[216] Տե՛ս Հայ Դատն այսօր, նյութերի ժողովածու, Թեհրան, 2005, էջ 46:

իրենց իրական ինքնության մասին, ապրում են «ինքնության ճգնաժամ»: Այժմ ևս Թուրքիայում ծայր առած «էթնիկ ինքնության ճգնաժամի» քննարկման շրջանակներում ի հայտ են գալիս նոր փաստեր ցեղասպանության ժամանակ առևանգված հայ երեխաների, հատկապես՝ աղջիկների մասին, որոնց՝ մահմեդականների հետ ամուսնության հետևանքով ներկայիս Թուրքիայում ձևավորվել է հայկական արյան որոշակի տոկոս ունեցող խառնածինների հոծ բանակ[217]:

Ինչ վերաբերում է էթնիկ արմատներին, անկասկած, տարբեր վերաբերմունքներ կան: Սրա ամենից պարզ օրինակը. եթե նման բան չլիներ, այսօր զինված ուժերում, ԳՇ-ում, ոստիկանությունում, տարբեր պետական պաշտոններում, նախարարություններում կլինեին ոչ մահմեդականներ, նաև՝ հայեր: Թուրքիան փոքրամասնություններին անվտանգության համատեքստում է արժևորել և դիտում է՝ որպես անվտանգության հարց[218]:

Թուրքիայում ընթացող էթնիկ ինքնության ճգնաժամի համատեքստում մեծ թվով մարդիկ լրջորեն սկսում են կասկածել իրենց թուրք լինելու մեջ և փորձում են գտնել իրենց իրական ինքնությունը: Այդ փնտրտուքի արդյունքում հաճախ պարզվում է, որ իրենց նախնիները ոչ միայն թուրք չեն եղել, այլ նաև՝ չեն եղել մահմեդական ու, որ իրենց տատերը կամ պապերը եղել են հայեր, հույներ, հրեաներ, ասորիներ և այլն: Իրենց արմատների մասին իսկությունն իմացած մարդկանց հոգեկան աշխարհում կատարվում են որոշակի փոխակերպումներ: Մի մասն այն վախից ելնելով, որ հասարակությունը չիմանա այդ մասին և ինքը, որպես ոչ թուրքի սերունդ, չթիրախավորվի, փորձում է թաքցնել իրողությունը և ավելի պարփակված է

---

[217] Տե՛ս Մելքոնյան Ռ., Իսլամացված հայերի խնդիրների շուրջ, էջ 20-21:

[218] Տե՛ս Օզինյան Ա., Հրանտ Դինքը մի մարդ էր, ով հասկանում էր սեփական ժողովրդի ապրած ցավը և կրում էր այդ բեռը, http://www.mediamax.am/am/news/society/5863/

դառնում, իսկ մյուսներն այդ հոգեբանական ցնցումից հետո, ի նշան բողոքի, սկսում են հակադրվել այն միջավայրին, որն իրենցից տասնամյակներ շարունակ թաքցրել է ճշմարտությունը: Բոլոր դեպքերում, իրենց իրական ինքնության մասին իմացածների մեջ որոշակի անվստահություն և նույնիսկ ատելություն է առաջանում այն իշխանության ու պետության նկատմամբ, որն, իրենց նախնիների նկատմամբ բռնություն գործադրելով, անարդացիորեն խեղել է նաև նրանց սերունդների ինքնությունը:

Ծպտյալ և իսլամացված հայության խնդիրը որոշակի անհանգստություն է պատճառում թուրքական գիտական շրջանակներին: Այն քննարկվում է Թուրքիայում ներկայումս հրատապ և օրակարգային խնդրի՝ «ինքնության ճգնաժամի» շրջանակներում: Թուրքիայի ակադեմիական շրջանակներում շրջանառվում է այն տեսակետը, որ ծպտյալ հայերն ի վերջո վտանգավոր են լինելու Թուրքիայի համար: Կարծիք է արտահայտվում, որ իսլամացված հայերին անընդհատ իրենց իսկական ինքնությունը հիշեցնելու հետևանքով կարող է ստեղծվել մի իրավիճակ, որ այդ մարդիկ հողի և հատուցման պահանջ ներկայացնեն թուրքերին[219]: Պատահական չէ, որ լուսահոգի Հր. Դինքն իր հանդիպումներից մեկի ժամանակ ասել է հետևյալը. «Եթե մի օր Թուրքիան քանդվի, ապա դա կլինի ոչ թե զենքի միջոցով, այլ՝ ինքնության խնդրի»[220]:

5.Քրդական հարցը:

Թուրքիայի քուրդ ազգաբնակչությունը կազմում է երկրի բնակչության շուրջ 17 տոկոսը և երկրի հարավ-արևելյան նահանգներում՝ Բինգյոլում, Բիթլիսում, Վանում, Դիարբեքիրում, Կարսում, Մալաթիայում, Ադիյամանում, Աղրիում, Մուշում, Էրզրումում բա-

[219] Տե՛ս Խանլարեան Կ., Հայ բնակչութեան էթնոկրօնական վերակերպումները Թուրքիայի Հանրապետութիւնում (1923-2005 թթ.), էջ 276:
[220] Տե՛ս Ալվրցյան Հ., նշվ. աշխ., էջ 148:

ցարձակ մեծամասնություն է կազմում[221]: Ազգային և կրոնական փոքրամասնությունների դժգոհության համընդհանուր ֆոնի վրա Քրդական հարցն այսօր դարձել է թուրքական միասնական պետության տրոհման հիմնական գործոններից մեկը[222]:

Որքան էլ Քրդական հարցը փոխկապակցված լինի սոցիալ-տնտեսական հարցերի հետ, միևնույն է, այն չի դադարում ազգային հարց լինելուց, հետևաբար, կառավարող շրջանների կողմից արևելյան նահանգներում սոցիալ-տնտեսական վիճակը բարելավելուն ուղղված քայլերը, բնականաբար, չեն կարող լուծել Քրդական հարցը: Ավելին, իշխանությունների կողմից ձեռնարկվող քայլերը բացահայտ և քողարկված ձևով միտված են Քրդական հարցը լուծելու քրդերին թուրքերի հետ ձուլելու միջոցով: Այդ տեսակետից, թուրք ազգայնականներին լավատեսության է մղում այն, որ քրդերի մեջ դեռ գերիշխում է ոչ թե ազգային գիտակցությունը, այլ ցեղային պատկանելության զգացումը: Քրդական ցեղերը դիտվում են՝ որպես միասնական ազգային գիտակցություն չունեցող միություններ[223]:

1978 թ. ձևավորված ՔԱԿ-ը հռչակեց «ողջ Քուրդիսաանի» քաղաքական, ազգային, ազատագրական գործերում իր գերակայությունը, մենաշնորհ իրավունքի գաղափարը[224]: Մինչ այդ, ինչպես նաև ժամանակակից շրջանում գործող քրդական բոլոր կուսակցությունները և կազմակերպությունները հայտարարվեցին համաձայնողական, հաշտվողական, որոշ դեպքերում՝ ազգադավ, և, որպես այդպիսիք, դրանց դեմ պայքարը հռչակվեց առաջնահերթ[225]:

---

[221] Տե՛ս Гасратян М., Курдская проблема в Турции (1986-1995), с. 68.
[222] Տե՛ս Հովհաննիսյան Ն., նշվ. աշխ., էջ 66:
[223] Տե՛ս Գալուստյան Հ., նշվ. աշխ., էջ 82:
[224] Տե՛ս Bozarslan H., Why the Armed Struggle? Understanding the Violence in Kurdistan of Turkey, pp. 17-18.
[225] Տե՛ս История Курдистана, с. 432

ՔԱԿ-ին հաջողվեց չեզոքացնել այդ կուսակցությունները և դառնալ այն ուժը, որը կազմակերպեց և գլխավորեց վերջին նու ամենաընդգրկուն քրդական շարժումը Թուրքիայում: 1980 թ. զինվորական հեղաշրջումից հետո Թուրքիայի կառավարության կողմից իրականացվող ազգայնական քաղաքականությունը ավելի ընդգծված բնույթ կրեց: Իշխանությունները, որոնք մինչ այդ ժխտում էին Թուրքիայում քրդական հիմնախնդրի գոյությունը, հայտարարեցին արևելյան նահանգներում աճող քրդական վտանգի մասին, որը փորձել էր ստանալ հասարակության աջակցությունը՝ պատժիչ գործողություններ սկսելու համար[226]:

1984 թ. օգոստոսի 15-ին ՔԱԿ-ի 50 անդամների կողմից Էրուհ քաղաքի գրավումը առաջին լուրջ պարտիզանական գործողությունն էր Թուրքիայի արևելյան նահանգներում, որը ժամանակավոր ընդհատումներով տևեց շուրջ 15 տարի[227]: 1984 թ. կազմավորվեց ՔԱԿ-ի ռազմական թևը՝ այսպես կոչված «Քրդստանի ժողովուրդների ազատագրության բանակը» (ՔԺԱԲ), որի անդամների թիվը հասնում էր մոտ 15 հազարի[228]: 1985 թ. ստեղծվեց ՔԱԿ քաղաքական թևը՝ «Քրդստանի ազգային ազատագրության ճակատը» (ՔԱԱՃ), որը սկսեց ակտիվ քարոզչություն վարել քրդական սփյուռքում: Քրդերով բնակեցված գրեթե բոլոր երկրներում ՔԱԿ-ը հիմնեց գրասենյակներ, որոնք համակարգում են կուսակցության գործունեությունը, կազմակերպում զինված պայքարը, քարոզում են իրենց գաղափարախոսությունը: ՔԱԿ-ի անմիջական հովանավորությամբ 1995 թ. ապրիլի 12-ին Հաագայում կազմավորվեց Քուրդիստանի տարագիր

---

[226] Տե՛ս Загорнова Е., Рабочая партия Курдистана в 80-90-х годах XX в.. “Курдский вопрос на рубеже тысячелетий”, М., 2004, с. 68.

[227] Տե՛ս Вертяев К., Курдский вопрос в политике Турции, (конец XX – начало XXI века), с. 34.

[228] Տե՛ս Загорнова Е., Рабочая партия Курдистана в 80-90-х годах XX в.. “Курдский вопрос на рубеже тысячелетий”, М., 2004, с. 68.

խորհրդարանը: Իր ֆինանսական կայունությունն ապահովելու համար ՔԱԿ-ը ներգրավվեց նաև թմրանյութերի և զենքի անօրինական վաճառքի բիզնեսի մեջ: Որոշ տվյալների համաձայն, ՔԱԿ-ի տարեկան բյուջեն միջինը կազմում է 86 մլն դոլար[229]:

ՔԱԿ-ը հիմնականում որդեգրել է լեռնային տեղանքում պարտիզանական պայքարի մարտավարությունը: Նրա մարտական ջոկատները մարտնչում են թուրքական բանակի և ոստիկանության դեմ երկրի հարավ-արևելյան մասում, որտեղ գերակշռում է քուրդ բնակչությունը: Բացի դրանից, ՔԱԿ-ն հարձակումներ է իրականացնում արտասահմանյան զբոսաշրջիկների վրա՝ Թուրքիայի տնտեսության կարևոր ոլորտներից մեկը վնասելու նպատակով[230]: Միայն 1993 թ. ՔԱԿ-ի մարտիկները իրականացրին 4 հազար զինված հարձակում և այլ զինված գործողություններ: 1984-99 թթ. ընթացքում ռազմական և զինյալ գործողությունների հետևանքով 2 կողմից զոհվեց ավելի քան 37 հազար մարդ[231]:

Քրդական հարցի միջազգայնացման գործում կարևոր դեր խաղացին նաև եվրոպական երկրներում բնակվող քուրդ իրավապաշտպանները, որոնք քաղաքական և իրավական մեխանիզմներ կիրառեցին՝ ազդելու եվրոպական կառույցների վրա, որպեսզի նրանք արձանագրեին Թուրքիայում քուրդ բնակչության իրավունքների զանգվածային խախտումները և ճնշում գործադրեին Անկարայի վրա Քրդական հարցում բարեփոխումներ կատարելու ուղղությամբ[232].

Թուրքիայի ՊՆ տվյալներով, քրդական գրոհայինների կողմից թուրքական ուղեկալների վրա կատարվել է ավելի քան 38 հարձա-

---

229 Տե՛ս Մանուկյան Տ., նշվ. աշխ., էջ 193:
230 Տե՛ս Лазарев М.С., Новые тенденции в курдском национализме, с. 65-70.
231 Տե՛ս Ավագյան Ա., Պանթուրքական երազանք կամ «Գորշ գայլեր», էջ 92:
232 Տե՛ս Turkey's Accession to the EU: - Kurdish Human Rights Project, https://www.khrp.org/

կում, որոնց պատճառով այդ երկրի բանակը կորցրել է 366 զինծառայող: Իսկ ընդհանուր առմամբ, ահաբեկչության դեմ պայքարի շրջանակներում 2008 թ. հոկտեմբերի դրությամբ Թուրքիայի ԶՈՒ-ն ու անվտանգության մարմինները շուրջ 7900 զոհ են տվել: 2008 թ. հոկտեմբերի 3-ին թուրք-իրաքյան սահմանին տեղակայված զինվորական ուղեկալի վրա քրդական զինյալների հարձակման հետևանքով զոհվեց թուրքական ԶՈՒ-ի 17 զինծառայող: Այդ հարձակումը թուրքական քաղաքական ու զինվորական բարձրագույն ղեկավարությանը կանգնեցրեցին հակաահաբեկչական պայքարի ռազմավարական նոր ուղեգծի սահմանման անհրաժեշտության առջև[233]: 2009 թ. նոյեմբերին Պաշտպանության նախարարը խորհրդարանում հայտարարեց, որ ժամանակակից Թուրքիայի անվտանգությանն ուղղված ամենամեծ սպառնալիքը քրդական ահաբեկչությունն է՝ ՔԱԿ-ն: Ահաբեկչական այդ գործողությունից պարզ դարձավ, որ դրա դեմ պայքարի թուրքական ռազմավարությունն այլևս իրեն չի արդարացնում: Քրդական զինյալների վերջին հարձակումները ակնհայտ դարձրին երկրի անվտանգության համակարգում առկա բացասական երևույթներն ու բացթողումները, ինչը մեկ անգամ ևս բարձրագույն հրամանատարության համար ընդգծեց անվտանգության համակարգի բարեփոխումների անհրաժեշտությանը[234]: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, հիմնականում, բավարարում էր քուրդ իրավապաշտպանների կողմից Թուրքիայի դեմ ներկայացված հայցերը՝ Անկարային հարկադրելով վճարել ահռելի գումարներ:

Սոցիալ-տնտեսական պատճառներից բացի՝ ուրբանիզացման հիմնական խթանիչներից մեկը թուրքական իշխանությունների

---

[233] Տե՛ս Հովսեփյան Լ., Թուրքիայի զինված ուժերի արդիականացումն ու ռազմաարդյունաբերությունը, էջ 29:
[234] Նույն տեղում, էջ 31:

կողմից քրդական ապստամբության զինված մեթոդներով ճնշման մարտավարությունն էր: Կառավարության 1994 թ. հրապարակած տվյալների համաձայն, մոտ 1500, իսկ մամուլի գնահատմամբ, մոտ 2300 գյուղեր և բնակավայրեր, մասամբ կամ ամբողջությամբ ավերվել էին, որի հետևանքով մոտ 2 միլիոն մարդ տեղահանվել էր և գաղթել երկրի կենտրոնական ու արևմտյան նահանգներ, ավելին, նրանք Ստամբուլը դարձրել էին աշխարհի ամենամեծ քրդաբնակ քաղաքը: Նման զանգվածային ուրբանիզացման հետևանքով քաղաքային և գյուղական բնակչության հարաբերությունը ևս զգալիորեն փոխվեց, քաղաքային բնակչությունը 1995 թ. կազմում էր 69,2 տոկոս[235]:

Տեղափոխվելով մեծ քաղաքներ՝ գյուղաբնակները շարունակում էին ապրել մեկտեղված՝ ստեղծելով «քաղաքային գյուղեր» և, պահպանելով ավանդական արժեքները, ներկայացնում էին ինքնատիպ մշակութային ինքնություն: Հանդիպելով բազմաթիվ դժվարությունների և հուսահատվելով, թե' իշխանության բարձր էշելոններում, թե' տեղական մակարդակում իշխանավորների կողմից լիազորությունների չարաշահման, կաշառակերության և կոռուպցիայի զգալի չափերից՝ նոր բնակչությունը բավականին խոցելի դարձավ զանազան սոցիալական ու քաղաքական հոսանքների և գաղափարախոսությունների նկատմամբ: Հետևաբար, ծայրահեղ ազգայնական և հատկապես կրոնական բնույթի ցանկացած օգնության կոչ նրանք ոգևորությամբ էին ընդունում: Հարկ է հավելել, որ նրանք գերադասում էին ապրել իրար մոտ, որն էլ ավելի էր հեշտացնում նրանց հետ հարաբերությունների հաստատման, հաղոր-

[235] Տե՛ս Տեր-Մաթևոսյան Վ., Իսլամը Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքում, էջ 93:

դակցման ու քաղաքական նպատակներով մոբիլիզացման ջանքերը[236]:

Չզտելով ճնշել քրդական ազգայնականությունը՝ թուրքական պետությունը փաստորեն խրախուսեց թուրքական ազգայնականության վերելքը[237]: Քրդական հարցի լուծման ուղղությամբ Թուրքիան իրականացնում է ժանդարմական բանակի ձևավորմանն ուղղված ծրագրային աճ՝ միաժամանակ ավելացնելով նրանց գործողությունների ծանրակշիռությունը թուրքական պետության տարածքային ամբողջականության վտանգներին արդյունավետ հակազդելու ենթատեքստում[238]: Թուրքիայի համար աճող սպառնալիք են համարվում ահաբեկչության աճը, քրդերի պայքարը անջատվելու և անկախ Քուրդիստան պետություն ստեղծելու ցանկությունը[239]:

1997 թ. Թուրքիայի «Գաղտնի սահմանադրությունում» կամ այսպես կոչված «Կարմիր գրքում» նշված է, որ Թուրքիան գտնվում է միջազգային ահաբեկչության վտանգի ներքո, որն օժանդակություն է գտնում թուրքական տարածքի մի մասում, ակնարկելով ՔԱԿ-ը[240]:

Քրդական հարցի լուծման ուղղությամբ թուրքական քաղաքական վերնախավում չկա միասնական մոտեցում, մի մասն ուժային լուծման կողմնակիցն է, կարծելով, որ դա կարող է լուծվել ՔԱԿ-ի ոչնչացման միջոցով, մյուս մասը խաղաղ լուծման կողմնակիցն է,

---

236 Տե՛ս Տեր-Մաթևոսյան Վ., Իսլամը Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքում, էջ 95:

237 Տե՛ս նույն տեղում, էջ 190:

238 Տե՛ս Աղաջանյան Մ., Թուրքիայի ազգային անվտանգությունը. Հայեցակարգերն ու սկզբունքները, էջ 9:

239 Տե՛ս Задонский С., Роль военного фактора во внутренней политике Турции. “Армия и власть на Ближнем Востоке: от авторитаризма к демократии”, (сборник статей), М., 2002, с. 360-364.

240 Տե՛ս Гурьев А., “Красная книга”: у Турции новая концепция национальной безопасности, http://www.centrasia.ru., 08.11.2005.

ինչը ենթադրում է բարեփոխումների միջոցով քրդերի որոշ իրավունքների ճանաչում[241]:

Քրդական «Ժողովրդական ժողովրդավարություն» կուսակցությունը (այսուհետ՝ ԺԺԿ) հիմնականում աշխատում է քրդաբնակ նահանգներում[242]: Թուրքիայի 1999 թ. ապրիլի և 2002 թ. նոյեմբերի խորհրդարանական ընտրություններում հաղթած ուժերի պատկերն, ըստ նահանգների համեմատելիս, պարզվում է, որ ԱԶԿ-ն և քրդական ԺԺԿ-ն հաջողություն են արձանագրել հատկապէս արևելյան նահանգներում և սա այն դեպքում, երբ քրդական ԺԺԿ-ին չարտոնվեց մասնակցել 1999 թ. ընտրություններին[243]: 2009 թ. ՏԻՄ ընտրություններում քրդաբնակ շրջաններում «Քրդական ժողովրդավարական հասարակություն» կուսակցությունը առաջին անգամ կարողացավ հասնել հաղթանակի, մասնավորապես՝ Դիարբեքիրի քաղաքապետի ընտրություններում[244]: Եվ սա այն դեպքում, երբ ԱԶԿ-ն կարողացավ հաղթանակներ գրանցել մեծ քաղաքներում[245]:

ԺԺԿ-ն ավանդաբար իր ձայները շահում է երկրի արևելյան և հարավ-արևելյան քրդաբնակ շրջաններից, սակայն Թուրքիայի «ձախակողմյան» ձայները շահելուն ուղղված այդ երկրի պետայրերի ջանքերի պատճառով երկրի բոլոր նահանգներում է այդ կուսակցությունը մրցապայքարի մեջ մտել: Եվ դա այն դեպքում, երբ «ձախերը» դեռևս մեծ ազդեցություն ձեռք չեն բերել և թրքաբնակ նա-

---

241 Տե՛ս Турция: новая роль в современном мире, с. 15.

242 Տե՛ս Խանլարեան Կ., Հայ բնակչութեան էթնոկրօնական վերակերպումները Թուրքիայի Հանրապետութիւնում (1923-2005 թթ.), էջ 16:

243 Տե՛ս Шлыков П., Политический ислам в Турции: поиски новой идентичности. “Вестник Московского университета”, сер.13, «Востоковедение», М., 2008, № 4, с. 56-79.

244 Տե՛ս Шлыков П., Поиск политического равновесия. Эволюция партийной системы Турции в период Третьей Республики (1983-2009), с. 111.

245 Տե՛ս Սաֆրաստյան Ռ., Անսպասելի արդյունքներ Թուրքիայի ՏԻՄ ընտրություններում, էջ 333:

հանգներում ՔԱԿ-ին կից այդ կառույցի ներկայությունը, միմիայն խորհրդանշական քայլ է[246]:

2009 թ. դեկտեմբերին ՍԴ–ն կասեցրեց քրդական ԺԺԿ–ի գործունեությունը, ինչը երկրի մի շարք բնակավայրերում առաջ բերեց դժգոհության մեծ ալիք, տեղի ունեցան բախումներ, կատարվեցին ձերբակալություններ: Ինչպես նախորդ դեպքերում, այս անգամ ևս փակված կուսակցության անդամները արագ հիմնեցին հերթական՝ «Խաղաղություն և ժողովրդավարություն» կուսակցությունը (այսուհետ՝ ԽԺԿ)[247]:

ԽԺԿ-ը բոյկոտեց 2010 թ. սահմանադրական հանրաքվեն, քանի որ փոփոխությունների փաթեթում ներառված չէին ազգային փոքրամասնությունների իրավունքների խնդիրների լուծումները: ԽԺԿ–ի նման դիրքորոշման պատճառով քրդաբնակ նահանգներում գրանցվեց քվեարկության մասնակցության բավական ցածր մակարդակ[248]:

2015 թ. խորհրդարանական ընտրություններում Կարսում, Արդահանում և Իգդիրում հաղթել էր քրդական ԽԺԿ-ը: ԽԺԿ-ը Արդահանում ստացել էր ձայների 30, Կարսում՝ 43.5, իսկ Իգդիրում՝ 56 տոկոսը: Նշված երեք նահանգներում էլ ԱԶԿ-ը 2011 թ. խորհրդարանական ընտրությունների համեմատ էապես կորցրել էր իր ստացած ձայները, ինչը լուրջ մտահոգություն պատճառեց նախագահ Ռ. Էրդողանին: Արևմտյան Հայաստանի զգալի հատվածում ևս կրկին քրդական ուժն էր հաղթել, իսկ որոշ հատվածներում՝ ԱԶԿ-ն: Ընտ-

---

[246] Տե՛ս Թուրքիայի խորհրդարանական ընտրությունները և չորս գլխավոր կուսակցությունների վիճակը, http://armenianradio.am/rangarang/item/66266

[247] Տե՛ս Cassier M., Jongerden J. Walker N., Fruitless Attempts? The Kurdish Initiative and the Containment of the Kurdish Movement in Turkey. “New Perspectives on Turkey”, No. 44 (2011), pp. 103-128.

[248] Տե՛ս Տեր–Մաթևոսյան Վ., Թուրքիան 2008–2011 թթ.: Քաղաքական փոխակերպումների հիմնական առանձնահատկությունները, էջ 23:

բարշավի ընթացքում իրական մրցապայքարն ընթանում էր ԱԶԿ-ի և առաջին անգամ ընտրություններին մասնակցող քրդամետ ԽԺԿ-ի միջև, քանզի վերջինիս հաղթանակով կամ պարտությամբ էր պայմանավորված իշխող կուսակցության՝ խորհրդարանում ցանկալի մեծամասնություն կազմելու հավանականությունը: Հետևաբար, ԽԺԿ-ին խորհրդարանից դուրս թողնելու ուղղությամբ իշխանությունները ջանք ու եռանդ չխնայեցին, քրդական կուսակցության համար քարոզարշավի ընթացքում ստեղծվել էին ոչ հավասար պայմաններ[249]:

2015 թ. արտահերթ ընտրություններում ԱԶԿ-ն ձգտում էր հնարավորինս մեծացնել իր ընտրազանգվածը քրդամետ ԽԺԿ-ի ձայների պակասեցման հաշվին՝ փորձելով ապահովել իր համար ձայների այնպիսի մեծամասնություն, որը թույլ տար սահմանադրական փոփոխությունների միջոցով ուժեղացնել նախագահի ինստիտուտը՝ ընդլայնելով վերջինիս լիազորությունները: ԽԺԿ-ն վճռական էր տրամադրված արտահերթ խորհրդարանական ընտրություններում՝ ակնկալելով նախորդ ընտրություններում ստացած 13 տոկոսը հասցնել 20 տոկոսի և 80-ի փոխարեն խորհրդարանում ունենալ 120 պատգամավոր[250]:

2015 թ. հուլիսի 7-ի և նոյեմբերի 1-ի խորհրդարանական ընտրությունների արդյունքների համեմատությունից երևում է, որ ԱԶԿ-ի քվեների ավելացումը տեղի է ունեցել արևելյան նահանգներում քրդամետ ԽԺԿ-ի և ԱՇԿ-ի ձայների նվազման հաշվին: Ինքնին հասկանալի է, որ մի քանի ամսվա ընթացքում ընտրողների դիրքորոշման նման կտրուկ փոփոխություն կատարվել չէր կարող: Ընտրութ-

---

[249] Տե՛ս Բեգիջանյան Է., Թուրքիայի՝ ՀՀ սահմանակից նահանգներում հաղթել են քրդերը, http://www.hhpress.am/index.php/

[250] Տե՛ս Հովյան Վ., Թուրքիայի հայ համայնքն արտահերթ խորհրդարանական ընտրությունների նախօրեին,
http://www.noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT_ID=13962

յուններում իշխող ԱԶԿ-ի կողմից ընտրակեղծիքներ կատարելու մեղադրանքներով քրդամետ ԽԺԿ-ը դիմեց երկրի Բարձրագույն ընտրական հանձնաժողովին՝ պահանջելով չեղյալ հայտարարել նոյեմբերի 1-ին արտահերթ խորհրդարանական ընտրությունների արդյունքները: Հանձնաժողովին ուղղված դիմումի մեջ քրդամետ կուսակցությունը նշել էր, որ ընտրություններն անցկացվել են «հավասարության» և «ազատության» սկզբունքների խախտումներով, սակայն հանձնաժողովը մերժեց դիմումը և ուժի մեջ թողեց ընտրությունների հրապարակված արդյունքները[251]:

Ա. Դավութօղլուն այն կարծիքին էր, որ ՔԱԿ-ի կողմից զինված գործողությունների դադարեցման պարագայում հնարավոր է բանակցությունների ու բարեփոխումների միջոցով հասնել Քրդական հարցի լուծմանը, սակայն Էրդողանը Քրդական հարցի ուժային լուծման կողմնակից է: Դավութօղլուն հայտարարել էր, որ ՔԱԿ-ի աջակիցներին քաղաքացիությունից զրկելն օրակարգի հարց չէ, մինչդեռ Էրդողանը պահանջում էր ՔԱԿ-ի աջակիցների դեմ ձեռնարկել բոլոր միջոցները, այդ թվում, քաղաքացիությունից զրկելը, բայց Դավութօղլուն երկար ժամանակ այդ ուղղությամբ քայլեր չէր ձեռնարկում: Բախումների հետևանքով մինչ օրս զոհվել է մոտ 450 քուրդ-զինյալ, վիրավորվել՝ 3000-ը, իսկ քրդաբնակ շրջաններից արտագաղթել է մոտ 300.000 մարդ: «Այդ պետությունը հրանոթներով և ինքնաթիռներով հրթիռակոծում է իր քաղաքները միայն այն պատճառով, որ դրանք քրդաբնակ են»[252]:

Անհասկանալի է, թէ ինչո՞ւ և ինչի՞ դիմաց է Աբդ. Օջալանը այդքան տարիներ անց որոշել համագործակցել Թուրքիայի իշխա-

---

[251] Տե՛ս Թուրքիայի քրդամետ կուսակցությունը պահանջում է չեղյալ հայտարարել խորհրդարանական ընտրությունների արդյունքները, https://armenpress.am/arm/news/825965/.html

[252] Տե՛ս Չաքրյան Հ., Էրդողանն իր ձախողումների մեղքը զցում է Դավութօղլուի վրա, http://www.aravot.am/2016/05/10/690114/

նության հետ: Ինչ վերաբերում է հրադադարի պահպանման ժամկետներին, ապա դա երկար տևել չի կարող: Թեև Էրդողանին զեկուցեցին, թե բանակցությունների առաջին փուլն ավարտված է, և ՔԱԿ-ի զինյալներն արդեն լքել են Թուրքիան, սակայն Էրդողանը հայտարարեց, որ նրանց միայն 15 տոկոսն է իրականում լքել երկիրը, իսկ մնացած 85 տոկոսը ոչ միայն մնացել է Թուրքիայում, այլև՝ շարունակում է ահաբեկչական գործունեությունը: Քրդերն, իրենց հերթին, իշխանություններին ներկայացրել են սեփական պահանջները և սպասում են խոստացված քայլերի հստակ իրագործմանը, ինչը տեղի չի ունենում: Դրա հետևանքով օրեցօր իշխանության նկատմամբ թերահավատությունը մեծանում է[253]:

Քրդական հարցից բացի, թուրքական իշխանությունները ժամանակ առ ժամանակ բախվում են նաև իրենց թուրք չհամարող չերքեզների խնդրին, որոնք, տարբեր հաշվարկներով, Թուրքիայում կազմում են 2-5 մլն մարդ: Թուրքիայում չերքեզ են անվանում 19-րդ դարի ընթացքում ռուս-թուրքական պատերազմների ժամանակ Ռուսական կայսրության տարածքից՝ Հյուսիսային Կովկասից Օսմանյան կայսրություն տեղափոխված մահմեդականներին և նրանց ժառանգներին: Թեև վերաբնակիչների ժառանգները որոշակիորեն հեռացել են իրենց ազգային արմատներից և հաճախ չեն տիրապետում նախնիների լեզվին, սակայն կենցաղում պահպանում են ազգային սովորույթներն ու հիշողությունները և ամենագլխավորը՝ հստակ արտահայտում են իրենց ոչ թուրքական ինքնությունը[254]:

---

[253] Տե՛ս «100-ամյակի նախօրյակին հնարաւոր է՝ Անգարայի կողմից հրապարակուեն Հայոց Ցեղասպանությունը ժխտող «նոր» արխյուային փաստաթղթեր», http://www.horizonweekly.ca/article/details/50

[254] Տե՛ս Турция: новая роль в современном мире, с. 24-25.

6. «Սևրաֆոբիան» կամ «Սևրի սինդրոմը» Թուրքիայի քաղաքական համակարգում:

Թուրքիայի քաղաքական համակարգում տարածված է այն մտայնությունը, որ արտաքին աշխարհն իր մեջ թաքցնում է պետության քայքայման և մասնատման նախագծեր: Ժամանակ առ ժամանակ թուրք քաղաքական գործիչները, մտավորականները, զինվորականներն ու լրատվամիջոցները շեշտում են այն միտքը, որ Թուրքիան շրջապատված է թշնամիներով, որոնք շատ գործնական են և կարող են գործել համատեղ: Իր արդիականությունն այսօր էլ պահպանող այդ ֆենոմենը հաճախ անվանվում է «սևրաֆոբիա»: Իր էությամբ այն անհանգստություն է արտահայտում, որ կարող է վերածնվել 1920 թ. Սևրի պայմանագիրը: «Սևրաֆոբիան» կարևոր դարձավ ոչ միայն այն բանի համար, որ նախագծված է զտման սկզբունքով, որի միջով անցնում է աշխարհընկալումը, այլ նաև՝ այն բանի համար, որ քաղաքական վերնախավը հնարավորություն է տալիս, մանևրելով տվյալ ֆենոմենը, արտաքին աշխարհի մասին հասարակական հարաբերությունները ձևավորել և ուղղորդել «անհրաժեշտ» ուղղությամբ: Այդ ձևով ազգային անվտանգությունը որոշվում է և նրա ապահովումն իրականացվում է՝ հաշվի առնելով իրական և մտացածին վտանգները, որոնք կարող են քայքայել Թուրքիայի տարածքային ամբողջականությունը: Ինչպես նշել է թուրք փորձագետներից մեկը, «տարածքների կորուստի վախն ամենուր է»: Թուրքիայում զինվորականները որոշակի դեր են խաղում «սևրաֆոբիայի» հավերժացման գործում: Ազգային անվտանգության թուրքական մշակույթը, որը գտնվում է զինվորական հաստատությունների հսկայական ազդեցության տակ, մինչև այժմ դրսևորում է «սևրաֆոբիայով» բարդացած մտածողություն և վերլուծություն: Միաժամանակ, Թուրքիայում կարծիք կա, որ թուրքական քաղաքական մշակույթում «սևրաֆոբիան» և այլ «ֆոբիաներ» ավանդականության մո-

տեցման բարդույթներ են հանդիսանում, որոնք անհրաժեշտ է փոխել կամ, նվազագույնը, վերաիմաստավորել. «Սևրը» առաջին բանն է, որ թուրք երիտասարդությունն ուսումնասիրում է դպրոցում: Եվ նա երդվում է՝ «Սևր ոչ մի դեպքում»: Հին Թուրքիային մարտահրավեր է նետում նախապաշարմունքներից զուրկ թուրքերի նոր սերունդը, որոնք մինչև կոկորդը կուշտ են ավանդական վերնախավի «սևրաֆոբիայից»[255]:

Թուրքիայի ստեղծման տարիներից ի վեր, քաղաքացիների ուղեղներում դրոշմվել է Սևրի հիշողությունը: Թուրքական կրթական համակարգը և պետական քարոզչությունը անընդհատ շեշտել են, որ երկիրը շրջապատված է թշնամիներով, որոնք չեն ցանկանում Թուրքիայի զարգացումը, ապահովությունը ու բարգավաճումը: Թուրքիայի քարոզչամեքենայի կողմից այս մոտեցումը գրեթե միշտ կիրառվել է՝ նպատակ ունենալով հանրությանը շեղել թուրքական հասարակության ներսում տեղի ունեցող զարգացումներից, սոցիալ-տնտեսական խնդիրներից, ինչպես նաև ներքաղաքական խնդիրներից՝ ստեղծելով արտաքին թշնամու դեմ համախմբվելու արհեստածին հրամայական: Չնայած այդ երևույթի արհեստական սրմանը, այնուամենայնիվ, վախի կարծրատիպերը գերակայող են թե հասարակական, թե քաղաքական շրջանակներում: Այլ հարց է, որ դա օգտագործվում է ներքին նպատակների՝ հանրության համախմբման նպատակով[256]:

«Սևրի սինդրոմի» կամ «սևրաֆոբիայի» ընկալումները Թուրքիայում ունեն իրենց օբյեկտիվ պատճառները, քանի որ Թուրքիայի Հանրապետությունը հիմնվեց Օսմանյան կայսրության քայքայման ու մասնատման և պատերազմների գնով՝ կայսրությունից «փրկած» փոքրասիական տարածքների վրա: Թուրքիայի քաղաքական մշա-

[255] Տե՛ս Աղաջանյան Մ., Թուրքիայի ազգային անվտանգությունը…, էջ 19:
[256] Տե՛ս Հովսեփյան Լ., Թուրքիայի վախերը. Սևրի սինդրոմ, էջ 63:

կույթը կրում էր «մնացածը պահելու» գերխնդրի ազդեցությունը: Թեև Սևրի դաշնագիրը կյանքի չկոչվեց, սակայն այսօր Թուրքիայում ընկալվում է՝ որպես «քողարկված մի գործիք», որը ցանկացած հարմար պահի կարող է երևան հանվել արտաքին ուժերի կողմից: «Սևրի սինդրոմը», առաջին հերթին, ասոցացվում է Քրդական հարցի և Թուրքիայի տարածքում քրդական պետության հնարավոր ստեղծման, ինչպես նաև Հայկական հարցի ու Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հնարավոր գործընթացի հետ:

Հաշվի առնելով ՔԱԿ-ի զինյալ խմբերի ակտիվ գործունեությունը, ինչպես նաև Հյուսիսային Իրաքում Քրդական ինքնավարության ստեղծումը, տվյալ պահին Թուրքիայի քաղաքական, զինվորական, գիտական ու հասարակական շրջանակները՝ որպես «Սևրի սինդրոմի» դրսևորում և սպառնալիք, առաջին պլան մղում քրդական խնդիրը: «Սևրի սինդրոմի» ակտիվ քարոզչությամբ նշված շրջանակները փորձում են մի կողմից՝ կոնսոլիդացնել թուրք ազգը ներքին ու արտաքին սպառնալիքներին ու մարտահրավերներին դիմագրավելու գաղափարի շուրջ, իսկ մյուս կողմից՝ այդ կերպ փորձում են թուրքական հասարակության ուշադրությունը շեղել բազմաթիվ ներքին խնդիրներից: Սակայն այս գործելաոճը կարող է բումերանգի էֆեկտ ունենալ թուրքական իշխանությունների համար, ավելի խորացնելով ինքնության ճգնաժամը, նպաստել ոչ թուրք ժողովուրդների վերազարթոնքի գործընթացի արագացմանը՝ Թուրքիայի համար դրանից բխող հետևանքներով:

Նման ընկալումներն առկա են ինչպես հասարակական, այնպես էլ քաղաքական, գիտական ու զինվորական որոշ շրջանակների մեջ: Թուրքական որոշ գիտական շրջանակների կարծիքով, ԱՄՆ-ը և ԵՄ-ն ջանքեր են գործադրում Թուրքիայի տարածքային ամբողջականությունը խախտելու, դաշնային տիպի պետություն հիմնելու, թուրքական հանրապետության հիմնադրման ողջ փիլիսոփայութ-

յունն ու արժեքները քայքայելու ուղղությամբ, ինչին էլ ծառայում են Քրդական խնդիրը և Հայկական հարցը: Փոքրամասնության կարգավիճակ ունեցող հայերը, հույները և հրեաները ընկալվում են՝ որպես ներքին թշնամիներ և Իսրայելի ու ԱՄՆ-ի կողմից Թուրքիայի տապալմանն ուղղված ծրագրերի իրականացնողներ և լրտեսներ[257]: 2006 թ. դեկտեմբերին ամերիկյան «Միջազգային Հանրապետական ինստիտուտի անցկացրած «Սևրի սինդրոմի չափումներ» խորագրով հարցումների համաձայն, հարցվողների 68 տոկոսը համակարծիք է եղել, որ Արևմուտքը ցանկանում է մասնատել Թուրքիան, իսկ 57 տոկոսի կարծիքով, ԵՄ պահանջները նույնն են, ինչ Սևրի դաշնագրինը: 71 %-ը կարծում է, որ Արևմուտքը քաջալերում է Թուրքիայում անջատողական ձգտումները, այդ թվում՝ նաև ՔԱԿ-ին[258]:

Թուրքիայի քաղաքական և հատկապես զինվորական էլիտան հավատում է, որ Եվրոպան Թուրքիային Սևրի պայմանագրին դեմ հանդիման կանգնեցնելու գաղտնի օրակարգ ունի: Նմանատիպ վախերն ի հայտ են գալիս հատկապես այն ժամանակ, երբ ԵՄ-ի հետ բանակցություններում արծարծվում են քրդական, հայկական և կիպրական թեմաները[259]: Թուրքական քաղաքական որոշ շրջանակների պատկերացումներով, երբ նույնիսկ ԵՄ-ի կողմից բարձրացվում էր երկրում որոշ բարեփոխումների իրականացման անհրաժեշտությունը կամ ընդունվում որևէ փաստաթուղթ, որը չէր համընկնում այդ երկրի քաղաքական շահերի հետ, ասոցացվում ու համեմատվում էր Սևրի պայմանագրի հետ: Օրինակ, երբ ընդունվեց Եվրախորհրդարանի որոշումը, ըստ որի Թուրքիան 1996 թ. հունվարից դառնալու էր Եվրոպական մաքսային միության անդամ, ԲԿ

---

[257]Տե՛ս Օզինյան Ա., «Էրգենեքոն». հայերը իշխանափոխության պատրվակ, http://civilnet.am

[258] Տե՛ս Հովսեփյան Լ., Թուրքիայի վախերը. Սևրի սինդրոմ, էջ 50:

[259] Տե՛ս նույն տեղում, էջ 32:

պաշտոնաթերթն այդ պայմանագրի էությունը նմանեցրեց Սևրի պայմանագրի հետ, իսկ կուսակցության առաջնորդ Ն. Էրբաքանը կոչ արեց ազատագրական պայքար սկսել, քանի որ, նրա կարծիքով, օտար պետությունները, աջակցելով քրդերին, իրականում ցանկանում են վերակերտել Մեծ Հայքը[260]:

2000 թ. թուրքական խորհրդարանում ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության վերաբերյալ փաստաթղթի քննարկման ժամանակ ԱՇԿ-ի պատգամավորն այդ փաստաթուղթը նմանեցրեց Սևրի պայմանագրին՝ նշելով, որ, եթե Սևրի պայմանագրում անգամ միայն Հաքքյարին ու Հյուսիսային Իրաքն էին դիտվում՝ որպես Քուրդիստան, ապա այս փաստաթղթով՝ ողջ հարավ-արևելյան շրջանները[261]:

2005 թ. փետրվարին Ստրասբուրգում Թուրքիա-ԵՄ համատեղ խորհրդարանական հանձնաժողովի նիստի ժամանակ ֆրանսիացի պատգամավոր Ժ. Թյուբոնի այն հայտարարությունը, թե Թուրքիան պետք է ճանաչի Սևրի պայմանագիրը, նոր քննարկումների առիթ հանդիսացավ Թուրքիայում: Թուրքիայի նախագահն այդ բանաձևն ընդունեց՝ որպես թուրքական պետության դեմ ուղղված դավադրություն: Մեղադրելով Եվրոպային և ՆԱՏՕ-ին դավաճանության մեջ՝ նա կասկած հայտնեց, որ այդ որոշումից հետո այլ պահանջներ էլ կլինեն, կասեն, որ ժամանակին արևելյան շրջաններում Հայաստան է եղել. այդ տարածքները հայերին վերադարձրեք[262]: Թուրքական կառավարությանը կից գործող Մարդու իրավունքների խորհրդի պատրաստած մի տեղեկագրում տեղ է գտել այն ուշագրավ միտքը, որ, եթե

---

[260] Տե՛ս Տեր-Մաթևոսյան Վ., Իսլամը Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքում, էջ 144:
[261] Տե՛ս Հովսեփյան Լ., Թուրքիայի վախերը. Սևրի սինդրոմ, էջ 15:
[262] Տե՛ս նույն տեղում, էջ 18:

կառավարությունը ճիշտ գործադրի Լոզանի պայմանագրի դրույթները, ապա երկիրը կփրկվի «Սևրի սինդրոմից»[263]:

Եվրոպական երկրների, տարբեր կազմակերպությունների կողմից Թուրքիայում քրդական բնակչության իրավունքների վերաբերյալ ցանկացած առաջարկ, քրդական հիմնախնդրի բարձրաձայնում հատկապես ազգայնական շրջանակների կողմից դիտվում է՝ որպես ոտնձգություն Թուրքիայի անվտանգության ու տարածքային ամբողջականության նկատմամբ, որպես լծակ Եվրոպայի ձեռքին՝ Թուրքիան տարածքային մասնատման ենթարկելու համար: 2008 թ. ԵԿ առաջնորդը, մեկնաբանելով ՔԱԿ-ի վերելքն ու նրանց ձեռքում հայտնվող սպառազինության առկայությունը՝ նշել է, որ ԱՄՆ-ը, ԵՄ-ն և Իսրայելը տարիներ շարունակ աջակցել են քրդական այդ կազմակերպությանը: Նման մեղադրանքները հատկապես ուղղվում էին այն եվրոպական երկրներին, որոնցում կան քրդական համայնքներ[264]:

2006 թ. Թուրքիայի զինված ուժերի ԳՇ պետը, անդրադառնալով Թուրքիայի նկատմամբ առկա մարտահրավերներին ու հիմնախնդիրներին, նշեց, որ, չնայած խոսվում է այն մասին, թե Թուրքիան ստիպված է լինելու բախվել Սևրի պայմանագրին, աշխարհում չկա այնպիսի ուժ, որը Թուրքիային կանգնեցնի նոր Սևրի առաջ[265]:

Թուրքական զինվորականության կողմից պարբերաբար երկրի տարածքային ամբողջականությանն ուղղված սպառնալիքների հիշատակումները հնարավորություն են տալիս երկրի բարձրագույն հրամանատարությանը իրենց կայուն դերն ու ազդեցությունը պահպանել հասարակական-քաղաքական գործընթացներում: Թուրք զինվորականությունը որոշակիորեն շահագրգռված է նաև երկրի

---

263 Տե՛ս «Նոր Մարմարա», 2004, հոկտեմբերի 18:
264 Տե՛ս Հովսեփյան Լ., Թուրքիայի վախերը. Սևրի սինդրոմ, էջ 14:
265 Տե՛ս նույն տեղում, էջ 27:

ներսում նման ընկալումների սերմանմամբ, որով լուծում է արտաքին թշնամուն դիմագրավելու նպատակով ազգային միասնություն ապահովելու իր խնդիրը: Այսպիսով, Թուրքիայի կառավարող ընտրախավը և, առաջին հերթին, բարձրաստիճան զինվորականությունը ազգային պետության ստեղծման նպատակով հասարակության մեջ զարգացրին «Սևրի սինդրոմի» գաղափարը, իսկ հետագայում այն վերափոխեցին ազգային անվտանգության բաղադրիչի[266]:

2011 թ. գարնանն արաբական երկրներում սկսված հեղափոխական շարժումները լրջորեն քննարկման առարկա էին դարձել թուրքական մամուլում ու վերլուծական շրջանակներում: Թուրքիայում «քրդական աշնան» հավանականության մասին՝ նշելով, որ, առաջին հերթին, այդ զարգացումները ոգևորություն կառաջացնեն քրդերի շրջանում, որոնց ապստամբության պարագայում հիմնական թիրախներից է դառնալու հենց Թուրքիան[267]:

Չնայած «Սևրի վախի» կամ «տարածքային մասնատման վտանգի» ինչ-որ չափով արհեստական ներդրմանը, այնուամենայնիվ, Թուրքիայի թե՛ քաղաքական, թե՛ հասարակական միջավայրում, իրականում, գոյություն ունի այդ երկրի մի շարք հիմնախնդիրներից ու պատմական անցյալից բխող՝ անընդհատ տարածքային մասնատման սպառնալիքի տակ գտնվելու պատկերացումը, ինչը, որպես բարդույթ, արմատավորված է հանրային ու քաղաքական աշխարհայացքում:

Թուրքիայի նախկին արտգործնախարար Ա.Դավութօղլուի կողմից առաջ քաշված «զրո խնդիր հարևանների հետ» սկզբունքի կիրառմամբ իշխող ԱԶԿ-ն փորձում էր ձերբազատվել «Սևրի սինդրոմից» կամ Թուրքիայի հնարավոր մասնատման հեռանկարից: Սակայն այդ սկզբունքի հիման վրա իրականացվող քաղաքականութ-

[266] Տե՛ս Հովսեփյան Լ., Թուրքիայի վախերը. Սևրի սինդրոմ, էջ 29-30:
[267] Տե՛ս նույն տեղում, էջ 75:

յունն, իրականում, ենթադրում էր Թուրքիայի ազդեցության անթաքույց ուժեղացումը շրջապատող երկրների վրա, ինչը, բնականաբար, հանդիպեց սահմանակից երկրների հակազդեցությանը և, արդյունքում, Թուրքիան առերեսվեց «զրո հարևան» խնդրի հետ:

7. Ծայրահեղ ազգայնականությունը՝ որպես Թուրքիայի քաղաքական համակարգի սպառնալիք:

«Գորշ գայլերի» կազմավորմանը և հզորացմանը նպաստեցին Արևմտյան երկրների գաղտնի ծառայությունները: Կան տեղեկություններ, որ 1960-ական թթ. ԱՄՆ-ի ԿՀՎ-ը ՆԱՏՕ-ի անդամ երկրներում ստեղծեց հակապարտիզանական գաղտնի կազմակերպություններ, որոնք ուղղված էին ձախակողմյան շարժումների դեմ և ամեն գնով խոչընդոտելու էին դրանց զարգացմանը: Հակակոմունիստական ալիքի վրա ձևավորված «Ազգայնական ճակատ» կոալիցիայում (այսուհետ՝ ԱՃ) իր ուրույն տեղը չէր կարող չունենալ «Ազգայնական շարժում» կուսակցությունը: ԱՇԿ-ն 1975 թ. ԱՃ իշխող կոալիցիայի մաս կազմեց, և Ա. Թյուրքեշը դարձավ փոխվարչապետ: Գտնվելով իշխանական կոալիցիայում՝ Ա. Թյուրքեշը օգտագործում էր իշխանական լծակները իր կուսակցության հզորացման համար: Նա աջակցում էր իր կուսակիցների՝ պետական մարմիններ ներթափանցմանը, ինչի արդյունքում 1970-ական թթ. կեսերից «Գորշ գայլերը» հայտնվեց պետական գրեթե բոլոր կառույցներում: Ա. Թյուրքեշը հատկապես խթանում էր «Գորշ գայլերի»՝ ուժային կառույցներ մտնելու գործընթացը. մեծ թվով «գորշ գայլեր» ներթափանցեցին ոստիկանական համակարգ, բանակ և ԱՀԾ[268]:

«Գորշ գայլերը», բավարար չհամարելով բոլոր ձախակողմյան շարժումների դեմ կառավարության կողմից միջոցառումների կազմակերպումը, սկսեց ահաբեկչական գործողություններով պայքարել

[268] Տե՛ս Հարությունյան Ա., նշվ. աշխ., էջ 161:

ձախակողմյան շարժումների դեմ: «Գորշ գայլերին» հաջողվում էր խույս տալ քրեական պատասխանատվությունից, քանի որ այդ փուլում կազմակերպությունը գտնվում էր իշխանությունների հովանու տակ, և այդ անպատժելիության մթնոլորտն էլ ավելի էր նպաստում ահաբեկչության ալիքի ընդլայնմանը[269]: 1970-ական թթ. վերջերին թուրքական բանակում սկսեց գործել մի գաղտնի խումբ, որը պետք է ուսումնասիրեր, թե ինչ հիմքերով հնարավոր կլինի արդարացնել նախապատրաստվող ռազմական հեղաշրջումը: Բանակը հաճախ նպաստում էր երկրում քաոսային իրավիճակի առաջացմանը և տարածման՝ «հասարակական պահանջի մթնոլորտ» ստեղծելու համար: Այդ նպատակով օգտագործվում էին «Գորշ գայլեր» ահաբեկչական կազմակերպության անդամները[270]:

1977 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին «Արդարություն» կուսակցության մի քանի անդամներ անցան ընդդիմադիր դաշտ, ինչը խախտեց ԹԱՄԺ-ում ուժերի հաստատված հարաբերակցությունը, և 1977 թ. դեկտեմբերին խորհրդարանն անվստահություն հայտնեց կառավարությանը, և ԱՃ կոալիցիոն կառավարությունը հեռացվեց: 1978 թ. հունվարի 5-ին ձևավորվեց Բ. Էջևիթի երրորդ կառավարությունը[271]: Ընդդիմության վերածվելով՝ «Գորշ գայլերի» ծրագրերում առաջնային դարձան իշխանությունը գավթելու գաղափարները: Դեռ 1978 թ. հունիսին Թյուրքեշի նախաձեռնությամբ ռազմական հեղաշրջում նախապատրաստելու համար բանակից հեռացվեցին ցամաքային զորքերի հրամանատարը և մոտ 200 ծայրահեղական սպա: Դավադրության տապալումից հետո Ա. Թյուրքեշը իշխանությունը զավթելու գործընթացի մեջ ներգրավեց իր վերահսկողության տակ

---

[269] Տե՛ս Դումանյան Ա., Ազգայնական շարժում կուսակցության («Գորշ գայլեր») գործունեության հիմնական փուլերը Թուրքիայում 1960-70-ական թթ., էջ 107:
[270] Տե՛ս նույն տեղում, էջ 103-113:
[271] Տե՛ս Ավագյան Ա., Պանթուրքական երազանք կամ «Գորշ գայլեր», էջ 42:

գտնվող բարձրաստիճան սպաներին և գրոհայիններին: Ահաբեկչական գործողությունների միջոցով «Գորշ գայլերը» արդեն նպատակ էին հետապնդում ապակայունացնել երկրի ներքին դրությունը, ինչը կթուլացներ Բ. Էջևիթի իշխանությունը և հող կնախապատրաստեր իրենց կողմից իշխանությունը գավթելու համար: 1980 թ. ռազմական հեղաշրջման նախօրեին «Գորշ գայլերը» ահաբեկչական լայնածավալ ալիք սկսեցին իրականացնել երկրով մեկ, որն ուղղված էր հասարակության բոլոր շերտերի դեմ: Ռազմական հեղաշրջումից հետո զինվորականներն արդեն իրենց ներկայացնում էին՝ որպես երկիրը ահաբեկչությունից փրկողներ, իսկ «գորշ գայլերին» սկսեցին ակտիվորեն օգտագործել արդեն ՔԱԿ-ի և ԱՍԱԼԱ-ի դեմ պայքարում՝ «սև աշխատանք» կատարելու համար[272]:

Երկրի ղեկն իր ձեռքը վերցրած ԱԱԽ-ի նախագահ, ԳՇ-ի պետ Էվրենը հեղաշրջման գլխավոր պատճառների մեջ նշում էր նաև 1970-ական թթ. վերջերին աննախադեպ ծավալների հասած ահաբեկչությունը: Ահաբեկչությունն իրականացնում էին «աջ» և «ձախ» ծայրահեղականները, որոնց միջև ընթացող չհայտարարված քաղաքացիական պատերազմի հիմնական նախաձեռնությունը բխում էր «աջ» ծայրահեղական ԱՇԿ-ից: 1980 թ. ռազմական հեղաշրջման նախօրեին Թուրքիայում կային շրջաններ, գյուղեր, քաղաքներում՝ թաղամասեր, որոնք ամբողջությամբ կամ մասնակի գտնվում էին կա՛մ «աջ», կա՛մ «ձախ» ծայրահեղականների վերահսկողության տակ: Նրանց միջև ընթացող պայքարը կարելի է բնութագրել՝ որպես չհայտարարված քաղաքացիական պատերազմ: Եթե «ձախերը» բաժանված էին խմբավորումների, ապա «աջերը» ղեկավարվում էին ԱՇԿ-ի կողմից: Ահամբեկչության ծավալների կտրուկ աճը պատկերացնելու համար բավական է նշել, որ, եթե 1976 թ. ահաբեկչության զոհ է

[272] Տե՛ս Դումանյան Ա., Ազգայնական շարժում կուսակցության («Գորշ գայլեր») գործունեության հիմնական փուլերը Թուրքիայում 1960-70-ական թթ., էջ 103-113:

դարձել 82 մարդ, ապա 1978 թ.՝ 879, 1979 թ.՝ 1200, իսկ 1980 թ. առաջին 8 ամիսներին՝ մոտ 2000 մարդ[273]:

Հեղաշրջումից հետո ամենածանր պատժամիջոցներն իրականացվեցին չորս գլխավոր կուսակցություններից հատկապես ԱՇԿ-ի նկատմամբ: Մեղադրական փաստաթղթերում տեղեկություններ կային այն մասին, որ, գտնվելով իշխող կոալիցիայի մեջ, ԱՇԿ-ն դավադրություն էր կազմակերպում՝ նպատակ ունենալով երկրում դիկտատուրա հաստատել:

Զինվորականների իշխանության գալով՝ ահաբեկչության ալիքը, հիմնականում, թուլացավ: Մարդիկ սկսեցին հանգիստ ապրել, աշխատել, հաճախել կինոթատրոններ, ռեստորաններ և այլն: Վերլուծելով վեցամյա ռազմական կառավարման արդյունքները՝ Էվրենը հատուկ նշեց, որ նշված ժամանակամիջոցում ահաբեկչությունը և անկարգությունը երկրում կրճատվել են 90 տոկոսով, 24 հազարից ավելի մարդ գտնվում են ոստիկանական հսկողության տակ կամ էլ ահաբեկչությանը մասնակից լինելու մեղադրանքով ձերբակալված են, թուրք քաղաքացիների կողմից հանձնվել է և նրանցից առգրավվել է 25 մլրդ լիրայի արժողությամբ զենք ու զինամթերք: Եթե ԱՇԿ-ին հաջողվեր իշխանության գլուխ գալ, ապա Ա. Թյուրքեշը Ազգային անվտանգության համակարգում, ոստիկանությունում, պետական և իշխանության այլ մարմիններում ոչ քիչ կողմնակիցներ կունենար, իսկ դա ողբերգություն կայրող էր դառնալ Թուրքիայի բնակչության համար: Այդ մասին են վկայում «Գորշ գայլերի» մասնաճյուղերի շենքերում հայտնաբերված «համաշխարհային կոմունիզմի գործակալների ցուցակները», որոնց թվում էին խաղաղության ու ժողովրդավարության ջատագովների անունները[274]:

---

[273] Տե՛ս Դումանյան Ա., Մերձավոր Արևելք, հ. 2, էջ 85:

[274] Տե՛ս Ավագյան Ա., Պանթուրքական երազանք կամ «Գորշ գայլեր», էջ 50:

1982 թ. նոր սահմանադրության ընդունումից և 1983 թ. քաղաքական կուսակցությունների մասին օրենքից հետո արգելված ու ռազմական ղեկավարության կողմից փակված կուսակցությունները Թուրքիայի քաղաքական համակարգում հանդես եկան վերակազմավորված տեսքով: Կուսակցությունների վերակազմավորման և նոր քաղաքական ուժերի ստեղծման բուն գործընթացը խստորեն վերահսկվում էր ռազմական իշխանությունների կողմից: ԱՇԿ-ն վերակազմավորվեց Պահպանողական կուսակցության (ՊԿ): Սակայն վերակազմավորումից հետո էլ զինվորական իշխանությունները անվստահություն էին ցուցաբերում ՊԿ-ի նկատմամբ՝ հաշվի առնելով կուսակցության նախկին գործելաոճը:

Թ. Օզալի քաղաքականության նկատմամբ հասարակական դժգոհությունները բարենպաստ միջավայր էին ստեղծում այն կուսակցությունների համար, որոնք օգտագործում էին աջ ազգայնական, իսլամիստական կարգախոսներ՝ փորձելով ստանալ նախկին ԱՇԿ-ին սատարող քվեները[275]:

Թեև ԱՇԿ-ը կարևոր դեր չի խաղացել երկրի գործադիր իշխանության մեջ, սակայն իր ահաբեկչական գործողություններով հաճախ ազդել է ներքաղաքական գործընթացների վրա: ԱՇԿ –ն, փաստորեն, կատարում է պատեհ պահին Թուրքիայի ներքաղաքական ստատուս-քվոն խախտողի պատեհապաշտական դերը[276]:

Վերջին տարիներին Թուրքիայում ազգայնամոլությունը զգալի աճ է ապրում հասարակական և պաշտոնական բոլոր մակարդակներում: Ազգայնամոլության վերելքը, որ, հաճախ դրսևորվում է՝ որպես հակազդեցություն Եվրամիությանը Թուրքիայի անդամակցության գործընթացին, Կիպրոսի խնդրին, Իրաքում քրդական ազգային

---

[275] Տե՛ս Ավագյան Ա., Պանթուրքական երազանք կամ «Գորշ գայլեր», էջ 66:

[276] Տե՛ս Խանլարեան Կ., Հայ բնակչութեան էթնոկրօնական վերակերպումները Թուրքիայի Հանրապետութիւնում (1923-2005 թթ.), էջ 16:

զարթոնքին ու նաև Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման արշավին, դրսևորվում է բռնարարքներով, վարչական շենքերի ավերումներով, խափանարարական գործունեությամբ[277]:

ԱՇԿ-ն այն կուսակցությունն է, որը ներկայացնում է «աջ» ծայրահեղականությունը քաղաքական դաշտում, այն երկու անգամ մտել է քաղաքական իշխող կոալիցիայի մեջ: 2002 թ. նոյեմբերին ԱՇԿ-ն, պարտվելով համընդհանուր ընտրություններում և ԹԱՄԺ-ից դուրս մնալով, 2004 թ. մարտին Թուրքիայի ՏԻՄ ընտրություններում գրավում է 3-րդ տեղը՝ իրենից առաջ թողելով միայն այն կուսակցություններին, որոնք ներկայացված էին ԹԱՄԺ- ում[278]: 2009 թ. կրկնում է իր արդյունքը՝ նորից գրավելով 3-րդ տեղը: Նրա կազմակերպչական ուժն են կազմում ոչ միայն կուսակցական սփռված ցանցերը, այլև՝ ազգայնական պանթուրքականների ծայրահեղական կազմակերպությունները՝ «գաղափարապաշտների օջախները»[279]:

ԱՇԿ-ը գաղափարական և ազգային հարցերում տարաձայնություններ ունի ԱԶԿ-ի հետ: ԱՇԿ-ի կարծիքով, Թուրքիայում քրդերի խնդիր գոյություն չունի և ընդդիմադիր քրդերի հանդեպ Ռ. Էրդողանի համախոհների ցուցաբերած ճկունությունն ու հանդուրժողականությունն, ի վերջո, երկրի մասնատման պատճառ են դառնալու: Ավելին, ԱՇԿ-ը ՔԱԿ-ի հետ բանակցելը Թուրքիայի հանդեպ դավաճանություն է համարում: Նման հռետորաբանությամբ ԱՇԿ-ն 2015 թ. խորհրդարանական ընտրություններում հույս ուներ գրավել արևելյան նահանգների ազգայնական ընտրազանգվածի ձայները և դրանց հաշվին ավելացնել իր տեղերը խորհրդարանում:

---

277 Տե՛ս Ավագյան Ա., Պանթուրքական երազանք կամ «Գորշ գայլեր», էջ 6:
278 Տե՛ս Турция: новая роль в современном мире, с. 9.
279 Տե՛ս Ավագյան Ա., Պանթուրքական երազանք կամ «Գորշ գայլեր», էջ 11:

1.2. Թուրքիայի տնտեսության առջև ծառացած արդի խնդիրներն ու մարտահրավերները

Խոսելով ներկայիս Թուրքիայի տնտեսության ու նրա զարգացվածության աստիճանի մասին՝ նախևառաջ հարկ ենք համարում արձանագրել, որ այն ստեղծվել ու զարգացել է հայերի և տեղաբնիկ այլ քրիստոնյա ժողովուրդների ցեղասպանության իրագործմամբ, այդ ժողովուրդների ունեցվածքի և կապիտալի բռնազավթման հաշվին: Որպեսզի ավելի հստակ պատկերացում կազմվի, թե ինչ տնտեսական օգուտներ է քաղել թուրքական պետությունը հայերի զանգվածային կոտորածներից ու տեղահանությունից, բավական է նշել, որ, հակառակ պատերազմական ծանր պայմաններին և կայսրության տնտեսության կատթվածահար վիճակին, երկրի պետական բյուջեն արձանագրեց աննախադեպ աճ: Այսպես, եթե 1913-1914 թթ. այն կազմում էր 35 մլն. օսմ. ոսկի, ապա 1915-1916 թթ.՝ 38 մլն., իսկ 1917-1918 թթ.՝ 85 մլն[280]: Ակնհայտ է, որ տվյալ պայմաններում թուրքական բյուջեի նման աճը կարող էր ապահովվել միայն հայերի և տեղաբնիկ այլ քրիստոնյան ժողովուրդների՝ հույների և ասորիների ունեցվածքի բռնագրավման հաշվին: Այստեղ տեղին է արձանագրել հանցավոր այն փաստը, որ թուրքական պետությունը, փաստորեն, օգտվեց իր կազմակերպած ու իրագործած հանցագործության՝ ցեղասպանության պտուղներից, ինչը նույնպես հանցագործություն է:

Առաջին հայացքից թվում է, թե աշխարհի 16-րդ տեղում գտնվող Թուրքիայի տնտեսությունը, որը վերջին տարիներին սկսել է կայուն տնտեսական աճ արձանագրել, պետք է զերծ լիներ լուրջ խնդիրներից ու ճգնաժամերից: Սակայն Թուրքիայի անկայուն քաղաքական համակարգն իր բացասական ազդեցությունն է թողնում նաև երկրի

---

[280] Տե՛ս Աստոյան Ա., Հայերի ունեզրկման գործընթացն Օսմանյան կայսրությունում 1915-1923 թթ., վկայություններ, փաստեր և փաստաթղթեր: «ՎԷՄ» համահայկական հանդես, թիվ 3 (31),Եր., 2010, էջ XXIX:

տնտեսության վրա: Թուրքիայի տնտեսության առջև ներկայումս ծառացած լրջագույն խնդիրների ու մարտահրավերների շարքում բավական է միայն նշել նաև արևմտյան նահանգների համեմատ արևելյան և հարավ-արևելյան նահանգների ծայրահեղ հետամնացությունը, օտարերկրյա կապիտալ ներդրումներից և ռուսական էներգակիրներից ծայրահեղ կախվածությունը, քաղաքական ցնցումների պատճառով օտարերկրյա կապիտալի արտահոսքի ռիսկերը, գործազրկության և թուրքական արժույթի սղաճի բարձր մակարդակը, արտաքին տնտեսական հսկայական պարտքը և այլն: Ինչպես երկրի քաղաքական համակարգի խնդիրները, այնպես էլ ներկայումս թուրքական տնտեսության մեջ առկա մարտահրավերներն իրենց ակունքներով գնում են նախորդ դարի առաջին տասնամյակներ: Հակիրճ անդրադառնանք Թուրքիայի տնտեսության առջև ծառացած հետևյալ խնդիրներին՝

1. Թուրքիայի տնտեսական անհամաչափ զարգացվածությունը և դրա հետևանքները.

Ցեղասպան քաղաքականության և Արևմտյան Հայաստանից ու Օսմանյան կայսրության այլ տարածքներից հայերի, ինչպես նաև մյուս ոչ թուրք ժողովուրդների բռնի տեղահանության հետևանքով արևելյան նահանգների ժողովրդագրական-տնտեսական վիճակում տեղի ունեցան քանակական ու որակական հսկայական փոփոխություններ: Ժողովրդագրական վիճակում առաջացած կարևոր փոփոխություններից մեկը բնակչության թվի կրճատումն էր, որը լուրջ հետևանքներ առաջացրեց արևելյան նահանգների տնտեսական դրության մեջ: Բազմաթիվ քաղաքների ու գյուղական շրջանների առավել կամ նվազ չափով ամայացումը հանգեցրեց հազարավոր արհեստավորական-արդյունաբերական և գյուղատնտեսական տնտեսությունների անհետացմանը: Սակայն բնակչության թվի կրճատումը տեղի էր ունեցել ոչ պատահականորեն, այլ «ընտրովի».

ոչնչացվել էր բնակչության այն մասը, որն առաջատար դեր էր խաղում արևելյան նահանգների տնտեսության մեջ: Ուստի, տնտեսական անկումը եղավ շատ ավելի խոր՝ և՛ քանակական, և՛ որակական առումով: Դրա հետևանքով, ընդհանրապես, բնակչության հարաբերությամբ, ավելի շատ կրճատվեց քաղաքային բնակչությունը[281]:

1950 թ. ԺՀԿ-ը ստիպված եղավ երկրի ղեկը հանձնել նորաստեղծ ԴԿ-ը: Վերջինիս իշխանության գլուխ գալու կարևորագույն խաղաքարտերից մեկը հանդիսացավ երկրի Արևելքը տնտեսապես բարձրացնելու վերաբերյալ «նոր կուրսը»: Թեև ԴԿ-ը որոշ քայլեր կատարեց արևելյան նահանգներում ճանապարհաշինության, էլեկտրաֆիկացման, որոշ արդյունաբերական ձեռնարկություններ գործի գցելու, գյուղատնտեսության մեջ նոր մեթոդներ ներդնելու և դպրոցների ցանցը մեծացնելու ուղղությամբ, սակայն այդ միջոցները մակերեսային բնույթի էին և չէին կարող ամբատապես փոխել նշված շրջանների հետամնացությունը: Նախ, արևելյան նահանգների ձեռնարկությունների մի մասն էր արդյունաբերական, իսկ սկսված ճանապարհաշինարարությունը, մասնավորապես՝ երկաթուղային շինարարությունը, կապված էր կառավարող շրջանակների հետապնդած ռազմական նպատակների և հավանական ապստամբություններին միջամտելու ցանկությունների հետ: Դպրոցական ցանցի ընդարձակումը դիտվում էր՝ որպես ոչ թուրք երիտասարդ սերնդին թուրքական մշակույթով դաստիարակելու, այսինքն՝ նրանց ձուլելու միջոց[282]:

Հետագա տասնամյակների ընթացքում արևելյան և արևմտյան նահանգների զարգացման մակարդակների տարբերությունը, ոչ միայն չնվազեց, այլև, գնալով, մեծացավ: Էթնո-կրոնական տեսակե-

---

[281] Տե՛ս Ульченко Н.Ю., Основные итоги социально-экономического развития Турции в 2006-2007 годах и перспективы на 2008 год. “Турция накануне и после парламентских и президентских выборов 2007 г.”, М., 2008, с. 43-53.

[282] Տե՛ս Գալուստյան Հ., նշվ. աշխ., էջ 28:

տից բավական խայտաբղետ կազմ ունեցող արևելյան նահանգների բնակչության ճնշող մեծամասնությունը ներկայումս էլ շարունակում է զբաղվել գյուղատնտեսությամբ, հատկապես՝ անասնապահությամբ և միայն չնչին մասն է զբաղվում արդյունաբերությամբ[283]:

Թուրքական իշխանությունները Արևելքի հետամնացությունը փորձում են բացատրել աշխարհագրական անբարենպաստ հանգամանքներով՝ բարձրադիր լեռնային դիրքով հարմար հաղորդակցության ուղիների բացակայությամբ, զարգացած կենտրոններից մեծ հեռավորության վրա գտնվելու հանգամանքով և այլն: Թեև դրանցում կա որոշ օբյեկտիվություն, սակայն, իրականում, իրար հաջորդած թուրքական կառավարությունները, որոշակի քաղաքական նկատառումներից ելնելով, երբեք լրջորեն չեն զբաղվել ազգարային արևելյան նահանգների խնդրով: Թուրքիայի կառավարող շրջաններն արդեն յոթ տասնամյակ է փորձում են տնտեսական, էթնիկական, ազգային ու պատմական առումով յուրացնել արևելյան շրջանները, բայց նրանց ջանքերը չեն տալիս ցանկալի արդյունքներ[284]: Ինչպես անցյալում, այնպես էլ ներկայումս արևելյան նահանգների հիմնահարցը հանդիսանում է աղքատության, հետամնացության, հիվանդությունների, ազգային ու սոցիալական ճնշման մի բարդ հանգույց: Արևելյան վիլայեթներում թուրքական իշխանությունների իրականացրած քաղաքականության գլխավոր սխալներից մեկն այն էր, որ նրանք այդ նահանգների բնակչության և, մասնավորապես, քաղաքային բնակչության սակավությունը դիտում է ոչ թե որպես հետամնացության հետևանք, այլ՝ որպես դրա պատճառ[285]:

---

[283] Տե՛ս Գալուստյան Հ., նշվ. աշխ., էջ 19:
[284] Տե՛ս Թուրքիա-ԵՄ-Հայաստան. մարտահրավերները և հնարավորությունները, էջ 33:
[285] Տե՛ս Գալուստյան Հ., նշվ. աշխ., էջ 91:

Արևելյան նահանգներին պատշաճ ուշադրություն չդարձնելու հիմնական պատճառներից մեկն էլ Քրդական հարցի սրումն էր, ինչը ապակայունացնող գործոն դարձավ ոչ միայն արևելյան շրջանների, այլև՝ առհասարակ ողջ Թուրքիայի համար: Թուրքական իշխանություններն իրենց քաղաքականությամբ տարբերություն էին դնում ոչ միայն Արևմուտքի և Արևելքի, այլ նաև՝ հենց արևելյան նահանգների միջև: Այն նահանգները, որոնցում թուրքերը համեմատաբար մեծ թիվ էին կազմում՝ Կարս, Էրզրում, Էրզինջան (Երզնկա), Էլազըղ, Մալաթիա, Անթեբ (Այնթապ), իբրև օգնություն ավելի շատ ֆինանսական միջոցներ էին ստանում, քան հիմնականում քրդերով բնակեցված Թունջելի (Դերսիմ), Դիարբեքիր, Մարդին, Ուրֆա նահանգները: Նույն սկզբունքով այդ նահանգներում ստեղծվում էին արդյունաբերական ձեռնարկությունները: 1963 թ. դրությամբ մշակող արդյունաբերության 89 ձեռնարկություններից 43-ը գտնվում էր Այնթապի, իսկ 18-ը՝ Էրզրումի նահանգներում: Մշակող արդյունաբերական ձեռնարկություններ չկային առավելապես քրդաբնակ Մարդինի, Բինգյոլի, Աղրըի, Ուրֆայի, Հաքյարիի, Վանի, Մուշի և Թունջելիի նահանգներում[286]:

Հետագա տասնամյակների ընթացքում իշխանությունները արևելյան հետամնաց նահանգներում արդյունաբերական ձեռնարկություններ ստեղծելու հարցը փորձում էին լուծել գերազանցապես օտարերկրյա կապիտալ ներդրումների հաշվին: Սակայն այդ նահանգներն այդքան էլ գրավիչ չէին օտարերկրյա ներդրողների համար, որոնք ավելի արագ շահույթ ստանալու ակնկալիքով գերադասում էին ներդրումներ կատարել Թուրքիայի զարգացած արևմտյան նահանգներում: Աշխատատեղերի սակավությունը ստիպում էր արևելյան նահանգների բնակչությանն աշխատանք փնտրել Սև, Էգեյան և

[286] Տե՛ս Գալուստյան Հ., նշվ. աշխ., էջ 52:

Միջերկրական ծովերի ափամերձ շրջաններում, որտեղ տարբեր բնագավառների, ինչպես, օրինակ՝ զբոսաշրջության, շինարարության զարգացման արդյունքում էժան աշխատուժի պահանջարկ կար: Սակայն միշտ չէ, որ ապրուստի ավելի նպաստավոր պայմաններ գտնելու ակնկալիքով քաղաք եկած գյուղացիները կարողանում էին հարմար աշխատանք գտնել, քանի որ քաղաքային բնակչության՝ շատ կարճ ժամանակահատվածում ավելանալն, իր հերթին, հանգեցնում էր գործազրկության աճին և նորաստեղծ թաղամասերի բնակիչների աղքատացմանը: Սրան ավելանում էին խնդիրներն առողջապահության և կրթության ոլորտներում, ենթակառուցվածքային համակարգը չէր հասցնում վերափոխվել բնակչության թվաքանակի աճի տեմպին համապատասխան, ինչի հետևանքով դժվարանում էր նոր քաղաքաբնակների կյանքը, և սրվում էին սոցիալական խնդիրները[287]:

1970-80-ական թթ. սղաճի մակարդակի և գործազրկության աճի հիմնական պատճառ դարձան պետական ձեռնարկություններին տրվող ուղղակի և անուղղակի սուբսիդիաները: 1970-ական թթ. այս գործընթացներն առաջ բերեցին սոցիալական դժգոհություններ: Կառավարությունն ի զորու չեղավ տնտեսության մեջ իրականացնելու կառուցվածքային բարեփոխումներ: Երկրի տնտեսական անկումը և սոցիալական անկայությունը դարձավ 1980 թ. սեպտեմբերին բանակի կողմից իշխանությունն իր ձեռքը վերցնելու հիմնական պատճառներից մեկը: 1980-90-ական թթ. Թուրքիայի տնտեսության համար ընտրվեց ազատականացման մոդելը[288]:

1983 թ. նոյեմբերին իշխանության եկած «Հայրենիք» կուսակցության ղեկավարությունը Թ. Օզալի գլխավորությամբ նոր քաղա-

---

[287] Տե՛ս Հարությունյան Վ., նշվ. աշխ., էջ 100:

[288] Տե՛ս Թուրքիա-ԵՄ-Հայաստան. մարտահրավերները և հնարավորությունները, էջ 25:

քական ուղղություն վերցրեց, օտարերկրյա կապիտալի լայն ընդգրկում, պետական մասնաբաժնի ծավալում, տեղական խոշոր կապիտալի խրախուսում: Սակայն չհաջողվեց երկրի տնտեսության մեջ հասնել կայունացման[289]: Արդյունքում՝ շարունակեց աճել արժեզրկումը, մեծացավ գործազուրկների թիվը, նվազեցին հասարակության լայն զանգվածների իրական եկամուտները, ավելացավ սոցիալական լարվածությունը: Օզալի քաղաքականությունից դժգոհ էր երկրի բնակչության մեծամասնությունը՝ այդ թվում ազգային փոքր և միջին բուրժուազիան, որն ավելի շատ էր տուժում արտերկրյա և տեղական մենատիրական կապիտալից[290]:

1990 թ. երկրի տնտեսությունը 10 տոկոս աճ արձանագրեց, որի շնորհիվ Թուրքիան ընդգրկվեց աշխարհի 40 ամենամրցունակ երկրների շարքը: Սակայն ազատական շուկայական տնտեսության կերտման քաղաքականությունը, հակառակ այլ զարգացող երկրների, չուղեկցվեց ժողովրդավարական բարեփոխումներով: Թ. Օզալի ազատականացման քաղաքականությունն առաջ բերեց համակարգային, կառուցվածքային փոփոխությունների ու օրենսդրական լրամշակումների անհրաժեշտություն, որոնց իրականացման ուղղությամբ հետևողականություն չդրսևորելը իր ազդեցությունը թողեց 1994 թ. և 2001 թ. տնտեսական ճգնաժամների վրա: Օզալի տնտեսական բարեփոխումների շնորհիվ իսլամական կամ, այսպես կոչված, «կանաչ կապիտալն» աննախադեպ վերելք ապրեց, որը սկսեց նյութական աջակցություն ցուցաբերել իսլամական շարժումներին ու կազմակերպություններին, ֆինանսավորել ԲԿ-ի նախընտրական քարոզարշավները: 1985-1990-ական թթ. դարձան շրջադարձային տարիներ իսլամական կապիտալի ակտիվ շրջանառության առումով: 1971 թ. հիմնադրված «Թուրքիայի արդյունաբերողների և գործարարների

---

[289] Տե՛ս Շաքարյան Ա., նշվ. աշխ., էջ 41-42:

[290] Տե՛ս Ավագյան Ա., Պանթուրքական երազանք կամ «Գորշ գայլեր», էջ 66:

ընկերությունը», որը միավորում էր փոքր և միջին բիզնեսի ձեռնարկություններին, փոխարինելու եկավ նոր տնտեսական ընտրախավը՝ այսպես կոչված «անատոլիական վագրերը», որը 1990 թ. հիմնադրեց «Անկախ արդյունաբերողների և գործարարների ընկերությունը»[291]:

Չնայած արձանագրված որոշ հաջողություններին, Համաշխարհային բանկը Թուրքիային ընդգրկեց այն յոթ երկրների շարքում, որոնք ամենաանմխիթար վիճակում էին՝ եկամուտների անհավասար բաշխման առումով: Թուրքիայի ազգային եկամտի 55 տոկոսը կենտրոնացվեց բնակչության 5 տոկոսի ձեռքում: Ուստի, հասարակության ճնշող մեծամասնությանը բաժին հասավ տնտեսական «հրաշքի» միայն նվազագույն մասը, ինչն էլ ուղեկցվեց սոցիալական բնույթի խնդիրների աճով: Վիճակագրության համաձայն, 1987-1989 թթ. աշխատավարձով ապրող բնակչության իրական եկամուտները նվազեցին 50 տոկոսով[292]:

1990-ականների վերջից սկսված տնտեսական ճգնաժամը ցույց տվեց թուրքական տնտեսության խոցելիությունը և միլիոնավոր մարդկանց սոցիալական անպաշտպանությունը՝ համապատասխան հուսալի համակարգի բացակայության պատճառով[293]: 2000-ականների սկզբից Թուրքիային մեծ դժվարությամբ է հաջողվում հաղթահարել ճգնաժամը, որ պայմանավորված է Եվրասիայի շուկաները յուրացնելու թուրքական արդյունաբերության ակնհայտ անընդունակությամբ: Թուրքական իշխանությունները գտնում էին,

---

[291] Տե՛ս Уразова Е.И., К оценке роли исламских идей и капиталов в турецкой экономике. “Ближний Восток и современность”. Вып. 9, М., 2000, с. 223-233.

[292] Տե՛ս Տեր-Մաթևոսյան Վ., Իսլամը Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքում, էջ 92:

[293] Տե՛ս Ульченко Н. Ю., Валютно-финансовый кризис в Турции 1994 г. и российский финансовый кризис 1998 г.: аналогии и различия в причинах и следствиях. “Ближний Восток и современность”, вып. 8, М., 1999, с. 176-190.

որ ԱՄՆ-ը և նրա վերահսկողության տակ գտնվող միջազգային ֆինանսական կազմակերպություններն ակտիվ աջակցություն ցույց չտվեցին Թուրքիային 1990-ականների վերջի, 2000-ականների սկզբի տնտեսական ճգնաժամը հաղթահարելու ուղղությամբ: Որոշ ծայրահեղ գնահատականներով՝ ԱՄՆ-ը նույնիսկ մասնակցել է այդ ճգնաժամի առաջացմանը՝ նպատակ ունենալով հետագայում ապահովել իր վերահսկողությունը Թուրքիայի նկատմամբ: Արժույթի միջազգային հիմնադրամի և Համաշխարհային բանկի թուրքական իշխանություններին ուղղված մեղադրանքներից մեկն այն էր, որ բարեփոխումների շրջանում Թուրքիայում հանգեցրեց գործազրկության աճի, կրճատվեցին հասարակության շատ շերտերի եկամուտները, ինչը թուրքական հասարակական գիտակցության մեջ հանգեցրեց ամերիկյան քաղաքականության քննադատությանը:

1990-ական թթ. տնտեսական ճգնաժամը հաղթահարելու նպատակով իշխանություններն անցան թուրքական արժույթի «լողացող կուրսի», պետական ծախսերի և բյուջեի դեֆիցիտի կրճատման միջոցներին, նվազագույնի հասցրին պետության միջամտությունը տնտեսության մեջ և իրականացրեցին պետական ձեռնարկությունների մասնավորեցում[294]:

Թեև Թուրքիային հաջողվեց հաղթահարել 1994 թ. և 2001 թ. տնտեսական ճգնաժամերի հետևանքով առաջացած հիմնախնդիրները և շարունակել տնտեսական բարեփոխումները, սակայն վերջին երեք տասնամյակում երկրի տնտեսությունը երկնիշ սղաճի մակարդակի բացասական արդյունքներին առնչվող որոշակի բարդություններ ուներ[295]: Թուրքական բյուջեի դեֆիցիտից ու տնտե-

---

[294] Տե՛ս Киреев Н.Г., Сохранился ли в Турции госсектор? Некоторые итоги приватизации. “Ближний Восток и современность”, вып. 9, М., 2000, с. 300-309.

[295] Տե՛ս Сидорова Ю.Б., Валютно-финансовый кризис в Турции 2000-2001 гг.. “Востоковедный сборник”, вып. 5, М., 2003, с. 326-342.

սության մեջ պետության անսահմանափակ միջամտությունից բացի ԵՄ-ին լրջորեն մտահոգում էր լիրայի սղաճի բարձր մակարդակը, ինչը բացասաբար էր ազդում թուրքական արժույթի գնողունակության վրա[296]: 2005 թ. սկզբին Թուրքիան հրաժարվեց իր ազգային արժույթի վեց զրոներից և թողարկեց ցածր միավորներ ունեցող թղթադրամներ և մետաղադրամներ: Հիմնականում դրա շնորհիվ վերջին մի քանի տարիներին հաջողվեց սղաճը իջեցնել միանիշ մակարդակի: Այսպես, 2006 թ. սղաճի մակարդակը կազմել է 9.3%, իսկ 2007 թ.՝ 8.1 տոկոս: Թուրքիայի կառավարության հիմնական նպատակն է՝ հետագայում էլ ավելի իջեցնել սղաճի մակարդակը, որպեսզի այն համապատասխանի եվրոպական երկրների ցուցանիշի միջին մակարդակին[297]:

Եթե 2001 թ. տնտեսական ճգնաժամը 2002 թ. ընտրությունների ժամանակ դարձավ ԱԶԿ-ի հաղթանակի հիմնական գրավականներից մեկը[298], ապա 2009 թ. ՏԻՄ ընտրությունների ժամանակ մեկ այլ առավել համընդգրկուն ճգնաժամի պատճառով ԱԶԿ-ն կորցրեց զգալի ձայներ:

Չնայած վերջին տարիներին գրանցված տնտեսական աճին, Թուրքիայի աշխատուժի շուկայում, մասնավորապես՝ նոր աշխատատեղերի ստեղծման գործընթացում դեռևս առկա են մի շարք հիմնախնդիրներ: Այսպես, 2001 թ. տնտեսական ճգնաժամից անմիջապես հետո գրանցվեց 8.4 տոկոս գործազրկության մակարդակ,

---

[296] Տե՛ս Гаджиев А.Г. Курдский вопрос в свете очередного ежегодного доклада Еврокомиссии о развитии Турции. Институт Ближнего Востока, http://www.iimes.ru/rus/stat/2009/11-11-09a.htm

[297] Տե՛ս Թուրքիա-ԵՄ-Հայաստան. մարտահրավերները և հնարավորությունները, էջ 28:

[298] Տե՛ս Ульченко Н. Ю., К вопросу об экономической политике правительства Партии справедливости и развития, “Ближний Восток и современность”, вып. 17, М., 2003, с. 339-350.

որը պահպանվեց մյուս տարիներին, իսկ 2005 թ. հասավ 10.3 տոկոսի[299]: Երկրի տնտեսությունը համեմատաբար հեշտ հաղթահարեց 2008–2009 թթ. ճգնաժամը և, կարծես, 2010-2011 թթ. վերադարձավ նախաճգնաժամային վիճակին, սակայն հետագայում կրկին նկատվեց ՀՆԱ-ի անկում 2,1 տոկոսով[300]: Նույն տատանումները գրանցվեցին նաև 2013-2014 թթ.: Թուրքիային այդպես էլ չի հաջողվում հաղթահարել սղաճը, որը 2011–2014 թթ. չի իջել 6,5 տոկոսի սահմանագծից, իսկ 2014 թ. հասավ 8,9 տոկոսի: Թուրքական իշխանություններին չի հաջողվում հաղթահարել նաև գործազրկության բարձր ցուցանիշները, որը կազմում է 9–10 տոկոս[301]:

Պահպանվում են ավանդական դարձած այնպիսի չլուծված խնդիրներ, ինչպիսին են՝ ստվերային տնտեսության բարձր տոկոսը (տարբեր հաշվարկներով՝ 23-ից 45 տոկոս) և եկամուտների անհամաչափ բաշխումն ու աղքատության բարձր մակարդակը (բնակչության 30 տոկոսը աղքատ է, իսկ 13,5 տոկոսը՝ չքավոր [302]:

Եվրամիությանը Թուրքիայի անդամակցության գործընթացին վերաբերող 2007 թ. զեկույցում արձանագրված է այն փաստը, որ իշխանությունները դեռևս բավարար միջոցներ չեն ձեռնարկել երկրի տարբեր շրջանների տնտեսական անհամաչափ զարգացվածությունը հաղթահարելու ուղղությամբ[303]:

---

[299] Տե՛ս Թուրքիա-ԵՄ-Հայաստան. մարտահրավերները և հնարավորությունները, էջ 32:

[300] Տե՛ս Шлыков П., Турция после выборов 2011 г.: парадоксы политического развития под властью Партии справедливости и развития. “Вестник Московского университета”, сер. 13, Востоковедение, № 3, М., 2012, с. 3-29.

[301] Տե՛ս Орехин П., Турецкая экономика не готова воевать, http://www.gazeta.ru/business/2015/11/26/7916123.shtml

[302] Տե՛ս Турция: новая роль в современном мире, с. 21.

[303] Տե՛ս Commission of the European Communities. Commission Staff Working Document. Turkey 2007, Progress Report. Brussels, 06.11.2007, p. 57.

Այսպիսով, թուրքական տնտեսության վերջին տասնամյակների վերլուծությունը ցույց է տալիս, որ այն կարողանում է հաղթահարել տնտեսական ճգնաժամերը և տնտեսական աճ ապահովել գերազանցապես միջազգային ֆինանսական կազմակերպությունների վարկերի և օտարերկրյա ներդրումների շնորհիվ[304]:

2. Թուրքական տնտեսության կախվածությունը օտարերկրյա կապիտալ ներդրումներից և քաղաքական զարգացումներից.

Թուրքիան չի տիրապետում քաղաքական ու տնտեսական այնպիսի ռեսուրսների, որոնք անհրաժեշտ են իրական անկախության համար: Պատահական չէ, որ թուրքերը Թուրքիան բնութագրում են՝ որպես երկիր, որը «պտտվում է սեփական առանցքի շուրջը»:

Թուրքիայի արտաքին տնտեսական պարտքը զգալիորեն մեծացավ 1994 թ. տնտեսական ճգնաժամի ժամանակ, երբ թուրքական իշխանությունները բյուջեի դեֆիցիտը հաղթահարելու համար վարկեր վերցրին միջազգային տնտեսական կազմակերպություններից[305]: Երկրի տնտեսությունը հսկայական վնասներ կրեց նաև 1999 թ. ավերիչ երկրաշարժի ժամանակ: Ավերվեցին մեծ քանակությամբ բնակելի շենքեր, ենթակառուցվածքներ, ձեռնարկություններ, աղետի գոտում սրվեցին սոցիալական խնդիրները և այդ ամենի հետևանքները հաղթահարելու նպատակով իշխանությունները ստիպված էին կրկին դիմել օտար երկրների և միջազգային ֆինանսատնտեսական կառույցների օժանդակությանը[306]:

Երկրի ֆինանսական դժվարությունները հանգեցրին պահուստային ոսկու ծավալների կրճատման և արտաքին պարտքի ավելի

---

[304] Տե՛ս Մուրադյան Ի., Ներքաղաքական խնդիրը Թուրքիայում, http://www.lragir.am/index/arm/0/comments/view/29762#sthash.J8Evd4R3.dpuf

[305] Տե՛ս Уразова Е. И., Внешний долг Турции и проблема его погашения (80-90 гг.), с. 191-205.

[306] Տե՛ս Ульченко Н.Ю., Динамика экономического роста в Турции в 1999 г. и перспективы на 2000 г., “Ближний Восток и современность”, вып. 9, М., 2000, 279-283.

մեծացման, որը 2000 թ. կազմեց 11 տոկոս: Վիճակը համեմատաբար բարելավվեց ԱՄՀ-ի կողմից 10,4 մլրդ. դոլարի չափով Թուրքիային հրատապ ֆինանսական օժանդակության ցուցաբերման շնորհիվ: Ընդհանուր առմամբ, ԱՄՀ-ի կողմից այդ ժամանակահատվածում Թուրքիային տրամադրված ֆինանսական աջակցության ծավալները կազմեցին 15 մլրդ., ինչի հետևանքով վերջինս դարձավ այդ միջազգային կառույցի խոշորագույն պարտատերը: 2001 թ. փետրվարից թուրքական լիրան կիսով չափ արժեզրկվեց դոլարի համեմատ, երկրի ՀՆԱ-ն նախորդ տարվա համեմատ 11,8 տոկոսով նվազեց: Ստեղծված պայմաններում թուրքական իշխանությունները ԱՄՀ-ից 9 մլրդ. դոլարի վարկ խնդրեցին, որի զգալի մասն ուղղվեց արտաքին պարտքի սպասարկման ծախսերի և բանկային տոկոսադրույքների վճարմանը: ԱՄՀ-ից ստացված վարկի սպասարկման ուղղությամբ Թուրքիան 2002 թ. ծախսեց 5 մլրդ. դոլար, սակայն երկրի բյուջեի դեֆիցիտը շարունակում էր պահպանվել նույն մակարդակի վրա, քանզի նրա ծախսային մասն էականորեն գերազանցում էր եկամտայինը[307]:

Ստեղծված իրավիճակում ԱՄՀ-ը խորհուրդ էր տալիս թուրքական կառավարությանն արագացնել պետական ձեռնարկությունների մասնավորեցման գործընթացը և ստացված եկամուտներով համալրել պետական գանձարանը: Կարճ ժամանակահատվածում մասնավորեցվեցին հեռահաղորդակցության, ավիափոխադրման, ծանր արդյունաբերության, ինչպես նաև շաքարի և ծխախոտի արտադրության ոլորտում գործող հսկայական պետական ձեռնարկությունները: Մասնավորեցման գործընթացում ներգրավվեցին արտասահմանյան կազմակերպություններ, ակնկալելով, որ այդ ձեռնարկությունների սեփականատերը դառնալուց հետո նրանք կավելացնեն ֆինանսական ներդրումները երկրի տնտեսության մեջ:

---

[307] Տե՛ս Ахкуев А., Основные проблемы современной экономической политики Турции. Автореферат диссертации, М., 2000, http://www.dissercat.com/content

Պետական բանկերը, որոնք մինչ այդ թվարկված ոլորտներում իրականացնում էին բանկային գործարքների կեսը, հսկայական ֆինանսական կորուստներ ունեցան, որոնց ընդհանուր ծավալները գնահատվեցին շուրջ 20 մլրդ. դոլար[308]: Իշխող կոալիցիան կառավարությունում առկա հակասությունների պատճառով դանդաղում էր բարեփոխումների իրականացման գործում, ինչի հետևանքով պետական բանկային համակարգի պարտքերը հասան 30 մլրդ. դոլարի, իսկ թուրքական արժույթը դոլարի համեմատ արժեզրկվեց 40 տոկոսով, իսկ 2000 թ. փետրվարից երկրում փակվեց 500 հազար աշխատատեղ[309]:

Թուրքիայի ՀՆԱ-ի կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ ունի ծառայությունների ոլորտը, որը վերջին տարիներին հատկապես զբոսաշրջության ոլորտի դինամիկ զարգացման շնորհիվ կայուն աճ է արձանագրել[310]: Գաղտնիք չէ, որ ծառայությունների, սպասարկման ոլորտների և հատկապես զբոսաշրջության ոլորտների զարգացումը մեծապես կախված է օտարերկրյա քաղաքացիների հոսքից և դրանից ստացվող ֆինանսական եկամուտներից: Զբոսաշրջությունը թուրքական տնտեսության առավել զգայուն ոլորտներից է, որի զարգացման վրա խիստ բացասական ազդեցություն է թողնում Թուրքիայի նման երկրում անընդհատ տիրող ներքին անկայունությունը:

Ռուսական ինքնաթիռի խոցումից հետո ռուս-թուրքական հարաբերությունների կտրուկ վատթարացումը բացասական հետևանքներ ունեցավ թուրքական տնտեսության և հատկապես զբոսաշրջության ոլորտի վրա: Միայն ռուսաստանցի զբոսաշրջիկներից թուրքական տնտեսությունը ստանում էր տարեկան շուրջ 4 մլրդ դո-

---

308 Տե՛ս Малюта Н. Е., Банковская система Турции в 2002 г., с. 332-338.

309 Տե՛ս Ахкуев А., Основные проблемы современной экономической политики Турции. Автореферат диссертации, http://www.dissercat.com/content

310 Տե՛ս Turkey Report, CSIS Files, No. 6, September 2007, p. 33.

լարի եկամուտ[311]: Ռուս-թուրքական հարաբերությունների սրման հետևանքով ռուսաստանցի զբոսաշրջիկների հոսքը Թուրքիա շեշտակիորեն նվազեց: Թուրքիայի հյուրանոցների սեփականատերերի ընկերակցության տվյալներով, ռուսաստանցի զբոսաշրջիկների հոսքի անկման հետևանքով այդ երկրի տնտեսությունն ունեցավ 4,5–5 մլրդ. դոլարի վնաս, ինչը կազմում է այդ երկրի ՀՆԱ-ի մոտ 0,5 տոկոսը[312]:

1995 թ. Բրյուսելի ու Անկարայի միջև Թուրքիայի՝ ԵՄ մաքսային միությանը միանալու համաձայնագրի ստորագրումից հետո ակտիվացան Թուրքիա-ԵՄ արտաքին տնտեսական կապերը[313]: Դրա շնորհիվ մի կողմից՝ հնարավորություն ընձեռվեց թուրքական տեքստիլ արտադրության ապրանքներն արտահանել եվրոպական շուկաներ, սակայն մյուս կողմից՝ մեծացավ եվրոպական շուկաներից Թուրքիայի կախվածությունը[314]:

Թուրքիայում ստեղծվեցին հարկերից ազատված ազատ տնտեսական գոտիներ, որոնք պետք է խթանեին օտարերկրյա կապիտալի հոսքը երկրի տնտեսության մեջ[315]: Բացի այդ, իշխանությունների նախաձեռնությամբ կառավարության ու բիզնեսի ներկայացուցիչներից կազմվեցին հատուկ հանձնաժողովներ, որոնք բյուրոկրատական քաշքշուկները վերացնելու նպատակով պետք է մշակեին օտարերկրյա ներդրումների մասին նոր օրենքի նախագիծ: Թեև արտասահման-

---

[311]Տե՛ս Визит Эрдогана в Россию, http://www.inosmi.ru/politikaakademisi_org/20131127/215179043.htm

[312] Տե՛ս Орехин П., Турецкая экономика не готова воевать, http://www.gazeta.ru/business/2015/11/26/7916123.shtml

[313] Տե՛ս Куранов А., Новички спешат в Евросоюз. “Новое время”, Приложение, Политэкономия, № 10, 26 мая 1998.

[314] Տե՛ս Котов Д. В., Турецкая швейная промышленность на рубеже XX-XXI веков, “Востоковедный сборник”, вып. 8, М., 2007, с. 18-33.

[315] Տե՛ս Шмидт П. И., Свободные экономические зоны Турции. “Востоковедный сборник”, вып. 8, М., 2007, с. 247-260.

յան ներդրողները բավարարված էին Թուրքիայի տնտեսական հաջողություններով, սակայն նշում էին, որ նախարարությունները այդքան էլ բարեհաճ վերաբերմունք չունեն արտասահմանյան կապիտալի նկատմամբ[316]: 2003 թ. ընդունվեց «Օտարերկրյա ներդրումների մասին» նոր օրենքը, որով օտարերկրյա ներդրողների համար տեղացի արտադրողների հետ հավասար իրավունքներ պետք է ապահովվեին, վերացվում էր օտարերկրյա ներդրումների կապիտալի նվազագույն չափը, օտարերկրացիների կողմից Թուրքիայում անշարժ գույքի ձեռքբերման հնարավորություն էր տրամադրվում և այլն: Թուրքիայում ընկերություն հիմնելու համար ներկայումս պահանջվում է մեկ օր: 1993-2002 թթ. օտարերկրյա ուղղակի ներդրումների միջին մակարդակը կազմեց 1 մլրդ դոլար: Օտարերկրյա ներդրումների մասին նոր օրենքի ընդունումից հետո՝ 2005-2006 թթ. ընկած ժամանակահատվածում, զգալի աճեց օտարերկրյա ուղղակի ներդրումների ներհոսքի ծավալը՝ 9.8 մլրդ-ից հասնելով 20 մլրդ դոլարի[317]: Դժվար չէ նկատել, որ թուրքական տնտեսությունը շարունակում է մեծապես կախված մնալ օտարերկրյա ներդրումներից, իսկ օտարերկրյա կապիտալն, ինչպես հայտնի է, շատ զգայուն է ներդրման երկրի քաղաքական զարգացումների նկատմամբ: Թուրքիայի նման երկրի քաղաքական համակարգին բնորոշ անկայունությունը, անընդհատ ցնցումները, հեղաշրջումներն ու դրանց փորձերը, ինչպես նաև ՔԱԿ-ի կողմից պարբերաբար իրականացվող ահաբեկչական գործողությունները, բնականաբար, վանում են օտարերկրյա ներդրողներին, որոնք չեն ցանկանում զրկվել եկամտից ու իրենց ներդրումներից: Քաղաքական անկայունությունների հետևանքով օտարերկրյա կապիտալը արագ հեռանում է երկրից, ինչը բացասա-

---

[316] Տե՛ս Ахкуев А., Основные проблемы современной экономической политики Турции, Автореферат диссертации, http://www.dissercat.com/content

[317] Տե՛ս Трубникова С.А., Иностранные инвестиции в Турции, “Востоковедный сборник”, вып. 2, М., 2001, с. 313-318.

կան հետևանքներ է ունենում երկրի տնտեսության կոնկրետ ոլորտների և, ընդհանրապես, տնտեսության վրա[318]: Թուրքիայի Կենտրոնական բանկի տվյալներով, քաղաքական անկայուն իրավիճակի, ահաբեկչությունների և սիրիական պատերազմի հետևանքով միայն 2015 թ. ընթացքում օտարերկրյա ներդրողները երկրի ֆինանսական շուկաներից դուրս բերեցին շուրջ 4,88 մլրդ. դոլար[319]:

Ֆինանսավորման արտաքին աղբյուրների ներդրման հաշվին երկրի տնտեսությունը զարգացնելու քաղաքականությունը հանգեցրեց նրան, որ անշեղորեն շարունակում էր մեծանալ երկրի արտաքին տնտեսական պարտքը: Եթե 1997 թ. սկզբին Թուրքիայի արտաքին պարտքը կազմում էր 73,6 մլրդ ԱՄՆ դոլար[320], ապա չորս տարվա ընթացքում այն ավելացավ ավելի քան չորս անգամ և 2011 թ. հասավ 310 մլրդ. դոլարի, ինչը կազմում էր երկրի ՀՆԱ-ի 42 տոկոսը[321]:

Թուրքիայի «Գաղտնի սահմանադրությունում» կամ «Կարմիր գրքում» երկրին սպառնացող տնտեսական վտանգների շարքում առանձնացվում են՝ արտաքին հումքային շուկաները կորցնելը, արտասահմանյան տնտեսական և ռազմական օգնության ծավալների կրճատումը, բյուջեի դեֆիցիտը և սղաճի բարձր մակարդակը, գործազրկության և հանցագործությունների աճը[322]: Անվտանգության ավանդական հարցերի կողքին Թուրքիան առնչվեց անվտանգության նոր տեսակի խնդիրների՝ կազմակերպված հանցագործություն,

---

318 Տե՛ս Турция: новая роль в современном мире, с. 18.

319 Տե՛ս Орехин П., Турецкая экономика не готова воевать, http://www.gazeta.ru/business/2015/11/26/7916123.shtml

320 Տե՛ս Данилова Е., Есть ли будущее у “исламской экономики”, “Азия и Африка сегодня”, N 1, М., 2004, с. 23.

321 Տե՛ս Турция: новая роль в современном мире, с. 20.

322 Տե՛ս Задонский С., Роль военного фактора во внутренней политике Турции. “Армия и власть на Ближнем Востоке: от авториторизма к демократии”, (сборник статей), М., 2002, с. 360-364.

անօրինական միգրացիա, զենքի և թմրամիջոցների անօրինական առևտուր, փողերի լվացում[323]:

Քաղաքական խնդիրները նույնպես ֆինանսապես բավականին թանկ են նստում թուրքական տնտեսության վրա: Այսպես, Կիպրոսի խնդրի լուծված չլինելը էականորեն ազդում է Թուրքիայի տնտեսության վրա, քանի որ նա ստիպված է յուրաքանչյուր տարի իր բյուջեում հսկայական ծախսեր նախատեսել սոցիալ-տնտեսական բավական ծանր կացության մեջ գտնվող Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետության խնդիրների լուծման համար: ՀԿԹՀ-ն, առանց այդ սուբսիդավորման, ի վիճակի չէ ինքնուրույն լուծել իր առջև ծառացած սոցիալ-տնտեսական խնդիրները, իսկ Անկարայի համար երկրորդ թուրքական պետության գոյությունն ունի կարևոր աշխարհաքաղաքական նշանակություն: Թուրքական տնտեսությունը հսկայական վնասներ կրեց 2013 թ. մայիսին Թաքսիմ հրապարակի «Գեզի» զբոսայգուց սկսված հուժկու շարժման հետևանքով, որը տարածվեց երկրի բոլոր խոշոր քաղաքներում: Թուրքական տնտեսությունն անընդհատ կորուստներ է ունենում ՔԱԿ-ի զինյալների կողմից պարբերաբար իրականացվող ահաբեկչական գործողությունների հետևանքով: 2016 թ. հուլիսին ձախողված զինվորական հեղաշրջման փորձից հետո Թուրքիայի Էկոնոմիկայի նախարարության նախնական հաշվարկներով երկրի տնտեսությունն ավելի քան 100 մլրդ դոլարի վնաս էր կրել[324]:

---

[323] Աղաջանյան Մ., Թուրքիայի ազգային անվտանգությունը. Հայեցակարգերն ու սկզբունքները, էջ 6:

[324] Տե՛ս Գաբրիելյան Հ., Թուրքիայի քաղաքական իրավիճակը 2016 թ. հուլիսին, http://noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=15033

3. Թուրքական տնտեսության կախվածությունը ռուսական էներգակիրներից.

Թուրքիայի «Գաղտնի սահմանադրության» նոր տարբերակում ազգային անվտանգության համակարգում ամրագրվել է նաև էներգետիկ անվտանգության հարցը: Այդ տեսանկյունից կարևորվում է էներգետիկ դիվերսիֆիկացման խնդիրը[325]: Մի կողմից՝ թուրքական իշխանությունները փորձում են բավարարել երկրի զարգացող տնտեսության էներգետիկ պահանջները՝ միաժամանակ ձգտելով ապահովել դրանց աղբյուրների բազմազանությունը, սակայն մյուս կողմից՝ թուրքական տնտեսության զարգացման բարձր տեմպերը տարեկան 8 տոկոսով մեծացնում են էներգակիրների պահանջարկի ծավալները: Մինչդեռ դրա տարեկան միջին ցուցանիշը կազմում է 1,8 տոկոս[326]:

Թուրքական իշխանություններն, իրենց մասնակցությունն ունենալով տարաբնույթ էներգետիկ ծրագրերին, նավթային ու գազային խողովակաշարերի կառուցման նախագծերին, փորձում են դրանք անցկացնել Թուրքիայի տարածքով, որպեսզի եկամուտ ստանան դրանց տրանզիտից և երկիրը վերածեն էներգակիրների փոխադրման հանգույցի, ինչի արդյունքում ոչ թե Թուրքիան կախվածության մեջ կլինի էներգակիրներ ունեցող երկրներից, այլ վերջիններս՝ Անկարայից[327]:

Թուրքիայում անընդհատ խոսվում է էներգակիրների մատակարարման ոլորտում Ռուսաստանից լիարժեք կախվածության անթույլատրելիության մասին: Ձգտելով ազատվել բնական գազի մա-

---

[325] Տե՛ս Гурьев А., “Красная книга”: у Турции новая концепция национальной безопасности, http://www.centrasia.ru., 08.11.2005.

[326] Տե՛ս Алексеева В.А., Трофимова Т. С., Современные экономические проблемы Турции и пути их решения, http://www.rusnauka.com/12.APSN_2007/Economics/20730.doc.htm

[327] Մուրադյան Ի., Ներքաղաքական խնդիրը Թուրքիայում, http://www.lragir.am/index/arm/0/comments/view/29762#sthash.J8Evd4R3.dpuf

տակարարման մեկ երկրի մենաշնորհից՝ Թուրքիան էներգակիրների ստացման այլընտրանքային աղբյուրների որոնման նպատակով ակտիվ քայլեր է ձեռնարկում Ադրբեջանի, Թուրքմենստանի, Իրանի, Եգիպտոսի ու Կատարի ուղղությամբ: Եթե 2002 թ. Թուրքիա գազի ներկրման Ռուսաստանի մասնաբաժինը գերազանցում էր 62 տոկոսը, ապա նշված երկրներից գազի մատակարարման համաձայնագրերի իրացման հետ մեկտեղ, էներգակիրների ներկրման ոլորտում գործող թուրքական «Բոթաշ» ընկերությունը պլանավորում էր այն պակասեցնել մինչև 43 տոկոսի[328]: Էներգետիկ համակարգի դիվերսիֆիկացման ուղղությամբ թուրքական իշխանությունների ձեռնարկած քայլերը դեռևս չեն տալիս ցանկալի արդյունք, քանզի, օրինակ, ադրբեջանական գազի համեմատաբար փոքր ծավալները Թուրքիային հնարավորություն չեն տալիս լիարժեքորեն մրցակցել Ռուսաստանի հետ:

Այսպիսով, չնայած ժողովրդավարացման ու արևմտականացման ուղղությամբ իշխանությունների ձեռնարկած քայլերին, անկայունությամբ աչքի ընկնող Թուրքիայի քաղաքական համակարգում և տնտեսության մեջ չլուծված խնդիրները շարունակում են պահպանվել և ավելի խորանալ՝ վերածվելով երկրի անվտանգության լուրջ սպառնալիքների: Առկա խնդիրների չլուծման գլխավոր պատճառներից մեկը պետք է համարել նաև այն, որ ինչպես երկրի քաղաքական համակարգի, այնպես էլ տնտեսության բարեփոխման հարցերում իշխանությունները ձեռնարկում են կիսաքայլեր, կատարված փոփոխություններն էլ ոչ հետևողական և կոսմետիկ բնույթի են: Ավելին, հաճախ իշխանությունների գործելաոճում նկատելի են արդեն կայացված որոշումներից և սկսված գործողություններից նահանջելու միտումներ:

---

[328] Տե՛ս "Независимая газета", 31. 07. 2003 г.

ԳԼՈՒԽ 2. ԹՈՒՐՔԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՉ ԹՈՒՐՔ ԱԶԳԱՅԻՆ-ԿՐՈՆԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Հայերին և տեղաբնիկ այլ քրիստոնյա ժողովուրդներին ցեղասպանության ենթարկելուց ու բռնի մահմեդականացնելուց հետո էլ Թուրքիան շարունակում է մնալ բազմազգ ու բազմակրոն երկիր:

Արդի Թուրքիան միատարր թուրքական պետություն դարձնելու, թուրքական տարբեր վարչախմբերի կողմից ոչ թուրք էթնոկրոնական խմբերի նկատմամբ կրոնափոխության և ձուլման համատարած ու հետևողական քաղաքականության հիմքը դրվեց 1924 թ. ընդունված առաջին սահմանադրության 88-րդ հոդվածով, որի համաձայն, անկախ կրոնական և ռասայական պատկանելությունից, Թուրքիայի բոլոր քաղաքացիները համարվում էին թուրքեր[329]: Թուրքիայի Հանրապետության արդարադատության նախարար Մահմութ Էսադը 1930 թ. հայտարարեց. «Մենք ապրում ենք ամենաազատ երկրում՝ Թուրքիայում, որտեղ թուրքը այս երկրի միակ տերն ու տիրակալն է: Մարդիկ, ովքեր ծագումով մաքուր թուրքեր չեն, այս երկրում ունեն միայն ստրուկ, ճորտ լինելու իրավունք»[330]: Թուրքական իշխանությունները, փաստորեն, չէին ճանաչում այդ երկիրը բնակեցնող մի քանի տասնյակ ազգերի ու ժողովուրդների գոյության փաստը՝ չխոսելով արդեն նրանց ազգային, լեզվական, մշակութային ու կրոնական իրավունքների մասին: Բացառություն էին կազմում Լոզանի պայմանագրով կրոնական համայնքի իրավունք ստացած հայկական, հունական և հրեական համայնքները՝ այն էլ միայն Ստամբուլում[331]: Չնայած Լոզանի պայմանագրով

---

[329] Տե՛ս Yegen M., “Prospective-Turks” or “Pseudo-Citizens”: Kurds in Turkey. “Middle East Journal”. Vol. 63, No. 4 (2009), p. 597.

[330] Аванесов С., Положение национальных меньшинств в Турции, Ер., 1963, с. 14.

[331] Տե՛ս Ալվրցյան Հ., Ազգայնամոլությունը խարխլվող թուրքական ինքնության համայնապատկերում, «Դրօշակ», թիվ 9, 2009:

ստանձնած պարտավորություններին, թուրքական իշխանությունները հետևողականորեն ոտնահարում էին նաև այս ճանաչված փոքրաթիվ համայնքների իրավունքները, որոնք, Ստամբուլում կենտրոնացած լինելով, որևէ վտանգ չէին ներկայացնում Թուրքիայի համար:

Ազգային փոքրամասնությունների իրավունքների և ազատությունների սահմանափակումները դրսևորվում են նաև քաղաքական գործունեության ոլորտում: Մասնավորապես, «Քաղաքական կուսակցությունների մասին» օրենքով կուսակցություններին արգելում է հանդես գալ ազգային, կրոնական, ռասայական կամ լեզվական տարբերությունների հիման վրա ազգային փոքրամասնությունների գոյության պահանջներով, և դրա հիման վրա դադարեցվել է բազմաթիվ կուսակցությունների գործունեությունը: Նշված օրենքով արգելված է նաև ազգային փոքրամասնությունների լեզուների օգտագործումը քաղաքականության մեջ: Մասնավորապես, արգելվում է, թուրքերենից բացի, այլ լեզուների օգտագործումը կուսակցության կանոնադրության մեջ և ծրագրերում, համաժողովների, հանդիպումների, քարոզարշավի ժամանակ, նկարներում, պաստառներում, ձայնային և տեսաերիզներում, հայտարարություններում: Ավելին, «Ընտրությունների ու ընտրողների գրանցման հիմնարար դրույթների մասին» օրենքի համաձայն, արգելվում է, թուրքերենից բացի, այլ լեզուների օգտագործումը հեռուստատեսությամբ կամ ռադիոյով տարածվող քարոզարշավի ժամանակ[332]: Այս վերջին դրույթները միայն վերջերս են մասնակիորեն բարելավվել՝ քրդերի հետ կապված:

Թուրքական բանակում զինվորների ինքնասպանության բազմաթիվ դեպքերն, ի վերջո, դարձան խորհրդարանի քննարկման

[332] Տե՛ս Թուրքիա-ԵՄ-Հայաստան. մարտահրավերները և հնարավորությունները, էջ 45:

առարկա: Խորհրդարանի Մարդու իրավունքների հանձնաժողովում 2012 թ. վերջին այդ հարցի շուրջ լսումներ կազմակերպվեցին: Հանձնաժողովի նախագահը հայտարարեց, որ նախորդ տասը տարիների ընթացքում թուրքական բանակում ինքնասպանություն են գործել 934 զինվոր, մինչդեռ նույն ժամանակահատվածում ՔԱԿ-ի հետ զինված բախումների ժամանակ զոհվել է 818 զինվոր: «Զորակոչվածների իրավունքների համար նախաձեռնություն» կազմակերպության ներկայացուցիչն էլ նշեց, որ 2012 թ. ինքնասպանություն գործած 32 զինվորների դեպքերի մեծամասնությունը կատարվել է լուրջ կասկածներ հարուցող հանգամանքներում:

Իրավապաշտպան կազմակերպությունները անհիմն համարեցին իշխանությունների այն պնդումները, թե, իբր, թուրքական բանակում զինվորներն ինքնասպանություն են գործում՝ անձնական կամ ընտանեկան պատճառներից ելնելով: Նրանք վստահ են, որ այս շինծու արդարացումներով իշխանությունները փորձում են քողարկել կասկածելի հանգամանքներում ինքնասպանություն գործած զինվորների մահվան իրական պատճառները: Քրդամետ ԽԺԿ-ի պատգամավորն էլ բացահայտ հայտարարեց, որ, իբր, թե ինքնասպանություն գործած զինվորների մեծամասնությունը քրդեր, ալևիներ և հայեր են, որոնք ատելության հաշվեհարդարի զոհ են դառնում թուրքական բանակում[333]:

Ստեղծված պայմաններում Թուրքիայում բնակվող ոչ թուրք ազգային ու կրոնական խմբերի՝ իրենց ինքնությունը պահպանելուն ուղղված պայքարն ընդունում էր նորանոր ձևեր՝ ներքին անհնազանդությունից ու համառ դիմադրությունից մինչև զինված պայքար:

---

[333] Տե՛ս Գայապալ Ֆ., Թրքական բանակի հարյուրաւոր զոհերը անձնասպանութի՞ւն գործած, թէ՞ սպաննուած են. «Ատելության ոճիրներ»-ու կասկած, որովհետև զոհերուն մեծամասնությունը հայ, քյուրտ և ալևի է,
http://www.aztagdaily.com/archives/103607

2.1. Քաղաքականությունը ոչ քրիստոնյա ազգային-կրոնական խմբերի նկատմամբ

2.1.1. Քաղաքականությունը քրդերի նկատմամբ

Թուրքական իշխանությունների կողմից իրագործված ցեղասպանության և բռնի իսլամացման քաղաքականության հետևանքով հայ բնակչությունը վերացվեց իր հայրենիքից՝ Արևմտյան Հայաստանից, որտեղ ժողովրդագրական առումով գերակշիռ դիրք ստացան քրդերը: Հայերին բնաջնջելու գործում թուրքական իշխանություններին օժանդակելով և մասնակցելով հանրապետության կերտմանն ուղղված պատերազմներին՝ քրդերը մեծ հույսեր ունեին, որ թուրքերի հետ միասին հիմնելու են երկլեզու ու երկազգ պետություն, դառնալու են արևելյան ու հարավ-արևելյան նահանգների տերն ու տնօրենը: Սակայն նրանց հույսերը ոչ միայն չարդարացան և չէին կարող արդարանալ, քանի որ հանրապետության հռչակումից հետո քեմալական վարչակարգը չթրքացած քրդերին համարում էր երկրի ամբողջականությունը վտանգող սպառնալիք:

Քրդերը վերածվեցին թուրքական իշխանությունների այլատյաց քաղաքականության նոր թիրախի՝ ենթարկվելով բռնությունների ու կոտորածների: Քեմալականները քրդերի նկատմամբ որդեգրեցին «բոլոր մահմեդականներին թուրքերի վերափոխելու» պանթուրքիստական քաղաքականությունը[334]: Չնայած քրդերը կազմում էին արևելյան նահանգների բնակչության մեծամասնությունը, նրանց զրկեցին ամեն մի իրավունքից, նրանց համար ոչ միայն չբացվեցին քրդական դպրոցներ, այլև՝ թուրքական դպրոցներում էլ նվազագույն չափով անգամ տեղ չէին տալիս քրդերենի դասավանդմանը: Պետությունն ընդունում էր հատուկ օրենքներ, որոնց հիման վրա

[334] Տե՛ս Аванесов С., նշվ. աշխ., էջ 49:

քրդաբնակ տարածքներից մարդկանց գյուղերով բռնի տեղափոխում էին Թուրքիայի արևմտյան հատվածներ, որպեսզի նրանք ավելի հեշտությամբ ձուլվեին: Արգելվում էր նույնիսկ խոսել քրդերեն ու երեխաներին անվանակոչել քրդական անուններով: Իշխանությունները փորձում էին ապացուցել, որ քրդերը ծագումով թուրք են, որոնք կորցրել են ազգային դիմագիծը, լեզուն, ազգային գիտակցությունը և այդ պատճառով է, որ իրենք իրենց քուրդ են «զգում»: Սրանից ելնելով՝ քրդերի ձուլման քաղաքականությունը ներկայացվում էր՝ որպես «բարեհոգություն» նրանց նկատմամբ[335]: Քրդաբնակ շրջաններում թուրքական կառավարության վարած ճնշումների և ազգային խտրականության քաղաքականությանը քրդերը պատասխանեցին իրենց ազգային իրավունքների համար զինված պայքարով: 1925 թ. բռնկվեց շեյխ Սաիդի գլխավորած քրդական ապստամբությունը, 1927-1931 թթ. հուժկու ապստամբական շարժում ծավալեցին Արարատի շրջանի քրդերը: Քրդական ապստամբական շարժումներին քեմալական վարչակարգը պատասխանում էր ռազմական ուժով: Այդ շարժումները արյան մեջ խեղդելուն հաջորդում էր արևելյան նահանգներից քրդերի զանգվածային տեղահանության քաղաքականությունը[336]: Զարդերի, ձուլման ու բռնի տեղահանության միջոցով թուրքական իշխանությունները հայերից, ասորիներից ու քրդերից դատարկված շրջաններում փորձում էին թուրքեր վերաբնակեցնել և արևելյան ու հարավ-արևելյան նահանգներում իրենց համար ցանկալի ժողովրդագրական պատկեր ստանալ, սակայն այդ ուղղությամբ ձեռնարկված միջոցառումները միայն մասնակի հաջողություն ունեցան[337]:

---

[335] Տե՛ս Գալուստյան Հ., նշվ. աշխ., էջ 25:
[336] Տե՛ս Yavuz H., Özcan N., The Kurdish Question and Turkey's Justice and Development Party, “Middle East Policy”, Vol. 13, No. 1 (2006), p. 105.
[337] Տե՛ս Գալուստյան Հ., նշվ. աշխ., էջ 27:

Շեյխ Սաիդի ապստամբության ժամանակ քրդերը չկարողացան միավորել իրենց բոլոր ուժերը, իսկ ապստամբությունը մեծ դաժանությամբ ճնշվեց, առաջնորդն ու ակտիվ մասնակիցները դատապարտվեցին մահվան: 1930 թ. Արարատի ու, հատկապես, 1937-38 թթ. Դերսիմի ապստամբությունը Շեյխ Սաիդի ապստամբության համեմատ ավելի զանգվածային էր և համախմբեց քրդերին ազգային-ազատագրական գաղափարի շուրջ[338]:

1936 թ. քեմալական վարչակարգը որոշում է վերջնականապես լուծել Դերսիմի խնդիրը: Նրա բնակչությունը նախկինի նման շարունակում էր ապրել կիսանկախ պայմաններում, ինչը բացարձակապես ընդունելի չէր կառավարության համար: Նախ, 1937 թ. Դերսիմի նահանգը վերածվում է Թունջելիի մարզի, որի տարածքը բավականին փոքրանում է: Այս քայլով փորձ էր արվում, մինչև դերսիմցիների նկատմամբ հիմնական գործողություններին անցնելը, թուլացնելու նրանց դիրքերը, քանի որ վարչական նորաստեղծ շրջանն այսպես ունենում էր ավելի փոքրաթիվ բնակչություն[339]:

Դրանից հետո կառավարական ուժերը Դերսիմի ցեղախմբերի բարձրացրած ապստամբությունը ճնշելու կեղծ պատրվակով դիմում են ռազմական ուժի, սակայն առաջին ուժերը ետ են շպրտվում դերսիմցիների կողմից: Դերսիմցիները մերժում են իրենց առաջնորդներին հանձնելու պահանջը, ինչից հետո սկսվում է ավելի մեծ ռազմարշավ, որն ուղեկցվում է խաղաղ բնակչության նկատմամբ դաժան բռնություններով: 1938 թ. սկզբին, սաստիկ ցրտի պատճառով չկարողանալով շարունակել ռազմական գործողությունները, բանակի հրամանատարությունը դերսիմցիներին զինադադար է առաջարկում՝ խոստանալով ցեղախմբերին խաղաղություն, իսկ

---

[338] Տե՛ս Watts N., Relocating Dersim: Turkish State-Building and Kurdish Resistance, 1931-1938. “New Perspectives on Turkey ”, Vol. 23, No. 1 (Fall 2000), pp. 5-30.

[339] Հարությունյան Վ., նշվ. աշխ., էջ 80:

վնասված տարածքների համար՝ փոխհատուցում, եթե ապստամբները հնազանդվեն: Խոստումներին հավատալով՝ ապստամբության առաջնորդ Սաիդ Ռիզան իր հավատարիմ 50 մարդկանցով անցնում է Երզնկա, սակայն այնտեղ նրանց ձերբակալում և մահապատժի են ենթարկում[340]:

Ապստամբությունը դրանից հետո էլ չի դադարում և իշխանությունները նույնիսկ դիմում են օդուժի օգնությանը, ինքնաթիռներով ռմբակոծելով Դերսիմի լեռներում թաքնված ապստամբների դիրքերը, ինչի հետևանքով ապստամբությունն, ի վերջո, ճնշվում է: Թեև թուրքական օդային ուժերը կիրառվել էին նաև Շեյխ Սաիդի և Արարատի ապստամբությունների ճնշման ժամանակ, սակայն դրանց համեմատ Դերսիմում օդուժի կիրառությունը անհամեմատ մեծ էր: Դերսիմցիների դիրքերը ռմբակոծող օդաչուներից մեկն էլ Աթաթուրքի հոգեդուստր Սաբիհա Գյոկչենն էր՝ թուրքական ռազմական ուժերում առաջին կին օդաչուն: Դերսիմի ապստամբության ճնշման հետևանքով մարդկային կորուստները կազմեցին շուրջ 40-70 հազար[341]:

ԺՀԿ-ի մենիշխանությունից հետո ընտրություններում հաղթած ԴԿ-ը քրդերին սիրաշահելու նպատակով խիստ քննադատության էր ենթարկում ԺՀԿ-ին Դերսիմում և քրդաբնակ այլ շրջաններում քրդերի դեմ գործադրած անմարդկային բռնությունների համար: Սակայն միջկուսակցական պայքարի այդ ձևը երկար չտևեց, քանի որ կարող էր ազգայնական լայն շրջանակների համակրությունը կորցնելու պատճառ դառնալ: Քարոզչական քայլերից բացի, ԴԿ-ի ազգային քաղաքականությունը ոչնչով չէր տարբերվում այդ հարցում ԺՀԿ-ի քաղաքական գծից: Քրդերի իրավազուրկ վիճակը

---

[340] Տե՛ս Bruinessen M., The suppression of the Dersim rebellion in Turkey (1937-1938), http:/www.let.uu.nl/martin.vanbruinessen/personal/publications/Dersim_rebellion.pdf

[341] Տե՛ս Гасратян М., Курды в Турции в новейшее время, Ер., 1990, с. 198.

պահպանվեց նույնությամբ. չվերացավ ազգային ճնշումը, չդադարեցին հալածանքներն ազգային իրավունքների համար պայքարողների դեմ[342]: Արևելյան նահանգների դպրոցներն իրենց ուսուցման մակարդակով զիջում էին արևմտյան նահանգների դպրոցներին՝ որակյալ ուսուցիչների, գրադարանների բացակայության կամ անբավարարության, ինչպես նաև գրքից ու գրենական տարբեր պիտույքներից աշակերտների զրկված լինելու պատճառով[343]:

1960 թ. ռազմական հեղաշրջումը զինվորականներն օգտագործեցին քրդերին ևս մեկ հարված հասցնելու համար: Հեղաշրջմանը հաջորդած տարիներին ձերբակալվեց 484 քուրդ, իսկ 55 ցեղապետեր արտաքսվեցին երկրի արևմտյան հատվածներ: Ավելին, վարչակարգը որոշում կայացրեց հայկական գյուղերի՝ քրդերենի վերածված անվանումները կրկնակի անվանափոխել արդեն թուրքերենի[344]:

1960-70-ական թթ. Թուրքիայում դիտվում է «ձախ» կողմնորոշման քաղաքական ուժերի գործունեության աշխուժացում: Այս շարժումը հայտնի պատճառներով ավելի պարարտ հող գտավ քուրդ մտավորականության և ուսանողության շրջանում: Ստեղծվեցին քրդական մի շարք կուսակցություններ և կազմակերպություններ, որոնք իրենց գործունեության հիմքում դրել էին ժողովրդավարության, սոցիալական ապահովության, գործազրկության և իրավահավասարության հետ կապված օրակարգային հարցեր: 1980 թ. սեպտեմբերի 12-ի ռազմական հեղաշրջումը նպատակ ուներ ոչ միայն քաղաքական դաշտը մաքրել «ձախ» ու «աջ» ընդդիմադիր շարժումներից, այլև՝ «անընդունելի» բոլոր քաղաքական տարրերից, ինչն ավելի արագացրեց քրդական քաղաքական ինքնության ձևավոր-

---

342 Տե՛ս Գալուստյան Հ., նշվ. աշխ., էջ 41:
343 Տե՛ս նույն տեղում, էջ 58:
344 Տե՛ս Շաքարյան Ա., նշվ. աշխ., էջ 47-48:

ման գործընթացը[345]: 1981 թ. 123 քուրդ դատապարտվեց մահվան՝ խռովություններ հրահրելու, անջատողական քարոզչություն վարելու և ազգային անվտանգության 30 աշխատակիցների սպանության մեղադրանքներով[346]: 1987 թ. քրդաբնակ տասը նահանգներում՝ Թունջելի (Դերսիմ), Բինգյոլ, Դիարբեքիր (Տիգրանակերտ), Մարդին, Բաթման (Սասուն), Բիթլիս (Բաղեշ), Սիիրտ (Սղերդ), Շիրնաք, Վան և Հաքյարի հայտարարվեց արտակարգ դրություն: Թուրքական բանակի կողմից 1984-87 թթ. ընթացքում ամբողջությամբ կամ մասնակիորեն դատարկվեց 2,400 գյուղերի և 1,500 գյուղակների բնակչությունը[347]: Թուրքական բանակը ապստամբությունը ճնշելու պատրվակով հաշվեհարդար էր տեսնում խաղաղ բնակչության հետ. հրկիզում ու ավերում էր գյուղերը, կոտորում էր բնակիչներին: Թուրքական հատուկ ջոկատայինները լեռներում ապաստանած քուրդ ապստամբների դեմ պայքարելու նպատակով հատուկ մարտական պատրաստություն տեսած ոստիկաններ են, որոնք ապաստանած փախստականներին հայտնաբերելու պատրվակով մտնում են նաև գյուղերը և բռնություններ գործադրում բնակիչների նկատմամբ[348]: 1985 թ. Թուրքիայի նախագահ Թ. Օզալը, որպես հակամիջոց քուրդ պարտիզանների դեմ ներդրեց «գյուղական պահապանների» համակարգը (1993 թ. արդեն շուրջ 35000 անդամ), որոնք, հիմնականում, կազմված էին քրդերից և կոչված էին պաշտպանելու գյուղական խաղաղ բնակչությանը պարտիզաններից: Միջքրդական բախումներն ահռելի չափերի հասան: ՔԱԿ-ը հայտարարեց, որ յուրաքանչյուր ընտանիք, որը գործ է ունեցել պետության հետ, ենթակա է ոչն-

---

[345] Տե՛ս Շաքարյան Ա., նշվ. աշխ., էջ էջ 49-50:

[346] Տե՛ս Вертяев К., Курдский вопрос в политике Турции, (конец XX – начало XXI века), с. 34.

[347] Տե՛ս Forced Evictions: Violations of Human Rights, “Global Survey on Forced Evictions”. No. 7, COHRE, September, 1998, pp. 65-69.

[348] Տե՛ս Գալուստյան Հ., նշվ. աշխ., էջ 107:

չացման: Պարտիզանները մեկը մյուսի հետևից այրում էին քրդական գյուղեր, կրակի մատնում սեփական ժողովրդին՝ իրենց գործողություններն արդարացնելով գյուղական պահապանների դեմ պայքարով[349]:

Եթե մինչև 80-ականների կեսերը ԱՇԿ-ի պայքարը բոլոր «ձախերի» դեմ էր, ապա նրանց թուլացումից հետո ծայրահեղ ազգայնականների թիրախը դարձավ ակտիվացող քրդական ազատագրական շարժումը՝ ի դեմ ՔԱԿ-ն և նրա առաջնորդ Ա. Օջալանի: Ուստի, միանգամայն տրամաբանական պետք է համարել այն, որ կառավարությունը պետք է սկսեր օգտագործել «Գորշ գայլերին» ՔԱԿ-ի դեմ: Բացի այդ ամենևին էլ պատահական չէ, որ հատուկ ջոկատները, հիմնականում, կազմված էին գորշգայլականներից, և նրանց ներկայությունը բանակում համարվում էր «բնական»[350]:

1995 թ. թուրքական բանակը և ոստիկանությունը իրականացրին մի քանի մեծածավալ գործողություն քրդական մարտական ջոկատների դեմ, որոնց ընթացքում զոհվեց շուրջ 2,5 հազար քուրդ զինյալ, ինչից հետո քրդերի պարտիզանական ու ահաբեկչական ակտիվությունը նվազեց: 1999 թ. գարնանը Թուրքիայի հատուկ ծառայություններին հաջողվեց ձերբակալել ՔԱԿ-ի առաջնորդ Ա. Օջալանին, որին տեղափոխեցին Թուրքիա և դատապարտեցին մահվան: Սակայն ԵՄ-ի ճնշման ներքո դատավճիռը փոխարինվեց ցման բանտարկությամբ: Այժմ Ա. Օջալանը գտնվում է Մարմարա ծովի Իմրալի կղզու բանտում[351]: Քուրդ առաջնորդի բանտարկման պահին թուրքական ստորաբաժանումների և քրդերի միջև բախումների հետևանքով արդեն զոհերի թիվը կազմում էր 30 հազար մարդ, որոնց մեծամասնությունը քաղաքացիական անձինք էին, ավերվել

---

[349] Տե՛ս Մանուկյան Տ., նշվ. աշխ., էջ 193:
[350] Ավագյան Ա., Պանթուրքական երազանք կամ «Գորշ գայլեր», էջ 74:
[351] Հարությունյան Ա., նշվ. աշխ., էջ 179:

էր ավելի քան 3 հազար գյուղ, 2,5 մլն. քրդեր ստիպված էին հեռանալ իրենց բնակավայրերից և գաղթել հարևան շրջաններ կամ տեղափոխվել հարևան երկրներ:

Հետևելով իր առաջնորդի հրամանին՝ 1999 թ. սեպտեմբերին ՔԱԿ-ն իր բոլոր ստորաբաժանումները տեղափոխեց Հյուսիսային Իրաք՝ Իրաքյան Քուրդիստան: Սակայն, ինչպես և սպասվում էր, Անկարայի կողմից չհետևեցին համարժեք քայլեր: Քրդերին մշակութային ինքնավարության տրամադրման, 15-միլիոնանոց «ազգային փոքրամասնության» նվազագույն իրավունքներն ամրագրող երկրի սահմանադրական փոփոխությունների, ազգային դպրոցների ու հեռուստատեսության ստեղծման մասին բոլոր խոսակցությունները շարունակվեցին ընդհուպ մինչև 1999 թ. դեկտեմբերը, երբ Լյուքսեմբուրգում որոշվում էր Եվրոմիությանը Թուրքիայի անդամակցության թեկնածության հարցը: Դրական որոշման կայացումից հետո այս հարցի հետ կապված բոլոր բանավեճերը սահուն կերպով դադարեցին: Սպասելով որոշակի ժամանակահատված՝ մինչև ուշադրությունը քրդերի նկատմամբ կթուլանա, Թուրքիան ձեռնամուխ եղավ ակտիվ գործողությունների, ինչը նույնպես պատասխան գործողություններ հրահրեց թուրքական քրդերի կողմից: Չնայած այն բանին, որ 1999 թ. սեպտեմբերին ՔԱԿ-ն զինադադար հայտարարեց Թուրքիայի դեմ մղվող մարտական գործողություններում, 2001 թ. սկզբներին նրա ղեկավարությունը կոչով դիմեց քրդերին՝ արտահերթ զորահավաք անցկացնելու մասին[352]:

ՔԱԿ-ի առաջնորդ Ա. Օջալանի ձերբակալումից որոշ ժամանակ անց Թուրքիայում իշխանության եկան չափավոր իսլամիստները: Քանի որ ԱԶԿ-ն որդեգրել էր ԵՄ-ին անդամակցելու քաղաքա-

---

[352] Տե՛ս Спиридонова Н., Курды снова готовятся к войне: Впервые после ареста их лидера Оджалана обьявлена мобилизация среди курдской молодежи Турции. “Независимое военное обозрение”, 18.01. 2001.

կան կուրս, քրդերը ստացան մշակութային որոշ իրավունքներ՝ ներառյալ սեփական լեզվով դասընթացներ ունենալը ու քրդական անուններ կրելը: Ավելին, Թուրքիայի խորհրդարանում ընդգրկվեց քրդերի շահերն ու իրավունքները ներկայացնող կուսակցություն՝ ԺԺԿ-ը, ինչը որոշակիորեն թուլացրեց քաղաքական լարվածությունը երկրի քրդաբնակ շրջաններում[353]: Այս քայլերով ԱԶԿ-ն նպատակ էր հետապնդում՝ ստանալ քրդաբնակ շրջանների բնակչության քվեները և թուլացնել ՔԱԿ-ի ազդեցությունն այդ շրջաններում: Սակայն 2009 թ. վերջին փակվեց քրդական խորհրդարանական կուսակցությունը՝ նրանց որոշ ղեկավարների կողմից ՔԱԿ-ի վերաբերյալ դրվատական երանգներ պարունակող ելույթների պատճառով: 2010 թ. դեկտեմբերին Թուրքիայի քրդերը նախաձեռնեցին քննարկումներ՝ երկլեզու համակարգի անցման վերաբերյալ, ինչը Թուրքիայի բարձրագույն զինվորականության կողմից որակվեց՝ որպես երկիրը մասնատելու փորձ[354]:

ԱԶԿ-ի հիմնական ընդդիմադիր ուժը՝ ԺՀԿ-ն, քրդերին մշակութային իրավունքներ, իսկ իսլամին քաղաքական ասպարեզ տրամադրելը սպառնալիք համարեց Ք. Աթաթուրքի կողմից հաստատված աշխարհիկությանը, ազգային ու հանրապետական արժեքներին և Թուրքիայի ազգային շահերին[355]:

2009 թ. ՔԱԿ-ի որոշ անդամների նույնիսկ թույլ տրվեց Իրաքյան Քուրդիստանից վերադառնալ Թուրքիա, որոնց քրդերը դիմավորում էին՝ ինչպես հերոսների: Իշխանությունների այս որոշումը ընդդիմադիր ԺՀԿ-ի և ԱՇԿ-ի կողմից որակվեց որպես ահաբեկիչներին աջակցելու քայլ: Այս քննադատություններից հետո իշխանությունը-

---

[353] Տե՛ս Вертяев К.В., Вопросы демократизации и курдский вопрос в Турции в начале XXI века, с. 153-165.
[354] Տե՛ս Շաքարյան Ա., նշվ. աշխ., էջ 51-52:
[355] Տե՛ս նույն տեղում, էջ 87:

ները կասեցրին «Քրդական նախաձեռնության» իրենց ծրագիրը: Վերադարձից մի քանի ամիս անց՝ 2010 թ., ՔԱԿ-ի շատ անդամներ ձերբակալվեցին, մյուսները ստիպված էին Թուրքիայից արագ հեռանալ Իրաքյան Քուրդիստան[356]: ՔԱԿ-ին աջակցելու մեղադրանքներով հետևեցին քուրդ գործիչների, քաղաքապետերի, իրավապաշտպանների և լրագրողների զանգվածային ձերբակալություններ: 2011 թ. ձերբակալվածների թիվը հասավ 8 հազարի, իսկ շուրջ 4 հազար մարդ առանց դատարանի վճռի մեկից երկու տարի կալանքի տակ էր գտնվում[357]:

Իշխանությունների քաղաքականության փոփոխության հետևանքով քրդական ԽԺԿ-ը չմասնակցեց խորհրդարանում սահմանադրական փոփոխությունների փաթեթի քննարկմանը և իր ընտրազանգվածին կոչ արեց բոյկոտել 2010 թ. սահմանադրական հանրաքվեն: Քրդական ուժերը դիմեցին պայքարի քաղաքացիական անհնազանդության ձևերին: Քանի որ 2012 թ. Քուրդիստանի համայնքների ընկերակցության ձերբակալված 63 անդամներին թույլ չտրվեց դատարանում վկայություն տալ քրդերեն լեզվով, նրանք հացադուլ հայտարարեցին, ինչին միացան հարյուրավոր մարդիկ, որոնք պահանջում էին բարելավել Ա. Օջալանի պայմանները բանտում, թույլ տալ կրթություն ստանալ և դատարանում հանդես գալ քրդերենով: Այս շարժման ճնշման ներքո իշխանությունները ստիպված եղան գնալ որոշ զիջումների և հայտարարեցին դատավարության ընթացքում քրդերենի կիրառման հնարավորության մասին: Դրանից անմիջապես հետո Ա. Օջալանը բանտից իր կողմնակիցներին կոչ արեց դադարեցնել հացադուլը: 2012 թ. դեկտեմբերին Թուր-

---

[356] Տե՛ս Candar C., “Leaving the Mountain”: How may the PKK Lay Down Arms? Freeing the Kurdish Question from Violence. Istanbul: TESEV, 2012, http://www.tesev.org.tr/en/ publications/1/1.

[357] Տե՛ս Backgrounder on the Union of Communities in Kurdistan, KCK // Democratic Turkey Forum, http://www.tuerkeiforum.net

քիայի վարչապետ Ռ. Էրդողանը հաստատեց, որ Թուրքիայի ԱԷԾ-ը Քրդական հարցի լուծման շուրջ բանակցություններ է վարում 14 տարի բանտում գտնվող ՔԱԿ-ի առաջնորդի հետ: 2013 թ. հունվարին Ա. Օջալանին բանտում այցելեցին քրդական ԽԺԿ-ի անդամները, ինչը հույսեր արթնացրեց, որ ավելի քան 35 հազար մարդկանց կյանքեր խլած այդ հակամարտությունը, ի վերջո, կկարգավորվի:

Թեև բանտարկության ընթացքում Ա. Օջալանի հեղինակությունը քրդերի և ՔԱԿ-ի անդամների շրջանում շարունակում է բարձր մնալ, այդուհանդերձ, ՔԱԿ-ի հրամանատարները ԱԶԿ-ի կողմից Քրդական հարցի լուծման նախաձեռնություններին կասկածամտությամբ են վերաբերվում: 2011 թ. Օջալանի խաղաղության կոչերի հնչեցումից հետո Դիարբեքիրում ՔԱԿ-ի զինյալների և թուրքական անվտանգության ուժերի միջև ամենազանգվածային բախումը տեղի ունեցավ: 2013 թ. մարտի 21-ին Նովրուզի տոնակատարության ժամանակ քրդերի առաջնորդը կոչ արեց իր կողմնակիցներին վայր դնել զենքերը: Թեև հաստատվեց զինադադարը, սակայն ակնհայտ է, որ այն երկար տևել չէր կարող, քանզի քրդերի գերակշիռ մեծամասնությունը Քրդական հարցի լուծումը տեսնում է զինված պայքարի միջոցով, ինչի վկայությունն են համարում ՔԱԿ-ի զինյալների հեռացման շուրջ թուրքական իշխանությունների սկսած բանակցությունները:

Քրդական հարցի լուծումը բարդանում է նաև նրանով, որ քրդերի շրջանում նույնպես միասնական մոտեցում չկա Քրդական հարցի լուծման ուղիների հարցում: Քրդական ԽԺԿ-ի գործիչները Քրդական հարցի լուծումը տեսնում են Թուրքիայի ժողովրդավարացման և նրա տարածքում քրդական ինքնավարության ստեղծման ձևով, իսկ ՔԱԿ-ի ավելի արմատական գործիչները կարծում են, որ քուրդ ժողովուրդը ազատ ինքնորոշման միջոցով պետք է որոշի, թե ինչպիսի Քուրդիստան է ուզում՝ Թուրքիայի տարածքում մշակութային ինքնավարություն, թե՞ այլ երկրի կազմում դաշնային սուբյեկտ կամ,

զուցե, ինքնիշխան պետությու՞ն: Քրդերի շրջանում միասնություն չկա նաև ապագա Քուրդիստանի ինքնավարության կամ անկախ պետության սահմանների հարցում[358]:

Ակնհայտ է, որ կառավարությունը, թեև գնացել էր ՔԱԿ-ի հետ բանակցությունների, սակայն պատրաստ չէր բավարարելու Քուրդիստանի՝ քաղաքական ինքնավարություն հռչակելու կամ Ա. Օջալանին ազատ արձակելու հետ կապված քրդերի պահանջները, ինչը նշանակում էր, որ բանակցությունները չէին հանգեցնելու Քրդական հարցի լուծմանը և որոշ ժամանակ անց՝ ռեսուրսների վերականգնելուց հետո, ՔԱԿ-ի ահաբեկչական գործողությունները վերսկսվելու էին: Հետագայում ինքը՝ Օջալանը, հայտարարեց, որ, եթե թուրքական կառավարությունը չընդունի քրդերի պահանջները, իր կոչով 50 հազար նոր զինյալներ կանդամագրվեն ՔԱԿ-ին:

ՔԱԿ-ի հետ բանակցությունները տապալվեցին և թուրքական իշխանությունները Քրդական հարցում վերադարձան իրենց կոշտ գործելաոճին: 2016 թ. նոյեմբերի սկզբին ահաբեկչության դեմ պայքարի շրջանակում ձերբակալվեցին Թուրքիայի խորհրդարանի քրդամետ ԽԺԿ-ի համանախագահները, ինչպես նաև կուսակցության ևս ինը պատգամավոր, որոնք հիմնականում ընտրվել էին Թուրքիայի հարավ-արևելյան շրջաններից: Հատկանշական է, որ ձերբակալված պատգամավորները պատգամավորական անձեռնմխելիությունից զրկվեցին միայն ձերբակալությունից հետո, ինչը թուրքական օրենսդրության կոպիտ խախտում էր: Ժողովուրդների դեմոկրատական կուսակցության պատգամավորները մեղադրվում են Թուրքիայում ահաբեկչական կառույց համարվող ՔԱԿ-ի օգտին քարոզչություն իրականացնելու մեջ: Եվրոպական կառույցները և եվրոպական մի շարք երկրների բարձրաստիճան պաշտոնատար անձինք անմիջապես

[358] Տե՛ս Турция: новая роль в современном мире, с. 23-24.

դատապարտեցին թուրքական իշխանությունների կողմից քուրդ գործիչների դեմ իրականացված քաղաքական հետապնդումները:

Ի պատասխան թուրքական իշխանությունների այս քայլերի, Դիարբեքիրում պայթեցվեց Անվտանգության վարչության շենքը, ինչի հետևանքով զոհվեց ութ և վիրավորվեց ավելի քան հարյուր մարդ: Կառավարության տարածած հաղորդագրության համաձայն, այդ ահաբեկչական գործողությունն իրականացվել է ՔԱԿ-ի կողմից[359]: Միանգամայն կանխատեսելի է, որ ՔԱԿ-ի պատասխան գործողություններն այսքանով չեն ավարտվի և կլինեն շարունակելի:

Քրդերի նկատմամբ թուրքական իշխանությունների քաղաքականության ենթագլուխը կցանկանայինք ավարտել Հայոց ցեղասպանության նկատմամբ քրդական շարժման առաջնորդների արտահայտած դիրքորոշումների և թուրքական պետության կողմից հայերի ու քրդերի խախտված իրավունքների վերականգնման գործընթացում հայ-քրդական հնարավոր համագործակցության հարցի քննարկումով:

Ա. Օջալանի՝ հայերին ուղղված նամակը հրապարակվեց 2014 թ. հունվարի 30-ին: Այն ոչ թե ներողության փորձ էր, այլ Ցեղասպանության 100-րդ տարելիցի նախօրեին հայերին ուղղված հանդարտության կոչ և նախազգուշացում: Նա 1915 թ. տեղի ունեցածը բնութագրում է՝ որպես նույն տարածաշրջանում տեղի ունեցած բազմաթիվ ցեղասպանություններից մեկը: Թուրքիային և աշխարհին կոչ է անում առերեսվել իրականության հետ: Սա նամակի այն մասն է, որ ունելիով դուրս է քաշվել, կտրվել ընդհանուր բովանդակությունից և խանդավառ մեկնաբանություններով տեղ գտել հայաստանյան և Սփյուռքի մամուլում:

Ընդունելով Հայոց ցեղասպանության փաստը՝ Ա. Օջալանը նշում է, որ դա միակ ողբերգությունը չի եղել և Թուրքիայի հայերին

---

[359] Տե՛ս Գաբրիելյան Հ., Թուրքիայի ներքաղաքական իրավիճակը նոյեմբերին, http://noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=15270

խորհուրդ է տալիս չոգևորվել Սփյուռքի հայության կողմից Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման պայքարով:

Թուրքական բանտի «կալանավորը», չգիտես ինչու, խուսափում է արտահայտվել 1915-ի պատճառահետևանքային կապերի մասին, նույնիսկ բառ չի ասում հայերի ցեղասպանության իրագործման մեջ քրդերի մասնակցության, «համիդիե» ջոկատների, հայերի «լքյալ» գույքին քրդերի տիրանալու, առևանգված, դաջված և բռնի քրդուհի դարձված հայ երեխաների մասին:

Քուրդ գործիչը նաև այն միտքն է զարգացնում, որ Թուրքիայի արևելյան նահանգները ոչ թե միայն հայերի, այլ բոլոր ժողովուրդների օրրանն է, և այնտեղ բոլորի համար էլ տեղ կգտնվի:

Վերոհիշյալ դատողություններից դժվար չէ հասկանալ, որ ՔԱԿ-ի առաջնորդը, լինելով թուրքական պետության գերին, փաստորեն նրա առաջադրանքն է կատարում: Չի բացառվում, որ Օջալանի սույն «ուղերձը» ՔԱԿ-ի և թուրքական իշխանությունների միջև ընթացած բանակցությունների ժամանակ ձեռք բերված պայմանավորվածությունների արդյունք է[360]:

Օջալանի նամակից կարճ ժամանակ անց, Քրդական համայնքների միության համանախագահ Բ. Հոզաթը, փաստորեն, կրկնելով Օջալանի հնչեցրած միտքը, որ Թուրքիայում խաղաղության ու ժողովրդավարության հասնելու խոչընդոտ համարեց ԱՄՆ-ում հայկական, հունական ու հրեական լոբբիների գործունեությունը: Եթե Օջալանի հայտարարությունը կարելի է համարել թուրքական իշխանությունների պարտադրանքով արված քայլ, ապա ՔԱԿ-ի կառույց համարվող Քրդական համայնքների միության ազատության մեջ գտնվող համանախագահի կողմից դրա կրկնությունն արդեն խոսում է տվյալ հարցում քրդական կառույցների որոշակի դիրքո-

[360] Տե՛ս Օզանյան Ա., Ի՞նչ ասաց Օջալանը, http://civilnet.am/voices-alin-ozinian

ռոշման մասին[361]: Քրդերը, փաստորեն, մտավախություն ունեն երրորդ ուժի՝ հայերի, հույների և հրեաների կողմից իրենց ընդդեմ թուրքական իշխանությունների օգտագործված լինելու կամ էլ թուրքական իշխանություններն են նրանց վախեցնում այդ՝ երրորդ ուժի կողմից նրանց օգտագործվելու հեռանկարով:

ՔԱԿ-ի առաջնորդի և Քուրդիստանի համայնքների միության գործադիր խորհրդի համանախագահի կողմից արված այս հայտարարությունները հայերի մեջ իրավամբ լուրջ դժգոհություն հարուցեցին և կասկածներ առաջացան քուրդ և հայ ժողովուրդների բարեկամության կամ համագործակցության հետ կապված: Կարծում ենք, որ երկու ժողովուրդների բարեկամության ու համագործակցության մասին խոսելուց առաջ քրդական կազմակերպությունների առաջնորդները պետք է վերջնականապես հստակեցնեն իրենց դիրքորոշումները հայերին հետաքրքրող հետևյալ կարևոր հարցերի վերաբերյալ.

1. Ընդունու՞մ են, արդյոք, իրենց նախնիների հանցակցությունը հայերի ցեղասպանության իրականացման և հայերի ունեցվածքի բռնազավթման հարցում:

2. Ընդունու՞մ են, արդյոք, որ հայերի ցեղասպանությունն իրագործվել է նրանց հայրենիքում՝ Արևմտյան Հայաստանում և բնաջնջված հայերի ժառանգներն իրավունք ունեն այնտեղ վերադառնալու և իրենց նախնիների ունեցվածքը վերադարձնելու:

Այս հարցերի հստակ ու անկեղծ պատասխաններից են կախված հայ-քրդական համագործակցության հեռանկարները:

Քրդական շարժման ղեկավարներն, ըստ էության, չեն թաքցնում, որ քրդական պետությունը Թուրքիայում կստեղծվի այն տարածքում, որն այժմ գտնվում է նրանց վերահսկողության տակ, այսինքն՝ Արևմտյան Հայաստանում: Նրանց շարքերում կան այնպիսի գործիչ-

[361] Տե՛ս Չեթինօղլու Ս., Օջալանը Թուրքիայի պատուէրն է կատարում, http://asbarez.com/arm/184290/

ներ, որոնք բացեիբաց հայտարարում են, որ իրենք այժմ մարտնչում են թուրքերի դեմ, արյուն են թափում, իսկ հայերը դրանում ոչ մի մասնակցություն չեն ցուցաբերում: Նրանց տրամաբանության առանցքն այն տեսակետն է, որ հողը պատկանում է նրան, ով ապրում է դրա վրա և արյուն է թափում դրա համար[362]: Ակնհայտ է, որ Արևմտյան Հայաստանի ապագայի հարցը քննարկելիս մենք անմիջապես բախվելու ենք քրդական անզիջում դիմադրությանը: Քուրդ քաղաքական գործիչներն, անգամ հայերից ներողություն խնդրելով իրենց պապերի կատարած հանցագործությունների համար, նշում են, որ «Քուրդիստանը» հայերը, ասորիները և եզդիները կարող են քրդերի հետ հավասար համարել իրենց հողը: Քուրդ գործիչների կողմից չի տրվում այդ տարածքների իրական անվանումը՝ Արևմտյան Հայաստան, անտեսվում է այն փաստը, որ հայերը ցեղասպանության հետևանքով նաև հայրենազրկվել են, կորցրել են իրենց հայրենիքի զգալի մասը, որն այսօր անվանում են Քուրդիստան[363]: Այս իմաստով անհրաժեշտ է քուրդ ղեկավարներին անընդհատ հիշեցնել, որ հայերի հայրենիքի վրա նրանց նախնիները անխնա կերպով թափել են մեր նախնիների արյունը, և, որ քրդերը Հայոց ցեղասպանության իրագործման հանցակիցներ են հանդիսանում: Նրանց գերակշիռ ներկայությունը Արևմտյան Հայաստանի նահանգներում պայմանավորված է հենց հայերի նկատմամբ իրականացված հանցագործությամբ՝ ցեղասպանությամբ:

Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հայեցակարգում անհրաժեշտ է Քրդական հարցի հետ կապված միասնական համահայկական դիրքորոշում որդեգրել, հաշվի առնելով այն իրողությունները, որ Արևմտյան Հայաստանը ներկայումս, հիմ-

---

[362] Հովհաննիսյան Ն., նշվ. աշխ., էջ 24:

[363] Տե՛ս Մելքոնյան Ռ., Հայոց ցեղասպանության խնդիրը Թուրքիայի խորհրդարանում (2007-2014 թթ.): «Ժամանակակից Եվրասիա, Թուրքիա. Գաղափարախոսություն և քաղաքականության հարցեր», Ռ. Սաֆրաստյանի խմբ., հատոր III (2), Եր., 2014, էջ 84:

նականում, բնակեցված է քրդերով, որոնց առաջնորդները ոչ միայն պատրաստ չեն և չեն ցանկանում դա համարել հայկական տարածք, այլև՝ հավակնում են դրան՝ որպես իրենց տարածքի:

Քրդական հարցում դիրքորոշման հստակեցումից հետո կարելի է ոչ պաշտոնական հանդիպումների միջոցով քննարկումներ անցկացնել քրդական ղեկավարության և նրա լիազոր ներկայացուցիչների հետ Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման ու Քրդական հարցի լուծման համադրելիության և հնարավոր համագործակցության վերաբերյալ: Անշուշտ, նման բանակցությունների պարագայում հայկական կողմի ելակետը պետք է լինի քրդերի՝ Հայոց ցեղասպանության իրականացման մեջ հանցակից լինելու դրույթը: Իսկ հնարավոր համագործակցության շրջանակները պետք է ուրվագծվեն Սևրի պայմանագրի համապատասխան հոդվածների շուրջ, քանի որ այն քրդերի համար պետականություն նախատեսող միակ միջազգային-իրավական փաստաթուղթն է, որով հստակեցվում են Արևմտյան Հայաստանի և ինքնավար Քուրդիստանի սահմանները: Սևրի պայմանագրի 62-64-րդ հոդվածներով նախատեսվում էր քրդական ինքնավարության կազմում ներառել Եփրատից հարավ ընկած Դիարբեքիրի նահանգի, Բիթլիսի և Վանի նահանգների այն հատվածները, որոնք չէին մտնելու Հայաստանի կազմի մեջ, ինչպես նաև՝ Մոսուլի նահանգը[364]: Քրդական հարցի նման լուծումը սկզբունքային նշանակություն ունի Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման տեսակետից:

[364] Տե՛ս Մարուքյան Ա., Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմաիրավական հիմնավորումները, Եր., 2014, էջ 105, 110:

2.1.2. Քաղաքականությունը ալևիների նկատմամբ

2004 թ. միջազգային մասնագիտացված կազմակերպության հրապարակած զեկույցի համաձայն, ալևիները Թուրքիայում կազմում են բնակչության մոտ 15-20 տոկոսը՝ 12-15 միլիոն մարդ[365]: Ալևիական համայնքը, սակայն, մոնոէթնիկ չէ և կազմված է ազգությամբ թուրք, քուրդ, զազա և հայ խմբերից[366]: Ալևիականությունն առաջացել է ոչ թե իսլամից անջատման արդյունքում, այլ ձևավորվել է երկար տարիների ընթացքում քրիստոնեության, այդ թվում նաև քրիստոնեական աղանդների և իսլամի միախառնման արդյունքում՝ կրելով նաև բնապաշտական ու հեթանոսական մի շարք սովորույթների ազդեցությունը: Ալևիների համայնքի վերջնական ձևավորման և թվաքանակի մեծացման հարցում մեծ է եղել հայկական տարրի դերը: Ցեղասպանությունից հետո մեծ թվով փրկված հայեր ապաստան գտան Դերսիմի ալևիների մոտ, որոնք օգնեցին նրանց հաստատվել այդ տարածքում: Դերսիմում հայերի վերաբնակեցումը ուժեղացրեց քրիստոնեության ազդեցությունն ալևիական հավատամքի վրա՝ որոշակիորեն արտահայտվելով ալևիական սովորույթներում, ծիսակատարություններում և անգամ կենցաղում[367]:

1925 թ. Թուրքիայի հարավ-արևելյան քրդաբնակ շրջաններում խիստ իսլամական երանգավորում ստացած Շեյխ Սաիդի ղեկավարած քրդական ապստամբության նկատմամբ ալևի քրդերի մեծամասնությունը չեզոք դիրք գրավեց, քանի որ սուննի ապստամբների

---

[365] Տե՛ս Minorities in Turkey, Minority Rights Group International, July, 2004, http://www.minorityrights.org

[366] Տե՛ս Турция: новая роль в современном мире, с. 22.

[367] Տե՛ս Հարությունյան Վ., Թուրքիայի ալևիները. պատմության և քաղաքականության հարցեր, Եր., 2013, էջ 38-43:

հիմնական նպատակներից մեկը իսլամական օրենքների վերահաստատումն էր[368]:

Թուրքական առաջին խորհրդարանում ընդգրկվեցին 8 ալևիներ, սակայն հաջորդ խորհրդարանում նրանք արդեն չկային, ինչը նշանակում էր, որ հաղթանակից հետո քեմալականներն այլևս անհրաժեշտ չէին համարում սիրաշահել ալևիներին ու այդ կերպ ստանալ նրանց աջակցությունը: Չնայած իշխանությունների քաղաքականության փոփոխությանը, 1930-ական թթ. սկզբին ալևիները շարունակեցին չեզոքություն պահպանել և մասնակցություն չունեցան հարավ-արևելյան նահանգներում տեղի ունեցող քրդական ապստամբություններին:

Դերսիմի լեռնային անմատչելի շրջանը ուներ 65-70 հազար բնակչություն, որը բաղկացած էր, հիմնականում, անասնապահությամբ զբաղվող մեծ թվով փոքր ցեղախմբերից: Մի մասը խոսում էր քրդերեն, բայց մեծամասնությունը՝ զազա կոչվող լեզվով: Բոլորը հարում էին ալևի աղանդին, որը նրանց առանձնացնում էր արևելքում և հարավում ապրող քուրմանջերեն խոսող քրդերից[369]: 1937-38 թթ. Դերսիմում տեղի ունեցած իրադարձությունների ընթացքում կառավարական ուժերի կողմից քուրդ ալևիների նկատմամբ դաժան հալածանքները սկիզբ դրեցին ալևիների հարցում թուրքական պետության մերժողական քաղաքականությանը՝ բազմակուսակցական համակարգի առաջացումից հետո նրանց մղելով ձախակողմյան սոցիալիստական ուժերի շարքերը[370]:

Դերսիմի ապստամբության ճնշումից հետո ալևիներով բնակեցված շրջաններում արտակարգ դրություն մտցվեց, որը վերացվեց միայն 1948 թ., սակայն հետագայում ևս կառավարությունը շարու-

---

368 Տե՛ս Հարությունյան Վ., նշվ. աշխ, էջ 71-72:
369 Տե՛ս Պողոսյան Ս. Կ., Քրդերը և Հայկական հարցը, Եր., 1991, էջ 283:
370 Տե՛ս Հարությունյան Վ., նշվ. աշխ., էջ 10:

նակում էր անհանգստանալ, թե այդ շրջանները կրկին կարող են դառնալ ձախակողմյան քաղաքական հոսանքների զինված ելույթների թատերաբեմ, ուստի շարունակում էր այդտեղ պահել ոստիկանական ուժեր:

Ալևիական բնակավայրերից արտագաղթելու առաջին ալիքը սկսվում է 1937-1938 թթ.՝ Դերսիմում տեղի ունեցած արյունալի իրադարձություններից հետո, երբ դաժանաբար կոտորվում և տեղահանվում են հարյուր հազարից ավելի բնակիչներ: Հարկավոր է ընդգծել, որ այս սարսափելի դեպքերից հետո բազմաթիվ ալևիներ՝ տարհանված Դերսիմի իրենց բնակավայրերից, 1940-ական թթ., այնուամենայնիվ, վերադառնում են հետ՝ հակառակ այդ երևույթը խոչընդոտելու՝ կառավարության վարած քաղաքականությանը: Սակայն վերադարձածները հաջորդ տասնամյակների ընթացքում կրկին ստիպված են լինում լքել իրենց բնակավայրերը՝ այս անգամ արդեն սոցիալական ծանր պայմաններից դրդված[371]:

Մենդերեսի կառավարությունը թույլ է տալիս ալևիների մի մասին վերադառնալ իրենց բնակավայրերը, սակայն առանց փոխհատուցման: Ալևիները, վերջնականապես հիասթափվելով կառավարության վարած քաղաքականությունից, էլ ավելի են համախմբվում ալևիական գաղափարախոսության ներքո՝ թեև բավականին թույլ, բայց հիմք ստեղծելով հետագա զարգացման և ծավալման համար[372]:

Գյուղից դեպի քաղաք ալևիների արտահոսքը հանգեցնում է քաղաքային միջավայրում ալևիական նոր խմբերի ձևավորմանը, ինչին հատկապես նպաստում է այն հանգամանքը, որ ալևիները, հիմնականում, նախընտրում էին բնակվել նույն թաղամասերում և շփվել միմյանց հետ: Մինչ մեծ քաղաքներ տեղափոխվելը, ալևիները փակ համայնք էին, և անծանոթներին դժվար էր թափանցել նրանց

[371] Տե՛ս նույն տեղում, էջ 102:
[372] Տե՛ս նույն տեղում, էջ 87:

ներհամայնքային կյանք: Ալևիներն այսպես բնակվել են հենց սկզբից՝ ալևիականության ձևավորման շրջանից, քանի որ սուննիների կողմից մշտապես առկա ճնշումները ստիպել են նրանց ծպտված մնալ՝ շատ հաճախ իբրև սուննի ձևանալով: Ալևիականությունը թուրք հասարակության մեջ դիտվում էր որպես խարան, ուստի խոշոր քաղաքներում բնակվող բազմաթիվ ալևիներ ջանում էին թաքցնել իրենց ինքնությունը՝ փորձելով նմանվել մեծամասնությանը, ինչը կարճ ժամանակի ընթացքում հանգեցնում էր բազմաթիվ արժեքների կորստի: Այս գործընթացն ալևիների շրջանում հանգեցնում է քաղաքական դաշտում գործունեություն ծավալելու անհրաժեշտության գաղափարին, ինչի պահանջն ալևիները, հանգամանքներից ելնելով, թերևս չէին գիտակցել նախկինում՝ գյուղական բնակավայրերում իրենց առջև միայն ալևիականությունն ազատ դավանելու խնդիր ունենալով: Քաղաքաբնակ դարձած ալևիների մի մասը՝ հատկապես երիտասարդ սերնդի ներկայացուցիչները, սկսում են ալևիականությունը դիտել սոցիալիստական և մարքսիստական գաղափարախոսությունների քողի ներքո: Այդ շրջանում դեռևս ալևիների քաղաքական ձախակողմյան կողմնորոշումը, հիմնականում, արտահայտվում էր ընտրությունների ժամանակ, երբ նրանք իրենց քվեները տալիս էին ձախակողմյան կողմնորոշում ունեցող կուսակցություններին[373]:

1961 թ., երբ թուրքական սահմանադրությունն առաջին անգամ թույլ է տալիս սոցիալիստական կուսակցության գոյությունը երկրում, հիմնվում է Թուրք աշխատավորական կուսակցությունը, որն իր ծրագրում, ի թիվս սոցիալական և մշակութային բազմաթիվ խնդիրների, անդրադառնում էր նաև ալևիների իրավունքների պաշտպանության հարցին: Այն իր սոցիալիստական ծրագրով 1965 թ. առաջին

[373] Տե՛ս Հարությունյան Վ., նշվ. աշխ., էջ 93-94:

անգամ կարողացավ մասնակցել խորհրդարանական ընտրություններին՝ ստանալով 15 տեղ, ինչն իրավունք տվեց ունենալու աշխատանքային խումբ: Արդեն 1960-ական թթ. վերջին այս կուսակցության անդամների հիմնական մասը կազմում էին ազգությամբ քուրդ ալևիները, որոնց մի մասն անդամակցել էր սոցիալական պատճառներից դրդված, իսկ մյուս մասը՝ ձախակողմյան գաղափարներ ունենալու պատճառով: 1966 թ. մի քանի ալևի հոգևոր առաջնորդների կողմից հիմնվում է «Թուրքի միություն» կուսակցությունը, որի միջոցով ալևիներն առաջին անգամ փորձ են անում սեփական ուժերով մասնակցել քաղաքական պայքարին: 1969 թ. Թուրքիայում տեղի ունեցած ընտրությունների արդյունքում երկրի արևելյան շրջաններում հարղթող թեկնածուների շարքում կային ութ ալևիներ, սակայն հետագա ընտրություններում այս կուսակցությունը հաջողություն չունեցավ:

Այս իրավիճակում սրվում են ալևիների առանց այն էլ լարված փոխհարաբերությունները սաննի ծայրահեղ իսլամական ուժերի հետ: Ալևիները պարբերաբար հարձակումների են ենթարկվում աջակողմյան սուննի արմատականների կողմից: Այդ բռնությունները, հիմնականում, հովանավորվում էին պետական որոշ մարմինների կողմից, վերջիններս գրեթե ոչինչ չէին անում այդ իրադարձությունները կանխելու և մեղավորներին խիստ միջոցներով պատժելու ուղղությամբ: Առաջին լուրջ բախումները տեղի են ունենում 1978 թ. ապրիլին, Մալաթիայում: Իրավիճակը սրվում է այն բանից հետո, երբ նույն ամսի 17-ին պայթուցիկ պարունակող ծանրոցի միջոցով սպանվում է աջակողմյան ուժերին հարող քաղաքապետը ընտանիքի հետ միասին: Կատարվածի համար սուննի արմատականները մեղադրում են ալևիներին: Հարևան նահանգներից բերվում են հրոսակախմբեր, որոնց անդամների թիվը հասնում էր մինչև 20 հազարի, ինչից հետո տեղի են ունենում առաջին բախումները: Ավազա-

կախմբերը հարձակվում են ալևիներին պատկանող գրասենյակների, խանութների վրա, ինչ հետևանքով զոհվում է ութ, վիրավորվում հարյուրից ավելի մարդ: Հաջորդ բնակավայրը, որտեղ տեղի ունեցան ալևի-սուննիական բախումներ, Սվազն էր (Սեբաստիա): Քարերով և այրվող շշերով զինված մի քանի ավազակախմբեր շարժվեցին դեպի ալևիներով բնակեցված թաղամաս և սկսեցին հրկիզել ու կոտրել նրանց բնակարաններն ու գրասենյակները, թալանել նրանց խանութներն ու այրել տները[374]: Բախումների հետևանքով զոհվեցին տասնյակ և վիրավորվեցին հարյուրավոր մարդիկ, թալանվեցին ու հրկիզվեցին հարյուրավոր բնակարաններ, խանութներ ու գրասենյակներ: Դեպքերը հետաքննելու, մեղավորներին հայտնաբերելու ու պատժելու պատրվակով Թուրքիայի ոստիկանությունը բազմաթիվ բնակարանների անհարկի խուզարկություններ էր իրականացնում, երբեմն անգամ առանց տանտերերի ներկայության: Խուզարկությունների ընթացքում գրեթե բոլոր բնակարաններում կոտրվում և փողոց էին նետվում բազմաթիվ իրեր, իսկ մեղավորներն այդպես էլ մնում էին անպատիժ:

Մալաթիայում և Սվազում տեղի ունեցած իրադարձություններն իրենց գագաթնակետին հասան Քահրամանմարաշում, որը, թերևս, Թուրքիայում ալևի և սուննի բնակչության միջև ամենազանգվածային ու արյունալի բախումն էր[375]: 1978 թ. դեկտեմբերին Քահրամանմարաշում գտնվող կինոթատրոններից մեկում «Արևը ե՞րբ է ծագելու» հակակոմունիստական ֆիլմի ցուցադրման ժամանակ իրականացվեց պայթյուն, ինչում կրկին մեղադրվեցին ալևիները, որոնք սատարում էին ձախակողմյան ուժերին[376]: Քաղաքում գտնվող

---

[374] Տե՛ս Հարությունյան Վ., նշվ. աշխ., էջ 113-114:
[375] Տե՛ս Ավագյան Ա., Պանթուրքական երազանք կամ «Գորշ գայլեր», էջ 44:
[376] Տե՛ս Դումանյան Ա., Ազգայնական շարժում կուսակցության («Գորշ գայլեր») գործունեության հիմնական փուլերը Թուրքիայում 1960-70-ական թթ., էջ 109:

անվտանգության ուժերից բացի, նոր ոստիկանական խմբեր են ներգրավվում կարգ ու կանոն հաստատելու գործում, բայց փոխարենը, դրանք ուղղակի դիտորդի դեր են ստանձնում: Բախումների ընթացքում «աջ» ծայրահեղական սուննի ամբոխի զոհ է դառնում ավելի քան 120 ալևի, վիրավորվում ավելի քան 1000 մարդ[377]: Երկրում ստեղծված իրավիճակի արդյունքում վարչապետ Բ. Էջևիթը ստիպված եղավ ռազմական դրություն հայտարարել երկրի 20 նահանգներում: Մարաշում տեղի ունեցածի կապակցությամբ քրեական գործեր են հարուցվում: Բախումներին մասնակցած անձանց դատավարությունը շարունակվում է մինչև 1991 թ.. մեղադրյալների մեծ մասը, որոշ ժամանակ անց ներում ստանալով, ազատ է արձակվում բանտից:

1980 թ. զինվորական հեղաշրջումից հետո ռազմական գործողությունների հիմնական հենակետերից է դառնում Թունջելին. բանակի ու քուրդ պարտիզանների միջև տեղի ունեցող բախումների հիմնական մասը ընթանում էր այստեղ[378]:

1990-ական թվականների սկզբին կառավարությունը հայտարարում է Դերսիմում նոր ծրագրի իրագործման մասին, ըստ որի, Դերսիմի գյուղերի մեծ մասի բնակիչները պետք է վերաբնակեցվեին այլ նահանգներում՝ իբր, անտառային գոտին ընդլայնելու նպատակով: Սակայն իրականում, այն արվում էր ժողովրդի էթնիկական կազմը փոխելու և ապստամբական ոգին կոտրելու նպատակով: Տեղահանություններ են տեղի ունենում 1994 թ., երբ թուրքական բանակը ՔԱԿ-ի դեմ գործողություններ իրականացնելու պատրվակով Դերսիմի՝ հարյուրի հասնող գյուղերի բնակիչներին ստիպեց լքել իրենց բնակավայրերը:

---

[377] Տե՛ս Բրոյնեսեն Մ., Կրոնը Քուրդիստանում, «Իրան-նամէ», Եր., 1993, հուլիս, էջ 31-32:
[378] Տե՛ս Հարությունյան Վ., նշվ. աշխ., էջ 85-86:

1980-1990-ական թթ. արտագաղթի արդյունքում եվրոպական մի շարք երկրներում, մասնավորապես՝ Գերմանիայում ձևավորված ալևիական համայնքի ակտիվ գործունեության շնորհիվ Թուրքիայում ալևիների կուսակցությունը կրկին վերականգնվում է: Ներկայումս, ալևիները Դերսիմում 1937-1938 թթ. իրագործված կոտորածները որակում են՝ որպես ցեղասպանություն, և պայքարում են, որպեսզի միջազգային հանրությունը ճանաչի այն:

1985 թ. «Աթաթուրքի բարձրագույն խորհուրդը»՝ նախագահ Էվրենի գլխավորությամբ, վարչապետ Օզալի և զինվորական ուժերի ազդեցիկ հրամանատարների մասնակցությամբ հավանություն է տալիս «Թյուրք-իսլամական համադրություն» կոչվող մշակութային հայեցակարգին, որը, փաստորեն, անտեսում էր թուրք հասարակության բազմամշակութային բնույթը[379]: Թյուրք-իսլամական համադրության հայեցակարգի ընդունումն իր ազդեցությունն է ունենում նաև Թուրքիայում բնակվող ալևիների վրա. փոխվում է պետական քաղաքականությունը վերջիններիս նկատմամբ: Պետությունը սկսում է քարոզել այն գաղափարախոսությունը, թե ալևիներն, իրականում, սուննիներ են, ովքեր ունեն այլ սովորույթներ և մշակութային հենք՝ այսպիսով փորձելով անտեսել սուննիների և ալևիների կրոնական առանձնահատկություններն ու տարբերությունները: Այս երևույթը, ի թիվս ուժային ձուլման փորձերի, ալևիական գյուղերում մզկիթների կառուցման և սուննի իմամների՝ դեպի այդ բնակավայրեր գործուղման, առաջացնում է ալևիների դժգոհությունը[380]:

1990 թ. հրապարակվեց «Ալևիականության հռչակագիրը», որում նկարագրվում էր ալևիների կարգավիճակը ժամանակակից Թուրքիայում: Հռչակագրում ներկայացվող գլխավոր պահանջը իսլամից ալևիականության տարբերությունն ընդունելն էր: Բացի դրա-

---

[379] Տե՛ս Հարությունյան Վ., նշվ. աշխ., էջ 119:
[380] Տե՛ս Բրոյնեսեն Մ., Կրոնը Քուրդիստանում, էջ 31-32:

նից, ալևիները պահանջում էին դպրոցներում կրոնի պարտադիր դասընթացների և կրոնի հարցերով զբաղվող նախագահության գործունեության դադարեցում, ալևիական պաշտամունքի վայրերի ճանաչում և ալևիական բնակավայրերում մզկիթների կառուցման քաղաքականությունից հրաժարում և այլն[381]:

1993 թ. Սվազի (Սեբաստիա) հյուրանոցներից մեկում ալևիների կազմակերպած մշակութային փառատոնի ժամանակ հյուրանոցը շրջապատվում է սուննի ամբոխով, որը սկսում է քարկոծել մասնակիցներին և հրկիզում է հյուրանոցը, ինչի հետևանքով սպանում են տասնյակ, վիրավորվում են հարյուրավոր մարդիկ: 1993 թ. իրադարձությունները 1978 թ. դեպքերից տարբերվում էին նրանով, որ այս անգամ, որպես թիրախ, ընտրվել էր ալևի մտավորականությունը[382]: Ոստիկանությունը նախկինի պես շարունակում էր մնալ դիտորդի դերում: 1997 թ. Սվազում տեղի ունեցած դեպքերի առիթով դատարանը 33 անձի դատապարտում է մահվան, որոնց մի մասի դատավճիռը փոխվում է ցմահ բանտարկության[383]: Այս որոշումը փողոց է դուրս բերում ալևիներին, որոնք արդարություն էին պահանջում, սակայն իշխանությունները ջրցան մեքենաների և արցունքաբեր գազի միջոցով ցրում են ցուցարարներին[384]:

Իշխանությունների բացահայտ թողտվության պայմաններում ալևիների նկատմամբ բռնությունները չեն դադարում նաև հետագա տարիներին: 1995 թ. ալևիներով բնակեցված Ստամբուլի Գեզի թաղամասում զինված անհայտ անձինք կրակ են բացում ալևիների հավաքատեղի հանդիսացող թեյարանի վրա, ինչի հետևանքով կրկին

---

381 Տե՛ս Հարությունյան Վ., նշվ. աշխ., էջ 137-138:

382 Տե՛ս Киреев Н., Турецкая диаспора на Западе, “Мусульмане на Западе”, М., 2002, с. 71.

383 Տե՛ս Տեր-Մաթևոսյան Վ., Իսլամը Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքում, էջ 120:

384 Տե՛ս «Ազդակ», Պէյրութ, 14 մարտի, 2012:

լինում են զոհեր և վիրավորներ: Ի նշան բողոքի, Գեզի թաղամասի ալևի բնակիչները դուրս են գալիս փողոց: Նրանց միանում են այլ թաղամասերի ալևիները, որոնց ընդհանուր թիվը կազմում է մոտ 35 հազար մարդ: Ցուցարարները շարժվում են դեպի ոստիկանական տեղամաս, բարիկադներ են կառուցում և սկսում քարեր նետել ոստիկանների վրա: Ի պատասխան, ոստիկանությունը կրակ է բացում նրանց վրա, ինչի հետևանքով զոհվում են տասնյակ և վիրավորվում հարյուրավոր մարդիկ: Իրադարձությունների ամբողջ ընթացքում ալևի համայնքի ղեկավարները մեծ ջանքեր են գործադրում ժողովրդին հանդարտեցնելու համար, իսկ ոստիկանները բացահայտ համակրանք էին ցուցաբերում սուննի արմատականների նկատմամբ:

Գեզիի դեպքերի կապացությամբ դատական գործեր են հարուցվում մոտ 100 անձանց դեմ՝ անօրինական ցույցեր կազմակերպելու մեղադրանքով: Դատավարությունների ձգձգումից և իրենց նկատմամբ երկրում տիրող անհարգալից վերաբերմունքից զայրացած ալևիներին հանգստացնելու նպատակով՝ 1997 թ. նախագահ Ս. Դեմիրելը և վարչապետը ներկա են գտնվում ալևիական փառատոնին:

Այս իրադարձություններից հետո ալևիները վերջնականապես գիտակցեցին, որ պասիվ պայքարի դեպքում շարունակելու են ենթարկվել ֆիզիկական բռնությունների և ոտնահարվելու է ալևիականություն դավանելու իրենց իրավունքը, ուստի որդեգրեցին պետությանը բացահայտ պահանջներ ներկայացնելու մարտավարությունը: Թուրքիայում ալևիական կազմակերպությունների անցկացրած միջոցառումների գործում մեծ է Եվրոպայում ստեղծված ալևիական միությունների դերը, որոնք իրենց հավատակիցներին ցուցաբերում են դրամական աջակցություն: Հատկանշական է, որ Թուրքիայի ալևիների՝ պետության դեմ պայքարում ակնառու էր նաև արտասահմանից վերադար-

ձած ալևիների դերը[385]: Ալևիները ցանկանում են իրենց մասնակցությունն ունենալ Թուրքիայի քաղաքական կյանքում, պաշտոնապես ճանաչված ալևիական միությունների և կուսակցությունների միջոցով: Աջակցելով այլ կուսակցություններին՝ ալևիներն ամեն անգամ իրենց խաբված են համարում, ինչպես, օրինակ՝ ակտիվորեն ԱԶԿ-ին սատարելուց հետո նրանք ոչ մի կարևոր պաշտոն չստացան: Անգամ վարչական պաշտոններում, ինչպես Ստամբուլի նահանգային կառավարական կազմն է, խուսափում են ալևիներ նշանակել: Այս հարցի վերաբերյալ որոշակի փոփոխություններ կատարվեցին ԵՄ կողմից մասնակի ճնշումների, թերևս մասնակի էլ՝ ալևիների պահանջների արդյունքում, երբ 2003 թ. թուրքական պետությունը դե ֆակտո ճանաչեց ալևիական հավաքական ինքնությունը: Միությունների ազատության վերաբերյալ բարեփոխումները վերացվեց էթնիկ և կրոնական տարբերությունների հիման վրա կազմակերպությունների ստեղծման արգելքը:

Վերջին տարիներին Թուրքիայում ալևիները փորձում են շարժման նպատակներն իրագործել իրավական ճանապարհով՝ տարբեր միությունների անունից դատարանների միջոցով պահանջելով իրենց իրավունքների ճանաչում: Նրանք ձգտում են հնարավորինս մեծ հասարակական հնչեղություն տալ պետության կողմից մերժված բոլոր հայցերին, ինչը նպաստավոր հանգամանք է երկրում ալևիների համախմբման համար: Նրանք նաև հրավիրում են արևմտյան երկրների ներկայացուցիչների և միջազգային մի շարք կազմակերպությունների ուշադրությունն ալևիական խնդիրներին՝ ուժեղացնելով դրանց կողմից ճնշումները կառավարության վրա: 2000-ական թթ. կեսերից սկսած՝ ալևիները պարբերաբար հայտեր են ներկայացնում թուրքական քաղաքային իշխանություններին՝

[385] Տե՛ս Հարությունյան Վ., նշվ. աշխ., էջ 133-134:

ջեմևիներ կառուցելու նպատակով, սակայն ամեն անգամ մերժվում են այն պատճառաբանությամբ, թե երկրում գոյություն ունեցող պաշտամունքի վայրերը՝ մզկիթները, բավական են ալևիների պահանջները բավարարելու համար[386]: 2000 թ. նոյեմբերին հրապարակվում է ԵՄ հանձնաժողովի՝ Թուրքիայում իրականացվող զարգացման գործընթացների վերաբերյալ պարբերական հաշվետվությունը, որում առաջին անգամ նշված էր, որ ալևիները բողոքում են պարտադիր կրոնական դասերի անցկացումից, դասագրքերում ալևիականության վերաբերյալ նյութերի բացակայությունից, ինչպես նաև պետության կողմից միայն մզկիթները, որպես կրոնական հաստատություններ, ֆինանսավորելու քաղաքականությունից: Ալևիների կարգավիճակի և խնդիրների վերաբերյալ տեղեկություններ են նշվում նաև ԵՄ կառույցների հանձնաժողովների ներկայացրած ամենամյա հաշվետվություններում, որոնք տարեցտարի ավելի հստակ և մանրամասնորեն են անդրադառնում այս հարցերին: Արդեն 2004 թ. դեկտեմբերին ԵՄ գագաթաժողովի ժամանակ Թուրքիային առաջարկեց ալևիներին ընդունել՝ որպես կրոնական փոքրամասնություն[387]:

2008 թ. նոյեմբերի 10-ին Թուրքիայի պատմության մեջ առաջին անգամ Անկարայում հանրահավաքի են դուրս գալիս երկրում բնակվող ալևիական համայնքի մոտ հիսուն հազար ներկայացուցիչներ, ովքեր մայրաքաղաք էին ժամանել երկրի տարբեր շրջաններից՝ իրենց վերոշարադրյալ պահանջները Թուրքիայի կառավարությանը ներկայացնելու նպատակով: Սակայն հանրահավաքից հետո ալևիական կազմակերպությունները հանդես են գալիս երկու տարբեր պատվիրակություններով: Նրանցից մեկը հանրահավաքին

---

[386] Տե՛ս Հարությունյան Վ., նշվ. աշխ., էջ էջ 142-145:

[387] Տե՛ս Gorvett J., Following December's EU Summit, Turkey forced to reassess issue of minorities. Washington report on Middle East affairs, March, 2005, pp. 48-49.

մասնակցած կազմակերպությունների կողմից ուղարկված պատվիրակությունն էր, որն այցելում է խորհրդարան՝ ալևիների խնդիրները քննարկելու պահանջով, մյուսը՝ ցույցին չմասնակցած կազմակերպությունների անդամներից բաղկացած պատվիրակությունն էր, որն էլ իր հերթին է հանդիպում ունենում վարչապետ Ռ. Էրդողանի հետ և ներկայացնում ալևիների հիմնական խնդիրների լուծման վերաբերյալ իր առանձին, սակայն ավելի մեղմ պահանջները՝ կրոնական դասընթացների գրքերում ընդգրկել տեղեկություններ «ալևիական իսլամի» մասին, ազգային բյուջեի մի մասը տրամադրել ալևիական համայնքներին, ալևիներին տալ սուննիներին հավասար հնարավորություններ, պետական ռադիոյով և հեռուստատեսությամբ հեռարձակել ալևիական հաղորդումներ և ալևի հոգևոր առաջնորդներին վճարել սուննի իմամների նման աշխատավարձ[388]:

Թուրքական իշխանություններին հաջողվեց պառակտում մտցնել ալևիական կազմակերպությունների միջև, որոնց մի մասը կրոնական փոքրամասնությունների խնդիրների լուծման հարցում հակված է պետության տեսակետին: Պետության վարած քաղաքականությունն ալևիների նկատմամբ չի փոխվել վերջին երկու տասնամյակի ընթացքում, ալևիականությունը պաշտոնապես շարունակում է դիտվել որպես «իսլամի դրսևորում», իսկ ալևիները՝ այլ մշակույթ ունեցող մուսուլմաններ: Քննարկումների արդյունքում ալևիների ունեցած հիմնական պահանջներից և ոչ մեկը լուծում չի ստանում, ինչը կրկին անգամ գալիս է ապացուցելու, որ ԱԶԿ-ի ղեկավարներն ալևիներին սիրաշահել էին գալիք ընտրություններից առաջ նրանց ապացուցելու համար, թե քաղաքական ուժերից միայն իրենք են մտահոգված ալևիների խնդիրներով: Սակայն, բացի երկրի ներսում ալևիներին սիրաշահելուց, կառավարությունն ուներ նաև

[388] Տե՛ս Հարությունյան Վ., նշվ. աշխ., էջ 149-150:

երկրորդ թիրախը՝ միջազգային հանրությունը և, հատկապես, եվրոպական երկրների կառավարությունները, որոնց անհրաժեշտ էր կատարված քայլերը ներկայացնել՝ որպես ԵՄ կողմից դրված կրոնական փոքրամասնությունների կարգավիճակի բարելավման պահանջի կատարում[389]:

Դերսիմի դեպքերի համար Ռ. Էրդողանի ներողություն խնդրելը նույնպես պետք է դիտել ալևիներին սիրաշահելու միջոցով նրանց ձայները ստանալու համատեքստում: Էրդողանը հայտարարեց, որ ԺՀԿ-ն պետք է առերեսվի իր պատմության հետ և ընդունի մեղքն այն ալևիական կոտորածների համար, որոնք իրագործվել են Դերսիմում 1937-38 թթ., և, որ կուսակցության առաջնորդ Ք. Քըլըչդարօղլուն ամաչում է իր դերսիմյան ծագման մասին բարձրաձայնել: Ի պատասխան վերջինս հայտարարեց, որ ինքն իրոք ծագումով Թունջելի նահանգից է և հպարտ է իր արմատների համար: Մի քանի օր անց այս իրադարձությանը հաջորդեց Էրդողանի այն հայտարարությունը, թե ինքը պետության անունից ներողություն է խնդրում Դերսիմի վերոնշյալ իրադարձությունների համար[390], իսկ ալևի հայտնի մտավորական Ռ. Չամուրօղլուն դարձավ խորհրդարանի անդամ ԱԶԿ-ի շարքերից, ապա ավելի ուշ՝ վարչապետ Ռ. Էրդողանի խորհրդականը ալևիների հարցերով[391]:

Ալևիների կողմից իրենց իրավունքների պաշտպանության համար մղված պայքարի պատմությունը ցույց տվեց, որ ալևիականությունը, որպես կրոնական ինքնություն, ազգային ինքնությունից ավելի ուժեղ դուրս եկավ: Այս տեսակետի վառ ապացույցն է այն, որ ՔԱԿ-ի շարքերում փոքր թիվ էին կազմում ալևիները՝ չմասնակցելով պետության դեմ քրդերի մղած պայքարին: Չնայած 1970-ական

---

[389] Տե՛ս Հարությունյան Վ., նշվ. աշխ., էջ 154:
[390] Տե՛ս Турция: новая роль в современном мире, с. 22-23.
[391] Տե՛ս Հարությունյան Վ., նշվ. աշխ., էջ 156:

թթ. արյունալի իրադարձություններին, այս և հաջորդ տասնամյակը Թուրքիայում բնակվող ալևիների համար շրջադարձային եղավ, որովհետև, ձախակողմյան այլ ուժերի կազմում պայքարելով, ալևիները չհասան որևէ հավաքական հաջողության: Աստիճանաբար, արթնացավ սեփական՝ ալևիական ինքնությունը, որպես միավորող ուժ, առաջ քաշելու գաղափարը, ինչն իր պտուղներն էր տալու հետագա տասնամյակների ընթացքում[392]: Հատկանշական է, որ 2013 թ. հունիսին Գեզի զբոսայգու շարժման ժամանակ ձերբակալված 5 513 մարդու վերաբերյալ անվտանգության մարմինների կատարած ուսումնասիրության համաձայն, այդ շարժման մասնակիցների 78 տոկոսը եղել է ալևի[393]:

Ամփոփելով՝ կարող ենք արձանագրել, որ Թուրքիայի ալևիների և ծպտյալ հայերի միջև պատմականորեն ձևավորված բարեկամական հարաբերություններն ու նախորդ պատմափուլերում նրանց գոյատևման պայքարում եղած համագործակցությունը, մասնավորապես, Դերսիմում թույլ է տալիս պնդելու, որ ալևիները կարող են դիտվել իբրև ծպտյալ հայերի բնական դաշնակիցներ՝ իրենց իրավունքների պաշտպանության համար մղվող պայքարում: Թեև խախտված իրավունքների համար մղվող պայքարում ծպտյալ հայերը նման փորձ ունեն նաև քրդերի հետ, սակայն ի տարբերություն վերջիններիս, ալևիների հետ համագործակցությունը նվազ ռիսկային է, քանզի նրանց ու հայերի միջև միևնույն տարածքների, իբրև հայրենիքի, նկատմամբ հավակնություններ չեն արտահայտվում: Բացի այդ, ի տարբերություն քրդերի, ալևիների ու ծպտյալ հայերի միջև նկատելի են որոշակի ընդհանրություններ. երկու խմբերն էլ Թուրքիայում բախվում են նույնանման խնդիրների և թուրքական

---

392 Տե՛ս նույն տեղում, էջ 123-124:

393 Տե՛ս Հյուր Ա., Մեր ամենաերկար դարը՝ «կոդավորման դարաշրջանը», http://www.radikal.com.tr/yazarlar/ayse_hur/en_uzun_yuzyilimiz_asr_i_fisleme-1163826

խտրական քաղաքականության պատճառով հաճախ ստիպված են եղել ծպտյալ մնալ՝ թաքցնելով իրենց ինքնությունը: Իրավունքների պաշտպանության համար ալևիների՝ եվրոպական կառույցների հետ աշխատանքի փորձը լիովին կարող է կիրառելի լինել նաև եվրոպական հայկական կառույցների կողմից ծպտյալ հայությանը օգնություն կազմակերպելու առումով: Չպետք է մոռանալ, որ թուրքերից և քրդերից հետո իրենց քանակությամբ ալևիները Թուրքիայում երրորդ խումբն են և որոշակի կշիռ են ձեռք բերել այդ երկրի ներքաղաքական կյանքում: Ալևիների հետ համագործակցությունը, սակայն, պետք է իրականացվի չափազանց զգուշությամբ, փորձելով որևէ կերպ չգրգռել քրդերի խանդը և չմոռանալով, որ ալևիների մեջ որոշակի տեղ ու դեր ունեն նաև քուրդ ալևիները:

2.2. Քաղաքականությունը ոչ մահմեդական փոքրամասնությունների նկատմամբ

Ներկայումս Թուրքիայում կրոնական փոքրամասնության կարգավիճակ ունեն միայն Հայ Առաքելական եկեղեցին, Հույն Ուղղափառ եկեղեցին և հրեաները, այսինքն՝ պետությունը միայն այս համայնքներն է պաշտոնապես ճանաչում՝ որպես կրոնական համայնքներ կամ փոքրամասնություններ: Թուրքիայի քաղաքական ուժերը, բացառությամբ քրդական ԺԺԿ-ի, չեն ընդունում Լոզանի դաշնագրով ամրագրված ընդհանուր շրջագծից դուրս էթնոկրոնական խմբերի գոյության փաստը Թուրքիայում և, առհասարակ, Թուրքիայի բազմազգ լինելու իրողությունը: ԱՇԿ-ն ոչ պաշտոնապես մերժում է նույնիսկ Լոզանի պայմանագրով ամրագրված ոչ մահմեդականների արտոնությունները[394]:

[394] Տե՛ս «Նոր Մարմարա», Ստամբուլ, 2004, ապրիլի 2:

Մյուս քրիստոնյա համայնքները, ինչպիսին են քրիստոնյա արաբները, ասորիները, Հռոմի Կաթողիկե եկեղեցին, Հայ Կաթողիկե եկեղեցին, բողոքական ուղղության համայնքները, այդ թվում նաև Հայ Ավետարանական եկեղեցին, պետության կողմից, որպես կրոնական փոքրամասնություններ, պաշտոնապես ճանաչված չեն: Թեև պետությունն ընդունում է նրանց գոյության փաստը, սակայն հրաժարվում է նրանց իրավական կարգավիճակ տալուց: Անգամ Հռոմի Կաթողիկե եկեղեցին, չնայած Վատիկանի ջանքերին, դեռևս չի կարողացել Թուրքիայում ստանալ կրոնական փոքրամասնության կարգավիճակ[395]: Թուրքիայում կարգավիճակ չստացած նշված համայնքները իրավական առումով զրկված են կառույցներ հիմնելու և ղեկավարելու, իրենց լեզուն ազատորեն գործածելու, կրոնական արարողությունների և հոգևոր կրթության հարցերում ազատ որոշումներ կայացնելու, պետությունից ֆինանսական միջոցներ ստանալու և պետության կողմից իրենց գույքի պաշտպանությունից օգտվելու իրավունքներից, որոնք ամրագրված են Լոզանի պայմանագրի 40-րդ և 41-րդ հոդվածներով: Սակայն, հանուն ճշմարտության, պետք է փաստենք, որ, անկախ այն բանից, որ նույն՝ Լոզանի պայմանագրով թուրքական պետությունը նման պարտավորություններ է ստանձնել իրավական կարգավիճակ ստացած Հայ առաքելական, Հույն ուղղափառ և հրեական համայնքների նկատմամբ, այդուհանդերձ, այդ համայնքների վերոնշյալ իրավունքները թուրքական իշխանությունների կողմից պարբերաբար ու հետևողականորեն խախտվում ու ոտնահարվում են: Թուրքական իշխանությունները Լոզանի պայմանագրով սահմանված իրավունքները բնութագրում են ոչ թե որպես ազգային, այլ կրոնական փոքրամասնության իրավունքներ, այդ պատճառով փոքրամասնությունները չեն

[395] Տե՛ս Բառում Վ., Թուրքիան և նրա քրիստոնյա փոքրամասնությունները, Եր., 2010, էջ 163:

կարող կուսակցություններ կամ ազգային հաստատություններ ունենալ[396]:

Չնայած Լոզանի պայմանագրով և ներպետական օրենսդրական ակտերով թուրքական պետությունը պարտավորություններ էր ստանձնել ոչ մահմեդական համայնքների իրավունքները պաշտպանելու հարցում, սակայն երկրի իշխանությունները հետևողական քաղաքականություն էին իրականացնում ոչ մահմեդականներին իսլամացնելու-թրքացնելու ուղղությամբ: Լոզանի պայմանագրի 40-րդ հոդվածով ոչ մահմեդական փոքրամասնություններին՝ հայերին, հույներին և հրեաներին իրավունք է վերապահվել սեփական միջոցներով հիմնել կրթական հաստատություններ և դրանցում դասավանդումը կազմակերպել մայրենի լեզվով, սակայն այս իրավունքի իրականացումը ևս գործնականում հանդիպում է բազմաթիվ խոչընդոտների[397]: 1926 թ. ընդունված Քաղաքացիական օրենսգրքով ոչ մահմեդականներին արգելվեց նոր համայնքային կալվածներ հիմնել: 1930 թ. ոչ մահմեդականների գերեզմանատները պաշտոնապես փոխանցվեցին քաղաքային իշխանությունների գերակայության տակ՝ զրկվելով պետական մարմիններից անկախ գործելու հնարավորությունից: 1935 թ. ընդունված «Կալվածքների մասին» օրենքով ոչ մահմեդականներին պատկանող ամբողջ անշարժ գույքն անցնում էր Կալվածքների տնօրինության վերահսկողության տակ[398]: 1936 թ. հայկական, հունական և հրեական համայնքներից պահանջվեց ներկայացնել իրենց պատկանող բոլոր համայնքային կալվածք-

---

[396] Տե՛ս Ավագյան Ա., Պանթուրքական երազանք կամ «Գորշ գայլեր», էջ 138:

[397] Տե՛ս Թուրքիա-ԵՄ-Հայաստան. մարտահրավերները և հնարավորությունները, էջ 44-45:

[398] Տե՛ս U.S. Department of State: Annual Report on International Religious Freedom for 1999: Turkey. Washington, DC, September 9, 1999.

ների՝ վակըֆների* ցուցակը, որը կցվեց օրենքին՝ որպես հավելված և ստացավ «1936 թ. հայտարարագիր» անվանումը: Թուրքական իշխանությունները կիպրոսյան հարցի սրման ժամանակ, փորձելով Ստամբուլի հունական համայնքի վրա ճնշում գործադրելով, զիջումներ կորզել Հունաստանից, 1974 թ. հայտարարեցին, որ «1936 թ. հայտարարագրում» չնշված կալվածքները չեն կարող համարվել համայնքային սեփականություն: 1936 թ. որոշվեց բռնագրավել ոչ մահմեդականների համայնքային կալվածքներին փոխանցված անշարժ գույքերը և վերադարձնել օրինական տերերին, իսկ վերջիններիս մահվան կամ ժառանգներ չունենալու պարագայում՝ պետականացնել դրանք[399]: Հաշվի առնելով, որ կալվածքների սեփականատերերի ունեցվածքի մեծ մասը կտակված կամ նվիրաբերված էր միայնակ ծերերի կողմից՝ պարզ է դառնում, որ առգրավված գույքը, հիմնականում, պետականացվեց: Ոչ մահմեդական համայնքները փորձեցին պետության դեմ դատական հայցեր ներկայացնել, սակայն դրանք մերժվեցին[400]:

Նման եղանակով հունական համայնքից առգրավվեց 152, հայկական համայնքից՝ 48, իսկ ասորականից՝ 6 անշարժ գույք: Փոքրամասնությունների կողմից գանձապետարանի կամ Կալվածքների տնօրինության նկատմամբ հարուցված դատական հայցերը վճռվեցին կամ հօգուտ պետության, կամ դեռևս մնում են անավարտ: Թեև

---

* Վակըֆը սեփականատիրոջ կողմից համայնքին, պետությանը կամ մասնավոր անձին կրոնական կամ բարեգործական կարիքների համար տրամադրված սեփականությունն է, որն ազատվում է հարկ վճարելու պարտավորությունից և որից ստացվող եկամուտի մի մասը հատկացվում է սեփականատիրոջն ու նրա ժառանգներին: Ներկայումս Թուրքիայում վակըֆի կարգավիճակ ունեն ոչ մահմեդականների հիվանդանոցները, դպրոցները, որբանոցները և այլն:

399 Տե՛ս Սիմավորյան Ա., Հովյան Վ., նշվ. աշխ., էջ 100:

400 Տե՛ս Պողոսյան Ն., Թուրքիայի ոչ մահմեդականների համայնքային կալվածքների խնդիրը (1923-2011 թթ.). համառոտ ակնարկ: «Մերձավոր Արևելք». պատմություն, քաղաքականություն, մշակույթ», (հոդվածների ժողովածու), VIII, Եր., 2012, էջ 307:

օրենքում նշված էր նոր համայնքային կառույցների ստեղծման և ղեկավարման կարգը, իրականում, պետությունը ոչ միայն չէր արտոնում, այլև արգելակում էր նման կառույցների ստեղծումը[401]:

1999 թ., երբ Թուրքիան պաշտոնապես ճանաչվեց ԵՄ անդամակցելու թեկնածու, Եվրահանձնաժողովը բարձրաձայնեց նաև ոչ մահմեդականների վակըֆների տնօրինման խնդիրը շուտափույթ լուծելու անհրաժեշտությունը: Ոչ մահմեդական համայնքների ներկայացուցիչները սկսեցին Թուրքիայի դեմ դատական հայցերով դիմել Մարդու իրավունքների եվրոպական դատարան: Անկարան այս հարցում ստիպված գնաց որոշ զիջումների: 2002-2003 թթ. ոչ մահմեդականներին թույլ տրվեց Նախարարների խորհրդի կամ Կալվածքների տնօրինության համաձայնությամբ կրոնական, բարեգործական, կրթական, առողջապահական, մշակութային նպատակներով գույք ձեռք բերել և գրանցել[402]: Սակայն արհեստական խոչընդոտների պատճառով 2003-2008 թթ. ներկայացված 1262 հայցադիմումից միայն 366-ը դրական լուծում ստացավ: 1974 թ. հետո պետականացված գույքի վերադարձի կամ դրա դիմաց փոխհատուցում վճարելու հարցը դեռ չէր քննարկվում: Խնդրին լուծում տալու փորձ էր 2005 թ. ընդունված օրենքը, որը սահմանափակ շրջանակներում վերականգնում էր ոչ մահմեդականների իրավունքները: Պատահական չէ, որ նախագահ Ա. Սեզերը համարեց այն երկրի ազգային շահերին հակասող և վետո կիրառեց:

2008 թ. կրկին ընդունված օրենքով համայնքային կառույցներին տրվեց անշարժ գույք ձեռք բերելու և արտերկրից ֆինանսական օգնություն ստանալու իրավունք, սակայն պետականացումից հետո երրորդ անձանց կողմից ոչ մահմեդական համայնքներին փոխանց-

---

[401] Տե՛ս Ավագյան Ա., Մելքոնյան Ռ., Ստամբուլի հայ համայնքի արդի իրավիճակը, Եր., 2009, էջ 32-33:
[402] Տե՛ս Բառում Վ., նշվ. աշխ., էջ 173:

ված գույքի համար փոխհատուցում վճարելու որևէ մեխանիզմ չէր սահմանվում: Պետության տնօրինման տակ գտնվող գույքի վերադարձի համար էլ նախատեսված են այնպիսի բարդ պայմաններ ու ընթացակարգեր, որ 2008-2010 թթ. ներկայացված 1410 դիմումներից 181 ստացան դրական, 347-ը՝ բացասական պատասխան, իսկ 893-ը փաստաթղթերի անբավարարության պատճառով ընդհանրապես չքննարկվեցին[403]:

Ոչ մահմեդականների կալվածքների վերադարձի հարցի շուրջ Անկարայի վրա գնալով մեծանում էր միջազգային ճնշումը: 2011 թ. հունիսի 15-ին ԱՄՆ-ի Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի ընդունած 306 բանաձևով Թուրքիային կոչ էր արվում օրինական տերերին վերադարձնել բոլոր քրիստոնյական եկեղեցիները և այլ պաշտամունքի վայրերը, վանքերը, դպրոցները, հիվանդանոցները, հուշարձանները, մասունքները, սրբավայրերը և այլ կրոնական գույքը, ներառյալ շարժական գույքը, ինչպիսիք են արվեստի գործերը, ձեռագրերը, զգեստները, անոթները և այլ իրերը[404]: Տեղի տալով միջազգային ճնշումներին և երկրի միջազգային հեղինակությունը պաշտպանելուց դրդված թուրքական իշխանություններն ընդունեցին «Կալվածքների մասին» հերթական օրենքը, որով պետությունը երաշխավորեց բռնագրավված համայնքային սեփականության վերադարձը օրինական տերերին: Թուրքական իշխանությունների կողմից օրենքում այս փոփոխությունները կատարվեցին նաև այն պատճառով, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարան ներկայացվող հայցերի բավարարումից հետո Թուրքիան խոշոր ֆինանսական կորուստներ էր ունենում: Սակայն վերջին օրենքով պե-

---

[403] Տե՛ս Պողոսյան Ն., նշվ. աշխ., էջ 309:

[404] Տե՛ս Res H., Resolution 306 Urging the Republic of Turkey to Safeguard its Christian Heritage and to Return Confiscated Church Properties, June 15, 2011, http://www.atour.com/government/pdf/20110615-USCongress-BILLS-112hres306ih.pdf

տությունը վերադարձնելու էր կամ փոխհատուցում էր տրամադրելու միայն 1936 թ. հետո բռնագրավված գույքերի համար, իսկ մինչ այդ ցեղասպան քաղաքականության ընթացքում և հետո ոչ մահմեդական խմբերի բռնազավթված գույքը վերադարձնելու կամ փոխհատուցում տրամադրելու մասին խոսք չկա[405]:

1926 թ. «Պաշտոնների մասին» օրենքով պետական ծառայությունների պաշտոնյաները ազգությամբ թուրք պետք է լինեին, իսկ 1932 թ. «Թուրքիայում թուրք քաղաքացիների արհեստներով և ծառայություններով զբաղվելու մասին» օրենքի ընդունումից հետո ոչ մահմեդականներից շատերն անգործ մնացին[406]:

Փոքր Ասիայից հույների, հայերի հետքը ջնջելու նպատակով 1928 թ. թուրքական կառավարությունը սկսեց վարել տեղանունները թրքացնելու քաղաքականություն: Հրատարակվեցին նոր քարտեզներ, գրքեր, որոնցում տեղանունները ստուգաբանվում էին թուրքական ծագմամբ, ինչով էլ փորձ էր արվում ապացուցել, որ թուրքերը հանդիսանում են այդ տարածաշրջանի բնիկ ժողովուրդը: Քաջալերվում էր հայկական և հունական եկեղեցիների, վանքերի, պատմական հնություն ներկայացնող կառույցների ոչնչացումը:

1934 թ. Թուրքիայում ընդունվեց «Բնակության մասին» օրենքը, որով Ներքին գործերի նախարարությանը իրավունք էր տրվում պետության այլ վայրերում վերաբնակեցնել այն քաղաքացիներին, որոնց մայրենի լեզուն թուրքերենը չէր: Ներքին գործերի նախարարի պնդմամբ, այս օրենքի նպատակն այն էր, որ Թուրքիան վերածվեր մի երկրի, որի քաղաքացիները խոսեին նույն լեզվով, մտածեին միանման և ունենային միևնույն զգացումները: Նույն թվականին ընդունվեց նաև «Ազգանվան մասին» օրենքը, որով արգելվեցին ոչ

---

[405] Տե՛ս Պողոսյան Ն., նշվ. աշխ., էջ 311:

[406] Տե՛ս Քյուրքճյան Ա., Թուրքերուն՝ Թուրքիան թրքացնելու քաղաքականությունը, http://ermeni.hayem.org/ermenice/trqatsnelu_qaghaqakanutyune.htm

թուրքական ազգանունները և որոշ վերջածանցներ, ինչպիսին են «յան», «պուլոս», «իս» և այլն: Այդ ժամանակ հայկական ազգանունների մեծ մասը թրքացվեց, միայն հատուկենտ դեպքերում եղան բացառություններ, որ պահպանվեցին «յան»-ով ավարտվող ազգանունները[407]: Հայերի նկատմամբ չդադարող հալածանքները, համատարած հայատյացությունը, մշտական վախի պայմաններում գավառաբնակ հայերին զրկել էին անձնագրային թուրք աշխատողին հակաճառելու ամեն մի հնարավորությունից, որը կամայականորեն «յան» վերջավորությունը փոխարինում էր «օղլու»-ով, իսկ լավագույն դեպքում՝ «օղլու» չէր գրում[408]:

1937 թ. սկսած՝ Թուրքիայի տարածքում գործող փոքրամասնությունների դպրոցներում իրավունք ունեն դասավանդել միայն այդ երկրի քաղաքացիները: Պետությունն օրենսդրորեն վերահսկում է ինչպես դասավանդվող առարկաների, այնպես էլ դպրոցի կառավարման և ուսուցիչների նշանակման հարցերը: Թուրքիայի Կրթության նախարարության ընդունած օրենքով ազգային փոքրամասնությունների դպրոցներում պարտադիր նշանակվում են թուրք փոխտնօրեններ, իսկ «Թուրքիայի պատմություն» և «Քաղաքացիական պաշտպանություն» առարկաները դասավանդում են ազգությամբ թուրք մասնագետներ: 1948 թ. դպրոցներում մտցվեց իսլամի դասավանդումը, իսկ քրիստոնեական կրոնի դասավանդում չէր իրականացվում: 1982 թ. որոշում ընդունվեց, որ քրիստոնյա աշակերտները նույնպես պետք է մասնակցեն իսլամի դասերին[409]: Թուրքիայի՝ Եվրամիությանն անդամակցելու գործընթացի համատեքստում մի շարք հետազոտություններ են անցկացվում այդ երկրում մարդու իրավունքների ոլորտի վերաբերյալ: Հետազոտություններից

---

[407] Տե՛ս Մելքոնյան Ռ., Ակնարկ Ստամբուլի հայ համայնքի պատմության…, էջ 51:
[408] Տե՛ս Չաքրյան Հ., Հայ բնակչությունը փոշիանում է, http://azg.am/AM/2013091702
[409] Տե՛ս Բառում Վ., նշվ. աշխ., էջ 161:

մեկում ազգային փոքրամասնությունների կրթական վիճակի հետ կապված՝ խորհուրդներ կան՝ ուղղված թուրքական կառավարությանը՝ վերացնել փոքրամասնությունների դպրոցներում փոխտնօրենի և թուրքական մշակույթի ուսուցչի՝ պարտադիր թուրք լինելու պայմանը[410]:

Թուրքական իշխանությունները 1930-ական և 1960-ական թթ. անցկացրին «Հայրենակի՛ց, թուրքերեն խոսիր» ակցիաներ, որոնց գլխավոր թիրախը կրկին փոքրամասնություններն էին: Երիտասարդներից կազմված խմբերը շրջում էին հատկապես փոքրամասնություններով բնակեցված թաղամասերում և պահանջում խոսել միայն թուրքերեն: Մինչև 1940-ական թթ. սկիզբը, քրիստոնյաները զինվորական ծառայության փոխարեն պետք է կատարեին աշխատանքային ծառայություն: Իսկ այսօր քրիստոնյաները պարտավոր են զինվորական ծառայություն կատարել հեռավոր շրջաններում և բանակում ենթարկվում են խտրականության: Զինվորական ծառայության կանոնադրության համաձայն, քրիստոնյան իրավունք չուներ սպա դառնալու: Պետական բարձր ծառայությունները, ինչպես ոստիկանությունը կամ արդարադատությունը, նրանց առաջ փակ էին[411]:

Թուրքիայում ոչ մահմեդական փոքրամասնությունների դեմ կիրառված խտրական քաղաքականության դրսևորումներից էր 1941 թ. իշխող ՀԺԿ-ի կազմակերպած 20 դասակարգի զինակոչի արդյունքում, որը տարածվել էր հիմնականում հայերի, հույների և հրեաների վրա, հապշտապ բանակ էր զորակոչվել այդ փոքրամասնությունների չափահաս տղամարդկանց մեծ մասը[412]: Զորակոչվեցին այդ խմբերին պատկանող նոր զորացրվածները, պահեստազո-

---

410 Տե՛ս Մելքոնյան Ռ., Ակնարկ Ստամբուլի հայ համայնքի պատմության…, էջ 39-43:
411 Տե՛ս Բառում Վ., նշվ. աշխ., էջ 161:
412 Տե՛ս Аванесов С., նշվ. աշխ., էջ 162:

բայինները, անգամ՝ հաշմանդամները, որոնք փաստացի զինվոր չէին համարվում, նրանց չէր տրվում զենք և զինվորական համազգեստ: Ոչ մահմեդական տղամարդկանցից ձևավորվել էին աշխատանքային գումարտակներ, որտեղ չէին ընդգրկված մահմեդականներ, ինչը խորացրեց կասկածը և տարածված այն վարկածը, որ քրիստոնյաներին հավաքել են հարմար պահին ոչնչացնելու համար, ինչպես եղել էր Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին օսմանյան բանակի բանվորական գումարտակներում հայազգի զինվորականների հետ: Զորակոչվածների շրջանում վատ պայմանների հետևանքով գրանցվել են մահվան, հիվանդությունների բազմաթիվ դեպքեր: Զորակոչ անվանված այս էթնիկ խտրականության բացահայտ դրսևորումը Թուրքիայի փոքրամասնությունների շրջանում էլ ավելի է խորացրել վախի և անվստահության մթնոլորտը, ինչը ստիպել է շատերին լրջորեն մտածել Թուրքիայից արտագաղթելու մասին[413]:

Թուրքիայում բնակվող ոչ մահմեդական խմբերի նկատմամբ հերթական խտրականության դրսևորումն էր 1942 թ. նոյեմբերին ընդունված «Ունեցվածքի հարկի մասին» օրենքը, որի գործադրումից առաջ Ֆինանսների նախարարությունը նահանգների ֆինանսական վարչություններից, բանկերից պահանջել էր ազգային-կրոնական փոքրամասնությունների նյութական վիճակի մասին տվյալներ: Խախտելով Սահմանադրության և Լոզանի պայմանագրի 39-րդ հոդվածի պահանջները, իշխանությունները, ըստ կրոնական պատկանելության, հարկատուներին բաժանում էին խմբերի՝ մահմեդականների, ոչ մահմեդականների՝ հայեր, հույներ, հրեաներ, և հավատափոխների: Ստեղծվեցին հատուկ հանձնաժողովներ, որոնք պետք է սահմանեին այդ խմբերի հարկաչափերը: Իրենց ունեցված-

[413] Տե՛ս Մելքոնյան Ռ., Ակնարկ Ստամբուլի հայ համայնքի պատմության…, էջ 16:

քի արժեքը մի քանի անգամ գերազանցող հարկը չվճարելու դեպքում ազգային-կրոնական փոքրամասնությունների գույքը պետականացվում էր և աճուրդով վաճառվում: Եթե այդ դեպքում էլ սահմանված հարկը չէր վճարվում, ապա նրանց աքսորում էին տաժանակրության ցուրտ կլիմայով հայտնի Էրզրումի նահանգի Աշքալե գավառը, որպեսզի ազգային-կրոնական փոքրամասնությունների ներկայացուցիչները աշխատելով, վճարեին հարկը: Տվյալ օրենքի կիրառմամբ Թուրքիայի բյուջեն կրկնապատկվեց: Այսպես, եթե 1943 թ. երկրի բյուջեն կազմում էր 486.717.349 լիրա, ապա 1944 թ., այն կազմեց 952.434.417 լիրա: «Ունեցվածքի հարկի մասին» օրենքի կիրառման հետևանքով ոչ մահմեդական գործարարները սնանկացան ու նրանց դիրքին և ունեցվածքին տիրացան մահմեդականները[414]:

1950-ական թթ. ԴԿ-ի կառավարման ժամանակաշրջանում Թուրքիայում բորբոքվեցին հակահունական տրամադրությունները՝ կապված նաև Կիպրոսի խնդրի հետ: 1955 թ. սեպտեմբերի 6-7-ին Ստամբուլ և Իզմիր քաղաքներում զանգվածային անկարգություններ կազմակերպվեցին հույների և հայերի դեմ: Պատրվակ ընդունելով Սալոնիկում Ք. Աթաթուրքի տան ռմբահարումը՝ Ստամբուլում և Իզմիրում տեղի ունեցավ նախօրոք կազմակերպված և զինված ամբոխի հարձակում ազգային փոքրամասնությունների՝հույների և հայերի տների, խանութների, եկեղեցիների վրա, ինչն ուղեկցվեց կոտորածով, թալանով, հրդեհումներով և բռնություններով[415]: Այս դեպքերի ընթացքում թուրքական իշխանությունների թողտվության պայմաններում հունական և հայկական համայնքները ունեցան հետևյալ կորուստները՝ սպանվեց 10-12 մարդ, բռնաբարվեց 400 կին,

---

[414] Տե՛ս Քյուրքճյան Ա., Թուրքերուն՝ Թուրքիան թրքացնելու քաղաքականությունը, http://ermeni.hayem.org/ermenice/trqatsnelu_qaghaqakanutyune.htm

[415] Տե՛ս Խանլարեան Կ., Հայ բնակչութեան էթնոկրօնական վերակերպումները Թուրքիայի Հանրապետութիւնում (1923-2005 թթ.), էջ 111:

թալանվեցին և ավերվեցին 73 եկեղեցի, 8 սրբատեղի, 2 վանք, 2 գերեզմանատուն, 21 գործարան, 26 դպրոց, 5 սպորտային ակումբ, 1004 տուն, 4348 խանութ-արհեստանոց, 27 դեղատուն և լաբորատորիա, 110 ճաշարան-սրճարան-հյուրանոց: Ուշացումով Ստամբուլում հայտարարվեց արտակարգ դրություն և զորք մտցվեց, սակայն մինչ այդ գազազած ամբոխը արդեն իրականացրել էր իր առջև դրված առաջադրանքը[416]: 1960 թ. զինվորական հեղաշրջումից հետո պարզվեց, որ Ստամբուլում և Իզմիրում տեղի ունեցած անկարգությունների հրահրումն ու քրիստոնյաների դեմ գործողությունները կազմակերպված են եղել ՀՊԲ-ի կողմից՝ որպես «հոյակապ կազմակերպված գործ»: Կան փաստեր թուրքական և այլ աղբյուրներում, որ այդ գործողությունների կազմակերպման մեջ ներգրավված են եղել թուրքական հատուկ ծառայությունները[417]: Պարզվեց նաև, որ Սալոնիկում Ք. Աթաթուրքի տանը ռումբ տեղադրողը Թուրքիայի հետախուզության գործակալ էր, որը հույն ոստիկանների կողմից ձերբակալվեց ու դատապարտվեց ազատազրկման: Թուրքական կառավարությունը հոգաց դատական բոլոր ծախսերն և նյութական օժանդակություն ցուցաբերեց նրա ընտանիքին: Երեք տարի անց նրան բանտից փախցրին Ստամբուլ և նշանակեցին բարձր պետական պաշտոնի: Դեպքերից հետո, միջազգային հանրության ճնշման տակ, տուժածներին հատուցում տրվեց կրած վնասի ընդամենը 30 տոկոսի չափով: Հատկանշական է, որ այդ հատուցումը տրամադրողը թուրքական իշխանությունները չէին: Հատուցումները վճարելու նպատակով նախագահի հովանավորությամբ հանձնախումբ կազմվեց, որը երկու տարվա ընթացքում բանկերից և խոշոր ձեռնարկություններից մոտ 9 միլիոն լիրա գումար հավաքեց: Հատուցում ստա-

---

[416] Տե՛ս Մելքոնյան Ռ., Ակնարկ Ստամբուլի հայ համայնքի պատմության…, էջ 21:
[417] Տե՛ս Հովսեփյան Լ., Թուրքիա. 1955 թ. սեպտեմբերի 6-7. Իրադարձությունների կազմակերպումը, մարմինները և ավանդույթը, http://akunq.net/am/?p=33751

ցողներից գրավոր հավաստագրեր պահանջեցին, որ ստացել են իրենց կրած վնասի հատուցումը և որևէ պահանջ այլևս չունեն[418]:

Իշխանությունների՝ ձուլման քաղաքականությանն ընդիմացողները հարկադրված էին հեռանալ Թուրքիայից և ապաստան փնտրել այլ երկրներում: Այն փոքր հատվածն էլ, որը չէր լքում իր բնօրրրանը և այս կամ այն կերպ պահպանում էր ազգային ու կրոնական ինքնությունը, 1960 թ. և, հատկապես, 1980 թ. զինված հեղաշրջումներից հետո բռնի կերպով մահմեդականացվեց[419]:

1962 թ. գաղտնի շրջաբերականով Թուրքիայում ստեղծվեց «Փոքրամասնությունների լրացուցիչ հանձնաժողովը», որի կազմում ընդգրկվեցին ԱՀԾ-ի, ԱԱԽ-ի և ԳՇ-ի ներկայացուցիչները: Թեև այս հանձնաժողովը գաղտնի էր գործում, սակայն փոքրամասնությունները մշտապես զգում էին դրա գոյությունը: Երբ վակըֆների ղեկավարները պետական որևէ ատյանի էին դիմում որևէ խնդրով, մշտապես տեղի էր ունենում հետևյալ գործընթացը. տվյալ պաշտոնյան կամ էլ նախարարը ընդունում ու լսում էր ներկայացված զեկույցը՝ խոստանալով կարճ ժամանակում հարցը կարգավորել, սակայն այդ թղթապանակը հանձնվում էր ավելի խորքային մի կառույցի, որի մասին այն ժամանակ դեռևս չգիտեին, և վերջնական որոշումը կայացվում էր նրա թույլտվությամբ: Այս կառույցի գործունեության արդյունքում բացառվում էր, որ ոչ մահմեդականը կարողանար որոշակի դիրքի հասնել երկրի կրթության համակարգում կամ էլ դառնալ դատավոր, դատախազ, Վճռաբեկ դատարանի, Պետական խորհրդի, ֆինանսական բարձրագույն խորհրդի անդամ, դիվանագետ, արտակարգ և լիազոր դեսպան, ոստիկան, բանակի բարձրաս-

---

[418] Տե՛ս Քյուրքճյան Ա., Թուրքերուն՝ Թուրքիան թրքացնելու քաղաքականությունը, http://ermeni.hayem.org/ermenice/trqatsnelu_qaghaqakanutyune.htm

[419] Տե՛ս Ալվրցյան Հ., Ազգայնամոլությունը խարխլվող թուրքական ինքնության համայնապատկերում, «Դրօշակ», թիվ 9, 2009:

տիճան սպա: Նույնիսկ ամենահասարակ պետական պաշտոնյա, հարկահավաք լինելու համար, եթե պետությունը, իրականում, անօրինական, երկրի Սահմանադրությանը հակասող կառույցից՝ Փոքրամասնությունների լրացուցիչ հանձնաժողովից թույլտվություն ստանալու կարիք է զգում, ասել է թե՝ շատ լուրջ իրավիճակի առաջ ենք կանգնել: Եվրոմիության պահանջներին համապատասխանելուն ուղղված աշխատանքների արդյունքում 2004 թ. հունվարի 5-ին այդ հանձնաժողովը վերանվանվեց՝ «Փոքրամասնությունների խնդիրները գնահատելու հանձնաժողով»:

Թուրքական երկու հասարակական կազմակերպություններ՝ Պատմության հիմնադրամը և Մարդու իրավունքների հիմնադրամը, ուսումնասիրելով թուրքական 139 դասագրքեր, պատրաստել են համատեղ զեկույց, որում ընդգծվում է երկրի ժողովուրդների միջև օտարացման ու թշնամանքի վտանգը, ինչն, իրականում, քարոզվում է այդ դասագրքերի միջոցով: Դասագրքերում արևելյան նահանգներում բնակվող ժողովուրդներին կամ ընդհանրապես չեն անդրադառնում, կամ էլ հիշատակում են «թշնամություն սերմանող» բնութագրմամբ: Զեկույցում առաջարկվում է դասագրքերից վերացնել հայերի, հույների և ասորիների վերաբերյալ խտրական արտահայտությունները[420]:

Թուրքիայի 2005 թ. «Գաղտնի սահմանադրությունում» ազգային անվտանգության դեմ ուղղված սպառնալիքների շարքում մատնանշված են անջատողական շարժումները, քրդական հարցը, իսլամական հետադիմականությունը և ծայրահեղականությունը և այլն: Փաստաթղթի վերջին մասում ներկայացված են հայկական, հունական համայնքները, ասորական շարժումները, ալևիների վիճակն ու զարգացումները այդ համատեքստում, միսիոներական գործու-

[420] Տե՛ս Ալվրցյան Հ., Կրոնափոխ հայերի խնդիրները Թուրքիայի Հանրապետությունում, էջ 132-133:

նեությունները, միջազգային և հասարակական կազմակերպությունները և այլն: Փաստաթղթում ներքին սպառնալիք են համարվում երկիրը մասնատման տանող ծայրահեղ «ձախ», ծայրահեղ «աջ», անջատողական ուժերի ու փոքրամասնությունների գործողությունները: Այդ փաստաթղթի համաձայն, հայկական համայնքը երկրի անվտանգության դեմ ուղղված քայլեր չի ձեռնարկում, իսկ ԱՄՆ-ում և եվրոպական երկրներում բնակվող ասորիները թուրքական պետության դեմ ստեղծում են տարբեր շարժումներ ու կազմակերպություններ, որոնք պահանջում են անկախություն կամ ինքնավարություն: Ավելին, փաստաթղթի համաձայն, վերջին տարիներին արտաքին մի շարք աղբյուրների նախաձեռնությամբ ու հովանավորությամբ Թուրքիայի սնծովյան շրջաններում ակտիվացել են Հունաստանում և այլուր գործող հիմնադրամների գործողությունները, որոնք ցանկանում են կենդանացնել «հունա-պոնտական ոգին»: Այդ փաստաթղթով Թուրքիայի էթնիկ-դեմոգրաֆիական իրավիճակը գնահատվում է՝ որպես լուրջ ասպարեզ արտաքին ուժերի գործունեության համար, ինչը սպառնալիք է ներկայացնում երկրի ազգային միասնությանն ու ամբողջականությանը[421]:

2009 թ. Եվրամիության աջակցությամբ պատրաստված «Թուրքիայում խտրականության դեմ պայքարը և փոքրամասնությունների իրավունքների աջակցությունը» զեկույցում տեղ գտած տվյալներից որոշակիորեն երևում է Թուրքիայում ազգային փոքրամասնությունների դպրոցների և աշակերտների թվի նվազում, ինչը մեծապես կապված է պետության վարած քաղաքականության հետ, որում գերիշխում են ձուլման տարրերը: Ըստ զեկույցում ներկայացված

[421] Տե՛ս Հովսեփյան Լ., Թուրքիայի վախերը. Սևրի սինդրոմ, էջ 61-62:

տվյալների, եթե 1930-31 թթ. Թուրքիայում եղել է փոքրամասնությունների 117 դպրոց, ապա 1995-96 թթ. դրանց թիվը նվազել է 34-ի[422]:

ԵՄ-ի առջև ստանձնած պարտավորությունների կատարման շրջանակներում թուրքական իշխանությունները որոշում կայացրին որոշ ֆինանսական աջակցություն ցույց տալ ոչ մահմեդական փոքրամասնություններին պատկանող վեց թերթերին[423]: Թուրքիայում լույս տեսնող հայկական «Մարմարա», «Ժամանակ», «Ակոս», հունական «Աբոնմադինի», «Իհո» և հրեական «Շալոմ» թերթերին, ընդհանուր առմամբ, պետք է հատկացվեր 250 հազար թուրքական լիրայի՝ մոտ 140 հազար ԱՄՆ դոլարի չափով ֆինանսական աջակցություն: Սակայն այդ լուրն այնքան էլ չուրախացրեց նշված թերթերի խմբագիրներին, որոնք պնդում են, որ դա բավարար չէ թերթերի հրատարակման հետ կապված խնդիրները լուծելու համար: Թերթերի խմբագիրների համար ավելի նախընտրելի էր, որ այդ օգնության փոխարեն, իշխանությունները փոփոխեին մամուլի մասին օրենքի՝ ոչ մահմեդական փոքրամասնություններին պատկանող թերթերի էջերում վճարովի պաշտոնական և գովազդային հայտարարություններ տեղադրելու արգելքի դրույթը[424]:

2012 թ. փետրվարի 18-ին իշխանությունների կողմից առաջարկվող սահմանադրական բարեփոխումների փաթեթը քննարկելու նպատակով՝ հունական պատրիարքարանում էին հավաքվել Թուրքիայի ոչ մահմեդական համայնքների հոգևոր առաջնորդներն ու ներկայացուցիչները: Այդ հավաքին հույն ուղղափառ համայնքը ներկայացնում էր ծայրագույն պատրիարք Բարդուղիմեոս Ա., հայ առաքելական համայնքը՝ պատրիարքական ընդհանուր փոխանորդ

---

[422] Տե՛ս Մելքոնյան Ռ., Ակնարկ Ստամբուլի հայ համայնքի պատմության…, էջ 41:

[423] Տե՛ս Թուրքիայի կառավարությունը կաջակցի երկրում լույս տեսնող հայկական թերթերին, http://www.azatutyun.am/content/article/24278023.html

[424] Տե՛ս Թուրքիայում լույս տեսնող հայկական երեք օրաթերթեր պետության կողմից նյութական աջակցություն պիտի ստանան, Tert.am, 2011/08/23

Արամ արքեպիսկոպոս Աթեշյանը, ասորի ուղղափառ համայնքը՝ պատրիարքական փոխանորդ Ֆիլյուքսինոս մետրոպոլիտը, ասորի կաթոլիկ համայնքը՝ պատրիարքական փոխանորդ Յուսուֆ Սաղ եպիսկոպոսը: Սահմանադրական փաթեթը քննարկելուց հետո որոշվեց, որ ոչ մահմեդական համայնքերի ներկայացուցիչներից կազմվելու է հանձնախումբ, որն էլ նրանց առաջարկները ներկայացնելու էր խորհրդարանին:

Առաջարկությունների փաթեթում ներկայացված պահանջները, հիմնականում, հանգում էին հետևյալին՝ համայնքներին տալ իրավաբանական անձի կարգավիճակ, որպեսզի նրանք կարողանան գույքի տեր դառնալ, փոխանակել վակըֆային բաժնետոմսերը, օգտվել ԵՄ հիմնադրամների օգնություններից, քահանաների և ռաբբիների աշխատավարձերը վճարել պետության կողմից, ինչպես դա արվում է մահմեդական հոգևոր առաջնորդի պարագայում, վերացնել ոչ մահմեդական փոքրամասնությունների ներկայացուցիչների՝ պետական պաշտոններ զբաղեցնելու արհեստական արգելքները և վերջ տալ դասագրքերում ու հեռուստատեսությամբ նրանց նկատմամբ ատելություն քարոզող ձևակերպումների կիրառմանը:

Սպասվում էր, որ իշխանությունները ոչ մահմեդական համայնքների հոգևոր առաջնորդների տեսակետները լսելուր համար նրանց պետք է հրավիրեն խորհրդարան: Այս հավաքի հրավիրումը չափազանց կարևոր նախաձեռնություն էր, որը թուրքական իշխանություններին պետք է ցույց տար կրոնական փոքրամասնությունների համայնքների միասնականությունը, պատրաստակամությունը համատեղ հանդես գալու և խնդիրները լուծելու հարցում համագործակցությունը: Սակայն հունական համայնքի հոգևոր առաջնորդ, ծայրագույն պատրիարք Բարդուղիմեոսը փետրվարի 20-ին միայնակ մեկնեց Ան-

կարա և խորհրդարանի համապատասխան հանձնաժողովին ներկայացրեց կազմված համատեղ նախագիծը[425]:

Այս քայլով, փաստորեն, հունական համայնքի հոգևոր առաջնորդը իրեն իրավունք վերապահեց հանդես գալու բոլոր ոչ մահմեդական համայնքների անունից, մինչդեռ նման լիազորություն նրան չէր տրվել: Դրանով, ըստ էության, խախտվեց համայնքների միջև ձեռք բերված պայմանավորվածությունը: Բարդուղիմեոս սրբազանի նման վարքագիծը թերևս կարելի է բացատրել երկու շարժառիթներով՝ կամ նա փորձել է հույն ուղղափառ համայնքը և նրա իրավունքներն ավելի բարձր դասել մյուս համայնքներից, կամ այդ քայլը կատարել է թուրքական իշխանությունների պահանջով, չսպասելով, որ մյուս համայնքների հոգևոր առաջնորդներին նույնպես հրավերներ ուղարկվեն: Հնարավոր է նաև, որ այդ քայլը կատարվել է նշված երկու շարժառիթների մեկտեղման արդյունքում: Բարդուղիմեոս սրբազանի քայլն ի ցուց դրեց Թուրքիայի ոչ մահմեդական համայնքների միջև առկա որոշ խնդիրները, որոնք դրսևորվում են անհարկի մրցակցության կամ, գուցե, թուրքական իշխանություններին առավել շատ հաճոյանալու ձևով՝ այդ կերպ փորձելով նրանցից առավել շատ բարեհաճություն կորզել սեփական համայնքի համար: Մինչդեռ, ակնհայտ է, որ ոչ մահմեդական համայնքների անմիաբանությունն ու պառակտվածությունը ձեռնտու է միայն թուրքական իշխանություններին, որոնք առանձին-առանձին ավելի դյուրին ձևով կոտնահարեն այդ համայնքների շահերն ու իրավունքները:

Ինչևէ, փետրվարի 22-ին Բարդուղիմեոս սրբազանի՝ խորհրդարանում ունեցած ելույթից հետո միայն խոսելու իրավունք տրվեց ասորական համայնքի ներկայացուցչին, որը պահանջեց, որ այդ համայնքը հայերի, հույների և հրեաների նման պետության կողմից ճանաչվի որպես ոչ մահմեդական համայնք, որպեսզի կարողանա

[425] Տե՛ս «Մարմարա», 21 փետրվարի, 2012:

օգտվել Լոզանի պայմանագրով և երկրի օրենսդրությամբ նշված համայնքներին տրված իրավունքներից: Հրեական համայնքն իր առաջարկները առանձին գրավոր ներկայացրեց խորհրդարանին[426]:

Վերջապես, մարտի 12-ին հայկական համայնքի ներկայացուցիչներն էլ պատրիարքական ընդհանուր փոխանորդ Ա. Աթեշյանի գլխավորությամբ հնարավորություն ստացան խորհրդարանում ներկայացնելու իրենց տեսակետները սահմանադրական փոփոխությունների փաթեթի վերաբերյալ, ինչպես նաև առանձնազրույց ունենալ խորհրդարանի նախագահի հետ:

2013 թ. Ստամբուլում մի հայ ընտանիք չէր կարողանում իր երեխային ուղարկել հայկական դպրոց, որովհետև նրա անվան դիմաց հայ լինելու մասին Ներքին գործերի նախարարության նշումը չկար: Դատական գործընթացում պարզվեց, որ ազգային փոքրամասնությունների դպրոց կարող են հաճախել միայն տվյալ ազգի ներկայացուցիչները, այնինչ հայցվոր կողմը ներկայացրել էր քրիստոնյա լինելու վերաբերյալ եկեղեցու տված տեղեկանքը, որը բավարար չհամարվեց: Ինչպես պարզվեց, փոքրամասնությունների ազգային պատկանելությունը կարող է հաստատել միայն Ներքին գործոց նախարարությունը, որն ունի բոլորի վերաբերյալ գաղտնի տեղեկություններ, և որ Լոզանի պայմանագրով փոքրամասնություն ճանաչված խմբերից յուրաքանչյուրն ունի իր ծածկագիրը. հույների ծածկագիրն է՝ 1, հայերինը՝ 2, հրեաներինը՝ 3, որոնք գաղտնի նշանով նշված են նրանց անձնագրերում[427]:

2013 թ. ԱՄՆ Պետքարտուղարությունը պատրաստեց աշխարհում կրոնի ազատության մասին զեկույց, որը Արտաքին քաղաքական գերատեսչությունում ներկայացրեց անձամբ պետքարտուղար

---

[426] Տե՛ս «Մարմարա», 21 փետրվարի, 2012:

[427] Տե՛ս Ալվրցյան Հ., Կրոնափոխ հայերի խնդիրները Թուրքիայի Հանրապետությունում, էջ 84-85:

Ջ. Քերրին: Զեկույցի՝ Թուրքիային նվիրված հատվածում նշվում է, որ ոչ մահմեդական կրոնական խմբերի մեծ մասը բնակվում է Ստամբուլում և այլ մեծ քաղաքներում, որոնք բնակչության մեկ տոկոսն անգամ չեն կազմում: Թեև ստույգ թվեր չկան, սակայն այդ խմբերը, ենթադրաբար, հետևյալն են՝ Հայ առաքելական եկեղեցու 90 հազար հետևորդ, որոնցից 60 հազարը Թուրքիայի քաղաքացի է, իսկ մնացած 30 հազարը՝ ենթադրաբար, Հայաստանից եկած, գրանցում չունեցող փախստականներ են: 25 հազարը ներկայացնում են կաթոլիկ քրիստոնյաներին, որոնց մեծ մասը Աֆրիկայից ու Ֆիլիպիններից եկած գաղթականներ են: Թուրքիայում կա 21 հազար հրեա, 20 հազար ասորի ուղղափառ քրիստոնյա, 15 հազար ռուս ուղղափառ քրիստոնյա, որոնց մեծ մասը Ռուսաստանից եկած ու բնակության թույլտվություն ստացած գաղթականներ են, 10 հազար բահայականներ, 5 հազար եզդիներ, 5 հազար Եհովայի վկա, 7 հազար բողոքական, 3 հազար քաղդեացի քրիստոնյա Իրաքից, 2500 հույն ուղղափառ քրիստոնյա: Բացի այդ, թեև կոնկրետ թիվը հայտնի չէ, սակայն այդ տոկոսի մեջ են մտնում նաև բուլղար ուղղափառները, նեստորականները, վրացի ուղղափառները, ասորի կաթոլիկները, հայ կաթոլիկներն ու մարոնիները[428]:

Թուրքիայի հատուկ ծառայությունների կանխատեսումներով, միսիոներական գործունեության արդյունքում 2020 թ. Թուրքիայում քրիստոնեություն ընդունածների թիվը կկազմի բնակչության 10 տոկոսը[429]: Հաշվի առնելով, որ Թուրքիայի բնակչությունը ներկայումս կազմում է ավելի քան 75 մլն, կարելի է ասել, որ սույն կանխատեսման համաձայն, քրիստոնյաների թվաքանակը Թուրքիայում 2020թ. կկազմի մոտ 7 մլն: Թուրքիայի քրիստոնեացումը հարուցում

---

[428] Տե՛ս Ալվրցյան Հ., Կրոնափոխ հայերի խնդիրները Թուրքիայի Հանրապետությունում, էջ 58-59:

[429] Տե՛ս Խաչիկյան Տ., Միսիոներությունը Թուրքիայում: «Կրոն և հասարակություն», Եր., 2009, թիվ 9, էջ 39:

է իշխանությունների և ազգայնամոլ տարրերի անհանգստությունն ու հակազդեցությունը: Այն դրսևորվում է քրիստոնյաների դեմ սպառնալիքների, բռնությունների ու սպանությունների տեսքով, որոնք զուգորդվում են իրավապահ մարմինների կողմից այդ հանցագործությունները բացահայտելու «անկարողությամբ» կամ դատարանների կողմից հանցագործների նկատմամբ կայացված մեղմ վճիռներով[430]:

Թուրքիայում քրիստոնյաները մինչև օրս պետության հսկողության տակ են, լսվում են քահանաների հեռախոսները: Քրիստոնյաները չունեն հին գրադարաններից մնացած ժառանգությունը պահպանելու ապահով վայրեր՝ ազատ պետության տնօրինումից: Թուրքիայի քրիստոնյաների համար մինչ օրս մեծագույն մտահոգություն է ազգային դպրոցների անկախության բացակայությունը[431]:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հեղեղված է Թուրքիայի դեմ այդ երկրի ոչ մահմեդական փոքրամասնությունների ներկայացուցիչների ներկայացրած հայցերով: 2007 թ. ընթացքում Թուրքիայի Հանրապետության դեմ Մարդու իրավունքների եվրոպական դատարան ներկայացված հայցերի թիվը կազմում էր 2830, որոնցից 331-ի կապակցությամբ դատարանն արդեն որոշումներ է կայացրել՝ արձանագրելով 319 խախտում[432]: 2010 թ. Թուրքիայի դեմ ներկայացված հայցերի թիվն արդեն կազմում էր հինգ հազար, իսկ 2011 թ. դրանց թիվը հասավ յոթ հազարի, և Թուրքիան, հիմնականում, տանուլ է տալիս այդ դատական գործերը: Թուրքիայի արտգործնախարար Ա. Դավութօղլուն, միանալով Արդարադատության նախարարին, այդ դատական հայցերին նվիրված մամուլի ասուլիսի ժամանակ հայտարարեց, որ Եվրոդատարանում հայցերի նման քա-

---

430 Տե՛ս Սիմավորյան Ա., նշվ. աշխ., էջ 105:
431 Տե՛ս Բառում Վ., նշվ. աշխ., էջ 170:
432 Տե՛ս Թուրքիա-ԵՄ-Հայաստան. մարտահրավերները և հնարավորությունները, էջ 40:

նակը նշանակում է, որ Թուրքիայում ինչ-որ մի «հիվանդություն» կա, որը հարկավոր է «բուժել»: Նա առաջարկեց փոխել պաշտպանության մեթոդները և այդ հարցում նոր մարտավարություն մշակել, քանի որ Թուրքիան պարտվում է գրեթե բոլոր դատական գործերը: Թուրքիայի դեմ ներկայացված հայցերը նա բաժանել է երեք հիմնական խմբերի՝ Կիպրոսի տարածքների զավթման հետևանքով առաջացած հսկայական քանակի դատական հայցեր, Թուրքիայի հնացած ներքին օրենքների հետևանքով փոքրամասնությունների իրավունքները ոտնահարելու հայցեր՝ թվով 19 հազար գործ և մամուլի ազատությունների սահմանափակման ու մասնավորապես, Քրեական օրենսգրքի 301-րդ հոդվածի կիրառման հետևանքով ներկայացված հայցեր[433]: Հիշեցնենք, որ Թուրքիայի Քրեական օրենսգրքի 301-րդ հոդվածը վեց ամսից մինչև երեք տարի ժամկետով ազատազրկում է նախատեսում թուրքական ազգին, Թուրքիայի Հանրապետությանը կամ խորհրդարանին վիրավորանք հասցնելու համար, որը ժամանակակից քաղաքակիրթ աշխարհում խիստ քննադատելի մոտեցում է: Ավելին, Human Right's Watch միջազգային կազմակերպության տվյալների համաձայն, թուրքական օրենքները պարունակում են ավելի քան 300 հոդվածներ, որոնք սահմանափակում են խոսքի, դավանանքի և միավորման ազատության իրավունքները[434]:

Այժմ առանձին-առանձին անդրադառնանք Լոզանի պայմանագրով պաշտոնապես ոչ մահմեդական փոքրամասնություն ճանաչված և չճանաչված համայնքների նկատմամբ թուրքական խտրական քաղաքականության դրսևորումներին:

---

[433] Տե՛ս Ազատյան Ե., Որոնվում են պատմական Հայաստանում թողած 6 տոննա ոսկու սեփականատերերը, «Ազգ» օրաթերթ, 30/11/2011, թիվ 216:

[434] Տե՛ս Questions and Answers: Freedom of Expression and Language Rights in Turkey, http:/www.hrw.org/press/2002/08/turkeyqa041902.html

2.2.1. Խտրական քաղաքականության դրսևորումները հայերի նկատմամբ

Լոզանի պայմանագրով թուրքական իշխանությունների կողմից ոչ մահմեդական փոքրամասնություն ճանաչված Ստամբուլի հայ համայնքից բացի՝ Թուրքիայում ապրում էին նաև հայության այլ համայնքներ ու խմբեր՝ հայ կաթոլիկ և ավետարանական համայնքները, համշենահայերը և Արևմտյան Հայաստանի նահանգներում բռնի իսլամացված ծպտյալ հայերը:

Ընդհանրապես, թուրքական իշխանությունները մշտապես ձգտել են թուլացած վիճակում պահել Ստամբուլի հայկական համայնքը, որը, կարծես, պատանդ է դարձել Թուրքիայի իշխանության ձեռքին[435]: Ցավով պետք է նշել, որ այդ հարցում համայնքի որոշ գործիչներ կամա թե ակամա, առաջնորդվելով անձնական կամ նեղ խմբային շահերով, իրենց քայլերով ու անգործությամբ, երբեմն, օգնել են նրանց այդ հարցում[436]:

1930-ականներին Ստամբուլի հայ համայնքում վախի և հալածանքի մթնոլորտը մեծ ծավալներ է ընդունում ու ստիպում ստամբուլահայերի մի մասին քայլեր կատարել ընդհանուր հայությունից տարանջատվելու և իրենց գոյությունը պաշտպանելու համար: Մասնավորապես՝ դրա ամենացայտուն օրինակներից է այն, որ 1935 թ. դեկտեմբերի 15-ին Բանգալթըի հայոց եկեղեցում մի խումբ հայեր թուրքական պետությանն իրենց հավատարմությունն ապացուցելու համար ցուցադրաբար այրեցին «Մուսա լեռան քառասուն օրը» ստեղծագործությունը այն պատճառով, որ գիրքը պարունակում էր թուրք ազգի մասին «զրպարտություններ»[437]:

---

[435] Տե՛ս նույն տեղում:

[436] Տե՛ս Միասնական կեցուածք Պատրիարքարանի շուրջ ու պետության դիմաց, http://www.normarmara.com/marmara.htm

[437] Տե՛ս Մելքոնյան Ռ., Ակնարկ Ստամբուլի հայ համայնքի պատմության…, էջ 51:

Երկրորդ աշխարհամարտի սկսվելուց հետո՝ 1941 թ., թուրքական իշխանությունները, առանց զգուշացնելու, երկու օրվա ընթացքում զորակոչ անցկացրին, ինչը խոսում է նախապատրաստական գաղտնի աշխատանքների մեծ ծավալի մասին: Մարդկանց հավաքում էին տներից, գործատեղերից, փողոցներից: Շատերը ծառայել էին բանակում, որոշների համար էլ դա երրորդ զորակոչն էր: Այս զորակոչը հիշեցնում է Առաջին աշխարհամարտի ժամանակ 18-45 տարեկան հայ տղամարդկանց օսմանյան բանակ զորակոչելու և դավադիր կերպով ոչնչացնելու ծրագիրը: Ի տարբերություն հույների և հրեաների, հայերը կրկին ուղարկվեցին բանվորական գումարտակներ՝ քարհանքերում աշխատելու կամ ճանապարհներ կառուցելու: Սա ևս մի հավելյալ ապացույց է, որ հայերի նկատմամբ վերաբերմունքն էականորեն տարբերվում էր մյուս փոքրամասնությունների նկատմամբ վերաբերմունքից[438]:

«Ունևորության հարկի մասին» 1942 թ. օրենքը գործադրվեց ամենայն խստությամբ ու հետևողականությամբ: Ըստ այս օրենքի, թուրք առևտրականը պետք է վճարեր իր տարեկան եկամտի 4.74 տոկոսը, հույնը՝ 150 տոկոսը, հրեան՝ 179 տոկոսը, իսկ հայը՝ 232 տոկոսը. այսինքն՝ հույները թուրքերի համեմատությամբ վճարում էին 31 անգամ ավելի, հրեաները՝ 36 անգամ, իսկ հայերը՝ 47 անգամ[439]: Բնական է, որ հատկապես հայերը չէին կարող կատարել հարկային նման պարտականությունները: Եվ ահա, շատ չանցած, սկսվում են նրանց նկատմամբ պատժամիջոցները: Ովքեր չկարողացան վճարել հարկերը, նրանց ունեցվածքը՝ տուն, հող, խանութ, արհեստանոց, գործարան և այլն, աճուրդով վաճառվեց: Նրանք, ում

---

[438] Տե՛ս Ալվրցյան Հ., Կրոնափոխ հայերի խնդիրները Թուրքիայի Հանրապետությունում, էջ 46:

[439] Տե՛ս Գեղամեան Ս., Թուրքիայի ազգային բուրժուազիան երկրի տնտեսական և սոցիալ-քաղաքական կեանքում 1945-50 թթ., «Դրօշակ», 1989, փետրվար, էջ 31:

ունեցվածքի վաճառքից գոյացած գումարը չէր բավարարում հարկի պարտքը փակելուն, աքսորվեցին Աշքալեի գավառ՝ քարհանքերում տաժանակիր աշխատանքի կամ Կարինից Սեբաստիա ճանապարհը կառուցելու: Հատկանշական է, որ նույնիսկ աքսորավայր հասնելու ծախսը գանձվում էր աքսորվողներից, որոնցից շատերն այլևս աքսորավայրից չվերադարձան[440]: Այսպես, պոլսահայ համայնքի գործարար Թոքաթլյանին նշանակվել էր 1 մլն լիրայի հարկ, հույս ունենալով, որ այդ խոշոր գումարը չի վճարվի և նրա ունեցվածքը կպետականացվի, սակայն Թոքաթլյանը հավաքում է այդ գումարը և ներկայացնում Ստամբուլի հարկային վարչություն: Թուրք պաշտոնյաները հայտնում են, որ նրա հարկը ոչ թե 1, այլ 10 մլն թուրքական լիրա է և, իբր, սխալմամբ մեկ զրո չի գրվել: Լսելով այս լուրը՝ Թոքաթլյանը սրտի կաթված է ստանում[441]: Հարկային այս անհեթեթ օրենքի դաժան գործադրմամբ, բռնի կրոնափոխության նոր ալիք առաջացավ. Արսլան Գոթան անունով խարբերդցի ծպտյալ հայը վկայում է, թե ինչպես իր ընտանիքից պահանջում էին վճարել հազար ոսկու «ունևորության հարկը»: Քանի որ ամբողջ ունեցվածքը վաճառելով հանդերձ՝ նրանք ի վիճակի չէին վճարել հարկը, ստիպված ամբողջ ընտանիքով մահմեդական դարձան[442]: 1940-ականներին հայերը միայն արհեստավոր էին, որովհետև անելու այլ գործ չէր մնացել: Նրանք կորցրել էին իրենց հողամասերը և պաշտոնյա կամ զինվորական դառնալ էլ չէին կարող[443]: Այսքանով կարելի է ասել, որ թուրքացման քաղաքականությունն ամենախոշոր չափերի է հասել Ի. Ինոնյուի օրոք և պատճառ դարձել գավառներում ծպտյալ հայերի թվի ավելացման:

---

440 Տե՛ս Ալվրցյան Հ., Կրոնափոխ հայերի խնդիրները Թուրքիայի Հանրապետությունում, էջ 47:
441 Տե՛ս Մելքոնյան Ռ., Ակնարկ Ստամբուլի հայ համայնքի պատմության…, էջ 19:
442 Տե՛ս «Ալիք», Թեհրան, 1981, դեկտեմբերի 9:
443 Տե՛ս «Նոր Մարմարա», Ստամբուլ, 2001, նոյեմբերի 21:

Երբ ԽՍՀՄ-ը 1945-ի դեկտեմբերին սփյուռքահայերին Խորհրդային Հայաստան ներգաղթելու քաջալերող կոչով հանդես եկավ, 10 հազար ստամբուլահայեր մինչև 1946 թ. դեկտեմբերը ԽՍՀՄ դեսպանատուն արդեն դիմում էին ներկայացրել: Պատրիարքական տեղապահ Գևորգ արք. Արսլանյանը 1946 թ. հոկտեմբերի 18-ի նամակում Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Զ-ին տեղեկացնում էր, որ Թուրքիայում բնակվող հայերը շատ են երազում Հայաստան տեղափոխվել, սակայն, առաջին հերթին, նախապատվությունը պետք է տալ արևելյան նահանգների գյուղերում ցրված ու ծանր կացության մեջ գտնվողներին[444]: 1945 թ. դեկտեմբերին Անկարայից ավելի քան 200 հայ ընտանիք աքսորվեց անհայտ ուղղությամբ[445], իսկ ծայրայեղ «աջերը» մեծ աղմուկ էին բարձրացրել՝ դեպի Խորհրդային Հայաստան թուրքահայերի «արտագաղթը» ձախողեու նպատակով[446]:

1945 թ. հուլիսի 25-ին Ստամբուլում ԽՍՀՄ հյուպատոսությունից Մոսկվա ուղարկված «հույժ գաղտնի» զեկուցագրում միայն Ստամբուլում այդ ժամանակ ապրում էր 75 000 հայ, արևելյան շրջաններում՝ շուրջ 25 000, բռնի իսլամացված հայերի վերաբերյալ էլ նշվում էր, որ նրանց թիվը գերազանցում է 100 000-ը[447]: Թեև թուրքական իշխանություններն ու մամուլը ագրեսիվ պահվածք էին որդեգրել թուրքահայերի՝ Խորհրդային Հայաստան ներգաղթի գործընթացի նկատմամբ, այդուհանդերձ, խորհրդային հյուպատոսարանի մոտ հայերի մեծ հերթեր էին գոյանում, ընդ որում, դրանք ոչ միայն

---

[444] Տե՛ս Քյուրքճյան Ա., Թուրքերուն՝ Թուրքիան թրքացնելու քաղաքականությունը, http://ermeni.hayem.org/ermenice/trqatsnelu_qaghaqakanutyune.htm

[445] Տե՛ս «Արարատ», 1946, յունուարի 4:

[446] Տե՛ս Խանլարեան Կ., Հայ բնակչութեան էթնոկրօնական վերակերպումները Թուրքիայի Հանրապետութիւնում (1923-2005 թթ.), էջ 88:

[447] Մելքոնյան Ռ., Աբրահամյան Մ., Օսմանյան կայսրության և Թուրքիայի Հանրապետության բռնի իսլամացման քաղաքականությունը հայերի նկատմամբ որպես ցեղասպանական արարք, Եր., 2015, էջ 185-186:

Ստամբուլից, այլև՝ արևելյան նահանգներից եկող բռնի իսլամացված հայեր էին, որոնց թիվը հասնում էր 15 000-ի[448]:

1955 թ. սեպտեմբերի 6-7-ի իրադարձությունները իշխանությունները փորձեցին ներկայացնել՝ որպես ամբոխի տարերային գործողություններ, սակայն ակնհայտ էր, որ դրանք կազմակերպել էին հատուկ ծառայությունները հունական և հայկական համայնքների դեմ: Թերթերում սադրիչ լուր տարածվեց այն մասին, թե Սալոնիկում գտնվող այն տան վրա, որտեղ ապրել է Մ. Քեմալը, ռումբ է նետվել: Անմիջապես ցույցերի դուրս եկած ամբոխին հատուկ ծառայություններն ուղղորդվեց դեպի հունական և հայկական թաղամասեր, ուր նախօրոք նշաններով առանձնացվել էին նրանց տներն ու խանութները[449]:

Հույների և հայերի դեմ իրականացված բռնությունների նոր ալիքը չշրջանցեց Արևմտյան Հայաստանի ծպտյալ հայերին: 1958թ. Կեսարիայի Քեռհնե գյուղում գյուղապետի կարգադրությամբ յոթ հայ ընտանիք ամբողջապես բնաջնջվեց[450]: Նման պայմաններում ծպտյալ հայությունն իր իրավունքների պաշտպանությունը փորձում էր գտնել թուրքական ձախակողմյան հոսանքներում: Արևմտյան և Հարավ-արևմտյան Հայաստանում բռնկված քրդական ազատագրական շարժումները անմիջական ազդեցություն ունեցան ծպտյալ հայության վրա: Հայկական կազմակերպությունների չգոյության պայմաններում որոշ ծպտյալ հայեր անդամագրվեցին քրդական կառույցներին:

1970-80-ական թթ. Թուրքիայում ակտիվացավ «Գորշ գայլերի» հակահայ գործունեությունը: Ռազմականացված այս կառույցի գրո-

---

448 Տե՛ս նույն տեղում, էջ 190:

449 Ալվրցյան Հ., Կրոնափոխ հայերի խնդիրները Թուրքիայի Հանրապետությունում, էջ 50:

450 Տե՛ս «Ալիք», Թեհրան, 1958, դեկտեմբերի 23:

հայիններն այդ ժամանակահատվածում բուռն գործունեություն ծավալեցին ինչպես այլախոհների, այնպես էլ հայության դեմ: Միայն 1977-80 թթ. երեք անգամ պայթյուններ իրականացվեցին Կ. Պոլսո պատրիարքարանի մոտ[451]: Հայ ազատագրական շարժման նոր զինյալ պայքարի ժամանակաշրջանում «Գորշ գայլերի» կիրառած թրքացման քարոզարշավների սպառնալիքի պայմաններում արևմտահայությունը, հայկական ծագումը քաղաքական հանցանք համարելով, ստիպված ինքն իրեն ներկայացնում էր որպես քրիստոնյա թուրք[452]:

1980-ականներին զինվորական խունտան առիթը բաց չէր թողնում հայության դեմ քրեական գործեր հարուցելու համար: Պոլսի հայոց պատրիարք Շնորհք արք. Գալուստյանը հարցաքննվեց Երուսաղեմից եկած քահանա Մանվել Երկաթյանի միջոցով դիարբեքիրցի հայ տղաներին Երուսաղեմ տեղափոխելու գործի կապակցությամբ[453]:

Ք. Էվրենի զինվորական իշխանությունները սկսեցին պետական մարմիններից մաքրել թուրքական պատկանելություն չունեցող կադրերին: 1988 թ. գաղտնազերծված 221 «մաքրագործվածների ցուցակում» հանդիպում են Արտաշ Բարթուղյանի, Աննիկ Սվաճյանի և Շյուքրու Բալչիի անունները: Վերջինս Ստամբուլի քաղաքապետարանի սոցիալական ապահովության բաժնի ղեկավարն էր և պաշտոնից հեռացվեց հայկական ծագում ունենալու պատճառով[454]:

Թուրքական իշխանությունները մշտապես վերահսկողության տակ են պահել նաև պոլսահայ համայնքի առանցքը համարվող Հայոց պատրիարքարանի գործունեությունը: Չնայած Լոզանի պայմա-

---

[451] Տե՛ս «Ալիք», Թեհրան, 1981, հոկտեմբերի 31:
[452] Տե՛ս Խանլարեան Կ., Հայ բնակչութեան էթնոկրօնական վերակերպումները Թուրքիայի Հանրապետութիւնում (1923-2005 թթ.), էջ 139:
[453] Տե՛ս «Ալիք», Թեհրան, 1985, նոյեմբերի 24:
[454] Տե՛ս «Դրօշակ», Աթենք, 1988, սեպտեմբերի 28, էջ 40:

նագրով հայ առաքելական համայնքի իրավունքների ամրագրմանը, Պոլսի Հայոց պատրիարքության իրավական կարգավիճակն այդպես էլ հստակեցված չէ: Թուրքական օրենսդրության տեսակետից այդ կառույցն իրավաբանական անձ չի հանդիսանում և սեփականության իրավունք չունի: Օրենսդրորեն Պոլսի պատրիարքությունը Մայր եկեղեցուն կից հաստատություն է: Այդ իսկ պատճառով այն իրավունք չունի անշարժ և շարժական գույք գնել և գնված սահմանափակ գույքն էլ գրանցվում է պատրիարքի անունով[455]:

1944 թ. Մեսրոպ պատրիարքի մահվանից հետո Գևորգ եպիսկոպոս Արսլանյանը դառնում է տեղապահ և համայնքում սրվում են ներքին երկպառակությունները: Թուրքական իշխանությունների կողմից յոթ տարի Հայոց պատրիարք ընտրելու թույլտվություն չի տրվում: Համայնքում բողոքի ալիք է բարձրանում, իսկ 1948 թ. պատրիարքության մի շարք հոգևորականներ նույնիսկ ընդվզում են տեղապահի դեմ: Ստեղծված իրավիճակը հանգուցալուծելու նպատակով միջամտեցին Ամենայն Հայոց Գևորգ Զ. և Կիլիկիայի Գարեգին Ա. կաթողիկոսները: 1950 թ. անցկացված ընտրություններում պատրիարք ընտրվեց Գարեգին արքեպիսկոպոս Խաչատուրյանը[456]:

1961 թ. պատրիարք է ընտրվում Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյանը, որը 1960 թ. Երուսաղեմի պատրիարքությունից տեղափոխվել էր Ստամբուլ հենց Գարեգին պատրիարքի հրավերով: Շնորհք պատրիարքի ջանքերով համայնքային կյանքում աշխուժություն է նկատվում, շարունակվում են աշխատանքները գավառահայության վիճակի բարելավման և ուծացումից փրկելու ուղղությամբ: 1966 թ. Մուշի Վարթո գավառում տեղի է ունենում երկրաշարժ, որից հետո այնտեղ բնակվող հազարավոր հայեր գաղթում

---

[455] Տե՛ս Մելքոնյան Ռ., Ակնարկ Ստամբուլի հայ համայնքի պատմության…, էջ 60:
[456] Տե՛ս Զաւեն Ա. քինյ. Արզումանեան, Թուրքիոյ Պատրիարքութիւնը, Ազգապատում, հատոր դ. Գիրք բ., Նյու Եորք, 1997, էջ 78-82:

են Ստամբուլ: Շնորհք պատրիարքի գլխավորությամբ ստեղծվում է «Գավառացի կարիքավորների օգնության հանձնաժողով»՝ զբաղվելու տուժածների համար ապաստան և աշխատանք գտնելու գործով: Շնորհք պատրիարքի օրոք ստեղծվում է պատրիարքության խորհրդակցական մարմին, որի կազմի մեջ են մտել համայնքի մտավորականներ և հեղինակավոր անձինք: Աշխարհիկ այս կառույցը մեծ նշանակություն և կարևորություն ուներ, սակայն Շնորհք պատրիարքի մահից հետո վերացվեց[457]:

1998 թ. թուրքական իշխանությունները կրկին արհեստական խնդիրներ են ստեղծում պատրիարքական ընտրությունների ժամանակ, ինչի հետևանքով նորից լարվում է մթնոլորտը համայնքի ներսում: Համայնքում ձևավորվում են երկու թեկնածուներին աջակցող թիմեր, որոնց միջև պայքարը, գնալով, խորանում է: Քանի որ Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆյանը սկզբնական շրջանում չէր վայելում թուրքական իշխանությունների համակրանքը, ուստի նրա թեկնածությունը պաշտպանում էին «Ակօս» ու «Ժամանակ» թերթերը: Վերջիններս հույս ունեին, որ նա, որպես հոգևորականների երիտասարդ սերնդի ներկայացուցիչ, եռանդ ու ցանկություն կունենա լուծելու հայ համայնքի առջև ծառացած խնդիրները: Իսկ համայնքի պահպանողական հատվածը և «Նոր Մարմարա» թերթը սատարում էին Շահան արքեպիսկոպոս Սվաջյանին: Պատրիարք ընտրվեց Մեսրոպ Մութաֆյանը, որն ընտրվելուց հետո փոխեց իր նախնական մոտեցումները և սկսեց շահել թուրքական իշխանությունների համակրանքը: Նա մի քանի անգամ թուրքական պաշտոնական տեսակետի հետ համընկնող ելույթներ ու հայտարարություններ ունեցավ Հայոց ցեղասպանության հարցի առնչությամբ, ինչի հետևանքով ավելի խորացան Պոլսի պատրիարքության և Հայաստանի ու

[457] Տե՛ս Մելքոնյան Ռ., Ակնարկ Ստամբուլի հայ համայնքի պատմության…, էջ 54:

Սփյուռքի միջև հակասությունները: Իշխանությունների համակրանքը շահելու քայլերից մեկն էլ այն էր, որ Մ. Մութաֆյանը 2007 թ. խորհրդարանական ընտրությունների նախօրեին բացահայտորեն հայտարարեց, թե համայնքը քվեարկելու է ԱԶԿ-ի օգտին[458]: Համայնքային խնդիրներին պատրիարք Մութաֆյանի մոտեցումները լուրջ դժգոհություններ առաջացրին նաև համայնքի ներսում, և ընտրությունների ժամանակ նրան սատարած մարդկանց մի մասը սկսեց բացահայտ քննադատել նրա գործունեությանը: Սրվեցին Հր. Դինքի և «Ակօս»-ի մերձավոր շրջապատի հարաբերությունները պատրիարքի հետ: Մ. Մութաֆյանի և Հր. Դինքի միջև գլխավոր տարաձայնություններից մեկն այն էր, որ Դինքն առաջարկում էր վերականգնել Շնորհք պատրիարքի ժամանակ ստեղծված համայնքի կառավարման աշխարհիկ կառույցը, որով համայնքի կառավարման գործերին մասնակցություն կունենային նաև աշխարհիկ գործիչները: Դա թուլացնում էր Պատրիարքարանի միջոցով թուրքական իշխանությունների անսահման ազդեցությունը համայնքի վրա: Այս առաջարկը Մութաֆյանն ընկալում էր՝ որպես իր պատրիարքական իշխանության սահմանափակում և կտրականապես մերժում էր այն: 2008 թ. Մ. Մութաֆյանի մոտ հայտնաբերվեց հիշողության կորստի հետ կապված անբուժելի հիվանդություն, ինչի հետևանքով նա, փաստորեն, դարձավ անգործունյա[459]:

Թուրք հրապարակախոս և հրատարակիչ Ռագըփ Զարաքոլուն գտնում է, որ Հրանտ Դինքի սպանությունից հետո Մեսրոպ պատրիարքի անբուժելի հիվանդանալը ամենևին էլ պատահական չէր: Նա կարծում է, որ Մութաֆյանին թիրախ ընտրած «Էրգենեքոնի» անդամների մահափորձերի ծրագրերը վերջապես հաջողությամբ պսակվեցին. պատրիարքը, ֆիզիկապես ողջ լինելով հանդերձ, ան-

[458] Տե՛ս Շաքարյան Ա., նշվ. աշխ., էջ 98:
[459] Տե՛ս Մելքոնյան Ռ., Ակնարկ Ստամբուլի հայ համայնքի պատմության…, էջ 56:

գործունյա էր և չէր կարող կատարել իր պարտականությունները: Զարաքոլուն նշում է, որ առողջական առաջին լուրջ խնդիրը Մութաֆյանն ունեցավ Դինքի թաղման արարողությունը ղեկավարելիս: Դրանից երկու ամիս անց, խոսելով Պատրիարքարանի և համայնքի առջև ծառացած խնդիրների մասին, նա ընդգծեց, որ Դինքի սպանությունից հետո տարօրինակ ստուգումներ են սկսվել հայկական հաստատություններում և թերթերի խմբագրություններում, պատահական չհամարեց նաև Դինքի մահվան քառասունքին էլ եկեղեցու այգում կրակոցների արձակումը, որոնք որակեց՝ որպես պատրիարքարանի և հայկական հաստատությունների դեմ ուղղված գործողություն: Մութաֆյանի հիվանդանալուց հետո անհետացավ հայ համայնքում նախկինում եղած միասնականության ոգին[460]: Եվ իսկապես, Դինքի սպանությամբ հայկական համայնքը զրկվեց ազդեցիկ աշխարհիկ գործչից, իսկ Մութաֆյանի հիվանդանալով՝ հոգևոր առաջնորդից: Գլխատված համայնքը կրկին կանգնեց նոր պատրիարք ունենալու դժվարին խնդրի առջև:

2009 թ. նոյեմբերին Պոլսո Հայոց պատրիարքության անունից Ստամբուլի նահանգապետարան դիմում ներկայացվեց՝ աթոռակից պատրիարքի կամ համապատրիարքի ընտրություններ անցկացնելու թույլտվության խնդրանքով, իսկ որոշ ժամանակ անց համայնքի անդամներից ձևավորված Նախաձեռնող մարմինն, իր հերթին, դիմեց նահանգապետարան՝ խնդրելով պատրիարք ընտրելու թույլտվություն: Փաստորեն, հայ համայնքի կողմից երկու տարբեր դիմումներ ներկայացվեցին, որոնցում կար իրավական էական տարբերություն՝ ընտրել պատրիա՞րք, թե՞ աթոռակից պատրիարք[461]: Այս-

---

[460]Տե՛ս Զարաքոլու Ռ., Երկրորդ կոմիտասյան դեպքը, http://www.evrensel.net/news.php?id=8770

[461] Տե՛ս Արամ սրբազանի հետ պոլսահայ համայնքը խնդիրներ ունի. «Ակօս»-ի գլխավոր խմբագիր, http://news.am/arm/news/108940.html

պիսով, ստամբուլահայ համայնքը թուրքական իշխանություններին Պատրիարքարանի գործերին միջամտելու փայլուն առիթ տվեց և վերջիններս օգտվեցին դրանից՝ պառակտելով և թուլացնելով հայկական համայնքը: Համայնքի ճակատագիրը որոշելու նախաձեռնությունը կրկին անցավ թուրքական իշխանությունների ձեռքը: Այս իրավական անորոշությունը պատրվակ դարձնելով, թուրքական իշխանությունները երկար ժամանակ անպատասխան թողեցին դիմումները:

2010 թ. հունիսի 29-ին Թուրքիայի Ներքին գործերի նախարարությունը Ստամբուլի նահանգապետարանի միջոցով պատասխանեց, որ իշխանությունները նպատակահարմար չեն գտնում ո՛չ պատրիարքի և ո՛չ էլ աթոռակից պատրիարքի ընտրությունները, այլ թույլ են տալիս ընտրել պատրիարքի ընդհանուր փոխանորդ: Պետք է նշել, որ թուրքական իշխանությունների այս որոշումն ուղղակիորեն հակասում էր Պոլսի պատրիարքարանի կանոնադրությանը, որի համաձայն, պատրիարքական ընդհանուր փոխանորդը ոչ թե ընտրովի, այլ պատրիարքի կողմից նշանակովի պաշտոն էր: Հատկանշական է, որ այդ պաշտոնին նշանակված Շահան արքեպիսկոպոս Սվաջյանը թուրքական իշխանությունների որոշումից անմիջապես հետո հրաժարական տվեց, և մի քանի ժամ անց պատրիարքության հոգևոր խորհուրդը հապշտապ պատրիարքի ընդհանուր փոխանորդ ընտրեց Արամ արքեպիսկոպոս Աթեշյանին[462]: Այս ամբողջ գործընթացից երևում է, որ փոխանորդ ընտրելու թույլտվության որոշումը թուրքական իշխանությունները կայացրել են, հասկանալով, որ իրենց նախընտրած թեկնածուն համահամայնքա-

[462] Տե՛ս Կուսակալության պատասխանը հրահա՞նգ էր, թե յանձնարարություն, http://www.normarmara.com/marmara.htm

յին ընտրություններում հաղթելու բավարար հնարավորություններ չունի[463]:

Այս զարգացումները խիստ բացասական հետևանքներ ունեցան Ստամբուլի հայության վրա, և այն ոգևորությունը, որ նկատվում էր համայնքում նախընտրական քարոզարշավի ժամանակ, անմիջապես տեղը զիջեց հուսախաբությանն ու անորոշությանը, ավելի սրվեց պայքարը տարբեր խմբավորումների միջև: Պատրիարքի ընտրության հետ կապված խմորումները չէին դադարել, երբ կազմակերպվեց ստորագրահավաք, որի մասնակիցները պահանջում էին համապատրիարքի ընտրություններ և իրենց բողոքն էին հայտնում փոխանորդության դեմ: Ստամբուլի հայ համայնքի նախաձեռնող խումբը դատական հայց էր ներկայացրել Թուրքիայի Ներքին գործերի նախարարության դեմ՝ Պոլսո Հայոց պատրիարքի ընտրությունը համայնքի կողմից իրականացնելու իրավունքը ոտնահարելու վերաբերյալ, իսկ համայնքի թերթերը երկար ժամանակ օրակարգում էին պահում այս խնդիրը: 2011 թ. փետրվարին թուրքական դատարանը մերժեց նախաձեռնող խմբի հայցը, նշելով, թե հիշյալ հայցի քննարկումը չի մտնում դատարանի իրավասությունների մեջ[464]: Թուրքիայի դատական համակարգի բոլոր ատյաններում իրենց իրավունքները պաշտպանելու հնարավորությունները սպառելուց հետո հանձնախմբի անդամներն, ամենայն հավանականությամբ, կդիմեն նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարան[465]: Փաստորեն, կրկնվեցին 1944-1950 թթ. իրադարձությունները, երբ Գևորգ եպիսկոպոս Արսլանյանի տեղապահության շրջանում

---

[463] Տե՛ս Արամ սրբազանի հետ պոլսահայ համայնքը խնդիրներ ունի. «Ակօս»-ի գլխավոր խմբագիր, http://news.am/arm/news/108940.html

[464] Տե՛ս Արամ սրբազանի հետ պոլսահայ համայնքը խնդիրներ ունի. «Ակօս»-ի գլխավոր խմբագիր, http://news.am/arm/news/108940.html

[465] Տե՛ս Պոլսո պատրիարքի ընտրության հարցը կարող է հասնել մինչև Եվրոդատարան, Armweeklynews.am, 30.09.11

թուրքական իշխանությունները թույլ չէին տալիս անցկացնել պատրիարքի ընտրություններ: Հր. Դինքի սպանությունից և հիվանդության հետևանքով Մեսրոպ Բ պատրիարքի անգործունյա դառնալուց հետո թուրքական իշխանությունների առջև Ստամբուլի հայկական համայնքի շահերն ու իրավունքները փորձում են ներկայացնել ու պաշտպանել Սուրբ Փրկիչ հիվանդանոցի վարչական խորհրդի նախագահ, մեծահարուստ գործարար Պետրոս Շիրինօղլուն՝ որպես աշխարհիկ, և պատրիարքական ընդհանուր փոխանորդ Արամ արքեպիսկոպոս Աթեշյանը՝ որպես հոգևոր առաջնորդ[466]:

Երկարատև միջնորդություններից ու բանակցություններից հետո որոշվեց, որ Պոլսի Հայոց պատրիարքի տեղապահի ընտրության հարցը վերջնականապես կլուծվի 2017 թ. մարտի 15-ի հոգևորականների ժողովին կայանալիք ընտրությունների միջոցով: Առաջադրվել էին երկու թեկնածուներ՝ պատրիարքական ընդհանուր փոխանորդ Արամ արքեպիսկոպոս Աթեշյանը և Գերմանիայի Հայոց թեմի առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոս Բեքչյանը: Երբ փակ գաղտնի քվեարկության արդյունքներով պարզվեց, որ Պոլսի Հայոց պատրիարքի տեղապահ ձայների մեծամասնությամբ ընտրվել է Գարեգին արքեպիսկոպոս Բեքչյանը, պարտություն կրած Ա. Աթեշյանը պատրիարքարանի հոգևորականներին ներկայացրեց քվեարկությունից դեռ ժամեր առաջ Ստամբուլի նահանգապետարանից ստացված գրությունը, որով նահանգապետարանը արգելել էր Ստամբուլի Հայոց պատրիարքի ընտրության անցկացումը[467]: Այս ամենից ակնհայտ երևում է, որ Ա. Աթեշյանի և թուրքական իշխանությունների միջև առկա է եղել գաղտնի պայմանավորվածություն, համաձայն

---

[466] Տե՛ս Պոլսի Սուրբ փրկիչ հիվանդանոցը 180 տարեկան է, http://azg.am/AM/2012120113

[467] Տե՛ս Ստամբուլի նահանգապետարանը միջամտել է Պոլսո Հայոց պատրիարքի ընտրություններին, http://www.tert.am/am/news/2017/03/15/Stambul/2309753

որի նահանգապետարանից ստացված փաստաթուղթը հրապարակվելու էր միայն Աթեշյանի չընտրվելու դեպքում, ինչն էլ տեղի ունեցավ՝ այդ կերպ թույլ չտալով Անկարայի համար անցանկալի թեկնածուի՝ Գ.Բեքչյանի պատրիարքի տեղապահ ընտրվելը: Ասվածի ապացույցն այն է, որ Աթեշյանը Ստամբուլի նահանգապետարանի գրության հիման վրա չեղյալ հայտարարեց հոգևորականների ժողովի որոշումը և հրաժարվեց հեռանալ պատրիարքական ընդհանուր փոխանորդի պաշտոնից: Աթեշյանի նման գործելաոճը կրկին դժգոհության բուռն ալիք բարձրացրեց Ստամբուլի հայ համայնքում: Այսպիսով, թուրքական իշխանություններն կրկին միջամտեցին Պոլսի Հայոց պատրիարքական ընտրության գործընթացին, սակայն այս ամենի մեջ ցավալին այն է, որ այդ գործում նրանց կրկին մեծ ծառայություն մատուցեց հայ բարձրաստիճան հոգևորականը:

Որպես ընտրազանգված՝ Ստամբուլի հայ համայնքը որոշակի հետաքրքրություն է ներկայացնում մրցապայքարի դուրս եկած կուսակցությունների համար, որոնք ձգտում են գրավել վերջինիս ներկայացուցիչներին իրենց կողմը: Հայ համայնքի ձայներն իրենց կողմը գրավելու համար ջանքեր են գործադրում ինչպես իշխող ԱԶԿ-ն, այնպես էլ ընդդիմադիր ԺՀԿ-ն և քրդամետ ԺԺԿ-ը: ԺԺԿ-ի հետաքրքրվածությունը հայ համայնքի ձայներով երևում է նախընտրական քարոզարշավի ընթացքում նրա ղեկավար Դեմիրթաշի հայանպաստ հայտարարություններից և իշխանության գալու դեպքում Հայոց ցեղասպանությունը ճանաչելու, հայ-թուրքական փակ սահմանը բացելու և Հայաստանի հետ բարիդրացիական հարաբերություններ հաստատելու նրանց խոստումներից: ԺՀԿ-ի հետաքրքրվածությունն էլ հայ համայնքի ձայներով երևում է այդ կուսակցության հայազգի ներկայացուցիչ Սելինա Դողանի ակտիվ մասնակցությամբ համայնքի խնդիրների լուծման հանրային ակցիաներին: Վերջինս մասնակցում է հատկապես հայկական բողոքական որբանոցի՝

Քամփ Արմենի համայնքին վերադարձնելու համար կազմակերպվող բողոքի ցույցերին։ ԱՇԿ-ը միակն է Թուրքիայի քաղաքական ուժերի մեջ, որը տուրք է տալիս միայն հակահայկական հռետորաբանությանն ու գործողություններին՝ հրաժարվելով հայ համայնքի հետ որևէ համագործակցությունից։

Թուրքիայի հայ համայնքի դիրքորոշումը 2011 թ. խորհրդարանական ընտրություններում բաժանվել է երկու մասի՝ Պատրիարքարանը աջակցում է իշխող ԱԶԿ-ին, իսկ «Նոր զարթոնք» հայկական հասարակական շարժումն ունի ընդդիմադիր կեցվածք և հակված է դեպի քրդական ԺԺԿ-ն։ Թուրքիայի գյուղատնտեսության նախարարի հետ հանդիպման ժամանակ պատրիարքական ընդհանուր փոխանորդ Աթեշյանն իր գոհունակությունն արտահայտեց, որ տարիներ շարունակ անտեսված ու չլուծված հայ համայնքի որոշ խնդիրներ լուծվել են ԱԶԿ իշխանության տարիներին։ Պատրիարքարանի նման հայտարարությունների հիմնական դրդապատճառը, ամենայն հավանականությամբ, վերջինիս մտահոգությունն է Թուրքիայի ներկա լարված իրավիճակում հայ համայնքի անվտանգությամբ։ Այն պարզապես առաջնորդվում է Թուրքիայի իշխանություններին հայ համայնքի դեմ չգրգռելու նկատառումներով՝ շեշտը դնելով համագործակցության միջոցով դպրոցների հարցը, բռնագրավված եկեղեցական կալվածքների խնդիրը և համայնքի այլ խնդիրներին լուծում գտնելու վրա։ Նոր զարթոնք» շարժումն էլ համագործակցում է քրդական ԺԺԿ-ի հետ, որի ներկայացուցիչներն ակտիվորեն մասնակցում են Քամփ Արմենի քանդման գործընթացը կասեցնելու և այն հայ համայնքին վերադարձնելու համար հայերի կողմից կազմակերպվող բողոքի ակցիաներին[468]։

---

[468] Տե՛ս Հովյան Վ., Թուրքիայի հայ համայնքն արտահերթ խորհրդարանական ընտրությունների նախօրեին,
http://www.noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT_ID=13962

2012 թ. մարտի 3-ին Թուրքիայի արտգործնախարար Ա. Դավութօղլուն Պատրիարքարանում հանդիպում ունեցավ պատրիարքական ընդհանուր փոխանորդ Ա. Աթեշյանի և հայկական համայնքի ներկայացուցիչների հետ: Հատկանշական է, որ նախարարի այցը տեղի ունեցավ, այսպես կոչված, Խոջալուի ցեղասպանության տարելիցին Ստամբուլի Թաքսիմ հրապարակում կազմակերպված բազմահազարանոց հանրահավաքից հետո, որի ընթացքում ցուցարարները ներկայացել էին հայերի հասցեին վիրավորանք պարունակող պաստառներով և հակահայկական կոչեր էին հնչեցրել: Հանդիպման ընթացքում Ա. Աթեշյանը գնահատեց կառավարության ջանքերը մարդու իրավունքների պաշտպանության հարցերում, սակայն, միևնույն ժամանակ, քննադատեց հայերին անարգող պաստառներով հանրահավաքի թույլտվությունը: Ա. Դավութօղլուն պատասխանեց, որ կիսում է հայ համայնքի վրդովմունքը Խոջալուի դեպքերի տարելիցի հանրահավաքում հնչած արտահայտությունների հետ կապված, նշելով, որ հանձնարարվել է հետաքննություն սկսել և պատժել պատասխանատուներին[469]:

Պատրիարքարանի կատարած կարևոր նախաձեռնություններից մեկը 2012 թ. մարտի 14-ին դատարան ներկայացված պահանջն էր Կարինում (Էրզրումում) գտնվող Սանասարյան վարժարանին պատկանող հայկական այն կալվածքներ վերադարձնելու վերաբերյալ, որոնք թուրքական իշխանությունները առգրավել էին 1915 թ. ցեղասպանությունից հետո: Վարժարանի՝ այժմ տասնյակ միլիոն դոլար արժեցող թանկարժեք կալվածքները ներառում են Կարինում գտնվող ինը հողակտոր, Աղվերեն գյուղում պարտեզով տունը և հսկայական հողը, Գեզի գյուղում երկու հողակտոր և Ստամբուլի կենտրոնում գտնվող մեծ առևտրի կենտրոնը: Սանասարյան հիմնադ-

[469] Տե՛ս Արտաքին Նախարար Ահմետ Տավուտօղլու Պատրիարքարանի Մեջ, «Մարմարա», 5 մարտի 2012:

բամի խնամակալությունն ու տնօրինումն օրենքով պատկանում է Պատրիարքարանին, որը չի պատրաստվում բավարարվել միայն պատմական շենքերի վերադարձով, այլ Կալվածքների տնօրինությունից փոխհատուցում է պահանջում 1936 թ. ի վեր Պատրարքարանի կրած վնասների համար:

Թուրք պաշտոնյաները, սովորության համաձայն, թշնամաբար են վերաբերվում փոքրամասնությունների կողմից բերված գույքային պահանջներով դատական գործերին և մեծ ճնշում են գործադրում դատավորների վրա, որպեսզի դժվարեցնեն, եթե ոչ, անհնար դարձնեն նրանց հաջողության հասնելը: Այդուհանդերձ, Պոլսի պատրիարքարանի ներկայացրած հայցն անհրաժեշտ առաջին քայլն է, որը հնարավորություն կտա բողոքարկել թուրքական դատարանների կանխատեսելի բացասական վճիռները Մարդու իրավունքների եվրոպական դատարանում, որտեղ հայցվորն ունի արդար դատավարության շատ ավելի մեծ հնարավորություն[470]:

2012 թ. սկզբին պատրիարքարանն առանձին հայց ներկայացրեց Կալվածքների տնօրինության դեմ Ստամբուլում գտնվող Սանասարյան առևտրի կենտրոնի (խանի) վերադարձման պահանջով: Սանասարյան խանի շենքը պետության կողմից բռնագրավվելուց հետո ծառայել է որպես բանտ, որտեղ բանտարկվում, հալածանքների էին ենթարկվում ու սպանվում էին Թուրքիայի քաղաքական կյանքի նշանավոր գործիչները[471]: Թեև դատարանը ժամանակավոր արգելանք դրեց՝ սառեցնելով շենքի տնօրինման հետ կապված բոլոր գործարքները, սակայն Կալվածքների տնօրինությունը հայտարարեց, որ չի ենթարկվի դատարանի որոշմանը, ինչը հակասում է

[470] Տե՛ս Սասունյան Հ., Թուրքիայի կառավարության դեմ դատ բացելու Հայոց պատրիարքարանի խիզախ քայլը,
http://www.zham.am/index.php?lid=am&pageName=ambeon&id=638213128

[471] Տե՛ս Պատրիարքարանը դատ բացաւ, համայնքիս վերաշահեցնելու համար «Սանասարյան խան»ը, «Մարմարա», 2012/01/12

բոլոր միջազգային իրավական նորմերին, ինչպես նաև Լոզանի պայմանագրի համապատասխան հոդվածների պահանջներին[472]:

Պոլսո Հայոց պատրիարքության խնամքի տակ են գտնվում Ստամբուլի 16 հայկական գերեզմանատները: Թուրքիայի այլ վայրերում հայոց գերեզմանատները կամ ավերված են, կամ իսպառ ոչնչացված, կամ էլ գտնվում են անխնամ վիճակում, դրանք չունեն նաև իրավական կարգավիճակ: Այսօր Թուրքիայում հայկական գերեզմանատներ պահպանվել են Կայսերիում (Կեսարիա), Մալաթիայում, Վաքֆլրում, Սեբաստիայում, Արաբկիրում: Պոլսո հայությունն ունի նաև երկու հիվանդանոց, որոնցից մեկը պատկանում է առաքելական, իսկ երկրորդը՝ կաթոլիկ համայնքին: Պոլսո հայկական հաստատությունների մեջ առանձնահատուկ տեղ ունի 1832-33 թթ. կառուցված Սուրբ Փրկիչ հիվանդանոցը, որը, համալրված լինելով լավագույն սարքավորումներով և մասնագետներով, համարվում է Ստամբուլի կարևոր առողջապահական հիմնարկներից մեկը և սպասարկում է տարբեր ազգերի ներկայացուցիչների: Սուրբ Փրկիչ հիվանդանոցն այսօր ունի հիվանդների համար նախատեսված 280 մահճակալ, հիվանդանոցին կից գործում է 270 հոգու համար նախատեսված ծերանոց, պոլիկլինիկա և դեղատուն, հիվանդանոցի բակում է գտնվում Սուրբ Փրկիչ մատուռ-եկեղեցին[473]: Թեև Սուրբ Փրկչի տնօրինությունը ընդհանուր լեզու է գտնում Թուրքիայում կառավարող չափավոր իսլամիստների հետ, բայց կալվածքների հարցում զերծ չի մնում տհաճություններից: Այսպես, վարչապետ Էրդողանը 2004 թ. Սուրբ Փրկիչ կատարած այցելության ժամանակ խոսեց Թուրքիայում խաղաղ գոյակցության արժանիքների մասին,

---

[472] Տե՛ս Սասունյան Հ., Թուրքիայի կառավարության դեմ դատ բացելու Հայոց պատրիարքարանի խիզախ քայլը,
http://www.zham.am/index.php?lid=am&pageName=ambeon&id=638213128

[473] Տե՛ս Մելքոնյան Ռ., Ակնարկ Ստամբուլի հայ համայնքի պատմության…, էջ 63:

պաշտպանեց հայերի լիարժեք քաղաքացիության իրավունքը, սակայն շրջանցեց 1985 թ. պետության կողմից Սուրբ Փրկչին կից 43160 մ² հողատարածքի առգրավման հարցը, որը մարզահրապարակի կառուցման նպատակով փոխանցվել էր թաղապետարանին: Հակառակ վարչապետի հրահանգին, Ստամբուլի դատարաններից մեկը վերջերս վճիռ կայացրեց այդ հողատարածքն իր օրինական տիրոջը վերադարձնելու մասին: Այդ տարածքի վրա նախատեսվում է կառուցել հիվանդանոցային նոր կենտրոն[474]:

Թուրքիայի նախորդ օրենսդրությամբ Ստամբուլի մի թաղամասում բնակվող հայն իրավունք չուներ ընտրվել մեկ այլ թաղամասի թաղային խորհրդի անդամ, ինչը լրացուցիչ դժվարություններ էր ստեղծում համայնքային կալվածքների, դպրոցների և այլ կառույցների պահպանման ու զարգացման համար՝ հատկապես Ստամբուլում հայերի թվի նվազման և նախկինում հայաշատ շրջանների հայաթափման պարագայում: Փոփոխված օրենքով համայնքի դիմումի դեպքում և համապատասխան որոշումից հետո, եթե տվյալ վայրում բավականաչափ հայ չի բնակվում, ապա ընտրական շրջանը կարող է մեծացվել և ընդգրկել ոչ թե թաղամասը կամ շրջանը, այլ հոծ զանգված ունեցող ամբողջ նահանգը, կամ նման նահանգի բացակայության դեպքում՝ փոքրամասնության ներկայացուցիչներով առավել բնակեցված վայրը, այսինքն՝ Ստամբուլը: Հաշվի առնելով, որ Թուրքիայի գավառներում սակավաթիվ հայ բնակչություն է մնացել, օրենքի այս կետը թույլ է տալիս պոլսահայ համայնքին միջոցներ ձեռնարկել Կայսերիում (Կեսարիայում), Դիարբեքիրում, Իսքենդերունում գտնվող հայկական գործող եկեղեցիները և կառույցները պահպանելու համար՝ ղեկավար խորհրդի անդամներ ընտրելով Ստամբուլից: 2008 թ. օրենքը հեշտացնում է նաև նոր համայնքային

[474] Տե՛ս Պոլսի Սուրբ փրկիչ հիվանդանոցը 180 տարեկան է, http://azg.am/AM/2012120113

կառույցների հիմնադրման գործընթացը[475]: Նոր օրենքով ճանաչվել է նաև համայնքային կառույցներին արտասահմանից նվիրատվություն և ֆինանսական օգնություն ցուցաբերելու հնարավորությունը: Այս դրույթը կարևոր է այնքանով, որ անհրաժեշտության դեպքում տեսականորեն հնարավորություն է տալիս համայնքի տնօրինության տակ գտնվող այս կամ այն պատմամշակութային կառույցի վերանորոգման կամ պահպանման համար անհրաժեշտ գումարը նվիրատվության տեսքով փոխանցել Հայաստանից կամ Սփյուռքից[476]:

Ստամբուլի Հայոց պատրիարքարանի ենթակայության տակ գործում են 35 եկեղեցիներ[477], իսկ հայ առաքելական համայնքին պատկանող 39 հաստատություններից 5-ը համահամայնքային են: Համահամայնքային հաստատություններ են համարվում նաև երեք գերեզմանատները, որոնց տնօրինումը, սակայն, փաստացի իրականացնում է Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանը: Տարբեր տեսակի շուրջ 160 անշարժ գույքեր՝ բնակարաններ, շենքեր, հողատարածքներ, որոնք 1936-1971 թթ. նվիրատվության, կտակի կամ գնման միջոցով ձեռք են բերվել տարբեր համայնքային կառույցների կողմից, 1974 թ. հետո առգրավվել են պետության կողմից: Հատկանշական է, որ համայնքից օտարված գույքը իշխանությունները փորձում են արագ փոխանցել մասնավորին կամ ծառայեցնել այլ նպատակների համար, որպեսզի դժվարեցնեն կամ անհնարին դարձնեն համայնքին դրա վերադարձը: Այսպես, 1997 թ. հունիսին Ստամբուլի թաղապետերից մեկի հրամանով մեկուկես տարի առաջ համայնքից

---

[475] Տե՛ս Ավագյան Ա., Մելքոնյան Ռ., Ստամբուլի հայ համայնքի արդի իրավիճակը, էջ 35-36:
[476] Տե՛ս Պողոսյան Ն., նշվ. աշխ., էջ 309:
[477] Տե՛ս Բառում Վ., նշվ. աշխ., էջ, 166:

օտարված հայկական եկեղեցին հողին հավասարեցվեց, որպեսզի նրա տարածքում կառուցվեր առողջության կենտրոն[478]:

Փոփոխված օրենքը նախատեսում է դրանք համայնքներին վերադարձնելու ոչ դյուրին մեխանիզմներ: Նոր օրենքը չի նախատեսում պետության կողմից բռնագրավված գերեզմանոցների տարածքների վերադարձում կամ փոխհատուցում: Հանրապետության շրջանում ճանապարհաշինության կամ այլ պատրվակներով հայ առաքելական և կաթոլիկ համայնքներին պատկանող գերեզմանների տարածքներ են վերցվել: Ընդունված օրենքում որևէ խոսք չկա գանձապետարանի կողմից մասնավոր անձանց համայնքային կալվածքների վաճառման դեպքում փոխհատուցում տրամադրելու մասին: Դրանք վերադարձնելու կամ փոխհատուցում ստանալու համար ստամբուլահայ համայնքը ստիպված է դիմել դատական ատյաններին կամ, Թուրքիայում հնարավորությունների սպառման դեպքում՝ Եվրոպայի մարդու իրավունքների դատարան:

Համայնքին պատկանող սեփականության և դրանց վարձակալումից ստացված գումարների հարցում ստամբուլահայ համայնքի խնդիրն այն է, որ ոչ բոլոր թաղամասերում գտնվող սեփականություններն են եկամտաբեր: Եթե մի թաղամասում հոգաբարձուների խորհուրդը կարողանում է սեփականության վարձակալումից ստացված եկամուտներով ապահովել դպրոցի և այլ կառույցների գործունեությունը, ապա մյուս թաղամասերում խորհուրդները նվիրատվությունների կարիք ունեն: Համայնքին պատկանող եկեղեցիների, սրահների վերանորոգումը, Շիշլի և Թաքսիմի թաղամասերի մարզական ակումբների գործունեությունն իրականացվում են նվիրատվությունների շնորհիվ: Այս առումով պետք է նշել, որ Ստամբուլի հայկական համայնքում գերակշռում են մանր և միջին գործա-

[478] Տե՛ս Hoffman T., Armenians in Turkey Today: A critical assessment of the situation of the Armenian minority in the Turkish Republic, Brussels, 2002, p. 28.

բարությամբ զբաղվողները, որոնցից են Ստամբուլի Փակ շուկայի ոսկերչական մասում ավանդաբար գտնվող հայ ոսկերիչները: Ժամանակին ստամբուլահայերը մենաշնորհային դիրքեր ունեին Թուրքիայի ոսկերչության և արծաթագործության մեջ, սակայն հետագայում նրանք իրենց դիրքերն աստիճանաբար զիջեցին ասորիներին և քրդերին, որոնք այդ արհեստը սովորել են հայ վարպետներից: Ընդհանրապես, Թուրքիայի տնտեսական կյանքում, բացի մի քանի խոշոր գործարարներից, պոլսահայությունը զգալի ներգրավվածություն չունի[479]:

Ստամբուլում է գտնվում «Արաս» հայկական հրատարակչությունը: Մինչ օրս շուրջ 120 անուն գիրք են հրատարակել, որոնց մեկ երրորդից ավելին հայերեն է: Դրանց շարքում կան նաև ցեղասպանության թեմայով գրքեր, որոնք այսօր վաճառվում են Ստամբուլի գրախանութներում: Ստամբուլում հրատարակվում է նաև երեք սեփական շաբաթաթերթ: Դրանցից «Ժամանակը», որը Թուրքիայում 1908-ից ի վեր պահպանված ամենահին թերթն է, և «Մարմարան» լույս են տեսնում հայերեն, իսկ «Ակօսը» հրատարակվում է երկու լեզվով՝ հայերեն և թուրքերեն[480]: «Ակօս»-ի խմբագրատանն է հաստատվել 2007 թ. ստեղծված «Հրանտ Դինք» հիմնադրամը, որի նպատակն է՝ պայքարել Թուրքիայում ժողովրդավարության հաստատման, մարդու իրավունքների պահպանման և հայ-թուրքական հարաբերությունների զարգացման համար: Հիմնադրամում աշխատում են ինչպես հայեր, այնպես էլ թուրքեր, քրդեր և չերքեզներ: Հիմնադրամը մշակում է ծրագիր, որով պետք է թուրքական կառավարությունը վերադարձնի հայկական կալվածները: Վերոնշյալ խնդրի լուծման նպատակով հիմնադրամը համագործակցում է բազմաթիվ կազմակերպությունների հետ: Փաստերի և արխիվների ստուգու-

---

[479] Տե՛ս Մելքոնյան Ռ., Ակնարկ Ստամբուլի հայ համայնքի պատմության…, էջ 82-83:
[480] Տե՛ս Բառում Վ., նշվ. աշխ., էջ 166:

մից, քարտեզների ուսումնասիրությունից հետո հիմնադրամը մտադիր է դատական կարգով վիճարկել հայկական բազմաթիվ կալվածները համայնքին վերադարձնելու հարցը[481]:

1924 թ. Թուրքիայում ընդունվեց «Կրթության նույնականացման մասին» օրենքը, որով պահանջվում էր Թուրքիայի տարածքում բոլոր կրթական հաստատություններին իրենց գործունեությունը համապատասխանեցնել աշխարհիկության սկզբունքներին: Այն պոլսահայ կրթական հաստատությունների համար լուրջ դժվարություններ առաջ բերեց, քանի որ ազգային կրթօջախներում դասավանդում էին նաև հոգևորականները, որոնց մուտքը հայկական դպրոցներ արգելվեց: Բացի այդ, ուսուցիչները ստիպված էին պետական հանձնաժողովներում որակավորման քննություններ հանձնել՝ հայկական դպրոցներում դասավանդելու իրավունք ստանալու համար[482]:

Ստամբուլի հայկական դպրոցներն իրենց կառուցվածքները համապատասխանեցնում են Թուրքիայի ընդհանուր կրթական համակարգում տեղի ունեցող փոփոխություններին, և այսօր դրանցում ուսումնառությունը եռաստիճան է՝ մանկապարտեզ՝ 1 կամ 2 տարի, նախակրթարան՝ 8 տարի, վարժարան՝ 3 տարի[483]: Եթե 1923 թ. Ստամբուլում եղել է 47 հայկական դպրոց, ապա 1972-73 ուստարում նրանց թիվն իջել է 32-ի՝ 7366 աշակերտով, 1999-2000 ուստարում՝ 18-ի՝ 3786 աշակերտով, իսկ 2009-2010-ին արդեն 16-ի՝ 3029 աշակերտով: Դժվար չէ նկատել, որ խտրական քաղաքականության հե-

---

[481]Տե՛ս Հարությունյան Հ., «Հրանտ Դինք» հիմնադրամը կդիմի դատարան՝ վերադարձնելու հայերից ապօրինի խլված կալվածքները, «Ազգ» օրաթերթ, թիվ 182, 13/10/2011

[482] Տե՛ս Մելքոնյան Ռ., Ակնարկ Ստամբուլի հայ համայնքի պատմության…, էջ 39-43:

[483] Տե՛ս Գույումճեան Ս., Ակնարկ մը՝ ստանպուլահայ վարժարաններու իրականության, Ստանպուլ, 2010, էջ 11:

տևանքով 40 տարվա ընթացքում հայ համայնքը կորցրել է իր դպրոցների և աշակերտության կեսը[484]:

Ներկայումս Ստամբուլի հայկական համայնքն ունի 5 ավագ և 14 տարրական դպրոց, որտեղ սովորում է 3000 երեխա, սակայն համայնքում նրանց ընդհանուր թիվը հասնում է 12.000-ի: Մյուսները հաճախում են թուրքական դպրոցներ, որոնք, ի տարբերություն հայկական դպրոցների, անվճար են: Եթե հայ ընտանիքը որևէ պատճառով իր երեխային պետական կամ մասնավոր դպրոց ուղարկի, ապա չի կարող այլևս նրան հայկական դպրոց ուղարկել: Այս հանգամանքը կարևոր խոչընդոտ պէտք է համարել իսլամացված և «ծպտյալ» հայության համար: 1979 թ. Շնորհք արք. Գալուստյանը իր հարցազրույցում նշել է, որ Թուրքիայի հայերը նույնիսկ իրենց երեխաներին հայկական դպրոցներում գրանցելու խոչընդոտների են հանդիպում, քանզի դիտվում են՝ որպես երկրորդ կարգի քաղաքացիներ[485]: Հայկական ուսումնական հաստատություններում բացառիկ լիազորություններով գործուղված կրթական քննիչները արգելում էին հայկական դպրոցներ հաճախել այն հայ երեխաներին, ում փաստաթղթերում ազգային պատկանելության վանդակում նշված չէր «էրմենի» բառը[486]:

1886 թ. հիմնված Կեդրոնական վարժարանը ստամբուլահայ ավագ դպրոցներից մեկն է, որն ունի 9-12-րդ դասարաններ շուրջ 230 առաքելական աշակերտներով և ամեն տարի տալիս է 50-60 շրջանավարտ: Վարժարանի փոխտնօրենը թուրք է, ինչը պարտադիր է Թուրքիայի հայկական կամ մյուս ազգային փոքրամասնություններին պատկանող դպրոցների համար: Հայոց պատմության դասերին արգելված է խոսել Հայոց ցեղասպանության մասին: Այդ բացը

---

[484] Տե՛ս Մելքոնյան Ռ., Ակնարկ Ստամբուլի հայ համայնքի պատմության…, էջ 41:
[485] Տե՛ս Oehring O., Human Rights in Turkey, Secularizm, Religious Freedom, 2002, p. 29.
[486] Տե՛ս «Դրօշակ», Աթենք, 1988, յուլիսի 6, էջ 15:

փորձում են լրացնել հայ գրականության ուսուցիչները՝ հպանցիկ անդրադառնալով 1915 թ. տեղի ունեցած դեպքերին: Վարժարանում օգտագործվում են 50-60 տարվա դասագրքեր և նոր դասագրքերի կարիք է զգացվում: Թուրքիայում հայկական դպրոցների շրջանավարտները բարձր պաշտոններ զբաղեցնելու իրավունք չունեն, սակայն դառնում են լավ լեզվաբաններ, փաստաբաններ, բժիշկներ կամ ուսուցիչներ: Վերջին տարիներին խնդիր է ծագել նաև Ստամբուլում ապօրինաբար բնակվող ՀՀ քաղաքացիների երեխաների՝ հայկական դպրոցներում ուսանելու հետ կապված: Խնդիրը հայ համայնքի ներկայացուցիչները բարձրացրել են Թուրքիայի վարչապետ Ռ. Էրդողանի առջև, սակայն մինչև խնդրի լուծումը Ստամբուլում ոչ օրինական ձևով գործում է ընդհատակյա հայկական վարժարան, որտեղ ուսանում է շուրջ 60 հայաստանցի երեխա[487]:

1953 թ. պատրիարք Գ. Խաչատուրյանի օրոք խորհրդարանի հայ պատգամավոր Մ. Շելեֆյանը կարողացավ ստանալ Ստամբուլում Սուրբ խաչ Դպրեվանք հոգևոր դպրոցը հիմնադրելու հարցում այն ժամանակվա վարչապետ Մենդերեսի հավանությունը: Սակայն Դպրեվանքի վերաբերյալ կառավարության որոշումը չկատարվեց «Կալվածքների մասին» օրենքի պահանջներին համապատասխան, ինչի հետևանքով մինչև այսօր Դպրեվանքի կարգավիճակն իրավական առումով հստակեցված չէ: Հաստատությունն իրավունք չունի ղեկավար խորհրդի ընտրություններ կատարել, չնայած, որ 1957 թ. ընտրված խորհրդի անդամներից մի քանիսը մահացել են[488]: 1969 թ. Սուրբ խաչ Դպրեվանքի փակումից հետո համայնքում զգալի դարձավ հայ հոգևորականների պակասի խնդիրը: Քանի որ թուրքական օրենսդրությունը օտարահպատակներին արգելում է իր երկրում

---

[487] Տե՛ս Մելքոնյան Ռ., Ակնարկ Ստամբուլի հայ համայնքի պատմության…, էջ 47:
[488] Տե՛ս Ավագյան Ա., Մելքոնյան Ռ., Ստամբուլի հայ համայնքի արդի իրավիճակը, էջ 34:

հոգևորական պաշտոն զբաղեցնել, Պոլսի պատրիարքությունը հոգևոր կրթություն ստանալ ցանկացողներին գործուղում է Երուսաղեմ կամ Էջմիածին: Այդուհանդերձ, մի հոգևորականը ստիպված է մի քանի եկեղեցի սպասարկել: Եթե Ստամբուլի որոշ թաղամասերի եկեղեցիները գործում են տարին կամ ամիսը մեկ օր, ապա ավելի անմխիթար վիճակ է տիրում գավառների հայ եկեղեցիներում, որտեղ տարվա որոշակի ամիսներին է միայն Ստամբուլից հոգևորական գործուղվում[489]:

Լինելով ոչ մահմեդական ամենամեծ փոքրամասնությունը երկրում՝ հայերը քաղաքական ու հասարակական ոլորտներում ներկայացված չեն, պետական պաշտոններ չեն զբաղեցնում: Բավականին խնդիրներ է առաջացնում օրենսդրական դաշտը, պետական աշխատանքի ընդունվելու ընթացակարգը նույնպես բարդ է հայերի համար, պարտադիր գործում են անվտանգության նկատառումները: Հայեր կան Շիշլիի թաղապետարանում, բայց Շիշլին էլ Ստամբուլի այն թաղամասն է, որտեղ հիմնականում ոչ մահմեդականներ են ապրում: Պահպանողական պոլսահայությունը, աստիճանաբար, ինտեգրվում է լայն հասարակությանը: Վերջին 20 տարում խառնամուսնությունների թիվը մեծապես աճել է: Ժամանակին դրանց ընդդիմանալը համայնքը պահպանելու ամենակարևոր գործոնն էր, ծնողների կողմից մեծ դիմադրություն կար, բայց այսօր դա փոխվել է: Նշանակում է, որ գալիք սերունդն արդեն ինքն է ընտրելու իր ազգային պատկանելությունը:

Հատկանշական է, որ պոլսահայերն իրենց սփյուռք չեն համարում, ինչը, թերևս, բացատրվում է նրանով, որ այսօր Ստամբուլի հայերի գերակշիռ մասը ոչ թե բնիկ պոլսեցիներ են, այլ տարիներ առաջ իրենց բնօրրանից՝ Թուրքիայի կենտրոնական և արևելյան

[489] Տե՛ս Մելքոնյան Ռ., Ակնարկ Ստամբուլի հայ համայնքի պատմության…, էջ 61:

շրջաններից՝ Արևմտյան Հայաստանի նահանգներից եկածների սերունդներ: Խառնամուսնություններին զուգահեռ՝ աճում է նաև մայրենի լեզուն չիմացող հայերի թիվը: Ծնողները երեխաներին տանում են տարբրական հայկական դպրոց՝ հայերեն և հայկական վարվեցողության կանոնները սովորելու համար: Սակայն դրանից հետո երեխաները տեղափոխվում են օտարալեզու կամ մասնավոր դպրոցներ՝ բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունվելու, դրանցում իրենց շրջապատի հետ լեզվական խնդիրներ չունենալու նպատակով: 1996 թ. հիմնադրված երկլեզու «Ակօս» թերթը ոչ միայն տեղի հայերի իմիջը մարդկանց աչքում փոխելու, այլև՝ մայրենի լեզվով կարդալ չիմացող հայերին ծառայելու նպատակն ունի: 1990-ականները կարևոր էին նաև հայ համայնքի համար նրանով, որ ազգային փոքրամասնությունները սկսեցին խոսել իրենց խնդիրների, խտրականության, այժմ՝ արդեն 1915 թ. մասին, իսկ 20 տարի առաջ դրանք արգելված թեմաներ էին[490]:

Հայկական համայնքը, այս պայմաններում մասնակցելով ընտրություններին և իր ձայները տալով իշխող ԱԶԿ-ին, մասամբ էլ՝ ընդդիմադիր ԽԺԿ–ին, կարծում է, որ ԱԶԿ-ի ձևավորած կառավարությունը երկար տարիների ընթացքում ամենանպաստավոր կառավարությունն է եղել ոչ միայն երկրի հայերի, այլ նաև՝ բոլոր ազգային փոքրամասնությունների համար: Հենց դա է պատճառը, որ բավականաչափ հայեր ընտրություններում քվեարկել են ԱԶԿ-ի օգտին: ԱԶԿ-ն հայկական համայնքի կողմից, փաստորեն, ընկալվում է՝ որպես «չարյաց փոքրագույն», իսկ մյուս այլընտրանքները՝ ԺՀԿ-ը, որի խտրական քաղաքականությունից համայնքը տասնամյակներ շարունակ տուժել է, առավել ևս «գորշ գայլերի» պանթուրքիստական գաղափարներով առաջնորդվող ԱՇԿ-ն համարվում են «բա-

[490] Տե՛ս Սարուխանյան Վ., Պոլսահայությունը՝ «կորուսյալ զառ» կամ «աուտսայդեր», http://hetq.am/arm/news/953/

ցարձակ չարիք»: Համայնքի մի մասը երկրի ժողովրդավարացման որոշ հույսեր է կապում քրդական ԽԺԿ-ի հետ, այդ իսկ պատճառով համայնքի ներկայացուցիչների ավելի փոքր հատվածը նախապատվությունը տվեց վերջինիս: Մի բան հստակ է, որ Թուրքիայի հայերը պետք է շարունակեն պայքարել իրենց մարդկային և ազգային շահերի համար՝ պահանջելով իրավունք, այլ ոչ թե ձևական «հանդուրժողականություն»[491]:

Ստամբուլի հայ առաքելական համայնքի կողքին իրենց գոյությունն են պահպանում նաև հայ կաթոլիկ և ավետարանական համայնքները: Ներկայումս, հայ կաթոլիկ համայնքը թեև փոքրաթիվ է, սակայն բավական կազմակերպված: Այն բաղկացած է մոտ 2000 անդամից, ունի համայնքապատկան 12 եկեղեցի, որոնցից երեքը գտնվում են Ստամբուլում, և բարեգործական կառույցներ, ինչը որոշակիորեն թեթևացնում է համայնքի առջև ծառացած խնդիրները: Համայնքի ներսում մեծ աշխատանք են կատարում Երիտասարդական և Տիկնանց միությունները[492]:

Ի տարբերություն հայ առաքելական համայնքի, Ստամբուլի հայ կաթոլիկ համայնքի սակավաթվության պայմաններում համայնքային սեփականությունից ստացվող եկամուտները, հիմնականում, բավարարում են դպրոցների և այլ հայ կաթոլիկ հաստատությունների պահպանմանը: Կաթոլիկ համայնքին պատկանող մի քանի կարևոր հաստատություններ, ինչպես 1836 թ. կառուցված Սուրբ Հակոբ հիվանդանոցը, որն ունի հարյուր հիվանդասենյակ, պոլիկլինիկա, ծերանոց, դեղատուն և լաբորատորիա[493], ինչպես նաև Մխիթարյան վարժարանը, գտնվում են Ստամբուլի կենտրոնում, և նրանց սեփականություն հանդիսացող շենքերի վարձակալությունից զգալի գումարներ են ստաց-

---

[491] Տե՛ս Հովհաննիսյան Ա., նշվ. աշխ., էջ 54:
[492] Տե՛ս Բառում Վ., նշվ. աշխ., էջ 166:
[493] Տե՛ս Մելքոնյան Ռ., Ակնարկ Ստամբուլի հայ համայնքի պատմության…, էջ 64:

վում: Հայ կաթոլիկ համայնքին պատկանող և Ստամբուլի Թաքսիմ հրապարակի մոտ գտնվող Սուրբ Հակոբ գերեզմանոցն ամբողջովին ոչնչացվել է և դրա դիմաց համայնքին որևէ հատուցում չի տրվել[494]: 2005 թ. հայ կաթոլիկ համայնքն իրավունք ստացավ առևտրական կենտրոն հիմնել 1980-ական թթ. հրկիզված «Շան» կինոթատրոնի տեղում, ինչը զգալի եկամուտ կբերի համայնքին[495]:

2010 թ. դեկտեմբերին տեղեկություն տարածվեց, որ «Սուրբ Հակոբ» հայ կաթոլիկ հիմնադրամը նախատեսել էր Ստամբուլի կենտրոնական թաղամասում՝ Թաքսիմում 150 մլն դոլարով գնել 48 հազար մ² հողատարածք՝ առևտրի և մշակույթի կենտրոն կառուցելու նպատակով: Չնայած Եվրամիության նոր պահանջները Թուրքիային ստիպել են փոխել որոշ օրենքներ, որոնցով ազգային փոքրամասնությունների հիմնադրամներին թույլատրվում է ձեռք բերել նոր գույք, սակայն ներկայացված նախագիծը մերժվեց: Խնդրով զբաղվող կառույցները, փաստորեն, դեմ գնալով Եվրամիության պահանջներին, խոչընդոտեցին հայկական հիմնադրամի նախաձեռնությանը, քանի որ դրական լուծման դեպքում համայնքը կարող էր կրկնապատկել ֆինանսական կարողությունները և հետագայում օգտագործել ի շահ համայնքի[496]: Հայ կաթոլիկների պատրիարքարանը Ստամբուլից տեղափոխվեց Լիբանան, իսկ Պոլսի նախկին նստավայրը ստացավ նոր կարգավիճակ՝ անվանվելով Արքեպիսկոպոսական Աթոռ, որի ազդեցությունը սահմանափակվում էր միայն Թուրքիայի հայ կաթոլիկներով:

Ստամբուլում գործող Հայ կաթոլիկ համայնքի 4 դպրոցները ենթարկվում են Կրթության նախարարությանը: Վերջին ժամանա-

---

[494] Տե՛ս նույն տեղում, էջ 41:
[495] Տե՛ս Ավագյան Ա., Մելքոնյան Ռ., Ստամբուլի հայ համայնքի արդի իրավիճակը, էջ 40-42:
[496] Տե՛ս Սիմավորյան Ա., նշվ. աշխ., էջ 49:

կաշրջանում Ստամբուլի Մխիթարյանների դպրոցներ ուսանելու են գալիս ոչ միայն կաթոլիկ հայեր, այլև առաքելական՝ համայնքի անդամներ և խառնամուսնություններից ծնված, ինչպես նաև հայաստանցիների երեխաներ: Պահանջված կարգի համաձայն, նախկինում հայկական վարժարաններ կարող էին հաճախել միայն հայ ծնողներ ունեցող երեխաները, սակայն Կրթության նախարարությունը փոխել է այդ կարգը: Այժմ վարժարաններ կարող են հաճախել նաև այն երեխաները, ում ծնողներից միայն մեկն է հայ: Հատկանշական է, որ այստեղ սովորում են ոչ միայն խառնամուսնություններից ծնված երեխաները, այլև՝ իսլամացված հայերի սերունդները, ինչպես նաև ասորական և հունական ծագումով աշակերտներ[497]: Թուրքական իշխանությունների թվացյալ այս հանդուրժողական քաղաքականությունը պայմանավորված է նրանով, որ իսլամացված հայերին հայկական կրթական հաստատություններ ընդունելով՝ շահագրգիռ պետական վերահսկող կառույցները, գրանցման միջոցով, որոշակի հստակեցում են մտցնում իսլամացված հայերի թվաքանակի և այլ հարցերում: Այնպես որ, այս գործընթացը, որքան էլ դրական ազդեցություն ունենա իսլամացված հայերի վրա, այնուամենայնիվ, կարող է պարունակել վտանգներ, ինչը ևս պետք է հաշվի առնել, մանավանդ, որ իսլամացված հայերի՝ իրենց արմատներին վերադառնալու ձգտման նկատմամբ պետական բացասական դիրքորոշումը Թուրքիայում մնում է անփոփոխ: Բանկալթիի հայկական վարժարանի աշակերտներն աչքի ընկան մի շարք համարձակ նախաձեռնություններով՝ թուրքական դասագրքերում հակահայկական արտահայտությունների հետ կապված: Թուրքիայի կրթության նախարարի հետ հանդիպման ժամանակ վարժարանի սաները հայտնել էին իրենց անհանգստությունը դպրոցական դասագրքե-

[497]Տե՛ս Ziflioglu V., Armenian schools open doors to a different audience. “Hürriyet Daily News”, 30.01.2011.

բում առկա հակահայկական արտահայտությունների վերաբերյալ՝ շեշտելով, որ լավ կլինի, եթե դրանք հանվեն: Նախարարն էլ հանձնարարել էր աշակերտներին դասագրքերից հանել և իրեն ուղարկել հակահայկական արտահայտությունները: Հայ աշակերտները կատարել են հանձնարարությունը՝ դասագրքերում առկա հակահայկական արտահայտությունները գրանցել և ուղարկել են նախարարին[498]:

Ստամբուլից բացի, փոքր թվով հայ կաթոլիկներ գոյատևեցին Անկարայում, Մարդինում, Մերսինում, Տրապիզոնում, հատուկենտ ընտանիքներ՝ այլ քաղաքներում[499]: 1940-ականներին Մարդինի հայ կաթոլիկ բնակչությունը կազմում էր 1612 հոգի, սակայն 1950-ական թվականներից սկսած՝ նկատվում է ծավալուն արտագաղթ դեպի արաբական երկրներ և արտահոսք դեպի Ստամբուլ: Հայ կաթոլիկներին, որոնց մեծ մասը զբաղվում էր ոսկերչությամբ, գրավում էր Ստամբուլի մեծ շուկան, որը ընտանեկան եկամուտների ապահովման լայն հնարավորություններ էր տալիս[500]: 1970-ական թթ. բռնագաղթի պատճառով կրճատվեց նաև Թուրքիայի հայ կաթոլիկների թիվը: Հռոմի տվյալները ցույց են տալիս, որ համայնքն այդ թվականներին ուներ շուրջ 8500 անդամ, իսկ 1980 թ. համայնքի անդամների թիվը հասավ 4500-ի[501]:

Անկարայի հայ կաթոլիկները հասարակական ճնշման պատճառով է, որ խուսափում են իրենց երեխաներին հայկական անուններ տալ, նախապատվություն են տալիս լատինական և ֆրանսիական անուններին և իրենց ավելի շատ որպես կաթոլիկներ, քան թե հայեր են ընկալում: Սա վառ օրինակն է այն բանի, որ թուրք հասա-

---

498 Տե՛ս Սիմավորյան Ա., Հովյան Վ., նշվ. աշխ., էջ 55:
499 Տե՛ս Սիմավորյան Ա., Հովյան Վ., նշվ. աշխ., էջ 31-32:
500 Տե՛ս Deli F., «Comportement communautaire en migration des Arméniens de Mardin», Séminaire mensuel de la Société des Etudes Arméniennes, Jeudi 10 février, 2005, p. 3:
501 Տե՛ս Սիմավորյան Ա., Հովյան Վ., նշվ. աշխ., էջ 34:

ռակության ճնշման արդյունքում «էթնիկ ինքնությունը» տարիների ընթացքում, աստիճանաբար, ձևափոխվել է «կրոնական ինքնության»: Ի տարբերություն Ստամբուլի, Անկարայի հայ կաթոլիկ համայնքը կազմակերպված չէ, կայուն կապեր չի պահպանում Ստամբուլի կաթոլիկ համայնքի հետ: Միայն առիթից առիթ քաղաք են այցելում Ստամբուլի քահանաները, որոնք փորձում են, գոնե, համախմբել շուրջ 60 ընտանիք ունեցող համայնքը[502]:

Թուրքական իշխանությունները հետապնդումների են ենթարկում նաև հայ կաթոլիկ քահանաներին: Ստամբուլի հայաշատ Սամաթիա թաղամասում տեղի ունեցած հայ միայնակ ծերերի սպանություններից ու կասկածելի մահերից հետո, թուրքական ոստիկանությունը ձերբակալեց հայ կաթոլիկ Աբրահամ վարդապետին՝ հայտարարելով, որ հայտնաբերվել է միայնակ հայ ծերերին սպանող հայկական բանդա, սակայն մի քանի ամիս բանտարկելուց հետո ստիպված եղավ ազատել հայ վարդապետին՝ չկարողանալով ապացուցել վերջինիս հանցանքը[503]:

2012 թ. Մարդինի Սուրբ Գևորգ հայ կաթոլիկ եկեղեցին վերադարձվեց տեղի սակավաթիվ հայ կաթոլիկ համայնքին, որն էլ տեղեկացրեց, որ դեմ չի լինի, եթե Թուրքիայի հայերն իրենց ուժերով նորոգեն եկեղեցին, սակայն եղած ֆինանսական հնարավորությունները բավարար չեն վերականգնման համար: Սբ Գևորգը երկար տարիներ Թուրքիայի Գյուղատնտեսության նախարարության կողմից օգտագործվել էր որպես պարարտանյութի (թունաքիմիկատների) և դեղորայքի պահեստ: Վնասների փոխհատուցման պատասխանատվության հարցը պետք է դրվեր սույն նախարարության վրա, որն, ինչպես նմանատիպ այլ դեպքերում, անտեսվեց: Այն, ինչ այսօր

---

[502] Տե՛ս նույն տեղում, էջ 61-64:
[503] Տե՛ս Օզինյան Ա., Թուրքիայում նորից հայ են սպանել, http://www.mediamax.am/am/column/12370/

մնացել է հայ կաթոլիկ համայնքից Մարդինում Սուրբ Գևորգ չգործող եկեղեցուց բացի, կանգուն վիճակում գտնվող Սբ. Հովսեփ եկեղեցին, իսկ համայնքը կազմում են մի քանի հոգի և հույս չկա, որ այն կվերականգնի իր նախկին վիճակը։

2010 թ. ապրիլին Դիարբեքիրի կալվածքների շրջանային տնօրինությունը վերականգնեց կաթոլիկ և բողոքական համայնքներին պատկանող եկեղեցիները։ Շրջանային վարչության պետն իր հարցազրույցում նշեց, որ իրենք պատրաստվում են ավարտին հասցնել 19-րդ դարի հայկական կաթոլիկ և բողոքական համայնքներին պատկանող եկեղեցիների վերանորոգումը և դրանք հանձնել հասարակական շահագործման՝ տեղական ու նահանգային իշխանությունների հետ խորհրդակցելուց հետո։ Առաջին հայացքից թուրքական իշխանությունների նման բարեհոգությունը կարող էր տարօրինակ թվալ, սակայն բանն այն է, որ Դիարբեքիրում հայ կաթոլիկ և ավետարանական համայնքներ չկան և անհասկանալի է, թե վերականգնվող եկեղեցիներն ում են ծառայելու[504]։

Ինչ վերաբերում է Թուրքիայի հայ ավետարանականներին, ապա նրանց թիվը ներկայումս կազմում է մոտ 500 մարդ[505]։ Սակայն այդ տվյալները վերաբերում են միայն պաշտոնապես հայտնի հայ ավետարանականներին՝ չընդգրկելով միսիոներական գործունեության արդյունքում քրիստոնեություն ընդունած իսլամացված հայերի սերունդներին։ Պաշտոնապես հայտնի հայ ավետարանականները բնակվում են Կ.Պոլսում, մինչդեռ բողոքականություն ընդունած իսլամացված հայերի սերունդները՝ հիմնականում Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի բնակավայրերում։ Այդպիսի խմբեր կան, օրինակ, Ադանայում, Մալաթիայում և այլուր[506]։

---

[504] Տե՛ս Սիմավորյան Ա., Հովյան Վ., նշվ. աշխ., էջ 48-50։
[505] Տե՛ս Hofmann T., նշվ. աշխ., էջ 9։
[506] Տե՛ս Սիմավորյան Ա., Հովյան Վ., նշվ. աշխ., էջ 113։

Եթե նախկինում հայ ավետարանականները Թուրքիայում ունեին 31 եկեղեցի, ապա 1996թ. Ստամբուլում գործում էր ընդամենը 5 հայ ավետարանական եկեղեցի[507]: Երբեմնի բազմաթիվ ավետարանական եկեղեցիների փոխարեն, որոնք սփռված էին Թուրքիայի հայաշատ վայրերում, ներկայումս Ստամբուլում գործում են ընդամենը երկու Հայ Ավետարանական եկեղեցիներ: Եթե Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին հայ ավետարանական համայնքն Օսմանյան կայսրությունում ուներ հարյուրավոր կրթական հաստատություններ, ապա այժմ այդպիսիք, կարելի է ասել, չկան, եթե հաշվի չառնենք Ստամբուլի Հայ Ավետարանական եկեղեցուն կից կիրակնօրյա դպրոցը: Հայ ավետարանական համայնքում այլ կարգի հաստատությունները՝ բարեգործական, տեղեկատվական և այլն, նույնպես բացակայում են[508]:

Թուրքական նիշխանությունները պարբերաբար բռնություններ են գործադրել նաև հայ ավետարանական համայնքի նկատմամբ: 1981թ. հոկտեմբերի 2-ին սկսվեց 1982 թ. մարտին հայ ավետարանական եկեղեցու քահանա Հրանտ Գուզելյանի դատավարությունը, որը մեղադրվում էր արևելյան նահանգներից «թուրք» որբ տղաների Ստամբուլ բերելու և նրանց հայություն քարոզելու մեջ[509]: Հրանտ Գուզելյանը թուրքական դատարանի կողմից մեղավոր ճանաչվեց և դատապարտվեց 16-ամսյա ազատազրկման[510]: Արժանահիշատակ է նաև 2007 թ. ապրիլի 18-ին Մալաթիայի «Զիրվե» հրատարակչատանը թուրք ազգայնամոլների կողմից երեք բողոքականների դաժան սպանությունը, որոնցից երկուսը, ըստ որոշ ենթադրությունների,

---

[507] Տե՛ս Խաչիկյան Տ., Բողոքական հայերը Թուրքիայում: «Կրոն և հասարակություն», Եր., 2010, թիվ 10, էջ 85:
[508] Տե՛ս Սիմավորյան Ա., Հովյան Վ., նշվ. աշխ., էջ 115-116:
[509] Տե՛ս «Ալիք», Թեհրան, 1985, նոյեմբերի 24:
[510] Տե՛ս Hofmann T., նշվ. աշխ., էջ 19:

քրիստոնեության վերադարձած իսլամացված հայերի սերունդներ էին[511]:

Պաշտոնապես ընդունված հայ առաքելական, ինչպես և գերազանցապես Ստամբուլում գտնվող հայ կաթոլիկ և ավետարանական համայնքերի նկատմամբ խտրական քաղաքականություն իրականացնելուց զատ, թուրքական իշխանություններն առանձնակի ուշադրություն էին դարձնում Թուրքիայի արևելյան գավառներում՝ Արևմտյան Հայաստանում դեռևս մնացած հայության բեկորներին, ձգտելով կամ բռնի իսլամացնել, թուրքացնել նրանց, կամ էլ բռնի տեղահանել իրենց բնակավայրերից:

1925 թ. Շեյխ Սաիդի գլխավորած ընդվզումից հետո 1920-ականների վերջերին բռնկվեց Արարատյան ապստամբությունը, որի գլխավոր ղեկավարներից մեկը՝ Զիլան բեյը, Խնուսի Հարամիկ գյուղի բնակիչ Արտաշես Մուրադյանն էր[512]: Արարատյան ապստամբության կազմակերպման գործում հայ-քրդական համագործակցությունը Թուրքիայի իշխանությունների աչքից չվրիպեց: Այս ապստամբությունների շարժիչ ուժերից մեկը թուրքական իշխանությունները համարում էին վերապրող հայությանը[513]:

Սղերդի և Դատվանի հայերն ու եզդիները խաղաղ էին ապրում միմյանց հետ և թուրքական իշխանությունների ազդեցությունը թույլ էր այդ շրջանների վրա: Բաղեշի (Բիթլիս) կառավարիչը 1926 թ. 30 հազարանոց բանակով հարձակվում է հայերի և եզդիների վրա, սակայն հայ-եզդիական շուրջ 10 հազարանոց ուժերը կարողանում են հետ մղել թշնամուն: Նշված շրջաններում հայ-եզդիական դիմադրությունը կոտրելու նպատակով 1934 թ. 40 հազարանոց թուրքական

---

[511]Տե՛ս Սիմավորյան Ա., Հովյան Վ., նշվ. աշխ., էջ 106:
[512] Տե՛ս «Դրօշակ», Երեւան, 1999, յունիսի 28, էջ 36:
[513] Տե՛ս Խանլարեան Կ., Հայ բնակչութեան էթնոկրօնական վերակերպումները Թուրքիայի Հանրապետութիւնում (1923-2005 թթ.), էջ 59:

զորքը կրկին հարձակվում է Սղերդի վրա և կոտորածի ենթարկում այնտեղ բնակվող հայերին ու եզդիներին[514]:

1929 թ. արևելյան նահանգներում մնացած հայերի դեմ նոր հալածանքներ սկսվեցին: Դիարբեքիրի ու Խարբերդի հայերին հասկցրին, որ երկրից հեռանալը իրենց շահերից է բխում: Սեբաստիայում հայերին արգելվեց քաղաքից դուրս գալ և որոշ արհեստներ նրանցից խլվեցին: Ֆրանսիայի հյուպատոսարանի 1929 թ. զեկուցագրերից մեկում նշվում է, որ Սեբաստիայի հարուստ հայերի մեծամասնությունը քաղաքից հեռացավ: 1929-30 թթ. թուրքական իշխանությունները Խարբերդից (Էլազիգ), Տիգրանակերտից (Դիարբեքիր) և Մարդինից բռնի արտաքսեցին հայերին, որոնց թիվն, ըստ որոշ տվյալների, կազմում էր 30 հազար[515]: Գաղթի ճանապարհին նրանք ենթարկվում էին ավազակախմբերի հարձակումներին ու կողոպտվում[516]: Նշված շրջաններից բռնի արտաքսված այդ հայերի անցագրերում թուրքական իշխանությունների կողմից դրվել էր «Թուրքիա վերադարձը արտոնված չէ» գրությամբ կնիք[517]:

1934 թ. «Բնակության մասին» օրենքի ընդունումից վեց ամիս առաջ արևելյան նահանգների հայերի դեմ կրկին հալածանքներ սկսվեցին: Իշխանությունները փորձում էին տեղի մահմեդականներին գրգռել «գյավուր» հայերի դեմ և նրանց ձեռքով հայերին վտարել այդ շրջաններից: Իրենց ունեցվածքը չափազանց չնչին գներով վաճառելուց հետո երկու ամսվա ընթացքում 600 հայեր պարտադ-

---

[514] Տե՛ս Պողոսյան Ս. Կ., Քրդերը եւ Հայկական հարցը, էջ 278:
[515] Տե՛ս Խաթանասյան Ե., Հայոց թյուր, Բոստոն, 1965, էջ 27:
[516] Տե՛ս Քյուրքճյան Ա., Թուրքերուն՝ Թուրքիան թրքացնելու քաղաքականությունը, http://ermeni.hayem.org/ermenice/trqatsnelu_qaghaqakanutyune.htm
[517] Տե՛ս Թորիկեան Շ., Հայկական հարցը եւ միջազգային օրէնքը, Պէյրութ, 1976, էջ 184:

բաբար Ստամբուլ գաղթեցին: Նշված օրենքի ընդունումով հայերի բռնագաղթն օրինականացվեց[518]:

Մ. Քեմալի իշխանության վերջին տարիներին, երբ արդեն աստիճանաբար զգալի էր դառնում Ի. Ինոնյուի ազդեցությունը, որոշ թվով դերսիմցի հայեր Հալեպից գաղտնի վերադարձել էին Դերսիմ (Թունջելի), որը վերածվել էր ալևի ցեղախմբերի բնակավայրի[519]: Անշուշտ, սխալ է կարծել, թե ալևի դերսիմցիները բոլորն իսլամացած հայեր չեն: Սակայն ցեղասպանության տարիներին կոտորածներից փրկված հայերը Արևմտյան Հայաստանի տարբեր շրջաններից տեղափոխվեցին Դերսիմ և ձուլվեցին ալևիների մեջ՝ պահելով իրենց հին հավատքի տարրերը և հարգանքն իրենց սրբատեղիների նկատմամբ: Դերսիմում հայտնի է եղել Հավլորի վանքի շուրջը հաստատված Միրաքյանների բավական զորեղ տոհմը, որը հայտնի ու ազդեցիկ է եղել դեռևս մինչև Հայոց ցեղասպանությունը և հայկական տառերով թագավորների պատկերներով դրամներ է հատել[520]: 1937-38 թթ. Դերսիմի ալևիական ապստամբություններին իրենց մասնակցությունն ունեցան այնտեղ վերապրած և վերաբնակված հայերը[521]: Դերսիմը քեմալականների կողմից դիտվում էր ծպտյալ հայերի ապաստարան և «անհավատ» ալևիների բնակավայր, ինչն, իր հերթին, նշանակում է, որ ալևիներին կոտորելով՝ կառավարությունը փորձում էր նաև ավարտին հասցնել երիտթուրքերի կողմից

---

[518] Տե՛ս Քյուրքճյան Ա., Թուրքերուն՝ Թուրքիան թրքացնելու քաղաքականությունը, http://ermeni.hayem.org/ermenice/trqatsnelu_qaghaqakanutyune.htm

[519] Տե՛ս Խանլարեան Կ., Հայ բնակչութեան էթնոկրօնական վերակերպումները Թուրքիայի Հանրապետութիւնում (1923-2005 թթ.), էջ 69:

[520] Տե՛ս Ալպոյաճեան Ա., Պատմական Հայաստանի սահմանները, Գահիրէ, 1950, էջ 459-460:

[521] Տե՛ս Bruinessen M., նշվ. աշխ., էջ 141, 170:

հայ ազգի նկատմամբ իրականացված ցեղասպանական գործողությունները[522]:

Եթե Մ. Քեմալի կառավարման շրջանում Թուրքիայում բնակվող հայությունը համեմատական խաղաղ կյանքով էր ապրում, ապա 1938 թ. իշխանության եկած Ի. Ինոնյուի օրոք հայության վիճակը կտրուկ վատացավ[523]: Եթե մինչև 1938 թ. գավառահայության մի զգալի մասը, ճնշումներից ու հալածանքներից խուսափելով, ապաստան էր գտնում Ստամբուլում, Ի. Ինոնյուի իշխանության տարիներին այս հնարավորությունից էլ, հիմնականում, զրկվեց: Թուրքիայում շարունակվեցին նաև ոչ թուրք ժողովուրդների նկատմամբ պարբերաբար իրականացվող ցեղասպանությունները, որոնցից ամենալայնամասշտաբը 1936-1938 թթ. Դերսիմի ալևիների, հայերի և զազաների կոտորածն էր[524]: 1934 թ. հունիսին ընդունված և մինչև 1935 թ. հուլիս գործադրված «Գաղտնի բնակչության մարդահամարի մասին» օրենքով իշխանություններն արդեն որոշակի պատկերացում ունեին հատկապես Դերսիմում ապրող կրոնափոխ հայերի թվաքանակի մասին[525]: Ուստի պատահական չէ, որ կոտորածից առաջ թուրք զինվորականները ալևի ցեղապետերից, զինաթափվելուց և հարկերը վճարելուց զատ, պահանջում էին նաև հանձնել Դերսիմում ապաստանած կրոնափոխ հայերին, սակայն նրանց բոլոր պահանջները մերժվեցին: 1937 թ., ճնշելով Դերսիմի դիմադրությունը և անցնելով ցեղասպանության իրագործմանը, թուրքական իշխանությունները արդեն բացահայտ էին հայտարարում, որ

---

522 Տե՛ս Гасратян М., Курды в Турции в новейшее время, с. 198.

523 Տե՛ս Խանլարեան Կ., Հայ բնակչութեան էթնոկրօնական վերակերպումները Թուրքիայի Հանրապետութիւնում (1923-2005 թթ.), էջ 71:

524 Տե՛ս Մելքոնյան Ռ., Աբրահամյան Մ., Օսմանյան կայսրության և Թուրքիայի Հանրապետության բռնի իսլամացման քաղաքականությունը հայերի նկատմամբ որպես ցեղասպանական արարք, էջ 171:

525 Տե՛ս Մելքոնյան Ռ., Իսլամացված հայերի խնդիրների շուրջ, էջ 86-89:

իրենց հիմնական թիրախներից են Հայոց ցեղասպանության ժամանակ փրկված և Դերսիմում բնակություն հաստատած հայերը[526]: Դրանցից ամենացայտունը Դերսիմի ջարդի և տեղահանության հիմնական կազմակերպիչներից գեներալ Ալփդողանի հետագայում արած այն հայտարարությունն էր, թե այնտեղ բնակություն հաստատած ծպտյալ քրիստոնյա հայեր կային, որոնք անունները փոխել և թուրքի պես էին ապրում և, որ նրանք մասնակցություն են ունեցել Դերսիմի ապստամբությանը[527]: Որոշ տվյալներով, 1937-38 թթ. Դերսիմի բնակչության նկատմամբ իրականացված ցեղասպանության ժամանակ սպանվել է մոտ 15 հազար հայ, որոնք 1915 թ. հետո ապրում էին ալևու ինքնությամբ: Բոլոր դերսիմցիները գիտեն Դիակնեբի ձորի մասին, ուր զորքերը քշել են հազարավոր հայերի և զազաների ու կոտորել[528]:

Դերսիմի կոտորածների ժամանակ տեղի են ունեցել բռնի իսլամացման, իսկ երբեմն էլ բռնի դավանափոխության՝ սունիացման դեպքեր և՛ հայերի, և՛ զազաների նկատմամբ: Այսինքն՝ 1915 թ. փրկված հայերը 1937-1933 թթ. ենթարկվել են ցեղասպանական ևս մեկ գործողության՝ բռնի կրոնափոխության: Ընդ որում, մեծ մասամբ նույնն են եղել մեթոդները՝ նախ իսլամի պարտադրում, իսկ արդեն կրոնափոխությունից հետո այդ մարդկանց տեղաբաշխել են հոծ թուրքական բնակչություն ունեցող շրջաններում, որպեսզի լիակատար ձուլման ենթարկեն: Բռնի իսլամացման համար թիրախավորված են եղել, հիմնականում, կանայք և երեխաները, սակայն, եր-

---

[526] Տե՛ս Մսըրլյան Զ., Հայոց ցեղասպանութենէն առաջ և ետք, Անթիլիաս, 2011, էջ 189:
[527] Տե՛ս Մելքոնյան Ռ., Աբրահամյան Մ., նշվ. աշխ., էջ 177:
[528] Տե՛ս Ալվրցյան Հ., Կրոնափոխ հայերի խնդիրները Թուրքիայի Հանրապետությունում, էջ 127:

բեմն, տղամարդիկ էլ արդեն աքսորի ընթացքում ենթարկվել են կրոնափոխման[529]:

1939 թ. Ալեքսանդրեթի սանջակը Թուրքիային միացվելուց և այն Հաթայ նահանգի վերածելուց հետո Կիլիկիայից այնտեղ վերաբնակված 35 000 հայերին պարտադրվեց 18 ամսվա ընթացքում հեռանալ իրենց բնակավայրերից[530]:

Պատրիարքական ընդհանուր փոխանորդ Ա. Աթեշյանի տվյալներով, գավառաբնակ հայության թիվն այսօր չի անցնում 3000-ից: Անկարայում բնակվում են ավելի քան 500 հայ, Սեբաստիայում՝ 70, Մալաթիայում՝ մոտ 50 հայեր են ապրում: Խարբերդում մոտավորապես 20 հայ ընտանիք է հաշվվում: Իսքենդերունում բնակվում է մոտ 300 հայ, իսկ մյուս հայերը կամ իսլամացվել են, կամ արտագաղթել[531]: Պետության կողմից մշակված, ծրագրված տարաբնույթ մեթոդներով հայերի նկատմամբ գործադրվող իսլամացման և թրքացման քաղաքականության հետևանքով տասնամյակների ընթացքում նրանցից շատերը ձուլվեցին[532]: Պետք է նշել, որ իսլամացումը հայերի համար ֆիզիկական բնաջնջումից ու տեղահանումից փրկվելու միջոց է եղել, որի տակ թաքնվելով՝ նրանք շատ թանկ գին են վճարել՝ կորցնելով լեզուն, մշակույթը և համայնքային կյանքը[533]: Այդ է պատճառը, որ բռնի իսլամացված հայերին Հր. Դինքը պատկերավոր կերպով բնութագրում է՝ որպես «ապրող կորուստ»[534]:

---

529 Տե՛ս Մելքոնյան Ռ., Աբրահամյան Մ., նշվ. աշխ., էջ 181:

530 Տե՛ս Քյուրքճյան Ա., Թուրքերուն՝ Թուրքիան թրքացնելու քաղաքականությունը, http://ermeni.hayem.org/ermenice/trqatsnelu_qaghaqakanutyune.htm

531 Տե՛ս Ալվրցյան Հ., Կրոնափոխ հայերի խնդիրները Թուրքիայի Հանրապետությունում, էջ 59:

532 Տե՛ս Վարդանյան Ս., Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը, Եր., 2009, էջ 32:

533 Տե՛ս Խանլարեան Կ., Հայ բնակչութեան էթնոկրօնական վերակերպումները Թուրքիայի Հանրապետութիւնում (1923-2005 թթ.), էջ 268:

534 Տե՛ս Հրանտ Դինք, նշվ. աշխ., էջ 53:

Տասնամյակներ շարունակ հայերի գոյությունը ժխտող ամենատարբեր պետական և ոչ պետական հաստատությունները, քաղաքական ուժերը, մամուլը, մտավորականները վերջին տարիներին ջանք չեն խնայում ամենուր ծպտյալ հայերին հայտնաբերելու գործում՝ ներկայացնելով նրանց ուռճացված թվաքանակը և խոսելով այն մասին, որ նրանք, իբր, սպառնում են Թուրքիայի ամբողջականությանը: Թուրքական հասարակության մեջ հակահայ տրամադրություններ բորբոքելու ճանապարհով ներքին թշնամու կերպարի ստեղծումը և նրա դեմ ազգայնամոլական ճակատի համախմբումը հետապնդում է հեռահար քաղաքական նպատակներ: Մոտակա նպատակը Թուրքիայի իսլամացված հայության մեջ ինքնության վերադարձի նկատվող զարթոնքը խեղդելն է[535]:

Թուրքիայում բնակվող 20-րդ դարի սկզբում իսլամացված հայությունն առավելապես սերվում է հետևյալ խմբերից՝ ցեղասպանության ժամանակ երբեմն միայն արտաքուստ իսլամ ընդունած հայերից, թուրքերի կամ քրդերի հետ ամուսնացած առևանգված հայ կանանցից և աղջիկներից ծնվածներից, մահմեդականների կողմից բռնի որդեգրված հայ երեխաներից, մահմեդական հարևանների մոտ ապաստանած հայերից, իշխանության իմացությամբ և կամքով իսլամացված սահմանափակ թվով հայ արհեստավորներից և բացառիկ մասնագետներից:

Ներկայումս, Թուրքիայում բնակվող իսլամացված հայությունը ձուլման և ինքնության կորստի տարբեր աստիճանների վրա գտնվող մարդիկ են, որոնց պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի.

ա. Ծպտյալ հայեր, որոնք պահպանել են ազգային-կրոնական (քրիստոնեական) սովորույթների, տոների, ծեսերի առանձին տար-

---

[535] Տե՛ս Ալվրցյան Հ., Կրոնափոխ հայերի խնդիրները Թուրքիայի Հանրապետությունում, էջ 8:

րեր, որոնք փոխանցում են իրենց սերունդներին, որոնք, հիմնականում, մոռացել են լեզուն, բայց քողարկված ձևով ունեն հայկական ինքնագիտակցության որոշակի տոկոս և խուսափում են օտարների հետ ամուսնությունից: Ծպտյալ հայերի մեջ առկա ներքին ամուսնությունների ինստիտուտը ենթադրում է նաև որոշակի ցանցի առկայություն, որը նրանց թույլ է տալիս, թեկուզ հեռակա, ճանաչել միմյանց: Այս վարկածի օգտին է խոսում նաև ներքին ամուսնությունների աշխարհագրությունը, երբ բավական հեռու գյուղերի բնակիչներն ամուսնանում են իրար հետ[536]: Այս առումով հիշատակման է արժանի այն փաստը, որ 2003 թ. օգոստոսին ծպտյալ հայերի հարսանիքներից մեկի ժամանակ արտառոց դեպք տեղի ունեցավ՝ փեսան պահանջեց, որ ինքն ու հարսնացուն մկրտվեն և իրենց պսակադրությունն իրականացվի քրիստոնեական եկեղեցում: Սկզբում աղջկա ազգականները վախեցան և փորձեցին հետ կանգնել, սակայն տղան պնդեց իր որոշման վրա և վերջիններս ստիպված եղան համաձայնվել: Հարսանիքի նախորդ գիշերը աղջկա տան առջև կազմակերպված խնջույքին մասնակցեց շուրջ 300 մարդ: Խնջույքի մասնակիցներ ասում էին, որ ծպտյալ հայերից շատերը ներկա չեն գտնվել այն մտավախությունից ելնելով, որ պսակադրությունը լինելու է քրիստոնեական ծեսով: Խնջույքի ժամանակ շրջակա քրդական գյուղերից կրակոցներ լսվեցին, սակայն ծպտյալ հայերի երիտասարդները պատասխան կրակոցներով հասկացրին, որ իրենք նույնպես զինված են և թույլ չեն տա խանգարել իրենց ուրախությունը: Քանի որ մոտակայքում գործող հայկական եկեղեցի չկար, որոշվեց պսակադրությունն իրականացնել Ադըյամանի ասորական եկեղե-

[536] Տե՛ս Մելքոնյան Ռ., Իսլամացված հայերի խնդիրների շուրջ, էջ 36:

ցում[537]: Քրդերն, ընդհանրապես, նեղվում են այն փաստից, որ իսլամացված հայերն իրենց աղջիկ չեն տալիս[538]:

բ. Խառնածին հայերի սերունդներ, որոնց գերակշիռ մասն ընդունում է, որ իրենց նախնիները՝ տատը կամ պապը, հայ է եղել և ստիպված, իսլամացել է: Խառնածիններն անհամեմատ ավելի քիչ են պահպանել ազգային-կրոնական սովորույթների տարրերը, նրանց մի մասը հպարտությամբ խոստովանում է, որ ունի նաև հայկական ծագում, իսկ ոմանք էլ տարբեր դրդապատճառներով կտրականապես ժխտում են իրենց հայկական ծագումը: Ավելին, ըստ տարբեր աղբյուրների, նրանց շարքում կան ծայրահեղ ազգայնական կազմակերպությունների անդամներ[539]:

Թուրքիայում բնակվող իսլամացված հայերից առանձին խումբ են կազմում համշենահայերը, որոնց մի մասը կրոնափոխ է եղել 17-րդ դարի սկզբներին, իսկ մյուս մասը՝ 18-րդ դարում և, մասամբ, նաև 20-րդ դարի սկզբներին: Ներկայումս, իսլամացված համշենցի հայերը բնակվում են Թուրքիայի՝ Սև ծովին ափամերձ շրջաններում: Արևմտյան համշենցիները բնակվում են, հիմնականում, Ռիզեի, Տրապիզոնի, Գիրեսունի, Օրդուի և Սամսունի նահանգներում, սուննի մահմեդականներ են և խոսում են թուրքերեն, իսկ Արդվինի նահանգում բնակվող արևելյան համշենցիները խոսում են Համշենի բարբառով և սուննի մահմեդականներ են[540]:

Իսլամացված հայերի առաջին սերունդն ուներ փրկվելու և գոյատևելու խնդիր, երկրորդ սերունդն արդեն սկսում է մշակել ինքնության պահպանման, քրդական ու թուրքական միջավայրերում ապրելու և համակերպվելու մեխանիզմներ, երրորդ սերունդն էլ, իր

---

537 Տե՛ս Յալչքն Ք., Ծպտյալ հայերը, http://horizonweekly.ca/?c=4&id=30&n=1656

538 Տե՛ս Մելքոնյան Ռ., Իսլամացված հայերի խնդիրների շուրջ, էջ 41:

539 Տե՛ս Մելքոնյան Ռ., Հայերի բռնի իսլամացումը ցեղասպանության տարիներին. Ընթացքը և հետևանքները, էջ 23-24:

540 Տե՛ս Հայերի խնդիրներն ու իրավունքները Թուրքիայում, էջ 7:

հերթին, փորձում է նոր իրավիճակում օգտվել թեկուզ փոքրիկ ազատությունից, ճանապարհ փնտրել դեպի ինքնության վերադարձ: Սակայն կան նաև բացասական զարգացումներ: Եթե առաջին և երկրորդ սերունդների մոտ ինքնության հետ կապված հիշողությունն ավելի թարմ էր, ազգային սովորույթների իմացությունն՝ ավելի բարձր, ապա արդեն երրորդ սերունդը զգալիորեն հեռանում է դրանից, իր վրա կրում է իսլամական, թուրքական հասարակության ազդեցությունը: Սակայն գրեթե բոլոր իսլամացված հայերի և նրանց ընտանիքների մեջ պահպանվել են 1915 թ. և դրան նախորդող ժամանակահատվածի վերաբերյալ հիշողությունները, այսինքն՝ Հայոց ցեղասպանության հոգեբանական տրավման միավորում է ուծացման տարբեր մակարդակների վրա գտնվող իսլամացված հայերին, և դա փոխանցվում է սերդե-սերունդ, անկախ թուրքական իշխանությունների ու հասարակության խտրական վերաբերմունքից ու Հայոց ցեղասպանության ժխտողականությունից[541]:

Իսլամացված հայերն իրենք են խոստովանում, որ կրոնով նախատեսվող բոլոր արարողություններն անցնելուց հետո անգամ մահմեդականներն իրենց չեն համարում իրական մահմեդականներ, իսկ «կրոնափոխված» կամ «գյավուր» որակումներն իրենց ուղեկցում են ողջ կյանքի ընթացքում: Տեղի թուրքերը իսլամացված հայերին կնության չեն տալիս իրենց աղջիկներին, իսկ տեղական իշխանությունները նրանց չեն ապահովում անհրաժեշտ աշխատանքով: Տարեցտարի ավելանում են վանդալիզմի դեպքերը իսլամացված հայության պատմամշակութային հուշարձանների նկատմամբ: Ծպտյալ քրիստոնյա հայերի խնդիրները, հիմնական, կապված են կրոնն ազատորեն դավանելու ու ազգային ավանդույթներն անար-

[541] Տե՛ս Մելքոնյան Ռ., Աբրահամյան Մ., Օսմանյան կայսրության և Թուրքիայի Հանրապետության բռնի իսլամացման քաղաքականությունը հայերի նկատմամբ որպես ցեղասպանական արարք, էջ 204:

գել շարունակելու հետ: Վերջիններս չեն կարողանում օգտագործել հայկական եկեղեցիները, որոնք ավերակների են վերածվել: Ամուսնության և կնունքների համար, ստիպած, մեկնում են Ստամբուլ, քանի որ նրանց բնակության վայրերում 1915 թ. ի վեր երբևէ քահանա չի այցելել: Ի տարբերություն մահմեդականների, պետությունը չի գրանցում ծպտյալ հայերի գերեզմանները[542]:

Քրդերով շրջապատված ծպտյալ հայերը ստիպված են զգուշանալ ոչ միայն թուրքական իշխանություններից, այլև՝ քրդական շրջապատից, որոնք թշնամաբար են վերաբերվում ծպտյալ հայերին: Հիմնականում երկրագործությամբ և անասնապահությամբ զբաղվող ծպտյալ հայերը գոյատևում են՝ նաև քրդերին իրենց անասունները վաճառելով, սակայն վերջիններս, երբեմն, վրեժխնդրության սպառնալիքով ու վնասարարությամբ (ծպտյալ հայերի ախոռները այրելով), ջանում են չվճարել այդ անասունների գումարը, այդպիսով ծանր նյութական վնաս հասցնելով ծպտյալ հայերին: Նման դեպքերում ծպտյալ հայերը փոխօգնության են հասնում միմյանց՝ փորձելով ինչ-որ ձևով մեղմել հասցված նյութական վնասը:

Հաճախակի են նաև քրդերի զինված հարձակումները ծպտյալ հայերի վրա՝ նրանց ունեցվածքին և հողատարածքներին տեր դառնալու նպատակով: Քրդական շրջապատը ջանում է ծպտյալ հայերի համար ստեղծել այնպիսի անտանելի պայմաններ, որ նրանք թողնեն - հեռանան իրենց բնակավայրից՝ ունեցվածքը թողնելով քրդերին: Ավելի համառ ծպտյալ հայերը ստիպված են լինում զենքի միջոցով սաստել ագրեսիվ տրամադրված քրդական շրջապատի նկրտումները: Ծպտյալ հայերից ամենահամարձակները փորձել են դատական կարգով պայքարել նախնիների սեփականության նկատմամբ իրենց ժառանգության իրավունքը հաստատելու համար, սա-

[542] Տե՛ս Հայերի խնդիրներն ու իրավունքները Թուրքիայում, էջ 11:

կայն անգամ երկար տարիներ տնած դատերը շահելուց հետո էլ արհեստական խոչընդոտներ են ստեղծվել կալվածքները նրանց հետ վերադարձնելու հարցում: Դատարանի վճռով անգամ մասամբ նրանց վերադարձված կալվածքները շրջակայքի քրդերը փորձել են զենքի ուժով խլել օրինական տերերից: Իրենց կալվածքները պաշտպանել փորձող ծպտյալ հայերի ու քրդերի զինված բախումների համար իշխանությունները պատասխանատվության են կանչել բացառապես ծպտյալ հայերին:

Անշուշտ, ոչ բոլոր ծպտյալ հայ ընտանիքներն են համառ ու անվախ: Նրանց զգալի մասը, չկարողանալով դիմանալ ճնշմանը, իրենց հայրենի օջախներից հեռացան Ստամբուլ[543], կամ էլ ընդհանրապես լքեցին երկիրը՝ պապենական կալվածքները թողնելով պետությանը կամ քուրդ աղաներին[544]:

Հայկական ինքնագիտակցության տարբեր շերտերի պահպանման ամենախոսուն ապացույցներից կարող է լինել այն փաստը, որ պատեհ առիթի դեպքում բռնությամբ և հարկադրանքով իրենց արմատից կտրված հայերը վերադառնում կամ գոնե փորձում են վերադառնալ իրենց արմատներին: Դրա վառ օրինակը տարբեր տարիների իսլամացված հայերի շրջանում պաշտոնապես արձանագրված կրոնադարձությունն է: Ընդ որում, կրոնադարձվել են տարբեր սերունդների պատկանող հայեր. սա խոսում է նրանց մեջ իրենց արմատների վերաբերյալ առկա կոլեկտիվ և պատմական հիշողության պահպանման մասին[545]:

Թուրքիայի արևելյան շրջաններում՝ Արևմտյան Հայաստանի նահանգներում բնակվող բռնի իսլամացված, ծպտյալ հայերի գլխա-

---

[543] Տե՛ս Հովհաննիսյան Ռ., նշվ. աշխ., էջ 28-29:

[544] Տե՛ս Յալչըն Ք., Ծպտյալ հայերը, http://horizonweekly.ca/?c=4&id=30&n=1656

[545] Տե՛ս Մելքոնյան Ռ., Թուրքիայի իսլամացված հայեր. Խնդրի որոշ ասպեկտների շուրջ, www.religions.am

վոր խնդիրներից մեկը եղել և, ցավոք, դեռևս մնում է պոլսահայության և, ընդհանրապես, հայության կողմից նրանց ընկալման հարցը: Առաջնորդվելով որոշ կարծրատիպերով՝ պոլսահայ համայնքն այնքան էլ հակված չէ հայության այլ՝ իրեն չնմանվող խմբերի հետ շփվելու: Այս հոգեբանությունից ելնելով՝ պոլսահայերի ոչ ջերմ ընդունելությանն էր արժանանում արևելյան նահանգներից Ստամբուլ տեղափոխված գավառահայությունը: Գավառներում պահպանված հայության բեկորները կանգնած և, իրենց բնակավայրերում մնալով, ձուլվելու կամ, Ստամբուլ տեղափոխվելով, հայ համայնքին ինտեգրվել փորձելու բարդ ընտրության առջև: Տարբեր տարիներին գավառներից Ստամբուլ գաղթած հայերի մեծ մասի համար, ինչպես իրենք են խոստովանում, հիմնական դրդապատճառը եղել է հայ մնալու ձգտումը: Նրանց ներքին գաղթի հիմնական պատճառն այն էր, որ գավառներում Հայոց ցեղասպանությունից հետո բացակայում էին հայ ազգային և կրոնական ինքնությունը պահպանելու տարրական հնարավորությունները: Ստամբուլից բացի, Թուրքիայի այլ վայրերում հայկական դպրոցներ և եկեղեցիներ չկային, բացի այդ, իշխանությունների և մահմեդական միջավայրի ճնշման պայմաններում քրիստոնյա հայերը հարկադրված էին թաքցնել իրենց էթնիկ և կրոնական պատկանելությունը: Ստեղծված պայմաններում 1950-ական թթ. մեծ թափով սկսվեց գավառների քրիստոնյա հայերի գաղթը Ստամբուլ:

1950-ականների վերջին պետական տարբեր գերատեսչությունների կողմից Սասունում բնակվող փոքրաթիվ քրիստոնյա հայերին իսլամ ընդունելու պահանջ է ներկայացվում, որը, սակայն, հակազդեցություն է առաջացնում սասունցիների մի մասի շրջանում. նրանք մերժում են պարտադրված կրոնափոխությունը: Սակայն ճնշումները շարունակվում են արդեն ուժային կառույցների միջոցով: Այս ամենի հետևանքով քրիստոնյա հայերի մի մասը, գոնե ար-

տաքուստ, իսլամ է ընդունում: Բռնի մեթոդներին զուգահեռ թուրքական պետությունը գործի է դրել նաև այլ միջոցներ, մասնավորապես՝ հայկական գյուղեր հաճախ սկսել են այցելել մահմեդական հոգևորականներ, որոնք փորձել են համոզել տեղի բնակչությանը կամովին ընդունել իսլամ, որպեսզի հնարավոր լինի կատարել իրենց արարողությունները՝ հարսանիք, կնունք, թաղում և այլն, քանի որ այդ տարածքներում 1915 թ. հետո հայ քրիստոնյա հոգևորականներ չկային և արգելված էր Ստամբուլից քահանաների գործուղումը Արևմտյան Հայաստանի տարածքներ:

1965 թ. մայիսի 7-ին Սղերդի նահանգի Բիմեր գյուղից Ստամբուլում ԽՍՀՄ հյուպատոսություն այցելած հայազգի Հայրեթթին Գյոչերը ներկայացնում է Սղերդի և Մուշի նահանգների հայության ծանրագույն վիճակը, պատմում է, որ տեղի քրդերը իշխանությունների թողտվությամբ ամեն կերպ ճնշել են հայերին և պահանջել, որպեսզի նրանք ընդունեն իսլամ, խլել են նրանց գույքը և անասուններին: Նրա խոսքերով, այդ նահանգների հայերն իրեն լիազորել են ԽՍՀՄ հյուպատոսությանը ներկայացնել իրենց ծանր վիճակը՝ հույս ունենալով, որ հյուպատոսության աշխատակիցներն այդ խնդրի մասին կիրազեկեն Թուրքիա այցելող ԽՍՀՄ արտաքին գործերի նախարարին[546]:

1971 թ. ռազմական հեղաշրջումից հետո կրկին թարմացվում են իսլամացված հայերի ցուցակները, նրանցից շատերը, որպես անվստահելի տարր, կրկին սկսում են հետապնդվել; Տեղեկություններ կան այն մասին, որ ոստիկանները խմբերով հավաքել են իսլամացված հայերին, տարել անհայտ ուղղությամբ ու նրանցից այլևս լուր չի ստացվել: Անհետացող իսլամացված հայերի ճակատագրով այլևս

---

[546] Տե՛ս Մելքոնյան Ռ., Աբրահամյան Մ., Օսմանյան կայսրության և Թուրքիայի Հանրապետության բռնի իսլամացման քաղաքականությունը հայերի նկատմամբ որպես ցեղասպանական արարք, էջ 192-194:

չէին համարձակվում հետաքրքրվել, քանզի հասկանում էին, որ դա հատուկ ծառայությունների գործն է[547]: Թուրքիայում հակահայկական նոր ալիք բարձրացնելու համար առիթ դարձավ նաև 1970-1980-ական թթ. ԱՍԱԼԱ-ի գործունեությունը:

Գավառահայության բեկորները Ստամբուլ տեղափոխելով՝ ձուլումից փրկելու ուղղությամբ որոշ քայլեր ձեռնարկեցին Պոլսի Հայոց պատրիարքներ Գարեգին Խաչատուրյանը և Շնորհք Գալուստյանը, որոնք արդեն քրդախոս և թրքախոս դարձած գավառահայ երեխաներին հայեցի կրթություն տալու նպատակով նրանց տեղավորում էին Ստամբուլի հայկական դպրոցներում: Թուրքական իշխանություններին վրդովմունք է պատճառում անգամ այն, որ Արևմտյան Հայաստանում կամ հարևան գավառներում մնացած արևմտահայության բեկորները, թուրքերին ձուլվելու փոխարեն, վերջերս ավելի սերտ կապեր են հաստատել ստամբուլահայ համայնքի հետ և իրենց զավակներին ուղարկում են Ստամբուլ՝ հայկական դպրոցներում կրթություն ստանալու համար[548]:

Շնորհք պատրիարքի ջանքերով էր, որ 1978 թ. շուրջ 500 հոգանոց Էրմենի Վարթո հայտնի աշիրեթը տեղափոխվեց Ստամբուլ և սկսեց շփվել հայ համայնքի հետ: Հայկական համայնքն աջակցություն էր ցուցաբերում նրանց, Պատրիարքարանի և հայ գործարարների ջանքերով նրանք տեղավորվում էին աշխատանքի: Ուշագրավ է, որ անգամ Ստամբուլում Վարթո աշիրեթը չփոխեց ներցեղային սովորույթները, այդ թվում ներքին ամուսնությունները: Երբ երիտասարդ Հր. Դինքը ցանկություն հայտնեց ամուսնանալ այդ ցեղի ներկայացուցիչ Ռաքելի հետ, որին ճանաչել էր դեռ որբանոցից, Վարթո

---

[547] Տե՛ս Խառատյան Հ., Դարի միջնադար (իսլամացուած, իսլամացված, ալեհացած, ծպտյալ հայերը Թուրքիայում): «Հայկազյան հայագիտական հանդէս», Պէյրութ, 2014, հատոր ԼԴ, էջ 554-555:

[548] Տե՛ս «Մարմարա», Ստամբուլ, 24/11/ 1969:

ցեղի երիտասարդները սպառնացին Դինքին և պահանջեցին հրաժարվել այդ մտքից: Հարցը կարգավորվեց միայն Շնորհք պատրիարքի միջամտությամբ, որն անձամբ ցեղապետ Սիյամենթից Դինքի համար խնդրեց աղջկա ձեռքը, և կրոնասեր հայը չկարողացավ մերժել բարձրաստիճան հոգևորականին[549]:

Թուրքական իշխանությունները չէին հակադրվում այդ գործընթացին, քանզի գավառահայերի բեկորների՝ Ստամբուլ «կամավոր» արտագաղթի հետևանքով Արևմտյան Հայաստանում հայկական ներկայություն չէր վերականգնվի՝ թուրքական պետության համար դրանից բխող սպառնալիքներով: Այս նպատակի համար պետությունը գործադրում էր իր լծակները և ստեղծում համապատասխան պայմաններ, որպեսզի հայերը հեռանան արևելյան նահանգներից: 1947 թ. իշխող ԺՀԿ-ի՝ փոքրամասնությունների հարցերի համար պատասխանատու մարմնի պատրաստած զեկույցում նշվում էր, որ հայերին արևելյան նահանգներից պետք է տեղափոխել Ստամբուլ, ինչը հնարավորություն կստեղծի վերահսկողության տակ վերցնել այդ բնակչության աճը: Եթե 1920-40-ական թթ. Ստամբուլի համայնքի կորիզը և մեծամասնությունը դեռևս կազմում էին բնիկ պոլսեցի հայերը, ապա հետագա տարիներին վերջիններս, հիմնականում, գաղթեցին արտասահման, և նրանց փոխարինեցին գավառից եկած հայերը[550]:

Զգուշավորությունից, թուրքական պետության կողմից կիրառվող սահմանափակումներից, ինչպես նաև այլ շահախնդրություններից հնարավոր վտանգներից խուսափելու հանգամանքներից ելնելով՝ Պոլսի Հայոց պատրիարքության երբեմն ոչ բարեհաճ վերաբերմունքը քրիստոնեական կրոնին վերադառնալ ցանկացող ծպտյալ

---

[549] Տե՛ս Մելքոնյան Ռ., Հայերի բռնի իսլամացումը ցեղասպանության տարիներին. Ընթացքը և հետևանքները, էջ 80-81:
[550] Տե՛ս Մելքոնյան Ռ., Ակնարկ Ստամբուլի հայ համայնքի պատմության…, էջ 22-23:

հայերի նկատմամբ, վերջիններիս մոտ հոգեբանական որոշակի խնդիրներ է առաջացնում[551]: Գավառներից համեմատաբար ավելի ուշ Ստամբուլ տեղափոխվածների՝ ավելի հին ստամբուլաբնակ հայերի կողմից չընդունվելու համար, բացի դասակարգայինից, նաև այլ կենցաղային հանգամանքներ կան: Այս ամենը հայության մի շերտի համար շատ կարևոր է, քանի որ, ըստ տարածված տեսակետի, հայերը միայն քաղաքակիրթ, բարձրաշխարհիկ պետք է լինեն, և գավառահայերը լուրջ վնաս են հասցնում արդեն ձևավորված հայի կերպարին: Այստեղից է ծագում նաև, նրանց քուրդ անվանելով, «իսկական հայի» կերպարը մաքուր պահելու ձգտումը: Նման պայմաններում Ստամբուլում հաստատված և քրիստոնեությանը վերադարձած հայերը չինտեգրվեցին պոլսահայությանը. ստիպված կամ ենթագիտակցորեն նրանք ձևավորել են հայության մի առանձին խումբ, որն իրեն տարբեր է համարում թե՛ հայերից և թե՛ թուրքերից[552]: Ի դեպ, պոլսահայերի կողմից նույն վերաբերմունքին են արժանանում նաև Ստամբուլում հաստատված հայաստանցիները, որոնք իրենց վարքուբարքով չեն համապատասխանում պոլսահայերի չափանիշներին և ընկալվում են որպես «ուրիշ», «օտար»[553]:

Հայերի կրոնադարձություն արձանագրվել է հանրապետական Թուրքիայում տարբեր տարիներին: Այսպես, 1950-ական թթ. թուրքական մամուլում կարելի է հանդիպել բազմաթիվ հայտարարությունների դատարանների որոշումներով հայերի իսլամից քրիստոնեությանն անցնելու և անձնանունների փոփոխության մասին: Հայերի կրոնադարձության խնդիրը գտնվում է նաև թուրքական տարբեր կառույցների ուշադրության կենտրոնում և այդ ուղղությամբ

---

[551] Տե՛ս Մելքոնյան Ռ., Հայերի բռնի իսլամացումը ցեղասպանության տարիներին. ընթացքը և հետևանքները, էջ 153:
[552] Տե՛ս Մելքոնյան Ռ., Ակնարկ Ստամբուլի հայ համայնքի պատմության…, էջ 74:
[553] Տե՛ս Մելքոնյան Ռ., Իսլամացված հայերի խնդիրների շուրջ, էջ 102:

աշխատանքներ են կատարվում: Միսիոներական շարժման ակտիվացման համատեքստում իշխանությունների նախաձեռնությամբ վերջին տարիներին հետազոտություն է կատարվել Թուրքիայի՝ իսլամից հրաժարված և այլ կրոն, հիմնականում, քրիստոնեություն ընդունած քաղաքացիների մասին և եկել են այն եզրակացության, որ կրոնափոխվածների գերակշիռ մասը ոչ թե թուրքեր են, այլ Թուրքիայում ապրող այլ էթնիկ խմբերի ներկայացուցիչներ՝ հայեր, հույներ և ասորիներ: 1916-2004 թթ. Թուրքիայում իսլամից պաշտոնապես հրաժարվել են մոտ 3000 թուրքահպատակներ, որոնցից 1340-ը ծագումով հայեր են: Նրանք ոչ թե կրոնափոխվել, այլ կրոնադարձվել են: Այդ հանգամանքը պարզվել է բնակչության գրանցամատյաններից՝ կրոնադարձների մինչև 3-րդ, 4-րդ սերնդի նախնիների էթնիկ և կրոնական պատկանելությունը պարզելու միջոցով: Փաստերը վկայում են, որ կրոնադարձությունն ավելի շատ կատարվել է Ստամբուլում, ինչպես նաև Դիարբեքիրում, Ադըյամանում, Բաթմանում, Սեբաստիայում, Դերսիմում և Մալաթիայում[554]:

Պետք է նշել, որ ծպտյալ հայերի համար կրոնադարձությունը դյուրին գործընթաց չէ: Դրա համար նախ հարկավոր է դիմել պետական համապատասխան մարմնին, արխիվային փաստաթղթերով ապացուցել հայկական ծագումը, դատարանի միջոցով այն վավերացնել, որը տևում է մինչև 6 ամիս, այնուհետև մասնակցել Պատրիարքարանի կազմակերպած դասընթացներին, որից հետո մկրտության համար մուծել զգալի գումար, դրանից հետո դիմել անձնագրային վարչություն և փոխել անձնագիրը, որիպեսզի նրա մեջ նշում կատարվի տվյալ անձի քրիստոնյա լինելու մասին[555]: Եթե

---

[554] Տե՛ս Մելքոնյան Ռ., Հայերի բռնի իսլամացումը ցեղասպանության տարիներին. Ընթացքը և հետևանքները, էջ 56-57:

[555] Տե՛ս Մելքոնյան Ռ., Պոլսո Հայոց Պատրիարքարանի վերաբերմունքը բռնի իսլամացված հայերի խնդրին, http://www.noravank.am/am/?page=analitics&nid=2370

հաշվի առնենք, որ այս մարդիկ բնակվում են գավառներում, ներկայացնում են ժողովրդի առավել համեստ խավերը, հիմնականում ունեն ցածր իրավագիտակցություն և ի վիճակի չեն մեկ տարի բյուրոկրատական քաշքշուկներով զբաղվելու կամ Պոլսում դասընթացների մասնակցելու, պատկերը կամբողջանա[556]: Բացի դրանից, իսլամից հրաժարվածները թիրախավորվում են կրոնական ծայրահեղականների կողմից և ենթարկվում նրանց հարձակումներին: 2000-ական թթ. սկզբից Թուրքիայում սկսվել են ճնշումներ քրիստոնեություն ընդունողների կամ վերընդունողների դեմ, որոնցից մի քանիսը սպանվել են, իսկ մի քանիսի դեմ էլ քրեական գործեր են հարուցվել[557]: Չնայած կրոնադարձության գործընթացում առկա դժվարություններին, պատրիարքական ընդհանուր փոխանորդ Ա. Աթեշյանի խոսքերով Թուրքիայում տարեկան մոտ 60-70 հոգի այդ կերպ վերականանգնում են իրենց հայ քրիստոնյայի ինքնությունը[558]:

Իր ազգային ակունքներին վերադառնալու ձգտումներ ունեցող Թուրքիայում բնակվող իսլամացված գավառահայությունը ներկայումս փորձում է ինքնակազմակերպվել: 1990-ական թթ. Ուրֆայում ապրում էին ծպտյալ հայերի առնվազն 200 ընտանիքներ, որոնք Ուրֆայում հայկական եկեղեցին մզկիթի վերածելու որոշման դեմ Ուրֆայի նահանգապետին շուրջ 200 բողոքագրեր հասցեագրեցին, որոնց ընթացք չտրվեց անստորագիր լինելու պատճառաբանությամբ [559]:

---

[556] Տե՛ս Ալվրցյան Հ., Կրոնափոխ հայերի խնդիրները Թուրքիայի Հանրապետությունում, էջ 62:

[557] Տե՛ս Մելքոնյան Ռ., Հայերի բռնի իսլամացումը ցեղասպանության տարիներին. ընթացքը և հետևանքները, էջ 64:

[558] Տե՛ս Թուրքիայում տարեկան 60-70 իսլամացված հայ վերականգնում է իր քրիստոնյական ինքնությունը, http://www.ermenihaber.am/?lang_id=2&menyu_id=9&news_=4&cur_news=116

[559] Տե՛ս Oktem K., Creating Turk's Homeland: Modernization, Nationalism and Geography in Southeast Turkey in the late 19th and 20th Centuries, University of Oxford, 2003, p.12.

Ծպտյալ հայերի ինքնակազմակերպման գործընթացը տեղի է ունենում հայրենակցական միություններ ստեղծելու և դրանցում ընդգրկվելու միջոցով: Սկզբում ստեղծվեց «Մուսա լեռ» հայրենակցական միությունը, այնուհետև՝ «Մալաթիայի հայերի միությունը», որոնք քրիստոնյա հայության կամ, այսպես կոչված, պաշտոնական համայնքի անդամներից բաղկացած կազմակերպություններ են: Հայրենակցական միությունների կազմավորման խնդրի համատեքստում բավական նշանակալի զարգացում կարելի է համարել «Սասունցիների միության» ստեղծումը, քանի որ դրա կազմի մեջ կան ինչպես քրիստոնյա, այնպես էլ մեծ թվով կրոնափոխ և կրոնադարձ հայեր: Սա Թուրքիայի կրոնափոխ հայերի խմբեր ընդգրկող, թերևս, առաջին հասարակական կազմակերպությունն է: «Սասունցիների միությանը» հաջորդեց «Դերսիմի հայերի միությունը», որը ներառում է Դերսիմի տարածքում բնակվող բոնի կրոնափոխված, հաճախ ալևիականություն ընդունած հայությանը: Այս շարքը համալրեց համշենցիների «Հատիկ» հայրենակցական միությունը, որում ընդգրկված են ինչպես իրենց հայկական էթնիկ պատկանելությունն ընդունողներ, այնպես էլ դա արտաքուստ մերժողներ: Համշենահայերի հայրենակցական միության նախաձեռնող խմբի մեջ հատկապես ակտիվ են համշենական «Վովա» երաժշտական խմբի հիմնադիրները: Միության մեջ ընդգրկված են համշենցիներ Ստամբուլից, Համշենից, Արդվինից, Անկարայից: Միության ստեղծման նպատակը համշենական մշակույթի և լեզվի պահպանումն է, որպեսզի թույլ չտան, որ համշենական լեզուն ու մշակույթը կամաց-կամաց անհետանան ուրբանիզացիային զուգահեռ: Համշենահայերը ուշացած են համարում իրենց միության ստեղծումը, քանի որ Սև ծովի տարածաշրջանի այլ ժողովուրդներ, օրինակ՝ մահմեդական վրացիները, լազերն արդեն վաղուց ունեն նմանատիպ կառույցներ: Ինչպես մնացած հայրենակցական միությունները, համշենցիները

ևս շեշտն առավելապես դնում են մշակույթի, լեզվի պահպանման վրա, սակայն, այնուամենայնիվ, ինքնության հարցերից չեն կարող խուսափել[560]:

Ստամբուլից բացի, հայաբնակ է նաև Իսկենդերունի մոտ Մուսա լեռան փեշերին գտնվող Վաքըֆլը գյուղը[561]: Հաթայի նահանգում գտնվող 135 բնակիչ ունեցող հայկական այս գյուղը նոր ընդունված օրենքով կարող է զրկվել գյուղի կարգավիճակից և վերածվել Հաթայ քաղաքի թաղամասի, ինչն առաջացնում է գյուղի բնակիչների դժգոհությունը: Նոր օրենքով 500-ից պակաս բնակչություն ունեցող գյուղերը պետք է կորցնեն առանձին վարչական միավորի կարգավիճակը՝ կցվելով մոտակա մեծ բնակավայրին, զրկվելով գյուղապետ ունենալու իրավունքից[562]: Գյուղի եկամտի միջոցներից մեկն էլ այնտեղ եկող զբոսաշրջիկներն են: Համայնքի ղեկավար Պերճ Քարթունը նշեց, որ վաքըֆլըցիները ցանկանում են, որ Վաքըֆլըն պահպանի գյուղի իր կարգավիճակը, իսկ կառավարության որոշումը բացասաբար կազդի իրենց ռեստորանների, զվարճանքի վայրերի այցելուների վրա, և նրանց թիվը էապես կկրճատվի: Համայնքի ղեկավարներից Ջեմ Չափարը տեղեկացրել է, որ հարևան գյուղերում գտնվող իրենց պապերի գերեզմանները վերադարձնելու մասին դիմումները թեև մերժվել են, բայց իրենք չեն նահանջի և կհասնեն նրան, որ տեղի իշխանությունները քննեն իրենց դիմումները[563]:

1995 թ. հետո Մալաթիայում ծպտյալ հայերի գործունեությունը զգալիորեն աշխուժացավ, իսկ 2003 թ. մահմեդական անուններով

---

560 Տե՛ս Մելքոնյան Ռ., Թուրքիայի հայության ինքնակազմակերպման դրսևորումների շուրջ, http://noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=6520&sphrase_id=17241

561 Տե՛ս Բաում Վ., նշվ. աշխ., 166:

562 Տե՛ս Թուրքիոյ հայկական Վազըֆ գյուղը պիտի պահպանէ իր կարգավիճակը, http://www.horizonweekly.ca/news/details/20007

563 Տե՛ս Թուրքիայի միակ հայկական գյուղը շուտով պատմություն կդառնա. այն զրկվում է գյուղի կարգավիճակից, http://tert.am/am/news/2013/01/06/vakifli/

շուրջ 120 ծագումով հայեր, Չավուշօղլու թաղամասի եկեղեցին վերաբացելու խնդրանքով դիմեցին պետական մարմիններին[564]:

Ստամբուլում ապրող Մալաթիայի հայերը նույնպես ստեղծեցին իրենց միությունը: Միության նախագահ Խոսրով Քյոլեթավիթօղլուն պատմեց, որ որոշվեց միությունը կոչել «HAYDER», այսինքն՝ հայերին միավորող, իսկ, որպես տարբերանշան, ընտրվեց Մալաթիայի «Սուրբ Երրորդություն» դռան վրայի խաչը: Մալաթիայի հայկական գերեզմանատունը նախկինում ունեցել է 27000 մ^2 տարածք, սակայն այժմ մնացել է միայն 10000-ը: Մալաթիայի հայերը չեն կարողացել գտնել համապատասխան փաստաթղթերը՝ նոր օրենքի շրջանակներում կորցրած հողերը հետ ստանալու համար:

2012-ի փետրվարի 2-ին Մալաթիայի քաղաքապետարանի հանձնարարությամբ քանդվեցին Մալաթիայի հայերի գերեզմանոցում կառուցվող պահակատունն ու մատուռը: Այս դեպքը բողոքի ալիք բարձրացրեց ինչպես Թուրքիայում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: Հարցի լուծմանը միջամտեց անգամ վարչապետ Ռ. Էրդողանը, ինչից հետո Մալաթիայի քաղաքապետը պնդել էր, թե շինությունները սխալմամբ են քանդել և խոստացել էր պետության հաշվին վերականգնել վնասը: Հունիսի 29-ին տեղի ունեցավ Մալաթիայի հայկական գերեզմանատան հրաժեշտի համար նախատեսված մատուռի բացման արարողությունը, որին մասնակցեցին պատգամավորներ և մի շարք պաշտոնյաներ[565]:

Թեև Սասունի բոլոր գյուղերի անունները, աշխարհագրական տեղանունները պետությունը փոխել է, սակայն ժողովրդի մեջ մինչ

---

[564] Տե՛ս Խանլարեան Կ., Հայ բնակչութեան էթնոկրօնական վերակերպումները Թուրքիայի Հանրապետութիւնում (1923-2005 թթ.), էջ 225:

[565] Տե՛ս Էրդողանն իմ համակուրսեցին է և նա խոստացավ օգնել. Մալաթիայի հայերի միության նախագահ http://news.am/arm/news/160617.html

օրս էլ օգտագործվում են հին անունները: Մարութա սարը շարունակում է մինչև օրս էլ յուրահատուկ հոգևոր խորհրդանիշի դեր կրել[566]:

Եկեղեցիների ավերման և հոգևորականներ չլինելու պատճառով Սասունի՝ Մեծ եղեռնը վերապրած, քրիստոնեությունը պահպանող հայերը կրոնական ծեսերի կատարման հարցում բախվել են լուրջ խոչընդոտների: Պետական լուրջ հսկողությունը թույլ չի տվել հայ հոգևորականներին գալ պատմական Հայաստանի տարածքներ, իսկ հազվադեպ գաղտնի այցերին միշտ հետևել են ճնշումները: Նման պայմաններում գոյատևած քրիստոնյա սասունցիների կղզյակների հանդեպ արդեն 1950-ականներին սկսվում է իսլամացման ալիքը: 1950-ականների վերջին պետական տարբեր գերատեսչությունների կողմից հայերին իսլամ ընդունելու կոչ-պահանջ է ներկայացվել, որը, սակայն, հակազդեցություն է առաջացրել սասունցիների մի մասի շրջանում. նրանք մերժել են պարտադրված կրոնափոխությունը: Սակայն ճնշումները շարունակվել են նաև ուժային կառույցների կողմից: Առանց հոգևորականի մնացած հայկական գյուղեր սկսել են այցելել մահմեդականական իմամներ, որոնք փորձել են համոզել տեղի բնակչությանը կամովին ընդունել իսլամ, որպեսզի հնարավոր լինի կատարել իրենց արարողությունները՝ հարսանիք, կնունք, թաղում և այլն: Շարունակվող հալածանքները ստիպել են Սասունի վերապրած հայերի մի մասին տեղափոխվել Ստամբուլ, մի մասն ընդունել է թուրքական պետության և ստեղծված վիճակի պարտադրած կրոնը, մի մասն էլ վերածվել է ծպտյալ քրիստոնյաների: Հայերի կրոնափոխման քաղաքականությունը եղել է հետևողական և ավելի ուշ շրջանում՝ 1983 թ. ամբողջապես իսլամացվել է Սասունի Աջար գյուղը[567]:

---

566 Տե՛ս Մելքոնյան Ռ., Իսլամացված հայերի խնդիրների շուրջ, էջ 91:

567 Տե՛ս Մելքոնյան Ռ., Հայերի բռնի իսլամացումը ցեղասպանության տարիներին. ընթացքը և հետևանքները, էջ 20-22:

Սասունի վերապրած հայությանը և նրա հետնորդներին կարելի է բաժանել երկու պայմանական խմբերի՝ 1. արաբացած հայեր ու հայերի խառնածին հետնորդներ, 2. ծպտյալ հայեր: Սասունի արաբացած հայերն ունեն, առաջին հերթին, մահմեդականի ինքնագիտակցություն, սակայն չեն էլ ժխտում, որ ունեն հայկական արմատներ, բայց գերակա է կրոնական ինքնությունը: Այսինքն՝ կա էթնիկ և կրոնական պատկանելության միտումնավոր կամ ակամա շփոթում, աչքի է զարնում նաև նրանց կրոնամոլությունը: Սակայն արաբացած հայերն էլ են ընդունում, որ իրենց արմատները հայկական են:

Սասունի ծպտյալ հայերի մեծ մասն ամեն տարի հուլիսին ուխտի է գնում Մարութա սարի գագաթին գտնվող «Սուրբ Աստվածածին» եկեղեցի, մատաղ անում, մոմ է վառում Գոմքի եկեղեցում և այլն: Այսօր Սասունում բնակվող շատ հայեր ազգակցական կապեր ունեն Հայաստանի Հանրապետությունում, հատկապես՝ Թալինում բնակվող սասունցիների ժառանգների հետ: Վերջին տարիներին նկատելի է նաև արտագաղթ Սասունից դեպի Թուրքիայի մեծ քաղաքներ, հատկապես՝ Ստամբուլ: Վատ պայմանների պատճառով մարդիկ ստիպված են արտագաղթել, սակայն հետաքրքիր օրինաչափությամբ չեն կտրում կապն իրենց հայրենիքի հետ, և տարին մեկ անգամ, հատկապես ամռանը, այցի են գալիս այստեղ: Սակայն այդ գաղթի մեջ նույնպես կա դրական կողմ. գալով Ստամբուլ՝ նրանց մեծ մասը բացահայտ ընդունում է քրիստոնեություն, եթե դա հնարավոր է, եթե ոչ, ապա, միևնույն է, ձգտում է ինտեգրվել քրիստոնեական համայնքին. այցելում է պատարագների, կնունքների և այլն: Այսինքն՝ գաղթը թույլ է տալիս նրանց մեջ առկա քրիստոնեության տարրերն ավելի խորացնել և ամրապնդել[568]:

---

[568] Տե՛ս Մելքոնյան Ռ., Հայերի բռնի իսլամացումը ցեղասպանության տարիներին. ընթացքը և հետևանքները, էջ 143-144:

Թուրքիայում բնակվող մի խումբ սասունցի հայեր ստեղծել են հասարակական կազմակերպություն, որը սկսել է պայքար մղել Սասունի կիսավեր հայկական եկեղեցիների և գերեզմանատների համար: Ազիզ Դաղջընը 2006 թ. միայնակ էր փորձում պայքարել Սասունի հայերի իրավունքների համար, սակայն, պետական տարբեր մարմինների կողմից հանդիպելում էր զանազան դժվարությունների[569]: Կադաստրի կոմիտեում Սասունի հայկական եկեղեցիները գրանցված էին՝ որպես ավերակ տներ, հայկական գերեզմանները՝ որպես անտառ կամ հողատարածք[570]: Դաղջընը հասկացավ, որ ավելի արդյունավետ կլինի գործել հասարակական կազմակերպության միջոցով և ձևավորեց սասունցիների միությունը: Կազմակերպությունը դիմում է պատկան մարմիններին՝ Ներքին գործերի նախարարություն, նահանգապետարան, կադաստրի կոմիտե և հասնում է մինչև Թուրքիայի Ազգային ժողովի մարդու իրավունքների հանձնաժողով պահանջելով, որ գերեզմանատները գրանցվեն՝ որպես հայկական, եկեղեցիներին պատշաճ վերաբերմունք ցուցաբերվի, թույլ տրվի, որ ավերված և հաճախ ախոռի վերածված, թալանված եկեղեցիներում կատարվեն արարողություններ, քահանա այցելի և այլն[571]: Ի պատասխան Սասունի հայերի միության հարցումների, Բաթմանի նահանգապետարանը պնդել է, որ եկեղեցիները և գերեզմանատներն ավերվել և լքվել են, քանի որ հայերը հեռացել են այդ տարածքներից: Սասունցիների միության պայքարը տվեց առաջին արդյունքը. Թուրքիայի Հուշարձանների պահպանության հանձնաժողովը Մարութա սարի «Սուրբ Աստվածածին» եկեղեցին

---

569 Տե՛ս Հնարավո՞ր է արթնացնել Թուրքիայի մահմեդականացած հայերին, «Ազգ» օրաթերթ, 01.07.2011:

570 Տե՛ս Սասունի Հայերու Միությունը Իր Գործունէությունը Կ՚ընդարձակէ, http: // asbarez.com/arm/103331/

571 Տե՛ս Սասունցի հայերու պայքարը առաջին բարենպաստ արդյունքը կու տայ, «Ասպարէզ», 09.12.2011:

ընդգրկեց պետության պաշտպանության տակ գտնվող հուշարձանների շարքում[572]:

«Սասունի հայերի միությունը» դատական գործընթաց սկսեց նաև Բաթմանի Սասուն գավառի 4 գյուղերում՝ Աջար, Հեյբեթլի, Բալբաշի և Չաղիլ, հայերին պատկանող շուրջ 3000 ակր* տարածքի վերադարձման համար: Սասունի կադաստրային դատարանում, որտեղ այժմ քննվում է գործը, Աջարի գյուղապետը հայտարարեց, որ իրենք 1986 թ. 1300 ակր հողը գնել են հայ Իսա Դեմիրջիից, սակայն նախկին հողատիրոջ ժառանգներից Օսման (Հովսեփ) Դեմիրջին պնդեց, որ իրենց պապենական կալվածքը ոչ մեկի չի վաճառվել[573]: Հայկական կողմը պնդում է, որ հայկական 38 տնտեսություններ իրենց բնակավայրից հարկադրված Ստամբուլ են տեղափոխվել անվտանգության նկատամոռումներից ելնելով: Հարցն այն է, որ այդ տարածքներում թուրքական բանակի և ՔԱԿ-ի միջև զինված բախումներ էին տեղի ունենում, ինչից հետո շրջակա մահմեդական գյուղերի բնակիչների կողմից իրենց հողերը ապօրինաբար սեփականացվել են: Հայկական կողմի փաստաբանը նշել է, որ հայերի հողերը ուրիշներին են տրվել կեղծված փաստաթղթերով, որոնց բնօրինակները չկան, և թուրքական կողմը ներկայացնում է միայն դրանց պատճենները, իսկ հայկական կողմն ունի իր իրավունքները հաստատող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը[574]:

Դաղջընը և միության ղեկավարությունը փորձեցին անգամ Սասունի հայերի միությունը վակըֆի վերածել, ինչը թույլ կտար ավելի

---

572 Տե՛ս Մելքոնյան Ռ., Հայերի բռնի իսլամացումը ցեղասպանության տարիներին. ընթացքը և հետևանքները, էջ 146-148:

* Նշենք, որ 1 ակրը հավասար է 0,4 հա:

573 Տե՛ս Սասունի հայերը դատի են տվել թուրքերին՝ պահանջելով իրենց հողերը, http://tert.am/am/news/2012/04/27/sason/

574 Տե՛ս Թուրքիայում բնակվող հայերն իրավական պայքար են սկսել հայկական գյուղը վերադարձնելու համար, http://armenpress.am/arm/news/688874/.html

արդյունավետ պայքարել հայկական եկեղեցիների և գերեզմանների պաշտպանության համար, սակայն Ստամբուլի Գերագույն դատարանը, հասկանալով այդ մտադրությունը, մերժել է նրանց պահանջը[575]: Սակայն հայերը չեն վհատվել և հայցով դիմել են Եվրոդատարան՝ պահանջելով նաև 500 հզ. եվրո, որպեսզի հողերի վերադարձից հետո նորոգեն հին եկեղեցին կամ նոր եկեղեցի հիմնեն, բարեկարգեն տարածքը, պահակներ նշանակեն ու պաշտպանեն դրանք[576]:

Դերսիմի հայերի միության նախագահ Միհրան Փրկիչը նշում է, որ միության ստեղծման գլխավոր խթանը դարձավ իր ընկերոջ՝ Հր. Դինքի սպանությունը, ինչից հետո ինքը որոշեց դերսիմահայերի միություն ստեղծել: Դերսիմի հայերի միությունը ստեղծվեց 2010 թ.՝ պաշտոնական քրիստոնեական կնքման արարողությամբ: Եթե նախկինում կրոնափոխ հայեր քրիստոնեություն ընդունելուց հետո էին իրենց հայ հայտարարում, ապա ալևի կամ մահմեդական բազմաթիվ դերսիմցի հայեր քրիստոնեություն ընդունածների հետ համախմբվեցին այս միության մեջ և իրենց հայտարարեցին հայ: Միությունը պաշտոնապես գրանցվեց և իր հիմնական նպատակը հռչակեց նախնիների հավատքին վերադառնալը, հայոց լեզվի ուսուցումը և Դերսիմի հայկական եկեղեցիների վերականգնումը[577]: Միությանն արդեն անդամակցել են դերսիմահայ 34 ընտանիք, որոնք բացահայտ ընդունում են իրենց հայկական ինքնությունը: Միության նախագահի հավաստմամբ, Դերսիմի բնակչության 75 տոկոսը հայկական արմատներ ունեցող ընտանիքների սերունդներ են:

---

[575] Տե՛ս Սասունցի հայերը դատ կը բանան Թուրքիոյ իշխանութիւններուն դէմ, http://asbarez.com/arm/155757/

[576] Տե՛ս Հնարավո՞ր է արթնացնել Թուրքիայի մահմեդականացած հայերին, «Ազգ» օրաթերթ, 01.07.2011:

[577] Տե՛ս Ալվրցյան Հ., Կրոնափոխ հայերի խնդիրները Թուրքիայի Հանրապետությունում, էջ 128-129:

Ամեն տարվա օգոստոսին Դերսիմում եռօրյա փառատոն է կազմակերպվում, որին մասնակցում են տարբեր մշակութային, ազգագրական և ստեղծագործական խմբեր: Հատկանշական է, որ փառատոնի ընթացքում կիրառվում են հայերեն և քրդերեն լեզուները: Դերսիմի հայերի միությունն իր հատուկ տաղավարն ունի այս փառատոններին, որտեղ երիտասարդ հայորդիներ թերթեր և ազգային գործիչներին, օրինակ՝ զորավար Անդրանիկին նվիրված գրքեր են վաճառում: Դերսիմի ծպտյալ հայերի պայքարը հիմնականում ընթանում է ոչ թէ զինյալ, այլ լուռ և համեստ ձևով: Իրենց ազգային ակունքներին վերադառնալով և մերժելով թուրքական իշխանությունների ձուլման քաղաքականության դրսևորումները՝ ծպտյալ հայերը Դերսիմում, փաստորեն, իրականացնում են «լուռ հեղափոխություն»[578]:

2012 թ. սեպտեմբերի 29-ին դերսիմահայերը Ֆրանկֆուրտում կազմակերպեցին Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված միջոցառում, որին մասնակցած Միհրան Փրկիչը հայտարարեց, որ իրենք մտադիր են Դերսիմում եկեղեցիներին վերաբերող մի նախագիծ իրականացնել և դերսիմահայերին նվիրված վավերագրական ֆիլմ նկարահանել, խոսեց նաև Դերսիմի հայերի խնդիրների մասին: Այս միջոցառումը կարևոր էր նրանով, որ դերսիմահայերի խնդիրները բարձրաձայնվեցին Եվրոպայում[579]:

Ներկայումս, առավելապես քրդերով բնակեցված Դիարբեքիր քաղաքում բնակվում են բռնի իսլամացված հայության ուծացած սերունդներ: Վերջին ժամանակներս Թուրքիայում ընթացող էթնիկ ինքնության հետ կապված գործընթացները բավական ակտիվ

---

[578] Տե՛ս Գեթսեմանյան Վ., Տէրսիմ: Հիմնաքարը Թուրքիայում «Լուռ յեղափոխության», "Armenian Weekly", 23.09.2013:

[579] Տե՛ս Միհրան Փրկիչ Գյուլթեքին, Դերսիմի հայության խնդիրները բարձրաձայնվեցին Եվրոպայում, http://akunq.net/am/?p=25336

դրսևորվում են նաև Դիարբեքիրում: Աղթամարի «Սուրբ Խաչ» եկեղեցու վերաբացումից հետո դիարբեքիրցի մի քանի ընտանիք ինքնաբացահայտվեցին՝ հայտարարելով, որ հայ են և ցանկություն հայտնեցին վերամկրտվել՝ որպես հայ քրիստոնյաներ: Դիարբեքիրում բնակվող կրոնափոխ հայերի սերունդները, ճանաչում են իրար և համապատասխան շփումներ ունեն: Ավելի վաղ կրոնափոխված Դիարբեքիրի հայերը խնդիրներ են ունեցել արդեն 1950-ականներին իսլամ ընդունած հայերի հետ, և եղել է փոխադարձ անվստահության մթնոլորտ. նախկինում կրոնափոխվածներին կասկածել են իսկապես մահմեդական դառնալու մեջ: Տեղափոխվելով Ստամբուլ, դիարբեքիրցի կրոնափոխ հայերը պոլսահայերի կողմից ընկալվել են՝ որպես քուրդ, և անգամ չեն կարողացել իրենց երեխաներին կրթության տալ հայկական դպրոցներում[580]:

1980 թ. փակված Դիարբեքիրի Սուրբ Կիրակոս եկեղեցին, որը Մերձավոր Արևելքի ամենամեծ հայկական եկեղեցին է, վերականգնվեց շուրջ երկու տարի տևած աշխատանքների արդյունքում: Շուրջ երեք հազար մ^2 հսկայական տարածքում գտնվող այդ հայկական եկեղեցին ունի 1300 մ^2 մակերես: Ի տարբերություն Աղթամար կղզում գտնվող «Սուրբ Խաչ» եկեղեցու՝ Դիարբեքիրի «Սուրբ Սարգիս-Կիրակոս» փոքրիկ հայկական եկեղեցու սեփականատերը հենց նույնանուն վակըֆն է, որն էլ վերականգնել է տվել ավերակ վիճակում գտնվող եկեղեցին: Եկեղեցու վակըֆի նախագահ Վարդգես Էրգյուն Այըքին նշեց, որ եկեղեցու վերականգնման գումարը կազմել է մոտ 3 միլիոն 400 հազար լիրա, որի համար դիմել էին Մշակույթի նախարարություն ու Դիարբեքիրի նահանգապետարան, սակայն պատասխան են ստացել, որ եկեղեցին կարող են վերականգնել՝ որպես թանգարան, բացելու պայմանով: Այդ առաջարկը մերժվել է և

580 Տե՛ս Մելքոնյան Ռ., Զարգացումներ Թուրքիայի ուծացած հայության շրջանում. Դիարբեքիր,http://noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=5931&sphrase_id=8989

սկսվել է վերականգնման համար գումար հավաքելու գործընթացը: Դիարբեքիրի քաղաքապետարանը և Սուր շրջանի թաղապետարանը տրամադրել են անհրաժեշտ գումարի մեկ երրորդ մասը, իսկ մնացած գումարը հավաքվել է Թուրքիայի և արտերկրի հայկական համայնքներից: Եկեղեցու սեփականության վկայականը գտնվում է Դիարբեքիրի «Սուրբ Սարգիս-Կիրակոս» փոքր եկեղեցու վակըֆի ձեռքում, ինչը նշանակում է, որ հայկական համայնքը կարող է իր ուզած ժամանակ կրոնական արարողություն անել եկեղեցում՝ առանց որևէ հաստատությունից թույլտվություն ստանալու[581]:

Թուրքիայի տարբեր շրջաններից և տարբեր երկրներից եկած բազմաթիվ մասնակիցների ներկայությամբ 2011 թ. հոկտեմբերի 23-ին տեղի ունեցավ «Սուրբ Կիրակոս» եկեղեցու օծումն ու առաջին պատարագը, ինչին հետևեց 8 իսլամացված հայերի մկրտության խորհրդանշական արարողությունը[582]:

Դրանից հետո օրեցօր ավելանում է եկեղեցի մտնող հավատացյալների թիվը: Հայերենի ուսուցիչ Գևորգ Չալըշըն նշեց, որ եկեղեցուն կից բացվել է հայերենի դասավանդման խմբակ և ինքն ամեն շաբաթ Ստամբուլից գալիս է Դիարբեքիր՝ իսլամացված հայերի 20 երեխաների դասավանդելու համար, որոնց մի մասը գաղտնի է մասնակցում դասերին[583]:

2012 թ. սեպտեմբերին Դիարբեքիրի «Սուրբ Կիրակոս» եկեղեցու բակում համերգ կազմակերպվեց, որին մասնակցեցին ԱՄՆ-ից ժամանած մոտ 80 հայեր՝ Հայ Առաքելական եկեղեցու ԱՄՆ արևելյան թեմի առաջնորդ, արքեպիսկոպոս Խաժակ Պարսամյանի գլխավո-

---

581 Տե՛ս Էրթան Օ., Եթե պետությունը վերականգնի, թանգարան կդառնա, http:// akunq.net/am/?p=12982

582 Տե՛ս Մկրտչյան Հ., Իսլամացված հայերի վերադարձը, http:// noravank. Am / arm / articles/detail.php?ELEMENT_ID=6133

583 Տե՛ս Սիբել Ութքու Բիլա, Թուրքիայի իսլամացված հայերը պայքարում են ողբերգական արմատների դեմ, http://www.al-monitor.com/pulse/originals/2013/03/

ությամբ, ստամբուլահայեր՝ Պոլսո հայոց պատրիարքական ընդհանուր փոխանորդ, արք. Արամ Աթեշյանը, հայաստանցիների փոքր խումբ, Դիարբեքիրի քուրդ քաղաքապետը և Թուրքիայի խորհրդարանի քրդամետ կուսակցության պատգամավորները[584]:

Ստամբուլի հատուկ իրավասությամբ դատախազը Սվազի (Սեբաստիա) հայկական ծագում ունեցող քաղաքացիների հոգևոր առաջնորդ համարվող Մինաս Դուրմազգյուլերի դեմ մահափորձ ծրագրելու կասկածով դատական գործ է հարուցել Էմրահ Գյոնենջիի և Բեքիր Չելիքի դեմ: Մեղադրական եզրակացության մեջ նշված է, որ կասկածյալները հայկական ծագում ունեցող անձանց մասին տեղեկություններ են հավաքել, գրանցել են հայերի իրավունքների պաշտպանությամբ հանդես եկող անձանց անունները, կազմել են հայերից ներողություն խնդրելու արշավին միացողների անունների ցանկը, որոնց նկատմամբ պետք է նախապատրաստվեին մահափորձեր: Նշված գործողությունները կատարելու համար մեղադրյալները հրահանգներ են ստացել «Էրգենեքոն» ահաբեկչական կազմակերպություն համարվող կազմավորման Սվազի գործողությունների ղեկավար, Թուրքիայի զինված ուժերի հատուկ նշանակության գործողությունների վարչության պետի նախկին տեղակալ Իբրահիմ Շահինից, որը բանտից բերվել է դատարան և հարցաքննվել: Մեղադրական եզրակացության մեջ պահանջվում էր այս գործը միացնել «Էրգենեքոնի» դատական գործին, քանզի ամբաստանյալները մեղադրվում էին այդ ահաբեկչական կազմակերպության անդամ լինելու և կազմակերպությանը օգնություն ցուցաբերելու մեջ:

2009 թ. հունվարի 8-ին Մինաս Դուրմազ Գյուլերը ցուցմունք տվեց Սվազի Անվտանգության տնօրինությունում, հայտնելով որ երկար տարիներ զբաղվում է արծաթագործությամբ, ունի սեփական

584 Տե՛ս Դիարբեքիրի հայկական Սուրբ Կիրակոս եկեղեցում 97 տարի անց կրկին համերգ է տեղի ունեցել, http://news.am/arm/news/120560.html

խանութ և, որ պարբերաբար հանդիպում է Սվազում բնակվող հայկական ծագում ունեցող 20 քաղաքացիների[585]:

Ծագումով սեբաստացի 3 հայ եղբայրներ պայքարում են իրենց նախնիներին պատկանող տարածքին վերատիրանալու համար: Համուրքեսեն ազգանունը կրող եղբայրները պնդում են, որ Սվազի Ուլաշ գավառի «Համուրքեսեն» տարածքը, որը գնահատվում է քսան միլիոն թուրքական լիրա (մոտ 9 856 000 դոլար), իրենց է պատկանում, սակայն դրա սեփականության իրավունքն ապօրինաբար իրենցից խլվել է, ուստի դիմել են դատարան: Համուրքեսեն ընտանիքի փաստաբանը նշել է, որ, անվտանգության նկատառումներից ելնելով, ընտանիքը մինչև օրս չէր բացահայտել իր ինքնությունը: Փաստաբանը նաև նշել է, որ եղբայրներն իրեն դիմել էին դեռ 2000 թ., սակայն, կարծելով, որ 1870 թ. խլված հողերը տեսականորեն անհնարին է ետ վերադարձնել, որևէ իրավական քայլի չէին դիմել: Սակայն որոշ ժամանակ անց նրանք ներկայացան Սվազի քարտեզով, որի վրա նշված էր իրենց ազգանվամբ տարածքը: Պարզվում է, որ Սվազի նահանգային վարչության գրասենյակի փաստաթղթերում նույնպես այդ տարածքը Համուրքեսեն ընտանիքի անունով էր նշված: Ամենայն հավանականությամբ, այդ տարածքը պետության կողմից բռնագրավվել է սեփականատերերի անհայտ բացակայող լինելու հիմնավորմամբ[586]:

Արդվինի նահանգի Խոփայի և Բորչկայի գավառներում ապրող մահմեդականացված համշենահայերի թիվը մոտ 50-60 հազար է: Թուրքական իշխանությունների կողմից համշենցիների վրա, կարծես, էթնիկական ճնշում չի գործադրվում, քանի դեռ նրանք իրենց էթնիկ պատկանելությունը չեն արտահայտում, պաշտոնական գա-

---

585 Տե՛ս Էրգենեքոնի գործին կցված մի որոշում էլ՝ Սվասից (Սեբաստիա), http://www.stargazete.com, 08.10.2010

586 Տե՛ս Սեբաստացի երեք հայ եղբայրներ կը պայքարին իրենց նախնիներուն պատկանող 10 միլիոն տոլար արժողությամբ տարածքին վերատիրանալու համար, http://www.horizonweekly.ca/news/details/17988

ղափարախոսության, ազգային պետության հետ ոչ մի խնդիր չեն ունենում, սակայն երբ սկսեն այս մասին խոսել, անկասկած, նրանց հանդեպ մի շարք արգելքներ, խոչընդոտներ, ճնշումներ ի հայտ կգան[587]:

Թուրքիայում 2011 թ. հունիսի 12-ին կայանալիք խորհրդարանական ընտրությունների քարոզարշավի շրջանակներում Ռ. Էրդողանի ընտրարշավը մոտ 20 հազար համշենցիներով բնակեցված Խոփա քաղաքում անցավ բախումներով: Համշենցիների համայնքի հայտնի անդամ Իսմեթ Շահինը նշում է, որ վարչապետին նախապես զգուշացվել էր Խոփայում սպասվող ոչ հաճելի հյուրընկալության մասին: Սակայն Էրդողանը Խոփա եկավ իր մեծ թվով աջակիցների հետ, որոնք պետք է մասնակցեին հանրահավաքին: Այդ հանգամանքն ավելի զայրացրեց բնակիչներին, քանի որ նրանք դեմ էին Ռ. Էրդողանի կուսակցությանն ու փոքրամասնությունների նկատմամբ նրա վարած քաղաքականությանը: Մի խումբ ցուցարարներ հանրահավաքի անցկացման վայրում տեղադրեցին «Էրդողա՛ն, հեռացի՛ր Խոփայից» կարգախոսով պաստառ ու քարկոծեցին Էրդողանի մեքենաների շարասյունը: Բախումների ժամանակ Էրդողանին հաջողվեց անվնաս մնալ, սակայն նրա թիկնապահներից մեկը ծանր վիրավորվեց: Ոստիկանությունը ջրցան մեքենաներով ու արցունքաբեր գազով ցրեց ցուցարարներին, ինչի հետևանքով մեկ մարդ սպանվեց և 9-ը վիրավորվեցին: Համշենցիները պահանջում էին իրենց իրավունքների ներկայացուցիչ ունենալ խորհրդարանում, սակայն իշխանությունները դեռևս պատրաստ չեն ընդունել նրանց պահանջները[588]:

---

587 Տե՛ս Մելքոնյան Ռ., Հայերի բռնի իսլամացումը ցեղասպանության տարիներին. ընթացքը և հետևանքները, էջ 97:

588 Տե՛ս Ոչ բարյացակամ ընդունելություն. Թուրքիայի վարչապետի ընտրարշավը համշենցիներով բնակեցված քաղաքում անցել է բախումներով,

Չափազանց կարևոր պետք է համարել այն փաստը, որ Թուրքիայում գործող հայկական հայրենակցական միությունները չեն գործում մեկուսի, այլ համագործակցում են և կազմակերպում են համատեղ միջոցառումներ: Դերսիմահայերի միության նախագահ Միհրան Փրկիչ Գյուլթեքինը հայտնեց, որ իրենց միության կողմից 2012 թ. հունվարին Ստամբուլում կազմակերպված երեկույթին մասնակցել են Թուրքիայում գործող հայկական հայրենակցական միությունների մոտ 550 ներկայացուցիչներ: Դեսիմահայերից և 200 սասունահայերից բացի, միջոցառմանը եկել էին մասնակցելու նաև Համշենի, Վաքըֆլըի, Մալաթիայի հայերը[589]: 2012 թ. դեկտեմբերի 15-ին էլ Թուրքիայում գործող հայկական հայրենակցական միությունները Ստամբուլում նշեցին Սուրբ Հակոբի քրիստոնեական տոնը: Միջոցառմանը մասնակցեցին աղըյամանցի, ամասիացի, արաբկիրցի, դերսիմցի, տիգրանակերտցի (դիարբեքիրցի), խարբերդցի, համշենցի, պոլսեցի, քասթամոնուցի, կեսարացի, մալաթիացի, մուսալեռցի, սասունցի, սինոփցի, սեբաստացի, թոքաթցի և զարացի հայերը: Միջոցառման կազմակերպիչները Սուրբ Հակոբի տոնը նշելով, փորձել են հայրենակիցներին հիշեցնել արևմտահայերի կողմից ժամանակին նշվող ավանդական տոներից մեկը: Միջոցառման կազմակերպիչները նշել են, որ տոնի արարողությանը մասնակցելու համար հրավիրվել են այն շրջանների հայության ներկայացուցիչները, որոնք արդեն ինքնակազմակերպվել են, ստեղծել են իրենց միությունները կամ դրանց կազմակերպման գործն արդեն ընթացքի մեջ է[590]:

---

http://armenianow.com/hy/news/30121/

[589] Տե՛ս Հայերը վերադառնում են իրենց իրական ինքնությանը, http://akunq. net/am/?p=17272

[590] Տե՛ս Թուրքիայի հայկական հայրենակցական միություններն առաջին անգամ համատեղ տոնակատարություն կկազմակերպեն, http://akunq.net/am/?p=27403

Հայրենակցական միությունները փորձում են տարաբնույթ նախագծեր մշակել ոչ միայն իրենց տարածքների, ապրած վայրի հայկական ժառանգությունը վերակենդանացնելու ուղղությամբ, այլև՝ գրքեր, գրքույկներ հրատարակելու, համացանցային կայքեր ստեղծելու, երաժշտական ստեղծագործություններ տարածելու միջոցով ձգտում են Թուրքիայի ծպտյալ հայության խնդիրները հասցնել հնարավորինս մեծ թվով մարդկանց: Չափազանց կարևոր է համարվում հայերենով գրված գրքերը թուրքերեն թարգմանելը կամ թուրքերենով նոր գրքեր գրելը, ինչը կծառայի առկա մշակութային հարստությունը մնայուն դարձնելու գործին: Հիմնականում Ստամբուլում հիմնադրված և գործունեություն ծավալող միությունները փորձում են կապեր հաստատել Արևմտյան Հայաստանի նահանգներում մնացած հայության բեկորների հետ և իրենց խնդիրների լուծման շուրջ համագործակցել առաջադեմ քաղաքացիական կառույցների հետ: Հայրենակցական միությունները միևնույն ժամանակ փորձում են կամրջի դեր ստանձնել Հայաստանում և սփյուռքում ապրող հայրենակիցների միջև՝ սեփական երկրի հետ կապեր հաստատելու և եղածներն ամրապնդելու նպատակով[591]:

Երբ կրոնափոխ հայերի հասցեին մեղադրանք է հնչեցվում, թե հավատարիմ չեն մնացել կրոնին, նրանք հպարտորեն պատասխանում են, որ մնացել են ամուր կառչած իրենց հողին: Այսինքն՝ մենք կարիք ունենք միմյանց հետ շփվելու, քանի որ մեր բոլորիս էությունն ինչ-որ տեղ աղճատվել է մի դեպքում՝ հայրենիքի կորստի, մյուս դեպքում՝ կրոնի պատճառով: Ուսումնասիրելով կրոնափոխ հայերին՝ մենք նաև խնդիր ենք դնում վերականգնելու մեր աղճատված ինքնությունը, չէ՞ որ նրանք մնացել են հայրենիքի այն հատվա-

[591] Տե՛ս Քոփթաշ Ռ., Հայերի կազմակերպական վիճակը. հայրենակցական միություններ, http://www.agos.com.

ծում, որը մեզ համար կորուսյալ է, նրանք են ծածուկ այցելել և այցելում մեր անարգված սրբավայրերը։

Բռնի իսլամացված հայերի խնդիրը թուրքական կառավարող շրջանների կողմից անընդհատ ենթարկվում է տարաբնույթ շահարկումների, փորձ է կատարվում այդ հարցի միջոցով կասկածի տակ դնել արևելյան նահանգների «միատարր քրդական» լինելը և այդ կերպ ծպտյալ հայերի խնդիրը հակադրել չլուծված Քրդական հարցին։ Թուրքական իշխանությունների լուռ համաձայնության պայմաններում տեղի են ունենում Արևմտյան Հայաստանի տարբեր վայրերում բնակվող բռնի իսլամացված հայության ինքնակազմակերպման և նրանց ակտիվացման փորձեր[592]: «Գորշ գայլերի» գլխավորությամբ Թուրքիայի ծայրահեղ ազգայնական ուժերը սկսեցին լուրեր տարածել, թե, իբր, հայերը կազմակերպվում են. նրանք բացելու են իրենց եկեղեցիները և հետ են պահանջելու իրենց պապերի ունեցվածքը[593]: Թուրքիայի հարավ-արևելյան շրջաններում ռազմական արտակարգ դրություն հայտարարելուց հետո նշանակված կառավարիչը հայտարարեց, որ իրենց տեղեկատվական բազայում հայկական ծագում ունեցող ՔԱԿ-ի 800 անդամների մասին տվյալներ կան[594]: Ավելին, թուրքական իշխանությունների հսկողության տակ գործող լրատվամիջոցները հետևողական լուրեր են տարածում այն մասին, որ ծպտյալ հայերն արևելյան նահանգներում լուրջ վտանգ են ներկայացնում, որ նրանք ոչ միայն անդամակցում են ՔԱԿ-ին, այլև՝ ղեկավարում են այն, որ քրդերի զինյալ ազատագրական պայքարի հետևում կանգնած են ծպտյալ հայերը և այլն: 2010 թ. օգոստոսին նույնիսկ Թուրքիայի փոխվարչապետ Ջ. Չիչեքի մակար-

---

592 Տե՛ս Մելքոնյան Ռ., Թուրքիայի իսլամացված հայերի թեմայի ուսումնասիրությունը. խնդիրներ և հեռանկարներ: «21-րդ ԴԱՐ» N 2, 2012:
593 Տե՛ս Եալչին Ք., Հոգիս քեզմով կը խայտայ, էջ 346:
594 Տե՛ս Hofmann T., նշվ. աշխ., 35.

դակով հայտարարվեց, թե հայկական ահաբեկչության ու ՔԱԿ-ի ահաբեկչության միջև գոյություն ունի համագործակցություն, որ հայկական ահաբեկչությունն իր գործը փոխանցեց քրդական կողմին և այլն: Պետական քարոզչամեքենան, այսպիսով, փորձում է լուծել երկու խնդիր, նախ՝ վարկաբեկում է քրդական ազատագրական պայքարը՝ այն ներկայացնելով՝ որպես հայկական դավադրություն, երկրորդ՝ հասարակության մեջ բորբոքում է հակահայկական տրամադրություններ և թշնամանք՝ փորձելով ահաբեկել ազգային ինքնության զարթոնք ապրող կրոնափոխ հայությանը[595]:

Այժմ էլ թուրքական մամուլը հեղեղված է ՔԱԿ-ի առաջնորդ Ա. Օջալանի հայկական ծագման վերաբերյալ հրապարակումներով: Ժամանակին այդ «փաստը» հատկապես շահարկում էր ԱՇԿ-ի առաջնորդ Ա. Թյուրքեշը, հայտարարելով, որ Ափոյի անունը, իրականում, Ակոփ Արթինյան է: Սակայն ինքը՝ Օջալանը, մեկ անգամ չէ, որ հերքել է այդ «մեղադրանքները»՝ անհրաժեշտության դեպքում հայտարարելով իր մոր թուրքական ծագման մասին[596]:

Այս քարոզչությունից ելնելով՝ սաստկացավ քաղաքականությունը արևելյան գավառներում մնացած հայության նկատմամբ: 1993թ. Մանազկերտի Գուլալի գյուղն անվտանգության ուժերի կողմից երեք անգամ հրդեհվեց, իսկ մուտքի մոտ փակցվեց «Սա հայկական գյուղ է, մուտքն արգելվում է» ցուցանակը[597]: Թուրքիայի Մարդու իրավունքների հաստատության կողմից հրապարակված մի

---

[595] Տե՛ս Ալվրցյան Հ., Կրոնափոխ հայերի խնդիրները Թուրքիայի Հանրապետությունում, էջ 66:

[596] Տե՛ս Խանլարեան Կ., Քրդական շարժումների դիրքորոշումը Հայաստանի հայութեան և Հայ Դատի նկատմամբ: «Հայ դատն այսօր», Թեհրան, 2005, էջ 76:

[597] Տե՛ս Asylum Seekers From Turkey: The Dangers They Flee, A Report To Asylum Aid (Report of a mission to Turkey),
4-17 October, 2000, p. 59.

փաստաթղթում ասվում է, որ անվտանգության ուժերի միջոցով տարհանվել են 729 քրդական և քրիստոնեական գյուղեր[598]:

Հայերին բռնությունների ենթարկելու և բռնի իսլամացման քաղաքականությունից հետո էլ թուրքական իշխանությունները շարունակեցին իրենց ուշադրության կենտրոնում պահել Հայոց ցեղասպանության տարիներին բռնի իսլամացված հայությանը, նրանց սերունդներին, ինչպես նաև նրանց շրջանում տեղի ունեցող ցանկացած զարգացում[599]:

Թուրքական մամուլում և թուրք պաշտոնական շրջանակների կողմից անընդհատ շրջանառվում է Թուրքիայի արևելյան շրջաններում բազմաթիվ կրոնափոխ հայերի գոյության միտքը: Թուրք ծայրահեղական մտավորականների կողմից շրջանառում է այն միտքը, թե շուրջ 1 միլիոնի հասնող ծպտյալ հայերը բաժանվում են երկու խմբի. առաջինը նրանք են, ովքեր ցանկանում են, ծպտյալ մնալով, շարունակել, իբր, թուրքական պետության ներսում ունեցած ազդեցությունը, երկրորդը՝ նրանք, ովքեր ցանկանում են բացահայտվել և, այդպիսով, ստեղծել ուժեղ հայկական ներկայություն: Եվ, իբր, ծպտյալ հայերի այս երկու խմբերի միջև լուրջ պայքար է ընթանում[600]: Տարածվում է այն տեսակետը, թե հայկական ինքնությունը բացահայտել ձգտող խումբն ավելի անվտանգ է Թուրքիայի համար, քան այն ծպտյալ հայերը, որոնք, ներթափանցելով կառավարման և դատական համակարգեր, զինված ուժեր, համալսարաններ և նույնիսկ ծայրահեղական խմբավորումների՝ ՔԱԿ-ի և «Գորշ գայլերի»

---

598 Տես The Wall of Denial: Internal displacement in Turkey, U.S.Committee for Refugee, November 1999, pp. 14-15.

599 Մելքոնյան Ռ., Աբրահամյան Մ., Օսմանյան կայսրության և Թուրքիայի Հանրապետության բռնի իսլամացման քաղաքականությունը հայերի նկատմամբ որպես ցեղասպանական արարք, էջ 170:

600 Տե՛ս Մելքոնյան Ռ., Հայերի բռնի իսլամացումը ցեղասպանության տարիներին. ընթացքը և հետևանքները, էջ 131:

մեջ, աստիճանաբար, բարձր դիրքի են հասել ու, ծպտյալ մնալով, ուզում են վրեժ լուծել թուրքերից ցեղասպանության համար՝ ներսից քայքայելով ու պառակտելով Թուրքիան[601]: Ծպտյալ հայերի այս խմբին վերագրվում է, այսպես կոչված, «3 T» ծրագրի իրականացման նպատակը, որն իր անվանումը ստացել է թուրքերեն tanıma (ճանաչում), tazminat (փոխհատուցում) և toprak (հող) բառերից, որոնք երեքն էլ սկսվում են t տառով[602]: Թուրքական մամուլում և ծայրահեղական մտավորականության կողմից տարածվող այս դատողություններն ամբողջովին տեղավորվում են թուրքական իշխող շրջանակներում և թուրքական հասարակության մեջ տարածված «Սևրի սինդրոմի» դեմ պայքարելու տրամաբանության մեջ: Ծպտյալ հայերից այդ վախը և դրա քարոզումը պետք է դիտարկել՝ որպես Թուրքիայի հնարավոր մասնատման վախի շարունակություն:

1980 թ. սեպտեմբերի 12-ին Թուրքիայում իրականացվեց ռազմական հեղաշրջում և իշխանությունն անցավ բարձրաստիճան զինվորականներից կազմված Ազգային անվտանգության խորհրդի ձեռքը, որը տեղերում նշանակեց Արտակարգ դրության հրամանատարներ՝ օժտված անսահմանափակ լիազորություններով: 1982 թ. սեպտեմբերի 8-ին Արտակարգ դրության հրամանատարությունը Անվտանգության ծառայությունից պահանջում է տարածքներում ստուգել, թե, արդյոք, հայեր կամ հայկական ծագմամբ մարդիկ կա՞ն, և, եթե կան, ապա գրանցել նրանց ու վերցնել հսկողության տակ[603]: 2004 թ. դեկտեմբերի 22-ին Թուրքիայի Ներքին գործերի նախարարությունը շրջաբերականով նահանգապետարաններից պահանջում է պատրաստել և Կենտրոն ուղարկել արևելյան ու հարավ-արևելյան նահանգների հայկական ծագում ունեցող քաղաքացիների իրական

---

601 Տե՛ս Ավագյան Ա., Պանթուրքական երազանք կամ «Գորշ գայլեր», էջ 125:
602 Տե՛ս Մելքոնյան Ռ., Իսլամացված հայերի խնդիրների շուրջ, էջ 53:
603 Տե՛ս նույն տեղում, էջ 86-89:

թվի մասին տվյալները[604]: Սենսացիոն հայտարարությամբ հանդես եկավ նաև Թուրքական պատմագիտական ընկերության նախկին նախագահ Յ. Հալաջօղլուն, ով խուսափելով կոնկրետ աղբյուրը նշելուց, հայտարարեց, որ իշխանություններն արևելյան նահանգներում տուն առ տուն շրջելով, արձանագրել են իսլամացված հայերին և իրենց տրամադրության տակ ունեն ամենայն բծախնդրությամբ պատրաստված հայ կրոնափոխների ցուցակները[605]:

Թուրքիայում շատ է խոսվում նաև 1972 թ. հիմնադրված և, հիմնականում, զազա-ալևիական բնակություն ունեցող Դերսիմի շրջանում թուրքական կառավարության դեմ ակտիվ, այդ թվում զինված պայքար մղած Թուրքիայի բանվորագյուղացիական ազատագրական բանակին՝ ՏԻԿԿՕ կազմակերպությանը, հայերի ակտիվ մասնակցության և նույնիսկ նրանց կողմից այդ կառույցի ղեկավարման մասին: Որպես ասվածի ապացույց՝ բերվում է այն փաստարկը, որ թուրքական իշխանությունների կողմից ահաբեկչական կազմակերպություն համարվող ՏԻԿԿՕ-ի կողմից ճանաչվել է հայերի ցեղասպանության փաստը[606]:

Եվրոպական երկրներում ապաստան գտած ծպտյալ հայերից ոմանք իրենց հարցազրույցներում խոստովանում են, որ մինչև Ա. Օջալանի ձերբակալությունը եղել են ՔԱԿ-ի շարքերում, այնուհետև, հիասթափվելով և հաշվի առնելով իրենց հայկական ծագումը, որոշել են մեկնել Գերմանիա: Օրինակ, Ռազմիկ Հակոբյանն ասում է, որ երկար տարիներ անդամակցել է ՔԱԿ-ին, ձերբակալվել

---

[604] Տե՛ս Խառատյան Հ., Դարի միջնադար (իսլամացուած, իսլամացված, ալեհացած, ծպտյալ հայերը Թուրքիայում), էջ 471:

[605] Տե՛ս Մելքոնյան Ռ., Աբրահամյան Մ., Օսմանյան կայսրության և Թուրքիայի Հանրապետության բռնի իսլամացման քաղաքականությունը հայերի նկատմամբ որպես ցեղասպանական արարք,էջ 197:

[606] Տե՛ս Հյուր Ա., ԱՍԱԼԱ-ն ու ՊԿԿ-ն մի ժամանակ, http://www. hyetert. com/ yazi3. asp?s=0&Id=742&DilId=1

ու պահվել է Անկարայի բանտերում, իսկ Սիմոն Կոստանյանի կամ Սարդետ Կոսդունի հայրն ու եղբայրները, որպես ՔԱԿ-ի մարտիկներ բազմիցս բանտարկվել ու հալածանքների են ենթարկվել: Որոշ տվյալների համաձայն, ՏԻԿԿՕ կազմակերպության շարքերում էլ են եղել հայկական ծագում ունեցող գործիչներ: Տեղեկություններ են տարածվում այն մասին, որ «Ակօս» շաբաթաթերթի լուսահոգի խմբագրապետ Հր. Դինքը երիտասարդ տարիներին նույնպես առնչություն է ունեցել տվյալ կազմակերպության հետ: ՏԻԿԿՕ կազմակերպության կայքում ներկայացված ցուցակի համաձայն, այդ կառույցին անդամակցել են 1946 թ. ամասիացի Կարպիս Ալթինօղլուն, տիգրանակերտցի Արմենակ Բաքիրչյանը (զոհված Խարբերդում՝ 1980 թ.), մարդինցի Նուբար Յալիմը (զոհված Ամստերդամում՝ 1982 թ.), կեսարացի Մանվել Դեմիրը (զոհված Ստամբուլում՝ 1988թ.) և այլն[607]:

Չբացառելով հանդերձ, որ ենթարկվելով անասելի հալածանքների, ծպտյալ հայերից ոմանք իրենց իրավունքների պաշտպանության հարցում հույս էին կապում ձախակողմյան այս կառույցների հետ, իսկ նրանցից ոմանք, գուցե, իսկապես անդամակցած լինեին դրանց, այդուհանդերձ, պետք է արձանագրենք, որ թուրքական իշխանությունների կողմից նման եզակի օրինակների շահարկումն իր մեջ չափազանց վտանգավոր միտումներ է պարունակում: Այս գործելաոճով թուրքական իշխանությունները, թերևս, հեռահար նպատակ են հետապնդում՝ լարում մտցնել քրդերի և իսլամացված հայերի հարաբերություններում, ինչը քրդերին կարող է մղել ծպտյալ հայերին ընկալելու որպես մրցակցի երկրի արևելյան նահանգներում: Հայկական ներկայության վերազարթոնքի փորձերը դեռևս դրական են գնահատվում և, երբեմն, նաև քաջալերվում են քրդական միջա-

[607] Տե՛ս Խանլարեան Կ., Քրդական շարժումների դիրքորոշումը Հայաստանի հայութեան և Հայ Դատի նկատմամբ, «Հայ դատն այսօր», Թեհրան, 2005, էջ 76-77:

վայրում, սակայն չի կարելի անտեսել նման զարգացումների հավանական վտանգավոր հետևանքները ևս[608]:

ՀՀ սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ սկսվել են այլախոս և այլադավան հայերի խնդիրների լուծման հայեցակարգի մշակման աշխատանքները, որոնք դեռ չեն հասցվել ավարտին[609]: Հարկավոր է արագացնել հայեցակարգի մշակման աշխատանքները, քանզի մտավախություն կա, որ, եթե ծպտյալ հայությունն իր գործունեությունը շարունակի հայությունից ու հայկական պետությունից կտրված, տարերային ձևով, ապա այն կարող է ծառայեցվել տարբեր համաշխարհային ու տարածաշրջանային քաղաքական ուժերի շահերի սպասարկմանը և, վերջո, մարել: Անշուշը, հայեցակարգում առաջնահերթ տեղ պետք է հատկացվի ծպտյալ հայերի անվտանգության հարցին և պետք է առաջարկվեն այնպիսի մեխանիզմներ, որոնք հնարավորություն կտան վերազարթոնքի փուլում գտնվող բռնի իսլամացված մեր հայրենակիցների ներուժը առանց նրանց վնասելու, վերածել գիտակցոված ազգային շարժման:

Հայերի բնաջնջման, բռնի մահմեդականացման ու էթնիկ զտումների քաղաքականությանը զուգահեռ թուրքական իշխանությունները Արևմտյան Հայաստանի նահանգներում և Թուրքիայի այլ տարածքներում հետողականորեն իրականացրել են հայերի պատմական ու մշակութային ժառանգության ոչնչացում: Թուրքական իշխանությունների մշակութային եղեռնի ու վանդալիզմի քաղաքականությունն իրագործվել է հայկական հուշարձաններն անուշադրության մատնելու, դրանք իբրև սեփականություն տեղի քրդերին կամ թուրքերին հանձնելու, քանդելու և մզկիթների վերածելու եղա-

---

608 Տե՛ս Մելքոնյան Ռ., Թուրքիայի իսլամացված հայերի թեմայի ուսումնասիրությունը. խնդիրներ և հեռանկարներ: «21-րդ ԴԱՐ», N 2, 2012:

609Տե՛ս Աբրահամյան Գ., Բացահայտված ինքնություն. ավելի շատ հայեր են հայտարարում իրենց ազգային պատկանելության մասին, http://www. armenianow. com/hy/features/26111/islamized_hidden_armenians_turkey

նակներով: Հատկանշական է, որ թուրքական իշխանությունների այդ քաղաքականությունն իրականացվել է ոչ միայն միջազգային իրավական նորմերի ու սկզբունքների, այլև՝ երկրի Սահմանադրության 63-րդ հոդվածի պահանջի խախտումով, որով սահմանվում էր պետության պատասխանատվությունը պատմական, մշակութային և բնական ժառանգության պաշտպանության ու այդ ուղղությամբ ձեռնարկվելիք միջոցների ապահովման հարցում: Պոլսո Հայոց պատրիարքարանի՝ հայկական հուշարձանների պահպանության ջանքերը շոշափելի արդյունքներ չեն տվել:

Վերջին տարիներին թուրքական իշխանությունները միջազգային հանրության առջև փորձում են պատրանք ստեղծել, թե, իբր, վերականգնում են այլ ժողովուրդների, մասնավորապես՝ հայերի պատմաճարտարապետական և կրոնական հուշարձանները: Խոսքը, մասնավորապես՝ Աղթամարի «Սուրբ Խաչ» եկեղեցու, այսպես կոչված, վերաբացման չարչրկված հարցի մասին է: Ինչպես հայտնի է, եկեղեցին վերաբացելուց հետո կայանալիք պատարագի ժամանակ Աղթամարի «Սուրբ Խաչ» եկեղեցու գմբեթին խաչը չէր տեղադրվել, ինչը պայմանավորված էր նրանով, որ թուրքական իշխանությունները մտավախություն ունեին, որ խաչը տեղադրելու դեպքում հանրաքվեի ժամանակ կկորցնեն ազգայնականների քվեները: Եկեղեցու վերաբացվելուց հետո, տեղի տալով հայկական կողմի և միջազգային հանրության բողոքներին, Թուրքիայի Մշակույթի նախարարությունը գնաց չնչին զիջման և թույլ տվեց, որ տարին մեկ անգամ ոչ թե ամբողջ եկեղեցում, այլ նրա մի մասում, պատարագ մատուցվի՝ նահանգապետարանի կողմից որոշված սահմանափակ թվով հավատացյալների մասնակցությամբ: Գործնականում, այս որոշումը չեզոքացնում է Աղթամարի «Սուրբ խաչ» եկեղեցու՝ եկեղեցի լինելը և այն, փաստորեն, վերածում է հուշարձան-թանգարանի: Թեև պետությունը վերանորոգելուց հետո հայկական եկեղեցի-

ները փորձում է վերածել թանգարանի կամ մշակույթի տան, այդուհանդերձ, Պատրիարքարանում համարում են, որ եկեղեցին այդ կերպ, գոնե, փրկվեց ավերակ մնալուց և վերջնական կործանվելուց[610]: Ուշագրավ է, սակայն, որ վերջին շրջանում հայկական հուշարձանների ու գերեզմանատների պահպանության խնդիրներով սկսել են ակտիվորեն զբաղվել նաև Թուրքիայի ծպտյալ հայերը[611]:

Թուրքիայի կողմից իրականացվող մշակութային ցեղասպանության այս քաղաքականությունը հակասում է միջազգային իրավական փաստաթղթերով այդ երկրի ստանձնած պարտավորություններին: Մշակութային արժեքների պաշտպանության հետ կապված՝ Թուրքիան 1957 թ. հոկտեմբերի 10-ին վավերացրել է 1955թ. մայիսի 5-ի «Եվրոպական մշակութային կոնվենցիան», 1983 թ. մարտի 16-ին՝ «Աշխարհի մշակութային և բնական ժառանգության պաշտպանության մասին» ՅՈՒՆԵՍԿՕ-ի 1972 թ. նոյեմբերի 16-ի կոնվենցիան, 1989 թ. հոկտեմբերի 11-ին՝ «Եվրոպայի ճարտարապետական ժառանգության պաշտպանության մասին» 1985 թ. հոկտեմբեր 3-ի կոնվենցիան, վերջապես՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Կանոնադրությունը», որով ՄԱԿ-ի այդ կառույցը ստանձնել է արվեստի գործերի և պատմական ու գիտական հուշարձանների պաշտպանությունը:

---

[610] Տե՛ս Թուրքիայում տարեկան 60-70 իսլամացված հայ վերականգնում է իր քրիստոնյական ինքնությունը, http://www.ermenihaber.am/? lang_ id= 2&menyu _i d = 9&news_=4&cur_news=116

[611] Տե՛ս «Ակօս», Ստամբուլ, 09.05.2008 թ.:

2.2.2. Խտրական քաղաքականության դրսևորումները հույների նկատմամբ

Հայերի ցեղասպանությանը զուգահեռ թուրքական իշխանությունների ցեղասպան քաղաքականության հետևանքով բնաջնջվեց նաև արևելյան նահանգների ու Պոնտոսի հույն բնակչության կեսը, ոչնչացվեցին հունական 1134 եկեղեցիներ և 960 դպրոցներ[612]: Հույների ցեղասպանության զոհերի թիվը, տարբեր գնահատականներով, հաշվվում է 600.000-ից մինչև 1 միլիոն մարդ, որից 350 հազարը՝ Պոնտոսում[613]:

Լոզանի պայմանագրի համաձայն, 1923 թ. Հունաստանը և Թուրքիան ոչ թե էթնիկ, այլ կրոնական պատկանելության սկզբունքով սկսեցին իրականացնել բնակչության փոխանակում, ինչի հետևանքով մահմեդական հույները, որոնց մեջ կային նաև վերջին շրջանում բռնի կրոնափոխված քրիստոնյաներ, ստիպված էին լքել Հունաստանի տարածքը, իսկ ամբողջ ուղղափառ բնակչությունն էլ արտաքսվեց Թուրքիայից[8]: Հիմնականում Մակեդոնիայում բնակվող 375.000 թուրքեր փոխանակվեցին 1 400.000 հույների հետ, որոնք, խուսափելով կոտորածից, կենդանի էին մնացել և, անկախ իրենց կամքից, ստիպված էին թողնել հարազատ հողը, որի վրա իրենց պապերը ապրել էին 4000 տարվա ընթացքում, և տեղափոխվել անկախ Հունաստան: Փոխանակված անձինք առանց այդ երկրների կառավարությունների թույլտվության իրավունք չունեին վերադառնալ իրենց բնակավայրերը և բնակություն հաստատել Թուրքիայում

---

[612] Տե՛ս Չոբանյան Գ., Հունական համայնքի նկատմամբ Օսմանյան կայսրության վարած քաղաքականության շարունակությունը հանրապետական Թուրքիայում, http://akunq.net/am/?p=19800

[613] Տե՛ս Վարդանյան Գ., Պոնտոսի հույները և Հանրապետական Թուրքիան. Հիշողություն և նոր մարտահրավերներ: «Ժամանակակից Եվրասիա, Թուրքիա. Գաղափարախոսություն և քաղաքականության հարցեր», Ռ. Սաֆրաստյանի խմբ., հատոր III (2), Եր., 2014, էջ 86-105:

կամ Հունաստանում: Ստամբուլի մոտ 280 հազար կազմող հունական համայնքից և Իմրոս ու Թենեդոս կղզիների հույներից 111.200-ը և Հունաստանի Արևելյան Թրակիայի տարածքում բնակվող շուրջ 86 հազար մահմեդականներ, բացառության կարգով, ազատվեցին վերաբնակեցումից[614]:

Հատկանշական է, որ հունական համայնքի պատրիարքի պաշտոնը նոր ստանձնած Կոնստանտին VI-ը նույնպես ներառվեց այս «բնակչության փոխանակման» գործընթացի մեջ, քանի որ մեղադրվում էր Թուրքիայի հունական շրջանակներում հակակառավարական ալիք հրահրելու մեջ: Հունաստանը դիմեց թուրքական կառավարությանը՝ պատրիարքին «բնակչության փոխանակման» գործընթացից դուրս բերելու պահանջով: Երկու երկրների միջև սկսվեց, այսպես կոչված, «պատրիարքական լարվածության» շրջանը, որը քիչ էր մնում հանգեցներ պատերազմական գործողությունների: Գործադրված ջանքերը արդյունք չտվեցին և բացասաբար անդրադարձան հունական համայնքի վրա, որը թուրքական կառավարության ձեռքին դարձել էր գործիք՝ Հունաստանի կառավարությանը շանտաժի ենթարկելու և զիջումներ կորզելու նպատակով: Թուրքիայի հունական համայնքի անդամների նկատմամբ կիրառված ճնշումների ու բռնությունների հետևանքով 1925 թ. մայիսի 22-ին Կոնստանտին պատրիարքը հրաժարական տվեց[615]:

1923 թ. հոկտեմբերին թուրքական կառավարությունը սահմանափակեց Թուրքիայում բնակվող հույների քաղաքացիական և քաղաքական իրավունքները, բանկերին, ծառայություններ մատուցող ընկերություններին և ձեռնարկություններին հարկադրեց աշխատանքից հեռացնել բոլոր հույներին: Հունական դպրոցներում հիմնական առարկաները պետք է դասավանդվեին թուրքերենով, և այդ

[614] Տե՛ս Բառում Վ., նշվ. աշխ., 163:
[615] Տե՛ս Չոբանյան Գ., նշվ. աշխ.:

պատճառով բազմաթիվ հույն ուսուցիչներ հեռացվեցին աշխատանքից, փակվեցին շատ հունական դպրոցներ:

Թուրքական իշխանությունները հետևողական քաղաքականություն էին վարում հույն բնակչությանը երկրից արտաքսելու և նրանց ունեցվածքը բռնագրավելու ուղղությամբ: Լոզանի պայմանագրի ստորագրումից առաջ անվտանգության նպատակով Թուրքիայից դուրս ժամանակավորապես ապաստանած 40000 հույներ զրկվեցին թուրքական քաղաքացիությունից, իսկ նրանց սեփականությունը բռնագրավվեց: Կոպտորեն խախտելով Լոզանի պայմանագրի դրույթները՝ թուրքական իշխանությունները 1923 թ. հոկտեմբերի 4-ին վերացրին նաև Իմրոս և Թենեդոս կղզիների հույն բնակչության արտոնությունները: Այնտեղի դատական համակարգից, մաքսատներից, ժանդարմերիայից և նավահանգիստներից հեռացվեցին բոլոր հույն պաշտոնյաներն ու, նրանց փոխարեն, նշանակվեցին թուրք հրամանատարներ ու սպաներ: 1500 մարդ Իմրոսից և 64 մարդ Թենեդոսից արտաքսվեցին:

Սալոնիկում Ք. Աթաթուրքի հայրական տան մոտ կազմակերպված պայթյունը վերագրվելով հույներին՝ թուրքական կենտրոնական իշխանությունների հրահրմամբ 1955 թ. սեպտեմբերի 6-7-ը կազմակերպվեցին ջարդարար հարձակումներ հույների վրա, որոնք ստիպված էինխմբերով լքել Թուրքիան: Այդ օրերին ավերվեց 80 եկեղեցուց 73-ը, 26 հունական և 8 հայկական դպրոց, 5 սպորտային ակումբ, 4348 խանութ, 27 դեղատուն և 110 ռեստորան, սրճարան և հյուրանոց, որոնք պատկանում էին հույներին, գոհվեց 16 և վիրավորվեց 32 հոգի, իսկ նյութական վնասը կազմում էր 270-360 միլիոն դոլար: Լքվեցին բազմաթիվ եկեղեցիներ ու տներ, ավելի քան 100.000 հույն ստիպված գաղթեց Հունաստան, և նրանց սեփականության հարցը մինչ օրս լուծված չէ: Հույների թիվը Ստամբուլում կրճատվեց 50-60 հազարի: Պատրիարքությունն էլ հազիվ փրկվեց արտաքսվե-

լուց, շնորհիվ Աթենագորասի՝ Թուրքիայի հանդեպ ունեցած նվիրվածության, որի համար հույները հիասթափված էին նրանից[616]:

Թեև 1930 թ. Թուրքիայի և Հունաստանի միջև կնքված պայմանագրով ճանաչվում էր երկու երկրների քաղաքացիների բնակության, առևտրով զբաղվելու, գույք ձեռք բերելու իրավունքը, Կիպրոսի հարցի սրման հետևանքով թուրքական կառավարությունը միակողմանիորեն չեղյալ հայտարարեց այդ պայմանագիրը: Թուրքիայի ներքին անվտանգության համար սպառնալիք լինելու պատրվակով 1964 թ. մարտին Թուրքիայի կառավարությունը երկրից արտաքսեց Ստամբուլի ոչ միայն հունահպատակ, այլև թուրքահպատակ շուրջ հիսուն հազար հույների, որոնք մինչև 1989 թ. գրկված էին Թուրքիայում գտնվող իրենց սեփականությունը վաճառելու և բանկային հաշիվներից գումար հանելու իրավունքից: Հունահպատակ 150 գործարարների հրահանգվեց կարճ ժամանակում փակել իրենց ձեռնարկությունները և հեռանալ երկրից: Միաժամանակ, թուրքական կառավարությունը նրանց արգելեց վաճառել իրենց անշարժ կալվածքները, ապա սառեցրեց դրամատներում նրանց բոլոր հաշիվները, որոնք հետագայում փոխանցվեցին պետական գանձարան[617]: Այսօր մոտ 3500 հույն դեռևս ապրում է Թուրքիայում, որոնցից 2500-ը՝ Ստամբուլում և մոտ 500-ը՝ Մարմարա ծովի Իշխանական կղզիների վրա[618]:

1923 թ. ընդունված որոշման համաձայն, Ստամբուլի Տիեզերական պատրիարքության պատրիարք ընտրվելու իրավունք ունի միայն Թուրքիայի քաղաքացի հանդիսացող հույն հոգևորականը:

---

[616] Բաում Վ., Թուրքիան և նրա քրիստոնյա փոքրամասնությունները, 166:

[617] Տես Kya N., Baldwin C., Minorities in Turkey: Submission to the European Union and the Government of Turkey, Minorities Rights Group International, 2004 July, p. 34.

[618] Տես Չորանյան Գ., Հունական համայնքի նկատմամբ Օսմանյան կայսրության վարած քաղաքականության շարունակությունը հանրապետական Թուրքիայում, http://akunq.net/am/?p=19800

Այս որոշումից ելնելով, Թուրքիայում սկսեց գործել միակ հունական ուղղափառ սեմինարիան՝ Հեյբելի կղզու հոգևոր դպրոցը, որն այդ երկրի համար պատրաստում էր հույն ուղղափառ եկեղեցու սպասավորներ[619]: 1971 թ. զինվորական միջամտությունից հետո Հեյբելիի հունական հոգևոր դպրոցը փակվեց, ինչի հետևանքով Թուրքիայում չեն պատրաստվում հույն հոգևորականներ: Հունական համայնքի հոգևորականների առաջացած տարիքը և երիտասարդ սերնդի փաստացի բացակայությունն օրհասական վիճակ են ստեղծել Հունաց պատրիարքության համար, ուստի և պատրիարք Բարդուղիմեոսը հնարավոր բոլոր ատյաններում բարձրացնում է այս հարցը[620]: Թեև Թուրքիայի կառավարությունը ԵՄ-ին խոստացել էր վերաբացել Հեյբելի կղզու հունական աստվածաբանական դպրոցը, սակայն հետագայում ԵՄ հարցերով նախարար Է. Բաղըշը այդ հարցի լուծումը պայմանավորեց Հունաստանի իշխանությունների կողմից այդ երկրում մահմեդական փոքրամասնությունների դրությունը բարելավելու ուղղությամբ ձեռնարկվելիք քայլերով[621]:

Ներկայիս հույն ուղղափառ եկեղեցու տիեզերական պատրիարք Բարդուղիմեոսը բավական տարեց է և վերջին շրջանում պարբերաբար մահվան սպառնալիքներ է ստանում, իսկ նրա մահից հետո հաջորդ պատրիարքի ընտրությունը Թուրքիայի հունական համայնքին լուրջ խնդրի առջև է կանգնեցնելու, քանզի չկան օրենքով սահմանված չափանիշներին համապատասխանող թեկնածուներ: Ուղղափառ հոգևոր դպրեվանքի փակումը դարձել է միջազգային քննարկման խնդիր և տարբեր պետությունների իշխանությունները, ինչպես նաև Եվրոմիությունը հանդես են եկել այն վերաբացելու պահանջով: Թուրքիայի կառավարությունը փորձում է որոշ զիջումների գնալ և հայտա-

---

619 Տե՛ս Բառում Վ., նշվ. աշխ., էջ 166:
620 Տե՛ս Մելքոնյան Ռ., Ակնարկ Ստամբուլի հայ համայնքի պատմության…, էջ 61:
621 Տե՛ս Սիմավորյան Ա., Հովյան Վ., նշվ. աշխ., էջ 120-122:

բարել է, թե դպրեվանքը կվերաբացվի, սակայն միայն այն պայմանով, որ այն ներգրավվի Թուրքիայի պետական համալսարանական կառույցում: Բայց Բարդուղիմեոս պատրիարքը մերժել է այդ առաջարկը՝ պնդելով, թե կրոնական առաջնորդներ կրթելու հոգևոր դպրոցի առաքելությունը անհնար է իրագործել համալսարանական կառույցի ներսում: Այդ իսկ պատճառով մինչ օրս այս խնդիրը մնում է չլուծված[622]: Թուրքիայի հույն ուղղափառ պատրիարքությանը ներկայումս պատկանում է 58 եկեղեցի՝ 19 սեփական դպրոցներով, բազմաթիվ մանկատներ ու մի հիվանդանոց: 1925 թ.-ից Ստամբուլում լույս են տեսնում հունական «Ապոյեվմատինի» թերթն ու «Իհո» ամսագիրը[623]:

Հունական պատրիարքարանը նաև հետևողական պայքար էր մղում պետության կողմից ապօրինաբար իրենից խլված կալվածքները վերադարձնելու ուղղությամբ: 2007թ. հունվարի 9-ին Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վճիռ կայացրեց, որով Թուրքիայի հանրապետությունը դատապարտվում էր «Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի» գույքի պաշտպանության մասին արձանագրությունը խախտելու համար և կոչ էր արվում Թուրքիային, դատարանի կողմից վճիռը վերջնականապես հաստատելուց հետո, երեք ամսվա ընթացքում կամ սեփականությունը վերադարձնել իր օրինական տերերին, կամ էլ վճարել 890000 դոլար՝ պատճառված վնասի հատուցման չափը և 20000 դոլար էլ դատական ծախսերի համար[624]: Կալվածքների տնօրինությունը որոշում կայացրեց ետ վերադարձնել Գալաթայի հունական նախակրթարանի վակֆին պատկանող դպրոցի շենքը Ստամբուլում, որը 1974 թ. խլվել էր կառավարության կողմից: 40 տարի շարունակ անտեր

---

[622] Տե՛ս Չոբանյան Գ., նշվ. աշխ.,

[623] Տե՛ս Բաում Վ., նշվ. աշխ., էջ 163:

[624] Տե՛ս Ministry of Foreign Affairs Greece in the World, A4 Directorate for Relations with Turkey, http://www.mfa.gr/…/Turkey/…Turkey/Greek+Minority/

մնացած այդ շենքը 3 ամսվա ընթացքում Պատրիարքարանին վերադարձնելու որոշումը մեծ հաղթանակ էր հույների համար:

Թուրքական իշխանությունների կողմից, որպես ոչ մահմեդական փոքրամասնություն, ճանաչված հույն ուղղափառ համայնքից բացի, Թուրքիայում ապրում են նաև իսլամացված հույներ, որոնք, հիմնականում, բնակվում են պատմական Պոնտոսի սևծովյան տարածքում՝ Զոնգուլդակից մինչև Ռիզե: Նրանք հատկապես շատ են Տրապիզոնում: Առանձին խմբեր կան Իզմիրի և Անթալիայի հատվածներում, Ալեքսանդրեթում, Կեսարիայում, Սեբաստիայում, Էսքիշեհիրում, Կոնիայում և այլուր: Իսլամացված հույների մեջ, օրինակ՝ Տրապիզոնի նահանգի Օֆի շրջանում, կային ինչպես մոլեռանդ և պահպանողական հավատացյալ մահմեդականներ, այնպես էլ իսլամական հավատին ոչ այդքան ամուր կառչածներ, որոնք շարունակում էին պահպանել հունական ավանդույթները: Եթե նախկինում իսլամացված հույները նախընտրում էին չխոսել իրենց իսկական ինքնության մասին և փորձում էին որքան հնարավոր է ծածուկ պահել այդ իրողությունը շրջապատից՝ վախենալով թուրքական կառավարության և հասարակության կողմից բացասական ու անհանդուրժողական վերաբերմունքից, ապա այժմ այդ առումով որոշ տեղաշարժ է նկատվում: Ունենալով նաև վերջին ժամանակաշրջանում կրոնափոխ հայերի օրինակը, որոնց մի մասը արդեն սկսել է բացահայտ խոսել իր իսկական ինքնության մասին և վերընդունել քրիստոնեություն, իսլամացված հույների որոշ մասն էլ սկսել է խոսել իր հունական արմատներից, բայց, ի տարբերություն հայերի, ավելի զգուշորեն և պահպանողական է մոտենում այս հարցին ու, բացահայտելով իր հունական ծագումը, դեռ հավատարիմ է մնում իսլամական կենսակերպին:

2.2.3. Խտրական քաղաքականության դրսևորումները հրեաների նկատմամբ

Թուրքիայի հրեական համայնքը Լոզանի պայմանագրով նույնպես ճանաչվեց՝ որպես ոչ մահմեդական փոքրամասնություն, որի իրավունքները պետք է պաշտպանվեին այդ միջազգային պայմանագրի 37-45-րդ հոդվածների դրույթներով, ինչպես նաև երկրի ներպետական օրենսդրությամբ: Սակայն Գերմանիայում 1933 թ. նացիստների իշխանության գալուց և հակահրեական քաղաքականության սկսվելուց հետո, թուրքական թերթերում հրեաների դեմ սկսեցին տպագրվել սադրիչ բնույթի հոդվածներ, որոնք հանգեցրեցին նրանց նկատմամբ իրականացված բռնությունների ու կողոպուտի: 1934 թ. ամռանը Թրակիայի քաղաքներում՝ Չանաքքալեում, Գալիպոլիում և Էդիրնեում կազմակերպված ավազակախմբերը սկսեցին հարձակվել և թալանի ենթարկել հրեաների տներն ու խանութները, բռնաբարել կանանց: Այս գործողությունները հրեաներին հանգեցրին այն մտքին, որ իրենց նկատմամբ կատարվում է այն, ինչ հայերի հետ տեղի ունեցավ 1915 թ.[625]:

Առաջին հարձակումը տեղի ունեցավ 1500 հրեաների դեմ՝ 1934 թ. հունիսի 21-ին Չանաքքալեում: Զինված ավազակախմբերը առևտուրը կանխելու նպատակով հերթապահում էին հրեա առևտրականների կրպակների առաջ, հրեաների որոշ տներ մահվան սպառնալիք պարունակող նամակներ էին ստանում, որ, եթե քաղաքը չլքեն, ապա կսպանեն: Քանի որ իրավիճակն ամեն օր ավելի էր սրվում, 1934 թ. հունիսի 25-ին հրեաները Չանաքքալեից ու Գալիպոլիից սկսեցին արագ հեռանալ Ստամբուլ[626]: Նրանցից քչերին հաջող-

---

[625] Տե՛ս Քյուրքճյան Ա., Թուրքերուն՝ Թուրքիան թրքացնելու քաղաքականությունը, http://ermeni.hayem.org/ermenice/trqatsnelu_qaghaqakanutyune.htm

[626] Տե՛ս Հյուր Ա., Մեր ամենաերկար դարը՝ «կոդավորման դարաշրջանը», http://www.radikal.com.tr/yazarlar/ayse_hur/en_uzun_yuzyilimiz_asr_i_fisleme-1163826

վեց չնչին գներով վաճառել իրենց ունեցվածքը, տներն ու խանութները:

1934 թ. հուլիսի 2-ին մի խումբ «Մա՛հ հրեաներին» լոզունգներով հարձակվեց Էդիրնեի հրեական թաղամասի վրա՝ թալանելով ու հրի մատնելով նրանց տներն ու կրպակները: Հրեաներին ծեծի ենթարկեցին և հրամայեցին գնալ Ստամբուլ: Խուճապի մեջ ուննոր հրեաներն առաջին իսկ պատահած փոխադրամիջոցով շարժվեցին Ստամբուլ, իսկ ունեզուրկները ոտքով շարժվեցին դեպի Հունաստանի և Բուլղարիայի սահմանը: Քաղաքում մնացած աղքատ հրեաներին, հացթուխները հաց չէին վաճառում, նպարավաճառները ուտելիք չէին տալիս, ջրկիրները ջուր չէին բաժանում: Պատկան մարմինները, որոնց պարտականությունն էր՝ առանց էթնիկ խտրականության, պաշտպանել քաղաքացիներին, իրենց պարտականությունը կատարելու փոխարեն, հուլիսի 3-ին շրջաբերականով քաղաքում մնացածներին հրամայեցին 48 ժամվա ընթացքում լքել քաղաքը: Հակահրեական գործընթացն ավարտվեց, երբ 1934 թ. հուլիսի 4-ին հրեա համայնքի հայտնի անդամներից Գադ Ֆրանկոն և Միշոն Վենտուրան գաղտնի հանդիպում ունեցան Ք. Աթաթուրքի հետ: Դեպքերից հետո, ԺՀԿ-ի պատրաստած զեկույցի համաձայն, Թրակիայում բնակվող 13 հազար հրեաներից 7-8 հազարը գաղթեց Ստամբուլ, բազմաթիվ հրեաներ կորցրին իրենց ունեցվածքը: Այդ դեպքից հետո Թուրքիայի հրեաները երբեք իրենց ապահով չէին զգում և հարմար առիթի դեպքում լքում էին երկիրը[627]:

Հակահրեական բռնությունները հրեա երիտասարդների շրջանում հանգեցրին սիոնիստական գաղափարների տարածմանը, շատ հրեաներ տեղափոխվեցին անգլիական մանդատային իշխանության տակ գտնվող Պաղեստին, որտեղ հետագայում ստեղծվեց Իսրայել

[627] Տե՛ս Մեր ամենաերկար դարը՝ «կոդավորման դարաշրջանը», http://www.radikal.com.tr/yazarlar/ayse_hur/en_uzun_yuzyilimiz_asr_i_fisleme-1163826

պետությունը: Թուրքական իշխանությունները հրաժարվեցին ստանձնել դեպքերի պատասխանատվությունը և հատուցել հրեաներին հասցված նյութական վնասները: Ստամբուլում ԱՄՆ հյուպատոսության պաշտոնյաներից Չ. Ալենը Թրակիայի դեպքերի վերաբերյալ իր 1938 թ. օգոստոսի 1-ի զեկուցագրում գրում է, որ իրենց պատմության ընթացքում թուրքերը պարտքերից ազատվելու և սեփականության տեր դառնալու ավելի լավ եղանակ չեն սովորել, քան աքսորի ենթարկելը[628]:

1942 թ. Թուրքիայում կրկին ուժեղացան հակահրեական տրամադրությունները: Գերմանայի կողմից գրավված Ռումինիայից նավով փախած 769 հրեաներ 1941 թ. դեկտեմբերի 15-ին Ստամբուլ հասան և ցանկանում էին ապաստանել Թուրքիայում: Նավը երկու ամիս սպասեցնելուց հետո 1942 թ. փետրվարի 24-ին երկրի վարչապետը հայտարարեց, որ Թուրքիան անցանկալի անձանց ապաստան տալու վայր չէ և կարգադրեց, որ նավը վերադառնա Ռումինիա: Վերադառնալիս նավը ջրասույզ արվեց գերմանական սուզանավերի կողմից: Դրանից հետո 1942 թ. մայիսի 4-ին «Անատոլու Աժանսը» թուրքական լրատվական գործակալության 26 հրեա աշխատակիցներ վարչապետի կարգադրությամբ ազատվեցին աշխատանքից[629]:

Լոզանի պայմանագրով թուրքական իշխանությունների կողմից որպես ոչ մահմեդական փոքրամասնություն ճանաչված հրեական համայնքից բացի, Թուրքիայում ապրում են նաև սաբաթայական, այսինքն՝ սալոնիկյան ծագումով առերևույթ իսլամ ընդունած հրեաները: Ի տարբերություն հուդայական հրեաների, նրանց հաջողվել է ազդեցիկ որոշ դիրքերի հասնել թուրքական պետական կառույցնե-

---

[628] Տե՛ս Քյուրքճյան Ա., Թուրքերուն՝ Թուրքիան թրքացնելու քաղաքականությունը, http://ermeni.hayem.org/ermenice/trqatsnelu_qaghaqakanutyune.htm

[629] Տե՛ս Մեր ամենաերկար դարը՝ «կոդավորման դարաշրջանը», http://www.radikal.com.tr/yazarlar/ayse_hur/en_uzun_yuzyilimiz_asr_i_fisleme-1163826

րում, թեև ԱԶԿ-ի իշխանության գալուց հետո Թուրքիայում որոշ չափով խաթարվեցին սաբաթայականների դիրքերը:

Սաբաթայականների մեջ նկատվում են ընդգծված հակահայկական դրսևորումներ, որոնք վերջին շրջանում արտահայտվում են այս կամ այն պետական, քաղաքական գործչին հայկական ծագում վերագրելու և, այդպիսով, թուրք հասարակության մեջ հայերի դեմ նոր լարվածություն առաջացնելու ձևով: Թերևս դրա ամենացայտուն օրինակը նախագահ Ա. Գյուլի մորը կամայականորեն հայ դարձնելն էր, ընդ որում՝ դա անում էր ԺՀԿ-ի պատգամավորը, ունենալով, ըստ իսլամական շրջանակների, սաբաթայական ծագում: Ժամանակին հայ են դարձրել «Գորշ գայլերի» առաջնորդ Ա. Թյուրքեշին, ԱՇԿ-ի ներկայիս ղեկավար Դ. Բահչելիին, Բանվորական կուսակցության առաջնորդ, «Թալյաթ փաշա» կոմիտեի հիմնադիր Դ. Փերինչեքին և Դինքի սպանության գլխավոր կազմակերպիչ, պաշտոնաթող գեներալ Վ. Քյուչուքին, որոնցից վերջին երկուսը կալանավորված են «Էրգենեքոնի» գործով: Թուրք գործիչներին հայկական ծագում վերագրելու դրսևորումները սոսկ վերջիններիս վարկաբեկելու նպատակ չեն հետապնդում, դրանք, որպես հայատյացության դրսևորում, աղավաղում են նաև Հայոց ցեղասպանությունը: Իսկ աղավաղման առաջամարտիկի դերը պատկանում է Թուրքիայում հետզհետե դիրքերը կորցնող սաբաթայականներին[630]:

Ամենայն հավանականությամբ, սաբաթայականները նման գործելաոճով փորձում են թուրքական հասարակությունում և կառավարող շրջանակներում չեզոքացնել կամ թուլացնել իրենց նկատմամբ եղած բացասական վերաբերմունքը և, որպես թուրքական պետության համար սպառնալիք, ներկայացնել ծպտյալ հայերին, որոնք, իբր, բարձր դիրքերի են հասել կառավարող շրջանակներում:

---

[630] Տե՛ս Չաքրյան Հ., Ովքեր եվ ինչու հայատյաց տականքներին հայկական ծագում են վերագրում Թուրքիայում, http://azg.am/AM/2012051909

2.2.4. Խտրական քաղաքականության դրսևորումները ոչ մահմեդական փոքրամասնություն չճանաչված համայնքների նկատմամբ

Ի տարբերություն հայերի, հույների և հրեաների, Լոզանի պայմանագրով ոչ մահմեդական փոքրամասնություն չճանաչված համայնքները՝ ասորիները, կաթոլիկները և բողոքականները, անգամ տեսականորեն զրկված են այդ փաստաթղթով նախատեսված իրավունքներից:

1976 թ. փետրվարի 26-ին Թուրքիայից արտագաղթած 8000 ասորիներին Շվեդիայի կառավարությունը տվեց մշտական բնակության իրավունք: Նրանց մեծ մասը բնակություն հաստատեց Ստոկհոլմի մոտ գտնվող Զոդերտելյեում քաղաքում, որտեղ մի ասորի եպիսկոպոս սպասարկում է Սկանդինավիայի մոտ 25000 ասորիների: Թուրքիայից արտագաղթած մոտ 150 ասորի ընտանիք՝ 700 անդամներով, տեղափոխվեց Ավստրիա: Ստամբուլում դեռևս գոյություն ունեն երեք ասորական ուղղափառ եպիսկոպոսանիստեր, իսկ Մարդինում ապրում են մոտ 15000 ասորիներ: Ստամբուլի ասորի քրիստոնյաներին սպասարկում է եպիսկոպոս Ֆիլոկսենոսը: Ստամբուլում ասորիներն իրենց եպիսկոպոսական եկեղեցու կողքին ունեն երկու հողամաս, որոնցից մեկի վրա կանգնած է 1849 թ. կառուցված եկեղեցին, մյուսը՝ կից հողամասն է: Մնացած ողջ անշարժ գույքը, թեև համայնքին է պատկանում, գրանցված է մասնավոր մարդկանց անուններով: Անշարժ գույք, որ ժառանգաբար է անցնում եկեղեցիներին, գոնե 60-ական թվականներից ի վեր, խելացի նախատեսմամբ, այլևս չեն կտակվում եկեղեցական տարբեր հիմնադրամների վրա[631]: Ասորական «Մոր Գաբրիել» վանքը 1974 թ. գտնվում է աբբահայր-արքեպիսկոպոս Տիմոթեոս Ակտասի ենթա-

[631] Տե՛ս Բառում Վ., նշվ. աշխ., էջ 173:

կայության տակ: Հարաբալեից հարավ ընկած «Մոր Մալկե» վանքը բազմիցս ավերվել է, վերջին անգամ 1981 թ.՝ քրդերի կողմից: «Սալահի Մոր Յակոբ» վանքն՝ իր 7-13-րդ դարերի արձանագրություններով, մինչև 1966 թ. մեծապես ավերված էր: Միդիատի ծայրամասում գտնվող «Մոր Աբրահամ» վանքում մնացել են միայն մի քանի վանականներ: Արվեստի գործերից ու ձեռագրերից շատ քիչ բան է պահպանվել այս վանքերում: Վախից, որ պետությունը իրենցից ձեռագրերը կխլի, վանականները դրանք ցույց չեն տալիս օտարներին: Ասորի քրիստոնյաների սեփականություն հանդիսացող ձեռագրերից ամենաարժեքավորն են 13-րդ դարի Մարդինի Դիոսկորոս Թեոդորոսի և Հահի ավետարանները: Երկուսն էլ զարդարված են ճոխ մանրանկարներով: Միայն 14 հոկոբիկյան ձեռագրեր, որոնց մեծ մասը ստեղծվել է Մարդինի գավառում, գտնվում են Գերմանիայում[632]:

1980 թ. սեպտեմբերի 12-ի զինվորական հեղաշրջումից հետո ասորիները և «ծպտյալ» հայերը ահավոր ճնշումների ենթարկվեցին, ինչը քաջալերվում էր իշխանությունների և ծայրահեղ ազգայնական շարժումների կողմից[633]: 1995 թ. փակված Ադըյամանի ասորական եկեղեցին վերանորոգվեց ասորական համայնքի ջանքերով և վերաբացվեց 2000 թ.: Այն ծառայում է ոչ միայն Մալաթիայի, Այնթապի, Ուրֆայի, Մարաշի, Ադանայի շրջանների ասորիների, այլև՝ ծպտյալ հայերի կրոնական կարիքներին: Եկեղեցին բացվելուց հետո ասորի քահանաները հաճախ մահվան սպառնալիքներ են ստացել, նրանցից պահանջել են փակել եկեղեցին, հետապնդման են ենթարկել այդ եկեղեցի մտնողներին: Ինչպես ասորիները, այնպես էլ ծպտյալ հայերը և այլ քրիստոնյաներն իրենց պաշտամունքը չեն կարողա-

632 Տե՛ս նույն տեղում, էջ 169:
633 Տե՛ս Եալչին Ք., Հոգիս քեզմով կը խայտայ, էջ 346:

նում հանգիստ կատարել, նրանցից շատերը վախից եկեղեցի չեն հաճախում և, այդպիսով, հետ են կանգնում իրենց կրոնից[634]:

2000 թ. դեկտեմբերի 21-ին Դիարբեքիրում Պետական անվտանգության դատարանի երկրորդ ատյանում սկսվեց երկրորդ դատավարությունը ընդդեմ ասորի ուղղափառ քահանա Յուսուֆ Ակբուլուտի: 2000 թ. հոկտեմբերին «Հուրիյեթ» թերթի երկու լրագրողների մոտ նրա՝ մտերմաբար արտահայտած կարծիքը Թուրքիայում 1915 թ. հայերի ու ասորիների ցեղասպանության մասին, հրապարակվեց «Դավաճանը՝ մեր մեջ» խորագրի տակ: Լրագրողները, առանց նրա գիտության, տեսագրել էին խոսակցությունը և ուղարկել թուրքական հեռուստատեսություն: Նա մեղադրվեց թուրքական քրեական օրենսգրքի 312-րդ հոդվածով, քանի որ «ժողովրդին բացահայտորեն ատելության էր հրահրել՝ խտրականություն դնելով մարզերի, դասակարգերի, ցեղերի և կրոնների միջև»: Դրա համար նախատեսվում է մինչև հինգ տարվա ազատազրկում: Միջազգային հանրության բողոքներից հետո միայն, քահանա Ակբուլուտի դեմ 312-րդ հոդվածով առաջադրված «ցեղային ատելության հրահրում» մեղադրանքը 2001 թ. ապրիլի 5-ին՝ երրորդ ունկնդրումից հետո, հանվեց: Դատավորի համար վճռորոշ հանգամանքը եղել է այն, որ մեղադրյալը իր կարծիքն արտահայտել էր ոչ թե հրապարակայնորեն, այլ մասնավոր զրույցի ժամանակ: Մի այլ տեղում Դիարբեքիրի «Ս. Մարիամ» եկեղեցու քահանան քարոզի ժամանակ դժգոհել էր, որ աշխարհը շարունակ խոսում է միայն հայերի, սակայն ոչ մի անգամ՝ ասորիների կոտորածների մասին: Ի վերջո, միջազգային հանրության և, հատկապես, Շվեդիայի օժանդակության շնորհիվ քահանան ազատ արձակվեց[635]:

---

[634] Տե՛ս Յալչըն Ք., Ծպտյալ հայերը, http://horizonweekly.ca/?c=4&id=30&n=1656
[635] Տե՛ս Բառում Վ., նշվ. աշխ., էջ 172:

Պոլսի Հայոց պատրիարքարանը և ուղղափառ ասորական համայնքը հանդես եկան «Կալվածքների մասին» օրենքի փոփոխության նախաձեռնությամբ: Ասորական համայնքի մի քանի անդամներ օրինագիծ մշակեցին և այն ուղարկեցին թուրքական խորհրդարանի 20 պատգամավորների: Դրա նպատակն էր՝ վերացնել 1935 թ. օրենքը և նորովի կանոնադրել սեփականության ձեռքբերումը ոչ մահմեդական հիմնադրամների միջոցով: Օրինագծով առաջարկվում էր հնարավորություն ստեղծել, որպեսզի հին հիմնադրամները նորերին փոխանցվեն և ընդունվեն՝ որպես սեփականություն: Համայնքի ներկայացուցիչների պահանջով նվիրատվությունների մասին գործող օրենքը պետք է վերանայվեր՝ Եվրոմիության հետ համաձայնեցվելով: Ի վերջո, Հայոց պատրիարքարանի առաջարկությունների հիման վրա խորհրդարանը ներկայացրեց իր ուրույն նախնական օրինագիծը, սակայն ԺՀԿ-ի ներկայացուցիչները սկսեցին առարկել դրա դեմ, ասելով, թե քրիստոնյա փոքրամասնությունները սպառնալիք են երկրի ազգային անվտանգությանը, ուստի նրանք չպետք է օգտվեն նույն իրավունքներից, ինչ մահմեդական թուրքերը[636]:

Երբ Հաթայ գավառը 1938 թ. անցավ Թուրքիային, այնտեղից շատ քրիստոնյաներ գաղթեցին տարբեր երկրներ: Թուրքական դարձած Հաթայ գավառից չգաղթեց փոքրաթիվ արաբ քրիստոնյաների՝ մելքիտների համայնքը: Ներկայումս նրանց թիվը կազմում է մոտ 7000 մարդ, որոնք բնակվում են նշված գավառում և մերձակա մեծ քաղաքներում՝ Իսկենդերունում և Ադանայում: Մելքիտները ենթարկվում են Անտիոքի պատրիարքությանը, որի նստավայրը Դամասկոսում է: Ինչպես և մյուս քրիստոնեական համայնքերը, մելքիտները Թուրքիայում ենթարկվում են խտրական վերաբերմունքի, առավել ևս, որ այս համայնքը, ինչպես ասորականը, իշխանությունը-

[636] Տե՛ս Բառում Վ., նշվ. աշխ.,, էջ 173:

ների կողմից պաշտոնապես փոքրամասնություն չի ճանաչվում: Մելքիթտները Թուրքիայում կանգնած են իրենց լեզվի՝ արաբերենի մոռացության լուրջ խնդրի առջև, քանզի այդ երկրում արաբերենով գրքեր ու թերթեր չեն հրատարակվում, իսկ դպրոցներում արաբերենը չի դասավանդվում[637]:

Կաթոլիկների վիճակը Թուրքիայում փոքր-ինչ ավելի լավ է, քանի որ Թուրքիայում Պապը շատ ավելի մեծ հարգանք է վայելում, քան՝ Արևելքի պատրիարքները: Կաթոլիկ եկեղեցին Ստամբուլում և Իզմիրում ունի երկու եպիսկոպոսություն՝ մոտավորապես 12000 հավատացյալներով, որոնցից գրեթե 8000-ը Ստամբուլում է ապրում: 1975 թ. մոտավորապես 50 քահանայի և 150 մայրապետների խնամակալության տակ գտնվում էր 11 կրթարան, որոնցից հինգը տղաների՝ 3000 աշակերտով, վեցը աղջիկների՝ 2000 աշակերտուհիներով: Դպրոցներն ու հիվանդանոցները գտնվում են Ստամբուլում և Իզմիրում: Կաթոլիկ ասորիներին Ստամբուլում սպասարկում է մի առաջնորդական տեղապահ: 1975 թ. երկրի հարավ-արևելքում ապրում էին մոտ 4000 հավատացյալներ, որոնցից շատերը ցանկանում էին արտագաղթել: Ստամբուլում, Անկարայում, Իզմիրում և Տարսոնում կան նաև ավետարանական եկեղեցիներ՝ իրենց դպրոցներով: Այստեղ դեռևս շարունակվում է 19-րդ դարից սկիզբ առած բողոքական միսիոներության ազդեցությունը: Թուրքիայում ավետարանականներն ընկալվում են՝ որպես արևմտյան երկրների գործակալներ, որոնք գործում են պետության դեմ: Այս մեղադրանքը պայմանավորված է նրանով, որ Թուրքիայի բողոքական եկեղեցիները գոյատևում են ամենից առաջ Եվրոպայից և ԱՄՆ-ից ստացվող նվիրատվություններով[638]: Բացի ֆինանսականից, միջազգային բողոքական կազմակերպությունների աջակցությունը զգալի է նաև

---

[637] Տե՛ս Բառում Վ., նշվ. աշխ., էջ էջ 166:

[638] Տե՛ս նույն տեղում, էջ 171:

տեղեկատվական դաշտում: Վերջիններս իրենց լրատվամիջոցներով անդրադառնում են Թուրքիայում բողոքականների դրությանը, նրանց խնդիրներին և այլն: Սա կարևոր նշանակություն ունի Թուրքիայում բողոքականների վիճակի մասին միջազգային հասարակական կարծիքի ձևավորման, ինչպես նաև նրանց խնդիրներն արտաքին աշխարհում բարձրաձայնելու տեսակետից[639]:

2007 թ. ապրիլի 18-ին Մալաթիայում «Զիրվե» հրատարակչատանն աշխատող երեք երիտասարդները՝ գերմանահպատակ միսիոներներ Թիլման Գեսքեն ու Նեջաթի Այդընը, ինչպես նաև Ուղուր Յուքսելը, կտտանքների ենթարկվելուց հետո սպանվեցին ազգայնական հողի վրա: Դեպքի կապակցությամբ ձերբակալվեցին 19-20 տարեկան թուրք երիտասարդներ: Տուժող կողմի փաստաբանը հայտնեց, որ տվյալ սպանությունը նախապատրաստվել է 8 ամսվա ընթացքում, և, որ ժանդարմերիան ու ոստիկանությունը զոհերին հետևել են՝ վերջիններիս միսիոներականությամբ զբաղվելու փաստարկով, որ քրիստոնյաների սպանության այս դեպքը Հր. Դինքի սպանության նման կատարվել է անվտանգության իրավասուների գիտության ու անգործության պայմաններում: Ինչպես Հր. Դինքի և Տրապիզոնի կաթոլիկ քահանա Անդրեա Սանթորոյի, այնպես էլ քրիստոնյաների սպանության այս գործի առնչությամբ մեղադրյալները տվել են հակասական ցուցմունքներ, որոնք բավարար չեն սպանությունների կազմակերպիչներին բացահայտելու համար[640]:

ԱՄՆ Կրոնական ազատության հանձնաժողովը հատուկ զեկույց հրապարակեց Թուրքիայի կրոնական փոքրամասնությունների վիճակի վերաբերյալ, որում անդրադարձ էր կատարվում Տրապի-

---

[639] Տե՛ս Սիմավորյան Ա., Հովյան Վ., Հայ կաթողիկե և ավետարանական համայնքները Թուրքիայում, էջ 109:

[640] Տե՛ս «Զիրվե» հրատարակչության ոճրագործության վերաբերյալ համոզիչ տեղեկություններ, http://trt.net.tr/Haber/HaberDetay.aspx?HaberKodu=4a0e5d35-24cd-4429-9f59-b914a2cb0822

զոնի կաթոլիկ քահանա Անդրեա Սանտորոյի, Մալաթիայում՝ «Զիրվե» հրատարակչատանը երեք քրիստոնյա միսիոներների և հայ լրագրող Հրանտ Դինքի սպանություններին, հույն և հայ պատրիարքների, ինչպես նաև՝ մեկ ալևի և մեկ հրեա հոգևոր առաջնորդի սպանելու ծրագրերին, որոնք նշվում են՝ որպես «Էրգենեքոնի» հետ ենթադրյալ կապեր ունեցող դեպքեր[641]:

2010 թ. հոկտեմբերի 5-ին Անկարայում հրավիրված ասուլիսում հանրությանը ներկայացվեց Թուրքիայում բողոքականների իրավական և սոցիալական խնդիրների վերաբերյալ Բողոքական եկեղեցիների միության պատրաստած զեկույցը: Զեկույցում նշվում է, որ դպրոցական դասագրքերում և մամուլի էջերում թուրքական հասարակությանը բողոքականները ներկայացվում են՝ իբրև սպառնալիք և թշնամի, ինչի հետևանքը եղավ այն, որ 2007 թ. Մալաթիայում մորթեցին 3 բողոքականի: Զեկուցագրի առաջին բաժնում նշվում է, որ բողոքական ժողովարանների 99 տոկոսը չունեն իրավական կարգավիճակ, հակառակ կառուցապատման օրենքում կատարված փոփոխությունների, բողոքականներին աղոթարան կառուցելու հողատարածք չի հատկացվում: Անպատասխան են մնում քաղաքապետարան ներկայացված բոլոր դիմումները: Ներկայումս Ստամբուլի ժողովարանը Թուրքիայում բողոքականների՝ իրավական կարգավիճակ ունեցող միակ եկեղեցին է: Դպրոցներում պարտադիր դասավանդվող իսլամի դասերի հետևանքով բողոքական երեխաները դպրոցում խտրականության են ենթարկվում և արժանանում են «գյավուր» կոչմանը, որոշ դեպքերում թուրք ուսուցիչները դասարանցիների առջև քրիստոնյա աշակերտին մահմեդականություն ընդունելու կոչ են անում, բողոքականների 60 տոկոսը գործազուրկ մնալու և կյանքից զրկվելու մտավախությամբ, ստիպված, անձնագ-

[641] Տե՛ս ԱՄՆ-ի Կրոնական ազատության հանձնաժողովը «մտահոգ» է Էրգենեքոնի կապակցությամբ, http://www.zaman.com.tr/haber.do?haberno=1127578

ռում նշում է, որ մահմեդական է, երկրում իրավական կարգավիճակից զուրկ են նաև բողոքականների գերեզմանները:

Զեկույցի վերջում բողոքականները թուրքական պետությունից պահանջում էին՝ ապահովել երկրում տարբեր դավանանքի տեր քաղաքացիների հավասարությունը, վերացնել այն խտրականությունը, որն առաջացել է սուննի մահմեդականներին մատուցվող հոգևոր ծառայությունների պատճառով, կանխարգելել քաղաքական գործիչների կողմից բողոքականների դեմ ուղղված «սև» քարոզչությունը, որպեսզի բողոքականները՝ որպես ազգային անվտանգության սպառնալիք չընկալվեն երկրում, վերացնել անձնագրում դավանանքի մասին նշումների վանդակը, վերացնել աղոթարան ձեռք բերելու հարցում առաջացող խոչընդոտները, դասագրքերից հանել վիրավորական, նսեմացուցիչ և թշնամանք հրահրող այն բոլոր արտահայտությունները, որոնք օգտագործվում են՝ հասարակության որոշակի հատվածի դեմ՝ նրան դարձնելով էթնիկ և կրոնական հարձակումների թիրախ[642]:

Ոչ թուրք ազգային-կրոնական խմբերի նկատմամբ իրականացվող խտրական քաղաքականությամբ թուրքական իշխանությունները կոպտորեն խախտում են թուրքական պետության կողմից բազմաթիվ միջազգային իրավական փաստաթղթերով ստանձնած պարտավորությունները: Թուրքիան 2000թ. օգոստոսի 15-ին ստորագրել և 2003թ. սեպտեմբերի 23-ին վավերացրել է «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» 1966թ. միջազգային կոնվենցիան, որով սահմանված է կրոնը ազատ ընտրելու և դավանելու իրավունքը, արգելվում են ազգային, ռասայական կամ կրոնական ատելություն սերմանող ցանկացած ուղերձի տարածումը և երեխաների հան-

642 Տե՛ս Չաքրյան Հ., Թուրքիայում բողոքականները ոչ թե սպառնալիք են, այլ՝ թիրախ, «Ազգ» օրաթերթ, 29.10.2010:

դեպ լեզվական, կրոնական կամ ծննդյան գործոններից բխող խտրականության երևույթները[643]:

1967 թ. հուլիսի 19-ին Թուրքիան վավերացրել է «Զբաղվածության կամ աշխատանքի ոլորտում խտրականության մասին» 1958 թ. կոնվենցիան, որով զբաղվածության կամ աշխատանքի ոլորտում արգելվում են կրոնական հիմքի վրա խտրականության կամ նախապատվության դրսևորումները, որոնք հանգեցնում են հնարավորությունների հավասարության կասեցմանը կամ վերացմանը:

1995 թ. ապրիլի 4-ին Թուրքիան վերապահումով է վավերացրել «Երեխայի իրավունքների մասին» 1989 թ. կոնվենցիան, որով ազգային փոքրամասնությունների խմբերին պատկանող երեխաները չեն կարող զրկվել իրենց ազգային լեզուն օգտագործելու, մշակույթը և կրոնը պահպանելու, ավանդույթներին հետևելու իրավունքներից[644]:

Թուրքական իշխանությունները որոշ վերապահումներով են ստորագրել ու վավերացրել տարբեր ոլորտներում երկրի ոչ թուրք բնակչության նկատմամբ խտրականությունը բացառող միջազգային կոնվենցիաները՝ զրկելով նրանց այդ փաստաթղթերով իրենց իրավունքները վերականգնելու միջազգային-իրավական մեխանիզմներից: Այսպես, Թուրքիան 1972 թ. հոկտեմբերի 13-ին ստորագրել և 2002 թ. հոկտեմբերի 16-ին վավերացրել է «Ռասայական խտրականության բոլոր ձևերը մերժելու մասին» 1965թ. կոնվենցիան, որով բացառվում է ռասայի, ցեղային, ազգային կամ էթնիկական ծագման հատկանիշների հիմքով ցանկացած տարբերակում, բացառում, սահմանափակում կամ նախապատվություն քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային կամ հասարակական կյանքի ցանկացած այլ բնագավառում: Վերապահում է արվել խտրականության դեմ պայքարի կոմիտեի իրավասությունների հոդվածների

---

643 Տե՛ս Մարդու իրավունքների միջազգային բիլլ, Եր., 2005, էջ 51-55:

644 Տե՛ս Հայերի խնդիրներն ու իրավունքները Թուրքիայում, էջ 22:

վերաբերյալ՝ թուրքահպատակ ոչ թուրք փոքրամասնություններին զրկելով խտրականության դեպքերի հետ կապված այդ հանձնաժողովին անհատական դիմումներ ներկայացնելու իրավունքից:

1950 թ. ի վեր Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայով և դրա լրացուցիչ արձանագրություններով կարևոր ընթացակարգեր ու մեխանիզմներ են հաստատվել մարդու իրավունքների պաշտպանության և այդ իրավունքների շարունակական կիրառման համար: Այդ փաստաթղթերի բոլոր անդամ-պետությունները իրավաբանորեն պարտավորված են կիրառել Կոնվենցիայի դրույթները և կատարել դրանով ստեղծված մարմինների որոշումները: Այդ կառույցների լեգիտիմության վառ ապացույցն են դրանց կողմից ընդունած որոշումների կիրառման բարձր ցուցանիշները: Կոնվենցիան և դրա Առաջին արձանագրությունն Թուրքիայի համար ուժի մեջ են մտել 1954 թ. մայիսի 18-ից՝ փոքրամասնություններին առնչվող հատուկ վերապահումով[645]:

Կարծում ենք, որ միջազգային կազմակերպությունները և առաջին հերթին ՄԱԿ-ը՝ իր Անվտանգության խորհրդով, ԵՄ-ը՝ իր կառույցներով, ինչպես նաև համաշխարհային քաղաքականության ազդեցիկ դերակատար հանդիսացող պետությունները պետք է ավելի հետևողական լինեն Թուրքիայի նկատմամբ՝ ոչ թուրք ազգային-կրոնական խմբերի իրավունքների պաշտպանության հարցում վերջինիս ստանձնած պարտավորությունների կատարումը վերահսկելու հարցում: Այս առումով պետք է նշել այն դրական միտումը, որ Եվրոմիության անդամակցության գործընթացի շրջանակներում պաշտոնական Բրյուսելը հետևողական է դարձել այս հարցում և Անկարայից անընդհատ ոչ թուրք ազգային-կրոնական խմբերի իրավունքների պաշտպանության հարցում կոնկրետ քայլեր է պահանջում: Թուրքիայի՝ եվրոպական կառույցների շրջանակներում ստո-

[645] Տե՛ս Հայերի խնդիրներն ու իրավունքները Թուրքիայում, էջ 22:

րագրած կոնվենցիաների թիվը 2007 թ. դրությամբ հասավ 96-ի: ԵՄ-ի կառույցների կողմից ներկայացվող զեկույցներում ներառվում են Թուրքիայում մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների կատարելագործման առաջարկներ՝ խտրականությունն արգելող օրենքների ընդունման ու դրանց կիրարկումն ապահովող գործուն իրավական համակարգի ապահովման, խտրականության դեպքերի բացահայտման, խտրականության դադարեցման, տուժողներին փոխհատուցման տրամադրման, քրեորեն պատժելի գործողությունների համար՝ կազմակերպիչների բացահայտման և պատժման, իսկ պատմական հուշարձանների դեմ ուղղված հանցագործությունների պարագայում՝ տուժած համայնքին արդար ֆինանսական փոխհատուցումների համակարգի գործարկման վերաբերյալ[646]:

Թուրքիայի ոչ թուրք ազգային-կրոնական խմբերի իրավունքների պաշտպանության հարցերում սկզբունքային դիրքորոշում է որդեգրվել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից: Սեփականության տնօրինման և սեփականությունից օգտվելու իրավունքների վերականգնման հարցերով ոչ թուրք ազգային-կրոնական խմբերի ներկայացուցիչների կողմից Թուրքիայի դեմ ներկայացված գործերում Եվրոպական դատարանն առաջնորդվում է իր իսկ դատական նախադեպերով: Խոսքը, մասնավորապես՝ 1995-1998 թթ. «Լուիզիդուն ընդդեմ Թուրքիայի» գործով կայացրած վճռի մասին է, որով Եվրոպական դատարանը ճանաչեց Լուիզիդուի իրավունքն իր սեփականության նկատմամբ, սահմանեց, որ Թուրքիան

[646] Տե՛ս European "Progress Report" on Turkey, published by the European Commission on 13 November (2001); 2003 Regular Report on Turkey's Progress towards Membership; 2004 Regular Report on Turkey's Progress towards Membership /http://ec. europa. eu/ enlargement/archives/pdf/key_documents/2004/rr_tr_2004_en.pdf/; Turkey 2005 Progress Report /2005/; EC: Council Decisions of 2001, 2003, 2006 and 2008 on the principles, priorities and conditions contained in the Accession Partnership with the Republic of Turkey /ec.europa.eu/enlargement/archives/pdf/key_documents/.

խախտել է Եվրոպական կոնվենցիայի Առաջին արձանագրության 1-ին հոդվածը և սեփականությունը տնօրինելու իրավունքից զրկելու դիմաց վճռեց 1,5 մլն. դոլարի փոխհատուցում: 2005-2006 թթ. «Քսենիդիս-Արեստիսն ընդդեմ Թուրքիայի» գործի քննության ժամանակ Եվրոպական դատարանը, հիմք ընդունելով Լուիզիդուի գործի նախադեպը, սահմանեց 1,1 մլն. դոլարի փոխհատուցում՝ սեփականությունը տնօրինելու և դրանից օգտվելու իրավունքից զրկելու համար: Դատարանը որոշեց, որ Թուրքիան խախտել է Կոնվենցիայի 8-րդ հոդվածը՝ հարգանք տան հանդեպ, 14-րդ հոդվածը՝ էթնիկ խտրականություն և Առաջին արձանագրության 1-ին հոդվածը՝ սեփականության պաշտպանություն:

2009 թ. մարտի 3-ին «Կիմիսիս Թեոդուկու Հունական ուղղափառ եկեղեցու սեփականության գրանցման» գործով կայացրած վճռում Եվրոպական դատարանը նշեց, որ Թուրքիան խախտել է հունական ուղղափառ հիմնարկի սեփականության իրավունքը՝ բռնագրավելով վերջինիս պատկանող հողատարածքը, և որ հասցված վնասի դիմաց թուրքական կառավարությունը պետք է վճարի 105.000 եվրո[647]:

Ամփոփելով ոչ թուրք ազգային-կրոնական խմբերի նկատմամբ թուրքական իշխանությունների խտրական քաղաքականության դրսևորումների ու իրենց իրավունքների պաշտպանության համար այդ խմբերի մղվող պայքարը, կարող ենք արձանագրել, որ չնայած թուրքական իշխանությունների ձեռնարկած բոլոր ջանքերին ու միջոցներին ոչ թուրք ազգային ու կրոնական խմբերի նկատմամբ իրականացվող քաղաքականությունը ձախողվել է և չի հասել իր նպատակին, քանզի երկրի արևելյան նահանգներում շարունակում են գոյատևել էթնոկրոնական այն խմբերը, որոնց այդքան ջանասիրաբար ձգտում էին վերացնել թուրքական իշխանությունները:

---

[647] Տե՛ս Հայերի խնդիրներն ու իրավունքները Թուրքիայում, էջ 22:

ԳԼՈՒԽ 3. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ ՆԵՐԿԱՅԻՍ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

3.1. Հայերի նկատմամբ բռնությունների նոր դրսևորումները արդի Թուրքիայում

Ժամանակակից թուրքական իշխանությունները հետևողականորեն շարունակում են նախորդ վարչակարգերի կողմից ոչ թուրք ազգային-կրոնական խմբերի և, մասնավորապես, հայերի նկատմամբ իրականացվող խտրականությունների ու բռնությունների ավանդական դարձած քաղաքականությունը: Արտաքին քաղաքական զարգացումները, օրինակ Ղարաբաղյան հակամարտությունը, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը, թուրքական իշխանությունների համար լրացուցիչ շարժառիթ են հանդիսացել երկրում բնակվող հայերի նկատմամբ խտրականությունն ու բռնություններն ավելի սաստկացնելու համար: Ավանդական գործելակերպի համաձայն, Ստամբուլի հայկական համայնքը ձգտել է խուսափել դրանց մասին բարձրաձայնելուց, այդ քաղաքականությունից տուժած հայերն էլ, հիմնականում, խուսափել են բողոքել՝ համոզված լինելով, որ արձագանք չեն ստանալու[648]: Սակայն վերջին տարիներին Թուրքիայի ներքաղաքական կյանքում տեղի ունեցած որոշակի փոփոխությունները հանգեցրին նաև հայկական համայնքի և հայ գործիչների մտածողության փոփոխության:

Թուրքիայի ԱԱԽ-ը 2000թ. Թուրքիայի համար ամենավտանգավոր երկու սպառնալիք համարեց փոքրամասնությունների գործունեությունը՝ քրիստոնյաների զավթված կալվածքների վերադարձի պահանջներ, դպրոցների և եկեղեցիների վերահսկողություն,

[648] Տե՛ս Օզինյան Ա., Թուրքիայում նորից հայ են սպանել, http:// www . mediamax. am/am/column/12370/

ծպտյալ հայերի գաղտնի գործունեություն և այլն: Այս լույսի ներքո պատահական չպետք է համարել, որ սպառնալիքների հռչակումից հետո ավելի ակտիվացան ծայրահեղական ուժերը: Թուրքական իշխանությունների հայատյաց քաղաքականության ամենավառ դրսևորումներից մեկը դարձավ «Ակօս» թերթի խմբագրապետ Հր. Դինքի սպանությունը, որը հանդգնել էր խոսել Հայոց ցեղասպանության և Թուրքիայի կողմից այդ հանցագործության փաստի ճանաչման անխուսափելիության մասին:

Հր. Դինքը ծայրահեղ ազգայնականների կողմից թիրախավորվեց Թուրքիայի Քրեական օրենսգրքի տխրահռչակ 301-րդ հոդվածի՝ «թրքությանը վիրավորելու» մեղադրանքով դատապարտվելուց հետո: Այդ նույն հոդվածով փորձում էին դատել թուրք հանրահայտ գրող, 2006 թ. Նոբելյան մրցանակի դափնեկիր Օր. Փամուքին՝ 1,5 միլիոն հայ զոհերի մասին խոսելու համար[649]: 2007 թ. գարնանից այդ հոդվածի հիման վրա փակված են համացանցի ավելի քան 6 000 կայքեր[650]: Մինչև սպանվելը Դինքը հասցրեց վիճարկել թուրքական դատարանի վճիռը Եվրոպական դատարանում, որն էլ բավարարել էր նրա հայցը և դատապարտել էր Թուրքիային՝ խոսքի իրավունքը ոտնահարելու և 1915-ի վերաբերյալ արտահայտած մտքերի համար նրան 301-րդ հոդվածով դատապարտելու համար[651]:

«Ակօս»-ում տպագրված Դինքի հոդվածը մեծ աղմուկ բարձրացրեց Թուրքիայում, քանի որ նրանում առաջ էր քաշվում այն տեսակետը, որ Թուրքիայի գլխավոր խորհրդանիշներից մեկը՝ առաջին կին օդաչու և Աթաթուրքի հոգեզավակ Սաբիհա Գյոքչենն, իրականում հայուհի է, որը մեկն էր Հայոց ցեղասպանության ժամանակ որ-

---

649 Տե՛ս Ավագյան Ա., Պանթուրքական երազանք կամ «Գորշ գայլեր», էջ 120:

650 Տե՛ս Турция: новая роль в современном мире, с. 15-16.

651 Տե՛ս ՄԻԵԴ-ը կարդարացնի՞ Ցեղասպանության ժխտման համար դատապարտված Փերինչեքին,, http://news.am/arm/news/91213.html

բացած հայ երեխաներից, և նրա իսկական անունն է Խաթուն Սեբիլջյան: Միլիոնավոր թուրքեր, ովքեր մեծացել էին հայերի հանդեպ ատելության մթնոլորտում և որպես թրքության խորհրդանիշ, պատկերացրել Գյոքչենին, որն, ըստ հոդվածի, պարզվում էր ոչ թե թուրք, այլ ծագումով թշնամի «գյավուր» հայ է, դրանից հետո լուրջ մտորումների ու կասկածների մեջ ընկան[652]: Պատահական չպետք է համարել, որ դրանից հետո Դինքը հրավիրվեց Ստամբուլի նահանգապետարան և փոխնահանգապետի աշխատասենյակում ԱՀԾ-ի բարձրաստիճան պաշտոնյաներ՝ Վելի Քյուչյուքը և Քեմալ Քերինչսիզը, որոնք հետագայում «Էրգենեքոնի» գործով անցնում էին՝ որպես մեղադրյալներ, Դինքին ամոթանք էին տալիս այդ հոդվածի համար: Նրանք Դինքին սպառնացել են, որ այդ ամենը կարող է հասարակության դժգոհությունը հարուցել[653]:

Անշուշտ, միայն այս հոդվածի հրատարակումը չէր, որ դարձավ Դինքի սպանության պատճառ: Թուրքական իշխանությունները, թերևս, համարեցին, որ արդեն երկար են հանդուրժում թուրքական հասարակության շրջանում Հրանտի ակտիվ գործունեությունը և այս ճակատագրական հոդվածը, որը հերթական լուրջ հարվածն էր հասցնում թուրքական կեղծ ու շինծու ինքնությանը, դարձավ թուրքական իշխանությունների «համբերության բաժակի» վերջին կաթիլը, ինչից հետո էլ վերջնականապես կայացվեց նրան չեզոքացնելու որոշումը:

2007 թ. հունվարի 19-ին «Ակօսի» գլխավոր խմբագիր Հրանտ Դինքը սպանվեց հենց խմբագրատան առջև: Սպանությունից անմիջապես հետո ձերբակալվեց 17 ամյա Օգյուն Սամասթը, որը «Գորշ գայլեր» կազմակերպությունից առանձնացած «Մեծ Միություն» կու-

---

[652] Տե՛ս Ավագյան Ա., Պանթուրքական երազանք կամ «Գորշ գայլեր», էջ 122:

[653] Տե՛ս Թուրք գրող. Դինքի մահաբեր հոդվածը, http:// ermenihaber. am/? Lang _ id = 2&news_=4&cur_news=293

սակցության անդամ էր, ով ծրագրել էր նաև Տրապիզոնի կաթոլիկ քահանայի սպանությունը: Նույն կազմակերպության ձերբակալված մեկ այլ անդամ՝ Յասին Հայալը զենքով ու փողով ապահովել էր մարդասպանին[654]:

2011 թ. ամռանը դատարանը մարդասպան Օգյուն Սամասթին դատապարտեց 21 տարվա ազատազրկման: Սամասթի ձերբակալվելուց հետո թուրքական իշխանությունները հայտարարեցին, թե Դինքի սպանությունը «անհատական գործողություն» է եղել, բայց ոչ ոք չհավատաց դրան: Հետագայում, մեղադրվեցիննևս յոթ կասկածյալներ, որոնցից գլխավոր մեղադրյալ Յասին Հայալին դատարանը դատապարտեց ցմահ ազատազրկման, մինչդեռ գործով անցնող մյուս մեղադրյալ՝ ժանդարմերիայի հետախուզության գործակալ Էրհան Թունջելը, որն էլ Յասին Հայալին հրահրել էր կազմակերպել Դինքի սպանությունը, արդարացվեց: Դատավճիռն այն աստիճան անհեթեթ էր, որ նույնիսկ դատախազ Հիքմեթ Ուսթանը բողոքարկեց այն: 30 էջանոց բողոքարկման դիմումում դատախազը պնդել է, որ Էրհան Թունջելը և Յասին Հայալը Տրապիզոնում գործող ահաբեկչական խմբավորման ղեկավարներ են, և դատարանը բավարար ուշադրություն չի դարձրել «Էրգենեքոն» խմբավորման հետ կապ ունենալու հարցին և չի ներգրավել մարդկանց, ովքեր նույնպես պետք է պատասխանատվության ենթարկվեին: Դատախազը ուշադրություն հրավիրեց նաև Տրապիզոնի ժանդարմերիայի վրա, որը մինչ սպանությունը տեղեկություններ է ունեցել այդ խմբավորման մասին, սակայն ոչ իրավական, ոչ էլ ֆիզիկական որևէ հետապնդում չի իրականացրել դրա նկատմամբ[655]: Դատախազը համոզված էր, որ սպանության հետևում կազմակերպություն է կանգնած: Երբ դատա-

---

[654] Տե՛ս Ավագյան Ա., Պանթուրքական երազանք կամ «Գորշ գայլեր», էջ 119:

[655] Տե՛ս Թուրք դատախազը բողոքարկել է Դինքի սպանության գործով դատավճիռը, http://tert.am/am/news/2012/03/30/

վորը հայտարարեց, որ սպանության հետևում կազմակերպություն չկա, դատախազը առարկեց դրա դեմ, նշելով, Տրապիզոնի «Զիրվե» հրատարակչատան ղեկավարների դեմ իրականացված սպանդը կապ ունի Դինքի սպանության հետ, ուստի «Զիրվե»-ի սպանության գործն, իբրև փաստ, պետք է օգտագործվի Դինքի սպանության գործում: Դատախազն արդեն սկսել էր զբաղվել երկու գործերի միջև կապի ուսումնասիրմամբ, երբ անակնկալ կերպով հաղորդվեց, որ Թուրքիայի Դատախազների և դատավորների բարձրագույն խորհրդի որոշմամբ՝ նա հեռացվել է այդ գործից[656]:

Որոշ ժամանակ անց ցմահ ազատազրկման դատապարտված Հայալը դատախազություն բողոք ներկայացրեց, որ բանտապահներն իրեն տանջանքների են ենթարկում, իսկ դատարանում հայտարարեց, որ «խորքային պետությունը» բանտապահներին հանձնարարել է իրեն սպանել, և, եթե իր հետ ինչ-որ բան պատահի, ապա դրա պատասխանատուն պետությունն է[657]:

Դինքի սպանության գործով դատաքննության 5 տարիների ընթացքում բացահայտվեցին սպանության հետ առնչվող 20 մարդկանց անուններ և նրանց դատարան կանչեցին, որպես կասկածյալների ու վկաների, որոնց ցուցմունքներից պարզ դարձավ, որ սպանությունը նախապատրաստվելու մասին տեղյակ են եղել Թուրքիայի Անվտանգության մարմինների աշխատակիցները: Պարզվել և դատական գործին են կցվել Դինքի մարդասպանի և նրան ուղղորդողների հետ սպանությանը նախորդած օրերին և նույն օրը հեռախոսային կապի մեջ եղած 5 պաշտոնյաների անունները, նրանց հեռախոսային խոսակցությունների ձայնագրությունները, ինչը միանգա-

---

[656] Տե՛ս Դինքի սպանության գործով դատախազն անակնկալ կերպով պաշտոնանկ է արվել, http://armenpress.am/arm/news/701482/

[657] Տե՛ս Դինքի սպանության ուղղորդողը պնդել է, թե «խորքային պետությունը» ցանկանում է իրեն սպանել, http://news.am/arm/news/100128.html

մայն նոր բովանդակություն է հաղորդում դատաքննության ու դատավարության գործընթացին: Հրանտ Դինքի սպանությունը պետության խորքերում ծրագրված և իրագործման դրված հանցագործություն է: Հանցագործությունը նախապատրաստվել է որոշակի ժամկետում, որի մեջ մեծ դերակատարություն են ունեցել բանակի գեներալ Վելի Քյուչյուքը, Օքթայ Յըլդըրըմը, Քեմալ Քերինչսիզը և ուրիշներ, որոնք «Էրգենեքոն» քրեական գործով անցնող կասկածյալների մեջ են: Սպանության պատճառը Հրանտ Դինքի՝ ազգությամբ հայ լինելն է եղել: Բացահայտվեց, որ Թուրքիայի ազգային հետախուզական մարմինները, վտանգ տեսնելով Օրհան Փամուքի, Մեհմեդ Ալի Բիրանդի կյանքի ապահովության մեջ, պահպանության տակ են առել նրանց, իսկ այդ նույնը բանը չի արվել Հրանտ Դինքի պարագայում, որովհետև նա ազգությամբ հայ էր[658]:

Դատավարության ընթացքում պարզվեց, որ Տրապիզոնի Անվտանգության մարմինները Դինքի ծրագրվող սպանության վերաբերյալ իրենց ունեցած հետախուզական տվյալները հաղորդել էին Անվտանգության գլխավոր տնօրինությանը, որը դրանից հետո պարտավոր էր միջոցներ ձեռնարկել, սակայն ոչինչ չէր արել և բավարարվել էր՝ Տրապիզոնից ստացված տեղեկությունները Ստամբուլի Անվտանգության տնօրինությանը փոխանցելով[659]: Այդ իսկ պատճառով Դինքի փաստաբանների կողմից դատարան հայց ներկայացվելց՝մեղադրանք առաջադրելով Տրապիզոնի նահանգային ժանդարմերիայի նախկին հրամանատարի, Տրապիզոնի նահանգային ոստիկանության, Ստամբուլի նահանգային ոստիկանության, Թուրքիայի ոստիկանության վարչության հետախուզության վարչության պետերի և մի շարք պետական ծառայողների դեմ: Նույն եզ-

---

[658] Տե՛ս Ֆեթիհե Չեթինը Դինքի սպանությունը թուրքական պետության խորքում ծրագրված և իրագործված հանցագործություն է որակել, 2012/01/17, Armenpress.am

[659] Տե՛ս Հրանտ Դինքին մեկ անգամ էլ սպանեցին, http://akunq.net/am/?p=4259

ռակացությունն է արձանագրված նաև Թուրքիայի խորհրդարանի Մարդու իրավունքների պաշտպանության հանձնաժողովի կազմում 2008 թ. ստեղծված Դինքի սպանության գործով ենթահանձնաժողովի զեկույցում, որում պահանջվում է հետաքննություն սկսել մի շարք պաշտոնյաների դեմ[660]:

Թուրքական իշխանությունների վերաբերմունքը Դինքի սպանության գործի նկատմամբ կասկածելի և տարօրինակ էր թվում: Մի կողմից պաշտոնական շրջանակներում Դինքի սպանությունն ակնարկի ձևով վերագրում են «խորքային պետությանը», բայց, երբ խոսքը վերաբերում է սպանության գործի միացմանը «խորքային պետության» ռազմական թևը հանդիսացող «Էրգենեքոնի» գործին, նրանք իսկույն հետքայլ են կատարում, կարծես, հաստատելու համար Թուրքիայում պետական իշխանության մարմինների սերտաճումը «խորքային պետության» հետ[661]:

Չնայած Դինքի փաստաբանների բոլոր պահանջներին ու բողոքներին «Էրգենեքոնի» գործով անցնող ամբաստանյալների հեռախոսային խոսակցությունների վերծանումներից կտրվեցին Հրանտ Դինքին վերաբերող մասերը, և դրանք չկցվեցին «Էրգենեքոնի» գործին: Անկարայի ոստիկանության աշխատակիցները ջնջել են «Ակօս»-ի խմբագրի սպանությունը կազմակերպելու մեջ մեղադրվող Յասին Հայալի հեռախոսային բոլոր խոսակցությունների ձայնագրությունները, որոնք կցված էին քրեական գործին: Ինքնին հասկանալի է, որ, առանց ղեկավարության անմիջական հրահանգի, ոստի-

---

[660] Տե՛ս Դինքի ընտանիքը հայց է ներկայացրել մի շարք թուրք պաշտոնյաների դեմ, http://news.am/arm/news/93287.html

[661] Տե՛ս Չաքրյան Հ., Գուցե «գյավուրների» հորինած ցեղասպանության սուտն ամեն տարի ապրիլի 24-ին հայ սպանելո՞վ պետք է նշել «Թաքսիմ» հրապարակում, «Ազգ» օրաթերթ, 11.05.2011:

կանները չէին կարող դիմել նման քայլի[662]: Անգամ կտրտված խոսակցություններից հասկացվում է, որ հանցագործության կազմակերպմանը մասնակցություն է ունեցել, օրինակ ԳՇ-ի Հատուկ պատերազմների վարչությունը[663]:

Տեսնելով, որ թուրքական արդարադատությունը չի ցանկանում իսկապես բացահայտել գործը և ջրի երես հանել սպանության իրական կազմակերպիչներին, Դինքի ընտանիքը հանդես եկավ ՄԻԵԴ-ին ուղղված հայցադիմումով, որում բերվում էր այն փաստարկը, թե, չնայած, որ Դինքին ուղղված մահափորձի մասին ժանդարմերիան և ոստիկանությունը նախապես տեղյակ են եղել, սակայն չեն կանխել սպանությունը: Ի պատասխան Դինքի ընտանիքի՝ ՄԻԵԴ-ին ներկայացրած հայցին, Թուրքիայի կառավարության պաշտպանական ճառում ընդունվում էր, որ Դինքն իսկապես դատապարտվել է Թուրքիայի քրեական օրենսգրքի 301-րդ հոդվածով «թրքությանը վիրավորելու» համար: Իսկ ինչ վերաբերում է այն մեղադրանքներին, որ իշխանությունները տեղյակ են եղել «Ակօսի» խմբագրապետի սպանության կազմակերպմանը և նրան ուղղված սպառնալիքներին ու, այնուամենայնիվ, նրան պաշտպանության տակ չեն վերցրել, ապա պատասխանվում է, որ, եթե Դինքին իսկապես սպառնացած լինեին, ապա նա թիկնապահ կպահանջեր, ինչը չի արել[664]: Այս ձևակերպմամբ թուրքական իշխանությունները փաստորեն, իրենց հանցավոր գործողությունների կամ անգործության պատասխանատվությունը փորձում էին բարդել զոհի՝ Դինքի վրա: Մինչդեռ Դինքի սպանության գործում բացահայտվեցին փաստեր, որոնք վկայում էին, որ այդ սպանությունը նախապես ծրագրված էր և, միևնույն է,

---

[662] Տե՛ս Դինքի սպանության գործով կարևորագույն իրեղեն ապացույց է ոչնչացվել, http://www.azatutyun.am/archive/news/20110402/2031/2031.html?id=3544887

[663] Տե՛ս Աքչամ Թ., Ճշմարտությունը թաքցնողը կառավարությանը ենթակա ոստիկանությունն է, http://ermenihaber.am/?lang_id=2&news_=4&cur_news=1060

[664] Տե՛ս Հրանտ Դինքին մեկ անգամ էլ սպանեցին, http://akunq.net/am/?p=4259

կատարվելու էր, եթե անգամ Դինքը պահանջած լիներ և ունենար թիկնապահներ: Ի վերջո, նրան թիկնապահ տրամադրելու էին թուրքական Անվտանգության այն մարմինները, որոնք, ինչպես պարզվեց դատաքննության ժամանակ, քաջատեղյակ էին նախապատրաստված սպանության մասին և առնվազն չեն կանխարգելել այն, եթե ոչ հենց իրենք ներգրավված չեն եղել դրա կազմակերպման մեջ:

Թուրքական կառավարության պատասխան ճառում նշվում էր նաև, որ Դինքի ընտանիքը չի տուժել, հետևաբար, նրա բարոյական վնասի հատուցման խնդիր առհասարակ չկա, մինչդեռ դատական գործից պարզվեց, որ բազմաթիվ թերթերում, ինչպես նաև համացանցում հրապարակվել էին Հրանտ Դինքին վարկաբեկող նյութեր, սպանությունից հետո նրա համակարգչում հայտնաբերվել էր իր հասցեին հայհոյանքներ ու սպառնալիքներ պարունակող մի ամբողջ թղթապանակ, որոնցում նրան սպառնում էին, որ թուրքական արյունը վարկաբեկելու համար նա իր կյանքով է պատասխան տալու: Քարոզչական նման գրոհի պայմաններում ծայրահեղ ազգայնական տրամադրություններով աչքի ընկնող Թուրքիայի նման երկրում, փաստորեն, թիրախի էին վերածվել ոչ միայն Դինքը, այլև՝ նրա մերձավորները:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը մեղավոր ճանաչեց Թուրքիային Հրանտ Դինքի սպանությունը չկանխելու և սպանության բացահայտման ուղղությամբ հետաքննությունը նորմալ չկազմակերպելու համար: Դատարանը բավարարեց Թուրքիայի դեմ Դինքի ընտանիքի ներկայացրած հայցը և Անկարայից պահանջեց Դինքի ընտանիքին վճարել 133565 եվրո փոխհատուցում՝ նեռառյալ դատական ծախսերը[665]: Եվրոպական դատարանի 2010 թ. դեկտեմբերի 14-ին կայացրած թիվ vd (2668/07) որոշման մեջ թուր-

[665] Տե՛ս Անզարա Տինքի ընտանիքին փոխհատուցում չվճարելով կը խայտառակուի, http://asbarez.com/arm/106700/

քական իշխանություններից պահանջվում էր Դինքի ապրելու իրավունքը պաշտպանելու և սպանությունը կանխելու մեջ թերացած իրավասուների նկատմամբ հետևողական հետաքննություն սկսել: Այս կապակցությամբ Թուրքիայի նախագահ Ա. Գյուլը պետական Վերահսկիչ պալատին հրահանգեց Դինքի ընտանիքի և շահագրգիռ մյուս կողմերի պահանջները հաշվի առնելով՝ գործի առնչությամբ ձեռք բերել նոր տեղեկություններ կամ փաստաթղթեր, հետաքննել սպանության հետաքննության գործողությունների՝ օրենքին համապատասխանելու հարցը, ինչպես նաև Եվրոդատարանի որոշումներից ելնելով, իրականացնել գործող օրենսդրության ընդհանուր գնահատում[666]: Եվրոպական դատարանի որոշումից հետո սկսվեց նոր հետաքննություն, որի արդյունքում ինը հնարավոր մեղավորների թվում նշվում էր նաև Ստամբուլի նախկին նահանգապետ Գյուլերի անունը, ում անվան հետ էլ կապվում էր նաև Դինքի սպանության վայրի մոտակայքում տեղադրված անվտանգության տեսախցիկների տեսագրությունների անհետացումը, սակայն իշխանությունների կողմից նրա հետագա դատաքննությունը չարտոնվեց[667]:

Առաջին դատավարությունից հետո թուրքական մամուլի էջերում տեղի ունեցավ կարևոր տեղեկության մի արտահոսք, երբ հրապարակվեց խորհրդարանի հեղաշրջումների ուսումնասիրությունների հանձնաժողովին ԱՀԾ-ի կողմից ուղարկված փաստաթղթերից ԱՀԾ նախկին խորհրդական Էմրե Թաներին հասցեագրված գաղտնի մի նամակ, որում պնդվում էր, թե Դինքի և միսիոներների սպանությունների հետևում կանգնած է Թուրքիայի զինված ուժերում գործող «Մարտավարական զորահավաքի խումբ» կոչվող գաղտնի

---

666 Տե՛ս Նախագահ Ա. Գյուլը պարզաբանեց, որ «Ակօս» շաբաթաթերթի գլխավոր խմբագիր Հրանտ Դինքի սպանության գործը հանձնարարել է Պետական վերահսկիչ պալատին, http://www.tccb.gov.tr/aciklamalar/252/78794/basin-aciklamasi.html

667 Տե՛ս Օզինյան Ա., Աջակցի՛ր Դինքի սպանությանը և դարձի՛ր նախարար, http://civilnet.am

կառույցը, որն իր տրամադրության տակ ունի 2500 գրոհայիններ, երկրի տարբեր վայրերում թաքնված ռազմամթերքի պահեստներ, որտեղից էլ զինվում են այդ գրոհայինները: Նամակում նշվում էին Զորահավաքի վարչության գործունեության 3 գլխավոր ուղղությունները՝ 1. Տրապիզոնը, որտեղ ազգայնական զգացումները գրգռելու միջոցով ծրագրվեցին և իրագործվեցին քահանաների և Դինքի սպանությունները; 2. Հաթայը, որտեղ ծրագրվում է ասորիների դեմ գործողություններ սկսել; 3. Մալաթիա, որտեղ աշխատանք է տարվում մեծ թիվ կազմող իսլամական կրոնական միաբանությունները ահաբեկչական կազմակերպության վերածելու ուղղությամբ[668]:

Դինքի փաստաբան Չեթինը դեռ «Էրգենեքոն»-ի գործի բացահայտվելուց հետո էր կասկած հայտնում, որ հայ գործչի սպանության ետևում կանգնած է «Էրգենեքոն» ընդհատակյա ցանցից շատ ավելի լուրջ կառույց: Սակայն թուրքական մամուլում տեղեկատվական արտահոսքի նյութը դատավարության ընթացքում ձեռք բերված ապացույցների ու «Էրգենեքոնի» գործին «Դինքի գործը» միացնելու պահանջներին թուրքական իշխանությունների համառ դիմադրության փաստի համադրության արդյունքում այդ կասկածները լիովին հաստատվեցին: Իր հրատարակած «Ամաչում եմ. Հրանտ Դինքի սպանության դատավարությունը» վերնագրով գրքում Չեթինն արդեն հիմնավոր կերպով ապացուցեց, որ Դինքի սպանությունը կազմակերպվել է ոչ թե քեմալականների և զինվորականների կողմից ստեղծված «Էրգենեքոն»-ի, այլ այն գերազանցող հսկա հանցագործ կազմակերպության կողմից, որի արմատները տանում են դեպի թուրքական պետության ամենավերին իշխանական մարմինները: Փաստաբանի խոսքով, Դինքի սպանությունը լուրջ խնդիրներ առաջացրեց թուրքական իշխանության ներսում, քանի որ ոստիկա-

---

668 Տե՛ս Թուրքիայի Ազգային հետախուզական կազմակերպությանը (MİT) հղված ուշագրավ մի նամակ http://akunq.net/am/?p=27928

նության, ռազմական ոստիկանության և պետական բարձրաստիճան բյուրոկրատների միջև ներքին պայքար սկսվեց. նրանք փորձում էին իրար մեղադրել Դինքի սպանության մեջ[669]:

Տեղեկատվական այս արտահոսքը շրջադարձային եղավ Դինքի սպանության գործով դատավարության համար: Տեղեկատվության հեղինակը նամակ գրեց դատախազություն՝ խոստանալով իր և իր ընտանիքի անվտանգությունն ապահովելու դեպքում նոր մանրամասներ հայտնել «Դինքի գործի» հետ կապված: Դատախազի կարգադրությամբ վկայի ընտանիքին հսկելու համար հատուկ ոստիկանական խումբ նշանակվեց, իսկ վկային տեղափոխեցին Ստամբուլի խիստ վերահսկողության բանտ[670]: Անվտանգության երաշխիքներ ստանալուց հետո, «Բարը շ» ծածկանվամբ գաղտնի վկան Դինքի սպանության գործը քննող Ստամբուլի դատախազությանն ուղղված նամակում խոստովանեց, որ ինքն ու Էրհան Թունջելը, որը դատարանի կողմից մինչ այդ անմեղ էր ճանաչվել և ազատ արձակվել դատարանի դահլիճից, Թուրքիայի զինված ուժերի հատուկ ռազմական վարչության կազմում գործող գաղտնի կազմավորման անդամներ են, զբաղվում են Թուրքիայում բնակվող հայտնի ոչ մահմեդականների «վերացման» աշխատանքներով: Վկան, ում անունը չի բացահայտվում, նաև նշում էր, որ Դինքի սպանության մասին տեղյակ են եղել Թուրքիայի Զինված ուժերում, և դրա վերաբերյալ տեղեկությունները ներառված են եղել «Վանդակ» գործողության ծրագրում: Ծրագիրը նպատակ է ունեցել Տրապիզոնում քահանայի սպանության, Մալաթիայի «Զիրվե» հրատարակչատան դեմ հարձակման, այնուհետև Դինքի սպանության միջոցով թիրախի տակ առնել Թուր-

---

669 Տե՛ս Ստամբոլցյան Գ., Դինքի գործը՝ Թուրքիայում ներիշխանական պայքարի պատճառ, http://www.azatutyun.am/content/article/24879237.html

670 Տե՛ս Դինքի գործով գաղտնի վկային տեղափոխել են Ստամբուլի խիստ վերահսկողության բանտ, http://armenpress.am/arm/news/712543/

քիայում բնակվող ոչ մահմեդականներին, սակայն իշխող ԱԶԿ-ի հսկողության տակ գտնվող լրատվամիջոցների քարոզչության արդյունքում կատարվածը որակել՝ որպես «Էրգենեքոն» կազմակերպության ծրագրած գործողություն[671]: Վկան հայտարարել էր, որ սպանությունն իրագործած Օգյուն Սամասթը կապ է ունեցել ոչ միայն Տրապիզոնի և Ստամբուլի ժանդարմերիաների հրամանատարությունների, այլև՝ Գիրեսունի ժանդարմերայի հետ: Վերջինիս աշխատակիցները Դինքին սպանելուց հետո պետք է կազմակերպեին Սամասթի փախուստը Արդվինով դեպի Ադրբեջան, սակայն չեն հասրել դա անել[672]:

Այս նոր հանգամանքների ի հայտ գալուց հետո Դինքի ընտանիքի փաստաբանները դիմեցին Անկարայի հանրապետական գլխավոր դատախազություն՝ պահանջելով իրենց ներկայացնել Թուրքիայի Զինված ուժերի Զորահավաքի վարչության կառույցում անցկացված հետաքննության ժամանակ հայտնի դարձած՝ Դինքի մահափորձի հետ կապված փաստաթղթերը: Թեև 2012 թ. դատարանի վճռում նշվել էր, որ Դինքի սպանությունը չի իրականացվել «հանցավոր խմբավորման» կողմից, իսկ փաստաբանները պնդում էին, որ սպանությունը պետք է քննվի՝ որպես «ահաբեկչական խմբավորման կողմից կատարված» հանցագործություն, այդուհանդերձ, Եվրոպական դատարանի կայացրած որոշման և նոր հանգամանքների ի հայտ գալուց հետո թուրքական դատարանը հարկադրված վերսկսեց Դինքի սպանության գործի քննությունը՝ «հանցավոր խմբավորման» կողմից Դինքի սպանության իրականացման հնարավորությունը պարզելու նպատակով: Թեև մեղադրող կողմը

---

[671] Տե՛ս Հրանտ Դինքի սպանության հետքերը տանում են Թուրքիայի զինված ուժեր, http://armenpress.am/arm/news/708560/

[672] Տե՛ս Դինքի գործով գաղտնի վկային տեղափոխել են Ստամբուլի խիստ վերահսկողության բանտ, http://armenpress.am/arm/news/712543/

պահանջեց ձերբակալել մինչ այդ անմեղ ճանաչված և ազատության մեջ գտնվող Էրհան Թունջելին, և դատարանը որոշում կայացրեց նրա դեմ որպես խափանման միջոց, ընտրել կալանքը, սակայն բավականին երկար ժամանակ նա չէր կալանավորվում իրավապահ մարմինների կողմից և նույնիսկ չէր մասնակցում դատական նիստերին:

Միայն որոշ ժամանակ անց Թունջելը դատարանին գրավոր ձևով տեղեկացրեց, որ կներկայանա իրավապահներին այն ժամանակ, երբ Եվրոպական դատարան կուղարկի իր փաստաթղթերը: Միաժամանակ, նա հայտնում էր, որ կարդացել է Դինքի փաստաբան Չեթինի գիրքը և համաձայն է այն եզրահանգման հետ, որ Դինքի սպանությունը կազմակերպվել է պետության մեջ գործող «Էրգենեքոնից» ավելի բարձր կառույցի կողմից, որն էլ մշտապես կանխում է այդ հանցագործության բացահայտումը և, որ ինքն ընդամենն այդ կառույցի մի փոքրիկ մասնիկն է: Նա պնդում էր, որ իր նկատմամբ դատարանի արձակած կալանման որոշումն անարդար է, քանի որ այդ դեպքում մյուս կասկածյալները նույնպես պետք է կալանավորվեն[673]: Ձերբակալվելուց հետո Թունջելը նամակ է ուղարկել ոստիկանության Հետախուզության վարչության պետ Էնգին Դինչին, սպառնալով, որ, եթե դատական հաջորդ նիստի ընթացքում իրեն չազատեն և բարոյական ու նյութական փոխհատուցում չտրամադրեն, ապա վկայություն կտա «Էրգենեքոն» խմբավորումից բարձր կանգնած կառույցի մասին[674]: Հատկանշական է, որ Դինքի սպանությունից հետո Դինչը բացատրություն է տվել Թուրքիայի խորհրդարանի Մարդու իրավունքների հանձնաժողովին, ասելով, որ նա-

[673] Տես Դինքի սպանության գործով սենսացիոն հայտարարություններ են հնչել, http://news.am/arm/news/177322.html

[674] Տես Դինքի գործով կասկածյալը թուրք պաշտոնյային սպառնացել է ազատ չարձակվելու դեպքում նոր բացահայտումներ անել, http://www.tert.am/am/news/2013/12/24/

խապատրաստվող սպանության մասին ծանուցումը ստանալուց հետո, իբր, իրազեկել է Ստամբուլի հետախուզական վարչությանը, միաժամանակ հատուկ խոսակցություն է ունեցել Թունջելի հետ, որպեսզի վերջինս սպանությունից հետո կանգնելու հարցում համոզի Հայալին: Իրականում, Տրապիզոնի ոստիկանության հետախուզական վարչության նախկին բաժնի պետ և հետախուզության վարչության նոր պետ Էնգին Դինչը հենց ինքն էր Թունջելին հավաքագրել որպես գործակալ՝ Դինքի սպանությունը ծրագրելու գործում: Նա, փաստորեն, կեղծ վկայություն էր տվել թուրքական խորհրդարանի հանձնաժողովի առջև, ինչն էլ լիովին գոհացրել էր թուրք պատգամավորներին[675]:

Այս զարգացումների լույսի ներքո ամենևին էլ զարմանալի չի թվում, որ Դինքի սպանության մեջ մեղադրվող, ինչպես նաև դատավարության ընթացքում այդ գործում թուրքական պետության պատասխանատվությունը քողարկող պաշտոնյաները ոչ միայն պատասխանատվության չենթարկվեցին, այլև՝ հետագայում նշանակվեցին ավելի բարձր պաշտոնների: Այսպես, Մուամեր Գյուլերը, որը Դինքի սպանության ժամանակ Ստամբուլի նահանգապետն էր, դարձավ Թուրքիայի Ներքին գործերի նախարար, այնուհետև՝ ԱԶԿ-ի ցուցակով դարձավ պատգամավոր, Ստամբուլի ոստիկանապետ Ջելալեթին Ջերրահը, սպանության կանխման կամ դրա բացահայտման ուղղությամբ ոչինչ չձեռնարկելով, նշանակվեց Օսմանիեի նահանգապետ, Տրապիզոնի ոստիկապետի հետախուզության գծով տեղակալ Շամազ Դեմիրթաշը դարձավ Տրապիզոնի ոստիկանապետ, Դինքի դեմ 301-րդ հոդվածի հատկանիշներով վճիռ կայացրած Վճռաբեկ դատարանի դատավոր Նիհաթ Օմերօղլուն Թուրքիայի

---

[675] Տե՛ս Չաքրյան Հ., Վերափոխվող Թուրքիայում այլևս երբեք չի բացահայտվի Դինքի սպանությունը, http://azg.am/AM/2013050204

խորհրդարանի կողմից ընտրվեց այդ երկրի Մարդու իրավունքների պաշտպան և այս ցանկը կարելի է երկար շարունակել[676]:

Դինքի սպանությունից հետո, թեև միջազգային հանրության ուշադրությունը սևեռվեց Թուրքիայի հայերի խնդիրների վրա և որոշ փոփոխություններ նկատվեցին նաև թուրքական հասարակության մեջ, այդուհանդերձ, այդ երկրում հայերի նկատմամբ բռնությունները չդադարեցին: Դինքի սպանությունից անմիջապես հետո հարձակման ենթարկվեց Պոլսի Հայոց պատրիարքարանի հարևանությամբ գործող «Սբ. Աստվածածին» մայր եկեղեցին: Պատարագի ժամանակ հանցագործը ինքնաձիգից կրակահերթ արձակեց, և միայն պատահականության շնորհիվ միջադեպը տեղի ունեցավ առանց զոհերի:

2008 թ. մայիսմեկյան ավանդական ցույցերը հայկական թաղամասերում ուղեկցվեցին «գորշ գայլերի» խորհրդանշանների ցուցադրմամբ, հայերի բնակարանների պատերին փակցվեցին բազմագույն տարբերանշաններ, հայկական հիմնարկությունների հասցեներով ստացվեցին բազմաթիվ սպառնալից նամակներ: Մարդասպան Սամասթի խորհրդանշական սպիտակ թասակներով բազմաթիվ երիտասարդներ հայտնվեցին հայկական թաղամասերում՝ սարսափի մատնելով բնակչությանը: Նմանատիպ իրադարձություններ տեղի ունեցան նաև 2009 և 2010 թթ.[677]:

Թուրքական բանակում հայերի նկատմամբ կան և՛ ճնշումների, և՛ խտրականության դեպքեր, սակայն դրանց մասին չեն գրում: Եթե զորամասի հրամանատարը արտահայտված վատ վերաբերմունք ունի հայերի նկատմամբ, ապա տվյալ զորամասում ազգութ-

---

[676] Տե՛ս Այո, Հրանտ, թուրքականությունը վարկաբեկվեց. կարդացեք եւ դուք որոշեք, «Թարաֆ», http://news.am/arm/news/131497.html

[677] Տե՛ս Օզինյան Ա., Թուրքիայում նորից հայ են սպանել, http:// www. mediamax. Am / am/column/12370/

յամբ հայ զինծառայողի համար ծառայությունը վերածվում է դժոխքի: Երբ ՔԱԿ-ը թուրք զինվոր է սպանում, ապա սկսվում են խոսակցությունները, թե ՔԱԿ-ի զինյալները հայ դավաճաններն են: Այդ խոսակցություններն արագ տարածվում են զինվորների շրջանում, և տվյալ զորամասում ծառայող հայի վիճակը դառնում է անտանելի: Թուրքիայի բանակում ոչ մի կերպ թույլ չեն տալիս հայերին սպայական աստիճաններ ստանալ[678]:

Նկատի ունենալով, որ թուրքական բանակում ծառայությունը հայ երիտասարդի կյանքում ամենադժվար փորձություններից է լինելու, հայ ծնողներն իրենց տղա երեխաներին տալիս են թուրքական անուններ կամ երկրորդ թուրքական անուն: Հազվադեպ չեն նաև այն հայ ծնողները, որոնք մանուկ հասակում նաև թլպատում են իրենց երեխաներին՝ պատճառաբանելով և արդարանալով, իբր, առողջապահական կամ հիգիենիկ նկատառումներով[679]:

Ստամբուլի տեխնիկական համալսարանի Գեղեցիկ արվեստների ֆակուլետի խեցեգործության բաժնում ուսանած պոլսահայ Սևակ Բալըքչըն՝ որպես Թուրքիայի քաղաքացի զորակոչվեց պարտադիր զինծառայության և ծառայում էր Բաթման նահանգի ժանդարմերիայի զորամասերից մեկում: Նա նշանված էր հայուհու հետ և պատրաստվում էր ծառայությունն ավարտելուց հետո վերադառնալ Ստամբուլ ու ամուսնանալ: Սակայն զորացրվելուց 23 օր առաջ Սևակը՝ Կարապետ և Անի Բալըքչըների միակ զավակը, 2011 թ. ապրիլի 24-ին զորամասում սպանվեց թուրք զինծառայողի կողմից:

---

[678] Տե՛ս Պետրոսյան Գ., Տղաս, դու հայ ես, չես կարող սպա դառնալ. հայազգի զինծառայողները թուրքական բանակում, 06 հունիսի 2012, HayNews.am

[679] Տե՛ս Օզինյան Ա., Թուրքիայում նորից հայ են սպանել, http:// www. mediamax.am / am/column/12370/

Պաշտոնական վարկածի համաձայն, Սևակի սպանությունը «դժբախտ պատահարի» արդյունք էր, ժանդարմերիայի հրամանատարությունը հայտարարել է, որ Սևակը սպանվել է ծառայակից ընկերոջ հետ կատակ անելու ժամանակ, իբր, պատահաբար արձակված զնդակից: Սևակի ծնողները, սակայն, պնդում են, որ իրենց որդուն հենց Մեծ եղեռնի զոհերի հիշատակի օրը՝ ապրիլի 24-ին, սպանելու հանգամանքը չէր կարող պատահականություն լինել և, որ իրենց որդին ազգայնականության հողի վրա սպանվել է միտումնավոր՝ հայ լինելու համար: Մարդասպանի համար դատախազը 9 տարվա ազատազրկում է պահանջել, սակայն դատարանը հենց առաջին դատական նիստին ազատ է արձակել մարդասպանին՝ նշելով, թե նա փախչելու առիթ չունի:

Դատաքննության ընթացքում պարզվել է, որ զորամասում Սևակը հրամանատարության և թուրք ծառայակիցների կողմից մշտապես եղել է ճնշումների տակ: Նրա հարսնացուն պատմել էր, որ զորամասում 50 լիրա գումարի կորստի պատճառով Սևակն իր հրամանատարի կողմից ծեծի է ենթարկվել, իսկ երբ դեպքից հետո փորձել է հրամանատարի դեմ բողոք ներկայացրել, նրան սպառնացել են և ստիպել, որ դիմումը հետ վերցնի[680]: Դատավարության ժամանակ սպանության ականատես զինվորներից մեկն էլ, ով նախկինում գրավոր ցուցմունք էր տվել, որ չի տեսել, թե ինչպես է դեպքը տեղի ունեցել, բանավոր հարցաքննության ժամանակ խոստովանել է, որ սպանողը բազմիցս սպառնացել է Սևակին, իսկ սպանության օրը տեսել է, թե ինչպես է ծառայակիցը լիցքավորել զենքը և, այն ուղղելով Սևակի կողմը, կրակել[681]:

---

[680] Տե՛ս Թուրքիայում սպանված հայազգի զինծառայողը սպանվել է դիմահար կրակոցից. Փորձաքննություն, http://tert.am/am/news/2012/04/07/sevak-shahin/

[681] Տե՛ս Քվանչը զենքն ուղղեց հայազգի Սևակի վրա և կրակեց. թուրք զինվորի սկանդալային խոստովանությունը, http://news.am/arm/news/90865.html

Սևակի սպանությունից հետո հայկական ծագում ունեցող ընտանիքների երիտասարդները ավելի ու ավելի շատ են փորձում բարձագույն կրթական հաստատություն դիմել՝ զինվորական ծառայությունը հետաձգելու կամ ժամկետը կրճատելու համար: Թուրքական օրենքի համաձայն, ծառայում են արական սեռի 20-42 տարեկան բոլոր ներկայացուցիչները՝ 15 ամիս, բարձագույն կրթություն ունեցողները՝ 12 ամիս, որպես պահեստազորի սպա, կամ 6 ամիս՝ որպես շարքային[682]:

Ինչպես Դինքի, այնպես էլ Սևակի գործով դատավարությունն արհեստականորեն երկարաձգվում է, իսկ մեղավորն իր արժանի պատիժը դեռ չի ստանում[683]: Սևակի սպանության գործով հերթական դատավարությունից առաջ Ստամբուլում հավաքվել էին խնդրով անհանգստացած մի շարք մտավորականներ, լրագրողներ և քաղաքական գործիչներ: Դատավարությանը հետևելու և արդարության հասնելու համար հավաքվածները հայտարարեցին, որ ստեղծում են «Արդարություն» նախաձեռնությունը: Հավաքին մասնակցել են Հրանտ Դինքի կինը, որդին, Դինքի մի շարք ընկերներ և այլք[684]:

2011 թ. հուլիսի 30-ի երեկոյան Բոդրումի արձակուրդային թաղամասերից մեկի առանձնատանը դաժանաբար սպանվեց նախկինում ստամբուլահայ, ամերիկաբնակ 74-ամյա Արման Ազաքը: Այդ օրը Արման Ազաքը հասցրել է զանգահարել ոստիկանության Բոդրումի բաժին և հայտնել, որ իրեն դանակահարել են: Ոստիկանները

---

682 Տե՛ս Բունիաթյան Հ., Փաստաբանները պահանջում են կալանավորել հայազգի ծառայակցին սպանած թուրք զինվորին, http://www. azatutyun. Am / content / article / 24468090.html

683 Տե՛ս Պետրոսյան Գ., Սևակ Բալըքչրի սպանությունը, 06 հունիսի 2012, HayNews.am

684 Տե՛ս Թուրքիայում սպանված հայազգի զինվորի համար նախաձեռնություն է ստեղծվել, http://news.am/arm/news/92913.html

և շտապօգնության ծառայության աշխատակիցներն անմիջապես մեկնել են դեպքի վայր և առանձնատան մեջ հայտնաբերել նրա արյունլվա մարմինը: Դատաբժշկական փորձաքննությամբ պարզվեց, որ նա մահակով դաժանաբար ծեծի է ենթարկվել, ինչի հետևանքով ստացել է ոսկորների բազմաթիվ կոտրվածքներ, ինչից հետո ավելի քան 30 տեղից դանակահարվել: Ոստիկանությունը պարզել է, որ սպանվածի գրպաններում և տանը եղած խոշոր գումարներն ու թանկարժեք իրերը չեն անհետացել, ինչը հիմք է տալիս պնդելու, որ առանձնակի դաժանությամբ այդ սպանությունը կատարվել է ազգայնականության հողի վրա՝ Արման Ազաքի՝ հայ լինելու համար[685]:

Թուրքիայի հայազգի քրիստոնյա քաղաքացի Էլիզաբեթ Մարիա Բըչաքչըն իր ընտանիքով շուրջ 10 տարի ապրում էր Մարմարիսում: 2009 թ. քաղաքի շուկայում բացել էին հուշանվերների իրենց կրպակը, որտեղ արծաթյա զարդեր էին վաճառում: Հարևանությամբ նմանատիպ խանութ էր բացել նաև մի թուրք կին վաճառական, որը սկսել էր անհանգստացել իր հայ հարևանի հաճախորդներին հաճախորդներին: Երբ փորձել են հասկանալ, թե ինչն է նման վարքագծի պատճառը, թուրք կինը անպատվել է շուկայի մեջտեղում բղավելով՝ «Անպատիվ հայ շներ» և շուկայում եղած մահմեդականներին սկսել է հրահրել հայերի դեմ: Քանի որ շուկայում հայկական ընտանիք դեմ ստեղծվել է անբարենպաստ մթնոլորտ, նա այլևս չի կարողացել առևտուր անել և ստիպված է եղել փակել խանութը՝ զրկվելով ապրուստի միջոցներից: Հարցը լուծելու խնդրանքով Բըչաքչը ընտանիքը ստիպված է եղել դիմել ոստիկանություն, սակայն պատասխան են ստացել, որ գործում ներկայացված հանգամանքները բավարար չեն դատական հետապնդում սկսելու համար: Ի վերջո, Էլիզաբեթ Բըչաքչըն ազգային խտրականության վերաբերյալ բողոքով դիմել է

---

[685] Տե՛ս Պոտրումի մեջ դաժանօրէն սպաննուեցաւ նախկին իսթանպուլահայ 74-ամյայ Արման Ազաք, «Մարմարա», Ստամբուլ, 08.08.2011:

մեջլիսի խնդրագրերի հանձնաժողովին, հայտնելով, որ վտանգի է ենթարկված իր և ընտանիքի կյանքի ու գույքի ապահովությունը[686]: Պետական մարմիններից որևէ աջակցություն չստանալով և անընդհատ սպառնալիքների ենթարկվելով հարևանների և մրցակիցների կողմից՝ 2011 թ. ամռանը Էլիզաբեթ Բրչաքչրի ընտանիքը հարկադրված եղավ հեռանալ Թուրքիայից:

2011 թ. հոկտեմբերին մի հայ կին Ստամբուլի տաքսիում բռնության ենթարկվեց տաքսու վարորդի կողմից՝ միայն իր հայկական առոգանության համար: Նրան «քրիստոնյա գյավուր» անվանելով՝ տաքսիստը հարձակվել էր կնոջ վրա և, մազերից բռնելով ու ապտակելով, դուրս նետել մեքենայից: Օրը ցերեկով Ստամբուլի մարդաշատ վայրում տեղի ունեցած հանցագործության մեղավորը դեռ չի հայտնաբերվել, չնայած, հայտնի են և՛ մեքենայի պատկանելությունը, և՛ տաքսի ծառայությունը[687]:

2012 թ. նոյեմբեր-դեկտեմբերից սկսած, Ստամբուլի՝ հայերով բնակեցված Սամաթիա թաղամասում 4 հարձակում է տեղի ունեցել տարեց հայ կանանց դեմ: Բոլոր հարձակումներն ունեն նույն ձեռագիրը: Նոյեմբերի 28-ին Սամաթիայում հարձակման ենթարկվեց ազգությամբ հայ 87-ամյա Թուրֆանդա Աշրքը, ինչի հետևանքով նա կորցրեց մի աչքը: Իսկ դեկտեմբերի 28-ին նույն թաղամասի սեփական բնակարանում դաժանորեն սպանվեց 84-ամյա հայուհի Մարիցա Քյուչուքը: Մարդասպանը սպանությունից առաջ նրան կտտանքների էր ենթարկել և կրծքի վրա դանակով խաչ փորագրել: Սամաթիայում, 2013 թ. հունվարի 6-ին երեք անձինք բռնությամբ փորձեցին մեքենա նստեցնել ևս մեկ տարեց հայ կնոջ, սակայն, կինը դիմադրեց

---

686 Տե՛ս Քարաբաղլը Յու., Թուրքիայի ազգային մեծ ժողովը էթնիկական խտրականության վերաբերյալ բողոք է ստացել Մարմարիսից, http://akunq. Net / am / ?p=23998

687 Տե՛ս Օզինյան Ա., Թուրքիայում նորից հայ են սպանել, http://www. mediamax.am /am/column/12370/

և կարողացավ ապաստանել եկեղեցում: Հունվարի 22-ին Սամաթիայում հարձակման ենթարկվեց 80-ամյա Սուլթան Այքարը: Հարձակվողը եղել էր սև հագնված և դիմակով: Ականատեսները պնդում են, որ փողոցի անկյունում երկու հոգի հետևել էին հարձակվողի գործողություններին: Կնոջ բղավոցներից հարևանները դուրս էին թափել, իսկ հարձակվողը փախուստի էր դիմել: Քաշքշոցի ժամանակ ակնոցի ապակին վնասել էր հայ կնոջ աչքը, ինչի հետևանքով նրան վիրահատվեցին[688]:

Ստամբուլի Սամաթիա թաղամասում ապրող տարեց հայ կանանց դեմ հարձակումների հետ կապված հարցը հերթական անգամ բարձրացվեց Թուրքիայի Ազգային մեծ ժողովում: Թուրքիայի խորհրդարանի ընդդիմադիր ԺՀԿ-ի երկու պատգամավորներ գրավոր հարցումներ ուղղեցին Թուրքիայի վարչապետին՝ պահանջելով պարզաբանել հայ կանանց դեմ տեղի ունեցած պարբերական հարձակումները, իսկ նրանցից մեկն էլ դիմում-պահանջ ներկայացրեց խորհրդարանի Մարդու իրավունքների հանձնաժողով՝ պահանջելով հատուկ հանձնաժողով ստեղծել այդ հարձակումների կազմակերիչներին գտնելու համար, շեշտելով, որ մեծ է հավանականությունը, որ հարձակումներն իրականացվել են կրոնական ու ազգային ատելության հողի վրա[689]: Անշուշտ, Քեմալի հետևորդներն այս հարցը խորհրդարանում բարձրացնելով՝ ձևացնում են, թե մտահոգված են տարեց հայ կանանց նկատմամբ կատարված հանցագործությունների բացահայտմամբ կամ նրանց անվտանգության ապահովման հարցերով: Իրականում նրանք այդ հարցն ընդամենը շահար-

---

[688] Տե՛ս Չաքրյան Հ., Վերափոխվող Թուրքիայում այլևս երբեք չի բացահայտվի Դինքի սպանությունը, http://azg.am/AM/2013050204

[689] Տե՛ս Թուրք պատգամավորը պահանջում է հայ կանանց դեմ հարձակումների ուսումնասիրման համար հանձնաժողով ստեղծել, http://news.am/ arm/ news / 140008.html

կում են իշխող ԱԶԿ-ին քննադատելու և Ներքին գործերի նախարարության անգործությունն ի ցույց դնելու նպատակով[690]:

Մարդու իրավունքների միության Ստամբուլի մասնաճյուղը այդ հարձակումները որակել է ռասիստական՝ դատապարտելով անգործության համար հարձակումները 3 ամիս շարունակ շրջանցող իրավապահ մարմիններին:

2013 թ. հունվարի 26-ին, ի պաշտպանություն Սամաթիա թաղամասում հարձակման ենթարկված հայ տարեց կանանց, Ստամբուլի Ֆեմինիստական միության անդամ կանայք քայլերթ կազմակերպեցին: Նրանք հասան սպանված տարեց հայուհի Մարիցա Քյուչուքի տան մոտ և ծաղիկներ դրեցին այնտեղ: Հավաքի մասնակից մոտ 200 կանայք «Հայ կանայք միայնակ չեն» պաստառ էին պարզել և հայերենով ու թուրքերենով մամուլի ասուլիս տվեցին[691]:

Ակնհայտ է, որ, եթե Դինքի սպանությունը լիարժեք բացահայտվեր, գուցե հնարավոր լիներ կանխել ժամկետային զինծառայող Սևակ Շահինի սպանությունը՝ զորամասում 2011թ. ապրիլի 24-ին, ինչպես նաև Ստամբուլի հայաշատ թաղամասերում հայ կանանց, իսկ արվարձաններում՝ քրիստոնեական եկեղեցիների վրա հարձակումները: Սակայն սա Հայոց ցեղասպանության հարցում Թուրքիայի ժխտողականության յուրատեսակ արձագանքն է, հետևաբար, սպանությունը պետականորեն կազմակերպվածություն է ենթադրում: Իսկ այդ կարգի սպանությունները, որպես կանոն, չեն բացահայտվում, ինչպես Հրանտ Դինքի պարագայում էր:

---

690 Տե՛ս Չաքրյան Հ., Սամաթիայի հարձակումները Մեծ եղեռնի 100-րդ տարելիցի յուրահատուկ պատրաստությունն են, http://azg.am/AM/2013013002

691 Տե՛ս Հայ կանայք միայնակ չեն. թուրք ֆեմինիստներն ընդդեմ Սամաթիայում հայ կանանց դեմ բռնարարքների http://tert.am/am/news/2013/02/04/turk-feminists/

3.2. Թուրքիական իշխանությունների կողմից Հայոց ցեղասպանության հարցի արդի ընկալումները

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ Թուրքիայի քաղաքական գործիչների և «գիտնականների» կողմից սկսեցին տարվել նախապատրաստական աշխատանքներ: Թուրքական կողմը պետական մակարդակով սկսել է նախապատրաստվել դեռ տարիներ առաջ, երբ 2001 թ. մայիսի 25-ին Թուրքիայի կառավարության շրջաբերականով հիմնվեց, այսպես կոչված, «Հայերի ցեղասպանության անհիմն պնդումների դեմ պայքարը համակարգող խորհուրդը»: Սույն կառույցի առաջին նախագահն է եղել տվյալ ժամանակաշրջանում պետնախարարի և փոխվարչապետի պաշտոններն ստանձնած Դևլեթ Բահչելին*, իսկ համակարգողը՝ Ազգային անվտանգության խորհրդի գլխավոր քարտուղարի առաջին տեղակալը: Բահչելին 2002 թ. մայիսի 9-ին խորհրդարանին ուղղված գրության մեջ հաղորդում էր, որ խորհուրդը նպատակ է հետապնդում չեզոքացնել արտերկրում պարբերաբար օրակարգ բերվող ցեղասպանության ճանաչման ջանքերը: Նույն գրության միջոցով Բահչելին նաև հայտնում էր, թե կառույցը երեք ամիսը մեկ ժողովներ է գումարում, այն որոշել է 3 տարբեր աշխատանքային խմբեր ձևավորել՝ իրավաբանության, ազգային կրթության և պատմության ուղղությամբ աշխատանքներ կատարելու նպատակով, և արդեն սկսել է այդ ուղղություններով աշխատանքները: Ինչպես նշվում էր կառույցի հիմնման մասին շրջաբերականում, փոխվարչապետի նախագահությամբ գործող խորհրդի կազմում տեղ էին գտնելու նաև Ազգային պաշտպանության, Արդարադատության, Ներքին գործերի,

* Դ. Բահչելիից հետո «Հայերի ցեղասպանության անհիմն պնդումների դեմ պայքարը համակարգող խորհուրդը» ղեկավարել են՝ ԱԶԿ-ի անդամներից Թրուվա Աթլարը, Էրքան Մումջուն, Աբդուլլահ Գյուլը, Ջեմիլ Չիչեքը և Գոքսել Գյուլբեյին:

Արտաքին գործերի, Ազգային կրթության և Մշակույթի նախարարությունների, ինչպես նաև՝ Բարձրագույն կրթության խորհրդի նախագահության, ԱՀԾ-ի, Թուրքական պատմագիտական ընկերության նախագահության, Պետական արխիվների գլխավոր վարչության և կառավարության՝ Հասարակայնության հետ կապերի բաժնի գլխավոր քարտուղարության ներկայացուցիչները: Ըստ շրջաբերականի, խորհուրդը պարտավորվում էր. «Իրականացնել հասարակական կարծիք ձևավորելու ծրագիրը, աշխատանքներ կատարել՝ քաղաքացիական հասարակական կազմակերպություններին ուղղորդելու ուղղությամբ, և ոչ միայն հայերի, այլ նաև՝ Պոնտոսի հույների ու ասորիների ցեղասպանությունների մասին պնդումների շուրջ տեղի ունեցող զարգացումներին հետևելով՝ որոշել ձեռնարկվելիք միջոցները»[692]: Խորհրդի ղեկավարը հայտարարել է, որ հայերը փորձում են մշտապես գիտական, քաղաքական ու հասարակական օրակարգում պահել Թուրքիայի հանդեպ տարածքային պահանջների հարցը և այդ ուղղությամբ սկսել են Թուրքիայի քաղաքացիություն ձեռք բերելու համար միջոցներ ձեռնարկել, որ նույն այդ նպատակով Հայաստանն ու Սփյուռքը որպես միջոց փորձում են օգտագործել նաև ՔԱԿ-ը[693]: 2007 թ. մարտի 15-ին համակարգող խորհուրդը Ա. Գյուլի նախագահությամբ կայացած 17-րդ ժողովում որոշեց Թուրքիայի հանրությանը ներկայացնել «Սարը գելին» վերնագրով փաստագրական ֆիլմը, որում ներկայացվում էր, թե, իբր հայերը 1915 թ. առաջ հարձակվել են թուրքական գյուղերի վրա, սպանել տեղի բնակիչներին, կրակի տվել գյուղերը և այլն: Պատկան մարմիններին հանձնարարվում էր ներքին հանրային կարծիք ձևավորելու նպատակով արտադրող ընկերությունից գնել «Սարը գելին. Հայ-

---

692 Տե՛ս Թուրքիան Ցեղասպանության ուրացման ընդարձակ ծրագիր պատրաստած է http://asbarez.com/arm/183838/

693 Տե՛ս Հովսեփյան Լ., Թուրքիայի վախերը. Սևրի սինդրոմ, էջ 19-20:

կական հարցի էությունը» վավերագրական ֆիլմի խտասկավառակները և ԳՇ-ի նախագահության, Ազգային կրթության նախարարության, Արտաքին գործերի նախարարության և ԱՀԾ-ի միջոցով դրանք ուղարկել անհրաժեշտ հաստատություններ[694]:

Համակարգող խորհրդի նախագահներից հաջորդը՝ Գոքսել Գյուլբեյին, 2012 թ. նոյեմբերին "Twitter"-ի իր էջում տեղադրեց Թուրքիայում գործող հայկական բոլոր վարժարանների, եկեղեցիների և հիմնադրամների ինտերնետային հասցեներն ու հեռախոսահամարները: Մինչ այդ, նա նաև նամակ էր ուղարկել Ներքին գործերի նախարարին՝ բողոքելով այն փաստի դեմ, որ Թուրքիայում գործում են 57 հայկական կառույցներ[695]: Ակնհայտ է, որ իր քայլերով թուրք պաշտոնյան միտումնավոր ձևով փորձում էր թուրք ծայրահեղ ազգայնականների թիրախը դարձնել այդ երկրում գտնվող հայկական հուշարձանները և գործող կառույցները:

Թուրքիայի քաղաքական կյանքում Հայոց ցեղասպանության հարցը քննարկման առարկա դարձավ 2008 թ. վերջերին, երբ դեկտեմբերի 15-ին համացանցում տարածվեց Մեծ եղեռնի համար հայ ժողովրդից ներողություն խնդրելու մասին թուրք մտավորականների հայտնի կոչը: Կոչի հրապարակման հաջորդ օրվանից ակտիվացավ ժխտողական ուժերի ճամբարը: Դեկտեմբերի 16-ին հաղորդագրություն տարածեց պաշտոնաթող դիվանագետների ընկերակցությունը, որը հայերին անվանում էր «ահաբեկիչներ» և դատապարտում արշավի նախաձեռնությունը: Թեև Թուրքիայի ԱԳՆ-ն, արձագանքելով այս քայլին, հայտարարեց, որ բացարձակապես կապ չունի պաշտոնաթող դիվանագետների նախաձեռնության հետ, սակայն ակն-

---

[694] Տե՛ս Թուրքիան Ցեղասպանության ուրացման ընդարձակ ծրագիր պատրաստած է http://asbarez.com/arm/183838/

[695] Տե՛ս Չաքրյան Հ., Սամաթիայի հարձակումները Մեծ եղեռնի 100-րդ տարելիցի յուրահատուկ պատրաստությունն են, http://azg.am/AM/2013013002

հայտ էր, որ այդ քայլը կատարվել էր հենց նախարարության պատվերով: Պատահական չէ, որ օրեր անց Բրյուսելում կայացած մամլո ասուլիսի ժամանակ արտգործնախարար Ա. Բաբաջանին նախազգուշացում հնչեցրեց, որ Թուրքիայում Հայոց ցեղասպանության շուրջ ծավալվող բանավեճը կարող է վնասել Հայաստանի հետ բանակցային գործընթացին: Հաջորդ օրը վարչապետ Էրդողանն իր ասուլիսում, անդրադառնալով ներողության արշավին, նշեց, որ, եթե Թուրքիայում գտնվում են մարդիկ, ովքեր ցեղասպանության համար ներողություն են խնդրում հայերից, ուրեմն՝ հենց նրանք են այդ ցեղասպանությունն իրականացրել, ինչի հետ Թուրքիան, թուրք ժողովուրդը և անձամբ ինքը կապ չունեն և չեն պատրաստվում ներողություն խնդրել: Թուրք մտավորականների այս նախաձեռնության նպատակը Էրդողանը համարեց Թուրքիայում քաոս ստեղծելն ու երկիրն ապակայունացնելը[696]:

Մինչ վարչապետ Էրդողանը ներողության կոչի դեմ հանդես էր գալիս դատապարտող կտրուկ արտահայտություններով, նախագահ Ա. Գյուլն ավելի չափավոր կեցվածք ընդունեց, ինչը քննադատվեց ընդդիմադիր ԺՀԿ-ի պատգամավորի կողմից, որը Գյուլին մեղադրեց ներողության կոչի նկատմամբ դրական դիրքորոշում ունենալու մեջ և դրա պատճառը համարեց մայրական կողմից Գյուլի հայկական ծագում ունենալը: Դրանից անմիջապես հետո Գյուլն իր մոր էթնիկ ծագման վերաբերյալ զրպարտող ելույթների համար ԺՀԿ-ի պատգամավորի դեմ հայց ներկայացրեց դատարան[697]: ԱՇԿ-ի պատգամավորն էլ խորհրդարանում ներողության արշավի կազմակերպիչներին մեղադրեց Եվրոմիությունից գաղտնի ֆինանսավո-

---

[696] Տե՛ս Աքթար Չ., Կոչ ներումի. թուրքերը դիմում են հայերին, Եր., 2011, էջ 30:

[697] Տե՛ս Մելքոնյան Ռ., Հայերի բռնի իսլամացումը ցեղասպանության տարիներին. ընթացքը և հետևանքները, էջ 106:

ռում ստանալու մեջ[698]: ԱՇԿ-ն, բնականաբար, այդքանով չսահմանափակվեց և ներողության կոչի դեմ համացանցում հակաարշավ սկսեց, որը համեմված էր արշավի նախաձեռնողների հասցեին հնչող հայհոյանքներով ու ահաբեկման սպառնալիքներով:

Ներողության կոչի վերաբերյալ իրենց դիրքորոշումը հայտնեցին նաև թուրք բարձրաստիճան զինվորականները: Դեկտեմբերի 19-ին Զինված ուժերի ԳՇ Հասարակայնության հետ կապերի բաժնի պետը հայտարարեց, որ հայերից ցեղասպանության համար ներում հայցելը ոչ միայն սխալ է, այլև՝ հղի է վնասակար հետևանքներով[699]:

Արշավի կազմակերպիչների նկատմամբ դատական գործընթաց սկսվեց, որը, սակայն, բավական տարօրինակ ընթացք է ստանում: 2009 թ. հունվարի 9-ին ներողության արշավի նախաձեռնողների դեմ Թուրքիայի քրեական օրենսգրքի 301 հոդվածի հատկանիշներով՝ «թուրք ազգի արժանապատվությունը վիրավորելու համար», հայցադիմում ներկայացվեց դատարան, և Անկարայի Գլխավոր դատախազը հանձնարարեց անցկացնել գործի հետաքննություն, սակայն, զարմանալիորեն, հունվարի 26-ին Անկարայի դատախազությունը կարճեց գործը: Դրան հակառակ, առաջին ատյանի դատարանը գործը կարճելու մասին Անկարայի դատախազության որոշումն անվավեր ճանաչեց: Մարտի 10-ին Անկարայի Գլխավոր դատախազը Արդարադատության նախարարությանը ներկայացրեց դիմում՝ Սինջանի երդվյալ ատենակալների առաջին ատյանի դատարանի վճիռը անվավեր ճանաչելու վերաբերյալ: Ապրիլի 20-ին Արդարադատության նախարարությունը հայտարարեց որ արշավի կազմակերպիչների՝ Եվրոմիությունից ֆինանսավորվելու մասին հայտարարությունների մասով, որոնք խորհրդարանում հնչեցվել էին ԱՇԿ-ի կողմից, հետաքննություն չի անցկացվում: 2010 թ. հունվարի 7-ին

---

698 Տե՛ս Աքթար Չ., նշվ. աշխ., էջ 33:
699 Տե՛ս Աքթար Չ., նշվ. աշխ., էջ 32:

Վերաքննիչ դատարանի իններորդ պալատը վճռեց որ արշավը որևէ քրեական տարր չի պարունակում՝ այդպիսով մեկընդմիշտ բացառելով Կոչը ստորագրողների դեմ բոլոր հնարավոր հայցերը[700]:

Թուրքիայի Քրեական օրենսգրքում տխրահռչակ 301-րդ հոդվածի առկայության պայմաններում ներողության արշավի նախաձեռնողների նկատմամբ թուրքական արդարադատության նման հանդուրժողական վերաբերմունքն, առաջին հայացքից, կարող է տարօրինակ թվալ, քանզի Հայոց ցեղասպանությունը ճանաչելու վերաբերյալ արտահայտությունների համար մինչ այդ թուրքական դատարաններում արդեն պատասխանատվության էին կանչվել Հրանտ Դինքը, Ռագըփ Զարաքօլուն և Օրհան Փամուկը:

ԵՄ-ի և միջազգային հանրության ճնշման պայմաններում թուրքական իշխանությունները նույնիսկ հայտարարեցին, որ Քրեական օրենսգրքի 301-րդ հոդվածը փոփոխվել է, որ տվյալ հոդվածով գործ հարուցելու համար արդեն հարկավոր է արդարադատության նախարարության թույլտվությունը և, որ այդ հոդվածով արդեն որևէ գործ չի հարուցվում[701]: Առաջին հայացքից կարելի է ենթադրել, որ ներողության արշավի կազմակերպիչների նկատմամբ թուրքական «Ֆեմիդայի» նման հանդուրժող կեցվածքը պայմանավորված էր Եվրոմիությանը Թուրքիայի անդամակցության գործընթացում երկրի իշխանություններին քննադատելու լրացուցիչ առիթ չտալու հանգամանքով, քանզի կազմակերպիչներին դատապարտելու դեպքում գործն ամենայն հավանականությամբ կհասներ մինչև Եվրոդատարան: Սակայն, Դինքի սպանվելու հաջորդ օրը, երբ լրագրող Թեմել Դեմիրերը հայտարարեց, որ Դինքը սպանվել է Հայոց ցեղասպանությունը՝ որպես կատարված փաստ ճանաչելու համար, նրա դեմ

---

700 Տե՛ս Աքթար Չ., նշվ. աշխ., էջ 34:

701 Տե՛ս Հրանտ Դինքի գործով արդարություն չկա. Լրագրողների պաշտպանության կոմիտե, http://tert.am/am/news/2012/10/22/dink-report

Քրեական օրենսգրքի 301-րդ հոդվածի հատկանիշներով, երկու տարի ազատազրկման պահանջով դատական գործ սկսվեց: Դատալսման ժամանակ Դեմիրերը պահանջեց իր հայտարարության համար իրեն կամ ազատազրկել, կամ էլ արդարացնել, սակայն դատարանը հետաձգեց նիստը: Որոշ ժամանակ անց Անկարայի Անվտանգության տնօրինությունը հանրապետական դատախազությանը խնդրագիր ներկայացրեց, որպեսզի թույլ տրվի 301-րդ հոդվածը ոտնահարելու մեղադրանքով շարունակել լրագրող Թեմել Դեմիրերի նկատմամբ սկսված դատական գործընթացը: Դիմումի մեջ նշվում է, որ, թեև թուրք ազգին, պետությանը, պետական կառույցներին և մարմիններին նվաստացնելու համար լրագրողի նկատմամբ նախկինում բացված դատական գործը հետաձգվել էր՝ երեք տարվա ընթացքում նման «հանցանք» չգործելու պայմանով, սակայն նա շարունակում է հայտարարել, որ Հայոց ցեղասպանությունը փաստ է և, որ Հրանտ Դինքին սպանողը թուրքական պետությունն է: Այս ամենից ելնելով, Դեմիրերը պնդում էր, որ Թուրքիայում 301-րդ հոդվածի հետ կապված ոչ մի փոփոխություն տեղի չի ունեցել, ինչպես նշում են իշխանությունները, քանի որ փորձում են իր նկատմամբ տվյալ հոդվածով կրկին դատական գործ բացել, քանի որ ինքը կրկնել է այն մտքերը, որոնց համար նախկինում պատասխանատվության էր կանչվել[702]: Թուրքական դատարանը 301-րդ հոդվածի հատկանիշներով դատապարտեց նաև Նոբելյան մրցանակակիր, գրող Օրհան Փամուքին՝ «Այս հողերում 30 հազար քրդեր և մեկ միլիոն հայեր են սպանվել» խոսքերի համար: Թուրքական դատարանի վճռում նշվում էր, որ ամբաստանյալ Օրհան Փամուքը պետք է 6 հազար թուրքական լիրայի չափով բարոյական փոխհատուցում վճարի, քանի որ նշված

[702] Տե՛ս Թուրք լրագրող. «Հայոց ցեղասպանությունն իրողություն է, իսկ Հրանտ Դինքի մարդասպանը թուրքական պետությունն է».
http://armenpress.am/arm/news/711219/

խոսքերով «ոտնձգություն է կատարվել թուրք ազգի բարոյական էության և անձնական իրավունքների հանդեպ, և թուրք ազգը հրապարակավ ստորացվել է՝ մեղադրյալի՝ այնպիսի հարցում կարծիք արտահայտելու պատճառով, որի պատմական հավաստիությունն ապացուցված չէ»[703]:

Վերը նշվածը հաշվի առնելով, կարող ենք եզրակացնել, որ ներողության արշավի կազմակերպիչներին 301-րդ հոդվածով պատասխանատվության չենթարկելու առավել հավանական պատճառ պետք է համարել այն, որ նրանք ուղղակի նախապես համաձայնեցրել էին իրենց գործողությունները իշխանությունների հետ: Ամենայն հավանականությամբ, ներողության արշավի կազմակերպիչների ու դրան, գուցե, ազնվորեն մասնակցողների միջոցով թուրքական իշխանությունները Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ տվյալ հարցի վերաբերյալ արձագանքներ ստանալու ակնկալիքով ուղերձ էին հղում ինչպես Հայաստանին, Սփյուռքին ու միջազգային հանրությանը, այնպես էլ՝ ներքին լսարանին, որպեսզի, ըստ այդմ, հստակեցնեն իրենց ապագա անելիքները:

Հայոց ցեղասպանության հարցը վերջին տարիներին պարբերաբար քննարկվում էր նաև Թուրքիայի օրենսդիր մարմնում: 2005 թ. ապրիլին թուրքական խորհրդարանում քննարկվեց ու հավանության արժանացավ կառավարության առաջարկը հայ և թուրք պատմաբանների համատեղ հանձնաժողով ստեղծելու վերաբերյալ, որին հետևեց վարչապետ Էրդողանի նամակը ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանին՝ փորձ անելով տպավորություն ստեղծել, թե այդ գաղա-

[703] Տե՛ս Փամուքի վերաբերյալ դատավճիռը Թուրքիայի ամոթն է, «Ակօս», 10.06.2011, թիվ 792:

փարը պաշտպանվում է ոչ միայն Թուրքիայի իշխող կուսակցության, այլև՝ ամբողջ քաղաքական դաշտի կողմից[704]:

2008 թ. սկսած՝ Թուրքիայի խորհրդարանում Հայոց ցեղասպանության հարցը տարբեր առիթներով շոշափվել է Թուրքիայի արևելյան շրջաններից ընտրված ընդդիմադիր քրդական ԺԺԿ-ի, ներկայումս՝ ԽԺԿ-ի պատգամավորների կողմից: Սղերդի պատգամավոր Օսման Օզչելիքն իր խմբակցության անունից խոսեց հայերի կոտորածի համար նրանցից ներողություն խնդրելու անհրաժեշտության մասին, ինչից հետո խորհրդարանի դահլիճում լարված իրավիճակ ստեղծվեց, ԱԶԿ-ի պատգամավորները հարձակվեցին նրա վրա և նախագահողը ստիպված եղավ ընդմիջել նիստը[705]:

2009 թ. հայ-թուրքական ցյուրիխյան արձանագրությունների ստորագրումից հետո հոկտեմբերի 22-ին թուրքական խորհրդարանում սկսված քննարկումների ժամանակ արտգործնախարար Ա. Դավութօղլուն փորձում էր ներկայացնել, թե, իբր, արձանագրություններով նախատեսվող պատմական հարթության հարցերով զբաղվող ենթահանձնաժողովը քննարկելու է Հայոց ցեղասպանության հարցը, սակայն ընդդիմադիր ԺՀԿ-ի և ԱՇԿ-ի պատգամավորները սկսկեցին քննադատել կառավարությանը և մեղադրել հայերի պահանջներին ընդառաջ գնալու համար, ակնարկելով նաև տարածքային պահանջների հարցը: Տարածքային պահանջների հարցին Դավութօղլուն անմիջապես արձագանքեց, որ «Հայաստանը կամ էլ որևէ այլ երկիր չի հանդգնի տարածքային կամ հողայինն պահանջներ ներկայացնել Թուրքիային»[706]: Այդ նիստերի ժամանակ ընդդիմադիր քրդական ԽԺԿ-ի ղեկավարներից Սելահեթթին Դե-

---

[704] Տե՛ս Մելքոնյան Ռ., Հայոց ցեղասպանության խնդիրը Թուրքիայի խորհրդարանում (2007-2014 թթ.), էջ 77:

[705] Տե՛ս Մելքոնյան Ռ., Հայոց ցեղասպանության խնդիրը Թուրքիայի խորհրդարանում (2007-2014 թթ.), էջ 78:

[706] Տե՛ս Հովսեփյան Լ., Թուրքիայի վախերը. Սևրի սինդրոմ, էջ 19-20:

միրթաշը կրկին բարձրաձայնեց հայերի կոտորածների մասին և քննադատեց թուրքական իշխանություններին այդ հարցում ժխտողական կեցվածք ընդունելու համար[707]:

Հատկանշական է, որ ինչպես խորհրդարանի դահլիճում, այնպես էլ դրանից դուրս քուրդ պատգամավորներն իրենց ելույթներում սկսեցին նաև հպանցիկ անդրադարձ կատարել Հայոց ցեղասպանության իրագործման մեջ քրդերի մասնակցություն ունենալու հարցին: 2011 թ. հոկտեմբերին Դիարբեքիրի պատգամավոր Ալթան Թանը Մարդինում տեղի ունեցած մի գիտաժողովի ժամանակ այս առումով նշեց, որ, թեև ամբողջ քուրդ ժողովուրդը զինված չի մասնակցել Հայոց ցեղասպանությանը, սակայն քուրդ ղեկավարները լուրջ պատասխանատվություն ունեն ցեղասպանության հարցում: Սակայն մեղքի և հայերից ներողություն խնդրելու գիտակցության հետ մեկտեղ քուրդ պատգամավորները, որպես իրենց պապերի կատարած հանցանքի բացատրություն, ինքնախոստովանում էին, որ քրդերը թուրքական իշխանությունների կողմից օգտագործվել են ոչ միայն հայերին, այլև՝ ասորիներին ու եզդիներին կոտորելու համար[708]:

Անշուշտ, քրդական կուսակցության կողմից Հայոց ցեղասպանության հարցի արծարծումն ինքնանպատակ չէր: Քրդական կուսակցությունն այդ հարցը դարձրեց իշխող ԱԶԿ-ին քննադատելու և մեղադրանք ներկայացնելու գլխավոր թեմաներից մեկը: Այդ հարցը բարձրաձայնելու միջոցով ԽԺԿ-ը փորձում էր բարձրացնել իր հեղինակությունը արևելյան նահանգների ոչ թուրք ժողովուրդների շրջանում՝ փորձելով արժանանալ նրանց քվեին խորհրդարանական ընտրությունների ժամանակ:

---

[707] Տե՛ս Մելքոնյան Ռ., Հայոց ցեղասպանության խնդիրը Թուրքիայի խորհրդարանում, էջ 89:

[708] Տե՛ս նույն տեղում, էջ 80:

2012 թ. ապրիլին ԽԺԿ-ի պատգամավորները հայտարարեցին, որ պատրաստվում են խորհրդարան օրինագիծ ներկայացնել ապրիլի 24-ը Թուրքիայում «Հայ ժողովրդի ազգային սուգը և ցավերը կիսելու օր» հայտարարելու մասին: Հետագայում, այս օրինագծի նախնական տարբերակը սրբագրվեց և քուրդ պատգամավորներն արդեն խոսում էին այն մասին, որ իրենց խմբակցության կողմից ներկայացվող օրինագիծը վերաբերվելու է Թուրքիայում տեղի ունեցած մի շարք ողբերգությունների, այդ թվում՝ Հայոց ցեղասպանության դատապարտմանը: Քրդական կուսակցության նախաձեռնությունն իրականություն դարձավ միայն երկու տարի անց՝ 2014 թ. նոյեմբերին, երբ ԽԺԿ-ի Ստամբուլից ընտրված կին պատգամավոր Սաբահաթ Թունջելը խորհրդարան ներկայացրեց մի օրինագիծ, որում նշվում էր, որ, Դերսիմից բացի, կան մարդկության դեմ իրագործված այլ հանցանքներ ևս, ինչպիսին են՝ Մարաշի, Մեբաստիայի կոտորածները, Հայոց ցեղասպանությունը, սեպտեմբերի 12-ի ռազմական հեղաշրջումից հետո ընդդիմության նկատմամբ իրականացված պետական ահաբեկչությունը, որոնց համար Թուրքիայի նախագահը պետք է ներողություն խնդրի՝ հենց դեպքի վայրում կարդալով ներողության հայտարարության տեքստը: Անհասկանալի է սակայն, թե, օրինակ՝ Հայոց ցեղասպանության պարագայում որն է «դեպքի վայրը»: Օրինագծում առաջարկվում էր նաև այդ դեպքերի օրը հայտարարել «ազգային սգո օր»: Ընդհանուր առմամբ, դրական գնահատելով քրդական կուսակցության նախաձեռնությունը, որի հեղինակները քաջ գիտակցում էին, որ այն խորհրդարանում առկա քաղաքական ուժերի հարաբերակցության պայմաններում ընդունվելու շանսեր բացարձակապես չունի, այդուհանդերձ, պետք է արձանագրել, որ Հայոց ցեղասպանության հարցը թվարկվում է ի թիվս Թուրքիայում տեղի ունեցած այլ ողբերգությունների, որոնք ո՛չ ծավալով,

ո՛չ հետևանքներով համեմատվելու որևէ եզր չունեն Հայոց ցեղասպանության հետ[709]:

Թուրքական խորհրդարանում Հայոց ցեղասպանության հարցը կրկին սկսվեց արծարծվել արդեն քրդամետ ԽԺԿ-ի խորհրդարանական խմբակցության կազմում ընդգրկված հայազգի պատգամավոր Կարո Փայլանի կողմից: 2016 թ. ապրիլի 21-ին թուրքական խորհրդարանում ունեցած իր ելույթում Փայլանը քննադատեց Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության հարցում վարվող ժխտողական քաղաքականությունը, ներկայացրեց հայերի զանգվածային բնաջնջման որոշ մանրամասներ և վերջում իր կուսակցության անունից առաջարկեց ստեղծել Հայոց ցեղասպանության զոհ դարձած օսմանյան խորհրդարանի հայ պատգամավորների սպանության հանգամանքների ուսումնասիրման հատուկ խորհրդարանական հանձնաժողով: Ելույթի վերջում նա թվարկեց օսմանյան խորհրդարանի զոհված հայ պատգամավորներին և ցուցադրեց նրանց լուսանկարները: Խորհրդարանի մեծամասնություն կազմող թուրք պատգամավորների դիրքորոշումը միանգամայն կանխատեսելի էր: Փայլանի առաջարկը քննարկելու փոխարեն նրանք փորձեցին հաշվերահարդար տեսնել նրա հետ հենց խորհրդարանի դահլիճում[710]: Հատկանշական է, որ Հայոց ցեղասպանության ժխտման թուրքական պաշտոնական փաստարկներին Փայլանը որպես հակափաստարկ կրկնում էր օսմանյան խորհրդարանում հայ պատգամավորների դատապարտող ելույթներում հնչած մոտեցումները:

Այս հարձակումները, սակայն, չեն վախեցրել Փայլանին, որը 2017 թ. հունվարի 13-ին սահմանադրական փոփոխությունների փա-

---

[709] Տե՛ս Մելքոնյան Ռ., Հայոց ցեղասպանության խնդիրը Թուրքիայի խորհրդարանում, էջ 82-84:

[710] Տե՛ս Կարո Փայլանի ելույթի հայերեն տեքստը, https://worldoriens. wordpress.com /2016/04/24/garo-paylan-21-nisan-2016-hdp-grup-onerisi-hk/

թեթի վերաբերյալ ելույթ ունենալիս պատմական էքսկուրս է կատարել և հիշեցրել է Աբդուլ Համիդի կողմից ռուս-թուրքական պատերազմի սկսման պատրվակով խորհրդարանը լուծարելու փաստը, որի կազմում ընտրվել էին 56 մահմեդական և 40 ոչ մահմեդական պատգամավորներ: Շարունակելով ելույթը, Փայլանը խոսել է «հավասարություն, եղբայրություն, խաղաղություն» կարգախոսներով իշխանության եկած իթթիհադական եռյակի՝ Թալեաթի, Էնվերի և Ջեմալի կողմից Առաջին աշխարհամարտի տարիներին հայերի և ասորիների ցեղասպանություն իրականացնելու մասին: Ինչպես նախորդ դեպքում, այս անգամ էլ իշխող ԱԶԿ-ի, և ընդդիմադիր ազգայնական ԺՀԿ-ի ու ԱՇԿ-ի պատգամավորների՝ տեղերից վանկարկումների պատճառով Կ. Փայլանը չի կարողացել ավարտել իր խոսքը: Խորհրդարանի փոխնախագահն էլ թուրք ազգի հասցեին հնչեցված վիրավորական արտահայտությունների համար ընդհատել է Փայլանի ելույթը, զրկել է խոսքի իրավունքից և, իբրև պատիժ, նրան զրկել է երեք նիստերի մասնակցելու իրավունքից[711]: Փայլանը փորձեց Սահմանադրական դատարանում բողոքարկել իրեն երեք նիստերին մասնակցելու իրավունքից զրկելու խորհրդարանի փոխխոսնակի անօրինական որոշումը, սակայն Սահմանադրական դատարանը մերժել է հայազգի պատգամավորի հայցը: Փայլանը պատրաստվում է Թուրքիայի Սահմանադրական դատարանի որոշումը բողոքարկել Մարդու իրավունքների եվրոպական դատարանում[712]:

Թեև կոշտ ժխտողական դիրքորոշում որդեգրած ներկայիս թուրք պետական գործիչների կողմից այս ուղղությամբ վարած քաղաքականությունը գրեթե չի տարբերվում նրանց նախորդների ռազմավարությունից, սակայն ներկայիս գործիչները փորձում են նաև

---

[711] Տե՛ս Նոր Զարթօնք. «Կարո Փայլանը առանձին չէ», http://akunq.net/am/?p=54115

[712] Տե՛ս Կարո Փայլանը որոշել է դիմել Մարդու իրավունքների եվրոպական դատարան, https://news.am/arm/news/376373.html

որոշ խմբագրումներ անել իրենց կեցվածքում և գործունեության մեջ՝ այդ կերպ փորձելով սիրաշահել հայ հանրությանը և, հատկապես, սփյուռքահայերին: Այս իմաստով հատկանշական է, որ արտգործնախարար Դավութօղլուի կողմից առաջ քաշված այսպես կոչված, «արդար հիշողության» մասին դրույթը, իրականում, նպատակ ուներ Հայոց ցեղասպանության մեծ ողբերգությունը հավասարեցնել Առաջին աշխարհամարտի տարիներին զոհված օսմանահպատակների ազգականների ցավի հետ: Դավութօղլուն նաև ծրագրում էր աշխատանքներ տանել սփյուռքի հայության տարբեր շրջանակների հետ կապեր հաստատելու ուղղությամբ: 2011 թ. սեպտեմբերին Թուրքիայի Արտաքին գործերի նախարարությունը շրջաբերական ուղարկեց իր բոլոր դեսպաններին՝ պահանջելով պատրաստ լինել 2015 թ.՝ Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին: Փաստաթղթում հիշեցվում էր, որ հայկական սփյուռքը աշխարհում աշխատանքներ է կատարում Ցեղասպանության ճանաչման ուղղությամբ, հաղորդվում էր, որ դեսպաններից ակնկալվում է սփյուռքի հետ սերտ շփումների մեջ մտնելով՝ արգելք լինել այդ գործողություններին: Նույն տարվա դեկտեմբերի 23-ին Դավութօղլուն դեսպանների հետ տարեվերջյան հանդիպման ժամանակ առաջարկում էր Հայկական սփյուռքը դիտել՝ որպես Օսմանյան կայսրության ժառանգների սփյուռք, և նրա նկատմամբ գործել այդ դրույթից ելնելով:

2012 թ. հուլիսի 7-ին, անդրադառնալով Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցի դեմ Թուրքիայի կողմից ձեռնարկվելիք միջոցներին, Դավութօղլուն ներկայացրեց «3 հիմք ունեցող ռազմավարությունը»: Համաձայն այդ նոր ռազմավարության, թուրքական կողմը նախ՝ շեշտը պետք է դներ նրբազգացության վրա, ասելով՝ «Ես զգում եմ ձեր ցավը» և 2015 թ. ընդառաջ համապատասխան հայտարարության տեքստ մշակեր ու հրապարակեր: Ռազմավարության

երկրորդ հիմքը «սփյուռք» բառի վերաիմաստավորումն էր և «թուրքական սփյուռք» հասկացության ակտիվ շրջանառումը, որի համաձայն, «թուրքական սփյուռք են կազմում ոչ միայն արտասահմանյան երկրներում ապրող թուրքերը, այլև՝ Թուրքիայի տարածքներից արտագաղթած յուրաքանչյուր անձ»: Իսկ ռազմավարության երրորդ հիմքը համարվում էր Հայաստանի հետ հարաբերությունների զարգացումը[713]: Հանուն ճշմարտության պետք է նշենք, որ Դավութօղլուն փորձեց կենսագործել իր ռազմավարության երեք հիմքերը: Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցից առաջ Էրդողանը և Դավութօղլուն հանդես եկան «ընդհանուր ցավի» մասին դատողություններով և, ներողություն խնդրելու փոխարեն, ցավակցեցին հայ ժողովրդին, փորձ կատարվեց սեպ խրել Հայաստանի և Սփյուռքի միջև, երբ վերջինիս որոշ ներկայացուցիչների հետ թուրք դիվանագետներն ու պաշտոնյաները փորձում էին բանակցել ու համոզել, որ նրանք, որպես օսմանահպատակների ժառանգներ, կարող են վերադառնալ Թուրքիա և ստանալ այդ երկրի քաղաքացիություն, իրենց նախնիների իրավունքների վերականգնում, Հայաստանի հետ հարաբերությունների զարգացումն էլ թուրքական կողմը փորձում էր առաջ տանել ցյուրիխյան արձանագրությունների վավերացման միջոցով: Սակայն պետք է արձանագրենք, որ երեք ուղղություններով էլ թուրքական կողմը կատարյալ ֆիասկո կրեց, նախ՝ թուրք պաշտոնյաների կոչը, թեև դրական գնահատվեց եվրոպական որոշ գործիչների կողմից, սակայն պատշաճ ուշադրության չարժանացավ ո՛չ Սփյուռքի և ո՛չ էլ Հայաստանի կողմից, քանզի թուրք պաշտոնյաներից ակնկալվում էին ոչ թե ցավակցության, այլ ներողության խոսքեր, իսկ ցավակցական ուղերձը դիտվեց՝ որպես թուրքական ցինիկ ժխտողականության հերթական դրսևորում: Պետք է նշել, որ Թուրքիայի

[713] Տե՛ս Թուրքիան Ցեղասպանության ուրացման ընդարձակ ծրագիր պատրաստած է http://asbarez.com/arm/183838/

վարչապետ Էրդողանը մինչ այդ արդեն հասցրել էր այս հարցում ներկայացնել իր իրական դիրքորոշումը, երբ հայտարարեց. «Չեք կարող մեզ ստիպել ասելու, թե մեր պապերը ցեղասպանություն են գործել», ինչից որոշակիորեն բխում է «հավանաբար, գործել են» թաքնված միտքը[714]: 2010 թ. մարտի 11-ին Շվեդիայի խորհրդարանի կողմից Հայոց ցեղասպանության մասին բանաձևի ընդունումից անմիջապես հետո Էրդողանը հատուկ անդրադարձավ Թուրքիայում ապօրինաբար բնակվող և աշխատող հայաստանցիների խնդրին և հայտարարեց, որ ցանկացած պահի կարող է արտաքսել նրանց[715]: Այս առումով հարկ է Էրդողանին հիշեցնել, որ Թուրքիայում ներկայումս բնակվում են տարբեր ազգերի հարյուր հազարավոր ապօրինի միգրանտներ, և նրանցից շատերը, ՀՀ քաղաքացիների նման միայն ապօրինի կացությամբ և աշխատանքով են խախտում թուրքական օրենքները, այլև՝ ընդգրկված են թրաֆիքինգի ու այլ քրեական ազգային հանցախմբերում, սակայն կառավարությունը երբեք նրանց երկրից վտարելու սպառնալիքների չի դիմում:

2011 թ. վերջին էլ Էրդողանը բավական հաշվարկված քայլ կատարեց, երբ ներողություն խնդրեց 1937-38 թթ. Դերսիմի դեպքերի համար, որոնց ընթացքում ապստամբությունը ճնշելու անվան տակ կոտորվեցին ավելի քան 100 հազար ալավիներ և քրդեր[716]: Այս քայլով Էրդողանը միաժամանակ մի քանի հասցեատիրոջ ուղերձներ էր հղում: Նախ՝ այդ դեպքերի համար ԱԶԿ-ի առաջնորդը մեղադրեց իր գլխավոր հակառակորդ ընդդիմադիր ԺՀԿ-ին, հասկացնելով, որ Դերսիմի դեպքերը տեղի են ունեցել իրենց կառավարման օրոք, ուստի հենց նրանք պետք է ներողություն խնդրեն դրա համար: Ուղեր-

---

[714] Տե՛ս Անումյան Մ., Արևմտահայության հարցի արծարծումը թուրքական մամուլում, http://akunq.net/am/?p=9431

[715] Տե՛ս Ավագյան Ա., Պանթուրքական երազանք կամ «Գորշ գայլեր», էջ 142:

[716] Տե՛ս Турция: новая роль в современном мире, с. 22-23.

ձի հասցեատերերից կամ թիրախներից մեկն էլ, անկասկած, Դերսիմի ալավի բնակչությունն էր, որի քվեները վարչապետը փորձում էր ստանալ: Վերջապես, սա ուղերձ էր նաև միջազգային հանրությանը, որին այս քայլով Էրդողանը փորձում էր ցույց տալ իր հանդուրժողականությունը, ինչպես նաև որոշ պատրանքներ ստեղծել, թե, գուցե, հերթը կհասնի նաև Հայոց ցեղասպանության համար ներողություն խնդրելուն: Սակայն այս վերջին պատրանքն արագ հօդս ցնդեց, երբ նրան հակադարձեց ընդդիմադիր ԺՀԿ-ի առաջնորդը: Երբ Քըլըչդարօղլուն ակնարկեց, որ Էրդողանի քաղաքականությունը կարող է նրան հասցնել Հայոց ցեղասպանության համար էլ ներողություն խնդրելուն, ինչը համահունչ կլիներ սփյուռքահայերի մտածելակերպին, Էրդողանը նյարդայնացած հակադարձեց. «Ամոթ քեզ, ինչպե՞ս ես համարձակվում ինձ նույնացնել սփյուռքահայերի հետ» [717]:

Թուրք բանագնացների՝ Սփյուռքի հետ տարվող «բանակցությունները» տապալվեցին, քանզի բոլորը քաջ գիտակցում էին, որ թուրքական առաջարկները խնդիրն աղավաղելու հերթական փորձն էին և, որ Թուրքիայի նման երկրում օսմանահպատակների ժառանգները, Թուրքիայի քաղաքացի դառնալով, իրենց նախնիների իրավունքների վերականգնման որևէ երաշխիքներ չեն կարող ունենալ ճիշտ այնպես, ինչպես երաշխիքներ չունեն այդ երկրի քաղաքացի համարվող և այնտեղ ապրող բոլոր ոչ թուրք ժողովուրդների ներկայացուցիչները: Հայաստանի հետ հարաբերությունների հաստատումը նույնպես տապալվեց, քանի որ թուրքական կողմը, որը հարաբերությունների հաստատման գործընթացում, իբր, թե առաջնորդվում էր առանց նախապայմանների, ցյուրիխյան արձանագրություններից հետո առաջ քաշեց Ղարաբաղյան հակամարտութ-

[717] Տե՛ս Ազատյան Ե., Էրդողանի ներողությունը բացում է Պանդորայի արկղը, «Ազգ» օրաթերթ, 06.12.2011:

յան կարգավորման ադրբեջանական կողմի պահանջները, հրաժարվեց փաստաթղթերի վավերացումից և տապալեց այդ ուղղությամբ միջազգային հանրության ձեռնարկած ջանքերը:

2013 թ. հոկտեմբերի 5-ին Թուրքիայի փոխվարչապետ Արընչը, խորհրդարանի բյուջետային հանձնաժողովում անդրադառնալով Թուրքական պատմագիտական ընկերությանը տրամադրվելիք բյուջեի հարցին, նշեց, որ 2015 թ. Դարդանելի օպերացիայի 100-ամյակն է, ուստի, լուրջ աշխատանքներ պետք է տարվեն այդ ուղղությամբ, որպեսզի դրա միջոցով ստվերվեն Հայաստանի և Սփյուռքի կողմից Հայոց ցեղասպանության զոհերի 100-րդ տարելիցի ոգեկոչման միջոցառումները: Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի դեմ Թուրքիան պատրաստվում էր պայքարել այդ հարցի վերաբերյալ թուրքական տեսակետն արտահայտող խորհրդաժողովներ, գիտաժողովներ ու քննարկումներ կազմակերպելով, գրքեր հրատարակելով և վավերագրական ֆիլմեր նկարահանելով, որոնց միջոցով աշխարհի տարբեր երկրներում փորձելու էին ձևավորել թուրքամետ հասարակական կարծիք:

Այս ուղղություններով Թուրքական պատմագիտական ընկերությանը հանձնարարվեց հայ-թուրքական հարաբերությունների պատմական զարգացումների վերաբերյալ պատրաստել մի ստվարածավալ աշխատություն, որում զետեղված կլինեին հայերի ցեղասպանության վերաբերյալ թուրքական տեսակետները: Թուրքական պատմագիտական ընկերությունը նախաձեռնեց այդ խնդրի վերաբերյալ բազմահատոր փաստաթղթերի ժողովածուի ստեղծման աշխատանքները: Հայոց ցեղասպանությունը ժխտելու ուղղությամբ աշխատանքներ կատարելու համար Թուրքական պատմագիտական ընկերությանը հատկացվեց հավելյալ բյուջե, որը կազմեց 8 միլիոն 239 հազար թուրքական լիրա (մոտ՝ 4 միլիոն 119 հազար 500 դոլար): Նախատեսվում էր այդ աշխատությունը տարածել թուրքա-

կան և ադրբեջանական դիվանագիտական ներկայացուցչություններ-ի միջոցով[718]:

Թուրքիայի Արտգործնախարարությունը Հայոց ցեղասպանության հարցում չսահմանափակվեց միայն քաղաքական ոլորտում գործունեություն ծավալելով, այլ կոնկրետ քայլեր ձեռնարկեց նաև գիտակրթական ոլորտում: Պետք է նշել, որ դեռևս 1999-2000 թթ. ուս. տարում մի շարք թուրքական մասնագետներ զործուղվեցին Սանկտ-Պետերբուրգի համալսարան հայոց լեզու ուսումնասիրելու, հետագայում՝ Անկարայի համալսարանում հայոց լեզվի և գրականության ամբիոն հիմնելու նպատակով: 2000-2001 թթ. ուս. տարվա սկզբին առաջինը ամբողջ պատմության ընթացքում հայագիտության ամբիոնը կսկսի պատրաստել համապատասխան կադրեր[719]: Հասկանալի է, որ հայոց լեզուն և գրականությունը հազիվ թե Անկարայի համալսարանին հետաքրքրեին զուտ գիտական նկատառումներով: Այստեղ հստակ նշմարվում են Թուրքիայի որոշակի քաղաքական և երկարաժամկետ հետախուզական նպատակներն ու խնդիրները, ուղղված, առաջին հերթին, Թուրքիայում Հայաստանի և հայ ժողովրդի պատմության մասին իրատեսական տեղեկույթի տարածմանը խոչընդոտելուն, երկրորդը՝ Հայաստանի դեմ արդյունավետ հետախուզական գործունեություն ծավալելու նպատակով թուրքական հատուկ ծառայությունների ներկա և ապագա աշխատակիցների ու գործակալների լեզվագիտական և երկրագիտական պատրաստմանը: Առավել ևս, 2001 թ. Թուրքիայում ստեղծվել է հայկական խնդիրների ուսումնասիրման տեղեկատվական-վերլուծա-

---

[718] Տե՛ս Թուրքիան Ցեղասպանության ուրացման ընդարձակ ծրագիր պատրաստած է http://asbarez.com/arm/183838/

[719] Տե՛ս Сваранц А., Пантюркизм в геостратегии Турции на Кавказе, М., 2002, с. 468.

կան կենտրոն[720]: 2012 թ. առաջին ամիսներին էլ Թուրքիայի Արտգործնախարարության ռազմավարական ուսումնասիրությունների կենտրոնից մի պատվիրակություն գործուղվեց Ռուսաստան՝ տեղի արխիվներում թուրքական ժխտողականության հիմքերն ամրապնդող նոր վավերագրեր հայթայթելու նպատակով[721]:

Հայոց ցեղասպանության հարցում թուրքական իշխանությունների ունեցած դիրքորոշման ամենավառ դրսևորումներից մեկն էլ հայերի զանգվածային բնաջնջման կազմակերպիչների հերոսացման գործընթացն է Թուրքիայում: 2011 թ. ապրիլի 10-ին Բողազլըյան գավառում ոգեկոչվեց Հայոց ցեղասպանության ժամանակ Յոզղատի մութասարիֆի տեղակալ և Բողազլըյանի կայմակամ եղած Մեհմեդ Քեմալի հիշատակը, որը 1922 թ. հոկտեմբերի 14-ին Թուրքիայի Ազգային մեծ ժողովի հրապարակած հատուկ օրենքով հռչակվել էր «ազգային նահատակ»: Հայասպանների հերոսացումը նորություն չէ Թուրքիայում: 2011 թ. մարտի 15-ին «Թալեաթ փաշա կոմիտեի» ու «Թյուրքական աշխարհի մշակույթի և մարդու իրավունքների» կազմակերպության նախաձեռնությամբ հիշատակի ոգեկոչման արարողություն կազմակերպվեց Հայոց ցեղասպանության գլխավոր համակարգող Թալեաթ փաշայի գերեզմանի մոտ: Ի դեպ՝ միջոցառմանը մասնակցելու էր նաև վերոհիշյալ Մեհմեդ Քեմալի թոռը: Թուրքիայում կարելի է հանդիպել նման մարդասպանների արձանների, նրանց անունները կրող պողոտաների և, անգամ, դպրոցների: Օրինակ, «Էրգենեքոնի» գործով մեղադրյալ Վելի Քյուչյուքը, Գիրեսունում (Կերասուն) ժանդարմերիայի շրջանային հրամանատար եղած ժամանակ, խորապես ազդվելով Առաջին աշխար-

---

720 Տե՛ս Հարությունյան Ա., Թուրքական հատուկ ծառայությունների ստեղծման պատմությունը և դրանց գործունեությունը արդի փուլում, էջ 170:

721 Տե՛ս Անումյան Մ., 2015 թ. Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին ընդառաջ Թուրքիայի նախապատրաստությունների շուրջ, http://akunq.net/am/?p=36414

համարտի ընթացքում Արդվինի և շրջակա բնակավայրերի հայության բնաջնջումն իրականացրած Թոփալ Օսմանի կենսագրությունից, այնտեղ կանգնեցրեց վերջինիս արձանը[722]: Ակնհայտ է, որ այս զարգացումները տեղի են ունենում ոչ միայն թուրքական իշխանությունների համաձայնությամբ, այլ նաև՝ նրանց անմիջական ուղղորդմամբ: Նման գործելաոճով թուրքական իշխանությունները, փաստորեն, Թուրքիայում քաջալերում են ազգայնական տրամադրությունների աճը՝ դրանք ուղղորդելով հայերի և նրանց կողմից բարձրաձայնվող Հայոց ցեղասպանության հարցի դեմ: Ստամբուլի հայոց պատրիարքը պարբերաբար սպառնալիք պարունակող նամակներ էր ստանում, որոնց հետևում կանգնած էր «Թալեաթ փաշա կոմիտեն», որը բացահայտ հայտարարում էր. «Ով կասի՝ ցեղասպանություն է եղել, նրա ձայնը կտրելու ենք արյունով կամ՝ առանց արյունի»: Այս կոմիտեի ցայտուն դեմքերից փաստաբան Քեմալ Քերինչսիզը, հավաքելով «իր ընկերներին», թրքությունը վիրավորելու մեղադրանքով դատեր էր բացում Հրանտ Դինքի և թուրք մտավորականների դեմ: Նա ոչ միայն ցույցեր էր կազմակերպում «Ակօս» թերթի խմբագրության և Հայոց պատրիարքարանի առաջ, այլև Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի՝ Թուրքիա կատարած այցի ժամանակ Վեհափառի ավտոշարասյան ուղղությամբ նետված հավկիթներով «ազգայնական թևի» հերոսն էր դառնում: Նրա ղեկավարած խմբավորումը թույլ չէր տալիս 1915 թ. մասին որևէ քննարկում իրականացնել, հայերի բնակարանները նշանադրվում էին, հարձակումների էին ենթարկվում հայկական եկեղեցիները, դպրոցները: Հայաբնակ թաղամասերում սերմանվում էր վախի մթնոլորտ, աճում էր լարվածությունը: Պատկան մարմինների կողմից հայտնի ազգայնա-

[722] Տե՛ս Անումյան Մ., Թուրքիայում Հայոց ցեղասպանության պատասխանատուների հերոսացման հարցի շուրջ: «Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ», VII, Եր., 2011, էջ 169-170:

կան գործիչներին չպատժելն ու այդ դեպքերի չբացահայտվելը վկայում է այն մասին, որ թուրք ազգայնականների գործողություններն ուղղորդվում են իշխանությունների կողմից: Ասվածի դրսևորումներից մեկն էլ այն էր, որ Հայաստանի Նախագահի մասնակցությամբ Բուրսայում 2009 թ. հոկտեմբերի 14-ին տեղի ունենալիք Թուրքիա-Հայաստան ֆուտբոլային խաղի անցկացման դեմ ապրիլ ամսին կազմակերպված ստորագրահավաքին, որն անցնում էր «Չեմ ուզում իմ քաղաքում տեսնել ադրբեջանցի եղբորս դահիճներին» նշանաբանով և սահմանը չբացելու պահանջներով, 15 օրում մասնակցեց 250 հազար մարդ[723]: 2010 թ. հոկտեմբերի 7-ին էլ Անիի Մայր տաճարում ԱՇԿ-ն կազմակերպեց սելջուկյան նամազ, որը, միանշանակ, համաձայնեցված էր Թուրքիայի իշխանությունների հետ[724]:

Հայոց ցեղասպանության ժխտողականության պայքարում Թուրքիան և Ադրբեջանը համատեղ որդեգրեցին «Խոջալուի դեպքերը», որպես ցեղասպանություն, ներկայացնելու մարտավարությունը՝ փորձելով, այսպես կոչված, «Խոջալուի ցեղասպանությունը» հակադրել Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացին[725]: Այս ուղղությամբ առաջին լուրջ «ձեռնարկն» իրականացվեց 2012 թ. փետրվարի 26-ին, երբ Ստամբուլի «Թաքսիմ» հրապարակում Խոջալուի դեպքերի 20-ամյակին նվիրված միասնական ցույց անցկացրին ադրբեջանցի և թուրք ազգայնականները: Հանրահավաքին մասնակցում էր Դինքի սպանության ժամանակ Ստամբուլի նահանգապետ եղած և Թուրքիայի Ներքին գործերի նախարար դարձած Մուամեր Գյուլերը: Հատկանշական է, որ նա հանրա-

---

723 Տե՛ս Ալվրցյան Հ., Կրոնափոխ հայերի խնդիրները Թուրքիայի Հանրապետությունում, էջ 141:

724 Տե՛ս Ավագյան Ա., Պանթուրքական երազանք կամ «Գորշ գայլեր», էջ 138:

725 Տե՛ս «100-ամյակի նախօրյակին հնարաւոր է՝ Անգարայի կողմից հրապարակուեն Հայոց Ցեղասպանությունը ժխտող «նոր» արխյուային փաստաթղթեր», http://www.horizonweekly.ca/article/details/50

հավաքին ելույթ ունեցավ «Բոլորդ հայ եք, բոլորդ՝ վիժվածք» մակագրությամբ ցուցապաստառներ կրող 100-հազարանոց ամբոխի առջև[726]: Ցուցարարներն այդ պաստառներով քիչ անց հայտնվեցին Ստամբուլի կենտրոնական թաղամասերից մեկում բնակվող միայնակ հայ կնոջ բակում, և թուրքական ոստիկանությունը ոչինչ չձեռնարկեց նրան պաշտպանելու համար՝ բարեկամաբար խորհուրդ տալով հեռանալ՝ ավելի մեծ փորձանքի մեջ չընկնելու համար[727]:

Թուրքական իշխանությունների կողմից Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումների դեմ պայքարի ուղղություններից մեկն էլ հայկական լոբբիստական կազմակերպությունների գործունեությանը խոչընդոտելն էր: Իշխանությունների կողմից ինչպես թուրքական ու ադրբեջանական լոբբիին, այնպես էլ երկու թուրքական պետությունների դիվանագիտական ներկայացուցչություններին հանձնարարություն տրվեց չեզոքացնել Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման ուղղությամբ հայկական լոբբիի գործունեությունը[728]: Պետք է նշել, որ, չնայած թուրքական կողմի ձեռնարկած քայլերին, Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի նախօրյակին և ընթացքում նորանոր երկրներ ճանաչեցին այդ հանցագործության փաստը:

2014 թ. սեպտեմբերի 9-ին Հունաստանի, իսկ 2015 թ. ապրիլի 2-ին Կիպրոսի խորհրդարաններն ընդունեցին Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրենքներ[729]: 2015 թ. մարտի 3-ին

---

[726] Ավագյան Ա., Պանթուրքական երազանք կամ «Գորշ գայլեր», էջ 139:
[727] Տես Օզինյան Ա., Թուրքիայում նորից հայ են սպանել, http://www.mediamax.am/am/column/12370/
[728] Տես «100-ամյակի նախօրյակին հնարաւոր է՝ Անգարայի կողմից հրապարակուեն Հայոց Ցեղասպանությունը ժխտող «նոր» արխյուային փաստաթղթեր», http://www.horizonweekly.ca/article/details/50
[729] Տե՛ս Կիպրոսը քրեականացրել է Հայոց ցեղասպանության ժխտումը, http://armtimes.com/hy/read/62052

«Եվրոպական ժողովրդական կուսակցության»* Քաղաքական համաժողովն ընդունեց «Հայկական ցեղասպանությունը և եվրոպական արժեքները» խորագրով բանաձև: Բանաձևի հենց վերնագրում Հայոց ցեղասպանության ճանաչումը փոխկապակցվում է եվրոպական արժեքների հետ: Հատկանշական է, որ բանաձևում դատապարտվում է ոչ միայն երիտթուրքերի, այլ նաև թուրքական հաջորդ վարչակարգերի կողմից 1894-1924 թթ. իրականացված ցեղասպանությունը՝ այդպիսով ցույց տալով թուրքական վարչակարգերի ցեղասպան քաղաքականության ժառանգականությունը: Ցեղասպանության ժխտումը բանաձևում համարվում է պատասխանատվությունից խուսափելու և իրականացված ոճրագործությունները մոռացության մատնելու կամ արդարացնելու փորձ, որպես շարունակական հանցագործություն և նոր ցեղասպանություններ խրախուսելու միտում: Բանաձևը բացառիկ է նրանով, որ առաջին անգամ խոսվում է նյութական հատուցման, հողերի վերադարձի, մշակութային ժառանգության պահպանման, հնագույն մեծ քաղաքների, եկեղեցիների, դպրոցների, գերեզմանոցների և Արևմտյան Հայաստանում տեղակայված այլ պատմամշակութային արժեքների վերականգնման մասին[730]:

Մարտի 12-ին Եվրոխորհրդարանն ընդունեց «Մարդու իրավունքներ, ժողովրդավարությունն աշխարհում և ԵՄ-ի քաղաքականությունը 2013 թ.» զեկույցը, որում առանձին կետով նշվում է Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի մասին և ԵՄ-ի անդամ-պետություններին կոչ է արվում ճանաչել այդ փաստը, իսկ ԵՄ-ի կա-

---

* ԵԺԿ-ն Եվրոպական միության ամենաազդեցիկ քաղաքական միավորումներից է: Եվրոխորհրդարանի 751 անդամներից 219-ը այս կուսակցության ներկայացուցիչներն են, Եվրահանձնաժողովի և Եվրոպական խորհրդի 28-ական անդամներից 14-ականը ևս ԵԺԿ-ական են:

730 Տե՛ս ԵԺԿ-ն Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված բանաձև է ընդունել, http://news.am/arm/news/255195.html

ռույցներին՝ նպաստել ճանաչման գործընթացին: Մարտի 18-ին էլ «Եվրոնեստի»* խորհրդարանական վեհաժողովն ընդունեց բանաձև Հայոց ցեղասպանության վերաբերյալ՝ կոչ անելով Թուրքիային ճանաչել այդ փաստը և հաշտվել իր անցյալի հետ:

Ապրիլի 12-ին, Սուրբ Պետրոսի տաճարում տեղի ունեցավ անանախադեպ իրադարձություն՝ Հռոմի պապ Ֆրանցիսկոսը հատուկ պատարագ մատուցեց, որի ժամանակ հայ ժողովրդի նկատմամբ կատարված հանցագործությունը նա անվանեց 20-րդ դարի առաջին ցեղասպանություն: Պատարագի ժամանակ մեծարվեց Սուրբ Գրիգոր Նարեկացին՝ որին շնորհվեց «Տիեզերական եկեղեցու վարդապետ» տիտղոսը[731]: Պապի պատարագից հետո ելույթներով հանդես եկան Հայ Առաքելական եկեղեցու երկու նվիրապետական աթոռների առաջնորդները՝ Ամենայն Հայոց Գարեգին Բ և Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա կաթողիկոսները, ինչպես նաև Հայ կաթոլիկ եկեղեցու առաջնորդ Ներսես Պետրոս XIX-ը:

Գիտակցելով թուրքական դիվանագիտության և թուրքական լոբբիի կատարյալ ֆիասկոն, Թուրքիայի նախագահ Էրդողանը Հռոմի պապ Ֆրանցիսկոսի կողմից Հայոց ցեղասպանությունը XX դարի առաջին ցեղասպանություն համարելը զառանցանք անվանեց և հորդորեց նրան այլևս չկրկնել այդ սխալը[732], իսկ պատարագի հաջորդ օրը Թուրքիայի դեսպանը հետ կանչվեց Վատիկանից: Հռոմի պապին հասցրած վիրավորանքներն առաջացրին կաթոլիկ ամբողջ

---

* Եվրոնեստը ԵՄ-ի «Արևելյան գործընկերություն» նախաձեռնության խորհրդարանական մարմինն է, որում մասնակցում են Եվրոխորհրդարանի և «Արևելյան գործընկերության» հինգ անդամ-պետությունների՝ Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի, Մոլդովայի և Ուկրաինայի պատգամավորները:

[731] Տե՛ս Պապ. Հայերի հետ կատարվածը 20-րդ դարի առաջին ցեղասպանությունն էր, http://www.azatutyun.am/content/article/26951506.html

[732] Տե՛ս Էրդողանը «զառանցանք է» անվանել Հռոմի պապի խոսքերը Ցեղասպանության մասին, http://www.panarmenian.net/arm/news/190692/

աշխարհի, այդ թվում՝ Եվրոպայի խիստ վրդովմունքն ու քննադատությունը՝ հանգեցնելով մի շարք եվրոպական կառույցների ու եվրոպական նորանոր երկրների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման բանաձևերի ընդունմանը:

Ապրիլի 15-ին «Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցը» թեմայով քննարկումների արդյունքում Եվրոխորհրդարանը բանաձև ընդունեց, որով դատապարտում էր Հայոց ցեղասպանությունը՝ Թուրքիայի իշխանություններին կոչ անելով ճանաչել այն և առանց նախապայմանների կարգավորել հարաբերությունները Հայաստանի հետ՝ սահմանները բացելու և դիվանագիտական հարաբերություններ ստեղծելու միջոցով: Ապրիլի 21-ին Ավստրիայի խորհրդարանն իր բանաձևով ճանաչեց ու դատապարտեց Հայոց ցեղասպանությունը՝ Թուրքիային կոչ անելով Օսմանյան կայսրությունում հայերի բնաջնջումը ճանաչել՝ որպես ցեղասպանություն: Ապրիլի 23-ին Գերմանիայի Նախագահ Յոախիմ Գաուկը Բեռլինի Մայր տաճարում կրկնեց Հռոմի պապի ձևակերպումը Հայոց ցեղասպանության հետ կապված՝ այն անվանելով 20-րդ դարի առաջին ցեղասպանություն: Գերմանիայի Նախագահն իր ելույթում հատուկ ընդգծեց, որ Թուրքիան ավանդաբար մերժում է Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին շուրջ մեկուկես միլիոն հայերի զանգվածային ջարդեր իրականացնելու մեղադրանքները և չափազանց ցավագին է վերաբերվում Արևմուտքի այն քննադատություններին, որոնք վերաբերում են Հայոց ցեղասպանության հարցին:

Լյուքսեմբուրգի խորհրդարանն էլ մայիսի 5-ին ընդունեց բանաձև, որում, հարգանքի տուրք մատուցելով Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին, ընդգծվում է, որ մեկ դար առաջ Օսմանյան կայսրությունում հայերի դեմ իրականացվածը հենց ցեղասպանություն է, և Թուրքիայի իշխանություններին կոչ էր արվում առերեսվել սեփական պատմությանը:

2015 թ. ապրիլի 24-ին Ռուսաստանի, Ֆրանսիայի, Կիպրոսի և Սերբիայի նախագահներն ԱՄՆ-ի պաշտոնական պատվիրակության ներկայությամբ Ծիծեռնակաբերդում հնչեցրած իրենց ելույթներում ևս մեկ անգամ դատապարտեցին այդ հանցագործությունը՝ կրկին ուղերձներ հղելով Անկարային:

Վերջին տարիներին Թուրքիայի քաղաքական կյանքում հաճախակի է դարձել այն երևույթը, երբ քաղաքական հակառոկորդները միմյանց ներկայացնում են «հայկական ծագում ունենալու մեղադրանքը»[733]: Ա. Գյուլի՝ Թուրքիայի Նախագահի թեկնածու եղած ժամանակ ընդդիմադիր ԺՀԿ-ի պատգամավորը նրան մեղադրեց հայկական ծագում ունենալու մեջ՝ նշելով, որ, իբր, նրա մայրը հայ է[734]: Ի պատասխան, Գյուլն իր մամլո խոսնակի միջոցով հակառակը վկայող փաստաթղթեր ներկայացրեց: Նույն կերպ, Թուրքիայի ամենախոշոր՝ ընդդիմադիր ԺՀԿ-ի նախագահ Քեմալ Քըլըչդարօղլուին փորձեցին «մեղադրել», թե, իբր, նա ալևիական ծագման մեջ իր հայությունն է թաքցնում: Վերջինս հետևեց Գյուլի օրինակին ու դատական գործընթաց սկսեց գրքի հեղինակի հանդեպ՝ զրպարտանքի և սուտ տեղեկություններ տարածելու մեղադրանքով:

Նախընտրական շրջանում էլ թուրքական իշխանությունները որոշ պաշտոններում ազգային փոքրամասնությունների առանձին ներկայացուցիչների «ցուցադրաբար» տեղ են տալիս, ակտիվորեն շրջանառվում են նաև հայազգի թեկնածուներին կուսակցությունների նախընտրական ցուցակներում ընդգրկելու մասին լուրերը: Հասկանալի է, սակայն, որ դրանք քարոզարշավի շրջանակներում բացառապես քարոզչական նպատակներ հետապնդող քայլեր են: Խորհրդարանական ընտրությունների ժամանակ ԱԶԿ-ն, օգտագոր-

---

[733] Տե՛ս Օզինյան Ա., Ատելության մետաստազները, www.mediamax.am/ am/ column /12316/

[734] Տե՛ս Մելքոնյան Ռ., Հայերի բռնի իսլամացումը ցեղասպանության տարիներին. ընթացքը և հետևանքները, էջ 106:

ծելով պետական լծակները, առավելապես պայքարում է ԱՇԿ-ի ձայները շահելու համար: Այս տրամաբանությամբ պետք է բացատրել Էրդողանի վերջին հակահայկական քայլերը՝ Կարսում գտնվող հայտնի արձանի ապամոնտաժումը, կոշտ հայտարարությունները հայ–թուրքական հարաբերությունների առնչությամբ, ինչպես նաև առավելապես ադրբեջանցիներով բնակեցված վայրերում հնչեցված հակահայկական հայտարարությունները: Իբր հայ–թուրքական բարեկամությունը խորհրդանշող Կարսի արձանի մասին բարձրաձայնելով, որը մինչ այդ շատ փոքր թվով մարդկանց էր հայտնի, Էրդողանն այն դարձրեց իր քարոզարշավի քաղաքական տեխնոլոգիաների գործիք՝ Կարսի մարզում բնակվող ադրբեջանցիների ձայները ստանալու նպատակով: Թուրքիայի վարչապետը արձանը որակեց, որպես անճոռնի, և հրահանգեց քանդել այն[735]:

Եթե այսօր Թուրքիայում կարողանում են Հայոց ցեղասպանության մասին ազատ խոսել, ապա դրա կարևոր պատճառներից մեկը «Էրգենեքոնի» գործով Վելի Քյուչուքի և նրա խմբի ձերբակալումն է, ինչպես նաև Հրանտ Դինքի սպանությունն ու դրան տրված հասարակական արձագանքը: Սպանությունը և դրան տրված հասարակական արձագանքը հենց «Էրգենեքոնի» և Հայոց ցեղասպանության միջև առկա կապն է հուշում: Ուզում եմ հիշեցնել, որ «Էրգենեքոնը» միայն քաղաքական մի շարք սպանությունների իրականացմամբ հեղաշրջման համար հող նախապատրաստող ահաբեկչական կազմակերպություն չէր: Այն, միևնույն ժամանակ, զանգվածային քաղաքական մի շարժում էր, որն իր գործունեության ուղղություններից մեկն էր դարձրել «Հայոց ցեղասպանության անհիմն պնդումների» դեմ պայքարը, ինչի արդյունքում էլ սպանվեց Դինքը: Պատահական չպետք է համարել այն, որ «Թալեաթ փաշայի» անվան կոմիտեի հիմնադիր անդամների մի զգալի մասը ձերբակալվել է «Էրգենեքոնի»

[735] Տե՛ս Հովհաննիսյան Ա., նշվ. աշխ.,էջ 42-43:

դատավարության շրջանակում: Հարցաքննությունների ժամանակ կասկածյալներին ուղղված հարցերի զգալի հատվածն առնչվել է կոմիտեին և նրա գործունեությանը: «Էրգենեքոնի» գործի շրջանակներում ձերբակալված կոմիտեի գլխավոր քարտուղարի խոսքով, իրեն տրված 49 հարցից 17-ը վերաբերվել են «Թալեաթ փաշայի» անվան կոմիտեին ու «Հայոց ցեղասպանության անհիմն պնդումների» դեմ կառույցի ծավալած գործունեությանը[736]:

Ամփոփելով թուրքական իշխանությունների դիրքորոշումը Հայոց ցեղասպանության և, հատկապես, այդ հանցագործության հետևանքների հաղթահարման հարցի վերաբերյալ, կարող ենք արձանագրել, որ ներկայիս թուրքական վարչակարգը ժառանգաբար շարունակում է այս հարցում նախորդների քաղաքական գիծը, սակայն, գիտակցելով կոշտ ժխտողականության անհեռանկարությունը, մարտավարական նոր մեթոդների ու հնարքների միջոցով փորձում է բարձրացնել ժխտողական քաղաքականության արդյունավետությունը:

3.3.Թուրքական հասարակության կողմից Հայոց ցեղասպանության հարցի արդի ընկալումները

1990-ական թթ., հիրավի, կարելի է անվանել այն շրջանը, երբ Թուրքիայում Հայոց ցեղասպանության հարցի շուրջ եղած «լռության պատը» սկսեց ճեղքեր տալ: Դրան նպաստեցին մի շարք արտաքին ու ներքին գործոններ՝ «սառը պատերազմի» ավարտը, Հայաստանի անկախացումը և հայկական պետականության վերականգնումը, հետևաբար և Հայկական հարցի պետականորեն արծարծելու հնարավորությունը, ԽՍՀՄ-ի փլուզումը, ԵՄ ինտեգրվելու Թուրքի-

[736] Տե՛ս Աքչամ Թ., Էրգենեքոնը և Հայոց ցեղասպանությունը, http://ermenihaber.am/?lang_id=2&menyu_id=3&top_current=69

այի ձգտումը, ինչպես նաև Թուրքիայի ներքաղաքական զարգացումները՝ քրդական հարց, իսլամականության ակտիվացում, թուրք ինքնության շուրջ քննարկումներ և այլն:

Դինքի և իր ընկերների կողմից 1996 թ. հիմնված հայերեն և թուրքերեն «Ակօս» երկլեզու թերթն ի սկզբանե հրապարակ իջավ որպես անխուսափելի ձայն համատարած լռության մեջ: Այս թերթի շնորհիվ Ստամբուլում կենտրոնացած և փոքրիկ ու ինքնամփոփ հայկական համայնքը թրքախոսների մեջ առաջին անգամ արտահայտվելու հնարավորություն ստացավ: Զուգահեռաբար, թուրք պատմաբանների աճող հետաքրքրությունը բարձրակետին հասավ 2005 թ. սեպտեմբերին կազմակերպված օսմանյան հայերի վերաբերյալ աշխատաժողովին, որը կայացավ ի հեճուկս կառավարության ներսում և լրատվամիջոցների մեծ մասում բարձրացած բողոքի ու դժգոհության ալիքի[737]: «Ակօսի» ազդեցությունը թուրք ընթերցողների վրա, որի արդյունքում որոշ չափով փոխվեց հայի ընկալումը թուրական հասարակությունում, մեծապես պայմանավորված էր Հր. Դինքի անձով, նրա անձնական հատկանիշներով, առաջին հերթին՝ խիզախությամբ:

Դինքը թուրքական պետական ժխտողականության դեմ պայքարող մարտիկ էր: Նա պարբերաբար ենթարկվում էր սպառնալիքների, հետապնդումների թուրք ազգայնականների կողմից՝ հաճախակի հարկադրված լինելով այցելել ոստիկանական բաժանմունքներ, քանզի բարձրաձայնում էր Հայկական հարցը, Հայոց Ցեղասպանության ընդունման անհրաժեշտությունը՝ փորձելով նպաստել հայ-թուրքական երկխոսությանը, միևնույն ժամանակ կտրականապես հրաժարվելով լքել Թուրքիան: Հրանտն անընդհատ կրկնում էր,

[737] Աքթար Չ., Կոչ ներումի. թուրքերը դիմում են հայերին, էջ 15:

որ հայ է, բայց ծնվել է Թուրքիայում, նաև, որ թուրք հասարակության մի մասնիկն է ու չի ցանկանում փախչել:

Նա պնդում էր, որ Թուրքիայում մեծամասնությունը չգիտի Հայոց ցեղասպանության մասին ճշմարտությունը, քանի որ 90 տարի արգելված է եղել խոսել այդ մասին: Այս հանգամանքից ելնելով՝ Դինքը գտնում էր, որ հայկական կողմը նախ թուրքերին իրական պատմությունը սովորեցնելու և հետո միայն ցեղասպանությունը ճանաչելու դիվանագիտություն պետք է վարի: Դինքը նշում էր, որ ցեղասպանության մասին ավելի տեղեկացված է բնակչության այն հատվածը, որն այսօր բնակվում է պատմական Հայաստանի տարածքում, որի մեծ մասը թրքացած կամ քրդացած հայեր են, որոնք հիշում են իրենց նախնիների նկատմամբ իրականացված ոճիրը: Ըստ Դինքի, Թուրքիայում Հայկական հարցը սկսեց շոշափվել քրդական հարցին զուգահեռ և առաջինը հենց քուրդ մտավորականները գրեցին այդ մասին՝ վկայելով հայոց կոտորածներին նաև քրդերի մասնակցությունը: Թուրք հասարակությունը այլևս անվերապահորեն չի հավատում պաշտոնական քարոզչությանը, և հասարակության մի հատվածը սկսել է անդրադառնալ ցեղասպանությանը՝ չնայած պետական վարչակազմի ստեղծած խոչընդոտներին: Թուրքիայի համառ ժխտողականությունը Հրանտ Դինքը բացատրում էր ոչ միայն Անկարայի՝ արտաքին աշխարհի աչքերում իր «իմիջը» պահելու անհրաժեշտությամբ, այլև՝ սեփական ժողովրդի ինքնագիտակցության արթնացման նկատմամբ վախով: Նրա կարծիքով, Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում լավագույն ճանապարհը Թուրքիայի ժողովրդավարական երկիր դառնալն է, երբ «ներքևից» պահանջ կլինի, և հասարակությունն, առանց արտաքին ճնշումների, կճանաչի ցեղասպանությունը[738]:

---

[738] Տե՛ս Հովհաննիսյան Ա., Մարդ, որը փոխեց Թուրքիան,

2005 թ. Ստամբուլի «Բիլգի» համասարանում Հր. Դինքն, ավարտելով իր զեկույցը, պատմում է Ֆրանսիայից Սեբաստիա նահանգ եկած Բիատրիս անունով 70-ամյա մի կնոջ մասին, որը հերթական անգամ իր հայրենի գյուղ այցելելով, այնտեղ կնքում է իր մահկանացուն: Տեղի հայերը Բիատրիսի զավակներին հորդորում են մորը թաղել հայրենի հողում: Դինք իր ելույթն ավարտեց հետևյալ խոսքերով. «Մենք բոլորս գալու ենք այստեղ մեռնելու»: Դրանք իսկական իրարանցում առաջացրեց լսարանում[739]: Այն ճշմարտությունները, որոնց մասին բարձրաձայնում էր Հր. Դինքը, պետության կողմից որպես վտանգ էին դիտվում. դրանք նման էին «Պանդորայի արկղը» բացելուն:

Հր. Դինքին հաջողվեց թուրք հասարակության լայն հատվածի մեջ փոխել հայերի հանդեպ ընկալումը, քանզի ինքն իրեն հանրայնորեն հասանելի դարձրեց՝ մասնակցելով հարթակային քննարկումներին և հարցազրույցներ տալով գլխավոր հեռուստաալիքներին: Նույնիսկ նրանք, ովքեր Թուրքիայի հայերի մասին ոչինչ չգիտեին, իմացան նրանից: Մյուս կողմից՝ նա ձգտում էր հավասարակշռություն պահպանել իր մտքերն արտահայտելիս՝ հնարավորինս չվանել թուրք հասարակությանը: Սակայն Թուրքիան մի երկիր է, որտեղ նույնիսկ այդպիսի հավասարակշռված, զգույշ, երբեմն փոխզիջումային մոտեցումը չի հանդուրժվում: Չնայած թուրքերի ազգային զգացումները չվիրավորելու բոլոր ջանքերին, Հրանտը սպանվեց[740]:

Դինքի սպանությունը շրջադարձային էր թուրք հասարակության համար: Պաշտոնական թեզի ողջ սնանկությունը լավագույնս

---

http://www.repairfuture.net/index.php

[739] Տե՛ս Եփրեմյան Լ., նշվ. աշխ., էջ 119:

[740] Տե՛ս Գունայսու Ա., Հրանտը սպանվեց: Սա է Թուրքիայի իրականությունը, http://hetq.am/arm/news/32061/

արտահայտված էր լրագրող Ահմեդ Ալթանի հետևյալ տողերում. «Ոչինչ չի փոխվել. նրանք սպանվել են 1915 թ., նրանք սպանվում են և 2007 թ.: Առաջ մեզ ասում էին. «Նրանք սպանում էին մեզ, մենք էլ սպանեցինք նրանց»: Ի՞նչ եք ասելու հիմա. «Հրանտը սպանեց մեզ, մենք էլ սպանեցինք նրա՞ն»: Թուրքիան փոթորկվեց հայազգի մտավորականի սպանության փաստից, Հրանտ Դինքի մահը ցնցեց երկիրը: Նրա մահվան հաջորդ օրը հազարավոր թուրքեր, քրդեր, հայեր մոմերով, ծաղիկներով ու Դինքի լուսանկարներով, շարժվեցին կենտրոնական Թաքսիմ հրապարակից մինչև սպանության վայրը՝ ձեռքներին պահած «Մենք բոլորս հայ ենք, մենք բոլորս Հրանտ Դինք ենք» պաստառները: 2007 թ. հետո հայերը սկսեցին ավելի ինքնակազմակերպվել ու բարձրացնել իրենց հուզող խնդիրները: Հրանտի առաքելությունը շարունակում են նրա հայ և թուրք ընկերները, որոնց ոչ մեծաթիվ շարքերն ավելանում են[741]:

Դինքի սպանության գործով հրապարակված թուրքական դատարանի վճիռը, սակայն, միանշանակ չընդունվեց թուրքական հասարակության տարբեր հատվածների կողմից: Թուրքերի մի մասը քաջ գիտակցելով, որ դրա հետևում կանգնած է պետությունը, սրտի խորքում հավանություն տվեց նրա գործողություններին ու խորհրդավորեն լռեց՝ օրինաչափ համարելով սեփական հանցանքը պարտակելու ուղղությամբ իշխանության գործադրած ջանքերը: Մյուսներն, ընդհակառակը, գիտենալով ճշմարտությունը, ամենևին էլ չէին պատրաստվում լռել և իրենց բողոքի ձայնը բարձրացրին: Սակայն, երկու դեպքում էլ Թուրքիայի իշխանությունները սեփա-

741 Տե՛ս Հովհաննիսյան Ա., Մարդ, որը փոխեց Թուրքիան, http://www.repairfuture.net/index.php

կան քաղաքացիների առջև հայտնվեցին բացահայտված խաբեբայի կարգավիճակում, որին այլևս ոչ ոք չի հավատում[742]:

2008 թ. դեկտեմբերի 15-ին մի խումբ թուրք մտավորականներ համացանցի միջոցով տարածեցին մի հայտարարություն, որով կոչ էին անում թուրքերին ներողություն խնդրել հայերից 1915 թ. Մեծ եղեռնի համար, որը Թուրքիան ամեն կերպ փորձել է մոռացության քողով ծածկել: Անհատների գիտակցությունից սկիզբ առած քաղաքացիական այդ նախաձեռնությունը, ստորագրողների թվի աճին զուգահեռ, դարձավ հավաքական հիշողության մի գործողություն: Ուղղված լինելով նախևառաջ թուրքերին, ապա հայերին՝ այդ նախաձեռնությունը դարձավ անխուսափելի մի շրջադարձ: Այդ կոչը կարծես, մի հարված էր տասնամյակների ընթացքում Թուրքիայում տարածված պաշտոնական ժխտողական տեսակետին[743]:

Կոչի բովանդակության հետ կապված՝ նախաձեռնության կազմակերպիչները խոստովանում են, որ դրա շուրջ համաձայնության գալն իրենց համար դյուրին չի եղել, ոմանք նկարագրական-ուսուցողական ամբողջական տեքստի կողմնակից էին, մյուսները՝ հնարավորինս կարճ տարբերակի, որով հնարավոր կլիներ խուսափել թյուրիմացություններից: Հայտարարության վերջնական՝ թուրքերեն տեքստը, որի հեղինակներն են՝ Բայրամօղլուն ու Աքթարը, թարգմանվել է տասներեք լեզուներով: Հայոց ցեղասպանության փոխարեն «Մեծ եղեռն» եզրույթի կիրառումը հեղինակները փորձում էին հիմնավորել նրանով, որ նման ձևակերպմամբ Հայոց ցեղասպանությունը կարող էր համընդհանուր ճանաչում գտնել, դառնալ ցեղասպանության ընկալման ընդհանուր եզր բոլորի համար՝ հանուն

---

742 Տե՛ս Գրիգորյան Վ., Նահատակությամբ հաղթելու խորհուրդը. Հրանտ Դինքի սպանության 5-րդ տարելիցի առթիվ, http://www.armtown.com/news/am/has/20120120/4268131640/

743 Տե՛ս Աքթար Չ., նշվ. աշխ., էջ 11-12:

համատեղ ապագայի կառուցման[744]: Այս հիմնավորմամբ հեղինակները, փաստորեն, խոստովանում էին, որ անգամ հայերի նկատմամբ կատարված հանցագործությունն, իբրև փաստ, ընդունող թուրք մտավորականներից շատերը հակված չեն այն «ցեղասպանություն»՝ «գենոցիդ» անվանել: Ակնհայտ է, որ թուրք մտավորականները միտումնավոր խուսափել են միջազգայնորեն ընդունված «գենոցիդ» եզրույթն օգտագործելուց, որն, ի տարբերություն «Մեծ եղեռնի», միջազգային իրավունքով սահմանված է՝ որպես քրեական պատասխանատվություն ենթադրող ծանր միջազգային հանցագործություն: Բացի այդ, թուրք մտավորականների կոչում հատուկ շեշտադրված է այն միտքը, որ հանցագործության զոհ են հանդիսանում բացառապես օսմանյան հայերը, այլ ոչ թե հայ ժողովուրդը, իսկ հանցագործության կատարման ժամկետը նրանք սահմանափակում են միայն 1915 թվականով[745]: Նման ձևակերպումներով էապես աղավաղվում է Հայոց ցեղասպանության բնույթը և նսեմացվում է հայ ժողովրդի նկատմամբ իրականացված հանցագործության ծանրության աստիճանը: Թուրք մտավորականները կոչում շեշտում են, որ իրենց «խիղճը չի ընդունում», և իրենք «անարդարություն» են համարում 1915 թ, դեպքերի նկատմամբ «անտարբերությունն ու ուրացումը», սակայն բացարձակապես ոչ մի խոսք չեն ասում հանցագործության հետևանքների հաղթահարման կամ վերացման անհրաժեշտության մասին: Եվ դա հասկանալի է, քանզի նախաձեռնության հեղինակները «Մեծ եղեռնի» իրագործման աշխարհագրական տարածք համարում են Անատոլիան, որտեղ, իրենց կարծիքով, ընդհանուր ողբերգություն է տեղի ունեցել թուրքերի, քրդերի և, առավելապես, հայերի համար[746]: Հատկանշական է, որ թուրք մտավորականների կոչում տեղ գտած անո-

[744] Տե՛ս Աքթար Չ., նշվ. աշխ., էջ 57:
[745] Տե՛ս նույն տեղում, էջ 9:
[746] Տե՛ս Աքթար Չ., նշվ. աշխ.,, էջ 57:

ռոշ և տարընթերցումների տեղիք տվող այս ձևակերպումները բավականին համահունչ էին որոշ ժամանակ անց Թուրքիայի արտգործնախարար Ա. Դավութօղլուի, այսպես կոչված, «ընդհանուր տառապանքի» դատողություններին, ինչպես նաև Էրդողանի կողմից հայ ժողովրդին ուղղված ցավակցական ուղերձում տեղ գտած ձևակերպումներին:

Համացանցային արշավը սկսվեց 2008 թ. դեկտեմբերի 15-ին: Կայքի ստեղծումն ու անվտանգ գործարկումը վարձավճարի դիմաց իրականացնում էին երիտասարդ արհեստավարժ ծրագրավորողներ: Առաջին ստորագրությունները հավաքելու ընթացքում՝ կայքի պաշտոնական գործարկումից մոտ տասն օր առաջ Ստամբուլի լրատվամիջոցները կռահեցին նախագծի մասին, որի հետևանքով շուտով բանավեճ սկսվեց: Նախագծի սկզբնական գաղափարը հնարավորինս շատ ճանաչված մտավորականներ կամ հասարակական երևելի դեմքեր ներառելն էր, որպեսզի հնարավոր լիներ տարբեր ընկալումների տեր մարդկանց զգայուն դարձնել խնդրի նկատմամբ: Դեկտեմբերի 5-ից 15-ն ընկած ժամանակահատվածում մոտ երկու հարյուր հանրաճանաչ անձինք արդեն համաձայնել էին սատարել Կոչին: Արշավի հենց սկզբից ստորագրությունների թիվը շատ արագ աճեց՝ թշնամությունների ու կայքի աշխատանքը խոչընդոտելու փորձերի պատճառ դառնալով: Այդպիսի փորձեր կարող էին իրականացվել միայն պետական գերատեսչությունների տրամադրության տակ եղած գերհզոր համակարգիչների միջոցով: Կայքի անվտանգության նկատառումներով սերվերների թիվը բազմապատկվեց, սակայն, չնայած ձեռնարկված միջոցներին, ժամանակ առ ժամանակ կայքը չէր գործում[747]:

[747] Տե՛ս Աքթար Չ., նշվ. աշխ.,, էջ 18-19:

Ստորագրողները, հիմնականում, ուսանողներն են (30 տոկոս), մշտական աշխատանք ունեցողները (25 տոկոս) և ազատ մասնագիտությունների տեր մարդիկ (23 տոկոս): Քաղաքական տեսանկյունից պետք է նշել, որ ստորագրողների թվում են մի շարք քուրդ պատգամավորներ, լրագրողներ: Աշխարհագրական բաշխվածության տեսակետից մասնակցության բարձր ցուցանիշներով առաջին տեղերում են՝ Ստամբուլը, Թունջելին, Դիարբեքիրը, Անկարան, Իզմիրը, Մերսինը, Բուրսան, Ադանան, Անթալիան, Վանը և Մարդինը, ինչը ևս վկայում է քրդերի մասնակցության բարձր տոկոսի մասին: Այսօր կոչին սատարում են տարբեր կողմնորոշման և կրոնական պատկանելության 360 գաղափարական աջակիցներ, այն միավորել է 30 000 ստորագրողների[748]:

Թուրքիայի Արդարադատության նախարարության տեղեկատվության համաձայն, միայն 2008-2012 թթ. ընթացքում հակահայկական բնույթի գործողություններ գրանցվել են ավելի քան 600 անգամ, սակայն դրանց մեծամասնությունը հասարակական հնչեղություն չի ստացել նաև մամուլի խիստ գրաքննության պատճառով: Ներկայումս, իրականությունը մի փոքր այլ է: Թուրքական մամուլն արձագանքում է ազգայնականների հակահայկական դրսևորումներին, ձայն են բարձրացնում իրավապաշտպան կազմակերպությունները, ինչպես նաև«Ակօս» պարբերականը: Մասնավորապես, Հր. Դինքի գործունեության, հետագայում նաև «Ակօսի» հրապարակումների շնորհիվ հայատյացության դեպքերը լայն հնչեղություն ստացան, և թուրքական մի շարք պարբերականներ սկսեցին անմիջապես արձագանքել դրանց[749]:

---

[748] Տե՛ս նույն տեղում, էջ 20:
[749] Տե՛ս Օզինյան Ա., Թուրքիայում նորից հայ են սպանել, http://www.mediamax.am/am/column/12370/

2010 թ. սկսած՝ ապրիլքսանչորսյան հիշատակման արարողությունները նշանավորվեցին աննախադեպ միջոցառումներով. դա և՛ ներողության առցանցային ստորագրահավաքն էր, և՛ «Թաքսիմ» հրապարակի մոմավառությունը, և՛ «Հայդարփաշա» կայարանում անցկացված նստացույցը և այլն: Թուրքիայում հայկական «տաբու»-ն զգալիորեն նահանջել է, այդ երկրում տեղի են ունենում Հայկական հարցի հանրային քննարկումներ, որոնք դեպի ժողովրդավարացում և քաղաքացիական հասարակություն տանող գործընթացի մաս են կազմում: Ներկայումս, թուրքական հասարակության առաջադեմ հատվածը բացահայտորեն չի ընդունում պետության կողմից Հայոց ցեղասպանության հարցում պարտադրվող պաշտոնական տեսակետները: Մտավորականության այդ հատվածը ոչ միայն զերծ է պաշտոնական կաղապարներից, այլև՝ այլընտրանքային աղբյուրների մատչելիության ու հանրային լայն քննարկման կողմնակից է: Իհարկե, որքան ուժեղանում է միջազգային և, հատկապես, ներքին ճնշումը, այնքան ավելի են ուժեղանում ծայրահեղ ազգայնական ուժերի ջանքերը հակաարշավներ կազմակերպելու ուղղությամբ: Եթե նախկինում ժխտողականության վեկտորը հիմնականում ուղղված էր դեպի արտաքին աշխարհ, ապա ներկայումս նրա մեկ այլ սլաքը ուղղված է դեպի երկրի ներսը՝ պաշտոնական թեզը չընդունող անհատների դեմ պայքարելու համար: Չնայած Թուրքիայում իրականացվող որոշ ժողովրդավարական փոփոխություններին, այդուհանդերձ, թուրքական հասարակության մեջ հայերի նկատմամբ պահպանվում են թշնամանքի և արմատացած հայատյացության տրամադրությունները, փոխվում են լոկ դրանց դրսևորումները[750]:

2011 թ. վերջին Ռ. Էրդողանի կողմից Դերսիմի դեպքերի համար ներողություն խնդրելը, կարծես, բացեց «Պանդորայի արկղը». հայե-

[750] Տե՛ս Չաքրյան Հ., Ստամբուլում Թալեաթ փաշայի անունով են կոչում հայկական վարժարանը, «Ազգ» օրաթերթ, 06.10.2011:

րի ցեղասպանության հարցը թեժ թեմա դարձավ թուրք հասարակության շրջանում: Թուրքական մամուլի էջերում իշխանություններից սկսեցին պահանջել ներողություն խնդրել թուրքական պետության կողմից նախկինում կատարված բոլոր նմանատիպ հանցագործությունների համար: Հոդվածագիրների կարծիքով, իշխանությունները պետք է նախ ներողություն խնդրեն հայերից՝ նրանց 1915 թ. պատուհասած ցեղասպանության, ապա հրեաներից՝ 1934 թ. Թրակիայում նրանց ունեցվածքի առգրավման ու սնանկացման, ոչ մահմեդական քաղաքացիներից՝ 1941 թ. ունևորության հարկ գանձելու համար, ինչի հետևանքով մեծ թվով մարդիկ մահացան հարկադիր աշխատանքային գաղութներում և այլն: Թուրքական որոշ պարբերականների էջերում նշվում էր այն միտքը, որ Հայկական հարցի շուրջ «լռության դավադրություն» գոյություն ունի, հատկապես հարուստների շրջանում, քանի որ նրանք հարստացել են հայերի ունեցվածքին տիրելու հաշվին ու եթե դա բացահայտվի, ապա դրամական փոխհատուցման հարց է առաջ գալու: Իսկ ինչպե՞ս կարող է կառավարությունը փոխհատուցել հայերին այն բանից հետո, երբ արդեն 200 միլիարդ դոլար ծախսել է քրդական ապստամբությունները ճնշելու համար: Թուրքիայի իրավապաշտպան կազմակերպություններն արդեն ստեղծել են «Ճշմարտության բացահայտման կոմիտե»՝ քննարկելու համար Հայոց ցեղասպանության և քուրդ բնակչության բռնի ձուլման երևույթները: Այդ կոմիտեի իրավաբաններն արդեն իսկ Դերսիմի հարցով զբաղվում են և ծրագրում են դատի տալ թուրքական պետությանը[751]:

Հայոց ցեղասպանության նկատմամբ վերաբերմունքի հարցում ներկայիս թուրքական հասարակությունը թուրքագետ Ա. Հովհաննիսյանը պայմանականորեն բաժանում է հետևյալ խմբերի՝

[751] Տե՛ս Ազատյան Ե., Էրդողանի ներողությունը բացում է Պանդորայի արկղը, «Ազգ» օրաթերթ, 06.12.2011:

ա.) Անմիջականորեն Արևմտյան Հայաստանի հայկական բնակավայրերում հայերի տներում անցյալ դարի 20-ականներից բնակվող և անձնապես հայերին ոչնչացրած կամ կողոպտած, ժառանգաբար հայերի մշակութային և նյութական հարստությունը վայելող քրդերի, թուրքերի ընտանիքները: Այստեղ սերնդեսերունդ փոխանցում են ընտանեկան պատմությունները, ինչպես նաև վարձահատույց լինելու վտանգը և ժխտողականությամբ այդ պահը գիտակցաբար հեռացնելու ձգտումը:

բ.) 20-ական թվականներից այդ հողերը գրաված և համեմատաբար նոր վերաբնակեցված գյուղացիները մերժում են անգամ իրենց գյուղում փաստացի գոյություն ունեցող հայկական վանքերից ու եկեղեցիներից մնացած քարեղեն վկայությունների՝ հայերին պատկանելու փաստը:

գ.) Ոչ հայկական բնակավայրերում, ինչպես նաև մեծ քաղաքներում ապրող և հայերի ոչնչացման կամ կողոպուտի գործընթացին անձնապես չմասնակցած Թուրքիայի քաղաքացիների ժառանգները, որոնք պետական ժխտողականության քաղաքականության հետևանքով կարող են տեղյակ չլինել կատարվածի մասին և ունենալ ժխտողական դիրքորոշում:

դ.) Անկախ բնակավայրից, հայերի հետ կատարված իրողությունը բացահայտ կերպով ընդունող, սակայն «ցեղասպանություն» բառից և, միաժամանակ, հայկական պահանջատիրությունից խուսափող ու այդ ձևով ժխտողականություն քարոզող Թուրքիայի քաղաքացիները:

ե.) Ցեղասպանությունը և հայկական պահանջատիրությունը բացահայտ կերպով ընդունող, այդ պատճառով հասարակության

կողմից մերժված Թուրքիայի քաղաքացիները, որոնք փոքրամասնություն են կազմում[752]:

Արևմտյան Հայաստան այցելած հայ զբոսաշրջիկների հուշերում կարելի է հանդիպել հայերի ցեղասպանության հարցի նկատմամբ այնտեղ բնակվող թուրք և քուրդ բնակչության թվարկված պայմանական յուրաքանչյուր խմբին բնորոշ արձագանքները:

Երբ արևելյան նահանգների թուրք և քուրդ բնակիչները հայ զբոսաշրջիկների խմբեր են տեսնում, նրանցից շատերը համոզված են, որ վերջիններս եկել են իրենց ունեցվածքի, իրենց հողերի, իրենց տների հետևից: Ապրիլի 24-ի հերթական տարելիցին տեսանյութ ցուցադրվեց Արևմտյան Հայաստանի գյուղերի և դրանց այսօրվա բնակիչների մասին: Դրանում ակնառու է հետևյալ դրվագը. նկարահանումների ընթացքում լրագրողը դիմում է օպերատոր Արամին, որի անունը լսելով, քուրդ տանտերը շտապ դուրս է վազում տնից այն հստակ զգացումով, որ Արամը՝ տան իսկական տերը, որին իր պապը դաժանաբար սպանել էր հենց տան բակում, վերադարձել է: Եվ զարմացած իր այդ անսպասելի բնազդային պոռթկումից՝ նա արդեն թեթևացած կիսում է իր հույզերը հայ լրագրողների հետ[753]:

Գուգարաց թեմի առաջնորդ Սեպուհ արքեպիսկոպոս Չուլջյանը պատմում է, որ երբ Մշո Սբ. Կարապետ ավերակ վանքի մոտ կանգնած դիտում էր վանքի արձանագրությունների, խաչքարերի, զարդաքանդակների բեկորները, որոնք տեղադրված էին սրբատաշ քարերով կառուցված դիմացի տան պատին, հանկարծ տնից դուրս եկավ մոտ 40 տարեկան մի տղամարդ և, դիմելով անծանոթին, հեռ-

---

752 Տե՛ս Եփրեմյան Լ., «Հայկական տաբուն» Թուրքիայում. Հոգեվերլուծական դիտարկման փորձ, «21-րդ ԴԱՐ», թիվ 3 (43), Եր., 2012, էջ 117:

753 Տե՛ս նույն տեղում, էջ 119:

վից, ինքնարդարացնող տոնով բացականչեց. «Այդ տարիներին ես դեռ ծնված չէի, հետևաբար՝ մեղավոր չեմ»[754]:

Արևելյան նահանգներում բնակվող մահմեդական բնակչության մի մասի մոտ էլ նկատվում է իր նախնիների կատարած հանցանքից իրենց խիղճը մաքրելու դրսևորումներ: Այդպիսի մաքրման գործողություն կարելի է համարել հայկական տներում բնակվող նոր տերերի երբեմն ընդգծված հյուրընկալ վերաբերմունքը հայերի նկատմամբ: Հայ զբոսաշրջիկներից մեկը պատմում է, որ, երբ մտել է տներից մեկի բանջարանոց ու, մի ափ հող վերցնելով, տոպրակի մեջ լցրել, թրքուհին այլայլվել է, անմիջապես մի վարդ քաղել և մեկնել իրեն, ինչից հետո արագ բանջարեղեն հավաքել ու տվել նրան: Թրքուհու «հյուրասիրությունը», թերևս, պայմանավորված էր նաև նրա այն սնահավատությամբ, թե հայի աչքից բանջարանոցը կարող է չորանալ[755]:

Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման նպատակով, անշուշտ, հարկավոր է խոսել թուրքերի հետ, նրանց իրազեկել ցեղասպանության ընթացքում մեր ժողովրդի կրած տառապանքների մասին, ներկայացնել Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հարցում թուրքական կողմից մեր ակնկալիքները, ինչպես նաև հայերի և թուրքերի ներկա ու ապագա հարաբերությունների կարգավորման մեր մոտեցումները: Այս առումով պետք է նշել, որ արդեն քսան տարի թուրք հասարակության մեջ այս խնդիրները բարձրաձայնվում են Թուրքիայի հայերի՝ ինչպես պոլսահայության, այնպես էլ ծպտյալ հայերի ներկայացուցիչների կողմից[756]: Չափազան կարևոր պետք է համարել, որ այդ գործն արդեն

---

[754] Տե՛ս Տ. Սեպուհ եպիսկոպոս Չուլջյան, Առաջնորդ Գուգարաց թեմի, «Ուխտագնացություն Արևմտյան Հայաստան», «Ազգ» օրաթերթ, 12.09.2009:
[755] Եփրեմյան Լ., նշվ. աշխ., էջ 130:
[756] Տե՛ս Գոճայյան Ա., Հրանդ Տինքն ու պոլսահայերը այսօր,

սկսվել է հենց թուրքահայերի կողմից, սակայն նրանք չպետք է միայնակ մնան իրենց ձեռնարկումներում. նրանք պետք է ստանան ամբողջ հայության աջակցությունը: Նշված հարցերի շուրջ թուրքերի հետ երկխոսություն սկսելուց առաջ նախ հարկավոր է ընտրել ճիշտ զրուցակցի՝ ավելի առաջադեմ հայացքներ ունեցող մտավորականների, որոնք չեն ուղղորդվում իշխանությունների կամ ծայրահեղ ազգայնական ուժերի կողմից, հակառակ պարագայում ձեռնարկված ջանքերը կլինեն ապարդյուն, անտեղի կվատնվեն ռեսուրսներն ու ժամանակը: Կարծում ենք, որ թուրք հասարակության մեջ նշված հարցերի շուրջ երկխոսություն ծավալելու համար համապատասխան թիրախ - զանգվածների ընտրության, նրանց հետ տարվելիք աշխատանքի կազմակերպման հարցում հարկավոր կլինի նույն պոլսահայերի և ծպտյալ հայերի միջնորդությունը:

Չնայած Թուրքիայում տեղի ունեցած ժողովրդավարացման որոշ գործընթացներին և Հայոց ցեղասպանության հարցի հետ կապված տաբուների կոտրմանն ու իրազեկվածության մակարդակի որոշակի բարձրացմանը, այդ երկրի հասարակության մեծագույն մասը դեռևս պատրաստ չէ քննարկել Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման բազմաշերտ հարցերը: Թուրքական հասարակայնության պատրաստ չլինելու պատճառն էլ այն է, որ Թուրքիայում ապրող հայերի մեծ մասը դեռևս ձգտում է աննկատ մնալ: Եթե Հայաստանի մտավորականները կամ Սփյուռքում բնակվող հայերն ավելի նկատելի և հավասար դարձնեն Թուրքիայի հայերին, ապա ավելի լավ կհասկանան ու կտեսնեն նրանց, և Թուրքիայում կսկեն գործել այն տրամաբանությամբ, թե դրանք նաև նրանց իրավունքներն են: Այնժամ Թուրքիան ակամա հարկադրված կլինի ընդունել նրանց իրավունքները: Դրա հետ մեկտեղ՝ քրդական շար-

---

http://www.aztagdaily.com/archives/103970

ժումը ևս, զարգանալով, հենց այդ ուղղությամբ է շարժվում: Նրանք նույնպես, ի վերջո, իրենց բնական մարդկային իրավունքներն ու ազատություններն են պահանջում: Հայաստանը երկխոսության թևը պետք է ավելի շատ զարգացնի թուրքական հասարակության ավելի ժողովրդավարական և առաջադիմական հատվածի հետ, ինչը կարող է հանգեցնել նրան, որ այնտեղի մարդիկ աստիճանաբար կփոխեն իրենց մոտեցումը հայերի և Հայոց ցեղասպանության հանդեպ: Ստամբուլում ապրող և հայությունը չկորցրած հայերը պետք է ընդառաջ գնան ծպտյալ հայերին և աջակցեն նրանց հայրենակցական միությունների գործունեությանը:

ՎԵՐՋԱԲԱՆ

Թուրքիայի արդի քաղաքական համակարգին և տնտեսությանն անգամ ոչ խորությամբ ծանոթանալու դեպքում անմիջապես ի հայտ են գալիս այդ երկրի առջև ծառացած լրջագույն խնդիրներն ու մարտահրավերները: Թուրքիայի քաղաքական համակարգում առկա հիմնական խնդիրներից բավական է նշել միայն աշխարհիկության և իսլամի միջև գաղափարական առճակատումը, բանակ-քաղաքական իշխանություն և հասարակություն դիմակայությունը, անդրկուլիսյան ուժերի՝ «խորքային պետության», «գյուլենական շարժման» և ծայրահեղ ազգայնականների անընդհատ միջամտությունները երկրի քաղաքական կյանքին, ազգային-կրոնական փոքրամասնությունների խնդիրներն ու առաջին հերթին՝ Քրդական հարցը, ինչպես նաև «ինքնության ճգնաժամը» և դրանից բխող «սևրոֆոբիան»: Խնդիրների քանակությամբ ու լրջությամբ Թուրքիայի քաղաքական համակարգին չի զիջում այդ երկրի տնտեսությունը, որում առկա հիմնական խնդիրներից կարելի է առանձնացնել երկրի անհամաչափ տնտեսական զարգացվածությունը, օտարերկրյա կապիտալից և ռուսական էներգակիրներից ծայրահեղ կախվածությունը, քաղաքական ցնցումների պատճառով օտարերկրյա կապիտալի արտահոսքի ռիսկերը, գործազրկության և թուրքական արժույթի սղաճի բարձր մակարդակը, արտաքին տնտեսական հսկայական պարտքը և այլն:

Թուրքիայի թե՛ քաղաքական համակարգի, թե՛ տնտեսության մեջ ներկայումս նկատվող խնդիրներն իրենց արմատներով տանում են դեպի Թուրքիայի Հանրապետության հիմնադրման ակունքները: Տասնամյակների ընթացքում տարբեր վարչակարգերի կողմից դրանց հաղթահարման ուղղությամբ կատարված քայլերը հաջողություն չեն ունեցել, ինչի հետևանքով այդ խնդիրներն ու մարտահ-

բավերներն ավելի են խորացել՝ վերածվելով այդ երկրի անվտանգության և տարածքային ամբողջականության լրջագույն սպառնալիքի: Թվարկված խնդիրների չլուծման կարևոր պատճառներից մեկը, թերևս, կայանում է նրանում, որ դրանց հաղթահարման ուղղությամբ իշխանությունների կողմից ձեռնարկվում էին կիսաքայլեր, կատարված փոփոխությունները ոչ հետևողական և կոսմետիկ բնույթի էին, հաճախ էլ իշխանությունների գործելաոճում կարելի էր նկատել արդեն կայացված որոշումներից և սկսված գործողություններից նահանջելու և հետ կանգնելու միտումներ:

Թուրքիայի քաղաքական համակարգի ու տնտեսության խնդիրների և մարտահրավերների, ինչպես նաև ոչ թուրք ազգային-կրոնական խմբերի իրավունքների պաշտպանության հարցերի հետազոտումը մեզ հետաքրքրում է այնքանով, որքանով որ թույլ կտա պարզելու դրանց ազդեցությունը Հայոց ցեղասպանության և դրա հետևանքների հաղթահարման հարցի նկատմամբ թուրքական իշխանությունների և հասարակության ունեցած վերաբերմունքի, ինչպես նաև դրա շուրջ տեղի ունեցող զարգացումների վրա:

Ուսումնասիրության արդյունքում պարզորոշ դարձավ, որ Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հարցում մենք բախվում ենք ոչ միայն թուրքական պետության, այլև քրդական զործոնի դիմադրության հետ, քանզի անգամ Հայոց ցեղասպանությունը ճանաչող քրդական շարժման առաջնորդները Արևմտյան Հայաստանը դիտարկում են՝ իբրև տարածք, որտեղ պետք է ձևավորվի Քուրդիստան պետական կազմավորումը, իսկ հայերը և այլ քրիստոնյաները լավագույն դեպքում այնտեղ կարող են բնակվել քրդական գերակշիռ զանգվածի հետ համակեցության սկզբունքով: Առկա իրողություններից ելնելով՝ թուրքական իշխանությունների դեմ պայքարի հայ-քրդական հնարավոր համագործակցության խնդիրը կարող է քննարկվել միայն Քրդական հարցում հայկական կողմի

մշակած հստակ ռազմավարության առկայության պայմաններում: Ռազմավարության մշակումից հետո հնարավոր է քրդական շարժման ղեկավարների հետ ոչ պաշտոնական հանդիպումների ժամանակ նրանց ներկայացնել հայկական կողմի այն սկզբունքային մոտեցումները, որոնց շուրջ համաձայնություն ձեռք բերելուց հետո միայն կարելի է քննարկել համագործակցության խնդիրները: Մասնավորապես, քուրդ գործիչների հետ ոչ պաշտոնական քննարկումների ժամանակ հայկական կողմի համար ելակետային պետք է լինեն Հայոց ցեղասպանության իրականացման և հայերի ունեզրկման գործում քրդերի՝ հանցակից լինելու դրույթի անվերապահ ընդունումը, իսկ հնարավոր համագործակցության հեռանկարները պետք է պայմանավորվեն Արևմտյան Հայաստանի և ինքնավար Քուրդիստանի սահմանների հստակեցման հարցերում Սևրի պայմանագրի 62-64-րդ հոդվածների դրույթները քուրդ գործիչների կողմից ընդունելու հանգամանքով: Սևրի պայմանագրի նշված հոդվածներով քրդական ինքնավարության կազմում ներառվում են Եփրատից հարավ ընկած Դիարբեքիրի նահանգի, Բիթլիսի և Վանի նահանգների այն հատվածները, որոնք չեն մտնելու Հայաստանի կազմի մեջ, ինչպես նաև Մոսուլի նահանգը:

Քրդական շարժման ղեկավարների հետ քննարկումների գնալիս անպայման պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ թուրքական իշխանությունները ներկայումս ակտիվորեն շահարկում են ծպտյալ հայերի հարցը, փորձում են այն հակադրել Քրդական հարցին՝ նպատակ հետապնդելով լարում մտցնել քրդերի և ծպտյալ հայերի հարաբերություններում, քրդերին մղել Թուրքիայի արևելյան նահանգներում հայերին ընկալելու՝ որպես մրցակից տարրի՝ դրանից բխող վտանգավոր հետևանքներով: Դեռևս, հայկական ներկայության վերազարթոնքի փորձերը դրական են գնահատվում և, երբեմն, նաև քաջալերվում են քրդական միջավայրում:

Ուստի և մեր քայլերը որևէ կերպ չպետք է խաթարեն ներկա դրությունը: Սա նշանակում է, որ մենք պետք է արագացնենք արդեն սկսված աշխատանքները նաև ծպտյալ հայության խնդիրների լուծման ռազմավարության մշակման ուղղությամբ, քանզի, եթե ծպտյալ հայությունն իր գործունեությունը շարունակի հայությունից ու հայկական պետությունից կտրված, տարերային ձևով, ապա այն կարող է ծառայեցվել տարբեր համաշխարհային ու տարածաշրջանային քաղաքական ուժերի շահերի սպասարկմանը և, ի վերջո, մարել: Ռազմավարության մեջ առաջնահերթ տեղ պետք է հատկացվի ծպտյալ հայերի անվտանգության հարցին և առաջարկվեն այնպիսի մեխանիզմներ, որոնք հնարավորություն կտան վերազարթոնքի փուլում գտնվող, բռնի իսլամացված մեր հայրենակիցների ներուժը, առանց նրանց վնասելու, վերածել գիտակցված ազգային շարժման:

Ի տարբերություն քրդերի, շատ ավելի դյուրին է համագործակցության եզրեր գտնել Թուրքիայում իրենց թվաքանակով թուրքերից և քրդերից հետո երրորդ խումբը հանդիսացող ալևիական համայնքի առաջնորդների հետ, քանզի ալևիների հետ միևնույն տարածքի նկատմամբ, իբրև հայրենիք, մենք հավակնություններ չունենք: Ալևիները կարող են բնական դաշնակիցներ համարվել նաև ծպտյալ հայերի համար, քանզի նրանց միջև պատմականորեն ձևավորվել են բարեկամական հարաբերություններ, իսկ նախորդ պատմափուլերում կուտակվել է գոյատևման համատեղ պայքարի փորձ, մասնավորապես՝ Դերսիմում: Բացի այդ, ի տարբերություն քրդերի, ալևիների ու ծպտյալ հայերի միջև նկատելի են որոշակի ընդհանրություններ, երկու խմբերն էլ Թուրքիայում ստիպված են եղել ծպտյալ մնալ և թաքցնել իրենց ինքնությունը: Ծպտյալ հայերի իրավունքները պաշտպանելու և նրանց օգնություն ցուցաբերելու հարցում մեզ համար լիովին կարող է ընդօրինակելի լինել ալևիների եվրոպական կառույցների փորձը: Ալևիների հետ համագործակցությունը, սա-

կայն, պետք է իրականացվի չափազանց զգուշությամբ՝ որևէ կերպ չգրգռելով քրդերի խանդը և չմոռանալով, որ ալևիների մեջ որոշակի տեղ ու դեր ունեն նաև քուրդ ալևիները:

Անշուշտ, թուրքական իշխանությունները ժառանգաբար շարունակում են վարել նախորդ վարչակարգերի խտրական քաղաքականությունը և բռնությունները Թուրքիայի ոչ մահմեդական համայնքների նկատմամբ: Այս առումով Պոլսի Հայոց պատրիարքարանը հնարավորինս պետք է դյուրին դարձնի բռնի իսլամացված հայության կրոնադարձության գործընթացը՝ վերացնելով գոյություն ունեցող արհեստական դժվարություններն ու խոչընդոտները, իսկ Ստամբուլի համայնքը պետք է սերտորեն համագործակցի իսլամացված հայերի հայրենակցական միությունների հետ՝ հնարավորինս հեշտացնելով պաշտոնական հայկական համայնքում նրանց ինտեգրումը: Ցեղասպանության, բռնի մահմեդականացման, ինչպես նաև միսիոներական գործունեության հետևանքով միմյանցից տարանջատված հայության՝ Թուրքիայում բնակվող հատվածները պետք է մի կողմ դնեն իրենց միմյանցից հեռացնող ու թուլացնող կրոնական տարբերությունները և առաջնորդվեն ազգային միասնականության սկզբունքով, որպեսզի կարողանան դիմակայել թուրքական իշխանությունների կողմից իրենց նկատմամբ ներկայումս էլ իրականացվող խտրական քաղաքականությանը:

Միաժամանակ, Պոլսի Հայոց պատրիարքարանը պետք է ավելի սերտացնի համագործակցությունը Լոզանի պայմանագրով Թուրքիայի պաշտոնապես ճանաչված և չճանաչված ոչ մահմեդական փոքրամասնությունների հոգևոր առաջնորդարանների հետ: Ոչ մահմեդական համայնքների հոգևոր առաջնորդները պետք է գիտակցեն, որ, առանց անառողջ մրցակցության ու թուրքական իշխանություններին հաճոյանալու մղումների, միասնաբար ավելի արդյունավետ կարող են պայքարել Թուրքիայի ներսում իրենց հա-

մայնքների իրավունքների պաշտպանության և եկեղեցիների ու կալվածքների նկատմամբ սեփականության վերականգնման համար: Միջազգային կառույցներում ավելի լսելի կդառնա Թուրքիայի ոչ մահմեդական համայնքների առաջնորդների միասնական ձայնը, որոնք կարող են պահանջել միջազգային հանրությունից՝ հարկադրել թուրքական պետությանը՝ կատարելու միջազգային համաձայնագրերով ստանձնած պարտավորությունները ոչ թուրքական մշակութային ժառանգության պահպանման ու պաշտպանության վերաբերյալ:

Ինչ վերաբերում է թուրքական իշխանությունների դիրքորոշմանը Հայոց ցեղասպանության և, հատկապես, այդ հանցագործության հետևանքների հաղթահարման հարցի նկատմամբ, ապա այն, թեև շարունակում է մնալ ավանդական ժխտողական, սակայն, գիտակցելով կոշտ ժխտողականության անհեռանկարությունը, նրանք վերջին տարիներին դիմում են մարտավարական նոր մեթոդների ու հնարքների՝ փորձելով ավելի համոզիչ ու հասկանալի երևալ արտաքին աշխարհի առջև: Սակայն, հանուն ճշմարտության պետք է նշենք, որ ժխտողական քաղաքականության նոր մարտավարությունը ոչ միայն չարդարացրեց Անկարայի սպասելիքները, այլև՝ ձախողվել է:

Ի տարբերություն թուրքական իշխանությունների, թուրքական հասարակության տարբեր խմբերի, առաջադեմ գիտնականների, լրագրողների և ոչ թուրք ազգային-կրոնական խմբերի ներկայացուցիչների մեջ վերջին տարիներին նկատելի են որոշ դրական փոփոխություններ: Անշուշտ, այս դրական տեղաշարժում իր կարևոր դերակատարումն ունեն նաև պոլսահայերն ու ծպտյալ հայերի հիմնած միությունների ներկայացուցիչները, որոնք բարձրաձայնում են ինչպես Թուրքիայի հայերի խնդիրներն, այնպես էլ Հայոց ցեղասպանության հարցը: Միանգամայն հասկանալի է, որ Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման նպատակով թուրքերի հետ

խոսելու գործընթացը պետք է ընթանա հենց հասարակական մակարդակում, ինչն ապագայում կարող է անդրադառնալ նաև թուրքական իշխանությունների վրա: Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման համար պայքարում պոլսահայերին ու ծպտյալ հայերին պետք է միանան նաև հայության մյուս հատվածները: Նրանք միասնաբար պետք է թուրք հասարակությանը իրազեկեն ցեղասպանության ընթացքում մեր ժողովրդի կրած տառապանքների մասին, ներկայացնեն Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հարցում թուրքական կողմից մեր ունեցած ակնկալիքները և, դրանից ելնելով, հայերի ու թուրքերի ներկա և ապագա հարաբերությունների կարգավորման մեր մոտեցումները:

Նշված հարցերի շուրջ թուրքերի հետ երկխոսություն սկսելուց առաջ, սակայն, նախ անհրաժեշտ է ընտրել ճիշտ զրուցակցի՝ թուրքական իշխանությունների կամ ծայրահեղական ուժերի կողմից չուղղորդվող, առաջադեմ հայացքներ ունեցող մտավորականների: Ակնհայտ է, որ սխալ սրուցակցի ընտրության պարագայում ձեռնարկված ջանքերը կլինեն ապարդյուն, անտեղի կվատնվեն ռեսուրսներն ու ժամանակը: Նշված հարցերի շուրջ երկխոսություն ծավալելու համար ճիշտ թիրախային խմբերի ընտրության հարցում կրկին հարկավոր կլինի դիմել նույն պոլսահայերի և ծպտյալ հայերի խորհրդատվությանը, քանզի նրանք առավել քան որևէ մեկը լավ են իրազեկված թուրքական հասարակության ներսում ընթացող զարգացումների մասին:

ՀԱՎԵԼՎԱԾ

Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հնարավոր ճանապարհային քարտեզի ուրվագծման հարցի շուրջ

2015 թ. հունվարի 29-ին պաշտոնապես հրապարակվեց «Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հռչակագիրը», որով Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովն ու Սփյուռքում գործող տարածաշրջանային հանձնախմբերը համայն հայության անունից հայտարարեցին, որ այդ պահից ի վեր մեկնարկում է հայ ժողովրդի միասնական պայքարը ոչ միայն Հայոց ցեղասպանության փաստի համաշխարհային ճանաչմանը հասնելու, այլև՝ ցեղասպանության հետևանքների հաղթահարման համար: Այդ պայքարը ենթադրում է իրավական պահանջների թղթածրարի մշակում՝ դիտելով այն՝ որպես անհատական, համայնքային և համազգային իրավունքների և օրինական շահերի վերականգնման գործընթացի մեկնարկ[757]:

Միանգամայն բնական պետք է համարել, որ, պաշտոնական շրջանառության մեջ դնելով «Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարում» ձևակերպումը, ինչը հատուցման գաղափարի դիվանագիտական արտահայտությունն է, հռչակագրային բնույթ ունեցող սույն փաստաթղթում չէր հստակեցվում, թե ի՞նչ է հասկացվում «Հայոց ցեղասպանության հետևանքներ» հասկացության տակ և ինչպե՞ս կամ ի՞նչ չափով է պատկերացվում այդ հետևանքների հաղթահարումը, քանզի կան հետևանքներ, որոնք ուղղակիորեն անվերականգնելի են:

---

[757] Տե՛ս http://www.president.am/hy/press-release/item/2015/01/29/

Այս առումով անհրաժեշտություն է առաջանում հստակություն մտցնել նշված հարցերում: Հայոց ցեղասպանության իրագործմամբ հայ ժողովրդին հասցված վնասներն ու կորուստներն, ընդհանուր առմամբ, կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝ ա) հայրենազրկում, բ) մարդկային կորուստներ, գ) մշակութային ժառանգության կորուստ, դ) նյութական կորուստներ, ե) հոգեկան խեղումներ և հոգեբանական բարդույթներ:

Հայրենազրկում. Հայոց ցեղասպանության գլխավոր հետևանքը հայ ժողովրդին իր բնօրրանի մեծագույն մասից զրկելն էր: Ցեղասպանության կազմակերպիչների համար հայրենազրկումը, միաժամանակ, հանդիսացել է տվյալ հանցագործությունը կատարելու գլխավոր շարժառիթն ու նպատակը[758]:

Մարդկային կորուստներ. Ընդունված է ասել, որ ցեղասպանության զոհ դարձավ շուրջ 1,5 միլիոն հայ, սակայն մարդկային կորուստների թիվը հստակեցնելիս անպայմանորեն պետք է հաշվի առնել նաև ցեղասպանության քաղաքականության ընթացքում բռնի իսլամացված հայերի թիվը: Ցեղասպանության զոհ-ժողովրդի համար նրանք նույնպես մարդկային կորուստ են, քանզի ուծացման գործընթացի հետևանքով հայության այդ հատվածը դադարեց իրեն հայ համարել:

Մշակութային ժառանգության կորուստ. Մարդկային կորուստներից զատ, Հայոց ցեղասպանության իրագործմամբ հայ ժողովրդին հասցվել են նաև վիթխարի մշակութային կորուստներ: 1914 թ. թուրքական պաշտոնական տեղեկությունների համաձայն, արևմտահայերն ունեին 83 առաջնորդարան, 1860 եկեղեցի ու մատուռ, 451 վանք

---

[758] Տե՛ս Մելքոնյան Ա., Հայոց պատմության դասերն ու պատգամները, Եր., 2013, էջ 427:

և շուրջ 2000 վարժարան[759]: ՅՈՒՆԵՍԿՕ-ի՝ 1974 թ. տվյալների համաձայն, Արևմտյան Հայաստանի վանքերից ու եկեղեցիներից 1915 թ. հետո կանգուն էր մնացել 913 շինություն, որոնցից հետագա տարիների ընթացքում 464-ը լիովին ոչնչացվել է, 252-ը՝ վերածվել փլատակների, իսկ 197-ը՝ վերականգնման լուրջ կարիք ուներ[760]: Ակնհայտ է, որ նույն ճակատագրին արժանացան նաև հայկական առաջնորդարաններն ու վարժարանները: Պետք է նշել, որ, երբ խոսում ենք «շարունակվող ցեղասպանության» մասին, նկատի ունենք նաև Թուրքիայի Հանրապետության կողմից հայկական պատմաճարտարապետական հուշարձանների, եկեղեցիների, վանքերի ու գերեզմանատների նկատմամբ պետականորեն շարունակվող ոչնչացման քաղաքականությունը, որը նպատակ է հետապնդում Արևմտյան Հայաստանում վերացնել այն ամենը, ինչն ապացուցում կամ վկայում է այդ տարածքի իրական տիրոջ՝ հայերի մասին: Հայերի նկատմամբ մշակութային եղեռնի դրսևորում պետք է համարել նաև հազարավոր հայկական ձեռագրերի ոչնչացումը, որոնցում ամփոփված էր հայ ժողովրդի հազարամյա գիտական միտքն ու հանճարը[761]: Մշակութային ցեղասպանության այս հետևանքները որևէ նյութական հատուցմամբ չեն կարող վերականգնվել:

Հայոց ցեղասպանության **նյութական կորուստների** առնչությամբ հիշատակվում է նախևառաջ 1919 թ. Փարիզի Խաղաղության վեհաժողովին հայկական պատվիրակաւոյթիւնների ղեկավարների՝ Պողոս Նուբար փաշայի և Ավետիս Ահարոնյանի ներկայացրած հու-

---

[759] Տե՛ս Աստոյան Ա., Հայերի ունեզրկման գործընթացն Օսմանյան կայսրությունում 1915-1923 թթ., վկայություններ, փաստեր և փաստաթղթեր, «Վէմ» համահայկական հանդես, թիվ 3 (31),Եր., 2010, էջ XVI-XVII:

[760] Տե՛ս Հայ-թուրքական հարաբերություններ. հիմնախնդիրներ և հեռանկարներ, խորհրդարանական լսումներ, 19-20 դեկտեմբերի 2007 թ., Եր., 2011, էջ 144:

[761] Տե՛ս Стратегические последствия геноцида армян, “Византийское наследство” (информационно-аналитический журнал), Ер., 2002, N 3, с. 15.

շագիրը, որի համաձայն, 1915-1919 թթ. հայերի ունեցած նյութական կորուստը հաշվվում էր 19.130.982.000 ֆրանսիական ֆրանկ[762]: Հայոց ցեղասպանության նյութական կորուստների հատուցման պահանջով առաջին անգամ միջազգային վեհաժողովին ներկայացված այս փաստաթղթի նշանակությունը որևէ կերպ չնսեմացնելով հանդերձ՝ պետք է նշել, որ նրանում նշված հաշվարկները չեն կարող համարվել վերջնական և ենթակա են ճշգրտման:

Հոգեկան խեղումներ և հոգեբանական բարդույթներ. Ցեղասպանության հետևանքով հայ ժողովուրդը ձեռք է բերել բազմաթիվ հոգեբանական բարդույթներ ու վախեր, որոնք ուղղակի և անուղղակի կերպով ազդել ու շարունակում են ազդել ոչ միայն Եղեռնն անմիջականորեն վերապրածների, այլ նաև հաջորդ սերունդների վրա:

Հոգեբանական լուրջ հարված է հասցվել նաև ցեղասպանության ընթացքում բռնի մահմեդականացված հայերին, որոնք մահվան սպառնալիքի տակ, ստիպված, հրաժարվել են իրենց ինքնությունից և ընդունել օտարի կրոնը, ազգային հատկանիշները: Թուրքիայի Հանրապետության կողմից պետականորեն իրականացվող Հայոց ցեղասպանության ժխտման քաղաքականությունը, որը կասկածի տակ է դնում կատարված հանցագործությունը և, այդպիսով, անարգում անմեղ նահատակների հիշատակը, վիրավորում է ոչ միայն նրանց ժառանգների, այլև՝ ողջ հայ ժողովրդի արժանապատվությունը: Ուստի, տվյալ քաղաքականությունը պետք է դիտարկել՝ իբրև ցեղասպանության զոհ դարձած հայ ժողովրդին հասցվող լրացուցիչ հոգեբանական հարված:

Քանի որ Թուրքիան հետևողականորեն շարունակում է ժխտողական քաղաքականությունը և բացառում անգամ Հայոց ցեղասպանության հետևանքների հարցի քննարկումը, ակնհայտ է դառնում,

---

[762] Տե՛ս Ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդի կրած կորուստները, կազմող՝ Լ. Բարսեղյան, Եր., 1999, էջ 13:

որ թուրքական իշխանությունները միայն արտաքին ու ներքին ճնշումների պայմաններում հարկադրված կլինեն անդրադառնալ հատուցման խնդրին: Դա կարող է տեղի ունենալ այն ժամանակ, երբ համաշխարհային քաղաքականության ազդեցիկ դերակատարները թուրքական կողմին հստակ հասկացնել տան, որ Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հարցում Թուրքիան այլևս այլընտրանք չունի, որ այդ գործընթացը բխում է նաև թուրքական կողմի շահերից, քանի որ այդ կերպ թուրք ժողովուրդը հնարավորություն կստանա հաղթահարել ցեղասպան ժողովրդի բարդույթը և ազատվել մեղքի զգացումից, իսկ թուրքական պետությունը՝ վերջապես մուտք գործել ժողովրդավարական երկրների ընտանիք, ինչպես ժամանակին դա տեղի ունեցավ գերմանացի ժողովրդի և Գերմանիա պետության հետ: Մեր կարծիքով, ներկայումս Թուրքիայի ներսում և նրա շուրջ ծավալվող քաղաքական զարգացումները միջնաժամկետ կամ երկարաժամկետ հեռանկարում կարող են հանգեցնել նաև նման իրավիճակի առաջացմանը:

Վերջին շրջանում մեզանում սկսել են շրջանառվել Հայոց ցեղասպանության համար հատուցման գործընթացի, իբր, անհնարինության կամ դրա մեխանիզմների բացակայության վերաբերյալ տեսակետներ, որոնցով կամա թե ակամա հարցը պրիմիտիվացվում է, իջեցվում կենցաղային մակարդակի և, այդպիսով, ինքնին արժեզրվկում է հատուցման գաղափարը: Մինչդեռ, ծայրահեղությունների մեջ չընկնելու և իրատեսական պատկերացումներով առաջնորդվելու պարագայում հնարավոր է գտնել այդ հարցի ռացիոնալ լուծումներ: Համապատասխան պատմական փաստերի ու միջազգային իրավական նորմերի հիման վրա լիովին հնարավոր է հատուցման գործընթացի որոշակի մեխանիզմներ և գործիքակազմ մշակել՝ հիմնվելով նաև նախկինում արդեն կիրառված նման գործընթացի նախադեպերի վրա: Խոսքը, մասնավորապես, Հոլոքոստի հետևան-

քով հրեա ժողովրդին հասցված բարոյական ու նյութական վնասների հատուցման մեխանիզմների մասին է, որոնք կարող են օգտագործվել Հայոց ցեղասպանության իրագործմամբ հայ ժողովրդին հասցված բարոյական ու նյութական վնասների հատուցման գործում: Ինչ վերաբերում է հայերի հայրենիքի և պատմամշակության ժառանգության կորստի հետևանքների հաղթահարմանը, ապա այս պարագայում հատուցման մեխանիզմի հիմքում կարող են դրվել մեր տրամադրության տակ եղած պատմական փաստերն ու միջազգային-իրավական համապատասխան փաստաթղթերը:

Մեր պատկերացմամբ, հատուցման գործընթացի սկզբնավորման համար անհրաժեշտ կլինեն համաշխարհային քաղաքականության ազդեցիկ դերակատարների այն ջանքերը, որոնք գործադրվեցին Հայաստանի և Թուրքիայի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման գործընթացում՝ կողմերին բանակցությունների սեղանի շուրջ նստեցնելու և նրանց միջև համապատասխան փաստաթղթեր ստորագրելու առումով: Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման մասին հայ-թուրքական համաձայնագրի համար օրինակ կարող է հանդիսանալ 1952 թ. սեպտեմբերի 10-ի Լյուքսեմբուրգյան համաձայնագիրը, որով սկիզբ դրվեց Գերմանիայի կողմից Հոլոքոստի հետևանքով հրեաներին հասցված նյութական վնասների հատուցման գործընթացին: Ի դեպ, Գերմանիայի հետ կնքված այդ համաձայնագիրը հրեական կողմից ստորագրվեց ոչ միայն Իսրայել պետության, այլև՝ հրեական սփյուռքի նախաձեռնությամբ հրավիրված «Պահանջների կոնֆերանսի» ներկայացուցչի կողմից[763]: Կարծում ենք, որ այս նույն սկզբունքը պետք

[763] Տե՛ս Մարության Հ., Գերմանիայի ֆինանսական փոխհատուցումները հրեությանը (ձևավորումը, գործընթացը, ներկա վիճակը), «Արևմտահայության պահանջատիրության հիմնախնդիրները» (գիտագործնական միջազգային գիտաժողով), Կիպրոս-

է կիրառվի նաև Թուրքիայի հետ Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման մասին համաձայնագրի պարագայում: Հայկական կողմից այն պետք է ստորագրվի ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ, օրինակ՝ «Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովում» ընդգրկված Սփյուռքի կառույցների ներկայացուցիչների՝ կոնսենսուսով ընտրված գործիչներից որևէ մեկի կողմից, քանզի այդ հանցագործության հետևանքները վերաբերում են համայն հայությանը: Համաձայնագրին պետք է կցվի հատուցման գործընթացի ճանապարհային քարտեզը, որով կհստակեցվեն վերը թվարկված հետևանքների հաղթահարման ուղղություններով թուրքական պետության կողմից ձեռնարկվելիք քայլերը, դրանց հաջորդականությունն ու ժամանակացույցը:

Թեև մեզ՝ հայերիս համար Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման գործընթացում առաջնահերթություն է հանդիսանում հայրենիքի նկատմամբ մեր իրավունքի վերականգնման պահանջը, այդուհանդերձ, պետք է գիտակցենք, որ, ի սկզբանե, այդ պահանջի առաջադրումը միանգամից կհանգեցնի թուրքական կողմի հակազդեցությանը և փակուղի կմտցնի հատուցման ամբողջ գործընթացը: Ուստի, ավելի խելամիտ կլինի ճանապարհային քարտեզում առաջին պլան մղել Հայոց ցեղասպանության հոգեբանական հետևանքների հաղթահարման ուղղությամբ կատարվելիք քայլերը՝ թուրքական իշխանություններին ու հասարակությանը հնարավորություն տալով աստիճանաբար համակերպվել հետագայում սպասվելիք որոշ տարածքային հատուցումների անխուսափելիության մտքի հետ:

Նիկոսիա, 18-19 ապրիլի 2008 թ., «Գիտական զեկուցումների ժողովածու», Մոսկվա, 2008, էջ 81–82:

Հայոց ցեղասպանության **հոգեբանական հետևանքների** հաղթահարման ուղղությամբ թուրքական իշխանություններից ակնկալվում են օրենսդրական և ենթաօրենսդրական բնույթի հետևյալ քայլերը՝

1. 2010 թ. «Մավի Մարմարա» նավի վրա հարձակման հետևանքով Թուրքիայի քաղաքացիների սպանության համար Իսրայելից ներողություն և հատուցում պահանջող Թուրքիան, ի վերջո, պետք է գիտակցի, որ հայ ժողովուրդն էլ իրենից է նույն քայլը սպասում ցեղասպանության զոհ դարձած միլիոն ու կես հայ անմեղ նահատակների անունից: Թուրքիան պետք է պաշտոնապես ներողություն խնդրի հայ ժողովրդից և հատուցի Հայոց ցեղասպանության համար, ինչպես նաև հայտարարի այդ հանցագործության ժխտողական քաղաքականության դադարեցման մասին;

2. լուծարել Թուրքիայի Ազգային անվտանգության խորհրդին կից գործող Ցեղասպանության վերաբերյալ անհիմն պնդումների դեմ պայքարը համակարգող խորհուրդը: Հիշյալ կառույցի գործունեության և, առհասարակ, Հայոց ցեղասպանության ժխտողական քաղաքականության նպատակով թուրքական բյուջեում նախատեսված ֆինանսական միջոցները նույն ծավալով պետք հատկացվեն Թուրքիայում Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող հուշահամալիրի, ինչպես նաև թանգարանի կառուցմանը, թուրքական համալսարաններում իսկական հայագիտական կենտրոնների ստեղծմանը, որտեղ ուսանողների համար կկազմակերպվեն Հայոց պատմության դասընթացներ, նրանց հնարավորություն տալով ոչ միայն ճշմարտությունը իմանալ Հայոց ցեղասպանության մասին, այլև՝ ծանոթանալ տեղաբնիկ հայ ժողովրդի ամբողջական պատմությանը: Նշված դրամական միջոցները պետք է նպատակաուղղվեն նաև նոր դպրոցական դասագրքերի հրատարակմանը, որոնցում կբացառվեն հայերի և մյուս ոչ թուրք ժողովուրդների վերա-

բերյալ զրպարտություններ պարունակող, նրանց նկատմամբ ատելություն սերմանող նյութերը: Հատկապես վերահրատարակման են ենթակա Թուրքիայի պատմության դասագրքերը, որոնք պետք է համապատասխանեցվեն իրական պատմական փաստերին՝ դրանցում աշակերտներին նախնառաջ պետք է ճշմարտությունը ներկայացվի Օսմանյան կայսրությունում հայերի և մյուս քրիստոնյա ժողովուրդների իրավազուրկ կարգավիճակի և նրանց նկատմամբ իրագործված ցեղասպան քաղաքականության մասին: Ժխտողականությանն ուղղված նախկին ֆինանսական միջոցները պետք է հատկացվեն նաև պատմական քարտեզների վերահրատարակմանը՝ վերականգնելով Արևմտյան Հայաստանի նախկին աշխարհագրական անվանումներն ու տեղանունները, ինչպես նաև հեռուստածրագրերի և ֆիլմերի նկարահանմանը, որոնք թուրք հասարակայնությանը հանրամատչելի ձևով ճշմարիտ տեղեկություններ կներկայացնեն հայ ժողովրդի պատմության և մասնավորապես Հայոց ցեղասպանության մասին:

3. Թուրքիայի քրեական օրենսգրքից վերացնել մարդու իրավունքների և ազատությունների հանրահայտ սկզբունքները ոտնահարող «թուրք ինքնությանը, հանրապետությանը և պետության կառույցներին հասցրած զրպարտանքի» համար քրեական պատիժ նախատեսող տխրահռչակ 301-րդ հոդվածը, որը թուրքական իշխանություններն օգտագործում են իրենց քաղաքական ընդդիմախոսներին, այլախոհներին ու լրագրողներին հետապնդելու նպատակով[764]: Հիշյալ հոդվածի վերացումից հետո Եվրամիությանն անդամակցելու ձգտում ունեցող թուրքական պետությանը, եվրոպական որոշ երկրների օրինակով, կարող է առաջարկվել կատարել դրանից բխող նաև հաջորդ տրամաբանական քայլը՝ օրենսդրորեն քրեականացնել ցե-

[764] Տե՛ս http://www.amnesty.org/en/alfresco_asset/c8f87ee9-a303-11dc-8d74-6f45f39984e5/eur440352005en.htm

ղասպանությունների ժխտումը Թուրքիայում, ինչը կդիտվի՝ որպես երաշխիք, որ այդ երկիրը հետագայում չի փորձելու վերադառնալ նախկին ժխտողական քաղաքականությանը:

4. վերահաստատել դեռևս օսմանյան խորհրդարանի կողմից 1918 թ. նոյեմբերի 22-ին «Տեղահանության մասին օրենքը» չեղյալ հայտարարելու մասին որոշումը, որով «օրինական» տեսք էր տրվում հայերի զանգվածային բնաջնջման հանցավոր քաղաքականությանը: Դրանից ելնելով, օրինական ճանաչել թուրքական ռազմական տրիբունալների վճիռները և ուժը կորցրած համարել Քեմալի վարչակարգի կողմից այդ վճիռների վերանայման որոշումները: Դադարեցնել Առաջին աշխարհամարտի տարիներին հանցագործություններ կատարած անձանց հերոսացումը Թուրքիայի տարածքում՝ նրանց հրապարակայնորեն հայտարարելով հանցագործներ:

Հայոց ցեղասպանության հոգեբանական հետևանքների հաղթահարման գործընթացին զուգահեռ պետք է իրականացվեն քայլեր նաև այդ հանցագործության նյութական հետևանքների հաղթահարման ուղղությամբ: Այս գործընթացի հիմքում պետք է դրվի “Ex injuria jus non oritur” («Իրավախախտումից իրավունք չի կարող առաջանալ») հայտնի իրավական սկզբունքը, որով բացառվում է հանցագործի, տվյալ դեպքում՝ հանցավոր պետության կողմից հանցագործության հետևանքով զոհից, տվյալ դեպքում՝ հայ ժողովրդից զավթված ունեցվածքին տիրանալու և վերջինիս իր բնական, օրինական իրավունքներից օգտվելու հնարավորությունը:

Հայոց ցեղասպանության **նյութական հետևանքների** հաղթահարման նպատակով պետք է ձևավորվի միջազգային հանձնաժողով, որը կազմված կլինի Հայաստանի և Թուրքիայի կառավարությունների, ինչպես նաև Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովում ընդգրկված Սփյուռքի կառույցների ներկայացուցիչների կոն-

սենսուսով ընտրված գործիչներից որևէ մեկից և կղեկավարվի ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կողմից նշանակված նախագահի կողմից: Ի դեպ, Հայոց ցեղասպանության նյութական վնասների հատուցման այս մեխանիզմը ժամանակին տեղ էր գտել Սևրի պայմանագրի 144-րդ հոդվածում և դրա տակ ստորագրել էր նաև Օսմանյան կայսրության պատվիրակությունը: Տարբերությունը կայանում էր միայն նրանում, որ հանձնաժողովի գործունեությունը ղեկավարվելու էր Ազգերի լիգայի Խորհրդի կողմից նշանակված նախագահը[765]: Հատկանշական է, որ խառը միջազգային հանձնաժողովի այս դրույթը ավելի ուշ կրկնվում է նաև Թուրքիայի կողմից վավերացված և ուժի մեջ մտած Լոզանի պայմանագրի 66-րդ հոդվածով[766]: Միջազգային պրակտիկայում նյութական հատուցման հարցերով զբաղվող խառը հանձնաժողովների ստեղծումն ու գործունեությունը նախկինում կիրառվել է: Այդ հանձնաժողովների գործունեության արդյունքում էր, որ հաշվարկվեցին Հոլոքոստի հետևանքով հասցված նյութական վնասների չափերը և այդ հանցագործության զոհ դարձած հրեաներին ու նրանց ժառանգներին հատուցում տրամադրվեց ինչպես Գերմանիայի, այնպես էլ, օրինակ, Նորվեգիայի իշխանությունների կողմից[767]: Միջազգային հանձնաժողովի գործունեության բոլոր ծախսերը պետք է դրվեն թուրքական պետության վրա:

Իր առջև դրված խնդիրները լուծելու համար միջազգային հանձնաժողովը նախևառաջ պետք է ճշտումներ կատարի Փարիզի վեհաժողովին հայկական պատվիրակությունների ներկայացրած հուշագրի նախնական և ոչ լիարժեք հաշվարկներում և, վերացնելով բացթո-

---

[765] Տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1917), խմբագիր՝ Ջ. Կիրակոսյան, Եր., 1972, էջ 679:

[766] Տե՛ս Treaty of Lausanne, http://wwi.lib.byu.edu/index.php

[767] Տե՛ս Райзель Б., Новый взгляд на историю. Процесс реституции в Норвегии, http://libfl.ru/spoils/spoils/rus/spoil5_3.html

ղումներն ու թերությունները, ստեղծի հասցված նյութական վնասների վերաբերյալ ամբողական ու վերջնական մի փաստաթուղթ: Պետք է նկատի ունենալ, որ ցեղասպանությանը զուգահեռ իրականացված զանգվածային ունեզրկման հետևանքով կանխվեց հայերի նյութական հարստության բազմապատկման հնարավորությունը: Ուստի, Հայոց ցեղասպանության նյութական հետևանքները հաշվարկելիս չպետք է մոռանալ նաև բաց թողնված շահույթի մասին: Նյութական կորուստների հետևանքների հետ կապված՝ պետք է հաշվարկվեն նաև անցած տասնամյակների ընթացքում այդ գումարի վրա ավելացած թե՛ սղաճը և թե՛ բանկային տոկոսները, որով միայն կամբողջացվի հայերին հասցված նյութական կորուստների և դրանց հետևանքների վերջնական պատկերը:

Դրանից հետո միջազգային հանձնաժողովը պետք է հստակեցնի հայերից բռնազավթված ունեցվածքի և խախտված գույքային իրավունքների վերականգնման գործընթացի իր մարտավարությունը: Այս առումով առաջնահերթությունը պետք է տրվի միջազգային իրավունքում սահմանված նյութական վնասի հատուցման այնպիսի ձևերին, ինչպիսին են՝ ռեստիտուցիան, որը ենթադրում է նախկին վիճակով նյութական արժեքների վերականգնումը, այդ թվում՝ բնեղենով և ռեստորացիան, որը նախատեսում է նյութական արժեքների նկատմամբ այն բոլոր իրավունքների վերականգնումը, որոնք առկա են եղել նախկինում: Միայն այս ձևերի կիրառման անհնարինության դեպքում միջազգային հանձնաժողովը հարկադրված կարող է դիմել կոմպենսացիայի՝ հայերի կորցրած գույքի և ունեցվածքի դիմաց համարժեք դրամական փոխհատուցման ձևին: Դրամական փոխհատուցումները պետք է փոխանցվեն միջազգային հանձնաժողովին կից ստեղծված Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հատուկ հիմնադրամին:

Նման մեթոդաբանությամբ առաջնորդվելու պարագայում միջազգային հանձնաժողովը թուրքական իշխանություններին պետք է պարտավորեցնի կատարել Սևրի պայմանագրի 144-րդ հոդվածում ամրագրված այն պահանջը, որով ուժը կորցրած են ճանաչվում օսմանյան կառավարության «Լքյալ գույքի մասին» 1915 թ. օրենքն ու դրա լրացումները, որոնցով հայերի գույքն, իբր թե, ի պահ էր հանձնվում թուրքական իշխանություններին: Գործնականում այդ իրավական ակտերով, ըստ էության, «օրինականացվում» էր ցեղասպանության ենթարկված հայության ամբողջ ունեցվածքի թալանի քաղաքականությունը: Ավելին, 144-րդ հոդվածի համաձայն պետք է բացառվեր նման օրենքների ընդունումն ապագայում[768]:

Սրանից բխող հաջորդ տրամաբանական քայլը պետք է լինի միջազգային հաձնաժողովի պահանջը, որ թուրքական իշխանությունները պաշտոնապես չեղյալ հայտարարեն 2001 թ. հունիսի 29-ի գաղտնի նախարարական շրջաբերականը և հանձնաժողովի տրամադրության տակ դնեն Կարսի, Արդահանի մարզերի ու Սուրմալուի գավառի, ինչպես նաև Արևմտյան Հայաստանի նահանգների ու նախկինում հայերով բնակեցված կայսրության այլ տարածքների գույքերին վերաբերող Թափուի և կադաստրի գլխավոր վարչության արխիվներում պահվող, մինչև 1924 թ. օգոստոսի 6-ը թվագրված բոլոր փաստաթղթերը: Այդ շրջաբերականի չեղարկումը փաստաթղթերի հրապարակման պարտադիր նախապայման է, քանի որ հենց դրանով է Թափուի և կադաստրի գլխավոր վարչությանը կարգադրվել արխիվում պահվող մինչև 1924 թ. օգոստոսի 6-ը փաստաթղթերից հայերի, հույների և ասորիների թափուների գրանցումների մասին տեղեկություններ չտրամադրել: Ավելին, այդ տեղեկությունների արտահոսքը համարվել է Թուրքիայի ազգային անվտանգությանը

[768] Տե՛ս Հայաստանը…փաստաթղթերում, էջ 678:

սպառնացող վտանգ և կադաստրային տեղական մարմիններին հրահանգվել է նման պահանջ ներկայացնողների ինքնության մասին անմիջապես հայտնել Թափուի և կադաստրի գլխավոր վարչություն[769]:

Թուրքիային նաև պետք է հարկադրել ընդունել օրենք, որով կամրագրվի նախկին օսմանահպատակ հայերի ժառանգների իրավունքն Արևմտյան Հայաստանի և հայաբնակ շրջանների տարածքներում հայտնաբերված թաքստոցների նկատմամբ, իսկ սեփականատերերի ժառանգներին կողոպտված ունեցվածքի մասին տեղեկություններ ստանալու երաշխավորված իրավունք պետք է ընձեռվի[770]: Հանձնաժողովը բնակավայրեր առ բնակավայր պետք է հրապարակի իր կողմից հայտնաբերված հաշիվների, շարժական և անշարժ գույքի բոլոր տերերի անունները՝ ժառանգներին որոնելու համար: Չպահանջված միջոցները պետք է փոխանցվեն Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հատուկ հիմնադրամին: Առանց այս պարտադիր նախապայմանների միջազգային հանձնաժողը պարզապես չի կարողանա իրականացնել հայերի բռնազավթված գույքի և ունեցվածքի վերականգնման իր գործառույթը:

Հայերի հայտնաբերված անշարժ ու շարժական գույքերի վերադարձման տեխնիկական հարցերում հանձնաժողովը լիովին կարող է առաջնորդվել Սևրի պայմանագրի նույն 144-րդ հոդվածի դրույթներով, որոնք միանգամայն կիրառելի են նաև այսօր: Հանձնաժողովի ստորաբաժանումների կողմից հայերին կամ նրանց համայնքներին պատկանող անշարժ կամ շարժական գույքերը հայտնաբերվելու դեպքում, ում ձեռքում էլ դրանք լինեն, պետք է, որքան հնարավոր է

---

769 Տե՛ս Մարուքյան Ա., Հայոց ցեղասպանության նյութական հետևանքների հաղթահարման հիմնահարցը, Եր., 2015, էջ 101:

770 Տե՛ս Բարսեղով Յու., Հայերի ցեղասպանության համար նյութական պատասխանատվությունը, Եր., 1999, էջ 31:

շուտ, վերադարձվեն օրինական տերերին: Ընդ որում, վերադարձվող գույքերը պետք է ազատված լինեն ցանկացած պարտքից, որոնցով դրանք կարող են ծանրաբեռնված լինել նոր տերերի կողմից և վերադարձվելու են՝ առանց նոր սեփականատերերին և օգտագործողներին որևէ հատուցում տրամադրելու: Այն դեպքերում, երբ հանձնաժողովը գույքի նկատմամբ չեղյալ կհամարի նոր սեփականատերերի իրավունքները, նրանց փոխհատուցելու պարտականությունը պետք է դրվի թուրքական կառավարության վրա, և դա առիթ չի կարող դառնալ այդ գույքի օրինական տերերի իրավունքների վերականգնումն ուշացնելու համար: Թուրքական իշխանությունները պետք է նպաստեն հանձնաժողովի որոշումների կատարմանը, որոնք անբեկանելի են և չեն կարող վիճարկվել կամ վերանայվել թուրքական դատական կամ վարչական մարմինների կողմից[771]:

Սևրի պայմանագրի 144-րդ հոդվածի դրույթներին լրացնելու էին գալիս նույն փաստաթղթի 285-րդ և 288-րդ հոդվածները, որոնց համաձայն, դաշնակից երկրի կամ Օսմանյան կայսրությունից անջատված տարածքների վրա առաջացած նոր պետությունների քաղաքացիություն ձեռք բերած նախկին օսմանահպատակները Թուրքիայի տարածքում մնացած իրենց գույքերի նկատմամբ պահպանում էին բոլոր իրավունքները և դրանք նախկին վիճակով պետք է վերադարձվեին օրինական տերերին[772]:

Սևրի պայմանագրի վավերացված չլինելու և իրավական ուժի մեջ չմտնելու հանգամանքը չի նսեմացնում նշված հոդվածների նշանակությունը, քանզի դրանց որոշ դրույթներ, փաստորեն, կրկնվում են օրինական ուժի մեջ մտած 1923 թ. Լոզանի պայմանագրի համապատասխան հոդվածներում: Այդ հոդվածներով Թուրքիան ընդունել

---

[771] Տե՛ս Հայաստանը…փաստաթղթերում, էջ 679-680:

[772] Տե՛ս Treaty of Peace with Turkey. Signed at Sevres. August, 10, 1920, p. 65, http://treaties.fco.gov.uk/docs/pdf/1920/TS0011.pdf

է, որ բռնագրավված լքյալ գույքը ենթակա է վերադարձման տերերին կամ նրանց ժառանգներին: Լոզանի պայմանագրի 3-րդ բաժնում՝ «Տնտեսական դրույթներ» հատվածում առկա են «Հիմնական իրավունքների և շահերի» վերաբերյալ դրույթներ, որոնց 65-րդ հոդվածի երրորդ պարբերության համաձայն, 1915 թ. տեղահանությունն ու սպանությունները բնորոշվում են որպես «անօրինական կերպով ձեռնարկված ռազմական միջոցներ», և սահմանվում է, որ դրանց հետևանքով մարդկանց կրած վնասները պետք է փոխհատուցվեն: Այդ հոդվածի համաձայն, ողջ մնացած յուրաքանչյուր հայ կամ սպանված հայի ժառանգ ունի տեղահանության հետևանքով բռնազավթված իր գույքը նախկին վիճակով հետ ստանալու իրավունք[773]:

Հատկանշական է, որ Լոզանի պայմանագրի 66-րդ հոդվածը կրկնում է Սևրի պայմանագրի 144-րդ հոդվածի այն դրույթը, որ գույքային հարցերի շուրջ վեճերը պետք է կարգավորվեն խառը հանձնաժողովների կողմից, իսկ վերադարձվող գույքերը պետք է ազատված լինեին ցանկացած պարտքից, որոնցով նրանք կարող էին ծանրաբեռնված լինել նոր տերերի կողմից, իսկ նոր սեփականատերերին և օգտագործողներին հատուցում տրամադրելու հարցը դրվում էր թուրքական պետության վրա: Նույն պայմանագրի 65-րդ հոդվածն էլ վերաշարադրում է Սևրի պայմանագրի 285-րդ և 288-րդ հոդվածների այն դրույթները, որ դաշնակից երկրի կամ նոր պետության հպատակություն ձեռք բերած նախկին թուրքահպատակների ունեցվածքն ու գույքային իրավունքներն ինչպես Թուրքիայում, այնպես էլ նրանից անջատված տարածքներում պետք է վերադարձվեին նախկին տերերին[774]: Սա վկայում է այն մասին, որ Լոզանի պայմանագրի 65-րդ և 66-րդ հոդվածները Սևրի պայմանագրի 144-րդ, 285-րդ և 288-րդ հոդվածների վերախմբագրված տարբերակներն են հանդիսանում:

---

[773] Տե՛ս Treaty of Lausanne, http://wwi.lib.byu.edu/index.php
[774] Տե՛ս նույն տեղում:

Սակայն իրենց գույքի նկատմամբ իրավունքը վերականգնելու հարցում, թուրքական կողմի պնդմամբ, ժամանակային սահմանափակում մտցվեց նախկին օսմանահպատակների, այդ թվում՝ հայերի համար: Այդ իրավունքից օգտվել կարողանալու համար սեփականատերերը պետք է մինչև 1924 թ. օգոստոսի 6-ը լինեին իրենց գույքի մոտ: Թուրքիան այդ դրույթը չկատարելու համար է, որ տասնամյակներ շարունակ ներս չի թողել երկրի սահմանից դուրս գտնվող հայերին, ու, կարծես, պատնեշ է ստեղծել պետության շուրջ: Թուրքիայում իշխանության եկած քեմալական վարչախումբը սկսեց հետևողական օրենքներ ընդունել, որոնցով արգելվում էր հայերի մուտքը երկիր և անգամ արգելվում էր պետության ներսում ապրող հայերի ազատ տեղաշարժը:

Այսպես, Լոզանի պայմանագրի վավերացումից անմիջապես հետո՝ 1923 թ. սեպտեմբերին, քեմալական իշխանությունները ընդունեցին «Լքյալ գույքերի մասին» հերթական օրենքը, որի 2-րդ հոդվածի համաձայն, Կիլիկիայից և արևելյան նահանգներից գաղթած հայերը չպետք է ստանային երկիր մուտք գործելու արտոնագիր, իսկ 3-րդ հոդվածում սահմանվում էր, որ երկիր չպետք է մուտք գործեին նախկին օսմանահպատակ այն օտարերկրյա քաղաքացիները, որոնք նոր կարգավիճակ էին ստացել, առանց թուրքական իշխանությունների թույլտվության[775]: Տվյալ օրենքի «տրամաբանությամբ» ենթադրվում էր, որ բոլոր նախկին օսմանահպատակները, մասնավորապես՝ հայերը, որոնք արդեն հասցրել էին ճաշակել այդ հպատակության ողջ «քաղցրությունը», ենթարկվելով ցեղասպանության ու զանգվածային ունեզրկման, կրել անասելի տառապանքներ բռնագաղթի ճանապարհներին, և, ի վերջո, հայտնվել Օսմանյան կայսրությունից անջատված արաբական երկրներում, դրանց քա-

[775] Տե՛ս Լեւոն Վարդան, Հայկական տասնհինգը և հայերու լքյալ գոյքերը, Պէյրութ, 1970, էջ 258:

ղաքացիություն ստանալուց առաջ պետք է թույլտվություն խնդրեին այն պետությունից, որն ամեն կերպ ջանացել էր ոչնչացնել իրենց: Այս աբսուրդային «փաստարկով» թուրքական իշխանություններն ընդամենը փորձում էին «հիմնավորել» իրենց նախկին հպատակների իրավունքների, մասնավորապես՝ գույքային իրավունքների նկատմամբ պետականորեն վարվող զանգվածային ոտնահարման քաղաքականության ճշմարիտ լինելը: Մինչդեռ, նոր քաղաքացիություն ձեռք բերելը բացարձակապես չի ենթադրում նախկին հպատակության երկրի թույլտվությունը և նախկին հպատակության երկրում չի կարող հանգեցնել սեփականության նկատմամբ տվյալ անձի ունեցած իրավունքների չեզոքացմանը: Հետագայում՝ 1927 թ. մայիսի 23-ին, ընդունվեց «Օսմանյան կայսրության հպատակների որոշակի կատեգորիաների մասին» օրենքը, որի համաձայն, Թուրքիայի քաղաքացիությունից զրկվում էին Օսմանյան կայսրության այն հպատակները, որոնք հանուն անկախության պատերազմի ժամանակ չէին մասնակցել ազգային պայքարին, գտնվել էին Թուրքիայից դուրս և Լոզանի պայմանագրի ստորագրումից՝ 1923 թ. հուլիսի 24-ից մինչև տվյալ օրենքի հրապարակումն ընկած ժամանակահատվածը չէին ներգաղթել թուրքական տարածք[776]: Այս օրենքն արդեն լիովին բացառում էր իրենց հայրենիք հայերի վերադարձի իրավունքը:

Թուրքական իշխանությունների այս գործողությունների վերաբերյալ իրավական գնահատական ստանալու նպատակով Հայ գաղթականների կենտրոնական կոմիտեն 1929 թ. հունիսի 5-ին ստիպված եղավ դիմել հեղինակավոր չորս իրավաբան-միջազգայնագետների՝ Ժիլբեր Ժիդելին, Ալբեր Լապրադելին, Լուի Լեֆյուրին և Անդրե Մանդելշտամին՝ նրանցից խորհրդատվական եզրակացություն խնդրելով: Ի պատասխան դիմումի, 1929 թ. օգոստոսի 2-ին նրանք

[776] Տե՛ս Բարսեղով Յու., նշվ. աշխ., էջ 15:

հրապարակեցին իրենց խորհրդատվական եզրակացությունը: Հրապարակված փաստաթղթի համաձայն, թուրքական իշխանությունների գործողությունները որակվում էին՝ որպես անօրինական, քանի որ դրանցով խախտվում էին ոչ միայն միջազգային իրավունքի գործող նորմերը, այլև Լոզանի պայմանագրի համապատասխան հոդվածներով Թուրքիայի ստանձնած պարտավորությունները: Մասնագետները միաբերան պնդում էին, որ նախկին հայ հպատակների նկատմամբ իրականացվող սահմանափակումները որևէ իրավունք չեն տալիս թուրքական կառավարությանը բռնազավթելու հայերի ունեցվածքը, ինչը ենթակա է վերադարձման օրինական տերերին: Որպես ասվածի հիմնավորում, մեջբերում էին հետպատերազմյան խաղաղության պայմանագրերից հոդվածներ, որոնցով ընդգծվում էր մասնավոր սեփականության պաշտպանության և վնասված կամ բռնագրավված ունեցվածքի վերականգնման պարտադիր սկզբունքը[777]: Այսպիսով, նախկին օսմանահպատակ հայերի կողմից նոր պետության հպատակություն ձեռք բերելը, թուրքական իշխանությունների կողմից նրանց հպատակությունից և հայրենիք վերադառնալու իրավունքից զրկելը չի կարող օրինական հիմք հանդիսանալ նրանց իրենց ունեցվածքից, իրավունքներից կամ շահերից զրկելու համար: Թուրքական կողմն, անշուշտ, փորձելու է խուսափել գույքերի նկատմամբ հայերի իրավունքների վերականգնման գործընթացից՝ առաջ քաշելով այն թեզը, թե, իբր, նրանք բաց են թողել այդ գույքերի նկատմամբ իրենց իրավունքները վերականգնելու՝ Լոզանի պայմանագրով սահմանված ժամկետները՝ մինչև 1924 թ. օգոստոսի 6-ը չգտնվելով իրենց գույքի մոտ: Սակայն, այս փաստերը իր տրամադրության տակ ունենալով, հանձնաժողովը հեշտությամբ կարող է չեզոքացնել թուրքական կողմի պնդումները այն հակափաստար-

[777] Տե՛ս Բարսեղով Յու., նշվ. աշխ., էջ 27:

կով, որ, եթե անգամ տեղի է ունեցել ժամկետների բացթողում, ապա դա եղել է ոչ հայերի պատճառով, այլ թուրքական իշխանությունների կողմից ընդունված խտրական օրենքների ու ենթաօրենսդրական ակտերի ընդունման հետևանքով, որոնցով նպատակ է հետապնդվել ձախողել Լոզանի պայմանագրի համապատասխան հոդվածներով հայերի կողմից իրենց գույքային իրավունքների վերականգնման հնարավորությունը:

Միջազգային հանձնաժողովը պետք է հաշվի առնի նաև այն հանգամանքը, որ ցեղասպանությունից հետո հայերի ունեզրկման քաղաքականությունը շարունակվում է նաև Թուրքիայի Հանրապետության կողմից, որը, կոպտորեն խախտելով Լոզանի պայմանագրի դրույթները, ապօրինաբար բռնագրավել է հայկական համայնքին պատկանող կալվածքները[778]: Ուստի, միանգամայն բնական պետք է դիտվի հանձնաժողովի կողմից Լոզանի պայմանագրի 38-րդ և 39-րդ հոդվածներով ոչ մահմեդական բնակչության իրավունքների պաշտպանության հարցում Թուրքիայի ստանձնած պարտավորությունների կատարման պահանջը: Նշված հոդվածներով Թուրքիան պարտավորվել է երաշխավորել իր բոլոր բնակիչների կյանքի և գույքի լրիվ ու ամբողջական պաշտպանությունը՝ առանց ազգության, սեռի, լեզվի կամ կրոնի խտրականության: Ի կատարումն այդ հոդվածների, հանձնաժողովը կարող է պահանջել, որ թուրքական իշխանությունները սկսեն կենսագործել 2008 թ. «Համայնքային կալվածքների մասին» օրենքի դրույթները, որոնցով թուրքական կառավարությունը պարտավորվել է 18 ամիսների ընթացքում վերադարձնել ոչ մահմե-

[778] Տե՛ս Թորիկեան Շ., Հայկական հարցը եւ միջազգային օրէնքը, Պէյրութ 1976, էջ 138:

դական համայնքների ու, մասնավորապես՝ հայերից բռնազավթված գույքը[779]:

Հայոց ցեղասպանության նյութական հետևանքների հաղթահարման հարցում նախանշված մեխանիզմները լիովին կիրառելի են նաև այդ հանցագործության **մշակութային-քաղաքակրթական հետևանքների** հաղթահարման տեսանկյունից: Մասնավորապես՝ նույն սկզբունքներով կարող է ստեղծվել Հայ պատմամշակութային ժառանգության պահպանման և վերականգնման միջազգային հանձնաժողով, օրինակ՝ UNESCO-ի հովանու ներքո, որը կազմված կլինի Հայաստանի և Թուրքիայի կառավարությունների ներկայացուցիչներից, ինչպես նաև Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովում ընդգրկված Սփյուռքի կառույցների ներկայացուցիչների՝ կոնսենսուսով ընտրված գործիչներից որևէ մեկից և կղեկավարվի UNESCO-ի կողմից նշանակված նախագահի կողմից: Հանձնաժողովի առաքելությունը պետք է լինի Արևմտյան Հայաստանում և ներկայիս Թուրքիայի այլ տարածքներում հայկական պատմա-ճարտարապետական հուշարձանների ներկա և ապագա իրավական կարգավիճակի հստակեցումը, ինչպես նաև դրանց հնարավոր վերանորոգման աշխատանքների նախագծերի և նախահաշիվների կազմումը, որոնց ծախսերը պետք է դրվեն թուրքական պետության վրա: Այս միջազգային հանձնաժողովը պետք է ստեղծի յուրաքանչյուր հուշարձանի անձնագիրը՝ վերհանելով դրա կառուցման ստույգ պատմական հիմքերը, որոնք հետագայում պետք է զետեղվեն այդ հուշարձանների մոտ տեղակայված վահանակների վրա և, որպես պարտադիր տեղեկատվական նյութեր, օգտագործվեն թուրքական զբոսաշրջային կազմակերպությունների կողմից:

---

[779] Տե՛ս Դադայան Խ., Հայոց ցեղասպանության տնՏե՛սական բաղադրյալը ֆինանսանյութական փոխհատուցման հիմնախնդիրը, «Արևմտահայության պահանջատիրության հիմնախնդիրները», էջ 185:

Հուշարձանների վերականգնողական աշխատանքների բոլոր փուլերը պետք է վերահսկվեն հանձնաժողովի կողմից՝ դրանց նախնական տեսքից շեղումներ թույլ չտալու նպատակով: Վերականգնողական աշխատանքներից հետո եկեղեցիները պետք է ստանան ոչ թե թանգարանի, այլ գործող հոգևոր օջախի կարգավիճակ՝ հանձնվելով հայ հոգևոր համապատասխան կառույցի հայեցողությանը:

Հայոց ցեղասպանության գլխավոր հետևանքի՝ **հայրենազրկման հաղթահարման** առումով, ցավոք, մեր տրամադրության տակ չկա այնպիսի իրավական փաստաթուղթ, որով կհաստատվեր հայ ժողովրդի իրավունքը Արևմտյան Հայաստանի բոլոր նահանգների նկատմամբ: Առաջին աշխարհամարտի նախօրեին՝ 1914 թ. հունվարի 26-ին, ստորագրված ռուս-թուրքական պայմանագրով նախատեսվում էր եվրոպացի վերատեսուչների միջոցով Արևմտյան Հայաստանի վեց նահանգներն ու Տրապիզոնի նահանգը բաժանել երկու վարչական միավորների, որտեղ, հայ բնակչության իրավունքների պաշտպանության նպատակով, օսմանյան կառավարությունը պարտավորվում էր բարեռորոգումներ իրականացնել[780]: Ուստի, այս հարցում ավելի խելամիտ կլինի, որպես հայրենազրկման հետևանքի հաղթահարման իրավական հիմք, ընդունել ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի 1920 թ. նոյեմբերի 22-ի իրավարար վճիռը, որով հայ ժողովրդի իրավունքը վերականգնվում է Արևմտյան Հայաստանի երեք նահանգների՝ Էրզրումի, Վանի, Բիթլիսի մեծ մասի վրա, իսկ Հայաստանի համար դեպի Սև ծով ելք ապահովելու նպատակով այդ տարածքին կցվում էր Տրապիզոնի նահանգի մեկ երրորդ մասը: Հայոց ցեղասպանության հայրենազրկման հետևանքի հաղթահարման հարցում անպայմանորեն պետք է պահպանվի Վուդրո Վիլսոնի իրավարար վճռում ամրագրված Հայաստանի համար դեպի Սև ծով ելք ապահովելու կարևորագույն սկզբուն-

[780] Տե՛ս Հայաստանը…փաստաթղթերում, էջ 210–219:

քը: Քանի որ տարածքային խնդիրների վերջնական կարգավորումը երկար ժամանակ կպահանջի, ուստի հատուցման հարցի շուրջ համաձայնության ձեռքբերումից անմիջապես հետո թուրքական կողմը Տրապիզոնի նավահանգստից անվարձահատույց օգտվելու իրավունք պետք է տրամադրի Հայաստանին:

Ակնհայտ է, սակայն, որ, նախքան վիլսոնյան Հայաստանի տարածքների հարցերի քննարկումը, պետք է հստակեցվի Հայաստանի Հանրապետությանը սահմանակից Կարսի, Արդահանի մարզերի ու Սուրմալուի գավառի իրավական կարգավիճակը: Հայկական կողմն իրավասու է պահանջ ներկայացնել Արևելյան Հայաստանից միջազգային իրավունքի սկզբունքների ու նորմերի կոպիտ խախտումներով անջատված նշված տարածքների նկատմամբ՝ վիճարկելով 1921 թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերի օրինականությունը[781]: Ավելորդ չենք համարում հիշեցնել, որ 1945 թ. հուլիսի 22-ին Պոտսդամի կոնֆերանսում Խորհրդային Հայաստանի անունից ԽՍՀՄ-ը Թուրքիային այդ տարածքների վերադարձման պահանջ արդեն իսկ ներկայացրել է[782]:

Անգամ Հայաստանի Հանրապետությանը սահմանակից Կարսի, Արդահանի և Սուրմալուի տարածքների նկատմամբ հայ ժողովրդի իրավունքների վերականգնումը տեղի չի ունենալու միանգամից և ամբողջական ձևով, այլ դա լինելու է տևական, փուլային մի գործընթաց: Տարածքների վերադարձի ուղղությամբ թուրքական կողմի կատարելիք առաջին քայլերը կարող են լինել խորհրդանշական բնույթի, օրինակ՝ Հայաստանին փոխանցելով համայն հայության խորհրդանիշներ հանդիսացող Արարատ լեռը և հայ միջնադարյան մայրաքաղաք Անիի ավերակները: Ինչ վերաբերում է հետագայում, օրինակ՝ Սուրմալուի

---

[781] Տե՛ս Մարուքյան Ա., Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմաիրավական հիմնավորումները, Եր., 2014, էջ 121-137:

[782] Տե՛ս Դաշնակից երեք տերությունների՝ ՍՍՀՄ-ի, ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի ղեկավարների Բեռլինի (Պոտսդամի) կոնֆերանսը (1945 թ. հուլիսի 17 – օգոստոսի 2), Եր., 1989, էջ 168:

գավառի բնակավայրերի փուլային տարբերակով Հայաստանի Հանրապետությանը միացմանը, ապա դա պետք է կատարվի միայն այն բանից հետո, երբ միջազգային հանձնաժողովի կողմից վերջնականապես կարգավորված կլինեն այդ կոնկրետ բնակավայրերի գույքային բոլոր հարցերը և հայերին պատկանող գույքերը վերադարձված կլինեն նրանց ժառանգներին կամ շահերի ներկայացուցչին, օրինակ՝ ՀՀ-ին: Այս հանգամանքը կարևոր է այնքանով, որ հայերին պատկանող անշարժ գույքի վրա ապօրինաբար բնակվող Թուրքիայի քաղաքացի թուրքերը կամ քրդերը, մինչև տվյալ բնակավայրերը Հայաստանին միացնելը, պետք է ազատած լինեն հայերի սեփականությունը կամ սահմանված կարգով սկսեն բնակվարձ վճարել հայկական կողմին: Հայաստանի Հանրապետությանը փոխանցման ենթակա կոնկրետ բնակավայրերի՝ հայերին պատկանող անշարժ գույքերի վերադարձը նախապես իրականացնելը կնպաստի, որ Թուրքիայի քաղաքացիների մի մասը, մինչև խնդրո առարկա տարածքները Հայաստանին միացվելը, ինքնակամ կլքի այդ բնակավայրերը:

Միջազգային հանձնաժողովի գործունեության արդյունքում Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հատուկ հիմնադրամին փոխանցված դրամական միջոցները, առաջին հերթին, պետք է նպատակաուղղվեն միացվող բնակավայրերում ենթակառուցվածքների և սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը՝ արտոնյալ պայմաններ ապահովելով այնտեղ հայ բնակչության վերաբնակեցման համար: Այսպիսով, հայրենիքի նկատմամբ հայ ժողովրդի իրավունքների վերականգնումը դժվար և տևական գործընթաց է լինելու, որը տասնամյակներ կպահանջի: Չմոռանանք, որ Գերմանիայի կողմից հրեաներին տրամադրվող միայն նյութական հատուցման գործընթացը շարունակվում է արդեն վեց տասնամյակ:

Ամփոփելով, հարկ ենք համարում նշել, որ վաղուց հասունացել է ժամանակը, որ մենք, թեկուզև տեսականորեն, ունենանք Հայոց ցե-

դասպանության հետևանքների հաղթահարման հնարավոր գործընթացի մեխանիզմների և գործիքակազմի մոդել կամ մոդելներ, որպեսզի մեզ համար բարենպաստ աշխարհաքաղաքական ու տարածաշրջանային իրավիճակների ստեղծման պարագայում ներկայացնելիք ունենանք: Սույն զեկույցը այդ խնդիրներին լուծումներ գտնելու ընդամենը մի փորձ է, որն, անշուշտ, չի հավակնում իդեալականության կամ վերջնական ճշմարտության: Առաջարկվող մոդելը, գուցե, երազանքի կամ երևակայության ոլորտից կարող է համարվել, սակայն, եթե յուրաքանչյուրս մտովի մի քանի տասնամյակ հետ գնանք, ապա անկեղծորեն կխոստովանենք, որ անգամ 1980-ականներին ԽՍՀՄ փլուզումը և Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումը կարող էր զառանցանք համարվել: Միաժամանակ, կարող ենք փաստել, որ մեր ժողովրդի մեջ մշտապես եղած Արցախի ազատագրման երազանքն էր, որ հնարավոր դարձրեց հայոց ազգային հաղթանակը Արցախյան պատերազմում և հանգեցրեց երկրորդ հայկական պետության հռչակմանն ու փաստացի գոյությանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Սկզբնաղբյուրներ և փաստաթղթերի ժողովածուներ

1. Դաշնակից երեք տերությունների՝ ՍՍՀՄ-ի, ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի ղեկավարների Բեռլինի (Պոտսդամի) կոնֆերանսը (1945 թ. հուլիսի 17 – օգոստոսի 2), Եր., 1989:
2. Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1917), խմբագիր՝ Ջ. Կիրակոսյան, Եր., 1972:
3. Մարդու իրավունքների միջազգային բիլլ, Եր., 2005:
4. Конституции государств Европы, М., 2001.
5. Commission of the European Communities. Commission Staff Working Document. Turkey 2007, Progress Report. Brussels, 06.11.2007.
6. Department of State: Annual Report on International Religious Freedom 2001. December 2001.
7. European “Progress Report” on Turkey, published by the European Commission on 13 November (2001).
8. H. Res, Resolution 306 Urging the Republic of Turkey to Safeguard its Christian Heritage and to Return Confiscated Church Properties, June 15, 2011.
9. Minority Rights Group International. A Quest for Equality: Minorities in Turkey, MRG, Dec 2007.
10. Minority Rights Group International, State of the World’s Minorities 2008, MRG, Jan., 2008.
11. The World Bank. 2003 World Development Indicators. Wash., 2003.
12. Treaty of Lausanne, http://wwi.lib.byu.edu/index.php
13. Treaty of Peace with Turkey. Signed at Sevres. August 10, 1920, http://treaties.fco.gov.uk/docs/pdf/1920/TS0011.pdf
14. Turkey Human Rights Practices, 1993, U.S. Department of State, January 31, 1994.

15. Turkey Report, CSIS Files, No. 6, September, 2007,
http:/www.csis.ro/docs/CSIS.ro_Turkey.pdf.
16. Turkey 2005 Progress Report /2005/; EC: Council Decisions of 2001, 2003, 2006 and 2008 on the principles, priorities and conditions contained in the Accession Partnership with the Republic of Turkey /ec.europa.eu/enlargement/archives/pdf/key_documents/.
17. UN Human Rights Instruments, HRI/CORE/TUR/2007, 8 July, 2008.
18. U.S. Department of State: Annual Report on International Religious Freedom for 1999: Turkey. Washington, DC, September 9, 1999.
19. "2000 Regular report from the Commission on Turkey's progress towards accession", 8 November, 2000.
20. 2004 Regular Report on Turkey's Progress towards Membership, /http://ec.europa.eu/enlargement/archives/pdf/key_documents/2004/rr_tr_2004_en.pdf/

2. Մենագրություններ

21. Ալպօյաճեան Ա., Պատմական Հայաստանի սահմանները, Գահի-րէ, 1950:
22. Ալվրցյան Հ., Կրոնափոխ հայերի խնդիրները Թուրքիայի Հանրապետությունում, Եր., 2014:
23. Ավագյան Ա., Մելքոնյան Ռ., Ստամբուլի հայ համայնքի արդի իրավիճակը, Եր., 2009:
24. Ավագյան Ա., Պանթուրքական երազանք կամ «Գորշ գայլեր», Երևան, 2013:
25. Աքթար Չ., Կոչ ներումի. թուրքերը դիմում են հայերին, Եր., 2011:
26. Բաղդասարյան Ս., Թուրքիայի քաղաքական համակարգի խնդիրները (1920-30-ական թթ), Եր., 2001.
27. Բարսեղով Յու., Հայերի ցեղասպանության համար նյութական պատասխանատվությունը, Եր., 1999:

28. Բաում Վ., Թուրքիան և նրա քրիստոնյա փոքրամասնությունները, Եր., 2010:
29. Գալուստյան Հ., Հանրապետական Թուրքիայի կառավարության քաղաքականությունը արևելյան նահանգներում (1920-1960-ականներ), Եր., 1999:
30. Գասպարյան Ա., Ներքաղաքական գործընթացների իրողությունները Մերձավոր Արևելքում, Եր., 2016:
31. Գույումճեան Ս., Ակնարկ մը՝ ստանպուլահայ վարժարաններու իրականության, Ստանպուլ, 2010:
32. Դինք Հ., Երկու մոտ ժողովուրդ, երկու հեռու հարևան, Եր., 2009:
33. Զաւեն Ա. քինյ. Արզումանեան, Թուրքիոյ Պատրիարքությունը, Ազգապատում, հատոր դ. Գիրք բ., Նյու Եորք, 1997:
34. Թորիկեան Շ., Հայկական Հարցը և միջազգային օրէնքը, Պէյրութ, 1976:
35. Թուրքիա-ԵՄ-Հայաստան. մարտահրավերները և հնարավորությունները, Եր., 2009:
36. Լեւոն Վարդան, Հայկական տասնհինգը և հայերու լքյալ գոյքերը, Պէյրութ, 1970:
37. Խաթանասեան Ե., Հայոց թիուը, Բոստոն, 1965:
38. Խանլարեան Կ., Հայ բնակչութեան էթնոկրօնական վերակերպումները Թուրքիայի Հանրապետութիւնում (1923-2005 թթ.), Անթիլիաս, 2009:
39. Հայերի խնդիրներն ու իրավունքները Թուրքիայում: «Արևմտահայոց հարցերի ուսումնասիրության կենտրոն» գիտահետազոտական հիմնադրամ, Մատենաշար 1, խմբ. Հ. Ալվրցյան, Եր., 2010:
40. Հայ-թուրքական հարաբերություններ. հիմնախնդիրներ և հեռանկարներ: Խորհրդարանական լսումներ, 19-20 դեկտեմբերի 2007 թ., Եր., 2011:
41. Հարությունյան Վ., Թուրքիայի ալևիները. պատմության և քաղաքականության հարցեր, Եր., 2013:

42. Հովհաննիսյան Ն., Քրդերի մասնակցությունը հայերի ցեղասպանությանը: Քրդական գործոնը Արևմտյան Հայաստանի հարցի լուծման հայկական հայեցակարգում, Եր., 2016:
43. Հովհաննիսյան Ռ., Տասը օր Թուրքիայում, Եր., 1967:
44. Հովսեփյան Լ., Թուրքիայի զինված ուժերի արդիականացումն ու ռազմարդյունաբերությունը, Եր., 2010:
45. Հովսեփյան Լ., Թուրքիայի վախերը. Սևրի սինդրոմ (Սևրի սինդրոմի դրսևորումները Թուրքիայի հասարակական-քաղաքական քննարկումներում), Եր., 2012:
46. Մարուքյան Ա., Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմահրավական հիմնավորումները, Եր., 2014:
47. Մարուքյան Ա., Հայոց ցեղասպանության նյութական հետևանքների հաղթահարման հիմնահարցը, Եր., 2015:
48. Մելքոնյան Ա., Հայոց պատմության դասերն ու պատգամները, Եր., 2013:
49. Մելքոնյան Ռ., Աբրահամյան Մ., Օսմանյան կայսրության և Թուրքիայի Հանրապետության բռնի իսլամացման քաղաքականությունը հայերի նկատմամբ որպես ցեղասպանական արարք, Եր., 2015:
50. Մելքոնյան Ռ., Ակնարկ Ստամբուլի հայ համայնքի պատմության 1920-ականներից մինչև մեր օրերը, Եր., 2010:
51. Մելքոնյան Ռ., Իսլամացված հայերի խնդիրների շուրջ. Թուրքիայի իսլամացված հայության խնդրի ուսումնասիրություն, Եր., 2009:
52. Մելքոնյան Ռ., Հայերի բռնի իսլամացումը ցեղասպանության տարիներին. ընթացքը և հետևանքները, Եր., 2010:
53. Միրօղլու Մուհթարեան, Պոլսահայերը (1923-1939), Եր., 2016:
54. Մսըրլեան Զ., Հայոց ցեղասպանութենէն առաջ և ետք, Անթիլիաս, 2011:

55. Յալչին Ք., Հոգիս քեզմով կը խայտայ, թարգմանեց Գարեգին արք. Պեքճեանը, Եր., 2003:
56. Յակոբեան Թ., Հայեացք Արարատէն. Հայերը եւ թուրքերը. Պատերազմ, պաղ պատերազմ, դիւանագիտութիւն, Անթիլիաս, 2012:
57. Շաքարյան Ա., Արարատից այն կողմ. Ապակողավորելով Թուրքիան, Եր., 2011:
58. Պողոսյան Ս., Պանթուրքիզմը երեկ և այսօր, Եր. 1990:
59. Պողոսյան Ս., Քրդերը և Հայկական հարցը, Երևան, 1991:
60. Սաֆրաստյան Ռ., Հնարավոր չէ 21-րդ դարում պատնեշներ ստեղծել հարևանների միջև, Եր., 2003:
61. Սիմավորյան Ա., Հովյան Վ., Հայ կաթոլիկ և ավետարանական համայնքները Թուրքիայում. Ժամանակակից միտումներ, Եր., 2012:
62. Սիմոնյան Հ., Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Եր., 1991:
63. Վարդանյան Ս., Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը, Եր., 2009:
64. Տեր-Մաթևոսյան Վ., Իսլամը Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքում (1970-2001թթ.), Եր. 2008:
65. Ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդի կրած կորուստները, կազմող՝ Լ. Բարսեղյան, Եր., 1999:
66. Аванесов С., Положение национальных меньшинств в Турции, Ер., 1963.
67. Вертяев К., Курдский вопрос в политике Турции, (конец XX – начало XXI века), М., 2007.
68. Гасратян М., Курды в Турции в новейшее время, Ер., 1990.
69. Гасратян М., Курдская проблема в Турции (1986-1995), М., 2001.
70. История Курдистана, под ред. М.С. Лазарева, Ш.Х. Мгои, М., 1999.
71. Киреев Н., История Турции XX век, М., 2007.
72. Кондакчян Р., Турция: внутренняя политика и ислам, Ер., 1983.

73. Кунаков В.В., Турция и ЕС: проблемы экономической интеграции, М., 1999.
74. Сваранц А., Пантюркизм в геостратегии Турции на Кавказе, М., 2002.
75. Турция между Европой и Азией, М. 2001.
76. Турция: новая роль в современном мире, М., 2012.
77. Энтин Л.М., Европейское право, М., 2005.
78. Çarkoglu, A., Kalaycıoglu E., The Rising Tide of Conservatism in Turkey. N.Y., 2009.
79. Hoffman T., Armenians in Turkey Today: A critical assessment of the situation of the Armenian minority in the Turkish Republic, Brussels, 2002.
80. Oehring O., Human Rights in Turkey, Secularizm, Religious Freedom, 2002.
81. Oktem K., Creating Turk's Homeland: Modernization, Nationalism and Geografy in South-est Turkey in the late 19th and 20th Centuries, University of Oxford, 2003.

3. Գիտական հանդեսների և ժողովածուների հոդվածներ

82. Ալվրցյան Հ., Ազգայնամոլությունը խարխլվող թուրքական ինքնության համայնապատկերում, «Դրօշակ», թիվ 9, 2009:
83. Աղաջանյան Մ., Թուրքիայի ազգային անվտանգությունը. Հայեցակարգերն ու սկզբունքները, «Թուրքիա. Անվտանգության և պաշտպանության հիմնախնդիրները», վերլուծական նյութեր, թող. 1, Եր., 2007:
84. Աղաջանյան Մ., Հովսեփյան Լ., Թուրքիայի Ազգային անվտանգության խորհուրդը, «Թուրքիա. Անվտանգության և պաշտպանության հիմնախնդիրները», վերլուծական նյութեր, թող. 1, Եր., 2007:

85. Անումյան Մ., Թուրքիայում Հայոց ցեղասպանության պատասխանատուների հերոսացման հարցի շուրջ, «Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ», VII, Եր., 2011:
86. Անումյան Մ., Ծպտյալ և իսլամացված հայերի հարցի արծարծումը ժամանակակից թուրքական մամուլում, «Ցեղասպանագիտական հանդես», Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, Տարի 2, N 1, Եր., 2014:
87. Աստոյան Ա., Հայերի ունեզրկման գործընթացն Օսմանյան կայսրությունում 1915-1923 թթ., վկայություններ, փաստեր և փաստաթղթեր, «Վէմ» համահայկական հանդես, թիվ 3 (31),Եր., 2010:
88. Բրոյնեսեն Մ., Կրոնը քուրդիստանում, «Իրան-նամէ», հուլիս, Եր., 1993,:
89. Գեղամյան Ս., Թուրքիայի ազգային բուրժուազիան երկրի տնտեսական և սոցիալ-քաղաքական կյանքում 1945-50 թթ., «Դրօշակ», 1989, փետրվար:
90. Դադայան Խ., Հայոց ցեղասպանության տնտեսական բաղադրյալը. ֆինանսանյութական փոխհատուցման հիմնախնդիրը, «Արևմտահայության պահանջատիրության հիմնախնդիրները» (գիտագործնական միջազգային գիտաժողով), Կիպրոս-Նիկոսիա, 18-19 ապրիլի 2008 թ., «Գիտական զեկուցումների ժողովածու», Մոսկվա, 2008:
91. Դումանյան Ա., Ազգայնական շարժում կուսակցության («Գորշ գայլեր») գործունեության հիմնական փուլերը Թուրքիայում 1960-70-ական թթ., «Թուրքական և օսմանագիտական հետազոտություններ», հատոր IV, Եր., 2006:
92. Դումանյան Ա., Ազգայնական շարժում կուսակցության (Գորշ գայլեր) գործունեության հիմնական փուլերը Թուրքիայում 1960-70-ական թթ., «Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ», հ. 4-րդ, Եր., 2007:

93. Դումանյան Ա., Արտաքին գործոնների ազդեցությունը Թուրքիայի 1980 թվականի ռազմական հեղաշրջման վրա, «Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ», VII, Եր., 2011:
94. Եփրեմյան Լ., «Հայկական տաբուն» Թուրքիայում. Հոգեվերլուծական դիտարկման փորձ, «21-րդ ԴԱՐ», թիվ 3 (43), Եր., 2012:
95. Խանլարեան Կ., Քրդական շարժումների դիրքորոշումը Հայաստանի հայության և Հայ Դատի նկատմամբ, Հայ դատն այսօր, Թեհրան, 2005:
96. Խաչիկյան Տ., Բողոքական հայերը Թուրքիայում, «Կրոն և հասարակություն», թիվ 10, Եր., 2010:
97. Խաչիկյան Տ., Միսիոներությունը Թուրքիայում, «Կրոն և հասարակություն», թիվ 9, Եր., 2009:
98. Խառատեան Հ., Դարի միջնադար (իսլամացուած, ալեւիացած, ծպտյալ հայերը Թուրքիայում), «Հայկազեան հայագիտական հանդէս», Պէյրութ, 2014, հատոր ԼԴ:
99. Հարությունյան Ա., Թուրքական հատուկ ծառայությունների ստեղծման պատմությունը և դրանց գործունեությունը արդի փուլում, «Թուրքիա Անվտանգության և պաշտպանության հիմնախնդիրները. վերլուծական նյութեր», թողարկում 1, Եր., 2007:
100. Հովհաննիսյան Ա., «Հայկական գործոնի» շահարկումը Թուրքիայի 2011 թ. խորհրդարանական ընտրությունների ընթացքում, «Ժամանակակից Եվրասիա. Թուրքիա, Իրան», հ. I, Ռ. Սաֆրաստյանի խմբ., Եր., 2012:
101. Հովսեփյան Լ., Թուրքիայի անվտանգության ոլորտի բարեփոխումների շուրջ,. ԵՄ առջև ստանձնած պարտավորությունների համատեքստում. «Գլոբուս. Էներգետիկ և տարածաշրջանային անվտանգություն», «Նորավանք ԳԿՀ», թիվ 4, 2009:
102. Մանուկյան Տ., Քրդստանի աշխատավորական կուսակցության գործունեության հարցի շուրջ (1980-1990-ական թթ.), «Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ», VII, Եր., 2011:

103. Մարության Հ., Գերմանիայի ֆինանսական փոխհատուցումները հրեությանը (ձևավորումը, գործընթացը, ներկա վիճակը), «Արևմտահայության պահանջատիրության հիմնախնդիրները» (գիտագործնական միջազգային գիտաժողով), Կիպրոս-Նիկոսիա, 18-19 ապրիլի 2008 թ., «Գիտական զեկուցումների ժողովածու», Մոսկվա, 2008:
104. Մարության Հ., Տրավմատիկ հիշողությունը իբրև հայկական ինքնության պահպանման կարևորագույն գործոն Թուրքիայում, «Նորավանք» ԳԿՀ-ի Տեղեկագիր, թիվ 22, Եր., 2008:
105. Մելքոնյան Ռ., Թուրքիայի իսլամացված հայերի թեմայի ուսումնասիրությունը. Խնդիրներ և հեռանկարներ, «21-րդ ԴԱՐ» N 2, 2012:
106. Մելքոնյան Ռ., Հայոց ցեղասպանության խնդիրը Թուրքիայի խորհրդարանում (2007-2014 թթ.), Ժամանակակից Եվրասիա, Թուրքիա. Գաղափարախոսություն և քաղաքականության հարցեր, Ռ. Սաֆրաստյանի խմբ., հատոր III (2), Եր., 2014:
107. Չաքրյան Հ., Իսլամական գործոնը Արևմուտք-Թուրքիա փոխհարաբերությունների ենթատեքստում, «Հայացք Երևանից», N 3/1, Եր., 1997:
108. Պողոսյան Ն., Թուրքիայի ոչ մահմեդականների համայնքային կալվածքների խնդիրը (1923-2011 թթ.). համառոտ ակնարկ, «Մերձավոր Արևելք», պատմություն, քաղաքականություն, մշակույթ, (հոդվածների ժողովածու), VIII, Եր., 2012:
109. Սաֆրաստյան Ռ., Անսպասելի արդյունքներ Թուրքիայի ՏԻՄ ընտրություններում, «Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ», VI, Եր., 2009:
110. Վարդանյան Գ., Պոնտոսի հունները և Հանրապետական Թուրքիան. հիշողություն և նոր մարտահրավերներ, «Ժամանակակից Եվրասիա, Թուրքիա. Գաղափարախոսություն և քաղաքականության հարցեր», Ռ. Սաֆրաստյանի խմբ., հատոր III (2), Եր., 2014:

111. Տեր-Մաթևոսյան Վ., Արդարություն և զարգացում կուսակցությունը ՏԻՄ ընտրություններում. Ձեռքբերումներ ու բացթողումների համեմատական վերլուծություն, «Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ», VI, Եր., 2009:
112. Տեր–Մաթևոսյան Վ., Թուրքիան 2008–2011 թթ.: Քաղաքական փոխակերպումների հիմնական առանձնահատկությունները, «Ժամանակակից Եվրասիա. Թուրքիա, Իրան», հ. I, Ռ. Սաֆրաստյանի խմբ., Եր., 2012:
113. Տեր-Մաթևոսյան Վ., Հայ-թուրքական հարաբերությունների հեռանկարներն ազգային անվտանգության ապահովման համատեքստում, «Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ», VII, Եր., 2011:
114. Гаджиев А.Г., Парламентские выборы в Турции 2007 г.: позиции политических партий по проблеме вступления Турции в ЕС, “Турция накануне и после парламентских и президентских выборов 2007 г.”, М., 2008.
115. Данилова Е., Есть ли будущее у “исламской экономики”, “Азия и Африка сегодня”, N 1, М., 2004.
116. Дружиловский С.Б., Влияние иракского кризиса на урегулирование курдской проблемы в Турецкой Республике, “Курдский вопрос в Западной Азии в начале XXI века”, М., 2006.
117. Жигалина О.И., Некоторые тенденции развития курдского национального движения в этническом Курдистане, “Ближний Восток и современность”, вып. 37, М., 2008.
118. Загорнова Е., Рабочая партия Курдистана в 80-90-х годах XX в., Курдский вопрос на рубеже тысячилетий, М., 2004.
119. Задонский С., Роль военного фактора во внутренней политике Турции, “Армия и власть на Ближнем Востоке: от авториторизма к демократии”, (сборник статей), М., 2002.

120. Киреев Н., Метаморфозы политического ислама, “Азия и Африка сегодня”, N 6, 2003.
121. Киреев Н.Г., Сохранился ли в Турции госсектор? Некоторые итоги приватизации, “Ближний Восток и современность”, вып. 9, М., 2000.
122. Киреев Н., Турецкая диаспора на Западе, “Мусульмане на Западе”, М., 2002.
123. Киреев Н., Турция: синтез национализма и исламизма, “Азия и Африка сегодня”, N 2, М., 1993.
124. Котов Д.В., Турецкая швейная промышленность на рубеже XX-XXI веков, “Востоковедный сборник”, вып. 8, М., 2007.
125. Куранов А., Новички спешат в Евросоюз, «Новое время», Приложение, Политэкономия, № 10, 26 мая 1998.
126. Макарадзе Э.Х., Нурджизм в политической жизни современной Турции, “Ближний Восток и современность”, вып. 22, М., 2004.
127. Малюта Н.Е., Банковская система Турции в 2002 г., “Ближний Восток и современность”, вып. 17, М., 2003.
128. Малюта Н.Е., Турция в 2001 году: пути выхода из валютно-финансового кризиса, “Востоковедный сборник”, вып. 3, М., 2002.
129. Мосаки Н.З., Государственный курдоязычный телеканал в Турции: медийные, политические и этнические аспекты, “Ближний Восток и современность”, вып. 40, М., 2009.
130. Набиева А.Р., Турция: взгляд оппозиции на политику правящей Партии справедливости и развития, “Ближний Восток и современность”, вып. 30, М., 2007.
131. Руднева М.Б., Верный путь к благоденствию (к оценке политической жизни Турции в 1995-1999 гг.), “Востоковедный сборник”, вып. 3, М., 2002.
132. Сидорова Ю.Б., Валютно-финансовый кризис в Турции 2000-2001 гг., “Востоковедный сборник”, вып. 5, М., 2003.

133. Спиридонова Н., Курды снова готовятся к войне: Впервые после ареста их лидера Оджалана обьявлена мобилизация среди курдской молодежи Турции, “Независимое военное обозрение”, 18.01. 2001.
134. Старченков Г.И., Турция: долгий путь в Евросоюз, «Современная Европа», М., 2002, № 4.
135. Стратегические последствия геноцида армян, “Византийское наследство” (информационно-аналитический журнал), Ер., 2002, N 3.
136. Трубникова С.А., Иностранные инвестиции в Турции, “Востоковедный сборник”, вып. 2, М., 2001.
137. Трубников С.А., Политический кризис в Турции и парламентские выборы 2002 г., “Востоковедный сборник”, вып. 5, М., 2003.
138. Ульченко Н.Ю., Валютно-финансовый кризис в Турции 1994 г. и российский финансовый кризис 1998 г.: аналогии и различия в причинах и следствиях, “Ближний Восток и современность”, вып. 8, М., 1999.
139. Ульченко Н.Ю., Динамика экономического роста в Турции в 1999 г. и перспективы на 2000 г., “Ближний Восток и современность”, вып. 9, М., 2000.
140. Ульченко Н.Ю., К вопросу об экономической политике правительства Партии справедливости и развития, “Ближний Восток и современность”, вып. 17, М., 2003.
141. Ульченко Н.Ю., Основные итоги социально-экономического развития Турции в 2006-2007 годах и перспективы на 2008 год, “Турция накануне и после парламентских и президентских выборов 2007 г.”, М., 2008.
142. Уразова Е., Внешний долг Турции и проблема его погашения (80-90 гг.), “Ближний Восток и современность”, вып. 8, М., 1999.
143. Уразова Е., К оценке роли исламских идей и капиталов в турецкой экономике, “Ближний Восток и современность ”, вып. 9, М., 2000.

144. Уразова Е., К характеристике турецкой экономической модели, “Турция: современные проблемы экономики и политики”, М., 1997.
145. Федосеенкова А.Н., Современные концепции модернизации исламских обществ (на примере взглядов Абдулкарима Соруша и Фетхуллы Гюлена), “Ближний Восток и современность”, вып. 40, М., 2009.
146. Шлыков В.,Армия в жизни современного турецкого общества в начале 2000-х, “Турция накануне и после парламентских и президентских выборов 2007 г.”, Сборник статей, М., 2008,
147. Шлыков П.В., Военная элита в политической системе Турецкой Республики, “Элиты стран Востока”, М., 2011.
148. Шлыков П.В. Политический ислам в Турции: поиски новой идентичности, “Вестник Московского университета”, сер. 13, «Востоковедение», М., 2008, № 4.
149. Шлыков П.В., Эволюция концепции политического ислама в Турции, “Турция накануне и после парламентских и президентских выборов 2007 г.”, М., 2008.
150. Шмидт П.И., Свободные экономические зоны Турции, “Востоковедный сборник”, вып. 8, М., 2007.
151. Baghdasaryan E., “The Armenian Community of Istanbul: Confronting New Challenges and old Realities”, July 21, 2008.
152. Bozarslan H., Why the Armed Struggle? Understanding the Violence in Kurdistan of Turkey. “The Kurdish Conflict in Turkey”, New York: St. Martin's, 2000.
153. Bruinessen M., Genocide In Kurdistan? The suppression of the Dersim rebellion in Turkey (1937-38) and the chemical war against the Iraqi Kurds (1988), “Conceptual and historical dimensions of Genocide”, Ed. by J. Andreopoulos, University of Pennsylvania Press, 1994.

154. Burhanettin D., The Experience of Turkish Islamism: Between Transformation and Islamism, “Journal of Balkan and Near Eastern Studies”, Vol. 12, No. 1 (2010).
155. Çarkoğlu A., “The Rise of the New Generation Pro-Islamists in Turkey: The Justice and Development Party Phenomenon in the November 2002 Elections”//South East European Society and Politics, vol. 7, No. 3 (Winter 2002).
156. Cassier M., Jongerden J. Walker N., Fruitless Attempts? The Kurdish Initiative and the Containment of the Kurdish Movement in Turkey, “New Perspectives on Turkey”, No. 44 (2011).
157. Deli F., «Comportement communautaire en migration des Arméniens de Mardin», Séminaire mensuel de la Société des Etudes Arméniennes, Jeudi 10 février, 2005:
158. Emre T., Forecasting elections in Turkey // International Journal of Forecasting. Amsterdam: Feb-2011. Vol. 27, Iss. 4.
159. Gorvett J., Following December's EU Summit, Turkey forced to reassess issue of minorities, Washington report on Middle East affaiers, March, 2005.
160. Jenkins G. Continuity and change: prospects for civil-military relations in Turkey, “International Affairs”, vol. 83, 2007.
161. Kadıoğlu A., “The Paradox of Turkish Nationalism and the Construction of Official Identity, “Middle Eastern Studies”, vol. 32, No. 2, April 1996.
162. Kalaycioğlu E., “The Shaping of Party Preferences in Turkey: Coping with the Post-Cold War Era, “New Perspectives on Turkey, no 20 (Spring 1999).
163. Kalaycioğlu E., Turkish Dynamics Bridge Across Troubled Lands. N.Y., Palgrave Macmillan, 2005.

164. Kya N., Baldwin C., Minorities in Turkey: Submission to the European Union and the Government of Turkey, Minorities Rights Group International, 2004 July.
165. Menderes Ç., Turkey's Present Ancien Regime and the Justice and Development Party, "Nationalism and Political Islam in Turkey", L.: Routledge, 2010.
166. Monshipouri M., Islamism, secularism and Human Rights in the Meddle East, London, 1998.
167. Turkey in Flux: Wrestling with Emotions, Identity and Values, Turkish Policy Quarterly, Winter.2006/2007.
168. Şaban K., The Turkish Constitutional Court and Civil Liberties: Question of Ideology and Accountability. // SETA Policy Brief, June 2008, No.16.
169. Sakallıoğlu Ü., "The Anatomy of Turkish Military's Political Autonomy", "Comparative Politics", vol. 29, No. 2 (1997).
170. Sayari S., "Towards a New Turkish Party System?", "Turkish Studies", vol. 8, No. 2, 2007.
171. Sayari S., "Turkey's Islamist Challenge", "Middle East Quarterly", vol. 3, No. 3 (1996).
172. Sayın, Ç., Exploring the Military Mindset: Phenomenological Insights for Security Sector Reform in Turkey, "New Perspectives on Turkey", No. 43 (2010).
173. Watts N., "Relocating Dersim: Turkish State-Building and Kurdish Resistance, 1931-1938", "New Perspectives on Turkey", Vol. 23, No. 1 (Fall 2000).
174. Yavuz H., Özcan N., "The Kurdish Question and Turkey's Justice and Development Party", "Middle East Policy", Vol. 13, No. 1 (2006).
175. Yegen M., ""Prospective-Turks" or "Pseudo-Citizens": Kurds in Turkey", "Middle East Journal", Vol. 63, No. 4 (2009).

4. Պարբերական մամուլի նյութեր

176. «Ազգ», 12 հոկտեմբերի 2009; 29 հոկտեմբերի 2010; 11 մայիսի 2011; 6 հոկտեմբերի 2011; 13 հոկտեմբերի 2011; 30 հոկտեմբերի 2011; 6 դեկտեմբերի 2011:
177. «Ազդակ», Բեյրութ, 14 մարտի 2012:
178. «Ալիք», Թեհրան, 22 մայիսի 1947; 31 հոկտեմբերի 1981; 9 դեկտեմբերի 1981:
179. «Ակօս», Ստամբուլ, 17 հուլիսի 2002; 9 մայիսի 2008; 5 հունիսի 2009, 11 մարտի 2011:
180. «Արարատ», Էջմիածին, 4 հունվարի 1946:
181. «Դրօշակ», Աթենք, 4 փետրվարի 1987; 6 հուլիսի 1988; 28 սեպտեմբերի1988; 1 փետրվարի 1989:
182. «Դրօշակ», Երևան, 28 հունիսի 1999:
183. «Հայրենիք» ամսագիր, մայիս 1931:
184. «Մարմարա», Ստամբուլ, 24 նոյեմբերի 1969; 2 ապրիլի 2004; 18 հոկտեմբերի 2004; 8 օգոստոսի 2011; 12 հունվարի 2012; 15 փետրվարի 2012; 21 փետրվարի 2012; 5 մարտի 2012:

5.Համացանցային նյութեր

185. Գաբրիելյան Հ., Ներքաղաքական պայքարի արդի փուլը Թուրքիայում, http://noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=6290
186. Հովյան Վ., Թուրքիայի հայ համայնքն արտահերթ խորհրդարանական ընտրությունների նախօրեին,
http://www.noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT_ID=13962
187. «Քաղաքական կուսակցությունները և ժողովրդավարությունը», Ժողովրդավարության ազգային հիմնադրամ, աշխատանքային փաստաթուղթ, նոյեմբեր 18-19, 1996,
www.ned.org/forum/reports/parties.html
188. Алексеева В.А., Трофимова Т. С., Современные экономические проблемы Турции и пути их решения,

http://www.rusnauka.com/12.APSN_2007/Economics/20730.doc.htm.
189. Ахкуев А., Основные проблемы современной экономической политики Турции, Автореферат диссертации,
http://www.dissercat.com/content
190. Гаджиев А.Г. Курдский вопрос в свете очередного ежегодного доклада Еврокомиссии о развитии Турции. Институт Ближнего Востока, http://www.iimes.ru/rus/stat/2009/11-11-09a.htm
191. Гурьев А., “Красная книга”: у Турции новая концепция национальной безопасности, http://www.centrasia.ru., 08.11.2005.
192. Гурьев А., Ситуация в Турции: декабрь 2010,
http://iimes.ru/rus/stat/2011/08–01–11c.htm
193. Задонский В., Влияние высшего военного руководства Турецкой Республики на внутреннюю и внешнюю политику государства www.iimes.ru. 21.05.2002
194. Райзель Б., Новый взгляд на историю. Процесс реституции в Норвегии, http://libfl.ru/spoils/spoils/rus/spoil5_3.html
195. Шлыков П.В., политического развития под властью Партии Турция после выборов 2011 г.: парадоксы справедливости и развития. // Перспективы. Фонд исторической перспективы, http://perspektivy.info
196. Backgrounder on the Union of Communities in Kurdistan, KCK // Democratic Turkey Forum, http://www.tuerkeiforum.net
197. Candar C., “Leaving the Mountain”: How may the PKK Lay Down Arms? Freeing the Kurdish Question from Violence. Istanbul: TESEV, 2012, http://www.tesev.org.tr/en/ publications/1/1.
198. Forced Evictions: Violations of Human Rights, Global Survey on Forced Evictions, No 7 COHRE, September 1988, www.cohre.org.
199. Hayes D., Turkey and Ergenekon: From Farce to Tragedy, Open Democracy, http://www.opendemocracy.net
200. Minorities in Turkey, Minority Rights Group International, July, 2004, http://www.minorityrights.org

201. Questions and Answers: Freedom of Expression and Language Rights in Turkey, http:/www.hrw.org/press/2002/08/turkeyqa041902.html
202. Turkey puts civilian over its National Security Council, reduce role, http://www.worldtribune.com. Dec. 3, 2004.
203. Turkey's Accession to the EU: - Kurdish Human Rights Project, https://www.khrp.org/
204. Zaman A., Turkey's Cabinet Reshuffle: Another Balancing Act, German Marshall Fund of the US, www.gmfus.org
205. www.akunq.net
206. www.armenpress.am
207. www.civilnet.am
208. www.mediamax.am
209. www.noravank.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ……3

ԳԼՈՒԽ 1. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ …….....18

1.1. Թուրքիայի քաղաքական համակարգի արդի խնդիրներն ու մարտահրավերները ……18

1.2. Թուրքիայի տնտեսության առջև ծառացած արդի խնդիրներն ու մարտահրավերները.....113

ԳԼՈՒԽ 2. ԹՈՒՐՔԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՉ ԹՈՒՐՔ ԱԶԳԱՅԻՆ-ԿՐՈՆԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ……...……133

2.1.Քաղաքականությունը ոչ քրիստոնյա ազգային-կրոնական խմբերի նկատմամբ …….……136

2.1.1. Քաղաքականությունը քրդերի նկատմամբ.....136

2.1.2. Քաղաքականությունը ալևիների նկատմամբ.....153

2.2. Քաղաքականությունը ոչ մահմեդական փոքրամասնություններ-ի նկատմամբ …….…....168

2.2.1. Խտրական քաղաքականության դրսևորումները հայերի նկատմամբ ……..……..190

2.2.2. Խտրական քաղաքականության դրսևորումները հույների նկատմամբ …….……...268

2.2.3. Խտրական քաղաքականության դրսևորումները հրեաների նկատմամբ ……..……..…275

2.2.4. Խտրական քաղաքականության դրսևորումները ոչ մահ-մեդական փոքրամասնություն չճանաչված համայնքների նկատ-մամբ ……...279

ԳԼՈՒԽ 3. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ ՆԵՐԿԱՅԻՍ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ……291

3.1. Հայերի նկատմամբ բռնությունների նոր դրսևորումները արդի Թուրքիայում ……..…….……..291

3.2. Թուրքական իշխանությունների կողմից Հայոց ցեղասպանության հարցի արդի ընկալումները…….…….....314

3.3. Թուրքական հասարակության կողմից Հայոց ցեղասպանության հարցի արդի ընկալումները ……..……342

ՎԵՐՋԱԲԱՆ……...…358

ՀԱՎԵԼՎԱԾ (Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հնարավոր ճանապարհային քարտեզի ուրվագծման հարցի շուրջ) ……..…….366

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……..…….390

ԱՐՄԵՆ ՄԱՐՈՒՔՅԱՆ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՐԴԻ ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Համակարգչային ձևավորումը՝ Ա. Մարանգոզյանի

Ստորագված է տպագրության 08.11.2016թ.:
Թուղթ՝ օֆսեթ 80: Տպագրություն՝ օֆսեթ:
Գրաչափը՝ 60x84, 1/16: Տպագրական մամուլ՝ 26:

«ԱՐՏԱԳԵՐՍ» հրատարակչություն

ք. Երևան, Իսահակյան 28
Հեռ.՝ (+37499) 14-27-97, (+37498) 14-27-97
Էլ. փոստ՝ artagers.hrat@mail.ru
artagershrat@rambler.ru

410